ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻ

Հազար չքնաղ արևներ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԵՍԹՍԵԼԼԵՐ

Հազար չքնաղ արևներ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

A Thousand Splendid Suns

A Novel

KHALED HOSSEINI

Translated from English
by Maria Sadoyan

Հազար չքնաղ արևներ

Վեպ

ԽԱԼԵԴ

ՀՈՍԵՅՆԻ

Թարգմանությունն անգլերենից՝
Մարիա Սադոյանի

ՀՏԴ 821.111(73)–31 Հոսեյնի
ԳՄԴ 84(7 ԱՄՆ)–44
Հ 831

թվագրված է 1915.ուժգ գրքի

Հոսեյնի, Խալեդ
Հ 831 Հազար չքնաղ արևներ: Վեպ / Խ. Հոսեյնի: Թարգմանությունն անգլերենից՝ Մարիա Սադոյանի. — Եր.: «Զանգակ» հրատ., 2020. — 368 էջ:

2007 թվականին լույս տեսած այս վեպը անկեղծ ու հուզիչ գիրք է Աֆղանստանի ոչ վաղ անցյալի մասին՝ այս անգամ կանանց աչքերով: Վեպի հիմնական թեման Աֆղանստանում կանանց իրավունքների ոտնահարումն է, նրանց հանդեպ բռնությունն ու դաժանությունը: Զրուցելով Քաբուլի բազմաթիվ կանանց հետ և լսելով նրանց հոգեկեղեք պատմությունները՝ Հոսեյնին գրել է «Հազար չքնաղ արևները» և նվիրել այն Աֆղանստանի կանանց: Վեպը օգնում է ավելի լավ հասկանալու Աֆղանստանի դժնդակ պատմությունը, մշակույթն ու ժառանգությունը, իսկ անմարդկային պայմաններում ապրող ժողովրդի հերոսությունը կարող է միայն հիացմունք առաջացնել:

ՀՏԴ 821.111(73)–31 Հոսեյնի
ԳՄԴ 84(7 ԱՄՆ)–44

ISBN 978–9939–68–856–5

Copyright © 2013 by Khaled Hosseini and Roya Hosseini, as Trustees of The Khaled and Roya Hosseini Family Charitable Remainder Unitrust No.2 dated February 29, 2012
Epigraph copyright Coleman Barks

www.khaledhosseini.com
www.khaledhosseinifoundation.org

© Zangak–97 LLC, 2020 (Armenian edition)
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2020 (թարգմ. համար)

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով՝ առանց հրատարակչի գրավոր համաձայնության:

Այս գիրքը նվիրվում է
Հարիսին ու Ֆարային՝ աչքիս նուռերին[1],
և Աֆղանստանի կանանց

---

[1] Նուռ՝ արաբերենից «լույս»

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1

Մարիամը հինգ տարեկան էր, երբ առաջին անգամ լսեց ***հարամ*** բառը:

Դա պատահեց հինգշաբթի օրը: Պետք է որ հինգշաբթի լիներ, որովհետև Մարիամը հիշում էր, որ այդ օրը անհանգիստ ու մտահոգ էր, ինչպես միայն հինգշաբթի օրերին էր լինում, երբ Ջալիլը այցելում էր նրանց ***քոլբան***[2]: Որպեսզի սպաներ ժամանակը, մինչև վերջապես կտեսներ, թե ինչպես է Ջալիլը ծնկներից բարձր խոտի միջով անցնում բացատն ու ձեռքով անում, Մարիամը բարձրացավ աթոռի վրա ու իջեցրեց մայրիկի թեյի չինական հավաքածուն: Թեյի հավաքածուն միակ մասունքն էր, որը Մարիամի մայրը՝ Նանան, ժառանգել էր իր մորից, որը մահացել էր, երբ Նանան երկու տարեկան էր: Նանան դողում էր կապտաձերմակ ճենապակյա պարագայի, թեյնիկի նրբագեղ կորի, ձեռքով նկարված սերինոսների ու քրիզանթեմների, շաքարամանի վրայի՝ չարիքից պաշտպանող վիշապի վրա:

Այս վերջին կտորն էլ սահեց Մարիամի ձեռքից, ընկավ ***քոլբայի*** փայտյա հատակին ու փշուր-փշուր եղավ:

Երբ Նանան տեսավ շաքարամանը, դեմքը շառագունեց, վերին շրթունքը դողաց, իսկ աչքերը՝ թե՛ շիլը, թե՛ առողջը, անթարթ սևեռվեցին Մարիամի վրա: Նանան այնքան բարկացած տեսք ուներ, որ Մարիամը վախեցավ, որ ***ջինը***[3] նորից կմտնի մոր մարմինը: Բայց

---

[2] Քոլբա (պարսկ.)՝ խրճիթ

[3] Ջինն՝ արաբական դիցաբանության գերբնական արարած: Ջինները լինում են բարի, չար կամ չեզոք:

ջինը չեկավ, այս անգամ չեկավ: Փոխարենը Նանան բռնեց Մարիամի դաստակները, մոտ քաշեց և ատամները կրճտացնելով՝ ասաց. «Դու փոքրիկ, անշնորհք *հարամի՛* ես: Սա է տառապանքիս վարձատրությունը. ժառանգությունս ջարդող, փոքրիկ, անշնորհք *հարամի՛*»:

Այդ անգամ Մարիամը չհասկացավ: Նա չգիտեր, թե ինչ է նշանակում այս բառը՝ *հարամի՝* ապօրինածին: Բավական մեծ էլ չէր, որպեսզի հասկանար դրա անարդարությունը, տեսներ, որ *հարամի* ստեղծողներն են մեղավոր, ոչ թե *հարամին*, որի միակ մեղքը ծնվելն է: Նանայի ասած ձևից Մարիամը կռահեց, որ *հարամի* լինելը ինչ-որ տգեղ, նողկալի բան է միջատների, վազվզող խավարասերների պես, որոնց Նանան միշտ անիծելով ավլում-թափում էր *քոլբայից*:

Ավելի ուշ, երբ մեծացավ, Մարիամը հասկացավ: Նանայի ասելու ձևն էր առավել խայթում իրեն, ասես ոչ թե արտասանում էր, այլ թքում այդ բառը նրա ուղղությամբ: Այդժամ նա հասկացավ, թե ինչ նկատի ուներ Նանան. որ *հարամին* անցանկալի բան է, որ ինքը՝ Մարիամը, անօրինական է և երբեք օրինական իրավունք չի ունենա այնպիսի բաների, որ ուրիշներն ունեն՝ սեր, ընտանիք, տուն, գնահատանք:

Ջալիլը երբեք Մարիամին այդ անունը չէր տալիս: Ջալիլն ասում էր, որ նա իր փոքրիկ ծաղիկն է: Նա սիրում էր նստեցնել Մարիամին իր ծնկներին ու պատմություններ պատմել, օրինակ՝ պատմեց, որ Հերաթը, որտեղ 1959-ին ծնվել էր Մարիամը, ժամանակին եղել է պարսկական մշակույթի օրրան, գրողների, նկարիչների և *սուֆիների*[4] օջախ:

«Ոտքդ ուր մեկնես, մի բանաստեղծի քացի կտաս»,— ծիծաղում էր նա:

Ջալիլը պատմեց նրան Թագուհի Գոհար Շադի[5] պատմությունը, որը տասնհինգերորդ դարում վեր խոյացրեց հայտնի մինարեթները՝ որպես սիրո գովերգ Հերաթին: Նա նկարագրում էր Հերաթի

---

[4] Սուֆիզմ՝ իսլամի կրոնափիլիսոփայական միստիկական ուսմունք

[5] Գոհարշադ Բեգում (պարսկերեն «Գոհարշադ» նշանակում է «փայլող զարդ»)՝ Հերաթի Թիմուրական կայսրի՝ Շահրուխի կինը:

ցորենի կանաչ դաշտերը, այգիները, խոշոր խաղողից ծանրացած վազերը, քաղաքի բազմամարդ կամարակապ շուկաները:

«Պիստակի մի ծառ կա,— մի օր պատմեց Ջալիլը,— իսկ դրա տակ, Մարիամ ջո, թաղված է ինքը՝ մեծն բանաստեղծ Ջամին[6]:— Նա կռացավ ու շշնջաց,— Ջամին ապրել է ավելի քան հինգ հարյուր տարի առաջ: Իրոք: Ես մի անգամ քեզ տարել եմ այնտեղ՝ այդ ծառի մոտ: Դու փոքր էիր: Չես հիշի»:

Իսկապես, Մարիամը չէր հիշում: Եվ չնայած կյանքի առաջին տասնհինգ տարիները նա ապրելու էր մի տեղ, որտեղից ոտքով կարող էր հասնել Հերաթ, Մարիամը երբեք չէր տեսնելու այդ առասպելական ծառը: Նա երբեք մոտիկից չէր տեսնելու հայտնի մինարեթները, երբեք մրգեր չէր հավաքելու Հերաթի այգիներից կամ զբոսնելու դրա ցորենի դաշտերում: Բայց երբ Ջալիլը պատմում էր, Մարիամը կախարդված լսում էր: Նա հիանում էր աշխարհի մասին Ջալիլի խոր գիտելիքներով: Հպարտությունից դողում էր, որ նման բաներ իմացող հայր ունի:

— Ի՞նչ շքեղ ստեր,— ասաց Նանան, երբ Ջալիլը գնաց,— հարուստ մարդը շքեղ ստեր է պատմում: Ոչ մի ծառի մոտ էլ քեզ չի տարել: Ու թույլ չտա՛ս, որ քեզ հմայի: Նա մեզ դավաճանեց՝ քո սիրելի հայրը: Մեզ դուրս շպրտեց: Դուրս շպրտեց մեծ գեղեցիկ տնից, ասես մենք նրա համար ոչինչ ենք: Այն էլ ուրախությամբ:

Մարիամը խոնարհ լսում էր: Նա երբեք չհամարձակվեց ասել Նանային, թե որքան չի սիրում, երբ նա այդպես է խոսում Ջալիլի մասին: Ճշմարտությունն այն էր, որ Ջալիլի կողքին Մարիամն իրեն ամենևին *հարամի* չէր զգում: Ամեն հինգշաբթի օրվա մեկ-երկու ժամը, երբ Ջալիլը այցելում էր նրան ժպիտներով, նվերներով ու գուրգուրանքներով, Մարիամին թվում էր, որ նա արժանի է կյանքի ողջ գեղեցկությանն ու ճոխությանը: Եվ այդ բանի համար Մարիամը սիրում էր Ջալիլին:

---

[6] Նուր ադ Դին Աբդ ար Ռահման Ջամի (1414–1492)՝ պարսիկ սուֆի բանաստեղծ, գիտնական, միստիկ, գրող, երգահան և պատմաբան:

* * *

Չնայած ստիպված կիսում էր Ջալիլին այլոց հետ:

Ջալիլն ուներ երեք կին և ինը երեխա, ինը օրինական երեխա, որոնց Մարիամը չէր ճանաչում: Նա Հերաթի ամենահարուստ մարդկանցից էր: Նրան էր պատկանում մի կինոթատրոն, որը Մարիամը երբեք չէր տեսել, բայց պնդել էր, որ Ջալիլը նկարագրի, և գիտեր, որ շենքի ճակատը պատված է կապտակավագույն սալիկներով, ունի պատշգամբի մասնավոր նստատեղեր ու ցանկաշար առաստաղ: Երկկողմ բացվող դռները տանում էին դեպի սալիկապատ շքամուտք, որտեղ ապակու հետևում կախված էին հնդկական ֆիլմերի պաստառներ: Երեքշաբթի օրերին, մի օր պատմեց Ջալիլը, երեխաները կրպակից անվճար պաղպաղակ են ստանում:

Նանան համեստորեն ժպտաց, երբ Ջալիլը պատմեց դրա մասին: Սպասեց, մինչև նա *քոլբայից* դուրս գա, հետո քրքջաց ու ասաց. «Օտարների երեխաները պաղպաղակ են ստանում: Դո՛ւ ինչ ես ստանում, Մարիա՛մ: Պաղպաղակի մասին պատմություններ»:

Կինոթատրոնից բացի Ջալիլին էին պատկանում հողակտոր Կարոխում, հողակտոր Ֆարահում, գորգերի երեք խանութ, հագուստի խանութ և սև «Բյուիկ ռոուդմաստեր»–1956 մեքենան: Նա Հերաթի լավ կապեր ունեցողներից էր, քաղաքապետի և մարզպետի ընկերը: Ուներ խոհարար, վարորդ և երեք տնային տնտեսուհի:

Նանան տնային տնտեսուհիներից մեկն էր: Մինչև փորը չսկսեց մեծանալ:

Երբ դա տեղի ունեցավ, ասաց Նանան, Ջալիլի ընտանիքը այնպիսի խմբային «ա՛խ» քաշեց, որ Հերաթի օդը պակասեց: Խնամիները երդվեցին, որ արյուն են թափելու: Կանայք պահանջեցին, որ Նանային դուրս շպրտի: Նանայի հայրը, որը մոտակա Գյուլ Դաման գյուղում համեստ քարտաշ էր, հրաժարվեց աղջկանից: Խայտառակված հայրը հավաքեց ունեցած–չունեցածը, նստեց Իրան գնացող ավտոբուս, և նրան այլևս ո՛չ տեսնող եղավ, ո՛չ լսող:

— Մեկ–մեկ,— ասաց Նանան մի առավոտ, երբ *քոլբայի* մոտ հավերին էր կերակրում,— կուզեի, որ հայրս քաջություն ունենար՝ իր դանակներից մեկը սրեր ու պատվի հարցը լուծեր: Գուցե ինձ

համար լավը դա լիներ:— Նա մի բուռ սերմ գցեց հավաբուն, մի պահ լռեց ու նայեց Մարիամին:— Գուցե քեզ համար էլ լավ կլիներ: Չէիր ապրի այն ցավով, որ գիտես, թե դու ով ես: Բայց հայրս վախկոտ էր: *Դիլ*[7] չուներ, սիրտ չարեց:

Ջալիլն էլ *դիլ* չունեցավ, ասաց Նանան, որ պատվով հարցը լուծի: Որ դեմ կանգնի իր ընտանիքին, իր կանանց ու խնամիներին և իր արածի համար պատասխանատվություն կրի: Փոխարենը փակ դռների հետևում պատիվը փրկող արագ գործարք կնքվեց: Հաջորդ օրը Ջալիլը ստիպեց Նանային հավաքել իր մի քանի իրերը ծառաների բնակատեղից, որտեղ ապրում էր, ու ճամփեց նրան:

— Գիտե՞ս՝ արդարանալու համար ինչ ասաց իր կանանց: Որ ես եմ իրեն դրդել: Իմ մեղքն է: *Դիդի*: Պատկերացնո՞ւմ ես: Սա է աշխարհում կին լինելը:

Նանան ցած դրեց հավի կերը: Մատով բարձրացրեց Մարիամի կզակը:

— Ի՛նձ նայիր, Մարիա՛մ:

Մարիամը դժկամորեն նայեց:

Նանան ասաց.

— Հիմա սովորի՛ր ու լավ յուրացրո՛ւ, աղջի՛կս. ինչպես կողմնացույցի սլաքը միշտ հյուսիսն է ցույց տալիս, այնպես էլ տղամարդու մեղադրող մատը միշտ կնոջն է գտնում: Մի՛շտ: Հիշի՛ր սա, Մարիա՛մ:

2

— Ջալիլի ու նրա կանանց համար ես մոլախոտ էի: Օշինդր: Դու էլ: Իսկ դու դեռ չէիր էլ ծնվել:

— Օշինդրն ինչ է,— հարցրեց Մարիամը:

— Աղբախոտ,— ասաց Նանան,— մի բան, որ պոկում ու մի կողմ ես գցում:

Մարիամը ներքուստ խոժոռվեց: Ջալիլը նրան որպես մոլախոտ չէր վերաբերվում: Երբեք: Բայց Մարիամը մտածեց, որ ճիշտ կլինի չհակաճառել:

---

[7] Դիլ (պարսկ.)՝ սիրտ, ոգի, սեր

— Ի տարբերություն մոլախոտի՝ ինձ պետք է մեկ այլ տեղ տնկեին, հասկանում ես, սնունդ ու ջուր տային: Քո պատճառով: Այդպիսին էր Ջալիլի պայմանավորվածությունը իր ընտանիքի հետ:

Նանան ասաց, որ հրաժարվեց Հերաթում ապրելուց:

— Ինչի՞ համար: Որ նայեմ՝ ինչպես է ամբողջ օրը քաղաքով իր *քինչինի*[8] կանանց հետ մեքենայով պտտում:

Նանան ասաց, որ հրաժարվեց ապրելուց նաև հոր դատարկ տանը՝ Գյուլ Դաման գյուղում, որը բլրի վրա էր՝ Հերաթից երկու կիլոմետր հյուսիս: Ասաց, որ ուզում է ապրել հեռու, մեկուսի, որ հարևանները աչքերը չչռեն փորին, մատով ցույց չտան, չքրքջան կամ, ավելի վատ, կեղծավոր բարությամբ չհետապնդեն:

— Ու հավատա՛ ինձ,— ասաց Նանան,— հայրդ թեթևացած շունչ քաշեց, երբ ես աչքից չքվեցի: Նրան այդպես ձեռք էր տալիս:

Մուհսինը՝ Ջալիլի ավագ որդին առաջին կնոջից՝ Խադիջայից, առաջարկեց բացատը: Այն Գյուլ Դամանի ծայրամասում էր: Դրան հասնելու համար պետք էր Հերաթի և Գյուլ Դամանի գլխավոր ճանապարհից թեքվել դեպի սարնիվեր գնացող ակոսավոր սայլուղի: Սայլուղու երկու կողմում ծնկից բարձր խոտ էր՝ սպիտակ ու վառ դեղին ծաղիկներով կետկետված: Սայլուղին օձաձև բարձրանում էր սարնիվեր ու հասնում մինչև հարթ դաշտը, որտեղ վեր էին խոյանում բարդիներն ու կաղամախիները, խմբերով աճում էին վայրի թփերը: Այդտեղից ձախ երևում էին Գյուլ Դամանի հողմաղացի ժանգոտ թիակների ծայրերը, իսկ աջից ներքևում սփռված էր Հերաթը: Ճանապարհը վերջանում էր լայն, իշխան ձկով լի վտակով, որն իջնում էր Գյուլ Դամանը շրջապատող Սաֆիդ-կոհ լեռներից: Գետի հունով երկու հարյուր մետր վեր՝ դեպի սարերը, լացող ուռենիների պուրակ էր: Մեջտեղը՝ ուռիների ստվերում, բացատն էր:

Ջալիլը գնաց, որ տեսնի: Երբ վերադարձավ, պատմեց Նանան, խոսում էր ինչպես բանտապան, որը պարծենում է իր բանտի մաքուր պատերով ու փայլուն հատակով:

— Եվ այսպես, հայրդ մեզ համար կառուցեց այս մկան ծակը:

---

[8] Քինչինի (պարսկ.)՝ պոռնիկ

* * *

Մի անգամ Նանան ուր որ է ամուսնանալու էր, երբ տասնհինգ տարեկան էր:

Փեսացուն Շինդանդից մի տղա էր, թութակ վաճառող մի երիտասարդ: Մարիամը պատմությունը Նանայից էր լսել, ու չնայած Նանան այդ դրվագին չէր սիրում անդրադառնալ, Մարիամը նրա աչքերի թախծոտ փայլից հասկանում էր, որ Նանան երջանիկ է եղել: Թերևս իր կյանքում միակ անգամ՝ հարսանիքին նախորդող այդ օրերին, Նանան իրոք երջանիկ էր:

Երբ Նանան պատմեց պատմությունը, Մարիամը նստած էր գոգին և պատկերացնում էր, թե ինչպես են մորը սազեցնում հարսանյաց զգեստը: Պատկերացնում էր նրան ձիու վրա, նրա ամաչկոտ ժպիտը կանաչ զգեստի քողի տակից, հինայով ներկած ձեռքերը, արծաթի փոշիով բաժանած մազերը, ծառի հյութով հյուսած հյուսքերը: Տեսավ *շահնայ* ֆլեյտան փչող ու *դոհոլ* թմբուկները խփող երաժիշտներին, հայ-հույով հետևից վազող փողոցի երեխաներին:

Հետո՝ հարսանիքից մեկ շաբաթ առաջ, Նանայի մարմինը *ջինն* մտավ: Մարիամին սա նկարագրելու կարիք չկար: Նա սեփական աչքով բազմիցս տեսել էր. Նանան հանկարծակի ընկնում էր, մարմինը պրկվում էր, կարծրանում, աչքերը կուլ էին գնում, ձեռքերն ու ոտքերը դողում էին, կարծես ինչ-որ բան ներսից խեղդում էր նրան, բերանի անկյունում փրփուր էր հավաքվում՝ սպիտակ, երբեմն՝ արյունից վարդագույն: Այնուհետև քնկոտություն, վախեցնող ապակողմնորոշվածություն, անհոդաբաշխ մռթմռթոց:

Երբ լուրը հասավ Շինդանդ, թութակ վաճառողի ընտանիքը հարսանիքը չեղյալ հայտարարեց:

Խրտնեցին՝ Նանայի ասելով:

Հարսանյաց զգեստը պարտակեցին: Դրանից հետո ուզողներ չեղան:

* * *

Բացատում Ջալիլն ու նրա երկու որդիները՝ Ֆարհադն ու Մուհսինը, կառուցեցին փոքրիկ *քոլբա*, որտեղ Մարիամը ապրելու էր իր կյանքի առաջին տասնհինգ տարիները: Այն կառուցված էր արևի տակ չորացրած աղյուսներով ու ծեփված ցեխով ու ծղոտով: Մեջը երկու մահճակալ կար, փայտե սեղան, երկու ուղիղ թիկնակով աթոռ, մեկ պատուհան ու պատերին գամված դարակներ, որտեղ Նանան դրեց կավե ամաններն ու իր՝ թեյի սիրելի չինական հավաքածուն: Ջալիլը ձմռան համար նոր թուջե վառարան դրեց ու *քոլբայի* հետևում վառելափայտ շարեց: Դրսում հաց թխելու համար *թանդուր*[9] սարքեց ու ցանկապատով հավաբուն: Մի քանի ոչխար բերեց, կերակրաբուն սարքեց նրանց համար: Ֆարհադին ու Մուհսինին պատվիրեց ուռենիներից հարյուր մետր այն կողմ խոր փոս փորել ու վրան արտաքնոց կառուցեց:

Ջալիլը կարող էր աշխատողներ վարձել *քոլբան* կառուցելու համար, ասաց Նանան, բայց չվարձեց:

— Քավությունն այդպես էր պատկերացնում:

* * *

Նանայի հիշելով՝ Մարիամի ծնվելու օրը ոչ ոք չեկավ օգնելու: 1959 թվականի գարնան խոնավ, ամպամած մի օր էր, ասաց նա, Զահիր Շահի քառասունամյա անուշագրավ գահակալության քսանվեցերորդ տարում: Ասաց, որ Ջալիլը նեղություն չքաշեց բժիշկ կամ թեկուզ մանկաբարձուհի հրավիրելու, չնայած գիտեր, որ *ջինը* կարող է մտնել իր մարմինն ու ծննդաբերության ժամանակ նոպայի պատճառ դառնալ: Ինքը միայնակ պառկել էր *քոլբայի* հատակին՝ դանակը կողքը, քրտինքի մեջ կորած:

— Երբ ցավն ուժեղանում էր, ես կծում էի բարձն ու գոռում, մինչև ձայնս չկտրվեց: Եվ միևնույնն է, ոչ ոք չեկավ, որ դեմքս սրբի կամ ջուր տա: Իսկ դու, Մարիամ ջո, չէիր շտապում: Համարյա երկու

---

[9] Թանդուր (պարսկ.)՝ թոնիր

օր ստիպեցիր՝ պառկեմ այդ սառը, չոր հատակին: Չեմ կերել, չեմ քնել, միայն աղոթում էի, որ դուրս գաս:

— Ների՛ր ինձ, Նանա՛:

— Ինքս եմ կտրել մեզ կապող պորտալարը: Դրա համար էի դանակ վերցրել:

— Ների՛ր ինձ:

Այստեղ Նանան միշտ դանդաղ, տանջալից ժպտում էր, ասես շարունակում էր մեղադրել կամ դժկամորեն ներում էր. Մարիամն այդպես էլ չհասկացավ: Մանկահասակ Մարիամի մտքով չէր անցնում, որ անարդար է իր ծնվելու ձևի համար ներողություն խնդրել:

Երբ խելքը կտրեց՝ մոտավորապես տասը տարեկանում, Մարիամն այլևս չէր հավատում իր ծննդյան մասին այս պատմությանը: Նա հավատում էր Ջալիլի տարբերակին, ըստ որի, չնայած Ջալիլը հեռու էր, բայց կազմակերպել էր, որ Նանային տեղափոխեն Հերաթի հիվանդանոց, որտեղ Նանան բժշկի վերահսկողության տակ էր: Նա պառկած էր մաքուր, հարմարավետ մահճակալին՝ լավ լուսավորված սենյակում: Ջալիլը տխուր օրորեց գլուխը, երբ Մարիամը պատմեց նրան դանակի մասին:

Մարիամը սկսեց նաև կասկածել, որ ստիպել էր մորը երկու լրիվ օր տառապել:

— Ինձ ասացին, որ մի ժամվա ընթացքում ամեն ինչ ավարտվեց,— ասաց Ջալիլը: Դու լավ դուստր էիր, Մարիա՛մ ջո: Նույնիսկ ծնվելուդ ժամանակ լավ դուստր էիր:

— Նա նույնիսկ այնտեղ չէր,— թշնամանքով ասաց Նանան,— Նա Թախթ-ի-Սաֆարում էր, ձի էր քշում իր թանկագին ընկերների հետ:

Երբ նրան հայտնեցին, որ նոր աղջիկ է ծնվել, պատմեց Նանան, Ջալիլը թոթվեց ուսերը, շարունակեց սանրել ձիու բաշը ու ևս երկու շաբաթ մնաց Թախթ-ի-Սաֆարում:

— Իրականում նա քեզ նույնիսկ ձեռքը չի առել, մինչև մի ամիսդ չլրացավ: Իսկ հետո միայն մի անգամ նայել է, նկատել, որ երկարավուն դեմք ունես, ու նորից ինձ տվել:

Մարիամը սկսեց չհավատալ նաև պատմության այս հատվածին: Այո՛, Ջալիլը խոստովանեց, որ Թախթ-ի-Սաֆարում ձի էր

քշում, բայց երբ նրան հայտնել էին լուրը, նա չէր թոթվել ուսերը: Նա թռել էր ձիու թամբին ու վերադարձել Հերաթ: Նա Մարիամին օդ էր թռցրել, մատը քսել նրա թեփոտ հոնքերին ու կիսաձայն օրորոցային երգել: Մարիամը չէր պատկերացնում, որ Ջալիլն ասեր՝ իր դեմքը երկար էր, չնայած այդպես էլ կար:

Նանան ասաց, որ ինքն է Մարիամ անունն ընտրել, քանի որ իր մոր անունն էր: Ջալիլն ասաց, որ ընտրել է այդ անունը, որովհետև Մարիամը՝ բրաբիոնը, գեղեցիկ ծաղիկ է:

— Ամենասիրելի՞դ,— հարցրեց Մարիամը:

— Սիրելիներից մեկը,— ասաց նա ու ժպտաց:

3

Մարիամի ամենավաղ հիշողություններից մեկը քարերի վրա թռչկոտող սայլի երկաթե ճռճռան անիվների ձայնն էր: Սայլը գալիս էր ամիսը մեկ՝ մեջը բրինձ, ալյուր, թեյ, շաքար, ձեթ, օճառ, ատամի մածուկ: Այն բրթում էին Մարիամի երկու խորթ եղբայրները՝ սովորաբար Մուհսինն ու Ռամին, երբեմն՝ Ռամին ու Ֆարհադը: Սայլուղով վեր, քարերի ու խճի վրայով, փոսերի ու թփերի կողքով տղաները հերթով հրում էին սայլը մինչև վտակը: Այստեղ պետք էր դատարկել սայլը, իրերը անցկացնել ջրի վրայով: Այնուհետև տղաները տեղափոխում էին սայլը վտակի վրայով ու նորից բեռնում: Հետո հրում էին ևս երկու հարյուր մետր՝ այս անգամ բարձր, խիտ խոտերի միջով ու մացառուտների կողքով: Նրանց ոտքերի տակից ցատկում էին գորտերը: Եղբայրները քրտնած դեմքերից քշում էին մոծակներին:

— Նա ծառաներ ունի,— ասաց Մարիամը,— կարող էր ծառային ուղարկել:

— Քավությունն այսպես է պատկերացնում,— ասաց Նանան:

Սայլի ձայնից Մարիամն ու Նանան դուրս էին գալիս: Մարիամը միշտ հիշում էր Նանայի տեսքը «Պարենի օրը». դռանը հենված բարձրահասակ, ոսկրոտ, ոտաբոբիկ կին՝ շիլ աչքը նեղացած, ճեղք դարձած, ձեռքերը արհամարհական ու հեգնական կրծքին խաչած: Նրա կարճ կտրած, արևով լուսավորված մազերը առանց

գլխաշորի էին, չսանրած: Հագին մինչև կոկորդը կոճկած, մոխրագույն վատ կարված վերնաշապիկ էր: Գրպանները լցնում էր ընկույզի չափ քարերով:

Տղաները նստում էին վտակի մոտ ու սպասում, որ Մարիամն ու Նանան պարենը *քոլքա* տեղափոխեն: Նրանք խոհեմաբար 30 մետրից մոտիկ չէին գալիս, չնայած Նանան լավ նշան չէր բռնում, ու քարերի մեծ մասը թիրախից շատ հեռու էր ընկնում: Բրնձի պարկերը ներս տանելիս Նանան բղավում էր տղաների վրա, նրանց անպատիվ անուններ տալիս, որոնք Մարիամը չէր հասկանում: Նանան ատելությամբ էր նայում նրանց, անիծում նրանց մայրերին: Տղաները երբեք վիրավորանքներին չէին պատասխանում:

Մարիամը խղճում էր տղաներին: Ինչքան հոգնած պետք է լինեին նրանց ձեռքերն ու ոտքերը, խղճահարությամբ մտածում էր նա, այդ ծանր բեռը հրելուց: Կուզեր, որ իրեն թույլ տային՝ նրանց ջուր տար: Բայց Մարիամը ոչինչ չէր ասում, և եթե նրանք ձեռքով էին անում, չէր պատասխանում: Մի անգամ, հանուն Նանայի, Մարիամը նույնիսկ բղավեց Մուհսինի վրա, ասաց, որ նրա բերանը նման է մողեսի հետույքի, իսկ հետո տառապում էր մեղքի և ամոթի զգացումից ու վախենում, որ նրանք կպատմեն Ջալիլին: Իսկ Նանան այնքան բարձր ծիծաղեց՝ ցուցադրելով իր առջևի փչացած ատամը, որ Մարիամը մտածեց՝ ուր որ է կսկսվի նրա հերթական նոպան: Երբ վերջացրեց ծիծաղել, Նանան նայեց Մարիամին ու ասաց.

— Դու լա՛վ դուստր ես:

Երբ սայլակը դատարկվում էր, տղաները, այն հրելով, դանդաղ հեռանում էին: Մարիամը սպասում էր ու նայում, թե ինչպես են նրանք անհետանում բարձր խոտի ու ծաղկող մոլախոտերի մեջ:

— Գալի՞ս ես:

— Հա՛, Նանա՛:

— Նրանք ծիծաղում են քեզ վրա: Հաստատ: Ես լսում եմ:

— Գալիս եմ:

— Չե՞ս հավատում ինձ:

— Այստեղ եմ:

— Գիտես, չէ՞, որ սիրում եմ քեզ, Մարիա՛մ ջո:

* * *

Առավոտները նրանք արթնանում էին հեռվում ոչխարների մայունից ու ֆլեյտայի զիլ ձայնից, երբ Գյուլ Դամանի հովիվներն իրենց հոտը բերում էին՝ խոտածածկ լեռների վրա արածեցնելու: Մարիամն ու Նանան կթում էին այծերին, կերակրում հավերին ու հավաքում ձվերը: Միասին հաց էին թխում: Նանան սովորեցնում էր նրան խմոր հունցել, ***թանդուր*** վառել ու դրա ներքին պատերին խփել տափակեցրած խմորը: Նանան սովորեցնում էր նաև կարել, բրինձ եփել ու տարբեր խավարտներ պատրաստել. ***շալքամ՝*** շաղգամով ճաշ, սպանախով ***սաբզի***[10], կոճապղպեղով ծաղկակաղամբ:

Նանան չէր թաքցնում, որ չի սիրում այցելուների և ընդհանրապես մարդկանց, բայց նա բացառություն էր անում մի քանի ընտրյալների համար: Նրանք էին՝ Գյուլ Դամանի առաջնորդը՝ գյուղի ***արբաբը***[11], Հաբիբ Խանը՝ փոքրագլուխ մորուքավոր ցմփոր մարդ, որ գալիս էր ամիսը մեկ՝ ծառան պոչից, ու բերում էր հավ, երբեմն մի ման ***քիչիրի***[12] բրինձ կամ մի զամբյուղ ներկած ձու Մարիամի համար:

Մյուսը գիրուկ ծեր կին էր, որին Նանան Բիբի ջո էր ասում. նրա մահացած ամուսինը քարտաշ էր ու Նանայի հոր ընկերը: Բիբի ջոյին միշտ ուղեկցում էին իր վեց հարսներից մեկը ու մեկ-երկու թոռնիկ: Նա կաղալով ու տնքալով անցնում էր բացատը, ցուցադրաբար տրորում ազդրը ու ցավից հառաչելով՝ նստում Նանայի բերած աթոռի վրա: Բիբի ջոն էլ էր միշտ մի բան բերում Մարիամին՝ մի տուփ ***դիշլեմեհ***[13] կոնֆետ, մի զամբյուղ սերկևիլ: Նանային առաջին հերթին բերում էր առողջության վատթարացման մասին իր բողոքները, իսկ հետո բամբասանք Հերաթից և Գյուլ Դամանից, ինչն անում էր երկար ու ախորժակով, մինչ նրա հարսը, լուռ ու հնազանդ նստած, հետևում էր:

Բայց Մարիամի ամենասիրելին, իհարկե, Ջալիլից հետո, Մոլլա Ֆայզուլլան էր՝ գյուղի ծեր Ղուրան սովորեցնողը, ***ախունդը***[14]: Նա

---

[10] Սաբզի (պարսկ.)՝ կանաչեղեն
[11] Արբաբ (պարսկ.)՝ ղեկավար, առաջնորդ
[12] Քիչիրի՝ բրնձով ու ոսպով ճաշ
[13] Դիշլեմեհ՝ հիմնականում շաքարից պատրաստված կոնֆետ
[14] Ախունդ (պարսկ.)՝ կրոնական առաջնորդ

գալիս էր Գյուլ Դամանից շաբաթը մեկ-երկու անգամ, որպեսզի սովորեցնի Մարիամին օրական հինգ *նամազ* աղոթքները ու Ղուրանից անգիր արտասանել, ինչպես սովորեցրել էր Նանային, երբ նա աղջիկ էր: Մոլլա Ֆայզուլլան էր, ով Մարիամին կարդալ սովորեցրեց, նա էր համբերատար նայում նրա մեջքի հետևից, երբ Մարիամի շուրթերը անձայն արտասանում էին բառերը, երբ ցուցամատը կանգ էր առնում յուրաքանչյուր բառի տակ ու այնքան սեղմում, որ եղունգը սպիտակում էր, ասես ուզում էր խորհրդանիշերից ճզմելով իմաստը հանել: Մոլլա Ֆայզուլլան էր, ով, բռնելով իր ձեռքը, մատիտը տանում էր յուրաքանչյուր *ալեֆի*[15] կորի, յուրաքանչյուր *բեհի* կամարի, յուրաքանչյուր *սեհի* երեք կետերի վրայով:

Նա վտիտ, կորամեջք ծերունի էր՝ անատամ ժպիտով ու մինչև պորտը հասնող սպիտակ մորուքով: Սովորաբար նա մենակ էր գալիս *քոլբա*, թեև երբեմն բերում էր իր կարմրավուն մազերով տղային՝ Համզային, որը մի քանի տարով մեծ էր Մարիամից: Երբ Մոլլա Ֆայզուլլան մտնում էր *քոլբա*, Մարիամը համբուրում էր նրա ձեռքը, ասես մաշկի բարակ շերտով ծածկված փայտիկներ համբուրեր, իսկ նա համբուրում էր Մարիամի ճակատը, ու նրանք նստում էին ներսում՝ օրվա դասը սերտելու: Հետո երկուսով նստում էին *քոլբայի* առաջ, սոճու սերմեր էին ուտում ու կանաչ թեյ խմում, հետևում էին ծառից ծառ թռչող *բյուլբյուլ*[16] թռչուններին: Երբեմն գնում էին զբոսնելու թափված բրոնզագույն տերևների ու լաստենու թփերի միջով, վտակի կողքով դեպի լեռները: Քայլելիս Մոլլա Ֆայզուլլան պտտում էր իր *թասբեհի*[17] ուլունքները ու դողացող ձայնով պատմում Մարիամին պատանեկության օրերին տեսածների մասին, օրինակ՝ երկգլխանի օձի մասին, որին գտել էր Իրանում, Սպահանի Երեսուներեք կամարանոց կամուրջի մասին կամ Մազարի Կապույտ մզկիթի մոտ ջարդած ձմերուկի մասին, որի մի կեսում սերմերը կազմել էին «Ալլահ», իսկ մյուսում՝ «Աքբար»[18] բառերը:

---

15 Ալեֆ, բեհ, սեհ՝ արաբական այբուբենի տառեր
16 Բյուլբյուլ (պարսկ.)՝ միջին չափի երգեցիկ թռչուն
17 Թասբեհ (պարսկ.)՝ թզբեհ, տերողորմյա
18 Ալլահ Աքբար՝ Մեծն Աստված

Մոլլա Ֆայզուլլան խոստովանել էր Մարիամին, որ երբեմն չի հասկանում Ղուրանի բառերի իմաստը: Բայց ասում էր, որ սիրում է՝ ինչպես են արաբերեն բառերի դյութիչ հնչյունները ծորում լեզվից: Ասում էր, որ դրանք մխիթարում են իրեն, սիրտը բացում:

«Դրանք քեզ էլ կմխիթարեն, Մարիա՛մ ջո,— ասում էր,— դու կարող ես դրանք արտասանել, երբ կարիք ունենաս, ու դրանք քեզ չեն դավաճանի: Աստծո խոսքը քեզ երբեք չի դավաճանի, աղջի՛կս»:

Մոլլա Ֆայզուլլան ոչ միայն պատմում էր, այլև լսում պատմություններ: Երբ Մարիամը խոսում էր, նա միշտ ուշադիր էր: Դանդաղ գլխով էր անում ու երախտագիտությամբ ժպտում, ասես նրան հատուկ արտոնություն էր շնորհվել: Մոլլա Ֆայզուլլային հեշտությամբ կարելի էր պատմել այն բաները, որոնք Մարիամը չէր համարձակվի պատմել Նանային:

Մի օր զբոսնելիս Մարիամը նրան ասաց, որ ցանկանում է՝ իրեն թույլ տան դպրոց գնալ:

— Նկատի ունեմ՝ իսկական դպրոց, ***ախունդ սահիբ***[19]: Դասարանում: Հորս մյուս երեխաների պես:

Մոլլա Ֆայզուլլան կանգ առավ:

Մեկ շաբաթ առաջ Բիբի ջոն տեղեկացրել էր, որ Ջալիլի դուստրերը՝ Սայդեն ու Նահիդը, հաճախում են «Մեհրի» աղջիկների դպրոցը Հերաթում: Այդ ժամանակից ի վեր Մարիամի գլխում անընդհատ պտտվում էր դասասենյակների և ուսուցիչների, տողերով տետրերի, թվերի սյունակների, մուգ, հաստ գրող գրիչների մասին միտքը: Նա պատկերացնում էր իրեն մյուս աղջիկների հետ մի դասարանում: Մարիամն ուզում էր դնել քանոնը էջի վրա ու կարևոր գծեր գծել:

— Դա՞ է ուզածդ,— հարցրեց Մոլլա Ֆայզուլլան՝ նայելով նրան իր մեղմ, ջրակալած աչքերով, ձեռքերը կորացած մեջքի հետևում: Նրա չալմայի ստվերը ընկնում էր եղածաղիկների վրա:

— Այո՛:

— Եվ ուզում ես՝ հարցնեմ մորդ թույլտվությունը:

Մարիամը ժպտաց: Նրա կարծիքով Ջալիլից հետո աշխարհում չկար մեկը, ով ավելի լավ էր հասկանում իրեն, քան իր ծեր ուսուցիչը:

---

[19] Սահիբ (պարսկ.)՝ տեր, պարոն

— Հիմա ինչ անեմ: Իմաստուն Աստված բոլորին մի թուլություն տվել է, իսկ իմ բազմաթիվ թուլություններից ամենամեծն այն է, որ անզոր եմ քեզ մերժել, Մարիամ ջո,— ասաց նա ու թփթփացրեց իր հոդաբորբով մատը Մարիամի այտին:

Բայց ավելի ուշ, երբ սկսեց Նանայի հետ քննարկել, Նանան ձեռքից գցեց դանակը, որով սոխ էր կտրտում:

— Ինչի՞ համար:

— Եթե աղջիկն ուզում է սովորել, թող սովորի, սիրելի՛ս: Թող աղջիկը կրթություն ստանա:

— Սովորի՞: Ի՞նչ սովորի, Մոլլա՛ *սահիբ*,— կտրուկ ասաց Նանան,— ի՞նչ կա սովորելու:

Նա շեշտակի նայեց Մարիամին:

Մարիամը գլուխն իջեցրեց ու նայեց իր ձեռքերին:

— Ի՞նչ իմաստ կա քեզ նման աղջկան կրթելու: Ոնց որ թքամանը փայլեցնես: Այդ դպրոցներում ոչ մի արժեքավոր բան չես սովորի: Կյանքում մի, միայն մի հմտության կարիք ունեն քեզ ու ինձ պես կանայք, իսկ դա դպրոցում չեն սովորեցնում: Նայի՛ր ինձ:

— Պետք չէ այդպես խոսել նրա հետ, աղջի՛կս,— ասաց Մոլլա Ֆայզուլլան:

— Նայի՛ր ինձ:

Մարիամը նայեց:

— Միայն մեկ հմտություն: Սա է՝ *թահամուլ*: Համբերել:

— Ինչի՞ն համբերել, Նանա՛:

— Օ՜, չանհագստանաս,— ասաց Նանան,— համբերելու բաներ ի պակաս չի լինի:

Նա շարունակեց պատմել, թե ինչպես էին Ջալիլի կանայք նրան անվանում տգեղ, ստորին դասի քարտաշի դուստր: Ինչպես էին ստիպում նրան դրսում լվացք անել, մինչև դեմքը չէր փայտանում, իսկ մատների ծայրերը՝ վառվում:

— Սա է կյանքում մեր բախտը, Մարիա՛մ: Մեզ նման կանանց: Մենք համբերում ենք: Մեզ միայն դա է մնում: Հասկանո՞ւմ ես: Բացի այդ՝ դպրոցում քեզ վրա կծիծաղեն: Անպայման: Քեզ *հարամի* կանվանեն: Քեզ ամենասարսափելի բաները կասեն: Ես դա չե՛մ հանդուրժի:

Մարիամը գլխով արեց:

— Ու էլ դպրոցի մասին չխոսես: Իմ ունեցած-չունեցածը դո՛ւ ես: Ես քեզ նրանց չեմ տա: Նայի՛ր ինձ: Այլևս դպրոցի մասին ոչ մի խոսք:

— Խելամի՛տ եղիր: Դե՛, դե՛: Եթե աղջիկն ուզում է...— սկսեց Մոլլա Ֆայզուլլան:

— Իսկ Դուք, *ախո՛ւնդ սահիբ*, չնայած հարգում եմ Ձեզ, ավելի լավ է՝ չխրախուսեք այդ անհեթեթ գաղափարները: Եթե իրոք մտահոգվում եք նրա մասին, ապա ստիպե՛ք, որ հասկանա՝ իր տեղը տանն է՝ մոր կողքին: Այնտեղ նրա համար ոչինչ չկա: Ոչինչ՝ բացի մերժումից ու վշտից: Ես դա գիտեմ, *ախո՛ւնդ սահիբ*: Ես գիտեմ:

4

Մարիամը սիրում էր, երբ *քոլբա* այցելուներ էին գալիս. գյուղի *արբաբը* նվերներով, Բիբի ջոն իր ցավող ազդրով ու անվերջ բամբասանքով և, իհարկե, Մոլլա Ֆայզուլլան: Բայց չկար մեկը, գեթ մեկ հոգի, ում Մարիամը սպասում էր ավելի, քան Ջալիլին:

Անհանգստությունը սկսվում էր երեքշաբթի երեկոյան: Մարիամը վատ էր քնում, մտահոգվում էր, որ գործերի բերումով Ջալիլը չի կարողանա գալ հինգշաբթի օրը, որ ինքը ստիպված կլինի ևս մի ամբողջ շաբաթ սպասել նրան տեսնելու համար: Չորեքշաբթի օրերը նա հետ ու առաջ էր անում դրսում՝ *քոլբայի* շուրջը, հավաբնի հավերին մտացրիվ կեր էր շպրտում: Գնում էր աննպատակ զբոսանքների, ծաղիկներից թերթեր էր պոկում ու խփում թևերը կծոտող մոծակներին: Իսկ հինգշաբթի օրերին միակ բանը, որը կարողանում էր անել, պատի տակ նստելն էր՝ աչքերը վտակից չկտրելով, ու սպասելը: Եթե Ջալիլն ուշանում էր, նրան կամաց-կամաց սկսում էր պատել սարսափը: Ծնկները թուլանում էին, ստիպված գնում էր պառկում մի տեղ:

Հետո Նանան կանչում էր՝ «Ահա՛, սա էլ հայրդ իր ամբողջ շուքով»:

Մարիամը վեր էր թռչում, երբ նկատում էր, որ հայրը, քարից քար ցատկելով, անցնում է վտակը՝ ժպտերես, ձեռքերը թափահարելով: Մարիամը գիտեր, որ Նանան նայում է իրեն, գնահատում է իր վե-

բաբերմունքը, ու միշտ ստիպում էր իրեն մնալ դռան շեմին, սպասել, որ Ջալիլը դանդաղ մոտենա, չվազել մոտը: Մարիամը զսպում էր իրեն, համբերատար նայում, թե ինչպես է նա անցնում բարձր խոտի միջով՝ բաճկոնը ուսին, փողկապը թեթև քամուց ալիքված:

Երբ Ջալիլը մտնում էր բացատը, բաճկոնը գցում էր *թանդուրի* վրա ու գիրկը բացում: Մարիամը քայլում էր, հետո վազում նրա մոտ, իսկ Ջալիլը բռնում էր նրան թևատակերից ու օդ թռցնում: Մարիամը ճչում էր:

Օդում կախված՝ Մարիամը տեսնում էր Ջալիլի վեր նայող դեմքը, նրա լայն, ծուռ ժպիտը, ճակատի մազերի եռանկյունին, ճեղքված կզակը՝ կատարյալ գրպանիկը Մարիամի ճկույթի համար, նրա ատամները՝ ամենասպիտակները փտող սեղանատամների քաղաքում: Մարիամը սիրում էր նրա կարճ բեղերը, սիրում էր, որ ցանկացած եղանակին նա գալիս էր այցելության կոստյումով՝ մուգ շագանակագույն՝ նրա սիրած գույնը, կրծքագրպանի մեջ թաշկինակի սպիտակ եռանկյունի, ճարմանդներ և սովորաբար կարմիր փողկապ, որը նա մի փոքր արձակում էր: Ջալիլի շագանակագույն աչքերում Մարիամը տեսնում էր իր իսկ արտացոլաքը՝ ալիքվող վարսերը, հուզմունքից վառվռուն դեմքը, հետևում՝ երկինքը:

Նանան ասում էր, որ օրերից մի օր Ջալիլը Մարիամին բաց կթողնի, որ նա կսղա մատների արանքով, կընկնի գետնին ու մի ոսկոր կկոտրի: Բայց Մարիամը չէր հավատում, որ Ջալիլը կգցի իրեն: Նա հավատում էր, որ միշտ ապահով կիջնի հոր մաքուր, խնամված ձեռքերի մեջ:

Նրանք նստում էին *քոլբայի* մոտ՝ ստվերում, իսկ Նանան թեյ էր մատուցում: Ջալիլն ու Նանան բարևում էին իրար կաշկանդված ժպիտով ու գլխի տմբոցով: Ջալիլը երբեք չէր խոսում Նանայի՝ քար շպրտելու կամ հայհոյանքի մասին:

Չնայած Ջալիլի բացակայության ժամանակ հնչած անեծքներին՝ նրա այցի ժամանակ Նանան խոնարհ ու կիրթ էր: Մազերը միշտ լվացած էին: Նա մաքրում էր ատամները, հագնում լավագույն *հիջաբը*[20]: Լուռ նստում էր դիմացի աթոռին, ձեռքերը ծալում ծնկնե-

---

[20] Հիջաբ՝ մահմեդական կանանց գլխաշոր

րին: Նանան երբեք ուղիղ Ջալիլի դեմքին չէր նայում ու վատ բառեր չէր գործածում: Ծիծաղելիս բռունցքով ծածկում էր բերանը, որպեսզի թաքցնի փչացած ատամը:

Նանան հարցնում էր Ջալիլի գործերի մասին: Եվ նրա կանանց: Երբ Նանան պատմեց նրան, որ Բիբի ջոյից լսել է, որ նրա ամենաերիտասարդ կինը՝ Նարգիզը, սպասում է երրորդ երեխային, Ջալիլը քաղաքավարի ժպտաց ու գլխով արեց:

— Դե, դու պետք է երջանիկ լինես,— ասաց Նանան,— քանիսն ունես հիմա: Տասը, չէ՞, *մաշալլահ*[21]: Տա՞սը:

Ջալիլն ասաց՝ այո՛, տասը:

— Տասնմեկ, եթե Մարիամին հաշվես, իհարկե:

Ավելի ուշ, երբ Ջալիլը տուն գնաց, Մարիամն ու Նանան մի փոքր վիճեցին դրա համար: Մարիամն ասաց, որ Նանան Ջալիլին սխալեցրել է:

Նանայի հետ թեյ խմելուց հետո Մարիամն ու Ջալիլը միշտ գնում էին՝ վտակում ձուկ բռնելու: Նա ցույց էր տալիս Մարիամին՝ ինչպես են կարթը նետում, իշխանին կարթաթելի վրա փաթաթում: Սովորեցնում էր՝ ինչպես են իշխանի փորոտիքը հանում, մաքրում, միսը մի շարժումով ոսկորից պոկում: Մինչ ձուկը կբռներ խայծը, Ջալիլը նկարում էր, ցույց էր տալիս՝ ինչպես կարելի է մի գծով՝ առանց թղթից գրիչը բարձրացնելու, փիղ նկարել: Բանաստեղծություններ էր սովորեցնում: Միասին երգում էին.

Ջրափոսի մեջ ծիտիկը
Լվանում է իր քիթիկը:
Ձուկը եզրակին նստեց,
Խմեց, ընկավ ու խեղդվեց:

Ջալիլը բերում էր Հերաթի «Իթթիֆաք-ի Իսլամ» թերթից քաղվածքներ ու կարդում Մարիամի համար: Նա Մարիամի կապն էր, ապացույցը, որ *քոլբայից*, Գյուլ Դամանից և նույնիսկ Հերաթից դուրս գոյություն ունի մեծ աշխարհ, անարտասանելի անուններով

---

[21] Մաշալլահ՝ Աստծո կամքով

նախագահների աշխարհ, գնացքների, թանգարանների, ֆուտբոլի, երկիրը ուղեծրող ու Լուսնի վրա վայրէջք կատարող հրթիռների աշխարհ, և ամեն հինգշաբթի Ջալիլը այդ աշխարհից մի կտոր իր հետ բերում էր *քոլբա*:

Ջալիլն էր, որ 1973 թվականի ամռանը, երբ Մարիամը տասնչորս տարեկան էր, պատմեց նրան, որ քառասուն տարի Քաբուլից երկիրը ղեկավարած Զահիր Շահը տապալվել է անարյուն հեղաշրջման արդյունքում:

— Դա արեց նրա զարմիկը՝ Դաուդ Խանը, երբ թագավորը Իտալիայում բուժում էր ստանում: Հիշում ես Դաուդ Խանին, չէ՞: Ես քեզ պատմել եմ նրա մասին: Նա Քաբուլում վարչապետ էր, երբ դու ծնվեցիր: Ինչևէ, Աֆղանստանը այլևս միապետություն չէ, Մարիա՛մ: Հասկանո՞ւմ ես, հիմա այն հանրապետություն է, իսկ Դաուդ Խանը նախագահ է: Լուրեր են պտտվում, որ Քաբուլի սոցիալիստներն են նրան օգնել իշխանության գալու: Նա, ասեմ քեզ, սոցիալիստ չէ, բայց նրանք օգնել են նրան: Ամեն դեպքում այդպես են ասում:

Մարիամը հարցրեց, թե ինչ է նշանակում «սոցիալիստ», և Ջալիլը սկսեց բացատրել, բայց Մարիամը հազիվ էր լսում նրան:

Ջալիլը տեսավ, որ Մարիամը նայում է իր բաճկոնի ուռած գրպանին:

— Ա՜հ: Իհարկե. դե ուրեմն առանց երկարացնելու...

Նա գրպանից հանեց մի փոքրիկ տուփ ու տվեց Մարիամին: Ժամանակ առ ժամանակ անում էր սա՝ փոքրիկ նվերներ էր բերում: Մի անգամ՝ սարդիոնից ապարանջան, մյուս անգամ՝ լաջվարդի ուլունքներով մանյակ: Այդ օրը Մարիամը բացեց տուփը ու հայտնաբերեց տերևի ձևով կախազարդ, որից կախված էին աստղերով ու լուսնի փորագրություններով փոքրիկ մետաղադրամներ:

— Փորձի՛ր, Մարիա՛մ ջո:

Նա փորձեց:

— Ի՞նչ կասես:

Ջալիլի դեմքը փայլեց:

— Կասեմ, որ թագուհու ես նման:

Նրա գնալուց հետո Նանան տեսավ կախազարդը Մարիամի պարանոցին:

— Քոչվորների զարդեղեն,— ասաց,— ես տեսել եմ՝ ինչպես են սարքում: Հալեցնում են կոպեկները, որ մարդիկ գցում են նրանց, ու զարդեր սարքում: Թող հաջորդ անգամ ոսկեղեն բերի թանկագին հայրիկդ: Տեսնենք՝ կբերի՞:

Երբ Ջալիլի գնալու ժամանակն էր գալիս, Մարիամը միշտ կանգնում էր դռան շեմին ու նայում, թե ինչպես է դուրս գալիս բացատից, ու ճնշվում առաջիկա շաբաթվա մասին մտքից, որը հսկա անշարժ առարկայի պես կանգնած էր իր և հաջորդ այցի միջև: Մարիամը, շունչը պահած, միշտ նայում էր նրան: Շունչը պահում էր ու մտքում վայրկյանները հաշվում: Նա երևակայում էր, որ յուրաքանչյուր չշնչած վայրկյանի համար Աստված նրան Ջալիլի հետ ևս մի օր կպարգևի:

Գիշերը Մարիամը պառկում էր անկողնում ու մտածում, թե ինչպիսին է Հերաթում նրա տունը: Մտածում էր, թե ինչ կլիներ, եթե ապրեր նրա հետ, ամեն օր տեսներ նրան: Պատկերացնում էր՝ ինչպես է սրբիչ տալիս, երբ Ջալիլը սափրվում է, ինչպես է տեղեկացնում, եթե քերծի իրեն: Ինքը Ջալիլի համար թեյ կպատրաստեր: Կկարեր նրա պոկված կոճակները: Նրանք միասին կզբոսնեին Հերաթում, կգնային փակ շուկա, որտեղ, ըստ Ջալիլի, ուզածդ բանը կարելի է գտնել: Նրանք կգնային մեքենայով, ու մարդիկ մատով ցույց կտային ու կասեին՝ «Սա էլ Ջալիլ Խանը դստեր հետ»: Ջալիլը նրան ցույց կտար այն հայտնի ծառը, որի տակ թաղված է բանաստեղծը:

Մոտակա օրերին, որոշեց Մարիամը, ինքը կպատմի Ջալիլին այս ամենը: Երբ Ջալիլը լսի, երբ տեսնի, թե որքան է կարոտում նրան, երբ նա հեռանում է, անպայման իրեն հետը կտանի: Կբերի Հերաթ, որ ապրի իր տանը մյուս երեխաների պես:

5

— Ես գիտեմ՝ ինչ եմ ուզում,— ասաց Մարիամը Ջալիլին:

1974 թվականի գարնանն էր, այն տարին, երբ լրացավ Մարիամի տասնհինգամյակը: Երեքով նստած էին *քոլբայի* մոտ՝ ուռենիների ստվերում՝ եռանկյունաձև դրված ծալովի աթոռների վրա:

— Ծննդյանս օրը... ես գիտեմ՝ ինչ եմ ուզում:

— Գիտե՞ս,— ասաց Ջալիլը ու քաջալերելով ժպտաց:

Երկու շաբաթ առաջ Մարիամի դրդմամբ Ջալիլը բերանից թռցրեց, որ իր կինոթատրոնում ամերիկյան կինոնկար է ցույց տալիս: Յուրահատուկ տեսաֆիլմ էր, կոչվում էր մուլտֆիլմ: Ամբողջ ֆիլմը մի շարք նկարներ էին, ասաց նա, հազարավոր նկարներ, որոնք դառնում էին կինոժապավեն ու լուսարձակվում էին էկրանին՝ տպավորություն ստեղծելով, որ նկարները շարժվում են: Ջալիլն ասաց, որ ֆիլմը ծեր, մանկազուրկ խաղալիքագործի մասին է, որը միայնակ է ու հուսահատորեն ցանկանում է որդի ունենալ: Նա փայտից խամաճիկ է քանդակում՝ մի տղա, որը հրաշքով կենդանանում է: Մարիամը խնդրեց, որ ավելին պատմի, և Ջալիլը ասաց, որ ծերունին և նրա խամաճիկը տարբեր արկածներ են ունենում, «Հաճույքների կղզի» կոչվող վայր կա, իսկ վատ տղաները էշեր են դառնում: Վերջում խամաճիկին ու նրա հորը նույնիսկ կետ է կուլ տալիս: Մարիամը Միլլա Ֆայզուլլային պատմել էր այդ ֆիլմի մասին:

— Ուզում եմ՝ ինձ տանես քո կինոթատրոնը,— ասաց Մարիամը,— ուզում եմ մուլտֆիլմը տեսնել: Ուզում եմ տեսնել խամաճիկ տղային:

Սա ասելուց հետո Մարիամը զգաց, որ մթնոլորտը փոխվեց: Ծնողները անհանգիստ շարժվեցին իրենց տեղերում: Մարիամը զգում էր, թե ինչպես են հայացքներ փոխանակում:

— Դա լավ միտք չէ,— ասաց Նանան:

Նրա ձայնը հանգիստ էր, Ջալիլի ներկայությամբ նա զուսպ, քաղաքավարի տոնով էր խոսում, բայց Մարիամը զգաց մոր ծանր, մեղադրական հայացքը:

Ջալիլը շարժվեց աթոռին: Հազալով մաքրեց կոկորդը:

— Գիտե՞ս,— ասաց նա,— ֆիլմի որակը այնքան էլ լավը չէ: Ոչ էլ ձայնը: Պրոյեկտորն էլ վերջերս լավ չի աշխատում: Գուցե մայրդ ճի՞շտ է: Գուցե մի ուրի՞շ նվեր մտածես, Մարիա՛մ ջո:

— *Անե՞ի*,— ասաց Նանան,— տեսա՞ր: Հայրդ համաձայն է:

* * *

Բայց հետո վտակի մոտ Մարիամն ասաց.

— Տա՛ր ինձ:

— Գիտե՞ս ինչ,— ասաց Ջալիլը,— ես կուղարկեմ մեկին, որ քեզ իր հետ տանի: Կասեմ, որ քեզ լավ տեղ տան, ու ինչքան ուզես՝ կոնֆետ:

— Չէ՛: Ես ուզում եմ՝ դու տանես:

— Մարիա՛մ ջո...

— Եվ ուզում եմ՝ հրավիրես իմ եղբայրներին ու քույրերին: Ուզում եմ հանդիպել նրանց: Ուզում եմ՝ բոլորս միասին գնանք: Ուզածս դա է:

Ջալիլը հառաչեց: Նա նայում էր այլ կողմ՝ դեպի լեռները:

Մարիամը հիշեց Ջալիլի պատմածը, որ էկրանին մարդու դեմքը տան չափ մեծ է երևում, երբ այնտեղ մեքենան վթարի է ենթարկվում, զգում ես՝ ինչպես է ոսկորներումդ գալարվում մետաղը: Նա պատկերացրեց իրեն պատշգամբում նստած իր եղբայրների, քույրերի ու Ջալիլի հետ պաղպաղակ ուտելիս:

— Ուզածս դա է,— ասաց:

Ջալիլը տխուր նայեց նրան:

— Վաղը: Կեսօրին: Ես քեզ հենց այստեղ կհանդիպեմ: Լա՞վ: Վաղը:

— Ե՛կ այստեղ,— ասաց Ջալիլը: Նա կռացավ, մոտ քաշեց Մարիամին ու երկար, երկար գրկեց նրան:

* * *

Սկզբում Նանան հետ ու առաջ էր անում *քոլբայով*, բռունցքները սեղմում ու բացում:

— Հազար տեսակի աղջիկ կարող էի ունենալ, ինչո՞ւ Աստված ինձ հենց քեզ նման անշնորհակալի տվեց: Այսքան տառապել եմ քեզ համար: Ինչպե՞ս ես համարձակվում: Ինչպե՞ս ես համարձակվում ինձ լքել, դո՛ւ, դավաճան փոքրիկ *հարամի*:

Հետո սկսեց ձեռք առնել:

— Ի՞նչ հիմար աղջիկ ես: Կարծում ես՝ նրա համար կարևո՞ր ես, նրա տանը տե՞ղ ունես: Կարծում ես՝ նրա համար դո՞ւստր ես: Որ նա կտանի՞ քեզ: Արի քեզ մի բան ասեմ: Տղամարդու սիրտը ստոր, ստոր բան է, Մարիա՛մ: Մոր արգանդի պես չէ: Չի արյունահոսելու, չի ձգվի, որ քեզ համար տեղ անի: Քեզ միայն ես եմ սիրում: Այս աշխարհում դու միայն ինձ ունես, Մարիա՛մ, իսկ երբ գնամ, դու ոչինչ չես ունենա: Ոչինչ չես ունենա: *Դու* ոչինչ ես:

Հետո փորձեց օգտագործել մեղքի զգացումը:

— Ես կմեռնեմ, եթե գնաս: *Ջինանը* կգա, նոպաս կբռնի: Ա՛յ կտեսնես, լեզուս կուլ կտամ ու կմեռնեմ: Մի՛ թող ինձ, Մարիա՛մ ջո: Խնդրում եմ, մնա՛: Ես կմեռնեմ, եթե գնաս:

Մարիամը ոչինչ չասաց:

— Գիտես, չէ՞, որ սիրում եմ քեզ, Մարիա՛մ ջո:

Մարիամն ասաց, որ գնում է զբոսնելու:

Նա վախենում էր, որ կարող է վիրավորական բաներ ասել, եթե մնա. որ ինքը գիտի՝ *ջինանը* սուտ է, Ջալիլն ասել է, որ Նանայի հիվանդությունը անուն ունի, և դեղամիջոցներով կարելի է նրա վիճակը լավացնել: Ինքը կարող էր հարցնել Նանային, թե ինչու է հրաժարվում Ջալիլի բժիշկներին տեսնելուց՝ հակառակ Ջալիլի պնդումների, ինչո՞ւ չի խմում նրա գնած դեղահաբերը: Եթե կարողանար արտահայտվել, կասեր Նանային, որ հոգնել է գործիք լինելուց, ստեր, պահանջներ լսելուց, օգտագործվելուց: Որ իրեն զզվելի է, թե ինչպես է Նանան աղճատում իրենց կյանքի ճշմարտությունները ու իրեն՝ Մարիամին, դարձնում աշխարհի դեմ ուղղված իր ցավերից ևս մեկը:

Դու վախենում ես, Նանա՛, կարող էր ասել Մարիամը: Դու վախենում ես, որ ես կարող եմ գտնել այն երջանկությունը, որը դու երբեք չես ունեցել: Իսկ դու չես ուզում, որ ես երջանիկ լինեմ: Դու ինձ լավ կյանք չես ցանկանում: Ստորությունը *քո* սրտում է:

* * *

Բացատի եզրից, որտեղ Մարիամը սիրում էր գնալ, տեսարան էր բացվում: Նա նստել էր չոր, տաք խոտի վրա: Այդտեղից երևում էր Հերաթը, որ սփռված էր ներքևում մանկական սեղանի

խաղի պես. քաղաքի հյուսիսում՝ Կանանց այգին, Չար-սուք *բազարը*, հարավում՝ Ալեքսանդր Մեծի հին միջնաբերդի ավերակները: Հեռվում Մարիամը կարող էր նշմարել մինարեթները՝ հսկաների փոշոտ մատների պես, ու փողոցները, որոնք նրա պատկերացմամբ վխտում էին մարդկանցով, սայլերով, ջորիներով: Նա տեսնում էր գլխավերևում սավառնող ու շրջաններ անող ծիծեռնակներին: Նախանձում էր այդ թռչուններին: Նրանք եղել են Հերաթում: Նրանք թռել են մզկիթների, *բազարների* վրայով: Գուցե նստել են Ջալիլի տան պատերին, նրա կինոթատրոնի մուտքի աստիճաններին:

Նա վերցրեց տասը քար ու դրանք իրար վրա դրեց՝ երեք սյուներով: Խաղ էր, որը ժամանակ առ ժամանակ թաքուն խաղում էր, երբ Նանան չէր նայում: Առաջին սյան մեջ դրեց չորս քար՝ Խադիջայի երեխաների համար, երեք քար՝ Աֆսունի երեխաների, երեքը՝ Նարգիզի երեխաների համար: Հետո ավելացրեց չորրորդ սյունը: Միայնակ տասնմեկերորդ քարը:

* * *

Հաջորդ առավոտյան Մարիամը հագավ ծնկներին հասնող բաց դեղնագույն զգեստ, բամբակյա շալվար և կապեց կանաչ *հիջաբ*: *Հիջաբի* համար մի քիչ տրամադրությունը ընկավ, քանի որ այն կանաչ էր ու չէր սազում զգեստին, բայց ճար չկար՝ ցեցը ծակծկել էր սպիտակ հիջաբը:

Մարիամը ստուգեց ժամացույցը: Հին լարովի ձեռքի ժամացույց էր՝ բաց կանաչ թվացույցի վրա սև թվեր, Միլլա Ֆայզուլլայի նվերը: Ժամը ինն էր: Հետաքրքիր էր՝ որտեղ էր Նանան: Մտածեց՝ դուրս գա ու փնտրի նրան, բայց սարսափեց վիճաբանությունից, դառնացած հայացքից: Նանան իրեն կմեղադրի դավաճանության մեջ: Ձեռք կառնի իր սին փափագները:

Մարիամը նստեց: Որպեսզի ժամանակ սպանի, փորձեց մեկ գծով փիղ նկարել, ինչպես ցույց էր տվել Ջալիլը, կրկին ու կրկին: Նստելուց փայտացավ, բայց չէր պառկում, որպեսզի զգեստը չճմռթի:

Երբ սլաքները վերջապես տասնմեկ անց կես ցույց տվեցին, Մարիամը տասնմեկ քարերը դրեց գրպանը և դուրս եկավ: Դե-

պի վտակը տանող ճանապարհին նա տեսավ, որ Նանան նստել է աթոռին՝ լացող ուռենու գմբեթավոր տանիքի ստվերի տակ:

Մարիամը սպասեց վտակի մոտ՝ նախօրեին պայմանավորված վայրում: Երկնքում լողում էին մի քանի մոխրագույն, ծաղկակաղամբի ձև ունեցող ամպեր: Ջալիլը սովորեցրել էր նրան, որ ամպերը գորշ են, որովհետև այնքան խիտ են, որ դրանց վերին մասերը կլանում են արևի լույսը և սեփական ստվերը գցում ներքևի մասին: Հենց դա ես տեսնում, Մարիա՛մ ջո, ասաց, նրանց փորատակի մթությունը:

Անցավ որոշ ժամանակ:

Մարիամը վերադարձավ *քոլբա*: Այս անգամ անցավ բացատի արևմտյան կողմով, որպեսզի շրջանցի Նանային: Ստուգեց ժամացույցը: Համարյա ժամը մեկն էր:

Գործարար մարդ է, մտածեց Մարիամը: Ինչ-որ բան է պատահել:

Նա վերադարձավ վտակի մոտ ու մի քիչ էլ սպասեց: Գլխավերևում պտտվում էին սև կեռնեխները ու սուզվում խոտերի մեջ: Մարիամը հետևեց՝ ինչպես է թրթուրը դանդաղ սողում չհասունացած տատասկափշի տակով:

Մարիամը սպասեց, մինչև ոտքերը փայտացան: Այս անգամ նա չվերադարձավ *քոլբա*: Շալվարը ծալեց մինչև ծնկները, անցավ վտակը և կյանքում առաջին անգամ բլրից իջավ դեպի Հերաթ:

* * *

Նանան սխալվում էր նաև Հերաթի հարցում: Ոչ ոք նրան մատնացույց չարեց: Ոչ ոք չծիծաղեց: Մարիամը քայլեց աղմկոտ, մարդաշատ, նոճիներով եզերված պողոտաներով, հետիոտների, հեծանվորդների ու ջորիներով լծված *գարիների*[22] կայուն հոսքի մեջ, ու ոչ ոք նրա վրա քար չգցեց: Ոչ ոք նրան *հարամի* չկանչեց: Հազիվ թե որևէ մեկը նույնիսկ նայեր նրա վրա. որքան էլ անսպասելի էր ու զարմանալի, այստեղ նա սովորական մարդ էր:

Որոշ ժամանակ Մարիամը կանգնած էր մեծ զբոսայգու կենտրոնում գտնվող օվալաձև լողավազանի մոտ, որտեղ խաչվում էին

---

[22] Գարի (պարսկ.)՝ սայլ

մանրաքարից արահետները: Զարմանքով շոյեց լողավազանի եզրին կանգնած գեղեցիկ մարմարե ձիերը, որոնք անթափանց աչքերով նայում էին ջրին: Ծածուկ նայեց մի խումբ տղաների, որոնք թղթե նավակներ էին բաց թողնում: Մարիամը ամենուր ծաղիկներ տեսավ՝ կակաչներ, շուշաններ, ծխածաղիկներ. դրանց թերթերը փայլում էին արևի տակ: Մարդիկ քայլում էին արահետներով, նստում նստարաններին և թեյ խմում:

Մարիամի հավատը չէր գալիս, որ նա այստեղ է: Սիրտը ոգևորությունից արագ բաբախում էր: Կուզեր՝ Մոլլա Ֆայզուլլան հիմա տեսներ իրեն: Որքա՜ն համարձակ կհամարեր իրեն: Որքա՜ն քաջ: Մարիամը տրվեց նոր կյանքին, որը սպասում էր իրեն այս քաղաքում իր հոր, քույրերի ու եղբայրների հետ, կյանք, որտեղ նա կսիրի ու սիրված կլինի առանց վերապահման կամ օրակարգի, առանց ամոթի:

Մարիամը ուրախ վերադարձավ զբոսայգու կողքի մայրուղին: Անցավ չինարի ծառերի ստվերում նստած կաշվե դեմքերով ծեր վաճառականների կողքով, որոնք անվրդով նայում էին նրան բալերի բուրգերի ու խաղողի բլուրների հետևից: Բոբիկ տղաները վազում էին մեքենաների ու ավտոբուսների հետևից ու թափահարում սերկևիլով տոպրակները: Մարիամը կանգնել էր փողոցի անկյունում, հետևում էր անցորդներին ու չէր հասկանում, թե ինչպես կարող են նրանք այսքան անտարբեր լինել իրենց շրջապատող այս հրաշքների նկատմամբ:

Որոշ ժամանակ անց նա քաջություն հավաքեց, որպեսզի հարցնի ձիակառքի տարեց տիրոջը, թե որտեղ է ապրում Ջալիլը՝ կինոթատրոնի սեփականատերը: Ծերունին հաստ այտեր ուներ ու ծիածանագույն զոլավոր *չափան*[23]:

— Հերաթից չես, չէ՞,— ընկերաբար հարցրեց նա,— բոլորը գիտեն՝ որտեղ է ապրում Ջալիլ Խանը:

— Կարո՞ղ եք ինձ ցույց տալ:

Ծերունին բացեց փայլաթիթեղի մեջ փաթաթած մի կոնֆետ ու հարցրեց.

---

[23] Չափան (պարսկ.)՝ ձմեռային վերարկու

— Մենա՞կ ես:

— Այո՛:

— Բարձրացի՛ր՝ կտանեմ:

— Ես չեմ կարող վճարել, փող չունեմ:

Ծերունին կոնֆետը տվեց Մարիամին: Ասաց, որ երկու ժամ է՝ հաճախորդ չունի ու պատրաստվում է տուն գնալու: Ջալիլի տունն էլ ճանապարհին է:

Մարիամը բարձրացավ *գարիի* վրա: Լուռ քշեցին կողք կողքի: Ճանապարհին Մարիամը տեսավ համեմունքների խանութներ, կրպակներ, որտեղից գնորդները ձեռք էին բերում նարինջ ու տանձ, գրքեր, շալեր, նույնիսկ բազեներ: Փոշու մեջ նկարված շրջանների մեջ երեխաները քարկտիկ էին խաղում: Թեյարանների դիմաց՝ գորգածածկ փայտե սեղանների մոտ, տղամարդիկ թեյ էին խմում ու *հուքայով*[24] ծխախոտ ծխում:

Ծերունին թեքվեց դեպի լայն, փշատերև ծառերով փողոցը: Ճանապարհի կեսին կանգնեցրեց ձիուն:

— Սա է: Բախտդ բերել է, *դոխթա՛ր*[25] ջո: Նրա մեքենան է:

Մարիամը վար ցատկեց: Ծերունին ժպտաց ու առաջ քշեց:

* * *

Մարիամը երբեք մեքենայի ձեռք չէր տվել: Նա սահեցրեց մատները Ջալիլի սև փայլուն մեքենայի վրայով, որի շողշողուն անիվների մեջ տեսավ իր տափակած, լայնացած արտացոլանքը: Նստատեղերը սպիտակ կաշվից էին: Ղեկի հետևում Մարիամը տեսավ կլոր ապակե վահանակներ, դրանց հետևում՝ ցուցասլաքներ:

Մի պահ Մարիամը լսեց Նանայի ձայնը՝ ծաղրող, իր խոր հույսերի փայլը խաթարող: Դողացող ոտքերով նա մոտեցավ շքամուտքի դռանը: Ափերը դրեց պատերին: Դրանք այնքան բարձր էին, այնքան չարագուշակ՝ Ջալիլի տան պատերը: Ստիպված էր պարանոցը երկարել, որպեսզի տեսնի մյուս կողմից վեր խոյա-

---

[24] Հուքա՝ հայտնի է նաև որպես նարգիլե, կալյան, շիշա, ջրային ծխամորճ

[25] Դոխթար (պարսկ.)՝ աղջիկ, դուստր

ցող նոճիների գագաթները: Ծառերի կատարները ճոճվում էին զեփյուռից, և նա պատկերացրեց, որ դրանք գլխով ողջունում են իրեն: Մարիամը զսպեց մարմնով անցնող վախի ալիքները:

Դուռը բացեց մի ոտաբոբիկ երիտասարդ կին: Նրա ներքևի շուրթի տակ դաջվածք կար:

— Ես եկել եմ Ջալիլ Խանին տեսնելու: Ես Մարիամն եմ: Նրա դուստրը:

Աղջկա դեմքով տարակուսանք անցավ: Այնուհետև ճանաչումի կայծ: Հիմա շուրթերին փոքրիկ ժպիտ կար, դեմքին՝ անհամբերության, ակնկալիքի արտահայտություն:

— Սպասի՛ր այստեղ,— արագ ասաց կինը:

Փակեց դուռը:

Անցավ մի քանի րոպե: Հետո մի մարդ բացեց դուռը: Նա բարձրահասակ ու թիկնեղ էր, քնկոտ աչքերով ու հանգիստ դեմքով:

— Ես Ջալիլ Խանի շոֆյորն եմ,— ասաց նա բարյացակամ:

— Նրա ի՞նչը:

— Նրա վարորդը: Ջալիլ Խանն այստեղ չէ:

— Ես տեսնում եմ նրա մեքենան,— ասաց Մարիամը:

— Նա շտապ գործով մեկնել է:

— Ե՞րբ կվերադառնա:

— Չի ասել:

Մարիամն ասաց, որ կսպասի: Վարորդը փակեց դարպասները: Մարիամը նստեց, գրկեց ծնկները: Արդեն վաղ երեկո էր, ու նա սոված ծանում էր: Կերավ *զարի* քշողի կոնֆետը: Որոշ ժամանակ անց վարորդը կրկին դուրս եկավ:

— Դու հիմա պետք է տուն գնաս,— ասաց,— մի ժամից կմթնի:

— Ես մթին սովոր եմ:

— Համ էլ կցրտի: Արի քեզ մեքենայով տուն տանեմ: Ես կասեմ իրեն, որ դու եկել էիր:

Մարիամը լուռ նայեց նրան:

— Ուրեմն քեզ հյուրանոց կտանեմ: Այնտեղ հանգիստ կքնես: Կտեսնենք՝ առավոտյան ինչ կարող ենք անել:

— Թո՛ւյլ տվեք՝ տուն մտնեմ:

— Ինձ հանձնարարվել է թույլ չտալ: Լսի՛ր, ոչ ոք չգիտի, թե նա երբ է վերադառնալու: Կարող է օրեր տևել:

Մարիամը ձեռքերը խաչեց կրծքին:

Վարորդը հոգոց հանեց ու մեղմ նախատինքով նայեց նրան:

Հետագա տարիներին Մարիամը բավական առիթներ կունենար՝ մտածելու, թե ինչ կլիներ, եթե թույլ տար վարորդին իրեն *քոլբա* տանել: Բայց թույլ չտվեց: Գիշերն անցկացրեց Ջալիլի տան մոտ: Տեսավ՝ ինչպես է մթագնում երկինքը, ինչպես են ստվերները ծածկում հարևան տները: Դաջվածքով աղջիկը հաց ու բրնձի ափսե բերեց, որոնցից հրաժարվեց: Աղջիկը դրանք թողեց Մարիամի կողքին: Ժամանակ առ ժամանակ փողոցից լսվում էին ոտնաձայներ, բացվող դռների ձայներ, խուլ ողջույններ: Վառվեցին էլեկտրական լույսերը, պատուհանները աղոտ փայլեցին: Շները հաչեցին: Երբ Մարիամն այլևս չկարողացավ սովին դիմանալ, կերավ մի ափսե բրինձն ու հացը: Հետո լսում էր այգու ծղրիդների ճռռոցը: Գլխավերևում դալուկ լուսնի կողքով սահում էին ամպերը:

Առավոտյան նրան ցնցելով արթնացրին: Մարիամը տեսավ, որ գիշերը ինչ-որ մեկն իրեն ծածկել էր վերմակով:

Վարորդն էր ուսը ցնցում:

— Հերի՛ք եղավ: Տեսարան սարքեցիր: *Բաս*[26]: Ժամանակն է գնալու:

Մարիամը նստեց ու աչքերը տրորեց: Մեջքն ու վիզը ցավում էին:

— Ես նրան կսպասեմ:

— Նայի՛ր ինձ,— ասաց վարորդը,— Ջալիլ Խանը ասում է, որ ես պետք է հենց հիմա քեզ տուն տանեմ: Հենց հիմա: Հասկանո՞ւմ ես: Ջալիլ Խանն է ասում:

Նա բացեց մեքենայի հետևի դուռը:

— *Բի՛ա*, արի՛,— մեղմ ասաց նա:

— Ես ուզում եմ նրան տեսնել,— ասաց Մարիամը: Աչքերը սկսեցին լցվել:

Վարորդը հոգոց հանեց:

— Արի քեզ տուն տանեմ, արի՛, *դոխտա՛ր* ջո:

---

[26] Բաս (պարսկ.)՝ բավական

Մարիամը վեր կացավ ու քայլեց դեպի նա: Բայց վերջին պահին փոխեց ուղղությունը և վազեց դեպի դարպասները: Զգաց՝ ինչպես են վարորդի մատները փորձում բռնել ուսից: Նա ուսը թափ տվեց ու սուրաց բաց դարպասների միջով:

Այն մի քանի վայրկյանների ընթացքում, որ Զալիլի այգում էր, Մարիամը հասցրեց նկատել փայլուն ապակե կառույցը, որի մեջ բույսեր էին, փայտյա նեցուկներից կախված խաղողի վազերը, մոխրագույն քարերից կառուցված ճկներով ավազանը, մրգատու ծառերը և ամենուր վառ ծաղիկների թփերը: Նա արագ աչքի անցկացրեց այս ամենը, մինչև այգու մյուս կողմում վերևի պատուհանից դուրս նայող մի դեմք տեսավ: Դեմքն այնտեղ էր ընդամենը մեկ վայրկյան, մեկ ակնթարթ, բայց դա բավական էր: Բավական էր, որ Մարիամը տեսնի՝ ինչպես են աչքերը մեծանում, բերանը բացվում: Այնուհետև դեմքը չքվեց: Հայտնվեց ձեռք, որն ուժգին քաշեց լարից: Վարագույրները փակվեցին:

Հետո մի զույգ ձեռք խրվեց նրա թևատակերն ու օդ հանեց: Մարիամը քացով խփեց: Քարերը թափվեցին գրպանից: Մարիամը շարունակում էր քացի տալ ու լացել, երբ նրան տարան դեպի մեքենան ու իջեցրին հետևի սառը կաշվե նստատեղին:

* * *

Ճանապարհին վարորդը խոսում էր ցածր մխիթարիչ տոնով: Մարիամը չէր լսում նրան: Ամբողջ ժամանակ, հետևի նստարանին վեր ու վար անելով, Մարիամը լացում էր: Դրանք վշտի, զայրույթի, հիասթափության արցունքներ էին: Բայց հիմնականում խոր, խոր ամոթի արցունքներ. Զալիլին հիմարավարի հանձնվելու համար, հագուստի համար հուզվելու, չհամապատասխանող *հիջաբի* համար, ոտքով ամբողջ ճանապարհն անցնելու, գնալուց հրաժարվելու, թափառական շան պես փողոցում քնելու համար: Եվ նա ամաչում էր, որ արհամարհեց մոր վիրավոր հայացքը, նրա ուռած աչքերը: Նանան զգուշացրել էր իրեն, Նանան ճիշտ դուրս եկավ:

Մարիամը մտածում էր վերևի պատուհանից երևացող հոր դեմքի մասին: Նա թույլ տվեց, որ ինքը փողոցում քնի: *Փողոցում*: Մա-

րիամը պառկած լացում էր: Չէր նստում, որպեսզի իրեն չտեսնեն: Նա պատկերացնում էր, որ ամբողջ Հերաթը այս առավոտ իմացավ իր խայտառակության մասին: Կուզեր, որ Մոլլա Ֆայզուլլան կողքին լիներ, որ գլուխը դներ նրա ծնկներին ու թույլ տար մխիթարել իրեն:

Որոշ ժամանակ անց ճանապարհը դարձավ խորդուբորդ, մեքենայի քիթը վեր տնկվեց: Նրանք Հերաթի և Գյուլ Դամանի միջև սարնիվեր ճանապարհին էին:

Ի՞նչ ասի Նանային, մտածում էր Մարիամը: Ինչպե՞ս ներողություն խնդրի: Ինչպե՞ս հիմա նայի Նանայի աչքերին:

Մեքենան կանգնեց, և վարորդն օգնեց ցած իջնել:

— Ես կգամ հետդ,— ասաց նա:

Մարիամը թույլ տվեց, որ իրեն ուղեկցի ճանապարհն անցնելուց ու սայլուղով բարձրանալուց: Ճանապարհի երկայնքով աճում էին ցախակեռասն ու կաթնախոտը: Փայլփլող ծաղիկների վրա բզզում էին մեղուները: Վարորդը ձեռքից բռնեց և օգնեց անցնել վտակը: Հետո ձեռքը բաց թողեց ու սկսեց խոսել այն մասին, որ շուտով կսկսեն փչել Հերաթի հայտնի հարյուր քսան օրվա քամիները՝ կեսօրից մինչև մթնշաղ, իսկ ավազաճանճերը կսկսեն իրենց խրախճանքը, ու հանկարծ կանգնեց Մարիամի դիմաց, փորձեց փակել նրա աչքերը, հետ հրել եկած ճանապարհով ու ասել.

— Հե՛տ գնա: Չէ՛: Մի՛ նայիր: Շրջվի՛ր: Հե՛տ գնա:

Բայց չհասցրեց: Մարիամը տեսավ: Քամու պոռթկումը վարագույրի նման բաժանեց լացող ուռենու խոնարհված ճյուղերը, և Մարիամը մի պահ տեսավ, թե ինչ է ծառի տակ. շուռ եկած ուղիղ թիկնակով աթոռը: Վերևի ճյուղից կախ ընկած պարանը: Դրա ծայրից կախված Նանային:

6

Նանային թաղեցին Գյուլ Դամանի գերեզմանատան անկյունում: Մարիամը կանգնած էր Բիբի ջոյի կողքին կանանց հետ, երբ Մոլլա Ֆայզուլլան գերեզմանի վրա կարդում էր աղոթքները, իսկ տղամարդիկ իջեցնում էին Նանայի փաթաթած մարմինը հողի մեջ:

Հետո Ջալիլը Մարիամի հետ գնաց *քոլբա*, որտեղ նրանց ուղեկցող գյուղացիների աչքի առաջ Մարիամի մասին հոգ տանելու տեսարան խաղաց: Նա հավաքեց Մարիամի մի քանի իրերը, դրեց ճամպրուկի մեջ: Նստեց մահճակալի կողքը, երբ Մարիամը պառկեց, սկսեց հովհարել դեմքը: Շոյեց ճակատն ու դեմքի վշտահար արտահայտությամբ հարցրեց, թե արդյոք ինչ-որ բանի կարիք ունի: Ցանկացած բանի: Այդպես էլ ասաց, երկու անգամ:

— Ուզում եմ Մոլլա Ֆայզուլլային,— ասաց Մարիամը:

— Իհարկե, նա դրսում է: Կկանչեմ նրան:

Երբ Մոլլա Ֆայզուլլայի նիհար, կորացած մարմինը հայտնվեց *քոլբայի* դռան առաջ, Մարիամը այդ օրվա մեջ առաջին անգամ լաց եղավ:

— Ա՛խ, Մարիա՛մ ջո:

Մոլլա Ֆայզուլլան նստեց կողքին ու դեմքն առավ ափերի մեջ:

— Լացի՛ր, Մարիա՛մ ջո, լացի՛ր: Ամոթ բան չկա: Բայց հիշի՛ր, աղջի՛կս, թե ինչ է ասում Ղուրանը. «Օրհնյալ է Նա, ում ձեռքում է Թագավորությունը, և Ով ամենազորավորն է, Ով ստեղծել է մահն ու կյանքը, որպեսզի փորձության ենթարկի քեզ»: Ղուրանը ճշմարիտ է ասում, աղջի՛կս: Մեզ տրված ամեն մի փորձության ու վշտի մեջ Աստված պատճառ ունի:

Բայց Մարիամը չէր կարող մխիթարվել Աստծո խոսքերով: Ոչ այդ օրը: Ոչ այդ պահին: Նա միայն լսում էր, թե ինչպես է Նանան ասում՝ ես կմեռնեմ, եթե գնաս: Նա կարող էր միայն անդադար լացել ու թույլ տալ, որ արցունքներն ընկնեն Մոլլա Ֆայզուլլայի բծավոր, թղթի նման բարակ ձեռքերին:

* * *

Իր տան ճանապարհին Ջալիլը նստեց մեքենայի հետևի նստատեղին՝ Մարիամի կողքին, և գրկեց ուսերը:

— Կարող ես ինձ հետ ապրել, Մարիա՛մ ջո,— ասաց,— ասել եմ արդեն, որ քեզ համար սենյակ մաքրեն: Վերևի սենյակը: Կարծում եմ՝ քեզ դուր կգա: Պատուհանը այգուն է նայում:

Առաջին անգամ Մարիամը լսում էր նրան Նանայի ականջներով: Այժմ հստակ զգում էր նրա փուչ հավաստիացումների հետևում

մշտապես թաքնված կեղծավորությունը: Չէր կարողանում իրեն ստիպել նայել Ջալիլին:

Երբ մեքենան կանգնեց Ջալիլի տան առաջ, վարորդը բացեց դուռը նրանց համար և վերցրեց Մարիամի ճամպրուկը: Ջալիլը ուղեկցում էր Մարիամին՝ ուսերը ափերով գրկած, հենց այն նույն դարպասների միջով, որոնց մոտ երկու օր առաջ Մարիամը քնել էր մայթին՝ նրան սպասելով: Երկու օր առաջ... երբ Մարիամն աշխարհում ոչինչ ավելի չէր ուզում, քան այս այգով Ջալիլի հետ քայլել... հիմա ասես այլ կյանք լիներ: Ինչպե՞ս կարող էր իր կյանքը այսքան արագ տակնուվրա լինել, հարցնում էր Մարիամն ինքն իրեն: Նա հայացքը չէր կտրում գետնից, մոխրագույն քարե ճանապարհով քայլող իր ոտքերից: Զգում էր այգում այլ մարդկանց ներկայությունը, նրանց փսփսոցը, մի կողմ քաշվելը, երբ Ջալիլի հետ անցան նրանց կողքով: Զգում էր վերևի պատուհաններից իր վրա հառած աչքերը:

Տան ներսում էլ Մարիամը գլուխը կախ պահեց: Քայլեց շագանակագույն գորգով, որի վրա կրկնվում էր կապույտ և դեղին ութանկյունաձև զարդանախշը, աչքի պոչով տեսավ արձանիկների մարմարյա պատվանդանները, ծաղկամանների ստորին կեսերը, պատերից կախված բազմագույն գոբելենների քրքրված եզրերը: Ջալիլի հետ նրանք բարձրացան լայն աստիճաններով, որոնք ծածկված էին նույնանման գորգով՝ մեխված յուրաքանչյուր աստիճանի հիմքին: Սանդղահարթակի վերջում Ջալիլը նրան տարավ դեպի ձախ ևս մեկ երկար, գորգածածկ միջանցքով: Կանգնեց դռներից մեկի մոտ, բացեց այն ու Մարիամին ներս թողեց:

— Քույրերդ՝ Նիլուֆարն ու Աթիեն երբեմն խաղում են այստեղ,— ասաց Ջալիլը,— բայց հիմնականում մենք օգտագործում ենք սա որպես հյուրասենյակ: Այստեղ հարմարավետ է, կարծում եմ: Սիրուն է, չէ՞:

Սենյակում մահճակալ կար՝ վրան կանաչավուն ծաղիկներով խիտ գործած վերմակ՝ մեղրահացի նախշով: Բաց վարագույրները, որոնց հետևից երևում էր այգին, համապատասխանում էին վերմակին: Մահճակալի մոտ երեք դարակով կոմոդ էր՝ վրան ծաղկաման: Պատերին դարակաշարեր էին, որոնց վրա Մարիամին անծանոթ մարդկանց շրջանակված լուսանկարներ էին: Դարակներից մեկի

վրա Մարիամը տեսավ նույնատիպ փայտե տիկնիկների հավաքածու, որոնք դասավորված էին մի գծով՝ մեծից փոքր:

Զալիլը տեսավ, որ Մարիամը նայում է դրանց:

— Մատրյոշկա տիկնիկներ են: Մոսկվայից եմ բերել: Եթե ուզում ես, խաղա դրանցով: Ոչ ոք դեմ չի լինի:

Մարիամը նստեց մահճակալին:

— Ի՞նչ կուզես,— հարցրեց Զալիլը:

Մարիամը պառկեց: Փակեց աչքերը: Քիչ անց լսեց, որ Զալիլը կամաց փակեց դուռը:

* * *

Մարիամը սենյակից դուրս չէր գալիս՝ բացի լոգասենյակ գնալուց, որը միջանցքի վերջում էր: Դաջվածքով աղջիկը, որը նրա առջև բացեց դարպասները, սկուտեղի վրա կերակուր էր բերում. գառան քյաբաբ, *սաբզի, առուշ* ապուր[27]: Դրանց մեծ մասին Մարիամը ձեռք չէր տալիս: Զալիլը օրը մի քանի անգամ գալիս էր, նստում կողքը՝ մահճակալին, հարցնում՝ ինչպես է:

— Կարող ես ներքևում բոլորիս հետ միասին ուտել,— ասաց նա, բայց անվստահ: Եվ չափից արագ համաձայնվեց, երբ Մարիամն ասաց, որ նախընտրում է մենակ ուտել:

Պատուհանից Մարիամը անտարբեր հետևում էր նրան, ինչի մասին մտածել ու երազել էր կյանքի մեծ մասը. Զալիլի ամենօրյա անցուդարձին: Ծառաները հետուառաջ էին վազում դարպասներից: Այգեգործը մշտապես թփերն էր կտրտում, ջրում ջերմոցի բույսերը: Երկար նրբագեղ ծալածածկոցով մեքենաները կանգնում էին փողոցում: Դրանց միջից դուրս էին գալիս կոստյումներով, *չափաններով* ու կարակուլից գլխարկներով տղամարդիկ, հիջաբներով կանայք, մազերը կոկիկ սանրված երեխաներ: Մարիամը նայում էր՝ ինչպես է Զալիլը սեղմում այս անծանոթների ձեռքերը, ինչպես է ձեռքերը դնում կրծքին ու գլխով անում նրանց կանանց, ու հասկանում, որ Նանան ճշմարտություն էր ասել: Իր տեղն այստեղ չէ:

---

27 Առուշ ապուր՝ տավարի մսով, մակարոնով ապուր

Բայց որտեղ է իմ տեղը: Հիմա ինչ եմ անելու:

Այս աշխարհում ինձնից բացի դու ոչինչ չունես, Մարիամ, և երբ ես գնամ, ոչինչ չես ունենա: Ոչինչ չես ունենա: Դու ոչինչ ես:

Քոլբան շրջապատող ուռենիների միջով անցնող քամու նման անբացատրելի մռայլություն էր համակում Մարիամին:

Ջալիլի տանը ապրելու երկրորդ օրը Մարիամի սենյակ մի աղջնակ մտավ:

— Մի բան պետք է վերցնեմ,— ասաց նա:

Մարիամը նստեց անկողնում, ոտքերը ծալեց, վերմակը քաշեց ծնկներին:

Աղջիկը արագ անցավ սենյակը ու բացեց պահարանի դուռը: Հանեց քառակուսի գորշ արկղ:

— Գիտե՞ս՝ ինչ է սա,— հարցրեց: Բացեց տուփը:— Կոչվում է գրամոֆոն: *Գրամո: Ֆոն:* Ձայնագրություններ է նվագում: Հասկանո՞ւմ ես, երաժշտություն: Գրամոֆոն:

— Դու Նիլուֆարն ես: Ութ տարեկան ես:

Աղջնակը ժպտաց: Ջալիլի ժպիտն ուներ ու նրա փոսիկով կզակը:

— Որտեղի՞ց իմացար:

Մարիամը թոթվեց ուսերը: Նա այդ աղջկան չասաց, որ նրա անունով քար է կոչել:

— Ուզո՞ւմ ես երգ լսել:

Մարիամը կրկին թոթվեց ուսերը:

Նիլուֆարը միացրեց գրամոֆոնը: Տուփի կափարիչի տակի գրպանիկից հանեց փոքրիկ սկավառակ:

Դրեց սկավառակը, իջեցրեց ասեղը: Երաժշտությունը սկսեց նվագել:

Ծաղկի թերթը կպոկեմ,
Վրան սիրո նամակ գրեմ:
Դու իմ սրտի սուլթանն ես,
Իմ սրտի սուլթանը:

— Գիտե՞ս սա:

— Ո՛չ:

— Իրանական ֆիլմից է, հորս կինոթատրոնում եմ տեսել: Հեյ, կուզե՞ս մի բան ցույց տամ:

Մինչ Մարիամը կհասցներ պատասխանել, Նիլուֆարը ափերն ու ճակատը դրեց գետնին: Ոտքերի թաթերով հրվեց ու հայտնվեց գլխիվայր՝ երեք կետի վրա հենված:

— Այսպես կարո՞ղ ես անել,— հիմարավարի հարցրեց նա:

— Ո՛չ:

Նիլուֆարն իջեցրեց ոտքերն ու շապիկը ներքև քաշեց:

— Կարող եմ քեզ սովորեցնել,— ասաց՝ հետ հրելով մազերը կարմրած ճակատից,— ինչքա՞ն ես մնալու այստեղ:

— Չգիտեմ:

— Մայրս ասում է, որ դու իմ իսկական քույրը չես, ինչպես ասում ես:

— Ես երբեք այդպիսի բան չեմ ասել,— ստեց Մարիամը:

— Նա ասում է, որ ասել ես: Ինձ համար մեկ է: Նկատի ունեմ՝ կարևոր չէ՝ ասել ես, թե իրոք իմ քույրն ես: Ես դեմ չեմ:

Մարիամը պառկեց:

— Ես հիմա հոգնած եմ:

— Մայրս ասում է, որ *ջինը* ստիպեց մորդ կախվել:

— Կարող ես հիմա դադարեցնել,— ասաց Մարիամը՝ շրջվելով նրա կողմը,— երաժշտությունը նկատի ունեմ:

Բիբի ջոն էլ այցելեց նրան այդ օրը: Անձրև էր գալիս, երբ եկավ: Նա ծամածռվելով իջեցրեց իր մեծ մարմինը մահճակալի կողքի աթոռին:

«Այս անձրևը, Մարիա՛մ ջո, սպանում է կոնքերս: Ուղղակի սպանում է, ասում եմ քեզ: Հուսով եմ... Ա՛խ, ե՛կ մոտս, բալի՛կս: Ե՛կ Բիբի ջոյի մոտ: Մի՛ լացիր: Դե՛, դե՛: Խեղճ աղջիկ: Խեղճ, խեղճուկրա՛կ աղջիկ»:

Այդ գիշեր Մարիամը երկար չէր կարողանում քնել: Անկողնում պառկած՝ նայում էր երկնքին, լսում էր ներքևից եկող ոտնաձայները, պատերի հետևից իրեն հասնող խուլ ձայները և պատուհանը ծեծող անձրևի կտկտոցը: Երբ վերջապես քունը տարավ, վեր թռավ բղավոցներից: Ներքևից եկող ձայներից՝ սուր և բարկացած: Մարիամը չէր հասկանում բառերը: Ինչ-որ մեկը շխկոցով փակեց դուռը:

Հաջորդ առավոտ Մոլլա Ֆայզուլլան եկավ այցելության: Երբ Մարիամը դռան շեմքին տեսավ իր ընկերոջը, նրա սպիտակ մորուքն ու բարի, անատամ ժպիտը, զգաց, որ աչքերի անկյունները արցունքներից կրկին սկսեցին այրվել: Նա արագ իջեցրեց ոտքերն ու վազեց մոտը: Համբուրեց ձեռքը, ինչպես միշտ, իսկ Մոլլան՝ նրա ճակատը: Մարիամը աթոռ քաշեց նրա համար: Մոլլան ցույց տվեց իր հետ բերած Ղուրանը և բացեց այն:

— Կարծում եմ՝ չարժի մեր սահմանված կարգը փոխել, չէ՞:

— Դուք գիտեք, որ այլևս դասերի կարիք չունեմ, Մոլլա՛ *սահիբ*: Տարիներ առաջ սովորեցրել եք ինձ Ղուրանի բոլոր *սուրաներն*[28] ու *այաթները*[29]:

Նա ժպտաց ու ձեռքերը բարձրացրեց՝ ասես հանձնվելով:

— Խոստովանում եմ՝ ինձ բացահայտել են: Բայց մի պատճառ պիտի՞ մտածեմ քեզ այցելելու համար:

— Պատճառ պետք չէ: Ոչ Ձեր դեպքում:

— Դու շատ բարի ես, Մարիա՛մ ջո:

Նա Ղուրանը տվեց Մարիամին: Սովորեցրածի համաձայն՝ Մարիամը երեք անգամ համբուրեց այն՝ համբույրների միջև իր ճակատին հպելով, ու վերադարձրեց Մոլլային:

— Ինչպե՞ս ես, աղջի՛կս:

— Անընդհատ...— սկսեց Մարիամը: Ստիպված կանգ առավ՝ կոկորդում քարի նման մի բան զգալով,— անընդհատ մտածում եմ այն մասին, թե Նանան ինչ ասաց գնալուցս առաջ: Նա...

— Չէ՛, չէ՛, չէ՛,— Մոլլա Ֆայզուլլան ձեռքը դրեց նրա ծնկին,— քո մայրը, Ալլահը նրան ների, ձախորդ, ապերջանիկ կին էր, Մարիա՛մ ջո: Նա սարսափելի բան արեց իր հետ: Իր հետ, քեզ հետ, Ալլահի հետ: Ալլահը կների նրան, որովհետև նա ամենագութ է, բայց Ալլահին տխրեցրել է նրա արածը: Նա չի սիրում, երբ խլում են կյանքը՝ ուրիշինը կամ սեփականը, քանի որ, ասում է Նա, կյանքը սրբություն է: Հասկանո՞ւմ ես...— նա մոտ քաշեց աթոռը, Մարիամի ձեռքը իր ափերի մեջ առավ,— հասկանո՞ւմ ես, ես մորդ ճանաչում էի

---

[28] Սուրա՝ գրքի գլուխ: Ղուրանը կազմված է 114 սուրաներից:
[29] Այաթ՝ Ղուրանի սուրայի իմաստային բանաստեղծական հատված

նախքան քո ծնվելը, երբ նա փոքրիկ աղջիկ էր, և ասեմ քեզ՝ նա այն ժամանակ էլ էր դժբախտ: Նրա արածի սերմը վաղուց էր ցանված, ցավոք: Ուզում եմ ասել, որ դա քո մեղքը չէր: Դու մեղավոր չես, աղջի՛կս:

— Ես չպետք է նրան թողնեի, ես պետք է...

— Վերջացրո՛ւ: Դրանք լավ մտքեր չեն, Մարիա՛մ ջո: Լսո՛ւմ ես ինձ, բալի՛կս: Լավը չեն: Դրանք կկործանեն քեզ: Դա քո մեղքը չէր, դու մեղավոր չես, ո՛չ:

Մարիամը գլխով արեց, բայց որքան էլ հուսահատորեն ցանկանում էր, չէր կարողանում հավատալ դրան:

* * *

Մեկ շաբաթ անց դուռը թակեցին, և մի բարձրահասակ կին մտավ: Նա բաց մաշկ ուներ, կարմրավուն մազեր ու երկար մատներ:

— Ես Աֆսունն եմ,— ասաց նա,— Նիլուֆարի մայրը: Լավ կլինի՝ լվացվես, Մարիա՛մ, ու իջնես ներքև:

Մարիամն ասաց, որ նախընտրում է իր սենյակում մնալ:

— Ո՛չ, *նա ֆահմիդի*՝ չե՛ս հասկանում: Դու *պետք է* իջնես: Հետդ խոսելիք ունենք: Կարևոր բան է:

7

Նրանք նստած էին Մարիամի դիմաց՝ Ջալիլն ու նրա կանայք, երկար, մուգ շագանակագույն սեղանի շուրջը: Նրանց միջև՝ սեղանի կենտրոնում, թարմ նարգիզներով բյուրեղապակյա ծաղկաման էր ու քրտնած ջրի սափոր: Կարմրահեր կինը, որն իրեն ներկայացրեց որպես Նիլուֆարի մայր՝ Աֆսունը, նստած էր Ջալիլի աջ կողմում: Մյուս երկուսը՝ Խադիջան և Նարգիզը, նրա ձախ կողմում էին: Կանայք թեթև սև գլխաշորերով էին, բայց գցել էին ոչ թե գլխներին, այլ պարանոցի շուրջը, իմիջիայլոց: Մարիամը, որը չէր կարող պատկերացնել, որ նրանք Նանայի համար սև կհագնեն, մտածեց, որ երևի մեկն առաջարկել է, գուցե Ջալիլը, նախքան իրեն կանչեցին:

Աֆսոնը սափորից ջուր լցրեց բաժակի մեջ ու այն դրեց Մարիամի առջև՝ կտորից վանդակավոր տակդիրի վրա:

— Դեռ գարուն է, ու արդեն շոգ է,— ասաց նա: Ձեռքով հովհարի շարժում արեց:

— Քեզ այստեղ լավ ես զգում,— հարցրեց Նարգիզը, որը փոքրիկ ծնոտ ուներ ու գանգուր սև մազեր,— հուսով ենք, որ հարմարավետ է: Այս... դժբախտությունը... երևի շատ ծանր է քեզ համար: Շատ դժվար:

Մյուս երկուսը գլխով արեցին: Մարիամը ուսումնասիրեց նրանց փետած հոնքերը, իրեն ուղղված բարակ, հանդուրժող ժպիտները: Մարիամի գլխում տհաճ աղմուկ էր: Կոկորդն այրվում էր: Մի քիչ ջուր խմեց:

Ձալիլի հետևի լայն պատուհանից Մարիամը տեսնում էր ծաղկուն խնձորի ծառերը: Պատուհանի կողքի պատի մոտ մուգ փայտե պահարան կար: Դրա մեջ ժամացույց էր և ձուկ բռնած Ձալիլի ու երեք տղաների շրջանակված լուսանկար: Արևը խաղում էր ձկների թեփուկների վրա: Ձալիլն ու տղաները ժպտում էին:

— Ուրեմն,— սկսեց Աֆսունը,— ես... այսինքն, մենք... քեզ բերել ենք այստեղ, քանի որ շատ լավ լուր ունենք քեզ համար:

Մարիամն աչքերը բարձրացրեց:

Նա նկատեց, որ կանայք արագ հայացքներ փոխանակեցին Ձալիլից թաքուն, որը, կորացած մեջքով աթոռին նստած, չտեսնող աչքերով նայում էր սեղանի վրայի սափորին: Խադիջան՝ երեքից արտաքինով ամենատարեցը, հայացքն ուղղեց Մարիամին, և Մարիամին թվաց՝ այդ պարտականությունը ևս քննարկվել, համաձայնեցվել է նախքան իրեն կանչելը:

— Դու փեսացու ունես,— ասաց Խադիջան:

Մարիամի սրտի թելը կտրվեց:

— Ի՞նչ,— ասաց նա հանկարծակի սառած շուրթերով:

— *Խաստեզար*, ուզող, անունը Ռաշիդ է,— շարունակեց Խադիջան,— հորդ աշխատանքային ծանոթի ընկերն է: Փաշթուն է, ծնունդով Քանդահարից, բայց ապրում է Քաբուլում՝ Դեհ-Մազանգ թաղամասում՝ իրեն պատկանող երկհարկանի տանը:

Աֆսունը գլխով էր անում:

— Եվ նա մեզ նման, քեզ նման ֆարսի է խոսում, այնպես որ ստիպված չես լինի փաշթո սովորել:

Մարիամի կուրծքը սեղմվում էր: Սենյակը ճոճվում էր, հատակը գնում էր ոտքերի տակից:

— Կոշկակար է,— հիմա ասում էր Խադիջան,— բայց ինչ-որ փողոցային սովորական *մուչի*[30] չէ, ո՛չ, ո՛չ: Նա սեփական խանութ ունի ու Քաբուլում ամենապահանջված կոշկակարներից է: Կարում է դիվանագետների, նախագահական ընտանիքի անդամների՝ այդ դասի մարդկանց համար: Այնպես որ, ինչպես տեսնում ես, քեզ ապահովելու խնդիր չի ունենա:

Մարիամն աչքերը հառել էր Ջալիլին, սիրտը տեղից դուրս էր թռչում:

— Ճի՞շտ է: Ինչ ասում է՝ ճի՞շտ է:

Բայց Ջալիլը չէր նայում նրան: Նա շարունակում էր ծամել ներքևի շրթունքն ու նայել սափորին:

— Դե, նա քեզանից *իրոք* տարիքով մի փոքր մեծ է,— խոսակցությանը միացավ Աֆսունը,— բայց... քառասունից մեծ չի լինի: Ամենաշատը՝ քառասունհինգ: Չէ՞, Նարգի՛զ:

— Այո՛: Բայց ես տեսել եմ ինը տարեկան աղջիկների, որոնց ամուսնացնում են քո փեսացուից քսան տարով մեծ տղամարդկանց հետ, Մարիա՛մ: Բոլորս էլ տեսել ենք: Ինչքա՞ն ես, տասնհի՞նգ: Աղջկա համար ամուսնանալու լավ, հասուն տարիք է:

Սրա վրա բոլորը խանդավառված գլուխները տմբացրին: Մարիամի ուշադրությունից չվրիպեց այն, որ ոչ մի խոսք չեղավ իր խորթ քույրերի՝ Ջայդեի կամ Նահիդի մասին, որոնք նույն տարիքի էին, երկուսն էլ Հերաթում «Մեհրի» դպրոցի աշակերտներ էին, և երկուսն էլ պլանավորում էին Քաբուլի համալսարան ընդունվել: Տասնհինգը, ըստ երևույթին, նրանց համար ամուսնության լավ, հասուն տարիք չէր:

— Ավելին,— շարունակեց Նարգիզը,— նա նույնպես մեծ կորուստ է ունեցել կյանքում: Նրա կինը, լսել ենք, մահացել է տասը տարի առաջ ծննդաբերելիս: Իսկ հետո՝ երեք տարի առաջ, որդին խեղդվել է լճում:

---

[30] Մուչի (պարսկ.)՝ կոշիկ վերանորոգող

— Շատ տխուր է, այո՛: Վերջին մի քանի տարիներին հարսնացու էր փնտրում, բայց հարմար ոչ մեկին չէր գտնում:

— Ես չեմ ուզում,— ասաց Մարիամը: Նայեց Ջալիլի կողմը:— Ինձ սա պետք չէ: Մի՛ ստիպեք ինձ:

Նա ատում էր այդ ֆսֆսացող, խնդրողական տոնը, բայց ոչինչ չէր կարող անել:

— Դե՛, խելամի՛տ եղիր, Մարիա՛մ,— ասաց կանանցից մեկը:

Մարիամն այլևս չէր հետևում, թե ով ինչ է ասում: Նա շարունակ նայում էր Ջալիլին, սպասում, որ նա խոսի, ասի, որ այս ամենը ճիշտ չէ:

— Չես կարող ամբողջ կյանքդ այստեղ անցկացնել:

— Չե՞ս ուզում սեփական ընտանիքդ ունենալ:

— Այո՛: Սեփական տուն, երեխաներ:

— Կյանքը շարունակվում է:

— Ճիշտ է, նախընտրելի կլիներ, որ ամուսնանայիր տեղացի տաջիկի հետ, բայց Ռաշիդն առողջ է և հետաքրքրված է քեզանով: Տուն և աշխատանք ունի: Ամենակարևորը դա է, չէ՞: Իսկ Քաբուլը գեղեցիկ, հրաշալի քաղաք է: Այսքան լավ հնարավորություն կարող ես այլևս չունենալ:

Մարիամը կրկին ուշադրությունը սևեռեց կանանց վրա:

— Ես կապրեմ Մոլլա Ֆայզուլլայի հետ,— ասաց,— նա ինձ օթևան կտա, ես գիտեմ, որ կտա:

— Դա լավ միտք չէ,— ասաց Խադիջան,— նա ծեր է և այնքան...

Նա փնտրում էր ճիշտ բառը, իսկ Մարիամը գիտեր, որ նա իրականում ուզում է ասել՝ *այնքան մոտիկ է ապրում*: Նա հասկացավ, թե նրանք ինչ են ուզում անել: *Այսքան լավ հնարավորություն կարող ես այլևս չունենալ*: Նրանք էլ չէին ունենա: Մարիամի ծնունդով նրանք խայտառակվել էին, իսկ սա հնարավորություն էր մեկընդմիշտ ջնջելու իրենց ամուսնու սկանդալային սխալի վերջին հետքերը: Նրան հեռացնում էին, քանի որ իրենց անպատվության քայլող, շնչող մարմնավորումն էր:

— Նա այնքան ծեր ու թույլ է,— ասաց Խադիջան,— իսկ ինչ ես անելու, երբ մահանա: Նրա ընտանիքի համար բեռ կդառնաս:

Ինչպես հիմա մեզ համար ես բեռ: Մարիամը կարծես տեսնում էր՝ ինչպես են չասված բառերը դուրս գալիս Խադիջայի բերանից ցուրտ օրը բերանից դուրս եկող գոլորշու պես:

Մարիամը պատկերացրեց իրեն Քաբուլում՝ մեծ, տարօրինակ, բազմամարդ քաղաք, որը, ինչպես Ջալիլն ասել էր մի անգամ, Հերաթից մոտ վեց հարյուր հիսուն կիլոմետր դեպի արևելք է: Վեց հարյուր հիսուն կիլոմետր: Ամենահեռու տեղը, որ ինքը երբևէ գնացել է, *քոլբայից* երկու կիլոմետր էր, որ անցել էր Ջալիլի տուն հասնելու համար: Նա պատկերացրեց՝ ինչպես է ապրում Քաբուլում, որն աներևակայելի հեռու է թվում, ապրում է անծանոթի տանը, որտեղ ստիպված է ենթարկվել նրա տրամադրություններին ու պահանջներին: Ստիպված է լինելու հավաքել այդ մարդու՝ Ռաշիդի հետևից, ճաշ պատրաստել նրա համար, լվանալ նրա հագուստը: Այլ պարտականություններ էլ կլինեն. Նանան պատմել էր՝ ինչ են ամուսիններն անում իրենց կանանց հետ: Հատկապես այս մտերմության մասին մտքից, որը նա պատկերացնում էր որպես այլասերվածության ցավոտ գործողություններ, սոսկում էր ու քրտինքով պատվում:

Մարիամը կրկին շրջվեց Ջալիլի կողմը:

— Ասա՛ նրանց, ասա՛ նրանց, որ թույլ չես տա դա անել:

— Իրականում հայրդ արդեն տվել է Ռաշիդին իր պատասխանը,— ասաց Աֆսունը: Ռաշիդն այստեղ է՝ Հերաթում. եկել է Քաբուլից: *Նիքան*[31] կլինի վաղը առավոտյան, իսկ հետո՝ կեսօրին, Քաբուլ մեկնող ավտոբուս կա:

— Ասա՛ նրանց,— գոռաց Մարիամը:

Կանայք այժմ լուռ էին: Մարիամը զգաց, որ նրանք էլ են նայում Ջալիլին: Սպասում են: Սենյակում լռություն տիրեց: Ջալիլը շարունակում էր պտտել իր ամուսնական մատանին՝ դեմքին վիրավոր, անօգնական արտահայտություն: Պահարանից լսվում էր ժամացույցի տկտկոցը:

— Ջալիլ ջո՛,— վերջապես ասաց կանանցից մեկը:

---

[31] Նիքա՝ ամուսնացողների երդման արարողություն

Ջալիլը դանդաղ բարձրացրեց աչքերը, նայեց Մարիամին, մի պահ կանգ առավ, հետո իջեցրեց: Նա բացեց բերանը, բայց դուրս եկավ միայն մեկ, ցավագին տնքոց:

— Մի բան ասա,— ասաց Մարիամը:

Հետո Ջալիլը խոսեց բարակ, խղճալի ձայնով:

— Գրո՛ղը տանի, Մարիա՛մ, ինձ հետ այսպես մի՛ վարվիր,— ասաց նա, ասես իրեն էին ինչ-որ բան անում:

Եվ այդպիսով, Մարիամը զգաց՝ սենյակի լարվածությունը վերացավ:

Երբ Ջալիլի կանայք նորից և ավելի աշխույժ սկսեցին համոզել նրան, Մարիամը նայեց ներքև՝ սեղանին: Նա զննեց սեղանի ողորկ ոտքերը, անկյունների գալարուն կորությունները, մուգ շագանակագույն մակերեսի արտացոլվող փայլը: Նա նկատեց, որ ամեն անգամ արտաշնչելիս մակերեսը մշուշապատվում էր, և ինքն անհետանում էր հոր սեղանից:

Աֆսունը նրա հետ սենյակ բարձրացավ: Եվ երբ Աֆսունը փակեց դուռը, Մարիամը լսեց, թե ինչպես է կողպեքի մեջ պտտվում բանալին:

8

Առավոտյան Մարիամին տվեցին երկար թևերով մուգ կանաչ զգեստ, որը նա հագավ սպիտակ բամբակից շալվարի վրա: Աֆսունը նրան կանաչ *հիջաբ* տվեց ու նույն գույնի սանդալներ:

Նրան տարան երկար շագանակագույն սեղանով սենյակը, բայց հիմա դրա կենտրոնում շաքարապատ նուշով քաղցրավենիք էր, Ղուրան, կանաչ շղարշ ու հայելի: Երկու տղամարդ, որոնց Մարիամը երբեք չէր տեսել՝ երևի վկաներ, ենթադրեց նա, և իրեն անծանոթ մոլլա արդեն նստած էին սեղանի շուրջը:

Ջալիլը Մարիամին մատնացույց արեց աթոռը: Նրա հագին բաց շագանակագույն կոստյում էր ու կարմիր փողկապ: Մազերը լվացել էր: Երբ նա քաշեց աթոռը Մարիամի համար, փորձեց քաջալերող ժպտալ: Խադիջան և Աֆսունը այս անգամ նստեցին Մարիամի կողքին:

Մոլլան ձեռքով նշան արեց շղարշի կողմը, և Նարգիզը նստելուց առաջ գցեց այն Մարիամի գլխին:

Մարիամը գլուխը կախ նայեց իր ձեռքերին:

— Հիմա կարող եք կանչել նրան,— ինչ-որ մեկին ասաց Ջալիլը:

Տեսնելուց առաջ Մարիամն առավ նրա հոտը: Սիգարետի ծուխ և օծանելիքի թանձր, քաղցր հոտ, ոչ թեթև, ինչպես Ջալիլինը: Դրա հոտը լցվեց Մարիամի քթածակերը: Շղարշի տակից Մարիամը հպանցիկ տեսավ բարձրահասակ մարդու՝ ցմփոր ու լայնուս, որը կռացած դռնից ներս մտավ: Նրա չափերից Մարիամի շունչը կտրվեց, և նա ստիպված խոնարհեց հայացքը, սիրտը սկսեց արագ բաբախել: Զգաց, որ շեմքին կանգնած տղամարդը հապաղում է: Հետո զգաց նրա դանդաղ, ծանր քայլերը սենյակում: Սեղանի վրայի քաղցրավենիքով սկահակը ծնգում էր նրա քայլերից: Ծանր հառաչելով՝ նա իջավ Մարիամի կողքի աթոռին: Շնչում էր աղմուկով:

Մոլլան ողջունեց նրանց: Ասաց, որ ավանդական *նիքա* չի լինելու:

— Ինչպես հասկանում եմ, Ռաշիդ աղան արդեն Քաբուլ գնացող ավտոբուսի տոմս ունի, որը շուտով մեկնում է: Ժամանակը հաշվի առնելով՝ մենք կշրջանցենք որոշ ավանդական քայլեր գործն արագացնելու համար:

Մոլլան մի քանի օրինություն տվեց, մի քանի բառ ասաց ամուսնության կարևորության մասին: Հարցրեց Ջալիլին՝ արդյոք նա այդ միությանը որևէ առարկություն ունի, և Ջալիլը բացասական օրորեց գլուխը: Հետո մոլլան հարցրեց Ռաշիդին՝ արդյոք նա իսկապես ցանկանում էր Մարիամի հետ ամուսնության պայմանագիր կնքել: Ռաշիդն ասաց՝ «Այո՛»: Նրա կոպիտ, խռպոտ ձայնը հիշեցրեց Մարիամին ոտքի տակ փշրվող աշնանային տերևները խշշոցը:

— Իսկ դո՞ւ, Մարիա՛մ ջան, ընդունո՞ւմ ես այս տղամարդուն որպես քո ամուսին:

Մարիամը ձայն չհանեց: Կոկորդը մաքրելու ձայներ եկան:

— Ընդունում է,— ասաց սեղանի մոտից մի կանացի ձայն:

— Իրականում,— ասաց մոլլան,— նա *ինքը* պետք է պատասխան տա և պետք է սպասի, որ երեք անգամ հարցնեմ: Բանն այն է, որ տղամարդն է ուզողը, այլ ոչ հակառակը:

Նա ևս երկու անգամ հարցրեց: Երբ Մարիամը չպատասխանեց, մեկ անգամ էլ հարցրեց, ավելի կտրուկ: Մարիամը զգում էր՝ ինչպես է Ջալիլը անհանգիստ շարժվում աթոռին, զգում էր՝ ինչպես են սեղանի տակ ծալվում ու բացվում ոտքերը: Կրկին կոկորդ մաքրելու ձայներ եկան: Փոքր սպիտակ ձեռք ձգվեց ու փոշու հատիկը մաքրեց սեղանից:

— Մարիա՛մ,— շշնջաց Ջալիլը:

— Այո՛,— դողդոջուն ասաց նա:

Շղարշի տակից անցկացրին հայելին: Դրա մեջ Մարիամը սկզբից տեսավ իր դեմքը՝ տափակ, տձև հոնքեր, հարթ մազեր, դալուկ կանաչ աչքեր, որոնք այնքան մոտիկ են իրար, որ կարելի է մտածել՝ շիլ է: Մաշկը կոպիտ է, գունատ, բծավոր: Նա մտածեց, որ ճակատը չափազանց լայն է, իսկ կզակը՝ չափազանց նեղ, շուրթերը՝ չափից դուրս բարակ: Ընդհանուր առմամբ դեմքը երկար էր, եռանկյունաձև, մի քիչ որսկան շան նման: Այնուամենայնիվ, Մարիամը տեսավ, որքան էլ տարօրինակ չէ, որ այս բոլոր անհետաքրքիր մասերը դառնում էին մի դեմք, որը եթե գեղեցիկ չէր, ապա տհաճ էլ չէր:

Հայելու մեջ Մարիամն առաջին անգամ տեսավ Ռաշիդին. մեծ, քառակուսի, կարմիր դեմք. կեռ քիթ, կարմիր այտեր, որոնք խորամանկ կենսուրախության տպավորություն էին ստեղծում. արցունքոտ, արյունոտ աչքեր, խիտ ատամներ՝ առջևի երկուսը տանիքի պես դուրս ցցված, չափից դուրս ցածր ճակատ, հազիվ երկու մատ վերև փրչոտ հոնքերից՝ հաստ, կոպիտ, ալեխառն մազերի պատ: Նրանց աչքերը մի պահ հանդիպեցին հայելու մեջ ու բաժանվեցին:

Սա իմ ամուսնու դեմքն է, մտածեց Մարիամը:

Նրանք փոխանակեցին բարակ ոսկե մատանիները, որոնք Ռաշիդը հանեց իր վերարկուի գրպանից: Նրա եղունգները դեղնադարչնագույն էին, ինչպես փտած խնձորի միջուկը, մի քանիսի ծայրերը կլորանում էին, ցցվում: Մարիամի ձեռքը դողաց, երբ փորձեց մատանին նրա մատին հագցնել, և Ռաշիդը ստիպված օգնեց նրան: Մարիամի մատանին մի քիչ փոքր էր մատին, բայց Ռաշիդը աներկյուղ անցկացրեց այն մատնոսկրով:

— Ահա՛,— ասաց նա:

— Սիրուն մատանի է,— ասաց կանանցից մեկը,— չքնաղ է, Մարիամ:

— Հիմա մնաց պայմանագիրը ստորագրել,— ասաց մոլլան:

Մարիամը ստորագրեց իր անունը՝ *միմ, ռեհ, յա,* կրկին *միմ* գիտակցելով, որ բոլորը սևեռուն նայում են իր ձեռքին: Հաջորդ անգամ, երբ Մարիամը փաստաթուղթ կստորագրի քսանյոթ տարի անց, կրկին մոլլայի ներկայությամբ կլինի:

— Այժմ դուք կին և ամուսին եք,— ասաց մոլլան,— *թաբրիք,* շնորհավոր:

* * *

Ռաշիդը սպասում էր բազմագույն ավտոբուսում: Մարիամը Ջալիլի հետ կանգնած էր հետևի թափարգելի մոտ և չէր կարող տեսնել նրան. բաց պատուհանից երևում էր միայն Ռաշիդի սիգարետի գալարվող ծուխը: Նրանց շուրջը ձեռքեր էին սեղմում ու հրաժեշտ տալիս: Ղուրան էին համբուրում, անցնում տակով: Ուղևորների արանքով վազվզում էին ոտաբոբիկ տղաներ, ում դեմքերը անտեսանելի էին մաստակով ու սիգարետով լի սկուտեղների տակից:

Իսկ Ջալիլը պատմում էր, որ Քաբուլը այնքան գեղեցիկ է, որ Մողոլի կայսր Բաբուրը[32] խնդրել էր իրեն այնտեղ թաղել: Հետո, Մարիամն արդեն գիտեր, պատմելու էր Քաբուլի այգիների, խանութների, ծառերի, օդի մասին, ու քիչ անց Մարիամը կլինի ավտոբուսի մեջ, իսկ նա կքայլի կողքով և ուրախ ձեռքով կանի՝ անվնաս, ներված:

Մարիամը չէր կարող դա թույլ տալ:

— Ես քեզ պաշտում էի,— ասաց նա:

Ջալիլը կանգ առավ նախադասության կեսին: Ձեռքերը խաչեց ու արձակեց: Մի երիտասարդ հնդիկ զույգ՝ որդուն գրկած կին ու ճամպրուկը տանող ամուսին, անցան նրանց արանքով: Ջալիլը երախտապարտ էր նրանց այդ ընդհատման համար: Նրանք ներողություն խնդրեցին, և նա քաղաքավարի ժպտաց:

---

[32] Զահիրեդդին Մուհամեդ Բաբուր (1483–1530)՝ Հնդկաստանում Մեծ Մողոլների պետության հիմնադիրը, պետական գործիչ, զորավար, գրող: 1504 թվականին նվաճել է Քաբուլը:

— Հինգշաբթի օրերը ես քեզ ժամերով սպասում էի, անհանգստանում էի, որ դու չես գա:

— Երկար ճանապարհ ես գնալու, մի բան կեր:

Ասաց, որ կարող է հաց ու այծի պանիր գնել Մարիամի համար:

— Ես միշտ մտածում էի քո մասին: Աղոթում էի, որ դու ապրես մինչև հարյուր տարեկան: Ես չգիտեի: Ես չգիտեի, որ դու ամաչում ես ինձանից:

Ջալիլը ցած նայեց ու տարիքն անց երեխայի պես կոշիկի քթով ինչ-որ բան փորեց:

— Դու ինձանից ամաչում էիր:

— Ես քեզ կայցելեմ,— մռթմռթաց Ջալիլը,— կգամ Քաբուլ, որ տեսնեմ քեզ: Մենք...

— Ո՛չ, ո՛չ,— ասաց Մարիամը,— չգա՛ս: Ես չեմ ուզում քեզ տեսնել, չգա՛ս, չեմ ուզում քո մասին լսել: Երբե՛ք: *Երբե՛ք*:

Նա վիրավորված տեսք ընդունեց:

— Այստեղ ինձ ու քեզ համար ամեն ինչ ավարտվում է: Հրաժե՛շտ տուր:

— Արի այսպես չբաժանվենք,— ասաց Ջալիլը բարակ ձայնով:

— Նույնիսկ պատշաճությունից ելնելով՝ ինձ ժամանակ չտվեցիր՝ հաջողություն ասեմ Միլլա Ֆայզուլլային:

Մարիամը շրջվեց ու շրջանցեց ավտոբուսը: Նա լսում էր, որ իրեն հետևում են: Երբ հասավ շարժական դռներին, լսեց Ջալիլի ձայնը:

— Մարիա՛մ ջո:

Մարիամը բարձրացավ աստիճաններով, ու չնայած աչքի պոչով տեսնում էր՝ ինչպես է Ջալիլը իրեն զուգահեռ քայլում, չնայեց պատուհանից: Շարքերի միջով գնաց հետ, որտեղ նստած էր Ռաշիդը՝ Մարիամի ճամպրուկը ոտքերի արանքում: Մարիամը չշրջվեց, երբ Ջալիլը ափերը սեղմեց պատուհանին, երբ սկսեց թխկթխկացնել ապակուն: Երբ ավտոբուսը տեղից պոկվեց, նա չշրջվեց, որ տեսնի՝ ինչպես է Ջալիլը արագ քայլում հետևից: Իսկ երբ ավտոբուսը ճանապարհ ընկավ, նա հետ չնայեց, որպեսզի տեսնի՝ ինչպես է Ջալիլը հեռանում, ինչպես է անհետանում արտանետումների ու փոշու ամպի մեջ:

Ռաշիդը, որը զբաղեցրել էր պատուհանի մոտի և մեջտեղի նստարանները, իր հաստ ձեռքը դրեց Մարիամի ձեռքին:

— Դե լավ, աղջի՛կ: Լա՛վ: Լա՛վ,— ասաց նա:

Միևնույն ժամանակ նա, աչքերը կկոցած, պատուհանից դուրս էր նայում, ասես ինչ-որ ավելի հետաքրքիր բան էր ընկել աչքին:

9

Հաջորդ օրը՝ դեռ երեկո չեղած, նրանք հասան Ռաշիդի տուն:

— Մենք Դեհ-Մազանգում ենք,— ասաց նա: Նրանք դրսում էին՝ մայթին: Նա մի ձեռքով բռնել էր Մարիամի ճամպրուկը, իսկ մյուսով բացում էր փայտե դարպասը:— Քաղաքի հարավարևմտյան մասում: Կենդանաբանական այգին մոտ է, համալսարանն էլ:

Մարիամը գլխով արեց: Արդեն գիտեր, որ թեև հասկանում է Ռաշիդին, պետք է հատուկ ուշադրություն դարձնի, երբ խոսում է: Մարիամը սովոր չէր ֆարսիի՝ նրա քաբուլյան բարբառին ու փաշթոյի՝ նրա հայրենի Քանդահարի առոգանության թաքնված շերտին: Ռաշիդը, սակայն, խնդիր չուներ Մարիամի՝ Հերաթի ֆարսիի հետ:

Մարիամը արագ աչքի անցկացրեց նեղ, չսալարկված ճանապարհը, որտեղ Ռաշիդի տունն էր: Այս ճանապարհին տները իրար կպած էին, ունեին ընդհանուր պատեր ու պարսպապատ փոքրիկ բակեր, որոնք բաժանում էին տները փողոցից: Տների մեծ մասը հարթ տանիքով էր, որոշները պատրաստված էին թրծած աղյուսից, որոշները՝ ցեխից, որ այն նույն փոշու գույնին էր, ինչ քաղաքը շրջապատող լեռները: Երկու կողմից մայթը ճանապարհից բաժանում էին կեղտաջրով լի առուները: Փողոցում տեղ-տեղ Մարիամը նկատեց փոքրիկ աղբակույտեր, որոնց վրա վխտում էին ճանճերը: Ռաշիդի տունը երկհարկանի էր: Մարիամը նկատեց, որ ժամանակին այն կապույտ էր:

Երբ Ռաշիդը բացեց մուտքի դարպասը, Մարիամը հայտնվեց փոքրիկ անխնամ բակում, որտեղ փոքրիկ թնջուկներով աճում էր դեղին խոտը: Աջ կողմում՝ բակի անկյունում, Մարիամը ցախանոց տեսավ, իսկ ձախ կողմում՝ ձեռքի պոմպով ջրհոր, մի քանի չորացող տնկիներ: Ջրհորի մոտ պահեստանոց էր. պատին հեծանիվ էր հենած:

— Հայրդ ասաց, որ սիրում ես ձուկ բռնել,— ասաց Ռաշիդը, երբ անցնում էին բակով դեպի տուն: Մարիամը տեսավ, որ հետնաբակ չկա:— Հյուսիսում հովիտներ կան: Ձկով լի գետեր: Գուցե մի օր տանեմ քեզ:

Նա բացեց շքամուտքի դուռն ու Մարիամին ներս թողեց:

Ռաշիդի տունը շատ ավելի փոքր էր, քան Ջալիլինը, բայց Մարիամի ու Նանայի *քոլբայի* համեմատ պալատ էր: Նախասրահ, ներքևում հյուրասենյակ և խոհանոց, որտեղ Ռաշիդը ցույց տվեց Մարիամին նրա թավաներն ու կաթսաները, արագեփը ու կերոսինի *իշթոփը*[33]: Հյուրասենյակում բաց կանաչ կաշվե բազմոց կար: Մի կողմից այն պատռվել էր ու անփութորեն կարվել: Պատերը մերկ էին: Սեղան, երկու հյուսկեն աթոռ, երկու ծալովի աթոռ, անկյունում՝ սև թուջե վարառան:

Մարիամը կանգնեց հյուրասենյակի մեջտեղում ու նայեց շուրջը: *Քոլբայում* նա կարող էր մատների ծայրով դիպչել առաստաղին: Կարող էր պառկել իր մահճակալում ու պատուհանից թափանցող արևալույսի անկյունից իմանալ, թե օրվա որ ժամն է: Նա գիտեր՝ որքան պետք է բացվի իր դուռը, որ ճռռա: Գիտեր փայտե հատակի բոլոր երեսուն տախտակների յուրաքանչյուր փուշն ու ճեղքը: Այս բոլոր ծանոթ բաներն այլևս չկային: Նանան այլևս չկար, իսկ նա այստեղ էր՝ անծանոթ քաղաքում՝ իր նախորդ կյանքից հովիտներով, ձյունածածկ լեռներով ու հսկա անապատներով բաժանված: Նա անծանոթի տանն էր, որտեղ տարբեր սենյակներ էին ու սիգարետի հոտ, անծանոթ պահարաններ՝ լի անծանոթ պարագաներով, ծանր, մուգ կանաչ վարագույրներ ու առաստաղ, որին նա չէր հասնում: Մարիամը հանկարծակի ուժգին կարոտեց Նանային, Մոլլա Ֆայզուլլային, իր հին կյանքը:

Ու լաց եղավ:

— Էս ինչ լաց է,— ջղային հարցրեց Ռաշիդը: Ձեռքը տարավ շալվարի գրպանը, բացեց Մարիամի մատները ու ափը թաշկինակ մտցրեց: Սիգարետ վառեց ու հենվեց պատին: Նա հետևում էր՝ ինչպես է Մարիամը թաշկինակը աչքերին սեղմում:

---

[33] Իշթոփ (պարսկ.)՝ վառարան

— Վերջացրի՛ր:

Մարիամը գլխով արեց:

— Վստահ ես:

— Այո՛:

Նա բռնեց Մարիամի արմունկից ու տարավ հյուրասենյակի պատուհանի մոտ:

— Այս պատուհանը հյուսիս է նայում,— ասաց նա՝ ցուցամատի կեռ եղունգով թակելով ապակուն,— մեր դիմաց Ասմայի սարն է, տեսնո՞ւմ ես, ձախից՝ Ալի Աբադ սարը: Համալսարանը դրա ստորոտում է: Մեր հետևում՝ արևելքում, այստեղից չես տեսնի, Շիր Դարվազա լեռն է: Ամեն օր կեսօրին այդտեղից հրանոթով կրակում են: Վերջացրո՛ւ լացդ, հենց հիմա՛: Լուրջ եմ ասում:

Մարիամը սրբեց աչքերը:

— Այդ մի բանը տանել չեմ կարող,— ասաց նա խոժոռվելով,— կնոջ լացի ձայնը: Կներես: Դրա համբերությունը չունեմ:

— Ես ուզում եմ տուն գնալ,— ասաց Մարիամը:

Ռաշիդը բորբոքված հոգոց հանեց: Նրա ծխահոտ շունչը խփեց Մարիամի դեմքին:

— Ես դա որպես անձնական վիրավորանք չեմ ընդունի: Այս անգամ:

Կրկին բռնեց նրա արմունկից ու տարավ աստիճաններով վերև:

Այնտեղ նեղ, վատ լուսավորված միջանցք էր և երկու ննջասենյակ: Մեծ ննջասենյակի դուռը բաց էր: Դրա միջով Մարիամը տեսավ, որ սենյակը, ինչպես և ամբողջ տունը վատ է կահավորված. անկյունում մահճակալ՝ շագանակագույն վերմակով ու բարձով, կոմոդ, հանդերձապահարան: Բացի փոքր հայելուց՝ պատերին ոչինչ չկար:

Ռաշիդը փակեց դուռը:

— Սա իմ սենյակն է:

Ասաց, որ Մարիամը կարող է հյուրերի ննջասենյակն օգտագործել:

— Հուսով եմ՝ դեմ չես, ես սովոր եմ միայնակ քնել:

Մարիամը չասաց նրան, թե որքան թեթևացած զգաց իրեն գոնե այդ մտքից:

Այն սենյակը, որը պետք է լիներ Մարիամինը, շատ ավելի փոքր էր, քան Ջալիլի տան նրա սենյակը: Մահճակալ, հին, դարչնամոխրագույն կոմոդ, փոքրիկ հանդերձապահարան: Պատուհանը նայում էր դեպի բակ, և դրանից այն կողմ երևում էր փողոցը: Ռաշիդը նրա ճամպրուկը դրեց անկյունում:

Մարիամը նստեց մահճակալին:

— Դու չնկատեցիր,— ասաց նա՝ դռան շեմին փոքր-ինչ կռացած կանգնած, որ տեղավորվի:— Նայի՛ր պատուհանագոգին: Գիտե՞ս՝ դրանք ինչ են: Քեզ համար եմ դրել Հերաթ մեկնելուց առաջ:

Այդ պահին նոր Մարիամը նկատեց պատուհանագոգին դրված զամբյուղը: Դրա միջից կախված էին սպիտակ բրաբիոնները:

— Հավանո՞ւմ ես: Ուրախացնո՞ւմ են քեզ:

— Այո՛:

— Ուրեմն ինձ շնորհակալությո՛ւն հայտնիր:

— Շնորհակալությո՛ւն: Ներողություն եմ խնդրում: *Թաշաքոր*[34]:

— Դողում ես: Երևի վախեցնում եմ քեզ: Ես քեզ վախեցնո՞ւմ եմ: Դու ինձանից վախենո՞ւմ ես:

Մարիամը նրան չէր նայում, բայց այս հարցերում ինչ-որ խորամանկ ու չարաճճի բան զգաց: Նա արագ բացասաբար թափահարեց գլուխը, ինչը համարեց իրենց ամուսնության առաջին սուտը:

— Ո՞չ: Դե, լավ է: Ապրե՛ս: Հիմա սա քո տունն է: Քեզ դուր կգա: Ա՛յ կտեսնես: Ասե՞լ եմ, որ էլեկտրականություն ունենք: Օրերի մեծ մասը և ամեն գիշեր:

Նա շրջվեց, որ գնա: Դռան մոտ կանգ առավ, երկար տատանվում էր՝ աչքերը ծխից կկոցած: Մարիամը մտածեց, որ պատրաստվում է ինչ-որ բան ասելու: Բայց չասաց: Փակեց դուռը՝ թողնելով նրան միայնակ իր ճամպրուկի ու ծաղիկների հետ:

---

[34] Թաշաքոր (պարսկ.)՝ շնորհակալություն

10

Առաջին մի քանի օրը Մարիամը համարյա դուրս չեկավ իր սենյակից: Ամեն առավոտ *ազանի*[35] հեռավոր կանչից արթնանում էր, աղոթում, որից հետո սողալով վերադառնում էր անկողին: Նա դեռ անկողնում էր լինում, երբ լսում էր՝ ինչպես է Ռաշիդը լոգարանում լվացվում, երբ Ռաշիդը խանութ գնալուց առաջ մտնում էր նրա սենյակը: Պատուհանից նա տեսնում էր Ռաշիդին՝ ինչպես է ճաշը դնում հեծանիվի հետևի բեռնախցիկը, հետո, հեծանիվը բռնած, անցնում բակն ու դուրս գալիս փողոց: Տեսնում էր՝ ինչպես է պտտում ոտնակները, ինչպես է նրա լայն, թիկնեղ մարմինը անհետանում փողոցի վերջին ոլորանից:

Օրերի մեծ մասը Մարիամն անցկացնում էր անկողնում շփոթված ու լքված: Երբեմն իջնում էր խոհանոց, ձեռքը սահեցնում կպչուն, յուղոտ սեղանին, վինիլային ծաղկավոր վարագույրներին, որոնցից վառած ուտելիքի հոտ էր գալիս: Բացում էր ծուռտիկ դարակները, նայում անհամապատասխանող գդալներին ու դանակներին, քամիչին ու ծայրը թռած թիակներին, որոնք դառնալու էին նրա նոր կյանքի ամենօրյա գործիքները և հիշեցնելու էին նրա կյանքում տեղի ունեցած ողբերգության մասին, ստիպելու էին զգալ արմատախիլ, տեղահանված, ուրիշի կյանք ներխուժողի պես:

Քոլբայում նրա ախորժակը կանխատեսելի էր: Այստեղ նրա ստամոքսը հազվադեպ էր գռմռում քաղցից: Երբեմն վերցնում էր ճաշից մնացած սպիտակ բրնձի մի ափսե ու մի կտոր հաց ու նստում հյուրասենյակում՝ պատուհանի մոտ: Այստեղից նա կարող էր տեսնել իրենց փողոցի մեկհարկանի տների տանիքները: Կարող էր տեսնել նաև բակերը՝ պարաններին լվացք փռող կանանց, որոնք խռիկ էին տալիս իրենց երեխաներին, կեղտի մեջ կտցահարող հավերին, բահերն ու թիակները, ծառերին կապված կովերին:

Նա թախիծով հիշում էր այն բոլոր ամառային գիշերները, երբ ինքն ու Նանան քնում էին *քոլբայի* հարթ տանիքի վրա, նայում Գյուլ Դամանի վրա շողացող լուսնին, երբ գիշերն այնքան շոգ էր, որ

---

[35] Ազան՝ մուեզինի աղոթք անելու հրավեր, կանչ

շապիկը կպչում էր կրծքին պատուհանին կպած թաց տերևի պես: Նա կարոտում էր *քոլքայում* ձմեռային ընթերցանությունը, ձյունից ծանրացած ճյուղերին նստած ագռավների կռռոցը:

Տանը միայնակ մնալով՝ Մարիամը անհանգիստ քայլում էր խոհանոցից հյուրասենյակ, հյուրասենյակից խոհանոց, բարձրանում իր սենյակ, իջնում ներքև: Վերջում հայտնվում էր իր սենյակում, աղոթում էր կամ նստում անկողնում, սրտխառնոց զգում ու կարոտում տունը:

Երբ արևը սկսում էր դանդաղ իջնել դեպի արևմուտք, Մարիամի տագնապը հասնում էր գագաթնակետին: Ատամը ատամի չէր գալիս, երբ մտածում էր գիշերվա մասին, երբ Ռաշիդը կարող էր վերջապես որոշել անել այն, ինչ ամուսիններն անում են իրենց կանանց հետ: Նա պառկում էր անկողնում՝ նյարդերից ուժասպառ, մինչ Ռաշիդը միայնակ ուտում էր ներքևում:

Ռաշիդը միշտ կանգ էր առնում Մարիամի սենյակի մոտ ու գլուխը ներս մտցնում:

— Հնարավոր չէ՝ քնած լինես: Նոր ժամը յոթն է: Արթո՞ւն ես: Պատասխանի՛ր: Դե՛, ասա՛:

Նա կրկնում էր, մինչև մթան միջից Մարիամն ասում էր.

— Այստեղ եմ:

Ռաշիդը սահում նստում էր Մարիամի դռան շեմքին: Իր մահճակալից Մարիամը տեսնում էր նրա լայն մարմինը, երկար ոտքերը, արծվաքիթ կիսադեմը պարուրող ծխի քուլան, վառվող ու հանգչող սիգարետի սաթե ծայրը:

Ռաշիդը պատմում էր իր օրվա մասին: Մի զույգ մոկասին էր կարել արտգործնախարարի տեղակալի համար, որը միայն նրանից էր կոշիկ գնում: Լեհ դիվանագետի ու նրա կնոջ համար սանդալների պատվեր էր ստացել: Պատմում էր, թե ինչ սնահավատություններ կան կոշիկների մասին. իբր մահճակալի վրա դրած կոշիկը տունը մահ է բերում, վեճ կլինի, եթե առաջինը ձախ կոշիկը հագնես:

— Եթե չի արվել պատահաբար և ուրբաթ օրը,— ասաց նա,— իսկ դու գիտեի՞ր, որ վատ նշան է կոշիկները միասին կապելն ու մեխից կախելը:

Ռաշիդն ինքը դրանցից ոչ մեկին չէր հավատում: Նրա կարծիքով սնահավատությունը հիմնականում կանանց զբաղմունքն է:

Նա փոխանցում էր փողոցում լսածը, օրինակ, որ ամերիկացի նախագահ Ռիչարդ Նիքսոնը սկանդալից հետո հրաժարական է տվել:

Մարիամը, որը երբեք չէր լսել Նիքսոնի կամ նրան հրաժարականի դրդած սկանդալի մասին, ոչինչ չպատասխանեց: Նա անհանգիստ սպասում էր, որ Ռաշիդը վերջացնի խոսել, սիգարետը հանգցնի ու գնա: Միայն այդ ժամանակ, երբ նա լսում էր, թե ինչպես է Ռաշիդը անցնում միջանցքով, բացում ու փակում դուռը, միայն այդ ժամանակ էր մետաղյա բռունցքը, որ ճզմում էր նրա որովայնը, բացվում:

Մի գիշեր Ռաշիդը հանգցրեց սիգարետը և բարի գիշեր մաղթելու փոխարեն հենվեց դռանը:

— Երբևէ պատրաստվո՞ւմ ես բացելու այդ բանը,— ասաց նա ու գլխով ցույց տվեց ճամպրուկը: Ձեռքերը խաչեց կրծքին:— Ես մտածեցի, որ քեզ որոշ ժամանակ է պետք, բայց սա անհեթեթություն է, մեկ շաբաթ անցավ, իսկ... Դե, ուրեմն վաղը առավոտից ես ակնկալում եմ, որ քեզ կսկսես կնոջ պես պահել: *Ֆահմիդի՞*: Հասկացա՞ր:

Մարիամի ատամները սկսեցին կափկափել:

— Ինձ պատասխան է պետք:

— Այո՛:

— Բարի,— ասաց նա,— բա ի՞նչ էիր կարծում: Որ սա հյուրանո՞ց է: Որ ես ինչ-որ հյուրանոցի տե՞ր եմ: Դե, դա... Օ՜հ: Օ՜հ: *Լա իլլահ ի իլիլլահ*[36]: Ի՞նչ եմ ասել լացելու մասին: Մարիա՛մ: Ի՞նչ եմ քեզ ասել լացելու մասին:

* * *

Հաջորդ առավոտյան, երբ Ռաշիդը գնաց գործի, Մարիամը ճամպրուկից հանեց շորերն ու դրեց կոմոդի մեջ: Ձրհորից ջուր բերեց ու լաթի կտորով լվաց իր սենյակի ու ներքևի հյուրասենյակի

---

[36] Լա իլլահ ի իլիլլահ (արաբ.)՝ Չկա Աստված՝ բացի Ալլահից:

պատուհանները: Ավլեց հատակը, մաքրեց առաստաղի անկյուններից կախված սարդոստայները: Տունը օդափոխելու համար բացեց պատուհանները:

Երեք բաժակ ոսպ լցրեց կուժի մեջ թրջելու համար, դանակ գտավ ու կտրտեց մի քանի գազար ու երկու կարտոֆիլ, դրանք էլ թողեց ջրում փափկեն: Այլուր փնտրեց, գտավ այն պահարաններից մեկում՝ համեմունքի կեղտոտ բանկաների հետևում, թարմ խմոր պատրաստեց, հունցեց այնպես, ինչպես Նանան էր ցույց տվել՝ ափի ներքևի մասով սեղմել, արտաքին եզրը ծալել, շուռ տալ, նորից սեղմել: Խմորի վրա ալյուր շաղ տվեց, փաթաթեց խոնավ շորով, կապեց *հիջաբն* ու գնաց համայնական թոնրատուն:

Ռաշիդը պատմել էր, թե այն որտեղ է՝ փողոցով դեպի ձախ, հետո՝ կտրուկ աջ, բայց Մարիամը պարզապես հետևեց նույն ուղղությամբ գնացող կանանց ու երեխաների երամին: Երեխաները, որոնք վազում էին իրենց մայրերի հետևից կամ առաջ էին ընկել, հագել էին վերնաշապիկներ՝ կարկատանը կարկատանի վրա: Հագի շալվարները չափազանց մեծ էին կամ չափազանց փոքր, մաշված կապերով սանդալները ոտքերին հազիվ էին մնում, չփչփալով գնում-գալիս էին: Նրանք փայտիկով հեծանիվների փչացած անվադողեր էին գլորում:

Նրանց մայրերը քայլում էին երեք կամ չորս հոգանոց խմբերով՝ ոմանք *բուրքայով*[37], ոմանք առանց բուրքայի: Մարիամը լսում էր նրանց բարձրաձայն շաղակրատանքը, նրանց ուժգնացող ծիծաղը: Մարիամը քայլում էր գլխիկոր, բայց նրան հասնում էին կանանց կատակները, որոնք, թվում էր, միշտ վերաբերում էին հիվանդ երեխաներին կամ ծույլ, անշնորհակալ ամուսիններին:

Ասես ճաշն ինքն իրեն է եփվում:
Վալլահ օ բիլլահ[38] *՝ մի հանգիստ պահ չկա:*
Ու ասում է ինձ, երդվում եմ՝ ճիշտ է, իրոք ասում է ինձ...

---

[37] Բուրքա՝ նույնն է փառանջա, չադրա՝ կնոջ մարմինն ու դեմքը ամբողջությամբ ծածկող լայն զգեստ: Ունի աչքերի համար նախատեսված «պատուհանիկ»:

[38] Վալլահ օ բիլլա (պարսկ.)՝ երդվում եմ Աստծո անունով:

Այս անվերջ խոսակցությունը՝ բողոքավոր, բայց տարօրինակորեն նաև ուրախ ձայներանգով, պտտվում էր շրջագծով: Այն շարունակվեց փողոցում, անկյունը թեքվելիս, թոնրատան հերթում: Թղթախաղով տարված ամուսիններ: Իրենց մայրերին փայփայող ամուսիններ, որոնք կանանց վրա մի *ռուփիա*[39] չեն ծախսում: Մարիամը զարմանում էր՝ ինչպես կարող են այսքան շատ կանայք տառապել միևնույն չար բախտից, բոլորը ամուսնացած լինեն նման սարսափելի տղամարդկանց հետ: Թե՞ դա կանացի խաղ էր, որին նա ծանոթ չէր, ամենօրյա ծիսակարգ, ինչպես բրինձ թրջելը կամ խմոր հունցելը: Արդյո՞ք նրանք ակնկալում էին, որ նա էլ շուտով կմիանա իրենց:

Թոնրատան հերթում Մարիամը զգաց իրեն ուղղված ծուռ հայացքները, շշուկներ լսեց: Ձեռքերը սկսեցին քրտնել: Նա պատկերացրեց, որ բոլորը գիտեն՝ ինքը հարամի է, հոր և ընտանիքի համար ամոթի պատճառ: Բոլորը գիտեն, որ դավաճանել է մորը և խայտառակվել:

Նա *հիջաբի* ծայրով չորացրեց վերին շրթունքի խոնավությունը ու փորձեց հավաքել իրեն:

Մի քանի րոպե ամեն ինչ լավ էր:

Հետո ինչ-որ մեկը թփթփացրեց ուսին: Մարիամը շրջվեց ու հայտնաբերեց բաց մաշկով թմբլիկ կնոջ, որն իր նման *հիջաբ* էր կապել: Նա ուներ կարճ լարանման մազեր ու բարի, գրեթե կատարյալ կլոր դեմք: Նրա շուրթերը շատ ավելի հաստ էին, քան Մարիամինը, ներքևինը՝ փոքր-ինչ կախ, կարծես շուրթի տակի մեծ, մուգ խալը այն ներքև տաներ: Նրա մեծ կանաչավուն աչքերը սիրալիր փայլով շողում էին Մարիամին:

— Դու Ռաշիդ ջանի նոր կինն ես, չէ՞,— ասաց նա՝ լայն ժպտալով:— Նա, ով Հերաթից է: Այնքա՜ն երիտասարդ ես: Մարիա՛մ ջան, չէ՞: Իմ անունը Ֆարիբա է: Ես ապրում եմ քո փողոցում՝ ձախից հինգերորդ տանը՝ կանաչ դռնով: Սա որդիս է՝ Նուռը:

Կողքին կանգնած երեխան հարթ, երջանիկ դեմք ուներ ու մոր պես լարանման մազեր: Ձախ ականջի բլթակին սև մազերի փունջ էր աճում: Աչքերում չարաճճի, անհոգ լույս կար: Նա բարձրացրեց ձեռքը:

---

[39] Ռուփիա՝ մանրադրամ (12.000 ռուփիա = 1 դոլար)

թվագրվում է 1915.ին Խոյեր

— *Սալաամ*[40], Խալա՛[41] ջան:

— Նուռը տասը տարեկան է: Ես ավելի մեծ տղա էլ ունեմ՝ Ահմադը:

— Նա տասներեք տարեկան է,— ասաց Նուռը:

— Տասներեք է, բայց ոնց որ քառասուն տարեկան լինի,— ծիծաղեց Ֆարիբան:— Ամուսնուս անունը Հաքիմ է,— ասաց,— Դեհ-Մազանգում ուսուցիչ է: Մի օր համեցի՛ր, մի բաժակ...

Հետո հանկարծակիորեն, ասես քաջություն հավաքած, մյուս կանայք մի կողմ հրեցին Ֆարիբային, խմբվեցին Մարիամի շուրջը ու տագնապալի արագությամբ շրջապատեցին նրան:

— Ուրեմն դու Ռաշիդ ջանի ջահել հարսնացուն ես...

— Հավանո՞ւմ ես Քաբուլը:

— Ես եղել եմ Հերաթում, այնտեղ զարմիկ ունեմ:

— Սկզբից տղա՞ ես ուզում, թե՞ աղջիկ:

— Մինարեթնե՛րը: Ի՜նչ գեղեցկություն, ինչպիսի՜ շքեղ քաղաք:

— Տղան ավելի լավ է, Մարիա՛մ ջան, նրանք կրում են ընտանիքի անունը:

— Բա՛հ, տղաները ամուսնանում ու փախչում են: Աղջիկները մնում են ու քո մասին հոգ տանում, երբ ծերանաս:

— Մենք լսել էինք, որ դու գալու ես:

— Երկվորյակներ ունեցիր՝ մի տղա, մի աղջիկ, այդ ժամանակ բոլորին կգոհացնես:

Մարիամը հետ-հետ գնաց: Օդը նրան չէր հերիքում: Ականջները զնգում էին, զարկերակը թրթռում էր, հայացքը մեկից մյուսին էր տանում: Նա ընկրկեց, բայց նահանջելու տեղ չկար. շրջանի կենտրոնում էր: Նկատեց Ֆարիբային, որը խոժոռվում էր՝ տեսնելով իր ծանր վիճակը:

— Հանգի՛ստ թողեք նրան,— ասաց Ֆարիբան,— մի կո՛ղմ քաշվեք, հանգի՛ստ թողեք: Վախեցնում եք նրան:

Մարիամը խմորը սեղմեց կրծքին ու ճեղքեց իրեն շրջապատող ամբոխը:

---

[40] Սալաամ՝ բարև, բառացիորեն՝ խաղաղություն

[41] Խալա (պարսկ.)՝ մորաքույր, հորաքույր

— Ո՞ւր ես գնում, *համշիրա*[42]:

Նա հրելով դուրս պրծավ ու վազեց փողոցով: Միայն խաչմերուկին հասնելով հասկացավ, որ սխալ ճանապարհով է վազել: Շրջվեց ու գլուխը կախ վազեց մյուս ուղղությամբ, սայթաքեց ու ուժգին քերծեց ծունկը, հետո վեր կացավ ու վազեց, սուրաց կանանց կողքով:

— Քեզ ինչ եղավ:

— Արյուն է հոսում, համշիրա:

Մարիամը անցավ մի անկյունը, հետո մյուսը: Գտավ ճիշտ փողոցը, բայց հանկարծ չկարողացավ հիշել, թե որն էր Ռաշիդի տունը: Հևալով, համարյա լացակումած՝ վերուվար վազեց փողոցով, սկսեց կուրորեն հրել դռները: Որոշ դռներ փակ էին, մյուսները բացվեցին, բայց դրանց հետևում անծանոթ բակեր էին, հաչող շներ ու վախեցած հավեր: Նա պատկերացրեց՝ ինչպես է Ռաշիդը տուն գալիս, իսկ ինքը դեռ փնտրում է իր ճանապարհը, ծնկից արյուն է գալիս, մոլորվել է սեփական փողոցում: Հիմա իրոք սկսեց լաց լինել: Նա հրում էր դռները, տագնապած աղոթքներ մռթմռթում՝ դեմքը արտասուքից խոնավ, մինչև մեկը բացվեց, և նա թեթևացած տեսավ ցախանոցը, ջրհորը, պահեստանոցը: Շխկացրեց դուռն իր հետևից ու իջեցրեց լեզվակը: Չորեքթաթ, զկռտալով հասավ ջրհորի մոտ: Սիրտը թափելուց հետո սողալով գնաց նստեց՝ պատին հենված, ոտքերը մեկնած: Կյանքում իրեն այսքան միայնակ չէր զգացել:

* * *

Երբ Ռաշիդը այդ երեկո տուն եկավ, իր հետ շագանակագույն թղթե տոպրակ բերեց: Մարիամը հիասթափվեց, որ նա չնկատեց մաքուր պատուհանները, ավլած հատակը, սարդոստայնների բացակայությունը: Բայց Ռաշիդն ուրախ էր, որ նա արդեն դրել է իր ճաշի ափսեն հյուրասենյակի հատակին՝ մաքուր *սոֆրայի*[43] վրա:

— *Դաալ*[44] եմ պատրաստել,— ասաց Մարիամը:

---

[42] Համշիրա (պարսկ.)՝ քույր, բայց ոչ բարեկամական կապի իմաստով
[43] Սոֆրա (պարսկ.)՝ սփռոց
[44] Դաալ՝ ոսպով ու բանջերեղենով ճաշ

— Լավ է, սովից մեռնում եմ:

Մարիամը Ռաշիդի ձեռքերին ջուր լցրեց *աֆթավայից*[45]: Մինչ նա սրբիչով չորացնում էր ձեռքերը, Մարիամը նրա առաջ դրեց գոլորշին վրան դաալի ամանը և փխրուն սպիտակ բրնձով ափսեն: Առաջին ճաշն էր, որ եփել էր նրա համար, և Մարիամը կցանկանար ավելի լավ վիճակում լինել այն պատրաստելիս: Նա դեռ ցնցված էր թոնրատան մոտ տեղի ունեցած պատահարից, ամբողջ օրը մտահոգվում էր *դաալի* խտության, գույնի մասին, անհանգիստ էր, որ Ռաշիդի համար կոճապղպեղը կարող էր չափից շատ լինել կամ քրքումը՝ քիչ:

Ռաշիդը գդալը ընկղմեց ոսկեգույն *դաալի* մեջ:

Մարիամը կանգնած տեղը երերաց: Իսկ եթե նա հիասթափվի կամ բարկանա՞: Եթե ափսեն դժգոհ մի կողմ հրի՞:

— Զգո՛ւյշ եղիր,— հասցրեց ասել,— տաք է:

Ռաշիդը շրթունքները երկարացրեց ու փչեց, ապա գդալը բերանը տարավ:

— Լավն է,— ասաց,— մի քիչ աղը քիչ է, բայց լավն է: Գուցե ավելի քան լավը:

Թեթևացած՝ Մարիամը նայում էր՝ ինչպես է նա ուտում: Հպարտության ալիքը հանկարծ պատեց նրան: Լավ էր եփել, գուցե ավելի քան լավ, և նա զարմացավ, որ հուզվեց այս փոքրիկ հաճոյախոսությունից... Այդ օրվա տհաճությունը մի փոքր մեղմացավ:

— Վաղն ուրբաթ է,— ասաց Ռաշիդը,— ինչ կասես, եթե քեզ քաղաքը ցույց տամ:

— Քաբո՞ւլը:

— Չէ՛, Կալկաթան:

Մարիամը տարակուսած թարթեց աչքերը:

— Կատակ է: Իհա՛րկե Քաբուլը: Էլ ինչը:— Նա ձեռքը տարավ շագանակագույն թղթե տոպրակին:— Բայց նախ պիտի մի բան ասեմ քեզ:

Նա տոպրակից երկնագույն *բուրքա* հանեց: Ծալքավոր կտորը մետրերով բացվեց ծնկներին, երբ բարձրացրեց այն: Ռաշիդը ծալեց *բուրքան*, նայեց Մարիամին:

---

[45] Աֆթավա (պարսկ.)՝ ջրի կուժ

— Ես հաճախորդներ ունեմ, Մարիա՛մ, տղամարդիկ, որոնք իրենց կանանց իմ խանութ են բերում: Կանայք առանց գլխաշորի են, խոսում են անմիջականորեն ինձ հետ, անամոթաբար նայում աչքերիս: Շպարվում են ու ծնկներից բարձր կիսաշրջազգեստ հագնում: Երբեմն նույնիսկ ոտքները դնում են իմ առջև, կանա՛յք, չափումների համար, իսկ նրանց ամուսինները կանգնած հետևում են: Նրանք դա թույլ են տալիս: Նրանք չեն մտածում, որ անծանոթը ձեռք է տալիս իրենց կանանց մերկ ոտքերին: Կարծում են՝ ժամանակակից տղամարդիկ են, խելացի են, քանի որ կրթված են, ենթադրում եմ: Չեն հասկանում, որ գետնով են տալիս իրենց *նանգ* ու *նամուսը*, իրենց պատիվն ու հպարտությունը:

Նա օրորեց գլուխը:

— Նրանք հիմնականում ապրում են Քաբուլի հարուստ մասերում: Ես քեզ կտանեմ այնտեղ: Կտեսնես: Բայց նրանք այստեղ էլ կան, Մարիա՛մ, հենց այս թաղամասում, այդ փափկասուն տղամարդիկ: Մեր փողոցում ապրում է մի ուսուցիչ, Հաքիմ է անունը, և ես տեսնում եմ, որ նրա կինը՝ Ֆարիբան, միշտ քայլում է փողոցով միայնակ, գլխին գլխաշորից բացի ոչինչ չկա: Ինձ անհարմար եմ զգում, անկեղծ ասած, երբ տեսնում եմ մի տղամարդու, որը չի կարողանում վերահսկել իր կնոջը:

Նա գամեց Մարիամին իր ծանր հայացքով:

— Բայց ես ուրիշ ցեղից եմ, Մարիա՛մ: Այնտեղ, որտեղից ես եմ, մի սխալ հայացք, մի սխալ բառ, և արյուն է թափվում: Այնտեղ, որտեղից ես եմ, կնոջ դեմքը միայն իր ամուսնու գործն է: Ուզում եմ՝ հիշես սա: Հասկանո՞ւմ ես:

Մարիամը գլխով արեց: Երբ Ռաշիդը տոպրակը մեկնեց իրեն, Մարիամը վերցրեց:

Հաճույքը, որ ստացել էր, երբ Ռաշիդը գովել էր իր եփածը, չքացավ: Փոխարենը զգաց, որ ընկրկում է: Զգաց, որ այս մարդու կամքը պարտադրող է և անսասան, ինչպես Գյուլ Դամանի վրա նայող Սաֆիդ-քոհ լեռները:

Ռաշիդը փոխանցեց նրան թղթի տոպրակը:

— Ուրեմն իրար հասկացանք: Հիմա այդ *դաալից* մի քիչ էլ լցրո՛ւ:

11

Մարիամը նախկինում երբեք *բուրքա* չէր հագել: Ռաշիդը ստիպված էր օգնել նրան: Փափուկ միջադիրով գլխարկը նեղ էր ու ծանր, իսկ աշխարհին ցանցավոր վարագույրի միջից նայելը՝ տարօրինակ: Նա փորձեց *բուրքայով* քայլել իր սենյակում, բայց փեշը անընդհատ ոտքի տակ էր ընկնում, ու նա սայթաքում էր: Կողմնային տեսողության կորուստը նյարդայնացնում էր, Մարիամին դուր չէր գալիս՝ ինչպես է ծալքավոր կտորը խեղդելու աստիճան կպչում բերանին:

— Կհարմարվես,— ասաց Ռաշիդը,— ժամանակի հետ, գրազ գամ, նույնիսկ դուրդ կգա:

Նրանք ավտոբուսով գնացին մի տեղ, որը, Ռաշիդի ասելով, կոչվում էր Շար-է-Նաու այգի, որտեղ երեխաները միմյանց հրում էին ճոճանակների վրա ու վոլեյբոլի գնդակներ գցում ծառերին կապված մաշված ցանցի վրայով: Ռաշիդն ու Մարիամը զբոսնում էին ու նայում, թե ինչպես են տղաները օդապարուկներ թռցնում. Մարիամը քայլում էր Ռաշիդի կողքով և պարբերաբար սայթաքում, երբ բուրքայի ծայրն ընկնում էր ոտքի տակ: Ռաշիդը նրան տարավ ճաշելու մի փոքրիկ քյաբաբանոց Հաջի Ցաղուբ կոչվող մզկիթի մոտ: Հատակը կպչուն էր, օդը՝ ծխով լի: Պատերից հում մսի հոտ էր գալիս, իսկ երաժշտությունը, որը Ռաշիդը նկարագրեց որպես *լոգարի*[46], շատ բարձր էր: Խոհարարները նիհար տղաներ էին, որոնք մի ձեռքով հովհարում էին շամփուրները, իսկ մյուսով խփում մժեղներին: Սկզբում Մարիամին, որը երբեք ռեստորանում չէր եղել, տարօրինակ էր թվում բազմամարդ սենյակում այսքան անծանոթների հետ նստելը, ուտելիքի կտորները բերանը դնելու համար *բուրքան* բարձրացնելը: Ստամոքսում զգաց այն նույն անհանգստությունը, որ նրան համակել էր թոնրատանը օրեր առաջ: Բայց Ռաշիդի ներկայությունը որոշ չափով հանգստացնող էր, և որոշ ժամանակ անց նա այլևս չէր մտածում երաժշտության, ծխի, նույնիսկ մարդկանց մասին: Իսկ *բուրքան*, ի զարմանս նրան, նույնպես հանգստացնող էր: Ասես միակողմանի

---

[46] Լոգարի՝ աֆղանական պարային երաժշտություն

պատուհան լիներ: Նա ներսից դիտորդ էր՝ անջրպետված անծանոթների քննող աչքերից: Նրան այլևս չէր մտահոգում, որ մարդիկ մեկ հայացքից կիմանան իր անցյալի բոլոր ամոթալի գաղտնիքները:

Փողոցում Ռաշիդը անվանում էր պետական տարբեր շենքեր. սա Ամերիկյան դեսպանատունն է, ասաց, սա արտգործնախարարությունը: Նա մատնացույց արեց մեքենաները, ասաց դրանց անունները և որտեղ են արտադրվել. սովետական «Վոլգաներ», ամերիկյան «Շևրոլեներ», գերմանական «Օպելներ»:

— Ո՞րը ամենաշատը հավանեցիր,— հարցրեց:

Մարիամը տատանվեց, մատնացույց արեց «Վոլգան», և Ռաշիդը ծիծաղեց:

Քաբուլը շատ ավելի մարդաշատ էր, քան Մարիամի տեսած Հերաթը: Ավելի քիչ էին ծառերն ու ձիաքարշ *գարիները*, մեքենաներն ավելի շատ էին, շենքերը՝ ավելի բարձր, ավելի շատ էին լուսացույցներն ու սալարկած մայթերը: Եվ ամենուր Մարիամը լսում էր քաղաքի յուրահատուկ բարբառը. սիրելին *ջոն* էր, ոչ թե *ջո*, քույրը՝ *համշիրա*, *համշիրեի* փոխարեն, և այլն:

Փողոցի վաճառողից Ռաշիդը պաղպաղակ գնեց: Մարիամն առաջին անգամ էր պաղպաղակ ուտում ու չէր պատկերացնում, որ քիմքի հետ նման հնարքներ կարելի է խաղալ: Նա ագահաբար կուլ տվեց ամբողջ ամանը, մանրացված պիստակի լցոնը, ամանի տակի փոքրիկ բրնձի արիշտան: Նա հիացած էր պաղպաղակի կախարդական համադրությամբ ու արբեցնող քաղցրությամբ:

Նրանք քայլեցին դեպի Քոչեհ-Մորղա՝ Հավերի փողոց կոչվող վայրը: Թաղամասի նեղ, բազմամարդ շուկան, Ռաշիդի ասելով, Քաբուլում ամենահարուստն էր:

— Այս կողմերում են ապրում օտարերկրյա դիվանագետները, հարուստ գործարարները, արքայական ընտանիքի անդամները՝ այդտեսակ մարդիկ: Ոչ թե քեզ կամ ինձ նման:

— Ես ոչ մի հավ չեմ տեսնում,— ասաց Մարիամը:

— Այդ մի բանը Հավերի փողոցում չկա,— ծիծաղեց Ռաշիդը:

Փողոցում բազմաթիվ խանութներ ու փոքրիկ կրպակներ կային, որտեղ վաճառում էին գառան մորթուց գլխարկներ ու ծիածանի գույնի *չափաններ*: Ռաշիդը կանգ առավ խանութներից մեկում, որ-

պեսզի նայի փորագրված արծաթե դաշույնին, մյուսում՝ հին հրացանին, որը, ըստ վաճառողի հավաստիացման, մնացել է բրիտանացիների դեմ առաջին պատերազմից:

— Բա ոնց: Իսկ ես Մոշե Դայանն[47] եմ,— մռթմռթաց Ռաշիդը: Նա կիսաժպտաց, ու Մարիամին թվաց, որ դա իրեն ուղղված ժպիտ էր: Անձնական, ամուսինների միջև ժպիտ:

Նրանք անցան գորգերի խանութների, ձեռագործ աշխատանքների խանութների, հրուշակեղենի խանութների, ծաղկի խանութների, տղամարդկանց կոստյումներ և կանանց զգեստներ վաճառող խանութների կողքով, և այնտեղ՝ ժանյակավոր վարագույրների հետևում, Մարիամը տեսավ երիտասարդ աղջիկների, որոնք կոճակներ էին կարում ու օձիքներ արդուկում: Ռաշիդը պարբերաբար ողջունում էր ծանոթ խանութպաններին, մեկ՝ ֆարսիով, մեկ՝ փաշթոյով: Երբ նրանք իրար ձեռք էին սեղմում և համբուրում իրար, Մարիամը կանգնում էր մի քանի մետր հեռու: Ռաշիդը նրան մոտ չէր կանչում, չէր ներկայացնում:

Նա խնդրեց Մարիամին սպասել ձեռագործ աշխատանքների խանութի մոտ.

— Տիրոջը ճանաչում եմ,— ասաց,— մի րոպեով մտնեմ՝ *սալաամ* ասեմ:

Մարիամը սպասեց դրսում՝ մարդաշատ մայթին: Նայում էր Հավերի փողոցով դանդաղ ընթացող մեքենաներին, որոնք ճեղքում անցնում էին չարչիների ու հետիոտների միջով, ազդանշան տալիս տեղից չշարժվող երեխաներին և էշերին: Նայում էր իրենց փոքրիկ կրպակներում ճանձրացող առևտրականներին, որոնք ծխում էին կամ թքում պղնձե թքամանների մեջ. նրանց դեմքերը ժամանակ առ ժամանակ դուրս էին գալիս ստվերից, որպեսզի անցորդներին գործվածքներ ու մորթու օձիքով *փուսթին*[48] վերարկուներ առաջարկեն:

Բայց ամենից շատ Մարիամի աչքին զարնեցին կանայք:

Քաբուլի այս հատվածում կանայք տարբերվում էին աղքատ թաղամասերի կանանցից, ինչպիսին այն թաղամասն էր, որտեղ նա

---

[47] Մոշե Դայան (1915–1981)՝ Իսրայելի ռազմական և պետական գործիչ, 1967–1974 թթ. Իսրայելի պաշտպանության նախարար:

[48] Փուսթին՝ ոչխարի մորթով աստառված վերարկու

ապրում էր Ռաշիդի հետ, որտեղ կանանց մեծ մասը ամբողջությամբ ծածկված էր: Այս կանայք... ինչ բառ էր գործածել Ռաշիդը... «ժամանակակից» էին: Այո՛, ժամանակակից աֆղան կանայք ամուսնանում էին ժամանակակից աֆղան տղամարդկանց հետ, որոնք դեմ չէին, որ իրենց կանայք զբոսնեն անծանոթների միջով՝ դեմքներին շպար, գլխաբաց: Մարիամը նայում էր՝ ինչպես են նրանք անկաշկանդ ու արագ անցնում փողոցով, երբեմն՝ տղամարդու հետ, երբեմն՝ մենակ, երբեմն էլ վարդաթուշ երեխաների հետ, որոնց հագին փայլուն կոշիկներ էին ու կաշվե կապերով ժամացույցներ, որոնք քշում էին բարձր ղեկով ու ոսկեգույն ճաղերով հեծանիվներ՝ ի տարբերություն Դեհ-Մազանգի երեխաների, որոնց այտերին մոծակների կծածից սպիներ էին, և որոնք փայտիկով հին հեծանիվների անվադողեր էին գլորում:

Բոլոր այս կանանց ձեռքերին ճոճվում էին ձեռքի պայուսակները, խշխշում էին կիսաշրջազգեստները: Մարիամը նույնիսկ նկատեց մեկին, որը, մեքենայի ղեկի առաջ նստած, ծխում էր: Նրանց եղունգները երկար էին, փայլուն, վարդագույն կամ նարնջագույն, շրթունքները՝ կակաչի պես ալ կարմիր: Նրանք քայլում էին բարձր կրունկներով և արագ, ասես մշտապես կարևոր գործեր ունեին: Նրանք դնում էին սև արևային ակնոցներ, և երբ սուրում էին Մարիամի կողքով, նա առնում էր նրանց օծանելիքի հոտը: Նա պատկերացնում էր, որ բոլորն էլ համալսարանական կրթություն ունեն, աշխատում են գրասենյակային շենքերում՝ իրենց սեղանների մոտ, որտեղ տպում են, ծխում ու կարևոր մարդկանց կարևոր հեռախոսազանգեր կատարում: Այս կանայք խորհրդավոր էին թվում Մարիամին: Նրանք ընդգծում էին իր մենությունը, իր միջակ արտաքինը, ձգտումների բացակայությունը, շատ բաների մասին անտեղյակությունը:

Հանկարծ Ռաշիդը թփթփացրեց ուսին ու ինչ-որ բան հանձնեց:

— Ահա՛:

Մուգ կարմրաշագանակագույն մետաքսե շալ էր՝ ուլունքազարդ ծոպերով ու ձեռագործ ոսկեթել եզրերով:

— Հավանո՞ւմ ես:

Մարիամը վեր նայեց: Այդ պահին Ռաշիդը հուզիչ բան արեց: Նա աչքերը թարթեց ու խուսափեց Մարիամի հայացքից:

Մարիամը մտածեց Ջալիլի մասին, թե ինչ շեշտված զվարթությամբ էր նա պարտադրում իր զարդերը, ինչը խոնարհ երախտագիտությունից բացի ուրիշ պատասխանի տեղ չէր թողնում: Նանան ճիշտ էր ասում Ջալիլի նվերների մասին: Դրանք ապաշխարության անվստահ խորհրդանիշեր էին, կեղծավոր, կաշառող ժեստեր, որոնք արվում էին սեփական հանգստության համար, այլ ոչ Մարիամի: Այս շալը, Մարիամը հասկացավ, իսկական նվեր էր:

— Գեղեցիկ է,— ասաց նա:

* * *

Այդ գիշեր Ռաշիդը նորից այցելեց Մարիամին նրա սենյակում: Բայց դռան մոտ ծխելու փոխարեն անցավ սենյակն ու նստեց կողքին, երբ նա պառկած էր անկողնում: Ջսպանակները ճռռացին, և մահճակալը Ռաշիդի կողմը ծռվեց: Մի պահ տատանվելուց հետո Ռաշիդի ձեռքն իջավ Մարիամի պարանոցին, հաստ մատները դանդաղորեն հետևից սեղմեցին պարանոցի անհարթությունները: Ռաշիդի բութ մատները սողացին ներքև, և ահա դրանք փաղաքշում են անրակի վրայի փոսիկը, հետո մարմինը: Մարիամը սկսեց դողալ: Ռաշիդի ձեռքը շարունակում էր իջնել ներքև, ավելի ներքև, եղունգները կառչեցին վերնաշապիկի բամբակին:

— Ես չեմ կարող,— մրմնջաց Մարիամը՝ նայելով լուսնի փայլով լուսավորված նրա կիսադեմին, նրա հաստ ուսերին ու լայն կրծքավանդակին, բաց օձիքից դուրս եկող սպիտակ մազափնջերին:

Հիմա նրա ձեռքը Մարիամի աջ կրծքի վրա էր, ուժգին սեղմում էր այն, և Մարիամը լսում էր՝ ինչպես է նա քթով խոր շնչում:

Ռաշիդը սողոսկեց վերմակի տակ: Մարիամը զգաց, որ նա արձակում է գոտին, շալվարի թելը: Մարիամը բռունցքների մեջ առավ սավանները: Ռաշիդը պառկեց Մարիամի վրա, անհանգիստ շարժվեց, և Մարիամը հեծկլտաց. հետո փակեց աչքերը, ատամները կրճտացրեց:

Ցավը հանկարծակի էր ու զարմանալի: Մարիամի աչքերը բացվեցին: Նա շնչում էր ատամների արանքով ու կծում բութ մատի ոսկորը: Ազատ ձեռքը գցեց Ռաշիդի մեջքին ու մխրճեց նրա վերնաշապիկի մեջ:

Ռաշիդը թաղեց դեմքը Մարիամի բարձի մեջ, և Մարիամը նրա ուսի հետևից, աչքերը լայն բացած, նայեց առաստաղին՝ դողալով, շրթունքները սեղմած, զգալով Ռաշիդի արագ շնչառությունը իր ուսի վրա: Նրանց միջև օդը ուներ ծխախոտի, ավելի վաղ կերած սոխի ու խորոված գառան հոտ: Պարբերաբար Ռաշիդի ականջը քսվում էր Մարիամի այտին, և քերծող զգացումից Մարիամը հասկանում էր, որ նա այն սափրել է:

Երբ ամեն ինչ ավարտվեց, Ռաշիդը հևալով մի կողմի վրա ընկավ: Ձեռքը իջեցրեց ճակատին: Մթության մեջ Մարիամը տեսնում էր նրա ժամացույցի կապույտ սլաքները: Այսպես որոշ ժամանակ պառկեցին՝ մեջքի վրա, առանց միմյանց նայելու:

— Ամոթ բան չկա, Մարիա՛մ,— ասաց նա մի քիչ անպարզ,— ամուսնացած մարդիկ սա են անում: Ինքը՝ Մարգարեն, ու նրա կանայք սրանով են զբաղվել: Ամոթ բան չկա:

Մի քանի րոպե հետո Ռաշիդը մի կողմ ձգեց վերմակը և դուրս եկավ սենյակից՝ բարձի վրա թողնելով իր գլխի դրոշմը, թողնելով, որ Մարիամը սպասի, մինչև ներքևի ցավը մեղմանա, նայի երկնքի սառած աստղերին ու ամպին, որը հարսանեկան քողի պես շղարշել էր լուսնի երեսը:

12

Ռամադանը[49] այդ տարի՝ 1974–ին, սկսվեց աշնանը: Կյանքում առաջին անգամ Մարիամը տեսավ, թե ինչպես է նոր կիսալուսնի տեսքը ունակ վերափոխելու ամբողջ քաղաքը, փոխելու դրա ռիթմն ու տրամադրությունը: Նա նկատեց, որ քնկոտ լռությունը համակեց Քաբուլը: Երթևեկությունը դանդաղեց, պակասեց, նույնիսկ անաղմուկ դարձավ: Խանութները դատարկվեցին: Ռեստորանները անջատեցին լույսերը, փակեցին դռները: Մարիամը փողոցներում այլևս

[49] Ռամադան՝ իսլամական օրացույցի իններորդ ամիսը, որի ընթացքում բարեպաշտ մահմեդականները պետք է պահք պահեն առավոտվա աղոթքից՝ ֆաջրից մինչև երեկոյան աղոթք՝ մաղրիբ: Ռամադան ամսվա ընթացքում ցերեկվա ժամերին արգելվում է սնունդ և հեղուկ օգտագործել, սեռական հարաբերություն ունենալ, ծխել, թղթախաղ խաղալ:

չտեսավ ծխողների, պատուհանագոգերին այլևս թեյի բաժակներից գոլորշի չէր բարձրանում: Իսկ *իֆթարի*[50] ժամանակ, երբ արևը մայր էր մտնում արևմուտքում, ու թնդանոթը կրակում էր Շիր Դարվազա սարից, քաղաքը դադարեցնում էր պասը, և այդպես էր անում նաև Մարիամը՝ հացով ու խուրմայով, և իր կյանքի տասնհինգ տարիների ընթացքում առաջին անգամ համտեսում էր համայնքի հետ կյանքը կիսելու քաղցրությունը:

Բացառությամբ մի քանի օրերի՝ Ռաշիդը պահք չէր պահում: Այն մի քանի անգամը, երբ պահում էր, տուն էր գալիս թթված: Սովը նրան դարձնում էր կոպիտ, դյուրագրգիռ, անհամբեր: Մի երեկո, երբ Մարիամը մի քանի րոպեով ուշացրեց ընթրիքը, նա սկսեց հաց ու բողկ ուտել: Նույնիսկ երբ Մարիամը դիմացը դրեց բրինձը, գառան միսն ու բամիայի *քուրման*[51], Ռաշիդը դրանց ձեռք չտվեց: Ոչինչ չասաց, շարունակեց ծամել հացը՝ քունքերը շարժելով, ճակատի երակը զայրույթից ուռած: Շարունակեց ծամել ու դիմացը նայել, իսկ երբ Մարիամը խոսեց հետը, չտեսնող աչքերով նայեց նրան ու հացի մի կտոր էլ դրեց բերանը:

Մարիամը թեթևացած շունչ քաշեց, երբ Ռամադանն ավարտվեց:

Քոլբայում Ռամադանին հաջորդող Էիդ-ուլ-Ֆիթրի[52] եռօրյա տոնակատարության ժամանակ Ջալիլն այցելում էր Մարիամին ու Նանային: Կոստյում և փողկապ հագած՝ նա Էիդի նվերներ էր բերում: Մի տարի Մարիամին բրդյա շալ նվիրեց: Երեքով նստում, թեյ էին խմում, իսկ հետո Ջալիլը, ներողություն խնդրելով, հեռանում էր՝ «Էիդը իսկական ընտանիքի հետ նշելու»,— ասում էր Նանան, երբ նա անցնում էր վտակը:

Միլլա Ֆայզուլլան էլ էր գալիս: Նա Մարիամին փայլաթիթեղով շոկոլադի կոնֆետներ էր բերում, ներկած խաշած ձվերով զամբյուղ, բլիթներ: Նրա գնալուց հետո Մարիամը իր նվերներով բարձրանում էր ուռենիներից մեկի վրա: Բարձր ճյուղին նստած՝ ուտում էր Միլլա Ֆայզուլլայի բերած շոկոլադը և ներքև գցում փայլաթիթեղները,

---

[50] Իֆթար՝ Ռամադանի ժամանակ արևամուտին պահքից դուրս գալու ճաշը

[51] Քուրմա՝ ապուրի տեսակ

[52] Էիդ-ուլ-Ֆիթր՝ Ռամադանի պահքից հետո տոնակատարություն՝ առատ հյուրասիրությամբ

որոնք արծաթե ծաղիկների նման սփռվում էին ծառաբնի մոտ: Երբ շոկոլադը վերջանում էր, սկսում էր բլիթներն ուտել ու ձվերի վրա դեմքեր նկարել: Բայց այս ամենը նրան քիչ հաճույք էր պատճառում: Մարիամը ատում էր Էիդը՝ հյուրընկալության ու հանդիսավոր արարողությունների այդ ժամանակը, երբ ընտանիքները հագնում են իրենց լավագույն զգեստներն ու այցելում միմյանց: Նա պատկերացնում էր, որ Հերաթում օդը ճարճատում է ուրախությունից, իսկ զվարթ ու պայծառ աչքերով մարդիկ միմյանց սեր ու բարություն են պարգևում: Այդ ժամանակ նրան սավանի պես պարուրում էր մենության զգացողությունը, որն անցնում էր միայն այն ժամանակ, երբ Էիդը վերջանում էր:

Այդ տարի առաջին անգամ Մարիամը սեփական աչքերով տեսավ իր մանկության երազած Էիդը:

Ռաշիդի հետ նրանք դուրս եկան փողոց: Մարիամը երբեք այսքան աշխուժության միջով չէր քայլել: Չվախենալով ցուրտ եղանակից՝ ընտանիքները հեղեղել էին քաղաքը, տենդագին շրջայց էին կատարում իրենց հարազատներին: Իրենց փողոցում Մարիամը տեսավ Ֆարիբային ու նրա որդուն՝ Նուռին, որը կոստյում էր հագել: Ֆարիբայի գլխին սպիտակ գլխաշոր էր, և նա քայլում էր փոքրամարմին ամաչկոտ տեսք ունեցող տղամարդու կողքին: Նրա մեծ որդին էլ էր այնտեղ. Մարիամը հիշեց, որ առաջին անգամ թոնրատուն այցելելուց Ֆարիբան ասել էր նրա անունը՝ Ահմադ: Նա ուներ խորունկ մտորուն աչքեր, դեմքը ավելի մտախոհ էր, ավելի լուրջ, քան կրտսեր եղբորը, վաղ հասունություն արտահայտող դեմք, մինչդեռ եղբոր դեմքը դեռ տղայական էր: Ահմադի վզին շողում էր «Ալլահ» կախազարդը:

Ֆարիբան երևի ճանաչեց Մարիամին, որը *բուրքայով* քայլում էր Ռաշիդի կողքին: Նա ձեռքով արեց ու բացականչեց՝ *«Էիդ մուբարաք*[53]»:

Բուրքայի ներսից Մարիամը ուրվականի պես գլխով արեց:

— Ճանաչո՞ւմ ես նրան՝ ուսուցչի կնոջը,— հարցրեց Ռաշիդը:

Մարիամն ասաց, որ չի ճանաչում:

---

[53] Էիդ մուբարաք՝ տոնը շնորհավոր

— Լավ կլինի՝ հեռու մնաս: Քիթն ամեն տեղ խոթող, բամբասող է: Ամուսինն էլ կարծում է՝ ինքը կրթված մտավորական է: Բայց նա մուկ է: Նայիր նրան: Մկան նման չէ՞:

Նրանք գնացին Շար-է-Նաու, որտեղ աղմկոտ խաղում էին երեխաները, որոնց հագին նոր շապիկներ էին և ուլունքազարդ վառ գույնի բաճկոններ, ու համեմատում էին Էիդին ստացած նվերները: Կանայք ի ցույց էին դնում քաղցրավենիքի պնակները: Մարիամը նայում էր խանութների ցուցափեղկերից կախված տոնական լապտերներին, լսում բարձրախոսներից թնդացող երաժշտությունը: Երբ անցնում էր անծանոթների կողքով, նրան *«Էիդ մուբարաք»* էին ասում:

Այդ երեկո նրանք գնացին Չաման, և Ռաշիդի հետևում կանգնած՝ Մարիամը նայում էր, թե ինչպես է հրավառությունը կանաչ, վարդագույն ու դեղին բոցերով լուսավորում երկինքը: Նա կարոտում էր Մոլլա Ֆայզուլլային, որի հետ նստում էր *քոլբայի* մոտ ու նայում հեռվում՝ Հերաթի վրա ճարճատող հրավառությանը, ուսուցչի մեղմ, կատարակտով ախտահարված աչքերում արտացոլվող հանկարծակի գունային պայթյունները: Բայց ամենից շատ նա կարոտում էր Նանային: Մարիամը կուզենար, որ մայրը կենդանի լիներ ու տեսներ սա: Տեսներ իրեն այստեղ՝ այս ամենի կենտրոնում: Վերջապես տեսներ, որ այդ գոհությունն ու գեղեցկությունը անհասանելի բաներ չէին: Նույնիսկ նրանց նմանների համար:

* * *

Էիդին նրանց տուն հյուրեր էին գալիս: Բոլորը տղամարդիկ էին՝ Ռաշիդի ընկերները: Երբ դռան թակոց էր լսվում, Մարիամը գիտեր, որ պետք է բարձրանա իր սենյակ ու դուռը փակի: Մնում էր այնտեղ, մինչ տղամարդիկ ներքևում Ռաշիդի հետ թեյ էին խմում, ծխում, զրուցում: Ռաշիդը Մարիամին ասել էր, որ ներքև չիջնի, մինչև այցելուները չգնան: Մարիամը դեմ չէր: Իրականում նույնիսկ շոյված էր զգում իրեն: Ռաշիդի համար իրենց հարաբերությունները ասես սրբություն լինեին: Մարիամի պատիվը՝ *նամուսը*, արժանի էր նրա պաշտպանությանը: Նա զգում էր իրեն գնահատված այս հովանավորությամբ: Արժևորված ու կարևոր:

Էիդի երրորդ ու վերջին օրը Ռաշիդը գնաց՝ մի քանի ընկերների այցելելու: Մարիամը, որի ստամոքսը ամբողջ գիշեր խանգարված էր, ջուր եփեց ու մանրացված հիլով մի բաժակ կանաչ թեյ պատրաստեց: Հյուրասենյակում նրան սպասում էին նախորդող երեկոների Էիդի այցելությունների հետևանքները. շուռ տված բաժակներ, ներքնակների արանքն ընկած կիսածամած դդմի սերմեր, նախորդ գիշերվա ընթրիքի մնացորդներով ուրվագծված ափսեներ: Մարիամը սկսեց մաքրել անկարգությունը՝ զարմանալով, թե որքան ակտիվորեն ծույլ կարող են լինել տղամարդիկ:

Նա չէր ուզում մտնել Ռաշիդի սենյակ: Բայց տունը հավաքելով՝ հյուրասենյակից հասավ աստիճաններին, հետո վերևի միջանցքին ու նրա դռանը ու մեկ էլ առաջին անգամ հայտնվեց նրա սենյակում՝ նրա մահճակալի վրա նստած, և իրեն հանցագործ զգաց:

Մարիամը զննեց ծանր, կանաչ վարագույրները, պատի մոտ կոկիկ դրված փայլուն կոշիկները, զգեստապահարանի դուռը, որի մոխրագույն ներկը պլոկվել էր, և տակի փայտը երևում էր: Մահճակալի կողքի կոմոդի վրա նկատեց սիգարետի տուփ: Սիգարետներից մեկը դրեց բերանը ու կանգնեց պատի փոքրիկ օվալաձև հայելու դիմաց: Օդ փչեց հայելու վրա ու մոխիրը թափ տալու շարժում արեց: Դրեց տեղը: Նրան չէր հաջողվում ծխել այն նազանքով, որով ծխում էին Քաբուլի կանայք: Նրա ծխելը գռեհիկ, զավեշտալի էր երևում:

Մեղավորության զգացումով՝ Մարիամը բացեց կոմոդի վերին դարակը:

Սկզբից տեսավ ատրճանակը: Սև էր, փայտե բռնակով ու կարճ փողով: Մարիամը վերցնելուց առաջ մտապահեց, թե ինչպես էր այն դրված: Ձեռքում պտտեց: Շատ ավելի ծանր էր, քան թվում էր տեսքից: Բռնակը հանգիստ տեղավորվեց ձեռքում, իսկ կոթը սառն էր: Նրան մտահոգեց այն, որ Ռաշիդին պատկանում էր մի բան, որի միակ նպատակն է սպանել մեկ այլ մարդու: Բայց, անշուշտ, նա պահում էր դա իրենց անվտանգության համար: Մարիամի անվտանգության համար:

Ատրճանակի տակ ոլորված անկյուններով մի քանի ամսագրեր կային: Մարիամը բացեց մեկը: Ներսում մի բան կտրվեց: Անկախ իրենից բերանը բացվեց:

Յուրաքանչյուր էջին կանայք էին՝ գեղեցիկ կանայք, որոնց հագին չկար ո՛չ վերնաշապիկ, ո՛չ շալվար, ո՛չ գուլպաներ, ո՛չ էլ կիսավարտիքներ: Նրանց հագին ոչինչ չկար: Նրանք պառկած էին մահճակալներին՝ ճմռթված սավանների վրա, ու կիսաբաց աչքերով նայում էին Մարիամին: Լուսանկարների մեծ մասի վրա նրանց ոտքերը չռած էին, և Մարիամը լիարժեք տեսնում էր մեջտեղի մութ տեղը: Որոշ լուսանկարներում կանայք փռվել էին՝ ասես (Աստված այս միտքը մեղք չհամարի) *սույդա*[54] աղոթքի համար: Ձանձրույթ արտահայտող արհամարհանքով նրանք հետ էին նայում ուսի վրայով:

Մարիամն արագ տեղը դրեց ամսագիրը: Ասես խմած լիներ: Ովքե՞ր էին այս կանայք: Ինչպե՞ս կարող էին թույլ տալ, որ իրենց այս ձևով լուսանկարեն: Նողկանքից սիրտը խառնում էր: Սրանո՞վ էր զբաղված Ռաշիդը այն գիշերները, երբ չէր այցելում իր սենյակը: Արդյո՞ք Մարիամը հիասթափեցրել էր նրան այս հարցում: Ի՞նչ իմաստ ունեն պատվի ու պատկանելիության մասին նրա բոլոր խոսակցությունները, բացասական վերաբերմունքը կին հաճախորդների նկատմամբ, որոնք, ի վերջո, ընդամենը իրենց ոտնաթաթերն էին ցույց տալիս կոշիկը սազեցնելու համար: ***Կնոջ դեմքը***, ասում էր, ***միայն իր ամուսնու գործն է***: Անշուշտ, այս էջերում պատկերված կանայք ամուսիններ ունեին, նրանցից ոմանք պետք է ունենան: Համենայն դեպս, նրանք եղբայրներ ունեին: Եթե այդպես է, ինչո՞ւ էր Ռաշիդը պնդում, որ ***նա*** ծածկվի, եթե կարող էր հանգիստ նայել այլ տղամարդկանց կանանց ու քույրերի ինտիմ տեղերին:

Մարիամը նստեց նրա մահճակալին ամոթահար ու շփոթված: Դեմքն առավ ափերի մեջ ու փակեց աչքերը: Խոր շնչում էր, մինչև հանգստացավ:

Դանդաղ Մարիամի գլխում հասունացավ բացատրությունը: Ի վերջո, նա տղամարդ է, իր գալուց առաջ երկար տարիներ միայնակ էր ապրել: Նրանց կարիքները տարբեր են: Այսքան ամիս անց Մարիամի համար կենակցումը դեռ ցավին դիմանալու վարժանք էր: Ռաշիդի ախորժակը, մյուս կողմից, կատաղի էր, երբեմն նման էր բռնության: Ինչպես է նրան գամում մահճակալին, ինչ ուժով է

---

[54] Սույդա (պարսկ.)՝ ծնկաչոք

սեղմում կրծքերը, ինչ կատաղությամբ է աշխատեցնում կոնքերը: Ռաշիդը տղամարդ է: Այս բոլոր տարիները առանց կնոջ էր: Կարող էր Մարիամը նրան մեղադրել այն բանի համար, որ Աստված նրան այդպիսին է ստեղծել:

Մարիամը գիտեր, որ երբեք այդ մասին նրա հետ չի կարողանա խոսել: Արգելված թեմա է: Բայց արդյոք աններելի է: Մտածեց իր կյանքի միակ այլ տղամարդու մասին: Ջալիլը՝ այդ պահին երեք կնոջ ամուսին և ինը երեխաների հայր, Նանայի հետ արտամուսնական հարաբերության մեջ էր: Ո՞րն էր ավելի վատ՝ Ռաշիդի ամսագիրը, թե՞ Ջալիլի արածը: Եվ ընդհանրապես, արդյոք ինքը՝ գեղջկուհի, *հարամի*, իրավունք ունի դատելու:

Մարիամը բացեց կոմոդի ներքևի դարակը:

Այդտեղ գտավ Ռաշիդի տղայի՝ Յունուսի լուսանկարը: Այն սև ու սպիտակ էր: Չորս տարեկանի տեսք ուներ, գուցե հինգ: Հագին զոլավոր վերնաշապիկ էր ու թիթեռնիկ-փողկապ: Գեղեցիկ փոքրիկ տղա էր՝ բարակ քթով, շագանակագույն մազերով և մուգ, մի փոքր ներս ընկած աչքերով: Նրա հայացքը շեղված էր, ասես լուսանկարվելու պահին ինչ-որ բան գրավել էր ուշադրությունը:

Դրա տակ մեկ այլ լուսանկար էր, նույնպես սև-սպիտակ, մի քիչ ավելի հատիկավոր: Նստած կին էր, իսկ հետևում՝ ավելի նիհար, ավելի երիտասարդ սևահեր Ռաշիդը: Կինը գեղեցիկ էր: Գուցե ոչ այնքան գեղեցիկ, որքան ամսագրի կանայք, բայց գեղեցիկ էր: Անշուշտ, ավելի գեղեցիկ էր, քան Մարիամը: Նա նուրբ ծնոտ ուներ և մեջտեղից բացած երկար սև մազեր: Բարձր այտոսկրեր ու նուրբ ճակատ: Մարիամը պատկերացրեց սեփական դեմքը՝ բարակ շուրթերն ու երկար կզակը, ու մի փոքր խանդեց:

Մարիամը երկար նայեց այդ լուսանկարին: Ինչ-որ տագնապալի բան կար այն բանում, թե ինչպես էր Ռաշիդը ծառացել կնոջ վրա: Ռաշիդի ձեռքերը նրա ուսերին: Նրա վայելող, զուսպ ժպիտը և կնոջ անժպիտ, մռայլ դեմքը: Թե ինչպես էր կինը մարմնով առաջ եկել, ասես փորձում էր ազատվել Ռաշիդի ձեռքերից:

Մարիամն ամեն բան տեղը դրեց:

Ավելի ուշ, երբ լվացք էր անում, նա ափսոսաց, որ սողոսկել էր Ռաշիդի սենյակը: Ինչի՞ համար: Ի՞նչ կարևոր բան իմացավ նրա

մասին: Որ ատրճանակ ունի, որ տղամարդու կարիքներ ունեցող տղամարդ է: Եվ պետք չէր այդքան երկար նայել Ռաշիդի և կնոջ լուսանկարին: Մարիամի աչքերը նշանակություն էին տվել լուսանկարում ինչ-որ պահի արձանագրված պատահական կեցվածքին:

Այժմ, երբ լվացքի բեռնված պարանները ծանրության տակ ճոճվում էին նրա առջև, Մարիամը խղճաց Ռաշիդին: Նա ծանր կյանք էր ունեցել, կորուստով ու ճակատագրի տխուր շրջադարձերով լի կյանք: Կրկին հիշեց նրա որդուն՝ Յունուսին, որը ժամանակին ձնեմարդ է սարքել այս բակում, որի ոտքերը դոփդոփել են այս աստիճաններին: Լիճը խլել էր նրան Ռաշիդից, կուլ տվել, ինչպես Ղուրանում կետը տղայի անվանակից մարգարեին: Մարիամը ցավ զգաց, ուժգին ցավ, երբ պատկերացրեց, թե ինչպես է Ռաշիդը խուճապահար ու անօգնական գնում-գալիս լճի ափով և աղերսում, որ այն ցամաք վերադարձնի իր որդուն: Եվ նա առաջին անգամ հարազատություն զգաց ամուսնու նկատմամբ: Ինքն իրեն ասաց, որ իրենք, ի վերջո, լավ ընկերներ կդառնան:

13

Բժշկից ավտոբուսով վերադառնալիս Մարիամի հետ տարօրինակ բան էր կատարվում: Ամենուր պայծառ գույներ էր տեսնում. մռայլ, մոխրագույն բետոնե բնակարաններում, թիթեղից տանիքներով անդուռ խանութներում, ջրափոսով հոսող կեղտոտ ջրերում: Կարծես աչքերի մեջ ծիածան էր հալվել:

Ռաշիդը թփթփացնում էր ձեռնոցով մատները ու քթի տակ երգում: Ամեն անգամ, երբ ավտոբուսը փոսի վրա վեր էր թռչում, ձեռքը պաշտպանիչ շարժումով Մարիամի փորին էր դնում:

— Զալմայի մասին ինչ կասես,— ասաց,— լավ փաշթու անուն է:

— Իսկ եթե աղջիկ լինի,— հարցրեց Մարիամը:

— Կարծում եմ՝ տղա է: Այո՛: Տղա:

Ավտոբուսով շշուկներ անցան: Որոշ ուղևորներ ինչ-որ բան էին մատնացույց անում, իսկ մյուսները կռացել էին իրենց նստատեղերից, որ տեսնեն:

— Նայի՛ր,— ասաց Ռաշիդը՝ ապակուն թփթփացնելով: Ժպտում էր:— Այնտեղ: Տեսա՞ր:

Մարիամը տեսավ, որ փողոցում մարդիկ կանգ էին առնում: Լուսացույցի մոտ կանգնած մեքենաների պատուհաններից հայտնվում էին դեմքեր, որոնք նայում էին վեր՝ թափվող փափկությանը: Ինչո՞ւ էր տարվա առաջին ձյունն այդքան դյութիչ, մտածում էր Մարիամը: Գուցե դեռևս անապակ, անբիծ ինչ-որ բան տեսնելու հնարավորությունն էր: Նոր տարվա վաղանցուկ շնորհը ստանալը, գեղեցիկ սկիզբը, նախքան այն կոտնահարվի ու կապականվի:

— Եթե աղջիկ լինի,— ասաց Ռաշիդը,— չնայած աղջիկ չի, բայց, եթե աղջիկ լինի, անունն ինչ ուզում ես, դի՛ր:

* * *

Հաջորդ առավոտյան Մարիամին արթնացրեց սղոցի ու մուրճի ձայնը: Նա փաթաթվեց շալով ու դուրս եկավ ձյունածածկ բակը: Նախորդ գիշերվա առատ ձյունն այլևս չէր գալիս: Այժմ միայն ցրված լույսը, պարող փաթիլներն էին խուտուտ տալիս այտերը: Քամի չկար, օդում այրվող ածուխի հոտ էր գալիս: Քաբուլը՝ կասկածելի լուռ, սպիտակ սավանով ծածկված, տեղ-տեղ ծխի քուլաներ էր արձակում:

Մարիամը Ռաշիդին գտավ պահեստանոցում. տախտակի մեջ մեխեր էր խփում: Երբ տեսավ Մարիամին, բերանի անկյունից հանեց մեխը:

— Անակնկալ էի պատրաստում: Նրան օրորոց պետք կգա: Դու չպետք է տեսնեիր, մինչև չվերջացնեի:

Մարիամը կուզենար, որ այդպես չանի՝ հույսը տղա ունենալու հետ չկապի: Չնայած հղիությունը երջանկացնում էր Մարիամին, Ռաշիդի ակնկալիքները ծանրանում էին նրա վրա: Երեկ Ռաշիդը դուրս էր եկել ու տուն վերադարձել տղայի համար ձմեռային թավշակաշվից վերարկուով՝ ներսը փափուկ ոչխարի մորթի, թևքերը կարմիր ու դեղին մետաքսաթելով ասեղնագործած:

Ռաշիդը բարձրացրեց երկար, նեղ տախտակը: Սկսեց երկու մասի սղոցել ու ասաց, որ նրան անհանգստացնում են աստիճան-

ները: «Հետագայում մի բան պետք է անել, երբ այնքան մեծանա, որ սկսի բարձրանալ դրանցով»: Ասաց՝ վառարանն էլ է անհանգստացնում: Դանակներն ու պատառաքաղները պետք կլինի մի տեղ պահել, որ ձեռքը չհասնի: «Զափազանց զգույշ պետք է լինել: Տղաներն անկարգ արարածներ են»:

Մարիամը ցրտից կուչ եկավ շալի մեջ:

14

Հաջորդ առավոտ Ռաշիդն ասաց, որ ուզում է տոնելու համար ընկերներին ընթրիքի հրավիրել: Ամբողջ առավոտ Մարիամը ոսպ էր մաքրում ու թրջում էր բրինձը: *Բորանիի*[55] համար կտրտեց բադրիջանը, *առուշակի*[56] համար պրաս ու աղացած տավարի միս եփեց: Ավլեց հատակը, թափ տվեց վարագույրները, օդափոխեց տունը, չնայած ձյունը նորից սկսեց գալ: Հյուրասենյակի պատերի տակ դասավորեց ներքնակներն ու բարձերը, սեղանին քաղցրավենիք ու բոված գետնանուշ դրեց:

Մարիամը իր սենյակում էր վաղ երեկոյան, երբ եկավ տղամարդկանցից առաջինը: Պառկեց մահճակալին, մինչ ներքևի հայհույը, ծիծաղն ու կատակող ձայները սկսեցին ահագնանալ: Չէր կարողանում ձեռքերը փորից հեռու պահել: Մտածեց, թե ինչ է ածում այնտեղ, ու երջանկությունը ներս խուժեց, ինչպես քամին է փչելով բացում դուռը: Աչքերը թացացան:

Մարիամը մտածեց իր վեց հարյուր հիսուն կիլոմետրանոց ավտոբուսային ճամփորդության մասին, արևմուտքում՝ Իրանի սահմանին մոտ՝ Հերաթից մինչև արևելք՝ Քաբուլ: Նրանք անցել էին փոքր ու մեծ քաղաքների, իրար հետևից բուսնող փոքր գյուղերի կողքով: Բարձրացել էին սարեր ու անցել արևից խանձված անապատներ՝ գավառ գավառի հետևից: Եվ հիմա ինքը այստեղ է՝ այդ գլաքարերից ու արևակեզ բլուրներից այս կողմ՝ իր տանը՝ իր ամուսնու հետ, և գնում է դեպի եզրափակիչ, սիրելի նահանգ՝ Մայրություն: Որքան

---

[55] Բորանի՝ մածունով նախուտեստ
[56] Առուշակ՝ սոխով լցոնած խմորագնդիկներ՝ վրան մսով սոուս

հաճելի էր մտածել այս երեխայի, իր երեխայի, իրենց երեխայի մասին: Որքան հրաշալի էր հասկանալ, որ իր սերը նրա հանդեպ արդեն իսկ նսեմացրել է նախկինում ապրած իր ցանկացած զգացմունք, հասկանալ, որ գետաքարերով խաղերի կարիք այլևս չկա:

Ներքևում ինչ-որ մեկը սկսեց լարել *հարմոնիկան*[57]: Հետո *թաբլան*[58] լարելու մուրճի ձայներ եկան: Մեկը մաքրեց կոկորդը: Այնուհետև լսվեց սուլոց, ծափեր, ճիչեր ու երգ:

Մարիամը շոյեց փորի փափկությունը: Եղունգից մեծ չէ, ասաց բժիշկը:

Ես մայր եմ դառնալու, մտածեց նա:

— Ես մայր եմ դառնալու,— ասաց նա: Հետո ինքն իրեն ծիծաղում էր, նորից ու նորից կրկնում, վայելում այդ բառերը:

Այս երեխայի մասին մտածելուց Մարիամի սիրտը լցվում էր: Այնքան էր լցվում, որ բոլոր կորուստները, ամբողջ վիշտը, միայնությունն ու ինքնանվաստացումը կորչում էին: Ահա թե ինչու էր Աստված նրան այստեղ բերել ամբողջ երկրով ճամփորդելուց հետո: Այժմ նա գիտեր: Նա հիշեց Ղուրանից մի բանաստեղծություն, որը նրան Մոլլա Ֆայզուլլան էր սովորեցրել. «Ալլահն է Արևելքը և Արևմուտքը, այդ պատճառով ուր էլ թեքվես՝ Ալլահի կամքն է...»: Մարիամը փռեց իր աղոթքի գորգը ու նամազ արեց: Երբ վերջացրեց, ափերը մոտեցրեց դեմքին ու խնդրեց Աստծուն, որ այս բարի բախտը չլքի իրեն:

* * *

Համամ[59] գնալը Ռաշիդի գաղափարն էր: Մարիամը երբեք հասարակական բաղնիքում չէր եղել, բայց Ռաշիդն ասաց, որ ավելի լավ բան չկա, քան դուրս գալ ու առաջին անգամ շնչել սառը օդը, զգալ մաշկից բարձրացող ջերմությունը:

Կանանց *համամում* Մարիամի շուրջը գոլորշու մեջ ուրվագծեր էին անցնում՝ մեկի ազդրը, մյուսի ուսը: Երիտասարդ աղջիկների ծղրտոցներ, ծեր կանանց հոգոցներ, պատերի մեջ արձագանքող

---

57 Հարմոնիկա՝ երգեհոնին նման փոքր գործիք
58 Թաբլա՝ փոքրիկ թմբուկներ
59 Համամ՝ հասարակական շոգեբաղնիք

ջրի կաթկթոց, քերվող մեջքեր ու օճառվող մազեր: Մարիամը մենակ նստեց հեռու անկյունում ու սկսեց կրունկները չեչաքարով քերել՝ կողքով անցնող մարմիններից գոլորշու պատով մեկուսացած:

Հետո արյուն եկավ, ու նա գոռում էր:

Թաց սալաքարերի վրա ոտնաձայներ: Գոլորշու միջից նրան նայող աչքեր: Լեզուների ճտտոց:

Այդ երեկո անկողնում Ֆարիբան պատմեց ամուսնուն, որ երբ ծղրտոց լսեց ու վազեց, գտավ Ռաշիդի կնոջը՝ անկյունում կուչ եկած, ծնկները գրկած, ոտքերի մոտ՝ արյան լճակ:

— Կարող էիր խեղճ աղջկա ատամների չխկչկխոցը լսել, Հաքիմ, այնքան էր դողում:

Երբ Մարիամը տեսավ իրեն, պատմեց Ֆարիբան, բարձր, աղերսող ձայնով հարցրեց.

— Նորմալ է, չէ՞: Չէ՞: Սա նորմալ բան է, չէ՞:

* * *

Եվս մի ուղևորություն ավտոբուսով Ռաշիդի հետ: Կրկին ձյուն: Այս անգամ՝ առատ: Մայթերին, տանիքներին ձյունակույտեր են դիզվում, կուտակվում սաղարթախռիվ ծառերի կեղևի վրա: Մարիամը նայում էր՝ ինչպես են առևտրականները իրենց խանութների շեմից մաքրում ձյունը: Տղաների մի խումբ ընկել էր սև շան հետևից: Նրանք աշխույժ ձեռքով արեցին ավտոբուսին: Մարիամը նայեց Ռաշիդին: Աչքերը փակ էին: Քթի տակ չէր երգում:

Մարիամը հետ գցեց գլուխը և նույնպես փակեց աչքերը: Ուզում էր հանել իր սառը գուլպաները, իր խոնավ բրդյա սվիտերը, որը ծակում էր մաշկը: Ուզում էր դուրս գալ ավտոբուսից:

Տանը Ռաշիդը ծածկեց նրան ծածկոցաշալով, երբ Մարիամը պառկեց բազմոցին, բայց արեց դա մի տեսակ կտրուկ, անփույթ:

— Դա ի՞նչ պատասխան է,— կրկնեց Ռաշիդը,— այդպիսի բան մոլլան պետք է ասի: Վճարում ես բժշկին ու ավելի լավ պատասխանի ես սպասում, քան «Աստծո կամքը»:

Մարիամը ծնկները ծալեց ծածկոցաշալի տակ ու ասաց, որ Ռաշիդը պետք է հանգստանա:

— Աստծո կամք,— փրփրում էր Ռաշիդը:

Ամբողջ օրը իր սենյակում նստած ծխեց:

Մարիամը պառկեց բազմոցին՝ ձեռքերը ծնկների տակ, ու նայեց պատուհանից դուրս պտտվող ու գալարվող ձյան հորձանուտին: Հիշեց՝ ինչ էր Նանան մի անգամ ասել, որ ձյան ամեն մի փաթիլ աշխարհում ինչ-որ տեղ վշտացած կնոջ հոգոց է: Որ բոլոր հոգոցները համբառնում են երկինք, հավաքվում դառնում ամպեր, ապա փոքրիկ կտորներով լուռ թափվում ներքև՝ մարդկանց վրա:

Որպես հիշեցում, թե ինչպես են մեզ նման կանայք տառապում, ասում էր նա: Թե ինչ լռելյայն ենք տանում մեզ վիճակվածը:

15

Վիշտը շարունակ զարմացնում էր Մարիամին: Բավական էր միայն մտածեր պահեստանոցում անավարտ օրորոցի կամ թավշյա վերարկուի մասին, որ Ռաշիդի պահարանում էր: Այդ պահին երեխան կյանք էր առնում, Մարիամը լսում էր նրան, նրա սոված ղունղունոցը, կարկաչը և բլբլոցը: Զգում էր՝ ինչպես է հոտոտում իր կրծքերը: Վիշտը լվանում տանում էր նրան, վեր հանում ու գետնով խփում: Մարիամը կարկամել էր, որ կարող է այսքան խելահեղորեն կարոտել մի էակի, որին չի տեսել:

Օրեր էին լինում նաև, երբ տխրությունը Մարիամին այդքան էլ անողորմ չէր թվում: Օրեր, երբ իր կյանքի նախկին ռիթմը այնքան էլ հոգնեցնող չէր թվում, երբ այնքան էլ շատ ջանք չէր պահանջվում անկողնուց վեր կենալու, աղոթքներ ասելու, Ռաշիդի համար կերակուր պատրաստելու, լվացք անելու համար:

Մարիամը սարսափում էր տնից դուրս գալուց: Հանկարծ սկսեց նախանձել թաղի կանանց ու նրանց երեխաների առատությանը: Ոմանք յոթ կամ ութ երեխա ունեին ու չէին հասկանում, թե որքան բախտավոր են, որքան օրհնված, որ իրենց երեխաները մեծացել են իրենց արգանդներում, շուռումուռ են եկել իրենց ձեռքերում ու խմել իրենց կրծքերի կաթը: Երեխաներ, որոնք արյան հետ չեն լվացվել խառնվել օձառաջրին և անծանոթների մարմնի կեղտին ու թափվել ինչ-որ բաղնիքի կոյուղու մեջ: Մարիամը վրդովվում էր, երբ լսում էր՝

ինչպես են նրանք բողոքում իրենց անկարգ որդիներից ու ծույլ դուստրերից:

Ներքին ձայնը փորձում էր հանգստացնել նրան բարի, բայց մոլորեցնող մխիթարությամբ: Էլի երեխաներ կունենաս, *ինշալլահ*[60]: Երիտասարդ ես. անշուշտ, շատ հնարավորություններ կունենաս:

Բայց Մարիամի վիշտը անիմաստ կամ անորոշ չէր: Մարիամը ողբում էր այս երեխային, հենց այս երեխային, որն իրեն որոշ ժամանակ այդքան երջանկացրել էր: Օրեր կային, երբ մտածում էր՝ ինքը արժանի չէ երեխա ունենալու օրհնությանը, որ պատժվում է այն բանի համար, ինչ արել էր Նանային: Նույնը չէ՞ր արդյոք, որ ինքն իր ձեռքով պարանը գցեր մոր վզին: Դավաճան դուստրերը արժանի չեն մայր դառնալու, և սա պատիժ էր: Ընդմիջվող երազներ էր տեսնում, թե ինչպես է Նանայի *ջինը* գիշերը ներխուժում իր սենյակը, ճանկերը խրում իր արգանդն ու գողանում երեխային: Այդ երազում Նանան հաճույքով ու վրիժառությամբ հռհռում էր:

Կային օրեր, երբ Մարիամին համակում էր բարկությունը: Ռաշիդի մեղքն էր, պատճառը նրա վաղաժամ տոնակատարությունն էր: Նրա անհեթեթ հավատը, որ հղի է տղայով: Երեխային անուն դնելը: Աստծո կամքը չհարգելը: Նրա մեղքն էր, որ բաղնիք գնաց: Այնտեղ մի բան կար՝ գոլորշին, կեղտաջուրը, օճառը, ինչ-որ բան պատճառ դարձավ: Ո՛չ: Ռաշիդը չէր: *Ինքն* էր մեղավոր: Ձայրանում էր սխալ դիրքով քնելու, չափից շատ կծու ճաշատեսակներ ուտելու, բավականաչափ միրգ չուտելու, շատ թեյ խմելու համար:

Աստծո մեղքն էր՝ իրեն այսպես ծաղրելու համար: Չպարգևեց իրեն այն, ինչ պարգևել է այսքան կանանց: Մարիամի աչքի առաջ պտտեց այն, ինչ, Նա գիտեր, մեծագույն երջանկություն կպարգևի, ապա խլեց:

Բայց մեղավորին փնտրելու, մտքում ասված այս բոլոր մեղադրական ճառերի մեջ լավ բան չկար: *Քոֆռ*՝ սրբապղծություն էին այսպիսի մտքերը: Ալլահը ոխակալ չէր: Աստված մանրախնդիր չէր: Գլխում Մոլլա Ֆայզուլլան շշնջում էր. ***«Օրհնված է Նա, ում ձեռքում է արքայությունը, ում ձեռքում է ողջ զորությունը, Ով ստեղծել է մահն ու կյանքը, որ փորձի մեզ»:***

---

[60] Ինշալլահ՝ Աստծո կամքով

Մեղքի զգացումից ուժասպառ՝ Մարիամը ծնկի էր գալիս ու աղոթում այս մտքերի ներման համար:

* * *

Բաղնիքում տեղի ունեցածից հետո Ռաշիդը փոխվեց: Երեկոյան տուն գալուց հետո մեծ մասամբ այլևս չէր խոսում: Ուտում էր, ծխում, գնում քնելու, մեկ-մեկ վերադառնում գիշերվա կեսին՝ արագ և վերջերս բավականին կոպիտ կենակցման համար: Ավելի հաճախ էր սկսել խոժոռվել, ճաշերը չհավանել, բողոքում էր բակի անհավաք լինելուց կամ մատնացույց անում տան նույնիսկ չնչին անմաքրությունը: Երբեմն ուրբաթ օրերը գնում էր Մարիամի հետ քաղաքով զբոսնելու, ինչպես նախկինում, բայց մայթով քայլում էր արագ, Մարիամից մի քանի քայլ առաջ, առանց խոսելու, անտարբեր Մարիամի նկատմամբ, որը ստիպված գրեթե վազում էր, որ հետ չընկնի: Այս զբոսանքների ժամանակ հազվադեպ էր ծիծաղում: Քաղցրավենիք կամ նվերներ չէր գնում, կանգ չէր առնում ու տեղերի անունները չէր ասում, ինչպես առաջ: Մարիամի հարցերը նյարդայնացնում էին նրան:

Մի երեկո, հյուրասենյակում նստած, ռադիո էին լսում: Ձմեռը նահաջում էր: Սառը քամիները, որոնք դաջում էին ձյունը դեմքին ու աչքերից արցունքներ բերում, մեղմացել էին: Ձյան արծաթե փետուրները հալվում էին բարձր ծփիների ճյուղերին, ու դրանց մի քանի շաբաթ հետո փոխարինելու էին հաստլիկ բաց կանաչ բողբոջները: Ռաշիդը ցրված ճոճում էր ոտքը Համահանգի[61] երգի *թաբլայի* ռիթմի հետ՝ աչքերը սիգարետի ծխից կկոցելով:

— Զայրացա՞ծ ես ինձ վրա,— հարցրեց Մարիամը:

Ռաշիդը ոչինչ չասաց: Երգն ավարտվեց, և սկսվեցին լուրերը: Կանացի ձայնը հաղորդեց, որ նախագահ Դաուդ Խանը ևս մեկ սովետական խորհրդատուների խումբ է ուղարկել հետ՝ Մոսկվա՝ հարուցելով Կրեմլի սպասված դժգոհությունը:

— Անհանգիստ եմ, որ ինձ վրա զայրացած ես:

---

[61] Աբդուլ Ահմադ Համահանգ (1936–2012)՝ հայտնի աֆղան երաժիշտ, երգիչ:

Ռաշիդը հոգոց հանեց:

— Զայրացա՞ծ ես:

Ռաշիդը հայացքը թեքեց Մարիամի կողմը:

— Ինչո՞ւ պիտի զայրացած լինեմ:

— Չգիտեմ, բայց այն օրվանից, երբ երեխան...

— Այդպիսի տղամարդու տե՞ղ ես ինձ դրել այն ամենից հետո, ինչ արել եմ քեզ համար:

— Ո՛չ: Իհա՛րկե ոչ:

— Ուրեմն գլուխս մի՛ տար:

— Ներողություն եմ խնդրում: *Բեքախշ*, Ռաշի՛դ: Ներողություն:

Ռաշիդը հանգցրեց սիգարետը և վառեց մյուսը: Բարձրացրեց ռադիոյի ձայնը:

— Բայց ես մտածում էի,— ասաց Մարիամը՝ բարձրացնելով ձայնը, որպեսզի երաժշտությունը չխլացնի այն:

Ռաշիդը կրկին հոգոց հանեց՝ այս անգամ ավելի գրգռված, նորից իջեցրեց ռադիոյի ձայնը: Հոգնած տրորեց ճակատը:

— Հիմա՛ ինչ:

— Մտածում էի՝ գուցե պատշաճ ձևով հուղարկավորենք: Նկատի ունեմ՝ երեխային: Միայն մենք լինենք, մի քանի աղոթք, ոչ մի ավել բան:

Մարիամը վաղուց էր մտածում սրա մասին: Նա չէր ուզում մոռանալ այդ երեխային: Ճիշտ չէր լինի այս կորուստը որևէ կերպ չհավերժացնել:

— Ինչի՞ համար: Ապուշ բան է:

— Կարծում եմ՝ ինձ ավելի լավ կզգամ:

— *Դու* էլ արա՛,— կտրուկ ասաց Ռաշիդը,— ես արդեն մի որդի թաղել եմ: Երկրորդին չեմ ուզում թաղել: Հիմա, եթե դեմ չես, փորձում եմ ռադիո լսել:

Նա կրկին բարձրացրեց ռադիոյի ձայնը, գլուխը հետ գցեց ու փակեց աչքերը:

Այդ շաբաթվա մի արևոտ առավոտ Մարիամը բակում տեղ ընտրեց ու փոս փորեց:

— Հանուն Ալլահի և Ալլահի հետ, հանուն Ալլահի առաքյալի, որի վրա թող իջնի Ալլահի շնորհն ու խաղաղությունը,— ասաց նա կի-

սաձայն ու բահը թաղեց հողի մեջ: Փոսի մեջ դրեց թավշյա վերարկուն, որը Ռաշիդը գնել էր երեխայի համար, ու վրան հող լցրեց:

— Դու գիշերը օր ես դարձնում, և օրը՝ գիշեր, մեռելներին կյանք ես պարգևում և ողջերին՝ մահ, և անսահման հոգ տանում ընտրյալներիդ մասին[62]:

Բահի հետևի մասով թփթփացրեց հողը: Կքանստեց թումբի մոտ, աչքերը փակեց:

Ո՛ւժ տուր, Ալլա՛հ:

Ո՛ւժ տուր ինձ:

16

1978 թվականի ապրիլ

1978 թվականին, երբ Մարիամը տասնինը տարեկան դարձավ, ապրիլի 17-ին Միր Ակբար Խիբեր անունով մի մարդու սպանված գտան: Երկու օր անց Քաբուլում մեծ ցույց տեղի ունեցավ: Թաղամասում բոլորը դուրս էին եկել փողոց ու խոսում էին դրա մասին: Պատուհանից Մարիամը տեսավ՝ ինչպես են հարևանները գնումգալիս, ոգևորված զրուցում, տրանզիստորային ռադիոընդունիչները սեղմում ականջներին: Տեսավ Ֆարիբային, որը, պատին հենված, խոսում էր մի կնոջ հետ, որ նոր էր եկել Դեհ-Մազանգ: Ֆարիբան ժպտում էր, ձեռքերով գրկում փքված հղի փորը: Մյուս կինը, ում անունը Մարիամը չլսեց, Ֆարիբայից տարիքով մեծ էր, իսկ մազերը տարօրինակ մանուշակագույն երանգ ունեին: Նա բռնել էր փոքրիկ տղայի ձեռքը:

Մարիամը գիտեր, որ տղայի անունը Թարիք է, որովհետև լսել էր՝ ինչպես է այդ կինը փողոցում կանչում նրան:

Մարիամն ու Ռաշիդը չմիացան հարևաններին: Ռադիոյով լսեցին, որ մոտ տասը հազար մարդ լցվել էր փողոցները ու հետուառաջ էր անում Քաբուլի կառավարական թաղամասում: Ռաշիդն ասաց, որ Միր Աքբար Խիբերը հայտնի կոմունիստ է, և նրա կողմնակից-

---

[62] Ղուրան, սուրա 3, այաթ 27

ները նրա սպանության մեջ մեղադրում են նախագահ Դաուդ Խանի կառավարությանը: Ռաշիդը խոսելուց այդպես էլ չնայեց Մարիամին: Այդ օրերին նա այլևս չէր նայում նրան, և Մարիամը երբեք վստահ չէր, որ իր հետ է խոսում:

— Կոմունիստն ի՞նչ է,— հարցրեց:

Ռաշիդը փնչացրեց ու բարձրացրեց հոնքերը:

— Չգիտե՞ս՝ ինչ է կոմունիստը: Այդքան պարզ բան: Բոլորը գիտեն: Հանրահայտ բան է: Դու չգիտես... բա՛հ: Չգիտեմ՝ ինչու եմ զարմացած:

Հետո սեղանի վրա խաչեց ոտքերը ու մռթմռթաց, որ դա Կառլ Մարքսիստին հավատացողն է:

— Ո՞վ է Կառլ Մարքսիստը:

Ռաշիդը հոգոց հանեց:

Ռադիոյով կանացի ձայնը պատմում էր, որ Թարաքին[63]՝ Աֆղանստանի կոմունիստական կուսակցության «Խալք» մասնաճյուղի ղեկավարը, փողոցներում բորբոքող ելույթներ էր ունենում ցուցարարների մոտ:

— Նկատի ունեմ՝ ի՞նչ են ուզում,— հարցրեց Մարիամը,— այդ կոմունիստները ինչի՞ն են հավատում:

Ռաշիդը քմծիծաղեց ու գլուխն օրորեց, բայց Մարիամը զգաց, որ Ռաշիդը անվստահ խաչեց ձեռքերը, պտտեց աչքերը:

— Դու ոչինչ չգիտես, չէ՞: Ոնց որ երեխա լինես: Ուղեղդ դատարկ է: Մեջը տեղեկություն չկա:

— Հարցնում եմ, որովհետև...

— *Չուփքո՛*: Ձայնդ կտրի՛ր:

Մարիամն այդպես էլ արեց:

Հեշտ չէր հանդուրժել Ռաշիդի այս խոսելաձևը, տանել նրա քամահրանքը, ծաղրանքը, վիրավորանքները, իրեն չնկատելը

---

[63] Նուռ Մոհամադ Թարաքի (1917–1979)՝ աֆղան կոմունիստական պետական գործիչ, 1978–1979 թթ.՝ Աֆղանստանի նախագահ: Հաֆիզուլլա Ամինի հետ 1965 թ. հիմնադրել է Աֆղանստանի ժողովրդավարական դեմոկրատական կուսակցությունը (ԱԺԴԿ): «Ապրիլյան հեղաշրջման» հիմնական գործիչներից է: 1979 թ. Ամինը փոխարինեց Թարաքին և գաղտնի խեղդեց նրան: Դրանից հետո սովետական զորքերը ներխուժեցին Աֆղանստան, և Ամինը սպանվեց: ԱԺԴԿ–ն գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ փլուզումը՝ 1992 թվականը:

տան կատվի պես: Բայց չորս տարվա ամուսնությունից հետո Մարիամը հստակ հասկացավ, ինչեր կարող է հանդուրժել կինը վախից: Իսկ Մարիամը վախենում էր: Նա ապրում էր վախի մեջ Ռաշիդի փոփոխվող տրամադրություններից, անկայուն խառնվածքից, նույնիսկ ամենաանշան խոսակցությունը առճակատման վերածելուց, ինչը որոշ դեպքերում վերջանում էր բռունցքի հարվածով, ապտակներով, աքացիով, ինչի համար Ռաշիդը երբեմն փորձում էր մեղքը քավել ներողություններով, իսկ երբեմն չէր էլ փորձում:

Բաղնիքի օրվանից չորս տարի անց հույսը ևս վեց անգամ վառվել էր ու մարել, և յուրաքանչյուր կորուստ, յուրաքանչյուր կործանում, բժշկի յուրաքանչյուր այցելություն նախորդից ավելի դառն էր Մարիամի համար: Յուրաքանչյուր հիասթափության հետ Ռաշիդը գնալով ավելի էր հեռանում Մարիամից ու չարանում: Մարիամի արած և ոչ մի բան այլևս չէր գոհացնում նրան: Մարիամը մաքրում էր տունը, միշտ մաքուր վերնաշապիկներով ապահովում, պատրաստում էր նրա սիրած ճաշատեսակները: Մի անգամ նույնիսկ, ի դժբախտություն իրեն, շպարվելու պարագաներ գնեց ու դիմահարդարվեց Ռաշիդի համար: Բայց երբ Ռաշիդը տուն եկավ, մի հայացք գցեց Մարիամի վրա ու այնպես ջղաձգվեց զզվանքից, որ Մարիամը վազեց լոգարան ու լվաց ամեն ինչ՝ արցունքները խառնելով օճառաջրի, կարմրաներկի ու թարթչաներկի հետ:

Այժմ Մարիամը սարսափում էր երեկոյան տուն վերադառնալու նրա ձայնից: Բանալիների շխկոցից, ծածկվող դռան ճռռոցից. այս ձայներից սիրտը սկսում էր արագ բաբախել: Իր մահճակալից լսում էր նրա կրունկների թկթկոցը, կոշիկները հանելուց հետո ոտքերի քստքստոցը: Ականջով գրանցում էր նրա արածները. հատակի վրա աթոռը քաշելու ձայնը, եղեգից հյուսված աթոռի գանգատավոր ճռռոցը, երբ նստում էր, գդալի ծնգոցը ափսեին, թերթի էջերի խշխշոցը, ջուր խմելու չպչպոցը: Սրտխփոցով մտածում էր, թե ինչ առիթով այդ երեկո կհարձակվի իր վրա: Միշտ մի բան գտնում էր, մի չնչին բան, որը նրան կատաղեցնում էր, որովհետև ինչ էլ աներ նրան գոհացնելու համար, որքան էլ հոգածությամբ բավարարեր նրա ցանկություններն ու պահանջները, դա բավարար չէր: Ինքը չէր կարող վերադարձնել Ռաշիդին նրա որդուն: Ամենա-

կարևոր հարցում Մարիամը նրան հուսախաբ էր արել, յոթ անգամ հուսախաբ էր արել, և հիմա միայն բեռ էր նրա համար: Դա երևում էր այն բանից, թե ինչպես էր Ռաշիդը նայում նրան, այն էլ, երբ նայում էր: Նա Ռաշիդի համար բեռ էր:

— Հիմա ի՞նչ է լինելու,— հարցրեց Մարիամը:

Ռաշիդը վրան հայացք նետեց: Հոգոցի ու հառաչի միջև ձայն արձակեց, ոտքերը սեղանից իջեցրեց ու անջատեց ռադիոն: Տարավ վերև՝ իր սենյակ: Դուռը փակեց:

* * *

Ապրիլի 27-ին Մարիամի հարցը պատասխան ստացավ ճարճատյունով ու հանկարծակի ուժգին բղավոցներով: Մարիամը ոտաբոբիկ վազեց ներքև՝ հյուրասենյակ, ու գտավ Ռաշիդին պատուհանի մոտ՝ ներքնաշապիկով, մազերը խառնված, ափերը պատուհանին սեղմած: Մարիամը մոտեցավ պատուհանին, կանգնեց նրա կողքին: Գլխավերևում ռազմական ինքնաթիռները սուրում էին դեպի հյուսիս և արևելք: Դրանց խլացնող ձայնից ականջները ցավեցին: Հեռվում արձագանքում էին պայթյունների բարձր ձայները, ծխի քուլաներ էին հանկարծակի բարձրանում երկինք:

— Ի՞նչ է կատարվում, Ռաշի՛դ,— հարցրեց Մարիամը,— ի՞նչ է այս ամենը:

— Աստված գիտի,— մռթմռթաց նա: Փորձեց ռադիոն, բայց միայն խշշոց լսեց:

— Ի՞նչ ենք անելու:

Ռաշիդն անհամբեր ասաց.

— Սպասելու ենք:

* * *

Այդ օրվա մեջ Ռաշիդը դեռ փորձում էր կարգավորել ռադիոն, մինչ Մարիամը խոհանոցում բրնձով ու սպանախով սոուս էր պատրաստում: Մարիամը հիշեց այն ժամանակը, երբ վայելում էր, նույնիսկ անհամբերությամբ սպասում էր այն պահին, երբ Ռաշիդի

համար կերակուր էր պատրաստելու: Հիմա խոհարարությունը մեծ անհանգստություն էր պատճառում: *Քուրմանները* Ռաշիդի համար միշտ կամ շատ աղի էին, կամ անալի էին: Բրինձը կամ չափազանց յուղոտ էր, կամ չափազանց չոր, հացը չափից ավելի խմոր էր կամ չափից ավելի խոթխոթան: Ռաշիդի այս վերաբերմունքի պատճառով Մարիամը կորցրել էր ինքնավստահությունը խոհանոցում:

Երբ Մարիամը բերեց Ռաշիդի ափսեն, ռադիոյով հնչում էր ազգային օրհներգը:

— *Սաբզի* եմ պատրաստել,— ասաց Մարիամը:

— Դիր ու սուս մնա:

Երբ երաժշտությունը մարեց, ռադիոյով տղամարդու ձայն հնչեց: Ներկայացավ որպես Օդային ուժերի գնդապետ Աբդուլ Քադիր[64]: Նա հաղորդեց, որ այդ օրը Չորրորդ զրահատանկային դիվիզիան գրավել է օդանավակայանը և քաղաքի կենտրոնական մայրուղիները: «Քաբուլ» ռադիոկայանը, Կապի և Ներքին գործերի նախարարությունները, ինչպես նաև Արտաքին գործերի շենքը նույնպես զավթված են: Քաբուլն այժմ ժողովրդի ձեռքում է, հպարտությամբ ասաց նա: Ապստամբների ՄիԳ–երը գրոհել էին նախագահական պալատը: Տանկերը մտել էին տարածքը, և այժմ այնտեղ կատաղի մարտեր են ընթանում: Դաուդին սատարող բոլոր ուժերը պարտվել են, վստահ ասաց Աբդուլ Քադիրը:

Օրեր անց, երբ կոմունիստները սկսեցին Դաուդ Խանի ռեժիմի հետ կապված մարդկանց արագ մահապատժի ենթարկել, երբ Քաբուլով սկսեցին լուրեր պտտվել Փոլ–Է–Չարխի բանտում հանած աչքերի ու էլեկտրահարված սեռական օրգանների մասին, Մարիամը լսեց նախագահական պալատում տեղի ունեցած սպանդի մասին: Դաուդ Խանին սպանեցին, բայց մինչ այդ կոմունիստ ապստամբները սպանեցին նրա ընտանիքի քսան անդամներին, այդ թվում՝ կանանց ու թոռներին: Ասում էին, որ նա ինքնասպան է եղել, որ

---

[64] Աբդուլ Քադիր (1944–2014)՝ աֆղան գեներալ–գնդապետ, որպես օդաչու վերապատրաստվել է Խորհրդային Միությունում: 1973 թ. մասնակցել է հեղաշրջմանը, որի արդյունքում ստեղծվեց Աֆղանստանի Հանրապետությունը Մոհամադ Դավուդ Խանի նախագահությամբ: 1978 թ. Աֆղանստանի ռազմաօդային ուժերի ղեկավարն էր:

նրան սպանել են մարտի թեժ պահին. ասում էին, որ նրան վերջին պահին ստիպել են տեսնել իր ընտանիքի կոտորածը, նոր միայն կրակել-սպանել:

Ռաշիդը բարձրացրեց ռադիոյի ձայնը ու կռացավ վրան:

«Արդեն ստեղծվել է զինված ուժերի հեղափոխական խորհուրդը, և մեր *վաթանը*[65] այժմ կդառնա Աֆղանստանի ժողովրդավարական Հանրապետություն,— ասաց Աբդուլ Քադիրը:— Արիստոկրատիայի, խնամիության և անհավասարության դարաշրջանն ավարտվեց, *համվաթանները*[66]: Մենք վերջ տվեցինք տասնամյակների բռնապետությանը: Իշխանությունն այժմ ժողովրդի ու ազատասերների ձեռքում է: Առջևում մեր երկրի պատմության նոր ու փառահեղ դարաշրջանն է: Նոր Աֆղանստան է ծնվել: Վստահեցնում ենք ձեզ, որ դուք վախենալու ոչ մի պատճառ չունեք, եղբայր աֆղաններ: Նոր ռեժիմը հարգանքով հետևելու է բոլոր սկզբունքներին՝ ինչպես իսլամական, այնպես էլ ժողովրդավարական: Եկել է ուրախանալու և տոնելու ժամանակը»:

Ռաշիդը անջատեց ռադիոն:

— Հիմա սա լավ է, թե՞ վատ,— հարցրեց Մարիամը:

— Հարուստների համար վատ է՝ դատելով այս խոսքերից,— ասաց Ռաշիդը,— գուցե մեզ համար այնքան էլ վատ չէ:

Մարիամը մտածեց Ջալիլի մասին: Հետաքրքիր էր՝ արդյո՞ք կոմունիստները կգան նրա հետևից: Կբանտարկե՞ն: Կբանտարկե՞ն նրա որդիներին: Ձեռքից կխլե՞ն նրա բիզնեսն և ունեցվածքը:

— Տա՞ք է,— հարցրեց Ռաշիդը՝ բրնձին նայելով:

— Նոր եմ պղնձից հանել:

Նա հոգոց հանեց ու ասաց, որ ափսեն փոխանցի:

* * *

Նույն փողոցում, երբ գիշերը հանկարծակի լուսավորվեց կարմիր ու դեղին բոցերով, տանջված Ֆարիբան հենվեց արմունկների

---

[65] Վաթան (պարսկ.)՝ հայրենիք
[66] Համվաթան (պարսկ.)՝ հայրենակից

վրա: Մազերը քրտինքից կպել էին իրար, վերին շրթունքի ծայրից կաթիլներ էին կախվել: Մահճակալի մոտ ծեր տատմեր Վաջման նայում էր՝ ինչպես են Ֆարիբայի ամուսինը ու որդիները իրար փոխանցում երեխային, զմայլվում նրա բաց մազերով, վարդագույն այտերով, ճմռված, վարդի կոկոնի նման շուրթերով ու նեֆրիտի գույնի կանաչ աչքերով, որոնք շարժվում էին ուռած կոպերի տակ: Նրանք ժպտացին միմյանց, երբ առաջին անգամ լսեցին երեխայի ձայնը, որը սկսվեց կատվի մլավոցի պես ու վերածվեց առողջ, բարձրաձայն լացի: Նուռն ասաց, որ նրա աչքերը գոհարների են նման: Ահմադը, որն ընտանիքի ամենահավատացյալ անդամն էր, քրոջ ականջին *ազան* երգեց ու երեք անգամ փչեց դեմքին:

— Ուրեմն Լեյլա՞,— հարցրեց Հաքիմը՝ դստերն օրորելով:

— Լեյլա,— ասաց Ֆարիբան հոգնած ժպիտով,— գիշերային գեղեցկուհի, կատարյալ անուն է:

* * *

Ռաշիդը մատներով բրնձի գնդիկ սարքեց: Դրեց բերանը, ծամեց մեկ անգամ, երկու անգամ, հետո ծամածռվեց ու թքեց *սոֆրայի* վրա:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Մարիամը՝ զզվելով սեփական ձայնի ներում հայցող տոնից: Զգաց, որ զարկերակն արագանում է, մաշկը՝ կծկվում:

— Ի՞նչ է պատահել,— մլավեց Ռաշիդը՝ Մարիամին ձեռք առնելով,— պատահել է այն, որ դու նորից արեցիր դա:

— Բայց ես սովորականից հինգ րոպե ավելի եմ եփել:

— Բացարձակ սուտ է:

— Երդվում եմ...

Ռաշիդը թափ տվեց մատներին կպած բրինձը, ափսեն մի կողմ հրեց՝ սուտն ու բրինձը *սոֆրայի* վրա թափելով: Մարիամը նայեց, թե ինչպես նա դուրս վազեց սենյակից, հետո տնից ու դուռը հետևից շխկացրեց:

Մարիամը ծնկի իջավ, փորձեց հավաքել բրնձի հատիկները ու նորից ափսեի մեջ դնել, բայց ձեռքերը ուժգին ցնցվում էին, ստիպ-

ված եղավ սպասել, որ հանգստանան: Սարսափից կուրծքը սեղմվեց: Մի քանի անգամ խոր շունչ քաշեց: Մթնեցված հյուրասենյակի պատուհանի մեջ տեսավ իր գունատ արտացոլանքն ու շրջվեց:

Հետո լսեց՝ ինչպես բացվեց շքամուտքի դուռը, և Ռաշիդը վերադարձավ հյուրասենյակ:

— Վեր կաց,— ասաց նա,— արի՛ այստեղ: Վեր կաց:

Բռնեց ձեռքը, բացեց ափն ու մեջը մի բուռ մանրաքար դրեց:

— Դի՛ր բերանդ:

— Ի՞նչ:

— Սրանք: Դի՛ր: Բերանդ:

— Վերջացրո՛ւ, Ռաշի՛դ, ես...

Ռաշիդի ուժեղ ձեռքերը բռնեցին Մարիամի ծնոտը: Նա երկու մատները դրեց Մարիամի բերանն ու բացեց այն, հետո սառը, կարծր քարերը մտցրեց մեջը: Մարիամը տրտնջալով պայքարեց, բայց Ռաշիդը շարունակում էր մանրաքարերը մտցնել բերանը՝ վերին շրթունքը հեգնական ծռած:

— Հիմա ծամի՛ր,— ասաց:

Բերանը լիքը քար ու մանրախիժ՝ Մարիամը աղերսագին տրտնջաց: Արցունքները թափվում էին աչքերից:

— ԾԱՄԻ՛Ր,— ոռնաց Ռաշիդը: Նրա ծխահոտ շունչը խփեց Մարիամի դեմքին:

Մարիամը ծամեց: Բերանի հետևը ինչ-որ բան ճթթաց:

— Լա՛վ,— ասաց Ռաշիդը: Այտերը թրթռում էին:— Հիմա գիտես, թե բրինձդ ինչ համ ունի: Հիմա գիտես, թե ինչ ես ինձ տվել այս ամուսնության մեջ: Վատ կերակուր, ուրիշ ոչինչ:

Հետո նա գնաց, իսկ Մարիամը դուրս թքեց քարերը, արյունն ու երկու ջարդված սեղանատամների մնացուկները:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

17

Քաբուլ, 1987 թվականի գարուն

Ինը տարեկան Լեյլան, ինչպես և բոլոր առավոտները վեր կացավ անկողնուց իր ընկեր Թարիքին տեսնելու ակնկալիքով: Այս առավոտ, սակայն, նա գիտեր, որ Թարիքին չի տեսնի:

— Որքան ժամանակով ես գնալու,— հարցրեց, երբ Թարիքն ասաց, որ ծնողները տանում են նրան հարավ՝ Ղազնի քաղաք՝ հորեղբորն այցելելու:

— Տասներեք օր:

— Տասներեք օ՞ր:

— Այդքան էլ երկար չէ: Դեմքդ ծամածռում ես, Լեյլա՛:

— Չեմ ծամածռում:

— Չես լացելու, չէ՞:

— Չեմ լացելու: Քեզ համար չեմ լացելու: Հազար տարի էլ անցնի:

Լեյլան ոտքով խփեց Թարիքի սրունքին, արհեստականին չէ, իսկականին, նա էլ կատակով վզակոթին հասցրեց:

Տասներեք օր: Համարյա երկու շաբաթ: Եվ ընդամենը հինգ օր անց Լեյլան ժամանակի մասին մի հիմնարար ճշմարտություն հասկացավ. այն ակորդեոնի պես, որի վրա Թարիքի հայրը երբեմն հին փաշթո երգեր էր նվագում, ժամանակը ձգվում ու կծկվում է՝ կախված Թարիքի բացակայությունից կամ ներկայությունից: Ներքևում ծնողները կռվում էին: Կրկին: Լեյլան գիտեր սահմանված կարգը. Մամին՝ կատաղած, կամակոր, հետուառաջ է անում ու ջղային խոսում. Բաբին՝ վախվորած ու շվարած նստած, հնազանդ գլխով է անում ու սպասում, որ փոթորիկն անցնի: Լեյլան փակեց դուռն ու

շորերը փոխեց: Նրանց ձայները դեռ լսելի էին: Վերջապես դուռը շխկաց: Ծանր ոտնաձայներ: Մամիի մահճակալը բարձր ճռռաց: Բաբին երևի այս անգամ էլ ողջ մնաց:

— Լեյլա՛,— կանչեց,— աշխատանքից ուշանում եմ:

— Մի րոպե՛:

Լեյլան հագավ կոշիկներն ու հայելու մոտ արագ սանրեց մինչև ուսերը հասնող շեկ գանգուրները: Մամին միշտ ասում էր Լեյլային, որ նրա մազերի գույնը, ինչպես նաև խիտ թարթիչներով փիրուզագույն կանաչ աչքերը, փոսիկով այտերը, բարձր այտոսկրերն ու իր շրթունքի պես ուռած ներքևի շրթունքը նա ժառանգել է նախատատից՝ իր տատից: ***Նա փերի էր, դիցուհի, ասում էր Մամին: Ամբողջ հովիտը նրա գեղեցկության մասին էր խոսում: Մեր ընտանիքում այն երկու սերունդ բաց թողեց ու հասավ քեզ, Լեյլա՛:*** Մամիի ասած հովիտը Փանջշիրն էր՝ ֆարսի լեզվով խոսող տաջիկների նահանգը՝ Քաբուլից հարյուր կիլոմետր հյուսիս-արևելք: Մամին էլ, Բաբին էլ, որոնք զարմիկներ էին, ծնվել ու մեծացել էին Փանջշիրում, 1960 թվականին տեղափոխվել էին Քաբուլ՝ հուսառատ, փայլող աչքերով նորապսակներ, երբ Բաբին Քաբուլի համալսարան ընդունվեց:

Լեյլան արագ իջավ ներքև՝ հուսալով, որ Մամին սենյակից դուրս չի գա կռվի հերթական փուլի համար: Բաբին դուռը ծածկող ցանցի մոտ ծնկի էր իջել:

— Տեսնե՞լ էիր, Լեյլա՛:

Ցանցն արդեն մի քանի շաբաթ պատռված էր: Լեյլան նստեց հոր կողքին:

— Չէ՛: Երևի նոր է եղել:

— Ես էլ ասացի Ֆարիբային:— Մամիի հետ կռվից հետո Բաբին միշտ հուզված, ընկճված տեսք էր ունենում:— Ասաց՝ արանքով մեղուներ են մտնում:

Լեյլայի սիրտը ճմլվեց հոր համար: Բաբին փոքրահասակ մարդ էր՝ նեղ ուսերով ու բարակ, նուրբ ձեռքերով՝ համարյա կանացի ձեռքերի նման: Երեկոյան, երբ Լեյլան մտնում էր Բաբիի սենյակ, միշտ տեսնում էր նրա կիսադեմը գրքի մեջ թաղված, ակնոցը քթի ծայրին: Երբեմն նա չէր էլ նկատում, որ Լեյլան սենյակում է: Երբ նկատում էր, նշում էր էջը ու ժպտում բերանը փակ ընկերական ժպիտով: Բաբին

անգիր գիտեր Ռումիի[67] ու Հաֆեզի[68] *ղազալների*[69] մեծ մասը: Կարող էր երկար խոսել Աֆղանստանի համար Մեծ Բրիտանիայի ու ցարական Ռուսաստանի պայքարի մասին: Նա գիտեր ստալակտիտի և ստալագմիտի միջև տարբերությունը և կարող էր պատմել, որ Երկրի ու Արևի միջև հեռավորությունը նույնն է, ինչ Քաբուլից Ղազնի մեկ ու կես միլիոն անգամ գնալը: Բայց եթե Լեյլային հարկավոր էր ուժով բացել քաղցրավենիքով ամանի կափարիչը, ստիպված էր գնալ Մամիի մոտ, ինչը դավաճանության նման բան էր: Պարզ գործիքներից Բաբին շվարում էր: Նրան մնար՝ ճռռացող դռան ծխնիները երբեք չէին յուղվի: Նրա կարկատելուց հետո առաստաղը շարունակում էր ծորալ: Խոհանոցի պահարաններում ծաղկում էր բորբոսը: Մամին ասում էր, որ Ահմադն էր պարտաճանաչ ու բանիմաց կերպով այս բաների մասին հոգում նախքան 1980 թվականին Նուռի հետ Սովետների դեմ *ջիհադին*[70] միանալը:

— Բայց եթե պետք է շտապ գիրք կարդալ,— ասում էր Մամին,— Հաքիմից լավը չկա:

Այնուամենայնիվ, Լեյլան դեռ չէր կորցրել այն զգացողությունը, որ մի ժամանակ՝ մինչև Ահմադն ու Նուռը գնացին Սովետների դեմ պատերազմի... նախքան Բաբին թույլ տվեց, որ գնան պատերազմի... Մամիին էլ էր գրավում Բաբիի գրքայնությունը, որ մի ժամանակ նա էլ էր Բաբիի մոռացկոտությունն ու կյանքին հարմարվելու անկարողությունը հմայիչ համարում:

— Ուրեմն այսօր ո՞ր օրն է,— ամաչելով հարցրեց հայրը:— Հինգերո՞րդը: Թե՞ վեցերորդը:

— Ի՞նձ ինչ: Հաշիվ չեմ պահում,— ստեց Լեյլան՝ ուսերը թոթվելով ու շոյված, որ հայրը հիշում է: Մամին գաղափար չուներ, որ Թարիքը հեռացել է:

---

67 Ջալալ ադ-Դին Մուհամադ Մոուլանա (Ռումի, 1207–1273)՝ նշանավոր պարսիկ բանաստեղծ, իրավաբան, սուֆի և աստվածաբան:

68 Խոջա Շամս ադ-Դին Մուհամեդ Հաֆեզ Շիրազի (1326–1390)՝ ականավոր պարսիկ բանաստեղծ և սուֆիզմի վարպետ:

69 Ղազալ՝ արաբական երկրներում ամենատարածված բանաստեղծական ձևը հիմնականում գեղեցկության և կորստի, սիրո և տառապանքի մասին:

70 Ջիհադ՝ բառացիորեն պայքար: Գոյություն ունի փոքր (արտաքին) ջիհադ՝ անհավատների դեմ, և մեծ (ներքին) ջիհադ՝ սեփական մեղքերի ու թուլությունների դեմ: Ջիհադում ընդգրկված մարդը կոչվում է *մոջահեդ*: Ջիհադում զոհվածը համարվում է *շահիդ*՝ մարտիրոս:

— Ոչինչ, չես հասցնի աչքդ թարթել՝ նրա լապտերը կսկսի միանալ-անջատվել,— ասաց Բաբին՝ նկատի ունենալով Լեյլայի ու Թարիքի գիշերային ազդանշանային խաղը: Այնքան երկար ժամանակ էին խաղում այն, որ դարձել էր քնելուց առաջ սովորույթի նման բան, ինչպես ատամներ մաքրելը:

Բաբին մատով շոշափեց պատռվածքը:

— Կկարկատեմ, հենց որ հնարավորություն ունենամ: Ավելի լավ է՝ գնանք:— Նա բարձրացրեց ձայնն ու շրջվելով բացականչեց,— հիմա գնում ենք, Ֆարիբա՛, Լեյլային դպրոց եմ տանում: Չմոռանա՛ս բերել:

Դրսում Բաբիի հեծանիվի բեռնախցիկի վրա մագլցելիս Լեյլան նկատեց փողոցում կայանած մի մեքենա՝ կոշկակար Ռաշիդի ու նրա մենակյաց կնոջ տան դիմաց: «Բենց» էր՝ այս թաղամասի համար անսովոր ավտոմեքենա՝ կապույտ գույնի, կտուրի, ծածկոցի ու բեռնախցի մեջտեղով անցնող սպիտակ զոլով: Լեյլան տեսավ մեջը նստած երկու տղամարդկանց, մեկը՝ ղեկի առաջ, մյուսը՝ հետևում:

— Ովքե՞ր են,— հարցրեց:

— Մեր գործը չէ,— ասաց Բաբին,— բարձրացի՛ր, դասից կուշանաս:

Լեյլան հիշեց մեկ այլ վեճ, և այդ անգամ Մամին կանգնեց Բաբիի գլխին ու ընդգծված ասաց. «Դա էլ *քո* գործն է, չէ՞, զարմի՛կ: Ոչ մի բանի մեջ չխառնվելը: Նույնիսկ որդիներիդ պատերազմ գնալուն չխառնվելը: Ինչպես էի աղերսում քեզ: Բայց քիթդ խցկեցիր այդ անիծված գրքերիդ մեջ ու թույլ տվեցիր, որ մեր որդիները գնան, ասես երկու *հարամի* լինեին»:

Բաբին հեծանիվը քշեց փողոցով՝ Լեյլան հետևը նստած, ձեռքերը հոր փորին փաթաթած: Երբ անցան կապույտ «Բենցի» կողքով, Լեյլան նկատեց հետևում նստած մարդուն. նիհար, ալեհեր, մուգ շագանակագույն կոստյումով, կրծքի գրպանում սպիտակ թաշկինակի եռանկյունի: Հասցրեց նկատել նաև, որ մեքենան Հերաթի համարանիշ ունի:

Ամբողջ ճանապարհին լռեցին՝ բացի թեքվելու պահերից, երբ Բաբին զգուշորեն արգելակում էր ու ասում.

— Բռնի՛ր, Լեյլա՛, դանդաղեցնում եմ, դանդաղեցնում եմ: Ահա՛:

* * *

Այդ օրը Թարիքի բացակայության ու ծնողների վեճի պատճառով Լեյլան անուշադիր էր դասարանում: Երբ ուսուցչուհին խնդրեց, որ Ռումինիայի և Կուբայի մայրաքաղաքներն անվանի, Լեյլան հանկարծակիի եկավ:

Ուսուցչուհու անունը Շանզայ էր, բայց աշակերտները նրա հետևից ասում էին *Խալա Ռանգմաալ*՝ Նկարիչ Հորաքույր՝ նկատի ունենալով աշակերտներին ապտակելու նրա սիրած շարժումը՝ ձեռքի ափով, հետո դրսի մասով հետ ու առաջ, ինչպես վրձնով ներկող նկարիչը: Խալա Ռանգմաալը սուր դեմքով ու թավ հոնքերով երիտասարդ կին էր: Դպրոցում առաջին օրը նա դասարանին հպարտությամբ ասաց, որ Խոստից աղքատ գյուղացու դուստր է: Նա կանգնում էր մեջքը ուղիղ ու սև մազերը այնքան պինդ փնջով էր հավաքում, որ երբ շրջվում էր, Լեյլան կարող էր տեսնել վզի մուգ բիզ-բիզ մազերը: Խալա Ռանգմաալը չէր շպարվում ու զարդեր չէր կրում: Գլուխը չէր ծածկում և արգելում էր իր աղջիկ աշակերտներին: Ասում էր՝ կանայք ու տղամարդիկ ամեն ինչում հավասար են, և ոչ մի պատճառ չկա, որ կանայք ծածկվեն, եթե տղամարդիկ չեն ծածկվում:

Նա ասում էր, որ Սովետական Միությունն աշխարհում ամենալավ երկիրն էր, ինչպես և Աֆղանստանը: Աշխատողներին լավ էին վերաբերվում, բոլոր մարդիկ հավասար էին: Սովետական Միությունում բոլորը երջանիկ ու բարեհամբույր էին՝ ի տարբերություն Ամերիկայի, որտեղ մարդիկ հանցագործությունների թվի պատճառով վախենում էին տնից դուրս գալուց: Եվ Աֆղանստանում էլ բոլորը երջանիկ կլինեն, ասում էր, երբ առաջընթացի հակառակորդները՝ հետադիմական ավազակները, պարտվեն:

«Ահա թե ինչու 1979-ին մեր սովետական ընկերները եկան այստեղ: Իրենց հարևանական ձեռքը մեկնելու: Օգնելու մեզ հաղթել այս այլանդակներին, որոնք ցանկանում են, որ մեր երկիրը հետամնաց, նախնադարյան լինի: Եվ դուք էլ պետք է օգնեք, երեխաներ: Պետք է զեկուցեք նրանց, ովքեր գիտեն այս ապստամբների մասին: Դա ձեր պարտքն է: Պետք է լսեք, ապա հաղորդեք: Նույնիսկ եթե ձեր ծնողներն են, ձեր հորեղբայրները կամ հորաքույրները: Որովհետև

ոչ ոք ձեզ չի սիրում այնքան, որքան ձեր երկիրը: Առաջնայինը ձեր երկիրն է, հիշե՛ք: Ես կհպարտանամ ձեզանով, ձեր երկիրը կհպարտանա ձեզանով»:

Խալա Ռանգմաալի գրասեղանի հետևում Սովետական Միության քարտեզն էր, Աֆղանստանի քարտեզը և վերջին կոմունիստ նախագահի՝ Նաջիբուլլահի[71] շրջանակված լուսանկարը, որը, Բաբիի խոսքերով, ժամանակին եղել է աֆղանական նողկալի գաղտնի ոստիկանության ղեկավարը: Կային նաև այլ լուսանկարներ, հիմնականում երիտասարդ սովետական զինվորների, որոնք սեղմում են գյուղացիների ձեռքերը, խնձորի ծառեր տնկում, տներ կառուցում ու մշտապես զվարթ ժպտում:

— Դե՛,— ասաց Խալա Ռանգմաալը,— խանգարեցի՞ երազներիդ, *ինքիլաբի՛* աղջիկ:

Լեյլային նա տվել էր այս մականունը՝ հեղափոխական աղջիկ, այն պատճառով, որ ծնվել էր 1978-ի Ապրիլյան հեղաշրջման գիշերը, չնայած Խալա Ռանգմաալը զայրանում էր, երբ իր դասարանում որևէ մեկը գործածում էր հեղաշրջում բառը: Տեղի ունեցածը, պնդում էր նա, *ինքիլաբ* էր՝ հեղափոխություն, անհավասարության դեմ աշխատավոր ժողովրդի ապստամբություն: *Ջիհադն* էլ էր արգելված բառ: Նրա խոսքերով՝ նահանգներում նույնիսկ պատերազմ էլ չկար, ընդամենը ընդհարումներ են խռովարարների դեմ, որոնց հրահրում են մարդիկ, որոնց նա արտասահմանցի սադրիչներ էր անվանում: Եվ, անշուշտ, ոչ ոք, ոչ ոք չէր համարձակվի նրա ներկայությամբ կրկնել այն ահագնացող լուրերը, որ ութամյա պայքարից հետո Սովետները տանուլ են տալիս այս պատերազմը: Հատկապես հիմա, երբ Ամերիկայի նախագահ Ռեյգանը սկսել է սովետական ուղղաթիռները տապալելու համար *մոջահեդներին* «Սթինգեր» հրթիռներ ուղարկել, երբ ամբողջ աշխարհի մահմեդականները միանում են այդ գործին. եգիպտացիները, պակիստանցիները, նույնիսկ հարուստ սաուդացիները թողել էին իրենց միլիոններն ու եկել Աֆղանստան *ջիհադին* մասնակցելու համար:

---

[71] Նաջիբուլլահ Ահմադզաի (1947–1996)՝ 1987-ից 1992 թ. Աֆղանստանի նախագահը: Սպանվել է Թալիբանի կողմից:

— Բուխարեստ: Հավանա,— կարողացավ հիշել Լեյլան:

— Իսկ այդ երկրները մեզ բարեկամ են, թե՞ ոչ:

— Բարեկամ են, ***մոալիմ***[72] ***սահիբ***, բարեկամական երկրներ են:

Խալա Ռանգմաալը կտրուկ գլխով արեց:

* * *

Երբ դպրոցը փակվեց, Մամին կրկին չեկավ, չնայած պայմանավորվել էին: Վերջը Լեյլան տուն գնաց իր երկու դասընկերուհիների՝ Ջիթիի ու Հասինայի հետ:

Ջիթին պիրկ, ոսկրոտ, փոքրամարմին աղջիկ էր, որն իր մազերը երկու «պոչիկ» էր կապում: Նա միշտ մռայլ էր ու քայլում էր՝ գրքերը վահանի պես կրծքին սեղմած: Հասինան տասներեք տարեկան էր՝ Լեյլայից ու Ջիթիից երեք տարով մեծ, բայց մի անգամ մնացել էր երրորդ դասարանում ու երկու անգամ՝ չորրորդ դասարանում: Խելքի պակասը Հասինան լրացնում էր չարաճճիությամբ ու բացբերանությամբ, և այդ բերանը, Ջիթիի ասելով, կարի մեքենայի պես էր աշխատում: Հասինան էր Խալա Ռանգմաալին տվել այդ մականունը: Այդ օրը Հասինան խորհուրդներ էր տալիս, թե ինչպես ձերբազատվել անդուր փեսացուներից: «Հարյուրտոկոսանոց մեթոդ է, երաշխավորված աշխատում է: Ազնիվ խոսք»:

— Հիմարությո՛ւն: Ես դեռ շատ երիտասարդ եմ, որ փեսացու ունենամ,— ասաց Ջիթին:

— Դու շատ երիտասարդ չես:

— Ոչ ոք ձեռքս ուզելու չի եկել:

— Որովհետև մորուք ունես, սիրելի՛ս:

Ջիթին ձեռքը գցեց կզակին ու սարսափած նայեց Լեյլային, որը խղճահարությամբ լի ժպտում էր.

Ջիթին Լեյլայի տեսած ամենից հումորազուրկ անձն էր. Լեյլան բացասաբար օրորեց գլուխը:

— Ինչևէ, ուզո՞ւմ եք իմանալ՝ ինչ է պետք անել, թե՞ ոչ, տիկնա՛յք:

— Պատմի՛ր,— ասաց Լեյլան:

---

[72] Մոալիմ (պարսկ.)՝ ուսուցիչ

— Լոբի: Չորս բանկայից ոչ պակաս: Երեկոյան, երբ այդ անատամ մողեսը կգա՝ ձեր ձեռքը խնդրելու: Բայց կարևորը ճիշտ պահն է, տիկնա՛յք, պահն է որոշում ամեն ինչ. պետք է ճնշեք հրավառությունը, մինչև չգա նրան թեյ հրամցնելու ժամանակը:

— Կհիշեմ,— ասաց Լեյլան:

— Նա էլ չի մոռանա:

Լեյլան կարող էր ասել, որ այդ խորհրդի կարիքը չունի, քանի որ Բաբին նպատակ չուներ իրենից մոտ ժամանակներում ազատվելու: Թեև Բաբին աշխատում էր «Սիլո»-ում՝ Քաբուլի վիթխարի հացի գործարանում, որտեղ ամբողջ օրը ճգնում էր հսկա ջեռոցների ու հացահատիկը աղացող սարքավորումների շոգի և աղմուկի մեջ, նա համալսարանական կրթությամբ մարդ էր: Նա ավագ դպրոցի ուսուցիչ էր, մինչև կոմունիստները նրան գործից ազատեցին 1978-ի հեղաշրջումից հետո՝ Սովետների ներխուժումից մեկուկես տարի առաջ: Բաբին դեռ վաղ մանկությունից բացատրել էր Լեյլային, որ Լեյլայի անվտանգությունից հետո իր կյանքի ամենակարևոր նպատակը նրա կրթությունն է:

— Ես գիտեմ, որ դեռ երիտասարդ ես, բայց ուզում եմ, որ հիմա հասկանաս ու սերտես սա,— ասում էր Բաբին:— Ամուսնությունը կսպասի, կրթությունը՝ ոչ: Դու շատ, շատ խելացի աղջիկ ես: Իրոք: Դու կարող ես դառնալ, ինչ ուզես, Լեյլա՛, կարող ես: Գիտեմ նաև, որ երբ պատերազմն ավարտվի, Աֆղանստանը քո կարիքը կունենա նույնքան, որքան տղամարդկանց, գուցե նույնիսկ ավելի շատ: Քանի որ հասարակությունը չի կարող հաջողության հասնել, եթե կանայք կրթված չեն, Լեյլա՛: Ոչ մի հնարավորություն:

Բայց Լեյլան Հասինային չպատմեց Բաբիի ասածները, կամ որքան ուրախ է, որ նման հայր ունի, որքան է հպարտանում, որ հայրն այդպիսի կարծիք ունի իր մասին, չպատմեց, որ հոր պես կրթությամբ զբաղվելու վճռականություն ունի: Վերջին երկու տարիներին Լեյլան ստացել էր *ավագ նումռա* վկայագիր, որն ամեն տարի հանձնում են յուրաքանչյուր դասարանի լավագույն աշակերտին:

Լեյլան այս բաները, այնուամենայնիվ, չպատմեց Հասինային, որի հայրը դյուրաբորբոք տաքսու վարորդ էր և առաջիկա երկուերեք տարիներին անպայման ազատվելու էր աղջկանից: Սակա-

վաթիվ լուրջ պահերին Հասինան պատմել էր Լեյլային, որ արդեն որոշված է՝ նա ամուսնանալու է զարմիկի հետ, որը նրանից քսան տարով մեծ է և Լահորում մեքենաների խանութ ունի: «Երկու անգամ տեսել եմ նրան,— պատմել էր Հասինան,— երկու անգամն էլ բերանը բաց էր ուտում»:

— Լոբի, աղջիկնե՛ր,— ասաց Հասինան,— հիշե՛ք: Եթե, իհարկե...— նա չարաճճի ժպտաց ու արմունկով խփեց Լեյլային,— դուռ ծեծողը ձեր երիտասարդ, գեղեցիկ, միոտանի արքայազնը չի: Այդ դեպքում...

Լեյլան խփեց Հասինայի արմունկին: Նա կվիրավորվեր, եթե որևէ մեկն այդպիսի բան ասեր Թարիքի մասին, բայց գիտեր, որ Հասինան չարամիտ չէ: Նա ընդամենը ծաղրում էր, իսկ ծաղրելիս չէր խնայում ոչ մեկին, նամանավանդ ինքն իրեն:

— Չի կարելի մարդկանց մասին այդպես խոսել,— ասաց Ջիթին:

— Այդ ո՞ր մարդկանց:

— Որոնք վիրավորվել են պատերազմի հետևանքով,— լուրջ ասաց Ջիթին՝ չնկատելով Հասինայի ծաղրը:

— Կարծում եմ՝ Մոլլա Ջիթին սիրահարվել է Թարիքին: Բայց նրան արդեն ուզող կա, չգիտեի՞ր: Չէ՞, Լեյլա՛:

— Ես սիրահարված չեմ: Ոչ մեկին:

Նրանք բաժանվեցին Լեյլայից ու, շարունակելով այսպես վիճել, թեքվեցին դեպի իրենց փողոցը:

Վերջին երեք թաղամասը Լեյլան մենակ քայլեց: Երբ իր փողոցում էր, նկատեց, որ կապույտ «Բենցը» դեռ կայանված է Ռաշիդի և Մարիամի տան դիմաց: Շագանակագույն կոստյումով տարեց մարդը կանգնած էր մեքենայի մոտ ու ձեռնափայտին հենված՝ նայում էր տանը:

Այդ պահին Լեյլայի հետևից մի ձայն ասաց՝ «Հե՛յ: Դեղնամազի՛կ: Այստե՛ղ նայիր»:

Լեյլան շրջվեց ու հրացանի փողին դեմ առավ:

18

Հրացանը կարմիր էր, ձգանի զսպանակը՝ վառ կանաչ: Ատրճանակի հետևում Խադիմի ժպտացող դեմքն էր: Խադիմը տասնմեկ տարեկան էր՝ Թարիքի նման: Հաստլիկ էր, բարձրահասակ, ծնոտը խիստ առաջ եկած: Հայրը մսագործ էր Դեհ-Մազանգում, և ժամանակ առ ժամանակ Խադիմը հորթի աղիքի կտորներ էր գցում անցորդների վրա: Երբեմն, եթե Թարիքը մոտակայքում չէր, Խադիմը դասամիջոցին ստվերի պես հետևում էր Լեյլային դպրոցի բակում ու վավաշոտ, վնգստացող ձայներ հանում: Մի անգամ թփթփացրել էր ուսին ու ասել. «Այնքան սիրունիկն ես, դեղնամազիկ: Ուզում եմ քեզ հետ ամուսնանալ»:

Հիմա նա ճոճեց հրացանը:

— Մի՛ անհանգստացի՛ր,— ասաց,— չի՛ երևա: Մազերիդ վրա որ հաստատ:

— Չանե՛ս, զգուշացնում եմ քեզ:

— Թե չէ ի՞նչ կանես,— ասաց,— հաշմանդամիդ քըս կտաս ինձ վրա՞: *Ա՜խ, Թարի՛ք ջան: Ա՜խ, արի՛ տուն ու փրկի՛ր ինձ այս բադմաշից*[73]:

Լեյլան սկսեց հետ-հետ գնալ, բայց Խադիմն արդեն քաշել էր ձգանը: Մեկը մյուսի հետևից տաք ջրի բարակ շիթերը հարվածեցին Լեյլայի մազերին, իսկ հետո՝ ափին, երբ նա բարձրացրեց այն դեմքը պաշտպանելու համար:

Այժմ մյուս տղաները ծիծաղելով ու հռհռալով դուրս եկան իրենց թաքստոցից:

Լեյլայի շուրթերին փողոցում լսած անպատիվ խոսք էր: Նա դրա իմաստը չէր հասկանում, չէր պատկերացնում դրա տրամաբանությունը, բայց բառերում կատաղի զորություն կար, ու Լեյլան այն դուրս ժայթեց:

— Մերդ ծծում ա:

— Համենայն դեպս քո մոր պես ցնդած չի,— անխռով պատասխանեց Խադիմը,— համենայն դեպս հայրս քածիկ չի: Եվ, ի դեպ, ձեռքերիցդ հո՛ւտ քաշիր:

---

[73] Բադմաշ՝ հինդի լեզվով խուլիգան

Մյուս տղաները երգելով կրկնեցին.

— Ձեռքերիցդ հո՛տ քաշիր: Ձեռքերիցդ հո՛տ քաշիր:

Լեյլան հոտ քաշեց, բայց մինչ այդ էլ գիտեր, թե ինչ նկատի ուներ Խադիմը, երբ ասաց, որ մազերին չի երևա: Սուր ծղրտաց: Դրա վրա տղաներն ավելի բարձր սուլեցին:

Լեյլան շրջվեց ու գոռալով վազեց տուն:

* * *

Լեյլան ջրհորից ջուր հանեց, լոգարանում լցրեց տաշտի մեջ, շորերը պոկեց իր վրայից: Օճառեց մազերը, կատաղորեն խրեց մատները գլխամաշկի մեջ՝ զզվանքից հեծկլտալով: Թասով ջուրը լցրեց գլխին, լվաց ու նորից մազերը օճառեց: Մի քանի անգամ համարյա սիրտը թափելու էր: Շարունակ հառաչում էր, դողացնում և օճառոտ կտորը անընդհատ քսում դեմքին ու պարանոցին, մինչև դրանք կարմրեցին:

Այսպիսի բան երբեք չէր պատահի, եթե Թարիքը կողքին լիներ, մտածեց նա՝ մաքուր վերնաշապիկ ու շալվար հագնելով: Խադիմը չէր համարձակվի: Իհարկե, չէր պատահի նաև, եթե Մամին գար, ինչպես պայմանավորվել էին: Երբեմն Լեյլան զարմանում էր, թե ինչու էր Մամին իրեն լույս աշխարհ բերել: Նա հիմա վստահ էր, որ մարդկանց չպետք է թույլ տալ նոր երեխաներ ունենալ, եթե արդեն սպառել են իրենց ողջ սերը մեծ երեխաների վրա: Արդար չէ: Զայրույթի բռնկումը համակեց նրան: Լեյլան գնաց իր սենյակ, փլվեց մահճակալին:

Երբ ամենավատն անցավ, Լեյլան միջանցքով գնաց Մամիի դռան մոտ ու թակեց: Փոքր ժամանակ Լեյլան ժամերով նստում էր այս դռան մոտ: Թակում էր ու հմայախոսքի պես անընդմեջ շշնջում Մամիի անունը. Մամի, Մամի, Մամի, Մամի... Բայց Մամին երբեք դուռը չէր բացում: Հիմա էլ չբացեց: Լեյլան պտտեց բռնակն ու ներս մտավ:

* * *

Մամին լավ օրեր էլ էր ունենում: Վեր էր թռչում անկողնուց աշխույժ, փայլող աչքերով: Կախ ընկած ներքևի շրթունքը ժպտալուց վեր բարձրանում: Լողանում էր: Հագնում էր մաքուր հագուստ, ներկում էր թարթիչները: Թույլ էր տալիս Լեյլային սանրել իր մազերը, ինչը Լեյլան սիրում էր անել, և ականջօղեր էր կախում: Միասին գնում էին *Մանդայի բազար*: Լեյլան համոզում էր նրան «Օձեր ու աստիճաններ»[74] խաղալ, ուտում էին մանրացրած դառը շոկոլադ՝ այն քիչ բաներից, որը երկուսն էլ սիրում էին: Մամիի լավ օրերի սիրած մասը Լեյլայի համար սկսվում էր այն պահից, երբ Բաբին գալիս էր տուն, երբ Մամին գլուխը խաղատախտակից բարձրացնում էր ու ժպտում՝ ցուցադրելով շագանակագույն ատամները: Սենյակը լցվում էր բավարարվածության զգացումով, ու Լեյլան մի պահ զգում էր այն քնքշությունն ու սերը, որը կապում էր իր ծնողներին այն ժամանակ, երբ իրենց տունը բազմամարդ էր, աղմկոտ և ուրախ:

Իր լավ օրերին Մամին երբեմն թխում էր ու հարևան կանանց թեյի ու խմորեղենի հրավիրում: Լեյլան լպստում էր քաղցր ամանները, մինչ Մամին սեղանին էր դնում բաժակները, անձեռոցիկներն ու գեղեցիկ ափսեները: Հետո Լեյլան զբաղեցնում էր իր տեղը հյուրասենյակի սեղանի մոտ ու փորձում միջամտել խոսակցությանը, իսկ կանայք աղմուկով խոսում էին, թեյ խմում ու գովում Մամիի թխածը: Չնայած Լեյլան ասելու շատ բան չուներ, նա սիրում էր նստել ու լսել, որովհետև այս հավաքույթներին վայելում էր հազվագյուտ հաճույքը. լսում էր՝ ինչպես է Մամին սիրով խոսում Բաբիի մասին:

«Ի՞նչ առաջնակարգ ուսուցիչ էր,— ասում էր Մամին,— աշակերտները սիրում էին նրան: Ու ոչ միայն այն պատճառով, որ մյուս ուսուցիչների պես նրանց քանոնով չէր ծեծում: Նրան հարգում էին, հասկանո՞ւմ եք, որովհետև նա էլ աշակերտներին էր հարգում: Հոյակապ ուսուցիչ էր»:

---

[74] «Օձեր և աստիճաններ»՝ մանկական սեղանի խաղ, որի ժամանակ զառը գցելով որոշվում է՝ որքան է առաջ շարժվում խաղացողը խաղատախտակի վրա: Անունը գալիս է խաղատախտակի նկարներից:

Մամին սիրում էր պատմել, թե ինչպես էր Բաբիին առաջարկություն արել:

«Տասնվեց տարեկան էի, նա՝ տասնինը: Մեր ընտանիքները կողք կողքի էին ապրում Փանջշիրում: Ա՛խ, որքան սիրահարված էի նրան, համշիրանե՛ր: Մագլցում էի մեր տները բաժանող պատի վրա, ու մենք խաղում էինք նրա հոր այգում: Հաքիմը միշտ վախենում էր, որ մեզ կհայտնաբերեն, ու հայրս իրեն կապտակի:

«Հայրդ ինձ ապտակ կտա»,— ասում էր միշտ: Այնքան զգույշ էր, այնքան լուրջ նույնիսկ այն ժամանակ: Մի օր էլ խոսեցի հետը, ասացի՝ «Զարմի՛կ, ի՞նչ է լինելու: Խնդրելո՛ւ ես ձեռքս, թե՞ ես գամ քեզ համար *խաստեզարի*»: Այդպես էլ ասացի: Մենակ դեմքը տեսնեիք»:

Մամին ափերը իրար էր խփում, իսկ կանայք ու Լեյլան ծիծաղում էին:

Այս պատմությունները լսելով՝ Լեյլան հասկանում էր, որ եղել է մի ժամանակ, երբ Մամին միշտ այսպես է խոսել Բաբիի մասին: Ժամանակ, երբ ծնողները առանձին սենյակներում չէին քնում: Լեյլան ափսոսում էր, որ բաց է թողել այդ ժամանակները:

Անխուսափելիորեն Մամիի՝ ամուսնության առաջարկի մասին պատմությունը տանում էր խնամախոսության ծրագրերին: Երբ Աֆղանստանը ազատվի Սովետներից, ու տղաները տուն վերադառնան, նրանց հարսնացուներ պետք կլինեն, ուստի կանայք մեկ առ մեկ քննարկում էին հարևան աղջիկներին, որոնք կարող են հարմար լինել կամ չլինել Ահմադին ու Նուռին: Լեյլան իրեն անտեսված էր զգում, երբ խոսքը եղբայրների մասին էր, կարծես կանայք քննարկում էին իրենց սիրելի ֆիլմը, որը միայն նա չէր տեսել: Լեյլան երկու տարեկան էր, երբ Ահմադն ու Նուռը Քաբուլից մեկնեցին Փանջշիր՝ հյուսիս, որպեսզի միանան հրամանատար Ահմադ Շահ Մասուդի[75] ուժերին ու *ջիհադին*: Լեյլան համարյա ոչինչ չէր հիշում

---

[75] Ահմադ Շահ Մասուդ (1953–2001)՝ մոջահեդների հրամանատար, Աֆղանստանի պաշտպանության նախարար 1992–1996 թթ., հայտնի էր որպես «Փանջշիրի առյուծ»: Իր հրամանատարական ձիրքը լավագույնս դրսևորել է 1979–1989 թթ. Խորհրդային բռնազավթման դեմ պայքարում: 1996 թ. հետո միակ ընդդիմադիր հրամանատարն էր, որը պայքարում էր թալիբների ռեժիմի դեմ, որի սատարողները սպանեցին նրան 2001 թ.:

նրանց մասին: Ահմադի պարանոցի փայլուն «Ալլահ» կախազարդը: Նուռի ականջի վրայի մազերի փունջը: Այդքան բան:

— Ազիտայի մասին ինչ կասես:

— Գորգագործի աղջիկը,— Մամին ափը խփեց այտին՝ իբր վիրավորված է,— նրա բեղերն ավելի խիտ են, քան Հաքիմինը:

— Իսկ Անահիտան: Ասում են՝ «Զարդունա» դպրոցում իր դասարանի լավագույն աշակերտուհին է:

— Այդ աղջկա ատամները տեսե՞լ ես: Գերեզմանաքարեր: Շուրթերի հետևը գերեզման է թաքցնում:

— Ի՞նչ կասես Վահիդի քույրերի մասին:

— Այդ երկու թզուկների՞: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Օ՛, ո՛չ: Ո՛չ իմ որդիների համար, ո՛չ իմ սուլթանների: Նրանք ավելի լավին են արժանի:

Խոսակցությունը շարունակվում էր, իսկ Լեյլան մտքերով էր ընկնում, և դրանք նրան միշտ տանում էին Թարիքի մոտ:

* * *

Մամին քաշել էր դեղնավուն վարագույրները: Մթության մեջ հոտերի մի քանի շերտ կար. քնի, չլվացված սպիտակեղենի, քրտինքի, կեղտոտ գուլպաների, օծանելիքի, նախորդ երեկոյից մնացած *քուրմայի*: Լեյլան սպասեց, որ աչքերն ընտելանան մթությանը, հետո անցավ սենյակով: Բայց միևնույնն է, հատակին գցած հագուստը ոտքերին փաթաթվեց:

Լեյլան բացեց վարագույրները: Մահճակալի ոտքերի մոտ հին մետաղյա ծալովի աթոռ կար: Նստեց վրան ու նայեց վերմակի անշարժ կույտին, որը նրա մայրն էր:

Մամիի սենյակի պատերը ծածկված էին Ահմադի և Նուռի լուսանկարներով: Աչքն ուր գցեր, երկու անծանոթների ժպիտներն էին: Ահա Նուռը եռանիվ հեծանիվ է նստում: Այստեղ Ահմադը աղոթում է արևի ժամացույցի մոտ, որը նա ու Բաբին սարքել էին, երբ նա տասներկու տարեկան էր: Ահա իր եղբայրները՝ բակի հին տանձենու տակ, մեջք մեջքի հենված, նստած:

Մամիի մահճակալի տակ երևում էր Ահմադի կոշիկի տուփի ծայրը: Ժամանակ առ ժամանակ Մամին ցույց էր տալիս դրա միջի

հին, ճխլված թերթերի կտրածները ու գրքույկները, որոնք Ահմադը հավաքել էր ապստամբ խմբերից ու Պակիստանում տեղակայված դիմադրության կազմակերպություններից: Մի լուսանկարում, Լեյլայի հիշելով, սպիտակ երկար բաճկոնով մի տղամարդ շաքարաքլոր էր տալիս փոքրիկ անոտ տղային: Լուսանկարը ստորագրված էր. «Երեխաները սովետական ականների միտումնավոր զոհերն են»: Հոդվածում ասվում էր, որ Սովետները սիրում են պայթուցիկներ թաքցնել վառ գույներով ներկված խաղալիքների մեջ: Եթե երեխան վերցնում էր այն, խաղալիքը պայթում էր, պոկում մատները կամ ամբողջ ձեռքը: Հայրը այլևս չէր կարող միանալ *ջիհադին.* ստիպված մնում էր տանը և երեխային խնամում: Ահմադի տուփի մեջ մեկ այլ հոդված կար, որում երիտասարդ մոջահեդն ասում էր, որ Սովետները գազ են գցել իր գյուղի վրա, որն այրել էր մարդկանց մաշկն ու կուրացրել: Ասել էր, որ տեսել է՝ ինչպես են մայրն ու քույրը, արյուն թքելով, վազում առվի մոտ:

— Մամի՛:

Կույտը մի փոքր շարժվեց: Հոգոց հանեց:

— Վե՛ր կաց, Մամի՛, ժամը երեքն է:

Եվս մի հոգոց: Ձեռք դուրս սահեց, ինչպես սուզանավի շրջադիտակն է մակերես դուրս գալիս, ու ցած ընկավ: Կույտն այս անգամ ավելի ակնհայտ շարժվեց: Հետո մի քանի շերտ վերմակների խշխշոց լսվեց: Դանդաղ, աստիճանաբար Մամին նյութականացավ. սկզբում՝ թափթփված մազեր, հետո՝ սպիտակ, ծռմռված դեմք, լույսից կկոցած աչքեր, մահճակալի գլխավերևը շոշափող ձեռք, ներքև սահող սավաններ. նա հոգոց հանելով նստեց: Մամին փորձեց վեր նայել, լույսից ցնցվեց, գլուխն ընկավ կրծքին:

— Ո՞նց էր դպրոցում,— մռթմռթաց:

Այսպես էր սկսվում: Պարտադիր հարցեր, մակերեսային պատասխաններ: Երկուսն էլ ձևական: Տաղտկալի հին պարի երկու անտարբեր մասնակիցներ:

— Դպրոցում նորմալ էր,— ասաց Լեյլան:

— Մի բան սովորեցի՞ր:

— Ինչպես միշտ:

— Հաց կերե՞լ ես:

— Այո՛:

— Լավ:

Մամին նորից բարձրացրեց գլուխը դեպի պատուհանը: Կծկվեց, կոպերը դողացին: Դեմքի աջ կողմը կարմիր էր, այդ կողմի մազերը տափակել էին:

— Գլուխս ցավում է:

— Ասպիրին բերե՞մ:

Մամին տրորեց քունքերը:

— Գուցե հետո: Հայրդ տա՞ննն է:

— Դեռ ժամը երեքն է:

— Ա՜խ, հա: Արդեն ասել ես:— Մամին հորանջեց:— Հիմա երազ էի տեսնում,— ասաց ձայնը մի փոքր ավելի բարձր, քան գիշերանոցի խշշյունը սավանների վրա:— Հենց նոր՝ մինչև քո գալը: Բայց հիմա չեմ հիշում: Այդպիսի բան հետդ եղե՞լ է:

— Բոլորի հետ էլ պատահում է, Մամի՛:

— Տարօրինակ բան է:

— Ասեմ, որ մինչ դու երազում էիր, մի տղա ջրային ատրճանակից մազերիս վրա մեզ կրակեց:

— Ի՞նչ կրակեց: Ի՞նչ-ինչ: Կներես:

— Շեռ: Մեզ:

— Դա... դա սարսափելի է: Ցավում եմ: Խեղճ աղջիկ: Վաղը առավոտյան կխոսեմ հետը: Կամ գուցե մոր հետ: Այո՛, կարծում եմ՝ այդպես ավելի լավ կլինի:

— Ես քեզ չեմ ասել, թե նա ով է:

— Ա՜հ: Եվ ո՞վ էր:

— Կապ չունի:

— Զայրացած ես:

— Դու պետք է ինձ դպրոցից բերեիր:

— Պետք է,— խռպոտ ասաց Մամին: Լեյլան չհասկացավ՝ արդյո՞ք դա հարց էր: Մամին սկսեց մազերը պոկել: Լեյլայի համար կյանքի մեծ գաղտնիքներից էր, որ Մամին մազ պոկելուց ձվի պես ճաղատ չէր դարձրել:— Իսկ ինչ եղավ... անունն ինչ էր՝ ընկերդ, Թարիքը: Հա, նա ինչ եղավ:

— Մի շաբաթ արդեն այստեղ չի:

— Ա՜հ,— Մամին քթով հառաչեց,— լվացվե՞լ ես:

— Այո՛:

— Ուրեմն մաքուր ես:— Մամին հոգնած հայացքը գցեց պատուհանին:— Դու մաքուր ես, ու ամեն ինչ լավ է:

Լեյլան կանգնեց:

— Տնային աշխատանք ունեմ:

— Իհարկե: Վարագույրները փակի՛ր գնալուցդ առաջ, սիրելի՛ս,— ասաց Մամին մարող ձայնով: Նա արդեն սուզվում էր սավանների մեջ:

Երբ Լեյլան ձգվեց դեպի վարագույրները, տեսավ փոշու ամպի մեջ հեռացող մեքենա: Հերաթի համարանիշով կապույտ «Բենցն» էր, որը վերջապես հեռանում էր: Լեյլան հետևեց, մինչև այն անհետացավ շրջադարձին՝ հետևի պատուհանը արևից պսպղացնելով:

— Վաղը չեմ մոռանա,— ասաց Մամին Լեյլայի հետևից,— խոստանում եմ:

— Երեկ էլ այդպես ասացիր:

— Դու չգիտես, Լեյլա՛:

— Ի՞նչ,— Լեյլան շրջվեց դեմքով դեպի մայրը,— ի՞նչ չգիտեմ:

Մամին ձեռքը տարավ կրծքին, թփթփացրեց այնտեղ:

— Այստեղ: Ինչ է այստեղ:— Հետո ձեռքն ուժասպառ կախվեց:— Դու պարզապես չգիտես:

19

Անցավ մեկ շաբաթ, բայց Թարիքը չերևաց: Հետո մի շաբաթ էլ եկավ ու անցավ:

Ժամանակն անցկացնելու համար Լեյլան նորոգեց ցանցավոր դուռը, որին Բաբիի ձեռքն այդպես էլ չհասավ: Իջեցրեց Բաբիի գրքերը, սրբեց փոշին ու այբբենական կարգով դասավորեց: Գնաց Հավերի փողոց Հասինայի, Ջիթիի ու Ջիթիի մոր՝ Նիլայի հետ, որը դերձակուհի էր և երբեմն Մամիի դերձակության գործընկերը: Այդ շաբաթ Լեյլան սկսեց հավատալ, որ մարդուն բաժին ընկած բոլոր դժվարություններից ամենադաժանը պարզապես սպասելն է:

Անցավ ևս մեկ շաբաթ:

Լեյլան հայտնվեց սարսափելի մտքերի որոգայթում:

Նա այլևս չի վերադառնա: Նրա ծնողները առհավետ հեռացել են. Ղազնի ուղևորությունը աչքկապոցի էր: Մեծահասակների խորամանկ հնարք էր, որպեսզի երկուսին էլ ազատեն ցավագին հրաժեշտից:

Նրան նորից ական է խփել: Այնպես, ինչպես 1981 թվականին, երբ նա հինգ տարեկան էր, ու ծնողները վերջին անգամ նրան տարել էին հարավ՝ Ղազնի: Դա Լեյլայի ծննդյան երրորդ տարեդարձից կարճ ժամանակ անց էր: Այդ անգամ բախտը բերեց՝ միայն ոտքը կորցրեց. բախտը բերեց, որ ընդհանրապես ողջ մնաց:

Այս մտքերից գլուխը զնգում էր:

Մի գիշեր Լեյլան փողոցում փոքրիկ լապտերի լույս տեսավ: Ծղրտոցի ու հառաչի նման մի բան բերանից դուրս պրծավ: Արագ հանեց մահճակալի տակի լապտերը, բայց այն չէր միանում: Լեյլան ափով հարվածեց դրան, անիծեց լիցքաթափված մարտկոցները: Բայց դա նշանակություն չուներ: Նա վերադարձել էր: Լեյլան նստեց մահճակալի եզրին, թեթևություն զգաց, գլուխը պտտվեց, ու նայեց լապտերի վառվող ու հանգչող գեղեցիկ, դեղին աչքին:

* * *

Հաջորդ օրը Թարիքի տան ճանապարհին Լեյլան տեսավ Խադիմին և նրա ընկերների խումբը: Խադիմը պպզած փայտիկով ինչ-որ բան էր նկարում ցեխի մեջ: Երբ տեսավ Լեյլային, փայտիկը գցեց ու մատները շարժեց: Ինչ-որ բան ասաց, ու շուրջը հավաքվածները հռհռացին: Լեյլան իջեցրեց գլուխը ու արագ անցավ կողքով:

— Այս ինչ ես արել,— բացականչեց Լեյլան, երբ Թարիքը բացեց դուռը: Այդ պահին հիշեց, որ նրա հորեղբայրը վարսավիր է:

Թարիքը ձեռքը սահեցրեց նոր սափրված գլխի վրայով ու ժպտաց՝ ցույց տալով սպիտակ, մի փոքր անհարթ ատամները:

— Հավանո՞ւմ ես:

— Ոնց որ բանակ գնալու լինես:

— Ուզո՞ւմ ես ձեռք տալ: Գլուխը իջեցրեց:

Ցցամազիկները հաճելիորեն քերծեցին Լեյլայի ափը: Թարիքը նման չէր այլ տղաների, որոնք մազերի տակ թաքցնում էին կոնաձև գանգերն ու տձև ելունդները: Թարիքի գլուխը անթերի կլորավուն էր

և առանց ելունդների: Երբ նա վեր նայեց, Լեյլան տեսավ, որ այտերն ու ճակատը արևահարված են:

— Ինչո՞ւ այդքան երկար տևեց,— հարցրեց Լեյլան:

— Հորեղբայրս հիվանդ էր: Արի՛: Նե՛րս մտիր:

Միջանցքով տարավ դեպի հյուրասենյակ: Լեյլային այս տանը ամեն ինչ դուր էր գալիս: Հյուրասենյակի մաշված հին գորգը, բազմոցի վրայի գույնզգույն լաթերից ծածկոցը, Թարիքի կյանքի սովորական խառնաշփոթը. մոր կտորների կապուկները, կոճերի մեջ տնկված ասեղները, հին ամսագրերը, ակորդեոնի տուփը, որը սպասում էր, թե երբ են իրեն բացելու:

— Ո՞վ է:

Մայրն էր հարցնում խոհանոցից:

— Լեյլան,— պատասխանեց:

Թարիքը Լեյլայի համար աթոռ քաշեց: Հյուրասենյակը վառ լուսավորված էր, իսկ կրկնակի պատուհանները նայում էին դեպի բակ: Պատուհանագոգին դատարկ բանկաներ էին, որոնց մեջ Թարիքի մայրը բադրիջան էր թթու դնում ու գազարից մարմելադ պատրաստում:

— Նկատի ունես՝ մեր *արուսը*՝ մեր հարսը,— հայտարարեց հայրը՝ սենյակ մտնելով:

Նա ատաղձագործ էր՝ նիհար, ալեհեր, վաթսունն անց տղամարդ: Առջևի ատամների միջև ճեղք կար, իսկ աչքերը կկոցած էր այն մարդկանց նման, որոնք կյանքի մեծ մասը դրսում են անցկացնում: Նա տարածեց ձեռքերը, ու Լեյլան թույլ տվեց գրկել իրեն ու զգաց փայտի թեփուկի հաճելի և ծանոթ հոտը: Հետո երեք անգամ համբուրեցին միմյանց այտերը:

— Եթե շարունակես նրան այդպես ասել, այլևս այստեղ չի գա,— ասաց Թարիքի մայրը կողքով անցնելիս:— Նրա ձեռքին սկուտեղ էր, որի վրա մեծ աման էր, շերեփ ու չորս փոքր ամաններ: Սկուտեղը դրեց սեղանին:— Բանի տեղ մի՛ դիր ծերուկին:— Լեյլայի դեմքն ափի մեջ առավ:— Ուրախ եմ քեզ տեսնել, սիրելի՛ս: Արի՛, նստի՛ր: Միգաջուր եմ բերել:

Սեղանը չափազանց մեծ էր և պատրաստված էր բաց գույնի չմշակված փայտից. Թարիքի հայրն էր այն սարքել, ինչպես նաև աթոռները: Սեղանը ծածկված էր մամուռի գույնի կանաչ մոմլաթից

սփռոցով, որի վրա ալ կիսալուսիններ ու աստղեր էին: Հյուրասենյակի պատերի մեծ մասին Թարիքի լուսանկարներն էին տարբեր տարիքներում: Ամենավաղ նկարներից մի քանիսում նա դեռ երկու ոտք ուներ:

— Լսել եմ՝ Ձեր եղբայրը հիվանդ է,— Լեյլան ասաց Թարիքի հորը՝ գդալն ընկղմելով թրջած չամիչների, պիստակների ու ծիրանների մեջ:

Նա սիգարետ էր վառում:

— Այո՛, բայց հիմա լավ է, *շոքր է խոդա*՝ փառք Աստծո:

— Ինֆարկտ: Արդեն երկրորդը,— ասաց Թարիքի մայրն ու հանդիմանանքով նայեց ամուսնուն:

Թարիքի հայրը փչեց ծուխը և Լեյլային աչքով արեց: Լեյլային կրկին ապշեցրեց այն, որ Թարիքի ծնողները հանգիստ կարող էին լինել նրա տատիկը և պապիկը: Մայրը նրան ունեցել էր հիսունին մոտ տարիքում:

— Ինչպե՞ս է հայրդ, սիրելի՛ս,— հարցրեց Թարիքի մայրը՝ ափսեից գլուխը բարձրացնելով:

Ինչքան Լեյլան հիշում էր, Թարիքի մայրը կեղծամ էր դնում: Ժամանակի հետ այն դառնում էր մուգ մանուշակագույն: Այսօր այն իջեցրել էր ճակատին այնպես, որ Լեյլան կարող էր տեսնել ականջի կողքի սպիտակ մազերը: Օրեր կային, երբ կեղծամը ճակատը չէր փակում: Բայց Լեյլայի աչքին Թարիքի մայրը երբեք խղճալի տեսք չուներ: Կեղծամի տակ Լեյլան տեսնում էր հանգիստ, ինքնավստահ դեմք, խելացի աչքեր, հաճելի, անշտապ պահվածք:

— Լավ է,— ասաց Լեյլան,— «Սիլո»-ում է դեռ, իհարկե, բայց լավ է:

— Իսկ մա՞յրդ:

— Լավ օրեր էլ են լինում, վատ օրեր էլ: Նույնը...

— Դե հա,— մտածկոտ ասաց Թարիքի մայրն ու գդալն իջեցրեց ամանի մեջ,— ո՞րքան դժվար է, երևի սարսափելի դժվար է մոր համար որդիներից հեռու լինել:

— Ճաշին կմնա՞ս,— հարցրեց Թարիքը:

— Պետք է մնաս,— ասաց մայրը,— *Շորվա*[76] եմ պատրաստում:

---

[76] Շորվա՝ ապուր

— Չեմ ուզում *ամոզահեմ* լինել:

— Աներեմ,— հարցրեց Թարիքի մայրը,— երկու շաբաթով գնում ենք, ու դու մեզ հետ սկսում ես քաղաքավարություն խաղալ:

— Լավ, կմնամ,— ասաց Լեյլան կարմրելով ու ժպտալով:

— Ուրեմն պայմանավորվեցինք:

Ճշմարտությունն այն էր, որ Լեյլան սիրում էր Թարիքենց տանը հաց ուտել նույնքան, որքան չէր սիրում սնվել իրենց տանը: Թարիքենց տանը միայնակ ուտել չկար. նրանք միշտ ընտանիքով էին ուտում: Լեյլան սիրում էր մանուշակագույն պլաստմասսե ջրի բաժակները, ջրի սափորում լողացող լիմոնի կտորը: Սիրում էր՝ ինչպես էին յուրաքանչյուր կերակուրից առաջ մի աման թարմ մածուն ուտում, ինչպես են թթու նարինջ քամում ամեն ինչի վրա, նույնիսկ մածունի, ինչպես են փոքրիկ, անվնաս կատակներ անում իրար հասցեին:

Ուտելու ժամանակ զրույցը չէր դադարում: Չնայած Թարիքն ու նրա ծնողները ազգությամբ փաշթուններ էին, Լեյլայի ներկայությամբ միշտ ֆարսի էին խոսում, թեև Լեյլան քիչ թե շատ հասկանում էր նրանց փաշթոն, որը սովորել էր դպրոցում: Բաբին ասել էր, որ լարվածություն է եղել իրենց ժողովուրդների՝ փոքրամասնություն կազմող տաջիկների և Թարիքի ժողովրդի՝ փաշթունների միջև, որոնք Աֆղանստանի ամենամեծ էթնիկ խումբն էին: «Տաջիկները մշտապես իրենց արհամարհված են զգացել,— ասել էր Բաբին:— Փաշթուն թագավորները կառավարել են այս երկիրը մոտ երկու հարյուր հիսուն տարի, Լեյլա՛, իսկ տաջիկները՝ 1929 թվականին ինը ամիս»:

«Իսկ դո՞ւ,— հարցրել էր,— դու քեզ արհամարհված զգո՞ւմ ես, Բաբի՛»:

Բաբին մաքրել էր ակնոցը վերնաշապիկի ծայրով: «Ինձ հարցնես՝ անհեթեթություն է, վտանգավոր անհեթեթություն, այս խոսակցությունը՝ ես տաջիկ եմ, դու փաշթուն ես, նա խազար[77] է, իսկ նա՝ ուզբեկ: Մենք բոլորս աֆղանցի ենք, դա է կարևորը: Բայց երբ մի խումբ իշխում է մյուսներին այսքան երկար... Քամահրանք կա: Մրցակցություն: Կա: Միշտ եղել է»:

---

[77] Խազարներ՝ թյուրքական քոչվոր ժողովուրդ, որոնց թիվն Աֆղանստանում հասնում է մեկ միլիոնի:

Միգուցե: Բայց Լեյլան երբեք դա չի զգացել Թարիքի տանը, որտեղ այս խնդիրների մասին երբեք չի խոսվել: Թարիքի ընտանիքի հետ Լեյլան իրեն միշտ բնական է զգացել, անկաշկանդ, առանց ցեղի կամ լեզվի հետ կապված բարդությունների կամ անձնական քեն ու ոխի, որը թունավորում էր օդն իրենց տանը:

— Քարտ խաղանք,— հարցրեց Թարիքը:

— Այո՛, գնացե՛ք վերև,— ասաց մայրը՝ կշտամբանքով ցրելով ամուսնու ծխի ամպը,— ես *շորվան* սկսեմ:

Նրանք պառկեցին փորի վրա Թարիքի սենյակի մեջտեղը ու հերթով սկսեցին *փանջփարի*[78] խաղաքարտ բաժանել: Օդում ոտքը ճոճելով՝ Թարիքը պատմեց իր ուղևորության մասին: Դեղձի տնկիների մասին, որ հորեղբորը օգնել էր տնկել: Այգում բռնած օձի մասին:

Սա այն սենյակն էր, որտեղ Լեյլան ու Թարիքը կատարում էին իրենց տնային աշխատանքը, խաղաթղթերից աշտարակներ կառուցում, միմյանց ծաղրանկարներ նկարում: Եթե անձրև էր գալիս, հենվում էին պատուհանագոգին, տաք, պղպղջակավոր նարնջի *Ֆանտա* խմում ու նայում, թե ինչպես են անձրևի ուռած կաթիլները սահում ապակու վրայով:

— Լավ, հիմա ասա՛,— ասաց Լեյլան՝ քարտերը խառնելով,— այն ինչն է ինչը, որ պտտում է աշխարհը, բայց մնում է անկյունում:

— Սպասի՛ր:— Թարիքը ուղիղ նստեց ու ձգեց արհեստական ձախ ոտքը: Ցավից կծկվելով՝ պառկեց կողքի վրա, հենվեց արմունկին:— Բարձը տո՛ւր ինձ:— Դրեց այն ոտքի տակ:— Ահա, այսպես ավելի լավ է:

Լեյլան հիշեց՝ ինչպես նա առաջին անգամ ցույց տվեց իր ծայրատ ոտքը: Լեյլան վեց տարեկան էր: Նա մի մատով ձեռք տվեց ձգված փայլուն մաշկին ձախ ծնկի տակ: Ինչ-որ պինդ ելունդներ շոշափեց այդտեղ, և Թարիքն ասաց, որ դրանք ոսկորի գերաճուկներ են, որոնք երբեմն աճում են անդամահատումից հետո: Լեյլան հարցրեց, թե արդյոք անդամահատված մասը ցավ է պատճառում, և նա ասաց, որ օրվա վերջում սկսում է ցավել, երբ ուռչում է ու չի

---

[78] Փանջփար՝ պոկերի նման խաղ

տեղավորվում պրոթեզի մեջ, ինչպես պետք է, ինչպես մատը մատնոցի մեջ: «Երբեմն հարվում է: Հատկապես երբ շոգ է: Ցան, բշտիկներ էլ են լինում, բայց մայրս քսուքներ ունի, որոնք օգնում են: Այդքան էլ վատ չէ»:

Լեյլան բուռն արտասվեց:

«Ինչո՞ւ ես լացում,— Թարիքը ոտքը կապեց իր տեղը,— դո՛ւ խնդրեցիր տեսնել, *գիրյանո՛ք*, լացկան: Եթե իմանայի, որ զոռոցդ գցելու ես, ցույց չէի տա»:

— Նամականիշ,— ասաց Թարիքը:

— Ի՞նչ:

— Հանելուկը: Պատասխանը նամականիշ է: Արի ճաշից հետո գնանք կենդանաբանական այգի:

— Դու գիտեիր պատասխանը: Գիտեի՞ր:

— Ամենևին:

— Սուտլիկ:

— Իսկ դու նախանձում ես:

— Ինչի՞ն:

— Իմ տղամարդկային խելքին:

— Տղամարդկային խելքի՞ն: Լո՞ւրջ: Ասա՛ ո՞վ է միշտ հաղթում շախմատում:

— Ես թույլ եմ տալիս, որ հաղթես,— ծիծաղեց Թարիքը: Երկուսն էլ գիտեին, որ դա սուտ է:

— Իսկ ո՞վ է մաթեմատիկայից տապալվել: Ո՞ւմ մոտ ես գալիս, որ օգնի մաթեմատիկայի տնայինն անելու, չնայած ինձանից մի դասարան բարձր ես:

— Ես երկու տարով առաջ կլինեի, եթե մաթեմատիկան ինձ չձանձրացներ:

— Երևի աշխարհագրությունն էլ է ձանձրացնում:

— Ի՞նչ իմացար: Լավ, սո՛ւս մնա: Գնո՞ւմ ենք կենդանաբանական այգի, թե՞ ոչ:

Լեյլան ժպտաց:— Գնում ենք:

— Լավ:

— Ես քեզ կարոտել էի:

Մի պահ լռություն տիրեց: Հետո Թարիքը շրջվեց դեպի Լեյլան՝ տհաճությունից կիսաժպտալով ու կիսածամածռվելով:

— Քեզ ինչ պատահեց:

Քանի անգամ Լեյլան, Հասինան ու Ջիթին ասել են միմյանց այդ նույն երեք բառերը, զարմացավ Լեյլան, ասել են առանց տատանվելու, ընդամենը երկու–երեք օր իրար չտեսնելուց հետո. «Հասինա՛, կարոտել էի քեզ»: «Ա՛խ, ես էլ»: Թարիքի ծամածռությունից Լեյլան հասկացավ, որ տղաներն այս առումով տարբերվում են աղջիկներից: Նրանք ընկերությունից շոու չեն սարքում: Այսպիսի խոսակցության պահանջ, կարիք չունեին: Լեյլան պատկերացրեց, որ իր եղբայրներն էլ են այսպիսին: Տղաները, Լեյլան հասկացավ, վերաբերվում էին ընկերությանը, ինչպես արևին. դրա գոյությունը անվիճելի էր, դրա ճառագայթները պետք էր վայելել, բայց դրանց ուղիղ չնայել:

— Ձեռք էի առնում քեզ,— ասաց Լեյլան:

Թարիքը խեթ–խեթ նայեց նրան:

— Ստացվեց:

Բայց Լեյլան մտածեց, որ նրա ծամածռությունը մեղմացավ: Նաև մտածեց, որ այտերի արևայրուքը մի պահ մգացավ:

* * *

Լեյլան չէր ուզում նրան պատմել: Նույնիսկ որոշել էր, որ նրան պատմելը շատ վատ գաղափար է: Մեկնումեկը վնասվելու է, քանի որ Թարիքը թույլ չի տա, որ անցնի–գնա: Բայց հետո, երբ փողոց դուրս եկան ու գնացին դեպի ավտոբուսի կայանը, Լեյլան կրկին տեսավ պատին հենված Խադիմին: Նա շրջապատված էր իր ընկերներով, մատները մտցրել էր գոտու մեջ: Նա հանդուգն ժպտաց Լեյլային:

Ու Լեյլան պատմեց Թարիքին: Պատմությունը դուրս պրծավ բերանից, նախքան նա կարող էր բռնել այն:

— Ի՞նչ արեց:

Լեյլան կրկնեց:

Թարիքը մատնացույց արեց Խադիմին:

— Նա՞: Նա՞ է: Վստա՞հ ես:

— Վստահ եմ:

Թարիքը սեղմեց ատամներն ու քթի տակ ինչ-որ բան ասաց փաշթոյով, ինչը Լեյլան չհասկացավ:

— Այստեղ սպասի՛ր,— ասաց Թարիքը՝ այս անգամ ֆարսիով:

— Չէ՛, Թարի՛ք...

Նա արդեն անցնում էր փողոցը:

Առաջինը Թարիքին տեսավ Խադիմը: Նրա ժպիտը մարեց, և նա պատից առաջ եկավ: Մատները հանեց գոտու միջից ու մեջքն ուղղեց՝ գիտակցաբար սպառնալից տեսք ընդունելով: Մյուսները հետևում էին նրա հայացքին:

Լեյլան փոշմանեց, որ պատմել էր: Իսկ եթե նրանք միասին հարձակվե՞ն: Քանի՞սն են: Տասնմե՞կը: Տասներկո՞ւսը: Եթե վնասե՞ն Թարիքին:

Թարիքը Խադիմից ու նրա խմբից մի քանի մետր հեռու կանգնեց: Մի պահ հապաղեց, գուցե մտքափոխ եղավ, մտածեց Լեյլան, և երբ Թարիքը կռացավ, Լեյլան պատկերացրեց, որ նա կձևացնի, թե կոշիկի քուղերը արձակվել են, ու կվերադառնա իր մոտ: Հետո Թարիքը սկսեց ձեռքերը շարժել, ու Լեյլան հասկացավ:

Մյուսներն էլ հասկացան, երբ Թարիքը ուղղվեց ու կանգնեց մի ոտքի վրա: Երբ սկսեց ցատկել դեպի Խադիմը, ապա հարձակվեց՝ արձակած ոտքը գլխավերևը սրի պես բարձրացրած:

Տղաներն արագ մի կողմ քաշվեցին: Բացեցին ճանապարհը դեպի Խադիմը:

Հետո փոշի, բռունցքներ, քացիներ ու ծղրտոցներ:

Խադիմն այլևս երբեք Լեյլային չանհագստացրեց:

* * *

Այդ երեկո, ինչպես և համարյա միշտ Լեյլան ճաշի սեղան գցեց միայն երկու հոգու համար: Մամին ասաց, որ սոված չէ: Երբ սոված էր լինում, Բաբիի տուն գալուց առաջ ափսեն իր սենյակ էր տանում: Երբ Լեյլան ու Բաբին նստում էին ուտելու, նա սովորաբար անկողնում քնած էր կամ արթուն պառկած:

Բաբին դուրս եկավ լոգարանից: Մազերը, որոնք տուն գալուց ալյուրի փոշուց սպիտակել էին, լվացված ու սանրված էին:

— Ի՞նչ ենք ուտելու, Լեյլա՛:

— *Ուշի* մնացորդները:

— Շատ լավ,— ասաց նա՝ ծալելով սրբիչը, որով չորացնում էր մազերը,— ուրեմն այս երեկո ինչի վրա ենք աշխատում: Կոտորակների գումարո՞ւմ:

— Կոտորակների փոխակերպումը խառը թվերի:

— Ա՛հ: Բարի:

Յուրաքանչյուր երեկո ճաշից հետո Բաբին օգնում էր Լեյլային տնային աշխատանքը անելու, և ինքն էլ էր մի քանի առաջադրանքներ տալիս: Նպատակը Լեյլային դասարանից մեկ-երկու քայլ առաջ պահելն էր, այլ ոչ թե այն, որ Բաբին չէր ընդունում դպրոցի տված առաջադրանքը, եթե չհաշվենք քարոզչության դասավանդումը: Հեգնանքն այն էր, որ, ըստ Բաբիի, միակ բանը, որ կոմունիստները ճիշտ էին արել կամ գոնե միտված էին ճիշտ անելու, կրթական փոփոխություններն էին, չնայած իրեն ազատել էին աշխատանքից: Մասնավորապես կանանց կրթությունը: Կառավարությունը բոլոր կանանց համար գրագիտության դասեր էր հովանավորել: Քաբուլի համալսարանի ուսանողների գրեթե երկու երրորդը կանայք էին, ասում էր Բաբին, կանայք սովորում էին իրավագիտություն, բժշկություն, ճարտարագիտություն:

Կանանց միշտ դժվար է եղել այս երկրում, Լեյլա՛, բայց հիմա՝ կոմունիստների օրոք, նրանք երևի ավելի ազատ են և ավելի շատ իրավունքներ ունեն, քան երբևէ, ասում էր Բաբին՝ ձայնն իջեցնելով, քանի որ գիտեր՝ Մամին չի հանդուրժում կոմունիստների մասին նույնիսկ չնչին դրական խոսակցությունները: «Բայց դա ճիշտ է,— ասում էր Բաբին,— Աֆղանստանում կին լինելու համար հիմա լավ ժամանակ է: Եվ դու կարող ես դրանից օգտվել, Լեյլա՛: Անշուշտ, կանանց ազատությունը (նա վշտացած օրորում էր գլուխը) նաև հիմնական պատճառներից է, թե ինչու են ոմանք *այնտեղ* ձեռքները զենք վերցնում:

«Այնտեղ» ասելով՝ նա նկատի չուներ Քաբուլը, որը միշտ եղել է համեմատաբար ազատական և առաջադեմ: Այստեղ՝ Քաբուլում, կանայք դասավանդում էին համալսարանում, դպրոցներ բացում, կառավարությունում պաշտոններ զբաղեցնում... Ո՛չ, Բաբին նկատի

ուներ այն տարածքները, որտեղ ապրում են ցեղերը, մասնավորապես հարավում կամ արևելքում՝ Պակիստանի սահմանին մոտ փաշթու շրջանները, որտեղ կանայք հազվադեպ էին երևում փողոցներում, այն էլ միայն *բուրքայով* ու տղամարդկանց ուղեկցությամբ: Նա նկատի ուներ այն շրջանները, որտեղ տղամարդիկ, որոնք ապրում էին նախնադարյան ցեղային օրենքներով, ապստամբել էին կոմունիստների ու նրանց հրամանագրերի դեմ՝ ազատականացնել կանանց, վերացնել հարկադիր ամուսնությունը, բարձրացնել աղջիկների ամուսնության նվազագույն տարիքը մինչև 16 տարեկանը: «Այնտեղ տղամարդիկ իրենց դարավոր ավանդույթների վիրավորանք համարեցին,— ասաց Բաբին,— որ կառավարությունը, այն էլ անաստված կառավարությունը հրամայում է իրենց դուստրերին հեռանալ տնից, դպրոց հաճախել ու աշխատել տղամարդկանց կողքին»:

«Աստված մի՛ արասցե, այդպիսի բան լինի,— հեգնանքով ասում էր Բաբին: Հետո հոգոց էր հանում ու ասում.— Լեյլա՛, իմ սեր, միակ թշնամին, ում աֆղանցին չի կարող հաղթել, հենց ինքն է»:

Բաբին նստեց սեղանի մոտ, ընկղմեց հացը *առուշով* ափսեի մեջ:

Լեյլան որոշեց, որ ճաշի ժամանակ կպատմի նրան, թե ինչ է արել Թարիքը Խադիմի հետ, նախքան նրանք կսկսեն կոտորակները: Բայց չհասցրեց: Որովհետև հենց այդ պահին դուռը թակեցին, և դռան մյուս կողմում հայտնվեց նորություն բերող անծանոթը:

20

— Ուզում եմ խոսել ծնողներիդ հետ, *դոխթա՛ր* ջան,— ասաց նա, երբ Լեյլան բացեց դուռը:

Կարճահասակ ամրակազմ մարդ էր՝ սուր, հողմահարված դեմքով: Հագին կարտոֆիլի գույնի բաճկոն էր, գլխին՝ շագանակագույն բրդյա *փակոլ*[79]:

— Ի՞նչ ասեմ, ո՞վ է եկել:

Բաբիի ձեռքն իջավ Լեյլայի ուսին ու նրբորեն հետ քաշեց դռնից:

---

[79] Փակոլ՝ աֆղանական կլոր տափակ գլխարկ

— Բարձրացի՛ր վերև, Լեյլա՛: Գնա՛:

Աստիճաններին մոտենալիս Լեյլան լսեց, որ այցելուն Բաբիին ասում է, որ Փանջշիրից նորություններ ունի:

Մամին հիմա նույնպես սենյակում էր: Նա ձեռքը սեղմել էր բերանին, հայացքը գցում էր մերթ Բաբիի վրա, մերթ *փակոլով* մարդու:

Լեյլան գաղտագողի հայացք գցեց աստիճանների վերևից: Տեսավ՝ ինչպես է անծանոթը նստում ծնողների հետ: Նա թեքվեց ծնողների կողմը: Ցածրաձայն մի քանի խոսք ասաց: Այնուհետև Բաբիի դեմքը սպիտակեց, ավելի սպիտակեց, հետո նա նայում էր իր ձեռքերին, իսկ Մամին ծղրտում էր, ծղրտում ու մազերը պոկում գլխից:

* * *

Հաջորդ առավոտյան՝ *Ֆաթիհայի*[80] օրը, հարևան կանանց երամ իջավ տան վրա ու հոգ տարավ *խաթըմ*[81] ընթրիքի համար, որը պետք է տեղի ունենար հուղարկավորությունից հետո: Մամին ամբողջ առավոտ նստած էր բազմոցին, մատներով բզկտում էր թաշկինակը՝ դեմքն ուռած: Նրա կողքից չէին հեռանում երկու հեկեկացող կանայք, որոնք հերթով զգուշությամբ թփթփացնում էին Մամիի ձեռքին, ասես նա աշխարհի ամենահազվագյուտ և ամենափխրուն տիկնիկն էր: Մամին, թվում էր, տեղյակ էլ չէր նրանց ներկայությունից:

Լեյլան ծնկի իջավ մոր առջև ու վերցրեց ձեռքերը: «Մամի՛»:

Մամին իջեցրեց աչքերը: Թարթեց:

— Մենք հոգ կտանենք նրան, Լեյլա՛ ջան,— ինքնավստահ տոնով ասաց կանանցից մեկը:

Լեյլան նախկինում եղել էր թաղումներին ու տեսել էր այսպիսի կանանց, որոնք հաճույք են ստանում մահվան հետ կապված ամեն ինչից. պաշտոնական մխիթարիչներ, որոնք ոչ մեկին թույլ չեն տա կատարել իրենց ստանձնած պարտականությունները:

— Ամեն ինչ վերահսկողության տակ է, հիմա գնա՛, աղջի՛կ, ուրիշ բանով զբաղվի՛ր: Մորդ հանգի՛ստ թող:

---

[80] Ֆաթիհա՝ թաղում
[81] Խաթըմ՝ հոգեհաց

Այսպես վռնդված՝ Լեյլան իրեն ավելորդ զգաց: Պարապ քարշ եկավ մի սենյակից մյուսը: Որոշ ժամանակ աննպատակ պտտվեց խոհանոցում: Եկան Հասինան՝ իրեն ոչ հատուկ կերպով ընկճված, ու նրա մայրը: Եկան նաև Ջիթին ու մայրը: Երբ Ջիթին տեսավ Լեյլային, շտապ մոտեցավ, ոսկրոտ ձեռքերով փաթաթվեց Լեյլային ու շատ երկար ու զարմանալիորեն ուժեղ գրկեց նրան: Երբ հետ քաշվեց, աչքերին արցունքներ էին: «Ցավակցում եմ, Լեյլա՛»,— ասաց: Լեյլան շնորհակալություն հայտնեց: Երեք աղջիկներով նստեցին բակում, մինչև կանանցից մեկը նրանց հանձնարարեց լվանալ բաժակներն ու սեղանի վրա ափսեներ դնել:

Բաբին նույնպես աննպատակ ներս ու դուրս էր անում, թվում էր՝ ինչ-որ բան է ուզում անել:

«Ինձանից հեռո՛ւ պահեք նրան»: Դա միակ բանն էր, ինչ Մամին ասաց այդ առավոտ:

Վերջում Բաբին միայնակ նստած էր միջանցքի ծալովի աթոռին՝ թշվառ ու խեղճ: Հետո կանանցից մեկն ասաց, որ ճանապարհը փակում է: Նա ներողություն խնդրեց և անհետացավ իր աշխատասենյակում:

* * *

Ցերեկը տղամարդիկ գնացին Քարթեհ-Սեհում մի դահլիճ, որը Բաբին վարձել էր *Ֆաթիհայի* համար: Կանայք եկան տուն: Լեյլան զբաղեցրեց իր տեղը Մամիի կողքին՝ հյուրասենյակի մուտքի մոտ, որտեղ, ըստ ավանդույթի, նստում են մահացածի ընտանիքի անդամները: Ողբացողները դռան մոտ հանեցին կոշիկները, սենյակ մտնելուց գլխով արեցին իրենց ծանոթներին ու նստեցին պատերի տակ շարված ծալովի աթոռներին: Լեյլան տեսավ Վաջմային՝ տարեց մանկաբարձուհուն, որ օգնել էր իրեն աշխարհ գալ: Տեսավ նաև Թարիքի մորը՝ կեղծամի վրա սև գլխաշորով: Նա գլխով արեց Լեյլային ու երկար, տխուր ժպտաց փակ շուրթերով:

Ձայներիզային նվագարկչից տղամարդու ռնգային մի ձայն ծոր տալով Ղուրանից հատվածներ էր երգում: Դադարների ժամանակ

կանայք հառաչում էին, շարժվում ու հեկեկում: Լսվում էր խեղդված հազ, շշուկներ, պարբերաբար ինչ-որ մեկը թատերական, վշտահար հեծկլտոց էր արձակում:

Ներս մտավ Ռաշիդի կինը՝ Մարիամը: Հագին սև հիջաբ էր: Հիջաբի տակից մազերը ընկել էին ճակատին: Նա նստեց պատի տակ՝ Լեյլայի դիմաց:

Լեյլայի կողքին նստած՝ Մամին շարունակում էր հետուառաջ ճոճվել: Լեյլան վերցրեց մոր ձեռքը, դրեց իր ծնկներին ու սկսեց երկու ձեռքով օրորել, բայց Մամին կարծես չնկատեց էլ:

— Ջուր կուզե՞ս, Մամի՛,— ասաց Լեյլան ականջին,— ծարա՞վ ես:

Բայց Մամին ոչինչ չասաց: Նա միայն ճոճվում էր՝ դատարկ, անկենդան աչքերը գորգին հառած:

Ժամանակ առ ժամանակ, Մամիի կողքին նստելով ու նայելով սենյակի վիատ, վշտահար հայացքներին, Լեյլան հասկանում էր իր ընտանիքին պատուհասած աղետի մեծությունը: Բաց թողնված հնարավորությունները: Կորսված հույսերը:

Սակայն այդ զգացողությունը երկար չէր տևում: Դժվար էր զգալ, *իրապես* զգալ Մամիի կորուստը: Դժվար էր սգալ, ողբալ այն մարդկանց մահը, որոնց մասին Լեյլան երբեք չէր էլ մտածել որպես կենդանի էակների: Ահմադն ու Նուռը նրա համար միշտ առասպելի էին նման: Ինչպես առակի կերպարները: Պատմության դասագրքի թագավորները:

Թարիքն էր իրական, մարմին և արյուն: Թարիքը, ով Նրան փաշթոյով վատ բառեր էր սովորեցնում, ով սիրում էր աղ դրած երեքնուկի տերևներ ուտել, ով ծամելիս ասես ցածրաձայն հոգոց հաներ, ում ձախ անրակի տակ բաց վարդագույն խալ կար, որը նման էր շուռ տված մանդոլինի:

Այնպես որ Լեյլան նստած էր Մամիի կողքին ու հնազանդորեն սգում էր Ահմադի և Նուռի մահը, բայց նրա սրտում իրական եղբայրը ողջ և առողջ էր:

21

Սկսվեցին հիվանդությունները, որոնք հետապնդելու էին Մամիին մինչև կյանքի վերջ: Կրծքավանդակի ցավեր ու գլխացավեր, հոդացավեր ու գիշերային քրտնածություն, սոսկալի ականջացավ, ուռուցքներ, որոնք, իրենից բացի, ոչ ոք չէր կարող շոշափել: Բաբին նրան տարավ բժշկի մոտ, որը արյան ու մեզի անալիզներ վերցրեց, նկարեց Մամիի մարմինը ռենտգենյան ճառագայթներով, բայց ոչ մի ֆիզիկական հիվանդություն չգտավ:

Օրերի մեծ մասը Մամին անցկացնում էր անկողնում: Հագնում էր սև հագուստ: Պոկում էր մազերն ու կծում էր շրթունքի ներքևի խալը: Արթուն վիճակում քարշ էր գալիս տնով: Վերջում միշտ հայտնվում էր Լեյլայի սենյակում, կարծես վաղ թե ուշ կհանդիպեր տղաներին, եթե անընդհատ մտներ սենյակը, որտեղ նրանք քնել են, հոտ հանել ու բարձերի հետ կռվել: Բայց նրան սպասում էր միայն նրանց բացակայությունը: Լեյլան: Ինչը, Լեյլան համոզված էր, Մամիի համար դարձել էր նույն բանը:

Միակ պարտականությունը, որը Մամին երբեք չէր անտեսում, ամենօրյա հինգ *նամազներն* էին: Յուրաքանչյուր *նամազ* ավարտում էր գլուխը կախ, ձեռքերը դեմքի առաջ՝ ափերը վեր, ու մրմնջալով աղոթում էր Աստծուն, որ հաղթանակ բերի մոջահեդներին:

Լեյլան ստիպված էր ավելի ու ավելի շատ տնային գործեր անել: Եթե չզբաղվեր տնով, ամենուր հագուստ, կոշիկ, բրնձի բաց տոպրակներ, լոբու բանկաներ ու կեղտոտ ամաններ կհայտնաբերեր: Լեյլան լվանում էր Մամիի շորերն ու փոխում սավանները: Համոզելով հանում նրան մահճակալից՝ լողանալու և ուտելու: Արդուկում էր Բաբիի վերնաշապիկներն ու ծալում շալվարները: Դառնում էր հիմնական խոհարարը:

Երբեմն՝ գործերը վերջացնելուց հետո, Լեյլան պառկում էր Մամիի կողքին: Փաթաթվում էր նրան, մատները միահյուսում մոր մատներին, գլուխը թաղում նրա մազերի մեջ: Մամին շարժվում էր, ինչ-որ բան մռթմռթում: Անխուսափելիորեն տղաների մասին մի պատմություն էր սկսում:

Մի օր, երբ այսպես պառկած էին, Մամին ասաց. «Ահմադը պետք է առաջնորդ լիներ: Խարիզմա ուներ դրա համար: Նրանից տարիքով երեք անգամ մեծ մարդիկ հարգանքով լսում էին նրան, Լեյլա՛: Դա պետք էր տեսնել: Իսկ Նուռը, ա՜խ, իմ Նուռը: Միշտ շենքեր ու կամուրջներ էր եզրագծում: Պատրաստվում էր ճարտարապետ դառնալու, գիտե՞ս: Ուզում էր վերափոխել Քաբուլը իր նախագծերով: Իսկ հիմա երկուսն էլ *շահիդ* են, իմ տղաները, երկուսն էլ նահատակներ են»:

Լեյլան պառկած լսում էր ու ցանկանում, որ Մամին նկատի, որ ինքը՝ Լեյլան, *շահիդ* չի դարձել, որ ինքը ողջ է, այստեղ է, նրա հետ անկողնում է, որ հույս և ապագա ունի: Բայց Լեյլան գիտեր, որ իր ապագան անհամեմատելի է եղբայրների անցյալի հետ: Նրանք ստվերել էին իր կյանքը: Նրանց մահը ոչնչացրել էր իրեն: Մամին այժմ նրանց կյանքի թանգարանի վարիչն էր, իսկ Լեյլան՝ ընդամենը այցելու: Նրանց առասպելները պահող անոթ: Մագաղաթ, որի վրա Մամին փորագրում էր նրանց լեգենդը:

«Սուրհանդակը, որը բերեց լուրը, ասաց, որ երբ տղաներին բերեցին ճամբար, Ահմադ Շահ Մասուդը անձամբ ներկա էր նրանց թաղմանը: Աղոթք ասաց նրանց գերեզմանի մոտ: Ահա այդպիսի քաջ երիտասարդներ էին եղբայրներդ, Լեյլա՛, որը ինքը՝ հրամանատար Մասուդը՝ Փանջշիրի Առյուծը, Աստված օրհնի նրան, զբաղվեց նրանց թաղումով»:

Մամին շուռ եկավ մեջքի վրա: Լեյլան գլուխը դրեց Մամիի կրծքին:

— Օրեր են լինում,— ասաց Մամին խռպոտ ձայնով,— լսում եմ միջանցքի ժամացույցի տկտկոցը: Հետո մտածում եմ այն բոլոր տկտկոցների, բոլոր րոպեների, բոլոր ժամերի, օրերի, շաբաթների, ամիսների ու տարիների մասին, որոնք իմ առջև են: Եվ այդ ամենը՝ առանց նրանց: Ու այդ պահին չեմ կարողանում շնչել, ասես մեկը սրտիս վրա ոտքով կանգնել է, Լեյլա՛: Թուլանում եմ: Այնքան եմ թուլանում, որ ուզում եմ մի տեղ մեռած վայր ընկնել:

— Շատ կուզեի մի բանով օգնել,— անկեղծ ասաց Լեյլան: Բայց ստացվեց ընդհանուր, մակերեսային, ինչպես բարի անծանոթի ցուցադրական մխիթարություն:

— Դու լավ աղջիկ ես,— ասաց Մամին խոր հոգոց հանելուց հետո,— իսկ ես քեզ լավ մայրություն չեմ արել:

— Այդպիսի բան մի՛ ասա:

— Օ՛, դա ճշմարտություն է, ես գիտեմ ու ցավում եմ դրա համար, սիրելի՛ս:

— Մամի՛:

— Ը՛մմ...

Լեյլան նստեց ու նայեց Մամիին: Մամիի մազերի մեջ հիմա ճերմակ փնջեր կային: Եվ Լեյլան ցնցվեց, երբ տեսավ, թե որքան է նիհարել Մամին, որը միշտ գիրուկ էր: Հիվանդագին տեսք ուներ, այտերը փոս էին ընկել: Հագի բլուզը ուսերից կախվել էր, պարանոցի և օձիքի արանքը դատարկություն էր առաջացել: Մի քանի անգամ Լեյլան նկատել էր, որ ամուսնական մատանին ընկնում է Մամիի մատից:

— Ուզում էի մի բան հարցնել:

— Ի՞նչ:

— Դու չե՞ս...— Լեյլան սկսեց:

Նա խոսել էր դրա մասին Հասինայի հետ: Հասինայի առաջարկով նրանք ասպիրինի շիշը դատարկել էին ջրհորդանի մեջ, խոհանոցային դանակներն ու քեբաբի սուր շամփուրները թաքցրել էին բազմոցի տակի գորգի տակ: Հասինան բակում պարան էր գտել: Երբ Բաբին չկարողացավ գտնել իր ածելիները, Լեյլան ստիպված պատմեց նրան իր վախերի մասին: Բաբին ընկավ բազմոցի եզրին՝ ձեռքերը ծնկների արանքը: Լեյլան սպասում էր, որ հայրը իրեն կհանգստացնի: Բայց ի պատասխան ստացավ միայն շվարած, դատարկ հայացք:

— Դու չե՞ս... Մամի՛, ես անհանգստանում եմ...

— Մտածել եմ դրա մասին այն երեկոյան, երբ իմացանք լուրը,— ասաց Մամին,— չեմ ստի քեզ, դրանից հետո էլ եմ մտածել դրա մասին: Բայց ոչ: Մի՛ անհանգստացիր, Լեյլա՛: Ես ուզում եմ տեսնել՝ ինչպես է իրականանում որդիներիս երազանքը: Ուզում եմ տեսնել այն օրը, երբ Սովետները խայտառակված տուն կվերադառնան, այն օրը, երբ մոջահեդները հաղթանակած կգան Քաբուլ: Ուզում եմ այնտեղ լինել, երբ դա տեղի կունենա, երբ Աֆղանստանը կազատագրվի, որպեսզի տղաներն էլ տեսնեն: Նրանք կտեսնեն իմ աչքերով:

Շուտով Մամին քնեց՝ թողնելով Լեյլային իրարամերժ զգացմունքների հետ. հանգստացած, որ Մամին ցանկանում է ապրել, խայթված, որ ինքը չէր դրա պատճառը: Ինքը երբեք չի թողնի Մամիի սրտում այն հետքը, որը թողել են եղբայրները, որովհետև Մամիի սիրտը նման է դալուկ լողափի, որտեղ Լեյլայի ոտնահետքերը հավիտյան լվացվելու են տխրության ալիքներով, որոնք վրա են հասնում և նահանջում, վրա են հասնում և նահանջում:

22

Վարորդը տաքսին ճանապարհից շեղեց, որպեսզի սովետական «Ջիփերի» ու զրահապատ մեքենաների երկար շարասյունը անցնի: Թարիքը վարորդի գլխի վրայով կռացավ դեպի դիմացի պատուհանը, ու բղավեց՝ «Պաժա՛լույստա: Պաժա՛լույստա»[82]:

«Ջիփը» ազդանշան տվեց, ու Թարիքը սուլեց՝ փայլող դեմքով ու ձեռքը ուրախ թափահարելով: «Հրաշալի հրացանները՛,— գոռաց,— հոյակա՛պ «Ջիփեր»: Հոյակա՛պ բանակ: Ափսոս պարտվում եք պարսատիկով զինված մի բուռ գյուղացիներին»:

Շարասյունն անցավ: Վարորդը միացավ ճանապարհի երթևեկությանը:

— Ինչքա՞ն մնաց,— հարցրեց Լեյլան:

— Ամենաշատը՝ մի ժամ,— ասաց վարորդը,— եթե շարասյուներ կամ անցակետեր չլինեն:

Գնում էին միօրյա ճանապարհորդության՝ Լեյլան, Բաբին ու Թարիքը: Հասինան էլ էր ուզում գալ, աղերսում էր հորը, բայց նա թույլ չտվեց: Ուղևորությունը Բաբիի գաղափարն էր: Թեև աշխատավարձը հազիվ հերիքեր, ամբողջ օրվա համար վարորդ վարձեց: Լեյլային ոչինչ չասաց նպատակատեղի մասին, միայն ասաց, որ այն կնպաստի Լեյլայի կրթությանը:

Առավոտյան հինգից ճանապարհին էին: Լեյլայի պատուհանից պատկերը փոխվեց ձյունածածկ գագաթներից անապատների, հետո՝ ձորերի, հետո՝ ժայռերի արևակեզ ելուստների: Ճանապարհին

---

[82] Ռուսերենից՝ пожалуйста (խնդրեմ)

անցան ծղոտե տանիքով կավաշեն տների ու ցրիվ տված ցորենի կապուկներով դաշտերի կողքով: Փոշոտ դաշտերում տեղ-տեղ երևում էին Լեյլային ծանոթ *քուչի*[83] քոչվորների սև վրանները: Հաճախ նաև այրված սովետական տանկերի ու վթարված ուղղաթիռների մնացորդները: Սա էր, մտածեց Լեյլան, Ահմադի և Նուռի Աֆղանստանը: Ահա այստեղ՝ այս նահանգներում է իրականում մղվել պատերազմը: Ո՛չ Քաբուլում: Քաբուլը հիմնականում խաղաղ էր: Քաբուլում, եթե չլինեին պատահական կրակահերթերը, մայթին ծխող սովետական զինվորներն ու փողոցներով վեր-վեր թռչող սովետական «Ջիփերը», պատերազմը կարելի էր բամբասանք համարել:

Ավելի ուշ՝ երկու անցակետեր անցնելուց հետո, նրանք մտան հովիտ: Բաբին Լեյլային պատուհանից ցույց տվեց հեռվում երևացող մի շարք արևակեզ կարմիր պատեր, որոնք հինավուրց տեսք ունեին:

— Կոչվում է Շահր-է-Զոհակ՝ Կարմիր քաղաք: Ժամանակին բերդ էր: Կառուցվել է մոտ ինը հարյուր տարի առաջ՝ հովիտը զավթիչներից պաշտպանելու համար: Չինգիզ Խանի թոռը գրոհել էր այն տասներեքերորդ դարում, բայց սպանվել: Հետո ինքը՝ Չինգիզ Խանը ավերեց այն:

— Եվ դա, իմ երիտասարդ ընկերներ, մեր երկրի պատմությունն է՝ զավթիչը զավթիչի հետևից,— ասաց վարորդը՝ ծխախոտի մոխիրը պատուհանից դուրս թափ տալով:— Մակեդոնացիներ: Սասանյաններ: Արաբներ: Մոնղոլներ: Հիմա էլ Սովետներ: Բայց մենք այս պատերի նման ենք: Քարուքանդ, նայելու բան չկա, բայց դեռ կանգուն: Այդպես չէ՞, *բադա՛ր*[84]:

— Իրոք,— ասաց Բաբին:

* * *

Կես ժամ անց վարորդը կանգ առավ:

— Եկե՛ք, երկո՛ւսդ,— ասաց Բաբին,— դո՛ւրս եկեք ու տեսե՛ք:

Նրանք դուրս եկան տաքսիից: Բաբին մատնացույց արեց.

---

83 Քուչի կամ քոչի (պարսկերեն քոչ՝ գաղթ բառից)՝ փաշթուն քոչվոր ցեղեր:

84 Բադար (պարսկ.)՝ եղբայր

— Ահա այստեղ են: Նայե՛ք:

Թարիքի շունչը կտրվեց: Լեյլայինն էլ: Նա հասկացավ, որ հարյուր տարի էլ ապրի, նման հրաշալիք երբեք չի տեսնի:

Երկու Բուդդաները հսկայական էին, վեր էին խոյանում շատ ավելի բարձր, քան նա պատկերացնում էր բոլոր լուսանկարներից: Լեյլան պատկերացրեց՝ ինչպես են արևակեզ ժայռի մեջ փորագրված Բուդդաները նայում ներքև՝ նրանց, ինչպես նայել են երկու հազար տարի առաջ Մետաքսի ճանապարհի հովիտն անցնող քարավաններին:

Արձանների երկու կողմում՝ խճճված տեղանքի վրա, ժայռը պատված էր բազում քարանձավներով:

— Ինձ այնքան փոքր եմ զգում,— ասաց Թարիքը:

— Ուզո՞ւմ եք բարձրանալ,— հարցրեց Բաբին:

— Արձանների վրա՞,— հարցրեց Լեյլան,— կարո՞ղ ենք:

Բաբին ժպտաց ու մեկնեց ձեռքը.

— Եկե՛ք:

* * *

Թարիքի համար վերելքը դժվար էր, ստիպված բռնել էր Լեյլայից ու Բաբիից, երբ դանդաղ բարձրանում էին ոլորուն, նեղ, վատ լուսավորված աստիճաններով: Ճանապարհին ստվերված քարանձավներ էին ու թունելներ, որոնք ամենուր ծակոտում էին ժայռը:

— Զգո՛ւյշ քայլեք,— ասաց Բաբին: Նրա ձայնը բարձր արձագանքեց,— գետինն անվստահելի է:

Որոշ մասերում աստիճանները տանում էին Բուդդայի խոռոչի մեջ:

— Ներքև մի՛ նայեք, երեխանե՛ր: Նայե՛ք ուղիղ ձեր առջև:

Բարձրանալիս Բաբին պատմեց նրանց, որ Բամիյանը ժամանակին եղել է բարգավաճող բուդդիստական կենտրոն նախքան իններորդ դարում իսլամադավան արաբների իշխանության տակ ընկնելը: Ավազաքարե ժայռերում ապրում էին բուդդայական վանականները, որոնք այստեղ քարանձավներ էին փորել՝ որպես բնակավայր և որպես սրբավայր ճանապարհորդող հոգնած ուխտավորների համար: Վանականները, ասաց Բաբին, իրենց քարանձավների պատերի ու առաստաղների վրա գեղեցիկ որմնապատկերներ էին արել:

— Ժամանակին,— ասաց,— այս քարանձավներում հինգ հազար ճգնավոր վանական է ապրել:

Թարիքի շունչը կտրվում էր, երբ հասան գագաթին: Բաբին էլ էր ծանր շնչում: Բայց աչքերը հուզմունքից փայլում էին:

— Կանգնած ենք նրա գլխին,— ասաց ու թաշկինակով սրբեց ճակատը,— այստեղ որմնախորշ կա, որտեղից կարող ենք նայել:

Նրանք քայլ-քայլ մոտեցան ժայռոտ ելուստին, կանգնեցին կողք կողքի՝ Բաբին մեջտեղը, ու նայեցին ներքև՝ հովտին:

— Նայե՛ք,— ասաց Լեյլան:

Բաբին ժպտաց:

Ներքևում Բամիյանի հովիտը գորգի պես ծածկում էին հուռթի գյուղատնտեսական դաշտերը: Բաբին ասաց, որ դրանք կանաչ ձմեռային ցորենի և առվույտի, նաև կարտոֆիլի դաշտեր են: Դաշտերը եզրագծում էին բարդիները և հատում էին առուներն ու ոռոգման ջրհորները, որոնց ափերին կքանստել էին փոքրիկ կանացի կերպարանքներ ու լվացք էին անում: Բաբին ցույց տվեց լանջերը ծածկող բրնձի և գարու դաշտերը: Աշուն էր, և Լեյլան տեսնում էր կավաշեն տների տանիքներին կանգնած գունավոր պարեգոտներով մարդկանց, որոնք բերքը փռում էին չորանալու: Քաղաքի միջով անցնող գլխավոր ճանապարհը նույնպես եզրագծված էր բարդիներով: Դրա երկու կողմում փոքրիկ խանութներ, թեյարաններ, փողոցային վարսավիրանոցներ էին: Գյուղից այն կողմ, գետից և առուներից այն կողմ Լեյլան տեսավ չոր, փոշոտ, շագանակագույն ստորոտներ, իսկ դրանցից էլ այն կողմ, ինչպես Աֆղանստանում ամեն ինչի գլխավերևում՝ ձյունածածկ Հինդուկուշը[85]:

Այս ամենի վրա անբասիր, անբիծ կապույտն էր:

— Այնքան լուռ է,— արտաշնչեց Լեյլան: Նա կարող էր տեսնել փոքրիկ ոչխարներ ու ձիեր, բայց չէր կարող լսել նրանց մայունն ու խրխինջը:

— Այս վայրի մասին միշտ դա եմ հիշում,— ասաց Բաբին,— լռությունը: Խաղաղությունը: Ուզում էի, որ դուք զգաք դա: Բայց նաև

---

[85] Հինդուկուշ՝ լեռնային համակարգ Աֆղանստանում, Պակիստանում և Հնդկաստանում:

ուզում էի՝ տեսնեք ձեր երկրի ժառանգությունը, երեխաներ, իմանաք դրա հարուստ անցյալը: Հասկանո՞ւմ եք, որոշ բաներ ես կարող եմ ձեզ սովորեցնել: Որոշ բաներ կարող եք սովորել գրքերից: Բայց կան բաներ, որոնք, դե, պետք է պարզապես տեսնեք ու զգաք:

— Նայե՛ք,— ասաց Թարիքը:

Նրանք տեսան գյուղի վրա պտտող բազեին:

— Երբևէ Մամիին բերե՞լ ես այստեղ,— հարցրեց Լեյլան:

— Օ՛, շատ անգամներ: Նախքան տղաների ծնվելը: Հետո էլ: Մայրդ այդ ժամանակ արկածախնդիր էր ու... այնքան կենդանի: Իմ իմացած ամենաաշխույժ, ամենաերջանիկ մարդն էր:— Ժպտաց հիշելով:— Այնպիսի ծիծաղ ուներ: Երդվում եմ, դրա համար ամուսնացա, Լեյլա՛, այդ ծիծաղի համար: Հալեցնում էր մարդուն: Դրա դեմ խաղ չկար:

Սիրո ալիքը ծածկեց Լեյլային: Այդ ժամանակից ի վեր նա միշտ հիշելու էր Բաբիին այսպես՝ Մամիի մասին պատմելիս, արմունկները ժայռի վրա, ձեռքերը կզակի տակ, մազերը քամուց խառնված, աչքերն արևից կկոցած:

— Գնամ՝ քարանձավները նայեմ,— ասաց Թարիքը:

— Զգո՛ւյշ կլինես,— ասաց Բաբին:

— Լա՛վ, *կակա*[86] ջան,— արձագանքեց Թարիքի ձայնը:

Լեյլան հետևում էր ներքևի երեք տղամարդկանց, որոնք զրուցում էին պարսպին կապած կովի մոտ: Նրանց շուրջը ծառերը սկսել էին գունափոխվել՝ օխրա, նարնջագույն, ալ կարմիր:

— Ես էլ եմ կարոտում տղաներին, գիտե՞ս,— ասաց Բաբին: Աչքերը մի քիչ լցվեցին: Կզակը դողում էր:— Ես կարող է... Մայրիկիդ թե՛ ուրախությունը, թե՛ թախիծը ծայրահեղ են: Ոչինչ չի կարող թաքցնել: Երբեք չէր կարողանում: Ես երևի ուրիշ եմ: Ես հակված եմ... Բայց ինձ էլ դա ծնկի բերեց՝ տղաների մահը: Ես էլ եմ նրանց կարոտում: Օր չի անցնում է, որ ես... Շատ ծանր է, Լեյլա՛: Այնքան ծանր:— Նա սեղմեց իր աչքերի ներքին անկյունները ցուցամատով և բութ մատով: Երբ փորձեց խոսել, ձայնը խզվեց: Ատամներով կծեց շրթունքներն ու սպասեց: Երկար ու խոր շունչ քաշեց ու նայեց

---

[86] Կակա (պարսկ.)՝ քեռի

Լեյլային:— Բայց ուրախ եմ, որ ունեմ քեզ: Ամեն օր Աստծուն շնորհակալություն եմ հայտնում քեզ համար: Աստծո ամեն օր: Երբեմն՝ մորդ ամենամութ օրերին, ես զգում եմ, որ ունեցած-չունցածս դո՛ւ ես, Լեյլա՛:

Լեյլան մոտեցավ ու գլուխը դրեց նրա կրծքին: Նա կարծես մի փոքր զարմացավ. ի տարբերություն Մամիի՝ հայրը հազվադեպ էր իր սերը ֆիզիկապես արտահայտում: Նա արագ համբուրեց Լեյլայի գլուխը ու անհաջող գրկեց նրան: Այսպես կանգնեցին որոշ ժամանակ՝ Բամիյանի հովտին նայելով:

— Որքան էլ սիրում եմ այս հողը, օրեր կան, երբ մտածում եմ հեռանալու մասին,— ասաց Բաբին:

— Ո՞ւր:

— Ցանկացած տեղ, որտեղ հեշտ է մոռանալ: Սկզբում Պակիստան երևի: Մի տարով, գուցե երկու: Մինչ սպասենք, որ մեր փաստաթղթերը ձևակերպեն:

— Իսկ հետո՞:

— Իսկ հետո, դե, աշխարհը մեծ է: Գուցե Ամերիկա: Ծովի մոտ մի տեղ, Կալիֆոռնիայի պես:

Բաբին ասաց, որ ամերիկացիները առատաձեռն են: Որոշ ժամանակ կօգնեն փողով ու սննդով, մինչև ոտքի կկանգնեն:

— Աշխատանք կգտնեմ, ու մի քանի տարի անց, երբ բավականաչափ գումար կկուտակենք, փոքրիկ աֆղանական ռեստորան կբացենք: Ոչ մի արտառոց բան, գիտե՞ս, համեստ փոքրիկ տեղ, մի քանի սեղան, գորգեր: Գուցե Քաբուլի նկարներ կախենք: Ամերիկացիներին կծանոթացնենք աֆղանական ուտելիքի համին: Իսկ մայրդ այնպես է պատրաստում, որ փողոցում հերթ կկանգնեն:

— Իսկ դու, դու կշարունակես դպրոց հաճախել իհարկե: Գիտես՝ ինչպես եմ դրան վերաբերվում: Դա կլինի մեր բացարձակ առաջնահերթությունը՝ քեզ լավ կրթության տալ՝ ավագ դպրոց, հետո քոլեջ: Բայց ազատ ժամանակդ, եթե ցանկանաս, կարող ես օգնել՝ պատվերներ ընդունել, ջրի սափորները լցնել, նման բաներ:

Բաբիի խոսքերով՝ ռեստորանում ծննդյան օրեր կնշեն, նշանադրության արարողություններ, ամանորյա խնջույքներ կանեն: Ռեստորանը կդառնա նաև հավաքատեղի այլ աֆղանցիների համար,

որոնք նրանց պես փախել են պատերազմից: Իսկ ուշ երեկոյան, երբ բոլորը գնան, և ամեն ինչ մաքրած լինեն, երեքով դատարկ սեղանների մոտ կնստեն թեյ խմելու՝ հոգնած, բայց շնորհակալ իրենց բարի բախտի համար:

Երբ Բաբին դադարեց խոսելուց, լռություն տիրեց: Երկուսն էլ լռեցին: Նրանք գիտեին, որ Մամին ոչ մի տեղ չի գնա: Աֆղանստանից հեռանալը նրա համար աներևակայելի էր, երբ Ահմադն ու Նուռը դեռ ողջ էին: Հիմա, երբ նրանք *շահիդներ* էին, իրերը հավաքելն ու ծողոպրելը էլ ավելի վիրավորական էր՝ դավաճանություն, որդիների նահատակության ուրացում:

«Ինչպե՞ս կարող ես մտածել դրա մասին,— Լեյլան լսում էր նրա ձայնը,— Նրանց մահը քեզ համար ոչինչ չի՞ նշանակում, զարմի՛կ: Միակ սփոփանքս այն է, որ քայլում եմ այն հողի վրա, որը ներծծել է նրանց արյունը: Ո՛չ: Երբե՛ք»:

Իսկ Բաբին երբեք առանց նրա չէր հեռանա, Լեյլան գիտեր, թեև Մամին այլևս նրա համար կին չէր, ինչպես Լեյլայի համար մայր չէր: Հանուն Մամիի Բաբին կթոթափեր այս երազանքը, ինչպես աշխատանքից վերադառնալուց հետո թափ է տալիս ալյուրի մնացորդները բաճկոնի վրայից: Նրանք մնալու էին: Մնալու էին մինչև պատերազմի ավարտը: Մնալու էին, ինչ էլ որ լիներ պատերազմից հետո:

Լեյլան հիշեց, թե ինչպես Մամին մի անգամ ասաց Բաբիին, որ ամուսնացել է համոզմունքներ չունեցող մարդու հետ:

Մամին չէր հասկանում: Չէր հասկանում, որ եթե նայի հայելու մեջ, կտեսնի, որ Բաբիի կյանքի միակ անխախտ համոզմունքը հենց ինքն է:

* * *

Ավելի ուշ, երբ կերան եփած ձվերից, կարտոֆիլից ու հացից բաղկացած ճաշը, Թարիքը ննջեց ծառի տակ՝ կարկաչող առվի մոտ: Քնեց՝ կոկիկ ծալված բաճկոնը գլխի տակ որպես բարձ դրած, ձեռքերը կրծքավանդակին ծալած: Վարորդը գնաց գյուղ՝ նուշ գնելու: Բաբին նստեց հաստաբուն ակացիայի տակ ու սկսեց գիրք կարդալ: Լեյլային ծանոթ էր այդ գիրքը. մի անգամ կարդացել էր: Սանտյագո

անունով ծեր ձկնորսի մասին էր, որը հսկա ձուկ է բռնում: Բայց երբ իր նավակը անվտանգ տեղ է հասցնում, բռնած ձկից ոչինչ չի մնում. շնաձկները պատառ-պատառ են անում:

Լեյլան նստեց առվի ափին, ոտքերն իջեցրեց սառը ջրի մեջ: Գլխավերևում տզզում էին մոծակներն ու պարում էին բամբակի սերմերը: Մոտակայքում բզզում էր ճպուռը: Լեյլան նայում էր՝ ինչպես են նրա թևերին ընկնում արևի ճառագայթները, երբ բզզալով խոտի մի ցողունից մյուսն էր թռչում. մանուշակագույն, հետո՝ կանաչ, նարնջագույն: Առվի մյուս կողմում մի խումբ տեղացի խազար տղաներ գետնից կովի աթար էին հավաքում ու գցում մեջքներին կապած քաթանե պարկերի մեջ: Ինչ-որ տեղ զռռաց էշը: Հանկարծ ֆշշոցով միացավ գեներատորը:

Լեյլան կրկին մտածեց Բաբիի փոքրիկ երազանքի մասին: Ծովի մոտ մի տեղ:

Մի բան կար, որի մասին նա Բաբիին չէր պատմել այնտեղ՝ Բուդդայի վրա. մի կարևոր պատճառով ինքն ուրախ է, որ չեն կարող հեռանալ: Ինքը կկարոտեր Ջիթիին ու նրա փնթփնթան լրջությունը, այո՛, Հասինային էլ՝ իր չարաճճի ծիծաղով ու անլուրջ ծամառությամբ: Բայց ամենից շատ Լեյլան հիշում էր առանց Թարիքի անցկացրած այն չորս շաբաթների անխուսափելի ծանրությունը, երբ նա գնացել էր Ղազնի: Շատ լավ հիշում էր՝ ինչպես էր ժամանակը ձգվում առանց նրա, ինչպես էր ինքը քարշ գալիս՝ մոլորված, հավասարակշռությունը կորցրած: Ինչպե՞ս կարող էր երբևէ համակերպվել Թարիքի մշտական բացակայությանը:

Միգուցե անիմաստ էր այդչափ ցանկանալ մոտիկ լինել մեկին մի երկրում, որտեղ փամփուշտները ծվեն-ծվեն են արել եղբայրներիդ: Բայց Լեյլային բավական էր պատկերացնել՝ ինչպես է Թարիքը Խադիմին սպառնում իր ոտքով, և այդ ժամանակ աշխարհում կարծես ոչինչ ավելի խելամիտ չէր թվում:

* * *

Վեց ամիս անց՝ 1988 թվականի ապրիլին, Բաբին տուն եկավ լավ նորություններով:

— Պայմանագիր են ստորագրել,— ասաց,— Ժնևում: Պաշտոնական է: Նրանք հեռանում են: Ինը ամսից Աֆղանստանում Սովետներ այլևս չեն լինի:

Մամին անկողնում նստած էր: Ուսերը թոթվեց:

— Բայց կոմունիստական ռեժիմը մնում է,— ասաց,— Նաջիբուլլահը Սովետների խամաճիկ նախագահն է: Նա ոչ մի տեղ չի գնում: Ո՛չ, պատերազմը կշարունակվի: Սա վերջը չէ:

— Նաջիբուլլահը երկար չի մնա,— ասաց Բաբին:

— Նրանք հեռանում են, Մամի՛, իսկապես հեռանում են:

— Դուք երկուսով տոնեք, եթե ուզում եք, բայց ես չեմ հանգստանա, մինչև մոջահեդները հաղթանակի շքերթ չանցկացնեն հենց այստեղ՝ Քաբուլում:

Եվ սա ասելով՝ նա կրկին պառկեց ու վերմակը քաշեց գլխին:

23

1989 թվականի հունվար

1989 թվականի հունվարի ցուրտ, ամպամած մի օր՝ Լեյլայի տասնմեկամյակից երեք ամիս առաջ, նա ծնողների ու Հասինայի հետ գնաց նայելու՝ ինչպես է սովետական վերջին շարասյունը լքում քաղաքը: Հանդիսատեսները հավաքվել էին Վազիր Աքբար Խանի Զինվորական ակումբի մոտ գտնվող մայրուղու երկու կողմերում: Կանգնած էին ցեխոտ ձյան մեջ ու նայում էին տանկերի, զրահապատ բեռնատարների ու «Ջիփերի» շարասյանը, իսկ թեթև ձյունը ծախրում էր անցնող լուսարձակների լույսի ներքո: Լսվում էին չարախինդ մեկնաբանություններ ու կատակներ: Աֆղան զինվորները մարդկանց փողոցից դուրս էին պահում: Ժամանակ առ ժամանակ ստիպված էին նախազգուշական կրակոց արձակել:

Մամին գլխավերևում պահել էր Ահմադի ու Նուռի լուսանկարները: Այն նկարն էր, որտեղ նրանք մեջք մեջքի նստած էին տանձի ծառի տակ: Նրա նման ուրիշներն էլ կային՝ կանայք, որոնք բարձր պահել էին իրենց *շահիդ* ամուսինների, որդիների, եղբայրների նկարները:

Ինչ-որ մեկը թփթփացրեց Լեյլայի ու Հասինայի ուսին: Թարիքն էր:

— Որտեղի՞ց ես այդ բանը վերցրել,— բացականչեց Հասինան:

— Մտածեցի՝ առիթին համապատասխան զուգվեմ,— ասաց Թարիքը: Գլխին հսկա ռուսական մորթե գլխարկ էր՝ ականջակալներով, որոնք նա քաշել էր ականջներին:

— Ի՞նչ տեսք ունեմ:

— Ձավեշտալի,— ծիծաղեց Լեյլան:

— Այդպես էլ ուզում էի:

— Ծնողներիդ հե՞տ ես եկել այսպես հագնված:

— Նրանք տանն են,— ասաց նա:

Նախորդ աշնանը Թարիքի հորեղբայրը Ղազնիում մահացավ սրտի կաթվածից, իսկ մի քանի շաբաթ անց Թարիքի հայրը սրտի կաթված ստացավ ու դարձավ թույլ ու հոգնած, հակված անհանգստության և ընկճախտի նոպաների, որոնք շաբաթներ էին տևում: Լեյլան ուրախ էր Թարիքին տեսնել այնպիսին, ինչպիսին առաջ էր: Հոր հիվանդությունից հետո նա շաբաթներով թախծում էր, դեմքը խոժոռում ու մռայլվում:

Երեքով ծածուկ հեռացան, մինչ Մամին ու Բաբին կանգնած նայում էին Սովետներին: Փողոցի վաճառականից Թարիքը բոլորի համար մի ափսե խաշած լոբի գնեց՝ վրան համեմի խիտ սոուս: Կերան գորգերի փակ խանութի ծածկի տակ, հետո Հասինան գնաց՝ իր ընտանիքին գտնելու:

Ավտոբուսով տուն վերադառնալիս Թարիքն ու Լեյլան նստած էին ծնողների հետևում: Մամին պատուհանից դուրս էր նայում՝ լուսանկարը կրծքին սեղմած: Կողքին նստած՝ Բաբին անվրդով լսում էր մի մարդու, որը պնդում էր՝ թեև Սովետները հեռանում են, բայց Նաջիբուլլահին զենք կուղարկեն Քաբուլ:

— Նրանց խամաճիկն է: Կշարունակեն պատերազմել նրա միջոցով, կարող եմ գրազ գալ:

Մյուս շարքում ինչ-որ մեկը իր համաձայնությունն արտահայտեց:

Մամին ինքն իրեն երկար աղոթքներ էր մրմնջում, որոնք անվերջ շարունակվում էին, մինչև շունչը կտրվեց, ու ստիպված էր վերջին մի քանի բառերը հազիվ լսելի, ծվծվան ձայնով արտասանել:

* * *

Այդ օրը՝ ավելի ուշ, Լեյլան ու Թարիքը գնացին «Կինո Պարկ» ու ստիպված դիտեցին սովետական ֆիլմ, որը կրկնօրինակված էր ֆարսիով, ինչը հանկարծակի զավեշտալի դարձավ: Առևտրային նավի մասին էր, որի առաջին օգնականը սիրահարված է նավապետի դստերը: Անունը Այյոնա էր: Բուռն փոթորիկ է սկսվում, կայծակ, անձրև, ալեկոծ ծովը այս ու այն կողմ է շպրտում նավը: Կատաղած նավաստիներից մեկը ինչ-որ բան է բղավում: Անհեթեթորեն հանգիստ աֆղան ձայնը թարգմանում է. «Հարգելի՛ սըր, փոխանցե՛ք, խնդրեմ, պարանը»:

Այդ պահին Թարիքը ծիծաղից պայթեց: Շուտով երկուսն էլ ծիծաղից գալարվում էին: Հենց մեկը հոգնում էր, մյուսը քմծիծաղում էր, ու նորից էին սկսում գալարվել: Երկու շարք այն կողմ նստած մարդը շրջվեց ու «ՇՇՇ» ասաց:

Վերջում հարսանեկան տեսարան էր: Նավապետը փափկել էր ու թույլ տվել առաջին օգնականին ամուսնանալ Այյոնայի հետ: Նորապսակները ժպտում էին միմյանց: Բոլորն օղի էին խմում:

— Երբեք չեմ ամուսնանա,— շշնջաց Թարիքը:

— Ես էլ,— ասաց Լեյլան, բայց մի պահ հուզված տատանվեց: Նա անհանգստացավ, որ իր ձայնից զգացվեց, որ Թարիքի ասածը հիասթափեցրեց իրեն: Արագ սրտխփոցով ավելացրեց՝ այս անգամ ավելի կրքոտ.

— Երբե՛ք:

— Հարսանիքը հիմար բան է:

— Այդ ամբողջ իրարանցումը:

— Բոլոր ծախսված գումարները:

— Ինչի՞ վրա:

— Հագուստի, որը երբեք այլևս չես հագնելու:

— Բա՛:

— Եթե երբևէ ամուսնանամ,— ասաց Թարիքը,— հարսանեկան բեմի վրա երեք հոգու տեղ պետք է տան: Իմ, հարսնացուի ու ատրճանակը գլխիս պահող տղայի համար:

Առջևի շարքում նստածը մեկ անգամ էլ նախազգուշական հայացք գցեց նրանց վրա:

Էկրանի վրա Այյոնան և նրա նորապսակ ամուսինը համբուրվեցին:

Համբույրը հանկարծակի տարօրինակորեն գրավեց Լեյլային: Նա զգաց, որ սիրտը տրոփում է, արյունը բաբախում է ականջներում, զգաց Թարիքի ներկայությունը իր կողքին, զգաստացավ, անշարժացավ: Համբույրը դեռ շարունակվում էր: Լեյլային թվաց, որ անչափ կարևոր է այժմ չշարժվել, ձայն չհանել: Նա գիտակցում էր, որ Թարիքը զննում է իրեն. մի աչքով նայում է համբույրը, մյուսով՝ իրեն, ինչպես ինքն էր զննում Թարիքին: Արդյոք նա լսո՞ւմ է իր քթից ներսուդուրս անող օդի ձայնը ու սպասում շնչի նուրբ ընդհատմանը, այդ քողազրկող անկանոնությանը, որը կմատներ իր մտքերը:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե համբուրվեին, եթե շրթունքներին զգար նրա վերին շրթունքի աղվամազը:

Հետո Թարիքը անհանգիստ շարժվեց իր նստարանին: Լարված ձայնով ասաց.

— Գիտեի՞ր, որ եթե Սիբիրում քիթդ մաքրես, խլինքը գետնին ընկնելուց առաջ կանաչ սառցալուլա կդառնա:

Նրանք ծիծաղեցին, բայց այս անգամ կարճ, նյարդային ծիծաղով: Իսկ երբ ֆիլմն ավարտվեց, և նրանք դուրս եկան, Լեյլան ուրախ էր, որ երկինքը մթագնել է, և ստիպված չի ցերեկվա լույսով նայել Թարիքի աչքերին:

24

1992 թվականի ապրիլ

Անցավ երեք տարի:

Այդ ընթացքում Թարիքի հայրը մի քանի ուղեղի կաթված տարավ: Արդյունքում ձախ ձեռքը թուլացավ, և խոսքը դարձավ մի

փոքր անհասկանալի: Երբ հուզվում էր, իսկ դա հաճախ էր պատահում, խոսքը վատանում էր:

Թարիքի ոտքը կրկին փոքրացավ նրա վրա, և նա Կարմիր խաչից նոր ոտք ստացավ, թեև ստիպված էր վեց ամիս սպասել:

Հասինայի վախերն արդարացան, և նրան տարան Լահոր, որտեղ ստիպեցին ամուսնանալ մեքենաներ վերանորոգող զարմիկի հետ: Այն առավոտ, երբ նրան տանելու էին, Լեյլան ու Ջիթին գնացին Հասինայի տուն՝ ցտեսություն ասելու: Հասինան պատմեց, որ զարմիկը՝ իր ապագա ամուսինը, արդեն սկսել է Գերմանիա տեղափոխվելու գործընթացը. այնտեղ ապրում էին նրա եղբայրները: Նրա կարծիքով մեկ տարուց կլինեն Ֆրանկֆուրտում: Հետո աղջիկները գրկեցին իրար ու լացեցին: Ջիթին անմխիթար էր: Վերջին անգամ Լեյլան տեսավ Հասինային, երբ հայրն օգնում էր նրան՝ բարձրանալու բազմամարդ տաքսիի հետևի նստարանին:

Սովետական Միությունը զարմանալի արագությամբ փլուզվում էր: Լեյլային թվում էր, որ մի քանի շաբաթը մեկ Բաբին բերում էր նորություններ նոր անկախ հանրապետության մասին: Լիտվա: Էստոնիա: Ուկրաինա: Կրեմլից իջեցրին սովետական դրոշը: Ծնվեց Ռուսաստանի Հանրապետությունը:

Քաբուլում Նաջիբուլլահը փոխեց իր մարտավարությունն ու փորձեց իրեն ներկայացնել որպես նվիրյալ մահմեդական: «Քիչ է և չափազանց ուշ,— ասաց Բաբին,— չես կարող մի օր Պետական հետախուզական գործակալության ղեկավար լինել, իսկ հաջորդ օրը մզկիթում աղոթել այն մարդկանց հետ, որոնց հարազատներին խոշտանգել ու սպանել ես»:

Զգալով, որ Քաբուլի շուրջը օղակը սեղմվում է, Նաջիբուլլահը փորձեց համաձայնության գալ մոջահեդների հետ, բայց նրանք հրաժարվեցին:

Իր մահճակալից Մամին ասաց՝ «Լավ էլ արեցին»: Նա անքուն աղոթում էր մոջահեդների համար ու սպասում իր շքերթին: Սպասում էր իր որդիների թշնամիների անկմանը:

* * *

Ի վերջո, այդպես էլ եղավ: 1992 թվականի ապրիլին, երբ Լեյլան դարձավ տասնչորս տարեկան:

Նաջիբուլլահը վերջապես հանձնվեց և ապաստան ստացավ ՄԱԿ-ի տարածքում՝ Դարուլաման պալատի շրջակայքում, որ քաղաքի հարավում էր:

Ջիհադն ավարտվեց: Լեյլայի ծնվելու գիշերից ի վեր իրենց իշխանությունը պահած բոլոր կոմունիստական ռեժիմները պարտվեցին: Մամիի հերոսները՝ Ահմադի և Նուռի ռազմական եղբայրները, հաղթեցին: Եվ հիմա՝ ավելի քան մեկ տասնամյակ ամեն ինչ զոհաբերելուց հետո, ընտանիքները թողած՝ սարերում ապրելուց և Աֆղանստանի ինքնիշխանության համար պայքարելուց հետո, Քաբուլ էին գալիս մոջահեդները՝ ճակատամարտերում ծեծված միս ու արյուն:

Մամին գիտեր բոլորի անունները:

Դոսթումն[87] էր՝ փայլուն ուզբեկ հրամանատարը, «Ջունբիշ-ի-Միլլի» խմբակցության ղեկավարը, որը հայտնի էր ճամբարներ փոխելով: Կրքոտ մռայլ Գուլբուդին Հեքմաթյարը[88]՝ «Հեսբ-Է-Իսլամի» խմբակցության ղեկավարը, փաշթունը, որը ճարտարագիտություն էր ուսանել ու մի անգամ մաոիստ ուսանողի սպանել: Ռաբանին[89]՝ «Ջեմյաթ-Է-Իսլամի» խմբակցության ղեկավարը, որը միապետության օրոք իսլամ էր դասավանդում Քաբուլի համալսա-

---

87 Աբդուլ Ռաշիդ Դոսթում (1954–)՝ նախկին կոմունիստ, Աֆղանստանի ազգային բանակի գեներալ, 2014 թ-ից՝ Աֆղանստանի փոխնախագահ, «Ջունբիշ-ի-Միլլի» (Աֆղանստանի ազգային իսլամական շարժում) կուսակցության առաջնորդ:

88 Գուլբուդին Հեքմաթյար (1949–)՝ «Հիզբալ-իսլամի»՝ «Իսլամական կուսակցության» հիմնադիրն ու ներկայիս ղեկավարը: 1990-ականներին երկու անգամ եղել է Աֆղանստանի վարչապետը: 2003 թ. Բեն Լադենի հետ միասին ԱՄՆ-ի կողմից հայտարարվել է ամենաորոնվող ահաբեկիչներից մեկը: 2017 թ. ՄԱԿ-ը հանել է նրան վերաբերող պատժամիջոցը՝ պայմանով, որ նա կսատարի Աֆղանստանի սահմանադրությանը: Քաբուլի ռմբակոծությունների համար հայտնի է «Քաբուլի մսագործ» անվամբ: Հեքմաթյարի գտնվելու վայրն այժմ անհայտ է:

89 Բուրհանադդին Ռաբանի (1940–2011)՝ 1992–1996 թթ. Աֆղանստանի Իսլամական Պետության նախագահ (դե յուրե՝ մինչև 2001 թ.): «Աֆղանստանի իսլամական հասարակություն» կուսակցության առաջնորդ: 2011 թ. սպանվել է Քաբուլում իր տուն մուտք գործած ինքնասպան ահաբեկչի կողմից:

րանում: Սայաֆը[90]՝ արաբական կապեր ունեցող Փաղմանից փաշ-թունը, մարմնեղ մահմեդականը և «Իթիհադ-Է-Իսլամի» խմբակ-ցության առաջնորդը: Աբդուլ Ալի Մազարին[91]՝ «Հիզբ-Է-Վահդաթ» խմբակցության ղեկավարը, որին իր տոհմակիցներ խազարները ասում էին «Բաբա Մազարի», և որը Իրանի հետ սերտ շիա կապեր ուներ:

Եվ իհարկե, Մամիի հերոսը՝ Ռաբանիի դաշնակիցը, մտորող, խարիզմատիկ տաջիկ հրամանատար Ահմադ Շահ Մասուդը՝ Փանջ-շիրի առյուծը: Մամին իր սենյակում նրա նկարով պատին պաստառ էր կախել: Մասուդի գեղեցիկ, մտորուն դեմքը, ցցված հոնքերն ու հատուկ թեք դրած *փակոլը* Քաբուլում լինելու էր ամենուրեք: Նրա խորաթափանց սև աչքերը նայում էին գովազդի վահանակներից, պատերից, խանութների պատուհաններից, տաքսիների ալեհա-վաքների վրա դրված փոքրիկ դրոշներից:

Մամին հասավ իր բաղձալի օրվան: Այսքան տարի սպասելը տվեց իր պտուղները: Վերջապես կարող էր վերջ տալ իր անքուն գիշերներին, իսկ որդիները կարող էին խաղաղ հանգչել:

* * *

Նաջիբուլլահի հանձնվելու օրվանից հետո Մամին անկողնուց բարձրացավ որպես նոր կին: Ահմադի և Նուռի *շահիդ* դառնալուց հետո՝ հինգ տարվա մեջ առաջին անգամ սև զգեստ չհագավ: Հա-գավ սպիտակ պուտերով կապույտ վուշից զգեստ: Լվաց պատու-հանները, ավլեց հատակը, օդափոխեց տունը, երկար լոգանք ըն-դունեց: Ձայնը ուրախությունից զնգում էր:

— Պետք է խնջույք անենք,— հայտարարեց:

Լեյլային ուղարկեց՝ հարևաններին հրավիրելու:

— Ասա՛, որ վաղը մեծ ճաշի ենք հրավիրում:

---

90 Աբդուլ Ռասուլ Սայաֆ (1946–)՝ քաղաքական գործիչ և նախկինում մոջահեդ-ների հրամանատար, «Իսլամական Միություն» կուսակցության ղեկավար:

91 Աբդուլ Ալ Մազարի (1947–1995)՝ ԽՍՀՄ-ի և Աֆղանստանի միջև պատերազմի ժամանակ «Աֆղանստանի իսլամական միություն» կուսակցության ղեկավար: Սպանվել է Թալիբանի կողմից:

Խոհանոցում կանգնած՝ Մամին նայեց շուրջը՝ ձեռքերը կոնքերին, ու ընկերական հանդիմանանքով ասաց.

— Ի՞նչ ես արել խոհանոցիս հետ, Լեյլա՛: Վո՛յ: Ամեն ինչ ուրիշ տեղ է:

Թատերաբար սկսեց տեղաշարժել կաթսաներն ու թավաները. նորից դրանց տեր էր կանգնում, վերադարձել էր ու գրավում էր իր տարածքը: Լեյլան հեռու էր մնում: Այդպես ամենաձիշտն էր: Մամին կարող էր նույնքան անսանձ լինել էյֆորիայի պահերին, որքան զայրույթի պոռթկումներում: Մամին անսպառ էներգիայով սկսեց եփել. *առուշ* ապուր կարմիր լոբիով ու չորացրած սամիթով, քոֆթա, շոգեխաշած *մանթուներ*[92] թարմ մածունով և անանուխով:

— Հոնքերդ հանո՞ւմ ես,— հարցրեց Մամին՝ բրնձի մեծ քաթանե պարկը խոհանոցի սեղանի մոտ բացելով:

— Մի քիչ:

Մամին բրինձը լցրեց մեծ սև պղնձով ջրի մեջ: Թևքերը բարձրացրեց ու սկսեց խառնել:

— Ինչպե՞ս է Թարիքը:

— Հայրը հիվանդ է,— ասաց Լեյլան:

— Քանի՞ տարեկան է հիմա:

— Չգիտեմ: Երևի վաթսունն անց:

— Թարիքին նկատի ունեի:

— Ա՛: Տասնվեց:

— Լավ տղա է: Չէ՞:

Լեյլան ուսերը թոթվեց:

— Իրականում արդեն տղա չէ: Տասնվեց: Համարյա տղամարդ է: Չե՞ս կարծում:

— Ի՞նչ ես ուզում ասել, Մամի՛:

— Ոչինչ,— ասաց Մամին անմեղ ժպիտով,— ոչինչ, ուղղակի դու... Ա՛խ, ոչինչ, ավելի լավ է՝ չխոսեմ:

— Տեսնում եմ, որ ուզում ես մի բան ասել,— ասաց Լեյլան՝ վրդովված ուղիղ ասված հումորային մեղադրանքից:

— Լա՛վ:

---

92 Մանթու՝ աղացած մսով խմորագունդ

Մամին ձեռքերով գրկեց պղնձի եզրը: Լեյլան անբնական, ասես նախօրոք փորձված բան տեսավ նրանում, թե ինչպես մայրը ասաց «լավ» ու գրկեց պղինձը: Լեյլան վախեցավ, որ քարոզ է լսելու:

— Մի բան էր, երբ փոքր երեխաներ էիք, դեսուդեն էիք վազվզում: Վնաս չուներ: Հուզիչ էր... բայց հիմա: Հիմա: Նկատեցի, որ կրծկալ ես հագնում, Լեյլա՛:

Լեյլան հանկարծակիի եկավ:

— Ի դեպ, կարող էիր ինձ ասել կրծկալի մասին: Ես չգիտեի: Իզուր չես ասել:— Զգալով իր առավելությունը՝ Մամին ուժեղացրեց ճնշումը:

— Ինչևէ, խոսքն իմ կամ կրծկալի մասին չէ: Քո ու Թարիքի մասին է: Նա տղա է, հասկանո՞ւմ ես, նրան չի մտահոգում իր հեղինակությունը: Բայց դո՞ւ: Աղջկա հեղինակությունը, նամանավանդ քեզ պես գեղեցիկ աղջկա, շատ նուրբ բան է, Լեյլա՛: Ձեռքիդ մեջ պահած սարյակ թռչնի պես: Մի քիչ թուլացնես՝ կթռչի կգնա:

— Իսկ քո՝ պատերին մագլցելը, Բաբիի հետ այգիներում գաղտագողի հանդիպումնե՞րը,— հարցրեց Լեյլան գոհ, որ կարողացավ կառավարել իրեն:

— Մենք զարմիկներ էինք: Եվ մենք ամուսնացանք: Այս տղան ձեռքդ խնդրե՞լ է:

— Նա ընկեր է՝ *ռաֆիկ*: Մեր մեջ այդպիսի բան չկա,— ասաց Լեյլան՝ ոչ շատ համոզիչ պաշտպանվելով:— Եղբոր պես,— ավելացրեց առանց մտածելու: Ու հասկացավ, նույնիսկ նախքան Մամիի դեմքը ամպոտեց ու մթագնեց, որ սխալ է արել:

— Այդպիսի բան չկա,— կտրուկ ասաց Մամին,— չհամեմատե՛ս այդ միոտանի ատաղձագործի որդուն քո եղբայրների հետ: Քո եղբայրների նմանը չկա:

— Ես չասացի, որ նա... դա նկատի չունեի:

Մամին քթով ու սեղմված ատամների միջով շունչ քաշեց:

— Ինչևէ,— շարունակեց նա, բայց առանց մի քանի րոպե առաջվա ամաչկոտ թեթևամտության,— ուզում եմ ասել, որ եթե զգույշ չլինեք, մարդիկ կսկսեն խոսել:

Լեյլան բացեց բերանը, որ ինչ-որ բան ասի: Այնպես չէ, որ Մամիի ասածը ճիշտ չէր: Լեյլան գիտեր, որ Թարիքի հետ փողոցնե-

րում անմեղ, անխոչընդոտ զբոսնելու օրերն անցել են: Արդեն որոշ ժամանակ Լեյլան տարօրինակ նոր զգացմունք ուներ, երբ երկուսով հանրային վայրում էին: Գիտակցում էր, որ իրենց նայում են, քննում, քչփչում, ինչն առաջ չէր զգացել: Եվ հիմա էլ չէր զգա, եթե չլիներ էական մի փաստ. նա սիրահարվել էր Թարիքին: Հուսահատորեն ու անխոհեմաբար: Երբ Թարիքի կողքին էր, գլխում ծագում էին ամենախայտառակ մտքեր՝ նրա նիհար, մերկ մարմինը իր մարմնի հետ միաձուլված: Գիշերը անկողնում նա պատկերացնում էր՝ ինչպես է Թարիքը համբուրում իր փորը, զգում նրա շուրթերի փափկությունը, զգում նրա ձեռքերը իր պարանոցի, կրծքի, մեջքի և ավելի ցածի վրա: Երբ այսպես մտածում էր նրա մասին, իրեն մեղավոր էր զգում, բայց նաև յուրահատուկ, ջերմ զգացողություն էր ունենում, որը տարածվում էր փորից վերև, մինչև թվում էր, որ դեմքը վարդագույն փայլ է ստանում:

Ո՛չ: Մամին ճիշտ էր: Նույնիսկ ավելի, քան կարծում էր: Լեյլան կասկածում էր, որ որոշ, եթե ոչ բոլոր հարևանները արդեն բամբասում են իր և Թարիքի մասին: Նկատել էր խորամանկ ժպիտները, տեղյակ էր թաղի շշուկներից, թե իրենք զույգ են: Օրերս, օրինակ, Թարիքի հետ քայլում էին փողոցով ու անցան Ռաշիդի՝ կոշկակարի ու նրա հետևից քայլող *բուրքայով* կնոջ՝ Մարիամի կողքով: Անցնելիս Ռաշիդը կատակով ասաց՝ «Իսկը Լեյլին ու Մեջնունը»՝ նկատի ունենալով տարաբախտ սիրահարներին Նիզամիի[93] տասներկուերորդ դարի հայտնի ռոմանտիկ պոեմից՝ «Ռոմեո և Ջուլիետի» ֆարսի տարբերակից, ասում էր Բաբին, չնայած ավելացնում էր, որ ապերջանիկ սիրահարների մասին պատմվածքը Նիզամին գրել էր Շեքսպիրից չորս դար առաջ:

Մամին ճիշտ էր:

Լեյլային տանջում էր այն միտքը, որ Մամին իրավունք չուներ դա ասելու: Ուրիշ բան, եթե Բաբին բարձրաձայներ այդ հարցի մասին: Բայց Մամին: Այդ բոլոր տարիներին իրեն հեռու պահեց, փակի տակ, չհետաքրքրվեց, թե Լեյլան ուր գնաց, ում տեսավ, ինչ է մտա-

---

[93] Նիզամի Գյանջևի (1141–1209)՝ պարսիկ բանաստեղծ, միջնադարյան Արևելքի խոշորագույն պոետներից մեկը:

ծում... Արդար չէր: Լեյլան իրեն զգաց այս կաթսաների ու թավաների պես, որոնց կարելի է անտեսել, իսկ հետո որոշել պահանջատեր լինել՝ ըստ տրամադրության:

Բայց սա մեծ օր էր, կարևոր օր բոլորի համար: Փոքրոգություն կլիներ այն փչացնել սրա պատճառով: Տրամադրությունը պահպանելու համար Լեյլան չշարունակեց:

— Հասկանում եմ քեզ,— ասաց:

— Շատ լավ,— ասաց Մամին,— ուրեմն որոշեցինք: Ո՞ւր է Հաքիմը: Որտե՞ղ, ա՛խ, որտե՞ղ է սիրասուն ամուսնյակս:

* * *

Հիասքանչ, անամպ օր էր՝ խնջույքի համար կատարյալ: Տղամարդիկ նստեցին բակի ծալովի ճոճաթոռներին: Թեյ խմեցին, ծխեցին ու բարձրաձայն կատակելով խոսեցին մոջահեդների ծրագրերի մասին: Բաբիից Լեյլան իմացավ ընդհանուր պատկերը. Աֆղանստանն այժմ կոչվում է Աֆղանստանի Իսլամական Պետություն: Իսլամական *ջիհադի* խորհուրդը, որը ձևավորվել է Փեշավարում մի քանի մոջահեդ խմբակցությունների կողմից, երկու ամիս կվերահսկի իրավիճակը Սիբղաթուլա Մոջադիդիի[94] գլխավորությամբ: Դրան կհետևի Ռաբանիի գլխավորած խորհուրդը, որը կղեկավարի չորս ամիս: Այդ վեց ամսվա ընթացքում կստեղծվի *Լոյա Ջիրգա՝* առաջնորդների և ավագների մեծ խորհուրդ, որը կստեղծի երկու տարվա միջանկյալ կառավարություն, ինչն էլ կհանգեցնի ժողովրդավարական ընտրություններին:

Տղամարդկանցից մեկը մանղալի վրա հովհարում էր գառան մսով շամփուրները: Բաբին ու Թարիքի հայրը հին տանձենու ստվերում շախմատ էին խաղում: Լարվածությունից դեմքերը կնճռոտել էին: Թարիքն էլ էր նստած խաղատախտակի մոտ, պարբերա-

---

[94] Սիբղաթուլա Մոջադիդի (1925–2019)՝ 1992 թ. Նաջիբուլլահի կառավարության անկումից հետո Աֆղանստանի նախագահ: Աֆղանստանի ազգային-ազատագրական ճակատի հիմնադիր, 2003 թ. «Լոյա ժիրգայի» նախագահ, որը հաստատեց Աֆղանստանի նոր սահմանադրությունը: 2005 թ. Աֆղանստանի Ազգային ժողովի վերին պալատի նախագահ:

բար հետևում էր խաղին և լսում էր կողքի սեղանի շուրջը ծավալված քաղաքական զրույցը:

Կանայք հավաքվել էին հյուրասենյակում, միջանցքում և խոհանոցում: Զրուցում էին ու մանուկներին գիրկն առնում, ազդրի անՆշան շարժումներով հմտորեն փոխում դիրքը, իսկ երեխաները հետապնդում էին իրար տան շուրջը: Նվագարկչից թնդում էր Ուստադ Սարահանգի[95] *ղազալը*:

Լեյլան խոհանոցում էր, Զիթիի հետ սափորների մեջ *դող*[96] էին լցնում: Զիթին այլևս նախկինի պես ամաչկոտ ու լուրջ չէր: Արդեն մի քանի ամիս է՝ նրա ճակատի մշտական խիստ խոժոռվածությունը անցել էր: Այս օրերին նա ազատ և ավելի հաճախ էր ծիծաղում ու (Լեյլան հանկարծ հասկացավ) մի փոքր կոկետորեն: Այլևս մազերը միշտ նույն ձանձրալի պոչը չէր կապում, թողել էր՝ երկարեն, ու մի քանի մազափունջ կարմիր էր ներկել: Լեյլան վերջապես իմացավ, որ այս ձևափոխման խթանը տասնութամյա տղա է, որի ուշադրությունը գրավել էր Զիթին: Անունը Սաբիր էր, Զիթիի ավագ եղբոր ֆուտբոլային թիմի դարպասապահն էր:

— Օ՛, ամենագեղեցիկ ժպիտն ունի, իսկ հաստ, հաստ սև մազերը...— Զիթին ասաց Լեյլային: Ոչ ոք իհարկե չգիտեր նրանց զգացմունքների մասին: Զիթին երկու անգամ գաղտնի հանդիպել էր նրա հետ՝ թեյ խմելու՝ ամեն անգամ տասնհինգ րոպեով, քաղաքի մյուս ծայրում՝ Թայմանիում գտնվող փոքրիկ թեյարանում:

— Ձեռքս է խնդրելու, Լեյլա՛: Գուցե հենց այս ամռանը: Կհավատա՞ս: Երդվում եմ՝ անդադար նրա մասին եմ մտածում:

— Բա դպրո՞ցը,— հարցրեց Լեյլան:

Զիթին գլուխը ծռեց ու նայեց Լեյլային «ինքդ էլ լավ գիտես» հայացքով:

— Երբ քսան տարեկան կդառնանք,— ասում էր Հասինան,— Զիթին ու ես ամեն մեկս մի չորս-հինգ երեխա կբերենք: Բայց, դու, Լեյլա՛, դու մեզ՝ երկու հիմարներիս՝ հպարտանալու տեղ ես տալու:

---

[95] Ուստադ Սարահանգ (1924–1983)՝ աֆղանական ղազալ երգիչ, հնդկական դասական երաժշտություն կատարող

[96] Դող՝ թան

Քեզանից մեծ մարդ դուրս կգա: Գիտեմ՝ մի օր թերթը կվերցնեմ ձեռքս, իսկ առաջին էջին քո նկարը կլինի:

Ջիթին այժմ Լեյլայի կողքին էր, վարունգ էր կտրտում երազկոտ, բացակա հայացքով:

Մամին մոտակայքում էր՝ փայլուն ամառային զգեստ հագած խաշած ձու էր կճպում Վաջմայի՝ մանկաբարձուհու և Թարիքի մոր հետ:

— Հրամանատար Մասուդին նվիրելու եմ Ահմադի և Նուռի նկարը,— ասում էր Մամին Վաջմային, իսկ Վաջման գլխով էր անում ու փորձում հետաքրքրված ու անկեղծ երևալ:

— Նա անձամբ ներկա էր թաղմանը: Աղոթք էր ասել նրանց գերեզմանի վրա: Շնորհակալության նշան կլինի նրա պարկեշտության համար:— Մամին մի հատ էլ խաշած ձու կոտրեց:— Լսել եմ՝ մտածող, հարգարժան մարդ է: Կարծում եմ՝ կգնահատի:

Նրանց շուրջ կանայք խոհանոցից դուրսուներս էին անում, ***քուրմայով*** ամաններ տանում, ***մաթավայով***[97] ափսեներ, հաց ու շարում այս ամենը հյուրասենյակի հատակին փռված ***սոֆրայի*** վրա: Ժամանակ առ ժամանակ ճեմելով ներս էր մտնում Թարիքը: Մի բան էր վերցնում, մյուսը՝ համտես անում:

— Տղամարդկանց չի կարելի,— ասաց Ջիթին:

— Դո՛ւրս, դո՛ւրս, դո՛ւրս,— բղավեց Վաջման:

Թարիքը ժպտաց, երբ կանայք փորձեցին իրեն բարյացակամորեն դուրս վռնդել: Նրան կարծես հաճույք էր պատճառում, որ իրեն այստեղ չեն ողջունում, որ վարակում է կանացի այս միջավայրը իր կիսաժպիտ տղամարդկային անպատկառությամբ:

Լեյլան ամեն ինչ արեց, որ չնայի նրան, որ այս կանանց բամբասելու ավելի շատ առիթ չտա: Նա խոնարհեց աչքերն ու ոչինչ չասաց Թարիքին, բայց հիշեց մի քանի գիշեր առաջ տեսած երազը, երբ նրա ու Թարիքի դեմքերը միասին հայելու մեջ էին՝ կանաչ, փափուկ քողի տակ: Իսկ բրնձի հատիկները մազերից թափվում ու ծնգոցով զարկվում էին հայելուն:

Թարիքը ձգվեց, որ կարտոֆիլով եփված հորթի մսից մի կտոր փորձի:

---

[97] Մասթավա՝ բրնձով և գառան մսով ապուր

— *Հո բաչա՛*[98],— Ջիթին խփեց ձեռքին: Թարիքը, միևնույնն է, գողացավ կտորն ու ծիծաղեց:

Հիմա նա Լեյլայից մի գլուխ բոյով էր: Դեմքը նիհարել էր, սրվել: Ուսերը լայնացել էին: Թարիքը սիրում էր հագնել ծալքով շալվարներ, սև փայլուն մոկասիններ ու կարճաթև վերնաշապիկներ, որոնք ընդգծում էին նրա՝ արդեն մկանուտ ձեռքերը՝ ամեն օր իր բակում հին, ժանգոտ մարզագնդերը բարձրացնելու արդյունքը: Դեմքը վերջերս կռվարար արտահայտություն էր ձեռք բերել: Խոսելիս սկսել էր գլուխը դիտավորյալ թեթևակի մի կողմ թեքել ու ծիծաղելիս բարձրացնել հոնքը: Մազերը երկարացրել էր ու սովորություն էր դարձրել մազերի փունջը հաճախ և անտեղի թափ տալ: Լպիրշ կիսաժպիտը նույնպես նորություն էր:

Վերջին անգամ, երբ Թարիքին դուրս վռնդեցին խոհանոցից, նրա մայրը նկատեց, որ Լեյլան հայացք ձգեց Թարիքի վրա: Լեյլայի սիրտը վեր թռավ, և աչքերը մեղավոր փայլեցին: Նա սկսեց կտրտած վարունգը արագ-արագ գցել աղի ջրով բացած մածունով սափորի մեջ: Բայց նա զգաց Թարիքի մոր հայացքը, նրա հասկացող խրախուսական կիսաժպիտը:

Տղամարդիկ լցրին իրենց ափսեներն ու բաժակները ու ճաշը տարան բակ: Երբ նրանք վերցրին իրենց բաժինը, կանայք ու երեխաները նստեցին գետնին՝ *սոֆրայի* շուրջը, ու սկսեցին ուտել:

Երբ *սոֆրան* հավաքեցին, ափսեները խոհանոցում իրար վրա դրեցին, և սկսվեց թեյ պատրաստելու իրարանցումը, որի ժամանակ պետք էր հիշել, թե ով էր սև ուզել, ով՝ կանաչ, Թարիքը գլխով նշան արեց ու դռնից դուրս սահեց:

Լեյլան սպասեց հինգ րոպե, հետո հետևեց նրան:

Գտավ նրան երեք տուն ներքև՝ երկու տների միջև նեղ դալանի պատին հենված: Նա քթի տակ երգում էր Ուստադ Ավալմիրի[99] հին փաշթո երգ:

---

[98] Հո բաչա (պարսկ.)՝ վատ տղա

[99] Ուստադ Ավալմիր (1931–1982)՝ փաշթո կոմպոզիտոր, երաժիշտ, երգիչ և բանաստեղծ

Դա զե մա զիբա վաթան,
Դա զե մա դադա վաթան:

Սա մեր գեղեցիկ երկիրն է,
Սա մեր սիրելի երկիրն է:

Եվ նա ծխում էր՝ ևս մի նոր սովորություն, որը ձեռք էր բերել այն տղաներից, որոնց հետ, ինչպես հայտնաբերել էր Լեյլան, վերջերս շփվում էր: Լեյլան տանել չէր կարողանում նրանց՝ Թարիքի այս նոր ընկերներին: Բոլորը նույն ձևով էին հագնվում՝ ծալքով շալվարներ ու պիրկ վերնաշապիկներ, որոնք ընդգծում էին նրանց թևերն ու կրծքավանդակը: Բոլորը չափից շատ օդեկոլոն էին օգտագործում, և բոլորը ծխում էին: Խմբերով շրջում էին թաղամասով, կատակ անում, բարձրաձայն ծիծաղում ու երբեմն նույնիսկ աղջիկների հետևից բղավում՝ դեմքերին նույն հիմար, ինքնահավան ժպիտները: Թարիքի ընկերներից մեկը, որը որոշ չափով նման էր Սիլվեստր Ստալոնեին, պնդում էր, որ իրեն «Ռեմբո» ասեն:

— Մայրդ կսպանի, եթե իմանա, որ ծխում ես,— ասաց Լեյլան՝ փողոցը մտնելուց առաջ աջ ու ձախ նայելով:

— Բայց նա չգիտի,— ասաց Թարիքը: Մի կողմ քաշվեց, որ տեղ տա:

— Միշտ այդպես չի լինի:

— Ո՞վ է պատմելու: Դո՛ւ:

Լեյլան ոտքը գետնին խփեց:

— Գաղտնիքդ քամուն թե պատմես, չմեղադրե՛ս ծառերին:

Թարիքը ժպտաց՝ մի հոնքը բարձրացնելով:

— Ո՞վ է դա ասել:

— Խալիլ Ջիբրանը[100]:

— Թիթիզ:

— Սիգարետ տո՛ւր:

---

[100] Ջիբրան Խալիլ Ջիբրան (1883–1931)՝ լիբանանցի և ամերիկացի գրող, բանաստեղծ, փիլիսոփա: Հայտնի է անգլերեն գրված «Մարգարե» գրքով: Բոլոր ժամանակների երրորդ լավագույն վաճառվող բանաստեղծն է Շեքսպիրից և Լաո Ցզիից հետո:

Նա բացասաբար օրորեց գլուխն ու ձեռքերը ծալեց կրծքին: Սա նրա կեցվածքի խաղացանկի նոր ձև էր՝ պատին հենված, ձեռքերը ծալած, սիգարետը բերանի անկյունից կախ, առողջ ոտքը անփութորեն ծալած:

— Ինչո՞ւ չէ:

— Վատ է քեզ համար,— ասաց նա:

— Քեզ համար վատ չէ՞:

— Աղջիկների համար եմ անում:

— Ի՞նչ աղջիկներ:

Նա հիմարավարի ժպտաց:— Կարծում են՝ սեքսուալ է:

— Սեքսուալ չի:

— Չէ՞:

— Հավատացնում եմ քեզ:

— Սեքսուալ չի՞:

— *Խիլայի*՝ ապուշի տեսք ունես:

— Վիրավորվեցի,— ասաց Թարիքը:

— Ի՞նչ աղջիկներ:

— Խանդում ես:

— Ես անտարբեր եմ, բայց հետաքրքրասեր:

— Չես կարող երկուսից էլ լինել:— Նա քաշեց սիգարետն ու աչքերը ծխի միջից կկոցեց:— Գրազ գամ՝ հիմա մեր մասին են խոսում:

Լեյլայի գլխում զնգում էր Մամիի ձայնը: Ձեռքում պահած սարյակի պես: Թուլացնես ձեռքդ՝ կթռչի կգնա: Խիղճը խայթեց նրան: Հետո Լեյլան իր ներսում լռեցրեց Մամիի ձայնը: Դրա փոխարեն վայելեց, թե ինչպես Թարիքն ասաց «մենք»: Ինչ հուզումնալից, ինչ դավադրական հնչեց դա նրա կողմից: Եվ ինչ հանգստացնող էր լսելը, որ նա ասաց դա սովորական, բնական ձևով: Մենք: Դա հաստատեց իրենց միջև կապը, բյուրեղացրեց այն:

— Իսկ ի՞նչ են ասում:

— Որ նավարկում ենք Մեղքի գետով,— ասաց,— ճաշակում ենք Անբարեպաշտության տորթը:

— Ճամփորդում ենք Անբարոյականության ռիկշայով,— ձայնակցեց Լեյլան:

— Սրբապղծության *քուրմա* ենք պատրաստում:

Երկուսով ծիծաղեցին: Հետո Թարիքը նկատեց, որ Լեյլայի մազերը երկարել են:— Սիրուն է,— ասաց:

Լեյլան հուսով էր, որ չի կարմրել:

— Թեման փոխեցիր:

— Ի՞նչ թեմա:

— Դատարկագլուխ աղջիկներ, որոնք կարծում են՝ դու սեքսուալ ես:

— Դու հո գիտես:

— Ի՞նչ գիտեմ:

— Որ միայն քեզ եմ տեսնում:

Լեյլայի սիրտը նվաղեց: Փորձեց կարդալ դա նրա դեմքին, բայց Թարիքի հայացքը անընթեռնելի էր. ուրախ, ապուշ ժպիտը չէր համապատասխանում նեղ աչքերի կիսահուսահատ արտահայտությանը: Խելացի հայացք, որը միտված էր լինելու ծաղրանքի և անկեղծության միջև:

Թարիքը հանգցրեց սիգարետը առողջ ոտքի կրունկով:

— Ի՞նչ ես մտածում այս ամենի մասին:

— Խնջույքի՞:

— Հիմա ո՞վ է տխմարը: Նկատի ունեմ մոջահեդներին, Լեյլա՛: Քաբուլ են գալիս:

— Ա՜հ:

Լեյլան սկսեց պատմել Բաբիի ասածները զենքի և մեծամտության տանջալից դաշինքի մասին, երբ լսեց տնից եկող իրարանցումի աղմուկը: Բարձր ձայներ: Ճիչեր: Լեյլան վազեց: Թարիքը կաղալով վազեց հետևից:

Բակում տուրուդմփոց էր: Դրա կենտրոնում երկու գռմռացող տղամարդիկ էին, որոնք գալարվում էին գետնին, իսկ նրանց արանքը դանակ էր: Լեյլան ճանաչեց դրանցից մեկին. ավելի վաղ նա սեղանի մոտ քաղաքականությունից էր խոսում: Մյուսն այն մարդն էր, որը քյաբաբի շամփուրներն էր հովհարում: Մի քանի տղամարդ փորձում էին նրանց բաժանել: Բաբին նրանց մեջ չկար: Նա կանգնած էր պատի մոտ՝ կռվողներից քիչ հեռու, Թարիքի հոր հետ, որը լացում էր:

Շրջապատի հուզված ձայներից Լեյլան պատառիկներ լսեց, որոնք համադրեց. քաղաքական սեղանի մոտ նստածը՝ փաշթունը,

Ահմադ Շահ Մասուդին դավաճան էր անվանել «Սովետների հետ 1980-ականներին գործարք կնքելու» համար: Քյաբաբի մարդը՝ տաջիկը, վիրավորվել էր ու հերքում պահանջել: Փաշթունը հրաժարվել էր: Տաջիկն ասել էր, որ եթե Մասուդը չլիներ, մյուս մարդու քույրը կշարունակեր սովետական զինվորներին «տալ»: Բանը հասել էր իրար հարվածելու: Նրանցից մեկը դանակ էր հանել: Պարզ չէր, թե ով:

Լեյլան սարսափով տեսավ, որ Թարիքը նետվել է ծեծկռտուքի մեջ: Տեսավ նաև, որ խաղաղարարներից մի քանիսը հիմա իրենք են հարվածներ հասցնում: Նրան թվաց՝ երկրորդ դանակը տեսավ:

Երեկոյան ավելի ուշ Լեյլան մտածում էր, թե ինչպես ծեծկռտուքը շարունակվեց գետնին, ինչպես տղամարդիկ սկսեցին իրար վրա ընկնել ծղրտոցների, գոռոցների, բղավոցների ու հարվածների ուղեկցությամբ, իսկ դրա մեջտեղում՝ ծամածռված Թարիքը՝ խառնված մազերով, արձակված ոտքով, որը փորձում է դուրս սողալ:

* * *

Ամեն ինչ սկսեց գլխապտույտ արագությամբ քանդվել:

Ղեկավարող խորհուրդը ձևավորվեց վաղաժամկետ և Ռաբանիին նախագահ ընտրեց: Մյուս խմբակցությունները դա խնամիականություն անվանեցին: Մասուդը խաղաղության և համբերության կոչ էր անում:

Հեքմաթյարը, որին խաղից հանել էին, վրդովված էր: Խազարները, որոնց դարերով երկար ճնշել ու անտեսել էին, փոթորկվեցին:

Վիրավորանքներ տեղացին: Փոխադարձ մեղադրանքներ հնչեցին: Պարսավանքներ: Հանդիպումները զայրալից չեղյալ հայտարարվեցին, դռները շրխկոցով փակվեցին: Քաղաքը շունչը պահեց: Լեռներում լիցքավորված պահունակները դրվեցին «կալաշնիկովների» մեջ:

Մինչև ատամները զինված մոջահեդները, որոնք այլևս ընդհանուր թշնամի չունեին, իրար մեջ թշնամի գտան:

Վերջապես եկավ Քաբուլի հատուցման օրը:

Եվ երբ Քաբուլի վրա սկսեցին տեղալ հրթիռները, մարդիկ վազեցին ծածկերի տակ: Մամին էլ մտավ ծածկի տակ բառացիորեն: Նա կրկին սև հագավ, գնաց իր սենյակ, փակեց վարագույրներն ու վերմակը քաշեց գլխին:

25

— Այդ սուլոցը,— Լեյլան ասաց Թարիքին,— այդ գրողի տարած սուլոցն եմ ամենից շատ ատում:

Թարիքը ըմբռնումով գլխով արեց:

Նույնիսկ ոչ այնքան սուլոցը, ավելի ուշ մտածեց Լեյլան, որքան դրա սկզբի և հարվածի միջև ընկած վայրկյանները: Անորոշության այդ կարճ ու անվերջ ձգվող ժամանակահատվածը: Անտեղյակությունը: Սպասումը: Ինչպես դատավճռին սպասող մեղադրյալ:

Հաճախ դա տեղի էր ունենում ճաշի ժամանակ, երբ ինքն ու Բաբին նստած էին սեղանի մոտ: Երբ սկսվում էր, գլուխները վեր էին ցցում: Լսում էին սուլոցը՝ պատառաքաղները օդի մեջ, բերանում չծամված ուտելիքը: Լեյլան տեսնում էր իրենց կիսալուսավորված դեմքերի արտացոլանքը սև պատուհանի մեջ, իրենց անշարժ ստվերները պատի վրա: Սուլոց: Հետո՝ պայթյուն, բարեբախտաբար, ուրիշ տեղ, որին հետևում էր արտաշնչելն ու գիտակցությունը, որ այս անգամ իրենց խնայել են, մինչդեռ մեկ այլ տեղ՝ վայնասունի ու խեղդող ծխի քուլաների մեջ, մագլցում են, մերկ ձեռքերով գժված փորում, բեկորներից քաշում հանում այն, ինչ մնացել է քրոջից, եղբորից, թոռից:

Բայց փրկված լինելու հակառակ կողմը հոգեվարք էր՝ արդյոք ո՞վ չի փրկվել: Ցուրաքանչյուր հրթիռային պայթյունից հետո Լեյլան, աղոթք մրմնջալով, վազում էր փողոց՝ համոզված, որ հաստատ, այս անգամ հաստատ մանրախոզի ու ծխի տակ թաղված գտնելու են Թարիքին:

Գիշերը Լեյլան, անկողնում պառկած, հետևում էր իր պատուհանին արտացոլվող հանկարծակի սպիտակ պայթյուններին: Լսում էր ավտոմատ հրազենի դղրդոցը ու հաշվում տան վերևում ոռնացող հրթիռները, իսկ տունը ցնցվում էր, և առաստաղից նրա վրա թափ-

վում էին սվաղի փաթիլները: Որոշ գիշերներ, երբ հրթիռի լույսը այնքան պայծառ էր, որ կարելի էր գիրք կարդալ, նրա աչքերին քուն չէր գալիս: Իսկ եթե գալիս էր, Լեյլայի երազները լի էին կրակով, պոկված վերջույթներով ու վիրավորների հառաչներով:

Առավոտը թեթևացում չէր բերում: Հնչում էր *մուեզինի* նամազի կանչը, մոջահեդները վայր էին դնում հրացանները, շրջվում դեպի արևմուտք և աղոթում: Այնուհետև հավաքվում էին գորգերը, լիցքավորում էին հրացանները, և լեռները կրակում էին Քաբուլի վրա, Քաբուլն էլ պատասխան կրակում էր լեռներին, իսկ Լեյլան և մնացած քաղաքը անօգնական նայում էր այնպես, ինչպես ծերուկ Սանտյագոն էր նայում, թե ինչպես են շնաձկները բզկտում իր բռնած ձկանը:

* * *

Ուր գնար Լեյլան, Մասուդի մարդկանց էր հանդիպում: Նրանք շրջում էին փողոցներում և ամեն մեկ-երկու հարյուր մետրի վրա կանգնեցնում մեքենաներն ու հարցաքննում: Տանկերի վրա նստած՝ ծխում էին՝ հագներին խակի զինվորական հագուստ և ամենագո *փակոլներ*: Խաչմերուկներում իրար վրա շարված ավազի պարկերի հետևից ծածուկ նայում էին անցորդներին:

Չնայած Լեյլան այլևս տնից դուրս չէր գալիս: Իսկ եթե դուրս էր գալիս, նրան միշտ ուղեկցում էր Թարիքը, որը կարծես հաճույք էր ստանում այս ասպետական պարտականությունից:

— Ատրճանակ եմ գնել,— ասաց նա մի օր:

Նստած էին դրսում՝ Լեյլայենց բակի տանձենու տակ: Ցույց տվեց ատրճանակը: Ասաց՝ կիսաավտոմատ է՝ «Բերետտա»: Լեյլայի համար այն պարզապես սև ու մահացու էր:

— Դուրս չի գալիս,— ասաց Լեյլան,— ատրճանակներից վախենում եմ:

Թարիքը պտտեց պահունակը:

— Անցյալ շաբաթ երեք մարմին են հայտնաբերել մի տան մեջ Քարթեի-Սեհում,— ասաց,— լսել էիր: Քույրեր: Բոլորին բռնաբարել էին: Կոկորդները կտրել: Ինչ-որ մեկը մատներից կրծելով հանել էր մատանիները: Երևում էր. ատամների տեղեր էին մնացել...

— Չեմ ուզում այդպիսի բաներ լսել:

— Չեմ ուզում տրամադրությունդ գցել,— ասաց Թարիքը,— բայց ես... ինձ ավելի լավ եմ զգում սրա հետ:

Այժմ նա էր փողոցում Լեյլայի փրկօղակը: Լսում էր խոսակցություններն ու փոխանցում Լեյլային: Թարիքը պատմեց, օրինակ, որ լեռներում տեղակայված զինյալները փորձարկում են իրենց նշանառությունն ու գրազ գալիս՝ կրակելով ներքևի քաղաքացիների՝ պատահական տղամարդկանց, կանանց, երեխաների վրա: Պատմեց, որ հրթիռներ են արձակում մեքենաների վրա, բայց ինչ-ինչ պատճառներով ոչ տաքսիների, ինչից Լեյլան հասկացավ, թե ինչու են մարդիկ վերջերս իրենց մեքենաները դեղին ներկում:

Թարիքը բացատրեց նրան Քաբուլի ներսի անվստահելի, փոփոխվող սահմանները: Լեյլան իմացավ, օրինակ, որ այս ճանապարհը՝ մինչև ձախ կողմի երկրորդ ակացիայի ծառը, պատկանում է մեկ ռազմական պարագլխի. հաջորդ չորս թաղամասերը, որոնք վերջանում են քանդված դեղատան կողքի հացթխարանով, մեկ այլ պարագլխի հատվածն են. իսկ եթե անցնի այդ փողոցն ու մեկ ու կես մղոն արևմուտք գնա, կհայտնվի ևս մեկ պարագլխի տարածքում, հետևաբար դիպուկահարի կրակի տակ կընկնի: Այսպես էին այժմ անվանում Մամիի հերոսներին: Պարագլուխներ: Լեյլան լսել էր, որ նրանց նաև *թոֆանգդար* են ասում՝ հրացանակիրներ: Մյուսները նրանց դեռևս *մոջահեդներ* էին անվանում, բայց ասելուց դեմքները ծաղրանքով ու նողկանքով ծամածռում էին, քանի որ բառը խոր զզվանք ու արհամարհանք էր առաջացնում: Ասես վիրավորանք լիներ:

Թարիքը պահունակը շխկացրեց ատրճանակի մեջ:

— Դու կկարողանա՞ս,— հարցրեց Լեյլան:

— Ի՞նչ:

— Այս բանն օգտագործել: Սրանով սպանել:

Թարիքը մտցրեց ատրճանակը ջինսի գոտկատեղը: Հետո ասաց մի բան, որը և՛ գեղեցիկ էր, և՛ սարսափելի:

— Քեզ համար,— ասաց,— քեզ համար սրանով կսպանեմ, Լեյլա՛:

Նա սահեց Լեյլայի մոտ, և նրանց ձեռքերը հպվեցին, հետո ևս մեկ անգամ: Երբ Թարիքի մատները անվստահորեն հպվեցին նրա

մատներին, Լեյլան թույլ տվեց: Եվ երբ հանկարծ Թարիքը խոնարհվեց ու շուրթերը սեղմեց նրա շուրթերին, Լեյլան նորից թույլ տվեց:

Այդ պահին Մամիի բոլոր խոսակցությունները հեղինակության և սարյակների մասին Լեյլային անէական թվացին: Նույնիսկ անհեթեթ: Այս բոլոր սպանությունների և թալանի, այս այլանդակության մեջ այս ծառի տակ նստելն ու Թարիքին համբուրելը անվնաս բան էր: Փոքրիկ բան: Հեշտ ներվող հաճույք: Այնպես որ Լեյլան թույլ տվեց, որ Թարիքը համբուրի, իսկ երբ նա հետ քաշվեց, Լեյլան ինքը ձգվեց ու համբուրեց նրան՝ սրտի բաբախյունը կոկորդում, այրվող դեմքով, փորի ներքևում՝ վառվող կրակ:

* * *

Այդ տարվա՝ 1992 թվականի հունիսին Արևմտյան Քաբուլում ծանր մարտեր էին ընթանում պարագլուխ Սայաֆի փաշթուն զորքերի և «Վահդաթ» խմբակցության խազարների միջև: Ռմբակոծությունից ընկնում էին էլեկտրական գծերը, փոշու էին վերածվում խանութներով ու տներով ամբողջ թաղամասեր: Լեյլան լսեց, որ փաշթուն զինյալները հարձակվում են խազարների տների վրա, ներխուժում են ու ամբողջ ընտանիքներ գնդակահարում մահապատժին հատուկ ձևերով, իսկ խազարներն ի պատասխան առևանգում են փաշթուն քաղաքացիներին, բռնաբարում փաշթուն աղջիկներին, գնդակոծում փաշթունների թաղամասերն ու անխտիր սպանում: Ամեն օր ծառերից կախված մարմիններ էին հայտնաբերվում՝ երբեմն անճանաչելիորեն այրված: Հաճախ կրակում էին նրանց գլխին, աչքերը հանում, լեզուները կտրում:

Բաբին կրկին փորձեց համոզել Մամիին հեռանալ Քաբուլից:

— Ամեն ինչ կկարգավորվի,— ասաց Մամին,— այս մարտերը ժամանակավոր են, կնստեն՝ մի բան կորոշեն:

— Ֆարիբա՛, այս մարդկանց միակ իմացած բանը պատերազմն է,— ասաց Բաբին,— նրանք սովորել են քայլել մի ձեռքով կաթի շիշը բռնած, մյուսով՝ ատրճանակը:

— *Դու* ո՞վ ես, որ այդպիսի բաներ ասես,— զայրացած պատասխանեց Մամին,— *Ջիհադում* կռվե՞լ ես: Հրաժարվե՞լ ես ունեցված-

քիցդ, վտանգվել ես կյանքդ: Եթե *մոջահեղները* չլինեին, մենք դեռ Սովետների ծառաները կլինեինք, հիշիր: Իսկ հիմա ուզում ես դավաճանենք նրանց:

— Մենք չենք դավաճանները, Ֆարիբա՛:

— Դե գնա՛: Աղջկադ վերցրո՛ւ ու փախի՛ր: Ինձ բացիկ կուղարկես: Բայց խաղաղություն է գալու, ու ես սպասելու եմ դրան:

Փողոցներն այնքան վտանգավոր դարձան, որ Բաբին աներևակայելի բան արեց. Լեյլային դպրոցից հանեց:

Բաբին ինքը ստանձնեց ուսուցման պարտականությունները: Մայրամուտից հետո ամեն օր Լեյլան գալիս էր նրա աշխատասենյակ, և մինչ Հեքմաթյարը քաղաքի հարավային ծայրամասերից հրթիռներ էր արձակում Մասուդի վրա, Բաբին ու Լեյլան քննարկում էին Հաֆեզի *ղազալները* և սիրված աֆղանցի բանաստեղծ Ուստադ Խալիլուլա Խալիլիի[101] ստեղծագործությունները: Բաբին սովորեցրեց Լեյլային քառակուսի հավասարումներ լուծել, ցույց տվեց ինչպես բազմանդամներ վերլուծել և պարամետրիկ կորեր գծել: Դասավանդելիս Բաբին վերափոխվում էր: Իր տարերքում՝ գրքերի մեջ, նա աճում էր Լեյլայի աչքերում: Նրա ձայնը կարծես թե գալիս էր ավելի հանգիստ, ավելի խոր տեղից, նա շատ ավելի քիչ էր աչքերը թարթում: Լեյլան պատկերացրեց, թե ինչպիսին էր նա ժամանակին, ինչպես էր ջնջում գրատախտակը նրբագեղ շարժումով, հայրաբար և ուշադիր հետևում աշակերտին:

Բայց կենտրոնանալը դժվար էր: Լեյլան անընդհատ շեղվում էր:

«Որքա՞ն է բուրգի մակերեսը»,— հարցնում էր Բաբին, իսկ Լեյլան մտածում էր Թարիքի շուրթերի ուռուցիկության մասին, բերանի վրա նրա տաք շնչի, նրա բաց շագանակագույն աչքերում իր արտացոլման մասին: Ծառի տակ համբուրելուց հետո Լեյլան ևս երկու անգամ համբուրել էր նրան՝ ավելի երկար, ավելի կրքոտ և Լեյլայի կարծիքով՝ պակաս անշնորհք: Երկու անգամն էլ գաղտնի հանդիպել էր նրան կիսախավար փողոցում, որտեղ Թարիքը սիգարետ էր ծխում Մամիի ճաշկերույթի օրը: Երկրորդ անգամ թույլ էր տվել դիպչել իր կրծքին:

---

[101] Խալիլուլա Խալիլի (1907–1987)՝ Աֆղանստանի 20-րդ դարում Աֆղանստանի ամենահեղինակավոր բանաստեղծներից, պատմաբան, համալսարանի պրոֆեսոր, դիվանագետ:

— Լեյլա՛:

— Այո՛, Բաբի՛:

— Բուրգը: Մակերեսը: Որտե՞ղ ես:

— Կներես, Բաբի՛, ես, ըրը... Տեսնենք: Բուրգը: Բուրգը: Հիմքի մակերեսի մեկ երրորդն անգամ բարձրություն:

Բաբին անվստահ տմբտմբացրեց գլուխը՝ հայացքը պահելով Լեյլայի վրա, իսկ նա մտածում էր Թարիքի ձեռքերի մասին, որոնք սեղմում են նրա կուրծքը, իջնում մեջքով ներքև, իսկ իրենք շարունակում են համբուրվել:

* * *

Այդ նույն հունիս ամսվա մի օր Ջիթին երկու դասընկերուհիների հետ դպրոցից տուն էր գնում: Ջիթիենց տնից երեք թաղամաս այնկողմ աղջիկներին պատահական հրթիռ խփեց: Այդ սարսափելի օրը Լեյլան իմացավ, որ Ջիթիի մայրը՝ Նիլան, վազել էր փողոց, որտեղ սպանվել էր Ջիթին, գոգնոցի մեջ հավաքել դստեր մարմնի կտորները՝ խելակորույս աղաղակելով: Ջիթիի նեխող աջ ոտքը՝ նեյլոնից գուլպայի և մանուշակագույն սպորտային կոշիկի մեջ, գտան երկու շաբաթ անց տանիքի վրա:

Ջիթիի *ֆաթիհայի՝* սպանությունների հաջորդ օրը, Լեյլան ցնցված նստեց լացող կանանց սենյակում: Առաջին անգամ մի մարդ, ում Լեյլան գիտեր, մոտիկ էր, սիրում էր, մահացավ: Նա չէր կարողանում մարսել այն անըմբռնելի իրականությունը, որ Ջիթին այլևս գոյություն չունի: Ջիթին, որի հետ Լեյլան դասի ժամանակ գաղտնի երկտողեր էր փոխանակում, որի եղունգներն էր փայլեցնում, որի կզակի մազերն էր ունելիով պոկում: Ջիթին, որ պատրաստվում էր ամուսնանալու դարպասապահ Սաբիրի հետ: Ջիթին մեռած էր: ***Մեռած:*** Կտոր-կտոր էր եղել: Վերջապես Լեյլան սկսեց լաց լինել իր ընկերուհու համար: Եվ այն բոլոր արցունքները, որոնք չէր կարողացել թափել եղբայրների հուղարկավորության ժամանակ, դուրս հորդացին:

26

Լեյլան հազիվ էր կարողանում շարժվել, կարծես բոլոր հոդերի մեջ ցեմենտ էին լցրել: Խոսակցությունը շարունակվում էր, և Լեյլան գիտեր, որ դա իրեն էլ է վերաբերում, բայց իրեն օտարված էր զգում. ընդամենը ականջ էր դնում: Թարիքը խոսում էր, իսկ Լեյլան պատկերացնում էր իր կյանքը որպես քրքրված պարան, որը կտրվում է, քանդվում, մանրաթելերը պոկվում ընկնում են:

1992 թվականի հեղձուկ օգոստոսն էր, նրանք Լեյլայի տան հյուրասենյակում էին: Մամին ամբողջ օրը ստամոքսի ցավ ուներ, և մի քանի րոպե առաջ, չնայած Հեքմաթյարը հարավից հրթիռներ էր արձակում, Բաբին նրան տարել էր բժշկի մոտ: Եվ այժմ Թարիքն էր այստեղ, նստած էր բազմոցին՝ Լեյլայի կողքին, նայում էր գետնին՝ ձեռքերը ծնկների արանքը:

Ասում էր, որ հեռանում է:

Թաղամասից չէ: Քաբուլից չէ: Աֆղանստանից ընդհանրապես:

Հեռանում է:

Լեյլայի աչքերի առաջ մթնեց:

— Որտե՞ղ, ո՞ւր ես գնում:

— Սկզբից Պակիստան: Փեշավար: Հետո չգիտեմ: Գուցե Հինդուստան: Իրան:

— Որքա՞ն ժամանակ:

— Չգիտեմ:

— Նկատի ունեմ՝ որքա՞ն ժամանակ գիտեիր սրա մասին:

— Մի քանի օր: Ուզում էի պատմել քեզ, Լեյլա՛, երդվում եմ, բայց չէի կարողանում ինձ ստիպել: Գիտեի՝ ինչքան կվշտանաս:

— Ե՞րբ:

— Վաղը:

— Վա՞ղը:

— Լեյլա՛, նայի՛ր ինձ:

— Վաղը:

— Հայրս է: Սիրտն էլ չի դիմանում այս կռիվներին ու սպանություններին:

Լեյլան դեմքը թաղեց ափերի մեջ, կրծքում աճում էր սարսափի գունդը:

Պետք է զգար, որ բանը այդտեղ է հասնելու, մտածեց Լեյլան: Գրեթե բոլոր ծանոթները հավաքել էին իրերն ու հեռացել: Թաղամասում ծանոթ դեմքեր չէին մնացել, ու հիմա՝ մոջահեդների խմբակցությունների միջև մարտերի սկզբից ընդամենը չորս ամիս անց, Լեյլան փողոցում այլևս գրեթե ոչ մեկին չէր ճանաչում: Հասինայի ընտանիքը մայիսին փախել էր Թեհրան: Վաջման ու նրա գերդաստանը նույն ամսին մեկնել էին Իսլամաբադ: Ջիթիի ծնողներն ու եղբայրները հեռացան հունիսին՝ Ջիթիի սպանությունից ոչ շատ անց: Լեյլան չգիտեր, թե ուր են գնացել, ասում էին՝ ճանապարհ են բռնել դեպի Մաշհադ, Իրան: Մարդկանց հեռանալուց հետո նրանց տները մի քանի օր դատարկ էին մնում, հետո կամ զինյալներն էին բնակվում, կամ անծանոթները:

Բոլորը հեռանում էին: Հիմա էլ Թարիքը:

— Իսկ մայրս արդեն երիտասարդ չէ,— ասում էր նա,— նրանք անընդհատ վախի մեջ են: Լեյլա՛, նայի՛ր ինձ:

— Դու պետք է ասեիր ինձ:

— Խնդրում եմ, նայի՛ր ինձ:

Լեյլան տնքաց: Հետո հեծկլտաց: Հետո լաց եղավ, իսկ երբ Թարիքը մոտեցավ, որ բութ մատով սրբի նրա այտը, Լեյլան մի կողմ հրեց նրա ձեռքը: Եսասիրական և անլուրջ էր դա, բայց Լեյլան զայրացած էր, որ Թարիքը լքում է իրեն, Թարիքը, որն ասես իր շարունակությունը լիներ, որի ստվերը ցանկացած հիշողության մեջ իր կողքին էր: Ինչպե՞ս կարող էր լքել իրեն: Լեյլան ապտակեց Թարիքին: Հետո մի հատ էլ ապտակեց ու քաշեց մազերը, և Թարիքը ստիպված բռնեց նրա դաստակներից ու ինչ-որ բան էր ասում, որը Լեյլան չէր հասկանում, ասում էր մեղմ, ողջամտորեն, ու ինչ-որ կերպ նրանք հայտնվեցին ճակատը ճակատին, քիթը քթին, և Թարիքի շունչը կրկին Լեյլայի շուրթերին էր:

Եվ երբ Թարիքը հանկարծ ավելի մոտեցավ, Լեյլան էլ մոտեցավ:

* * *

Հետագա օրերին ու շաբաթներին Լեյլան խելահեղորեն փորձում էր ամեն ինչ արձանագրել հիշողության մեջ, ամենը, ինչ տեղի ունեցավ հետո: Վառվող թանգարանից դուրս վազող արվեստի սիրահարի պես նա ճանկում էր, ինչ պատահի՝ հայացք, շշուկ, տնքոց, որպեսզի փրկի այն, պահպանի: Բայց ամենաանողոք կրակը ժամանակն է, և նրան, ի վերջո, չհաջողվեց ամեն ինչ փրկել: Մնաց սա. ներքևում այդ առաջին, ուժեղ սուր ցավը: Գորգի վրա արևի շեղ ընկած լույսը: Ինչպես կրունկը կպավ Թարիքի սառը կոշտ ոտքին, որն ընկած էր նրանց կողքին՝ անհամբեր արձակած: Նրա ձեռքերը Թարիքի արմունկներին: Թարիքի անրակի՝ շրջված մանդոլինի ձև ունեցող վառ կարմիր խալը: Թարիքի դեմքը իր դեմքի մոտ: Նրա սև, կախված գանգուրները, որոնք խուտուտ էին տալիս իր շրթունքները, կզակը: Ահը, որ իրենց կբռնացնեն: Զարմանքը սեփական համարձակությունից, քաջությունից: Տարօրինակ և աննկարագրելի հաճույքը՝ ցավի հետ միախառնված: Եվ հայացքները, Թարիքի բազում հայացքները. հասկացող, քնքուշ, ներում հայցող, ամոթահար, բայց հիմնականում, հիմնականում անհագ:

* * *

Հետո խառնաշփոթ էր: Վերնաշապիկները արագ կոճկվեցին, գոտիները կապվեցին, մազերը մատներով հարդարվեցին: Հետո նրանք նստեցին իրար կողքի՝ հոտերը միախառնված, կարմրած դեմքերով՝ ապշած, պապանձված պատահածի ահռելիությունից: Իրենց արածից:

Լեյլան գորգի վրա արյան երեք կաթիլ տեսավ՝ սեփական արյան, ու պատկերացրեց՝ ինչպես են ծնողները հետո նստում այս բազմոցին՝ անտեղյակ իր գործած մեղքից: Այժմ նրան համակեց ամոթի, մեղքի զգացումը, իսկ վերևում թկթկում էր ժամացույցը, և այդ ձայնը Լեյլայի ականջներին անչափ բարձր էր թվում: Ասես դատավորի մուրճը, որը շարունակ խփում է՝ դատապարտելով իրեն:

Հետո Թարիքն ասաց.

— Արի՛ ինձ հետ:

Մի պահ Լեյլան հավատաց, որ դա հնարավոր է: Նա, Թարիքն ու Թարիքի ծնողները միասին գնում են՝ հավաքում են պայուսակները, բարձրանում ավտոբուսը, հետևում թողնում այս ամբողջ բռնությունը և գնում օրինություն կամ դժբախտություն գտնելու, և ինչ էլ լինի՝ միասին կդիմագրավեն: Իրեն սպասվող մռայլ մեկուսացումից, սպանիչ մենությունից՝ դրանցից հնարավոր է խուսափել:

Ինքը կարող է գնալ: Նրանք կարող են միասին լինել:

Նման օրեր էլի կլինեն:

— Ուզում եմ ամուսնանալ քեզ հետ, Լեյլա՛:

Հատակին լինելուց հետո Լեյլան առաջին անգամ աչքերը բարձրացրեց և նայեց Թարիքին: Ուսումնասիրեց նրա դեմքը: Այս անգամ չարաճճիություն չկար: Նրա աչքերում համոզմունք կար, միամիտ, բայց անսասան լրջություն:

— Թարի՛ք...

— Թո՛ւյլ տուր ամուսնանալ քեզ հետ, Լեյլա՛: Այսօր: Այսօր կարող ենք ամուսնանալ:

Նա շարունակեց խոսել՝ մզկիթ գնալ, մոլլա գտնել, մի զույգ վկաներ, արագ *նիքա*... Բայց Լեյլան մտածում էր Մամիի մասին՝ մոջահեդի պես համառ և անդրդվելի, քենից ու հուսահատությունից շնչահեղձ, նա մտածում էր Բաբիի մասին, որն արդեն վաղուց հանձնվել էր, որը խեղճ, ողորմելի հակառակորդ էր Մամիին:

Երբեմն... թվում է՝ քեզանից բացի ոչ ոք չունեմ, Լեյլա՛:

Սրանք Լեյլայի կյանքի հանգամանքներն էին, դրա անխուսափելի ճշմարտությունը:

— Կակա Հաքիմից կխնդրեմ քո ձեռքը: Նա կտա իր օրինությունը, Լեյլա՛, ես գիտեմ:

Նա ճիշտ էր: Բաբին այդպես կվարվեր: Բայց դա նրան կցնցեր:

Թարիքը դեռ խոսում էր, նրա ձայնը մեկ իջնում էր, մեկ բարձրանում, մեկ աղաչում էր, մեկ համոզում, դեմքը մեկ հուսառատ էր, մեկ վիատ:

— Ես չեմ կարող,— ասաց Լեյլան:

— Մի՛ ասա այդպիսի բան: Ես քեզ սիրում եմ:

— Ների՛ր ինձ...

— Ես քեզ սիրում եմ:

Որքան էր սպասել այդ խոսքերին: Քանի անգամ էր երազել, որ դրանք կարտաբերվեն: Եվ ահա դրանք վերջապես ասվել են, ու դրանց հեգնանքը տապալեց նրան:

— Հորս չեմ կարող լքել,— ասաց Լեյլան,— ինձնից բացի՝ նա ոչ ոք չունի: Սիրտը չի դիմանա:

Թարիքը դա գիտեր: Գիտեր, որ Լեյլան չի կարող մի կողմ նետել իր կյանքի պարտավորությունները, ինչպես և ինքը, բայց շարունակում էր. նրա աղերսներն ու Լեյլայի առարկությունները, նրա առաջարկներն ու Լեյլայի ներողությունները, նրա արցունքներն ու Լեյլայի արցունքները:

Ի վերջո, Լեյլան ստիպեց նրան հեռանալ:

Դռան մոտ Լեյլան ստիպեց նրան խոստանալ, որ գնալու է առանց հրաժեշտ տալու: Փակեց դուռը: Մեջքով հենվեց դռանը ու մի ձեռքով՝ փորը, մյուսով բերանը բռնած՝ սկսեց դողալ դռանը հասցվող հարվածներից, իսկ Թարիքը խոսում էր դռան մյուս կողմից, խոստանում, որ կվերադառնա, որ կվերադառնա իր հետևից: Կանգնեց այդտեղ, մինչև Թարիքը հոգնեց, հանձնվեց, հետո լսեց նրա անհամաչափ ոտնաձայները, մինչև դրանք մարեցին, մինչև ամեն ինչ խաղաղվեց՝ բացառությամբ բլուրներից լսվող հրետակոծության և իր սրտի զարկերի՝ փորում, աչքերում, ոսկորներում:

27

Վստահաբար տարվա ամենաշոգ օրն էր: Լեռները թակարդի մեջ էին առել կիզիչ ջերմությունն ու ծխախեղդ էին անում քաղաքը: Էլեկտրականություն արդեն քանի օր է՝ չկար: Ամբողջ Քաբուլում չէին աշխատում էլեկտրական օդափոխիչները. ասես ծաղր լիներ:

Լեյլան անշարժ պառկած էր հյուրասենյակի բազմոցին ու վերնաշապիկով քրտնում էր: Յուրաքանչյուր արտաշունչ այրում էր քթի ծայրը: Նա տեղյակ էր, որ ծնողները խոսում են Մամիի սենյակում: Երկու գիշեր առաջ և անցյալ գիշեր նա արթնացել էր՝ կարծելով, որ ներքևից նրանց ձայներն են գալիս: Նրանք ամեն օր խոսում էին այն բանից հետո, երբ փամփուշտը դարպասում նոր ծակ արեց:

Դրսից եկավ հրետանու հեռավոր «բում»-ը, հետո ավելի մոտիկից՝ իրար հետևող երկարատև կրակահերթերի դխկդխկոցը:

Լեյլայի ներսում նույնպես պայքար էր ընթանում. մի կողմից՝ մեղքի զգացողություն՝ ամոթի հետ միախառնված, իսկ մյուս կողմից՝ համոզվածություն, որ իր և Թարիքի արածը մեղք չէ, որ դա բնական, լավ, գեղեցիկ, նույնիսկ անխուսափելի բան էր՝ բորբոքված այն գիտակցությամբ, որ իրենք հնարավոր է՝ երբեք այլևս իրար չտեսնեն:

Լեյլան շուռ եկավ կողքի ու փորձեց մի բան հիշել. մի պահ, երբ իրենք հատակին էին, Թարիքը ճակատը հպեց նրա ճակատին: Հետո հևոցով ինչ-որ բան հարցրեց՝ կամ «Ես քեզ ցա՛վ եմ պատճառում», կամ «Սա քեզ ցա՛վ է պատճառում»:

Լեյլան չէր կարողանում որոշել, թե ինչ էր ասել:

«Ես քեզ ցա՛վ եմ պատճառում»:

«Սա քեզ ցա՛վ է պատճառում»:

Ընդամենը երկու շաբաթ է, ինչ նա գնացել էր, իսկ դա արդեն տեղի էր ունենում: Ժամանակը բթացնում էր սուր հիշողությունների եզրերը: Լեյլան ճիգ գործադրեց: Ի՞նչ էր ասել նա: Հանկարծակի թվաց, որ կենսականորեն անհրաժեշտ է հիշել:

Լեյլան փակեց աչքերը: Կենտրոնացավ:

Ժամանակի հետ նա կհոգնի այս վարժանքից: Ուժասպառ կլինի կրկին ու կրկին վերականգնել, թոթափել, վերակենդանացնել մի բան, որը վաղուց մեռած է: Կգա մի օր՝ տարիներ անց, երբ Լեյլան այլևս չի ողբա Թարիքի կորուստը: Համենայն դեպս, ոչ այդքան անդադրում: Կգա մի օր, երբ նրա դեմքի մանրամասները կսկսեն մաքրվել հիշողությունից, երբ լսելով, որ փողոցում մայրը երեխային «Թարիք» է կանչում, նա այլևս չի կորցնի իրեն: Նա չի կարոտի Նրան այնպես, ինչպես հիմա, երբ Թարիքի բացակայության ցավը նրա մշտական անդուլ ուղեկիցն է՝ անդամահատ մարդու երևակայական ցավի պես:

Բացառությամբ այն հազվադեպ անգամների, երբ Լեյլան արդեն չափահաս կին կլինի ու վերնաշապիկ արդուկելիս կամ երեխաների ճոճանակը բրթելիս ինչ-որ առօրեական բան՝ ոտքերի տակի գորգի տաքությունը շոգ օրով կամ անծանոթ մարդու ճակատի

կորությունը, կհիշեցնի այդ օրը: Եվ ամեն ինչ կվերադառնա: Դրա ինքնաբուխ լինելը: Իրենց զարմանալի անզգուշությունը: Իրենց անփորձությունը: Դրա ցավը, դրա հաճույքը, դրա տխրությունը: Իրենց միաձուլված մարմինների ջերմությունը:

Ջրհեղեղի նման կլցվի ու Լեյլայի շունչը կկտրի:

Բայց դա կանցնի: Պահը կանցնի: Նա կմնա ունայնացած և ոչ մի այլ զգացում չի ունենա՝ բացի անորոշ անհանգստությունից:

Լեյլան որոշեց, որ Թարիքը ասել է «Ես քեզ ցա՛վ եմ պատճառում»: Այո՛: Այդպես է եղել: Լեյլան ուրախ էր, որ հիշեց:

Հետո Բաբին վերևի միջանցքից կանչեց, որ արագ բարձրանա:

— Համաձայնվեց,— ասաց Բաբին ճնշված, հուզմունքից դողացող ձայնով,— մենք գնում ենք, Լեյլա՛: Երեքով: Մենք հեռանում ենք Քաբուլից:

* * *

Մամիի սենյակում երեքով նստեցին մահճակալի վրա: Երկնքում սուրում էին հրթիռները. Հեքմաթյարի և Մասուդի ուժերը շարունակում էին կռվել: Լեյլան գիտեր, որ քաղաքում ինչ-որ տեղ ինչ-որ մեկը մահացել է, և փոշու զանգվածի վերածված, փլուզված ինչ-որ շենքի վրա կախվել է սև ծխի քողը: Առավոտյան ստիպված պետք է շրջանցեն դիակները: Որոշները կհավաքեն: Մյուսները՝ ոչ: Հետո Քաբուլի շները, որոնք հավանել են մարդու միսը, կսկսեն իրենց խրախճանքը:

Միևնույն ժամանակ Լեյլան այդ փողոցներով վազելու մեծ ցանկություն զգաց: Հազիվ էր զսպում իր ուրախությունը: Ստիպում էր իրեն նստած մնալ, ուրախությունից չճչալ: Բաբիի խոսքերով՝ սկզբից Պակիստան կգնան՝ մուտքի արտոնագրերի համար դիմելու: Պակիստան, որտեղ Թարիքն է: Թարիքը ընդամենը տասնյոթ օր առաջ է մեկնել, հուզված հաշվարկեց Լեյլան: Ա՜խ, եթե Մամին իր որոշումը տասնյոթ օր առաջ կայացներ, նրանք կարող էին միասին մեկնել: Հիմա նա Թարիքի հետ կլիներ: Բայց դա արդեն նշանակություն չուներ: Նրանք գնում էին Փեշավար՝ ինքը, Մամին ու Բաբին, նրանք այնտեղ կգտնեն Թարիքին ու նրա ծնողներին: Անշուշտ կգտնեն:

Նրանց փաստաթղթերը միասին քննության կառնեն: Այնուհետև՝ ո՞վ գիտի: Ո՞վ գիտի: Եվրոպա: Ամերիկա: Գուցե, ինչպես Բաբին միշտ ասում էր, ծովի մոտ մի տեղ...

Մամին կիսապառկած էր՝ գլուխը մահճակալի թիկնակին հենած: Աչքերն ուռած էին: Մազերը պոկոտել էր:

Երեք օր առաջ Լեյլան դուրս էր եկել՝ մաքուր օդ շնչելու: Կանգնել էր մուտքի դարպասների մոտ, հենվել դրանց վրա, երբ լսեց բարձր ճտտոց, ու ինչ-որ բան սուրաց աջ ականջի կողքով, ու աչքերի մեջ փայտի փոքրիկ բեկորներ թռան: Ջիթիի մահվանից, հազարավոր կրակահերթերից ու Քաբուլի վրա ընկած անհամար հրթիռներից հետո դարպասի այդ փոքրիկ ծակն էր՝ Լեյլայի գլխից երեք մատ հեռու, որն արթնացրեց Մամիին: Հասկացրեց, որ պատերազմն արդեն խլել է իր երկու զավակներին. այս վերջին պատերազմը կարող է խլել իր մինուճարին:

Սենյակի պատերից ժպտում էին Ահմադն ու Նուռը: Լեյլան տեսավ՝ ինչպես է հիմա Մամին մեղավոր հայացքը մի լուսանկարից մյուսը տանում: Ասես նրանց համաձայնությունը խնդրում: Նրանց օրհնությունը: Ասես ներում էր հայցում:

— Այստեղ մեզ պահող ոչինչ չկա,— ասաց Բաբին,— մեր տղաները չկան, բայց մենք դեռ ունենք Լեյլային: Մենք ունենք իրար, Ֆարիբա՛: Մենք կարող ենք նոր կյանք սկսել:

Բաբին ձգվեց մահճակալով, որ Մամիի ձեռքերը առնի ափերի մեջ, և նա թույլ տվեց: Դեմքին զիջելու արտահայտություն էր: Հանձնվելու: Նրանք բռնեցին իրար ձեռքից, իսկ հետո, լուռ գրկախառնված, օրորվեցին: Մամին դեմքը թաղեց նրա ուսի մեջ: Վերնաշապիկը բռունցքի մեջ առավ:

Այդ գիշեր Լեյլան ոգևորվածությունից ժամերով չէր կարողանում քնել: Անկողնում պառկած՝ նայում էր, թե ինչպես է հորիզոնը լուսավորվում նարնջագույնի և դեղինի շլացուցիչ երանգներով: Մի պահ, սակայն, չնայած ներքին հուզումին և դրսի հրետանային կրակին, քնով անցավ:

Ու երազ տեսավ:

Նրանք ծովափի եզրին են, նստած են վերմակի վրա: Սառը, ամպամած օր է, բայց Թարիքի կողքին՝ ուսերին գցած ծածկոցի

տակ, տաք է: Քամահար արմավենիների տակ՝ սպիտակ ներկած ցածր ցանկապատի հետևից, երևում են կայանված մեքենաներ: Քամին աչքերից արցունք է բերում, կոշիկները թաղվում են ավազի մեջ, մեռած խոտի խրձերը ավազաթմբի կոր եզրերից մեկից մյուսն են թռչում: Նրանք նայում են՝ ինչպես են հեռվում ճոճվում առագաստանավերը: Նրանց շուրջը որորները ճչում ու դողում են քամուց: Մակերեսային հողմաշունչ լանջերից քամին ավազի ևս մեկ ցայտուք է պոկում: Երգ հիշեցնող աղմուկ է լսվում, և Լեյլան Թարիքին պատմում է այն, ինչ Բաբին սովորեցրել էր երգող ավազի մասին:

Թարիքը տրորում է Լեյլայի ճակատը, սրբում ավազահատիկները: Լեյլայի աչքին ընկնում է Թարիքի մատանու փայլը: Լեյլայի մատին նույն մատանուց է՝ ոսկե, ամբողջը նախշով պաճուճազարդ:

«Իրոք այդպես է,— ասում է Լեյլան,— շփումից է, ավազահատիկը ավազահատիկին: Լսի՛ր»: Թարիքը լսում է: Խոժոռվում: Նրանք սպասում են: Կրկին ունկնդրում են: Հառաչող ձայն, երբ քամին մեղմ է, երբ ուժգին է՝ մլավող, բարձր ձայներով երգչախումբ:

* * *

Բաբին ասաց՝ կարող են վերցնել միայն ամենաանհրաժեշտը: Մնացածը կվաճառեն:

— Դրանով յոլա կգնանք Փեշավարում, մինչև աշխատանք գտնեմ:

Հաջորդ երկու օրը հավաքում էին վաճառելու իրերը: Մեծ կույտերով իրար վրա դնում:

Լեյլան իր սենյակում մի կողմ դրեց հին վերնաշապիկները, հին կոշիկները, գրքերը, խաղալիքները: Մահճակալի տակ գտավ ապակուց փոքրիկ դեղին կով, որը Հասինան հինգերորդ դասարանում տվել էր նրան դասամիջոցին: Ֆուտբոլային գնդակի ձևով պուճուրիկ բանալու կախազարդ՝ Ջիթիի նվերը: Փոքրիկ փայտյա զեբր՝ անիվների վրա: Կերամիկական տիեզերագնաց, որը ինքն ու Թարիքը մի օր գտել էին ջրափոսում: Նա վեց տարեկան էր, Թարիքը՝ ութ: Մի փոքր վիճել էին, հիշեց Լեյլան, թե ով էր այն գտել:

Մամին էլ էր հավաքում իրերը: Նրա շարժումներում դժկամություն կար, աչքերը քնով լի էին, բացակա: Նա ձերբազատվել էր իր լավ ափսեներից, անձեռոցիկներից, հագուստի մեծ մասից ու բոլոր զարդերից՝ բացի ամուսնական մատանուց:

— Դու սա չես վաճառում, չէ՞,— ասաց Լեյլան՝ բարձրացնելով Մամիի հարսանեկան զգեստը: Այն ջրվեժի պես թափվեց նրա ձեռքին: Լեյլան շոշափեց ժանյակներն ու պարանոցի ժապավենը, թևքերին ձեռքով կարված մանր մարգարիտները:

Մամին թոթվեց ուսերն ու ձեռքից առավ զգեստը: Կտրուկ շպրտեց այն հագուստի կույտի վրա: Ասես մի շարժումով պոկեց վերքի սպեղանին:

Ամենից ցավալին Բաբիի առաջադրանքն էր:

Լեյլան տեսավ նրան իր աշխատասենյակում կանգնած վիատ դեմքով իր դարակները ուսումնասիրելիս: Հագին Սան Ֆրանցիսկոյի կարմիր կամրջի պատկերով բանեցրած անթև վերնաշապիկ էր: Սպիտակ ջրերից խիտ մառախուղ էր բարձրանում ու պատում կամրջի աշտարակները:

— Հիշո՞ւմ ես հին կատակը,— ասաց Բաբին,— դու անապատում ես: Հետդ կարող ես հինգ գիրք վերցնել: Ո՞րը կընտրես: Երբեք չէի մտածի, որ ստիպված կլինեմ դա անել:

— Մենք քեզ համար նոր գրադարան կհավաքենք, Բաբի՛:

— Ը՛մմ...— տխուր ժպտաց նա,— հավատս չի գալիս, որ հեռանում եմ Քաբուլից: Այստեղ դպրոց եմ գնացել, առաջին աշխատանքս ստացել, այս քաղաքում հայր եմ դարձել: Տարօրինակ է մտածել, որ շուտով մեկ այլ քաղաքի երկնքի տակ եմ քնելու:

— Ինձ համար էլ է տարօրինակ:

— Ամբողջ օրը մտքումս Քաբուլի մասին այս պոեմն է: Սաիբ-էլ-Թաբրիզին է գրել, կարծում եմ՝ տասնյոթերորդ դարում: Ժամանակին ամբողջն անգիր գիտեի, բայց հիմա միայն այս երկտողն եմ հիշում.

«Անթիվ են նրա տանիքներին փայլող լուսինները,
Անթիվ են պատերի հետևում ծպտված հազար չքնաղ արևները»:

Լեյլան վեր նայեց ու տեսավ, որ հայրը լալիս է: Գոտկատեղից գրկեց նրան:

— Ա՛խ, Բաբի՛: Մենք կվերադառնանք: Երբ պատերազմն ավարտվի: Մենք կվերադառնանք Քաբուլ, *ինշալլահ*: Կտեսնես:

* * *

Երրորդ առավոտյան Լեյլան սկսեց իրերի կույտերը տեղափոխել բակ ու մուտքի դռան մոտ շարել: Տաքսի կկանչեն ու ամեն ինչ կտանեն գրավատուն:

Լեյլան հետուառաջ էր անում տան ու բակի միջև, բերում հագուստի ու սպասքի կույտերն ու Բաբիի գրքերը արկղը արկղի հետևից: Կեսօրին համարյա ուժասպառ էր, երբ մուտքի դռան մոտ իրերի բլուրը հասավ գոտկատեղին: Սակայն ամեն գնալ-գալիս նա գիտեր, որ մի փոքր մոտենում է Թարիքին տեսնելու ժամանակը, և ամեն անգամ նրա ոտքերը ավելի աշխույժ էին դառնում, իսկ ձեռքերը՝ ավելի անդադրում:

— Մեզ մեծ տաքսի պետք կգա:

Լեյլան նայեց վերև: Մամին էր կանչում իր ննջասենյակից: Պատուհանից դուրս էր նայում՝ արմունկները պատուհանագոգին: Պայծառ ու ջերմ արևը փայլում էր սպիտակող մազերին, ներս ընկած, նիհարած դեմքին: Մամիի հագին այն նույն վառ կապույտ զգեստն էր, որ հագել էր խնջույքի օրը՝ չորս ամիս առաջ, պատանեկան զգեստ, որը նախատեսված է երիտասարդ կնոջ համար, բայց մի պահ Մամին Լեյլային ծեր կին թվաց: Ծեր կին՝ ջլոտ ձեռքեր, ներս ընկած քունքեր, հոգնածության սև շրջանակներով դալուկ աչքեր. միանգամայն այլ կերպար, ոչ այն գիրուկ, կլորավուն դեմքով կինը, որը պայծառ ժպտում է հատիկավոր հարսանեկան լուսանկարներից:

— Երկու մեծ տաքսի,— ասաց Լեյլան:

Նա տեսավ նաև Բաբիին, որը հյուրասենյակում իրար վրա գրքերի տուփեր էր շարում:

— Բարձրացի՛ր վերև, երբ վերջացնես,— ասաց Մամին,— ճաշի կնստենք: Եփած ձվեր ու երեկվանից մնացած լոբի:

— Իմ սիրածը,— ասաց Լեյլան:

Հանկարծակի հիշեց իր երազը: Ինքն ու Թարիքը վերմակի վրա: Օվկիանոսը: Քամին: Ավազաբլուրները: Տեսնես ինչպիսին է երգող ավազների ձայնը, մտածեց նա:

Լեյլան կանգ առավ: Մի գորշ մողես դուրս եկավ գետնի ճաքից: Գլուխն արագ մի կողմից մյուսը պտտեց: Ծլկեց քարի տակ:

Լեյլան կրկին պատկերացրեց լողափը: Բայց այժմ ամեն ինչ երգում էր: Եվ աճում: Ավելի ու ավելի բարձր: Հեղեղեց ականջները: Ամեն ինչ խլացրեց: Որորներն այժմ փետրավոր նմանակողներ էին՝ անաղմուկ բացուխուփ էին անում կտուցները, իսկ ալիքները բախվում էին փրփուրով ու ցայտքերով, բայց առանց մռնչոցի: Ավազները շարունակում էին երգել: Հիմա ծղրտում էին: Ձայն, որ նման էր... զնգոցի՞: Չէ՛, զնգոցի չէ: Սուլոցի:

Լեյլան վայր գցեց գրքերը: Նայեց երկնքին: Ձեռքով ստվերեց աչքերը:

Այնուհետև ահռելի մռնչյուն:

Հետևից սպիտակ պայթյուն:

Գետինը փախավ ոտքերի տակից:

Տաք ու հզոր մի բան հետևից խփեց նրան: Շպրտեց: Օդ հանեց: Հիմա նա թռչում էր, ոլորվում ու պտտվում օդում, տեսնում էր երկինքը, ապա՝ երկիրը, երկինքը, երկիրը: Փայտի մեծ, այրվող կտոր թռավ կողքով: Թռան նաև հազարավոր ապակու կտորներ, և Լեյլային թվաց, որ կարող է տեսնել իր շուրջը թռչող յուրաքանչյուր բեկոր, որն անվերջ դանդաղ շրջվում է և արտացոլում արևի լույսը: Փոքրիկ, գեղեցիկ ծիածաններ:

Հետո Լեյլան խփվեց պատին: Ընկավ գետնին: Դեմքին ու ձեռքերին կեղտի ու մանրախճի անձրև տեղաց: Վերջինը, ինչ տեսավ, գետնին ոչ հեռու թրմփոցով ընկնող մի բան էր: Ինչ-որ արյունոտ կտոր: Դրա վրա խիտ մառախուղով պարուրված կարմիր կամուրջի կտոր:

* * *

Կերպարներ են շարժվում: Առաստաղից փայլում է ֆլուորեսցենտ լույսը: Հայտնվում է կնոջ դեմք, կախվում նրա դեմքի վրա:

Լեյլան վերադառնում է խավարի գիրկը:

* * *

Մեկ այլ դեմք: Այս անգամ տղամարդ է: Դիմագծերը խոշոր են ու թոշնած: Նրա շուրթերը շարժվում են, բայց ձայն չկա: Լեյլան միայն զնգոց է լսում:

Տղամարդը ձեռքով է անում իրեն: Խոժոռվում: Շուրթերը կրկին շարժվում են:

Ցավում է: Շնչելուց ցավում է: Ամեն տեղ ցավում է:

Մի բաժակ ջուր: Վարդագույն հաբ:

Վերադարձ դեպի խավար:

* * *

Կրկին այդ կինը: Երկար դեմք, իրար մոտ աչքեր: Նա ինչ-որ բան է ասում: Լեյլան զնգոցից բացի ոչինչ չի լսում: Բայց տեսնում է՝ ինչպես են բառերը խիտ սև մաթի պես թափվում կնոջ բերանից:

Կրծքավանդակը ցավում է: Ձեռքերն ու ոտքերը ցավում են:

Շուրջբոլորը կերպարներ են շարժվում:

Որտեղ է Թարիքը:

Ինչո՞ւ այստեղ չէ:

Մթություն: Աստղերի երամ:

* * *

Նա ու Բաբին ինչ-որ բարձր տեղ են նստել: Բաբին մատնացույց է անում գարու դաշտը: Միանում է գեներատորը:

Երկարադեմ կինը կանգնած է գլխավերևում ու ներքև է նայում:

Շնչելը ցավոտ է:

Ինչ-որ տեղ ակորդեոն է նվագում:

Ողորմածաբար, կրկին վարդագույն հաբը: Այնուհետև խոր լռություն: Ամեն ինչ պատում է խոր լռությունը:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

28

Մարիամ

— Ինձ ճանաչո՞ւմ ես:

Աղջկա աչքերը թպրտացին:

— Գիտե՞ս՝ ինչ է տեղի ունեցել:

Աղջկա բերանը ծռմռվեց: Նա փակեց աչքերը: Կուլ տվեց: Ձեռքով կպավ ձախ այտին: Ինչ-որ բան արտաբերեց:

Մարիամն ավելի մոտեցավ:

— Այս ականջով,— աղջիկն արտաշնչեց,— չեմ լսում:

* * *

Առաջին շաբաթը աղջիկը համարյա անընդհատ քնած էր շնորհիվ վարդագույն հաբերի, որոնց համար Ռաշիդը վճարել էր հիվանդանոցում: Երազում մռթմռթում էր: Երբեմն անհեթեթ բաներ էր խոսում, կանչում, Մարիամին անծանոթ անուններ տալիս: Քնած լացում էր, անհանգիստ դառնում, ծածկոցները ոտքով հետ շպրտում, և Մարիամը ստիպված էր պահել նրան: Երբեմն այնքան էր ործկում, որ Մարիամի ամբողջ տվածը հետ էր տալիս:

Երբ անհագիստ չէր, աղջիկը մռայլ աչքերով նայում էր վերմակի տակից ու արագ կարճ պատասխաններ արտաշնչում Մարիամի և Ռաշիդի հարցերին: Երբեմն իրեն երեխայի պես էր պահում, գլուխը կողքից կողք անում, երբ Մարիամը, ապա Ռաշիդը փորձում էին կերակրել նրան: Քարանում էր, երբ Մարիամը մոտենում էր նրան գդալով: Բայց արագ հոգնում էր և ի վերջո հանձնվում նրանց համառությանը: Դրան հետևում էր երկարատև լացը:

Ռաշիդն ու Մարիամը հակաբիոտիկ քսուքներ էին քսում աղջկա դեմքի ու պարանոցի կտրած վերքերի վրա, ուսի, ձեռքերի և ոտքերի ներքևի մասի խոր վերքերի կարերի վրա: Մարիամը վիրակապում էր դրանք, լվանում վիրակապերն ու կրկին օգտագործում: Փսխելու ժամանակ դեմքից հեռացնում էր աղջկա մազերը:

— Ինչքա՞ն է մնալու,— հարցրեց նա Ռաշիդին:

— Մինչև չլավանա: Նայի՛ր նրան: Ի վիճակի չի այսպես գնալու: Խեղճուկրակը:

* * *

Ռաշիդն էր գտել աղջկան, նա էր փորել հանել մանրախճի տակից:

— Բախտի բերմամբ տանն էի,— ասաց նա աղջկան: Նստած էր ծալովի աթոռի վրա՝ Մարիամի մահճակալի մոտ, որտեղ պառկած էր աղջիկը:— Քո բախտից, նկատի ունեմ: Սեփական ձեռքերով եմ քեզ փորել հանել: Ա՛յ այսչափ մետաղի կտոր էր... Ցույց տալու համար բացում էր բութ մատն ու ցուցամատը՝ Մարիամի գնահատմամբ առնվազն կրկնապատկելով դրա իրական չափը:— Ա՛յ այսքան մեծ: Ուսիցդ տնկված: Մխրճվել էր մեջդ: Կարծում էի՝ աքցանով ստիպված կլինեմ հանել: Բայց ամեն ինչ լավ է: Շատ շուտով կլինես *նատ ատչա*՝ նոփ-նոր:

Ռաշիդն էր փրկել Հաքիմի մի քանի գրքերը:

— Մեծ մասը մոխիր էր դարձել: Մնացածն էլ, վախենամ, կողոպտել են:

Առաջին շաբաթը Ռաշիդն օգնում էր Մարիամին աղջկա համար հոգ տանել: Մի օր աշխատանքից տուն եկավ նոր վերմակով ու բարձով: Մյուս օրը՝ դեղահաբերի շշով:

— Վիտամիններ,— ասաց:

Ռաշիդը Լեյլային լուր բերեց, որ իր ընկեր Թարիքի տունն այժմ զբաղեցրած է:

— Նվեր է,— ասաց,— Սայաֆի հրամանատարներից մեկի նվերը իր երեք մարդկանց: Նվեր: Հա-հա՛:

Երեք տղամարդիկ, պարզվեց, արևահար պատանեկան դեմքերով տղաներ էին: Մարիամը տեսնում էր նրանց, երբ անցնում էր

տան կողքով. միշտ իրենց զինվորական շորերով, Թարիքենց մուտքի դռան մոտ պպզած, խաղաթուղթ էին խաղում ու ծխում՝ «Կալաշնիկովները» պատին հենած: Դրանցից մկանուտը՝ ինքնահավան, արհամարհական տեսք ունեցողը, ղեկավարն էր: Ամենաերիտասարդը նաև ամենահանգիստն էր, որը, թվում էր, չէր ցանկանում ամբողջ սրտով ընդունել իր ընկերների անպատժելիությունը: Նա սովորաբար ժպտում էր ու *սալաամ* ասելով՝ գլուխ տալիս, երբ Մարիամը անցնում էր: Այդ ժամանակ նրա դեմքի ինքնագոհության մի մասը չքանում էր, և Մարիամը նկատում էր դեռ չաղճատված համեստության նշույլը:

Մի առավոտ այդ տան վրա հրթիռներ ընկան: Հետագայում ասում էին, որ դրանք արձակել էին Վահդատի խազարները: Հարևանները երկար ժամանակ գտնում էին տղաներից մնացած կտորներ:

— Տեղն է իրենց,— ասաց Ռաշիդը:

* * *

Աղջիկը անասելի բախտավոր էր, մտածում էր Մարիամը, որ համեմատաբար աննշան վնասվածքներով փրկվեց՝ հաշվի առնելով, որ հրթիռը նրա տունը ծխացող խիճի վերածեց: Եվ այդպիսով՝ աղջիկը դանդաղ լավացավ: Նա սկսեց ավելի շատ ուտել, սկսեց հարդարել իր մազերը: Ինքնուրույն լոգանք ընդունել: Սկսեց հաց ուտել ներքևում՝ Մարիամի և Ռաշիդի հետ:

Բայց հետո մի հիշողություն կգար անկոչ, ու կհետևեր քար լռություն կամ կոպտության պոռթկումներ: Ինքնամփոփվածություն և ուշագնացություններ: Տանջահար տեսք: Մղձավանջներ ու վշտի հանկարծակի գրոհներ: Փսխումներ:

Երբեմն ափսոսանքներ:

«Ես չպետք է այստեղ լինեի»,— ասաց նա մի օր:

Մարիամը փոխում էր սավանները: Աղջիկը, հատակին նստած, նայում էր՝ կապտուկներով ծնկները կրծքին մոտ:

«Հայրս ուզում էր արկղերը դուրս բերել: Գրքերը: Ասաց՝ դրանք չափազանց ծանր են ինձ համար: Բայց ես թույլ չտվեցի: Այնքան անհամբեր էի: Ես պետք է լինեի տանը, երբ դա պատահեց»:

Մարիամը օդ բարձրացրեց մաքուր սավանն ու թույլ տվեց, որ իջնի անկողնու վրա: Նայեց աղջկան՝ նրա շեկ գանգուրներին, բարակ պարանոցին ու կանաչ աչքերին, նրա բարձր այտոսկրերին ու ուռուցիկ շրթունքներին: Մարիամը հիշեց, որ տեսնում էր նրան փողոցներում փոքր ժամանակ մոր հետևից թանդուրի ճանապարհին շորորալիս՝ եղբոր ուսերը հեծած, կրտսեր եղբոր, որի ականջին մազի փունջ կար: Ատաղձագործի տղայի հետ քարկտիկ խաղալիս:

Աղջիկը նայում էր՝ կարծես սպասելով, որ Մարիամը իմաստուն խորհուրդ կտա, ոգևորող մի բան կասի... Բայց ինչ իմաստություն ուներ Մարիամը: Ի՞նչ քաջալերանք: Մարիամը հիշեց այն օրը, երբ թաղեցին Նանային, և ինչ փոքր մխիթարանք գտավ Միլլա Ֆայզուլլայի Ղուրանի մեջբերումից. «Օրհնյալ է Նա, ում ձեռքում է Թագավորությունը, և Ով ամենազորավորն է, Ով ստեղծել է մահն ու կյանքը, որպեսզի փորձության ենթարկի քեզ»: Կամ երբ Միլլան խոսեց իր մեղքի մասին՝ «Դրանք լավ մտքեր չեն, Մարիա՛մ ջո: Դրանք կկործանեն քեզ: Դա քո մեղքը չէ: Քո մեղքը չէ»:

Ի՞նչ ասեր այս աղջկան, որ թեթևացներ նրա բեռը:

Պարզվեց՝ Մարիամը ոչինչ էլ չպետք է ասեր: Քանի որ աղջկա դեմքն այլայլվեց, չորեքթաթ կանգնեց ու ասաց, որ փսխելու է:

— Սպասի՛ր: Համբերի՛ր: Թաս կբերեմ: Ո՛չ հատակին: Նոր եմ լվացել... Ա՛խ: Ա՛խ: ***Խոդայա:*** Աստված:

* * *

Հետո մի օր՝ աղջկա ծնողներին սպանած պայթյունից մոտ մեկ ամիս անց, մի տղամարդ թակեց դուռը:

Մարիամը բացեց դուռը: Տղամարդն ասաց՝ ինչ գործով է:

— Մի մարդ է եկել քեզ տեսնելու,— ասաց Մարիամը:

Աղջիկը բարձրացրեց գլուխը բարձից:

— Ասում է՝ անունը Աբդուլ Շարիֆ է:

— Ես ոչ մի Աբդուլ Շարիֆ չեմ ճանաչում:

— Դե, նա քեզ է հարցնում: Պետք է իջնես ու խոսես հետը:

29

Լեյլան նստեց Աբդուլ Շարիֆի դիմացը՝ նիհար, փոքր գլխով մարդու, որի հաստ քթին նույն խոր սպիներն էին փորված, ինչ նրա այտերին: Նրա կարճ շագանակագույն մազերը տնկված էին գլխին ասեղների բարձիկի պես:

— Ների՛ր ինձ, *համշիրա՛*,— ասաց նա՝ ուղղելով օձիքը ու թաշկինակով սրբելով ճակատը,— երևում է՝ ես դեռ չեմ լավացել: Եվս հինգ օր սրանցից՝ ինչ են սրանց ասում... սուլֆա հաբեր:

Լեյլան այնպես նստեց, որ աջ ականջը՝ առողջը, մոտ լինի:

— Դուք իմ ծնողների ընկերն էիք:

— Ո՛չ, ո՛չ,— արագ ասաց Աբդուլ Շարիֆը,— ների՛ր ինձ:

Նա բարձրացրեց մատը, մեծ կում արեց ջրից, որը Մարիամը դրել էր նրա առջև:

— Կարծում եմ՝ պետք է սկսեմ սկզբից: Սրբեց շրթունքները, հետո կրկին ճակատը:— Ես գործարար եմ: Հագուստի խանութներ ունեմ, հիմնականում տղամարդկանց հագուստի: *Չափաններ*, գլխարկներ, *թումբաններ*, կոստյումներ, փողկապներ՝ ինչ ուզես: Երկու խանութ այստեղ՝ Քաբուլում՝ Թայմանիում ու Շար-է-Նաուում, թեև վաճառեցի դրանք: Եվ երկուսը Պակիստանում՝ Փեշավարում: Պահեստս էլ է այնտեղ: Այնպես որ ես շատ եմ ճանապարհորդում, հետուառաջ եմ անում: Ինչը այս օրերին,— գլուխն օրորեց ու հոգնած քմծիծաղեց,— արի պարզապես ասենք՝ արկած է:

— Վերջերս գործով Փեշավարում էի, պատվերներ էի ընդունում, գույքագրում, նման բաներ: Ընտանիքիս էլ այցելեցի: Մենք երեք դուստր ունենք, *ալհամդուլելլահ*[102]: Ես նրանց ու կնոջս տեղափոխեցի Փեշավար, երբ մոջահեդները սկսեցին իրար կոկորդ կտրել: Չեմ ուզում նրանց անունները ավելացնեն *շահիդների* ցուցակին: Ոչ էլ իմ անունը, ճիշտն ասած: Շատ շուտով կմիանամ նրանց, *ինշալլահ*:

— Ինչևէ, նախորդ չորեքշաբթի պետք է վերադառնայի Քաբուլ: Բայց այնպես ստացվեց, որ հիվանդացա: Չեմ ուզում քեզ ձանձ-

---

[102] Ալհամդուլելլահ՝ փառք ու շնորհակալություն Աստծուն

րացնել, համշիրա՛, բավական է ասել, որ երբ անձնական գործս էի անում՝ երկուսից ամենապարզը, ասես ջարդած ապակու կտորներ դուրս գային միջից: Հեքմաթյարին էլ այդպիսի բան չէի ցանկանա: Կինս՝ Նադիա ջանը, Ալլահն օրհնի նրան, աղաչեց, որ բժշկի գնամ: Բայց կարծում էի, որ ասպիրինով ու շատ ջրով կբուժվեմ: Նադիա ջանը պնդում էր, ես ասում էի ոչ, այդպես շարունակ: Գիտե՞ս ասացվածքը՝ համառ էշին համառ հեծյալ է պետք: Այս անգամ, ցավոք, էշը հաղթեց: Էշը ես էի:

Նա խմեց մնացած ջուրը և բաժակը Մարիամին մեկնեց:

— Եթե շատ *զահմաթ*[103] չէ:

Մարիամը վերցրեց բաժակն ու գնաց, որ լցնի:

— Էլ չասեմ, որ պետք է կնոջս լսեի: Մեզանից նա է միշտ ավելի խելամիտը, Աստված նրան երկար կյանք տա: Երբ հիվանդանոց հասա, ջերմությունից այրվում էի ու ցնցվում, ինչպես *բեյդ*[104] ծառը քամուց: Հազիվ էի կանգնում: Բժիշկն ասաց՝ արյան թունավորում ունեմ: Ասաց՝ ևս երկու–երեք օր, ու կինս այրի կդառնար:

— Ինձ պառկեցրին հատուկ բաժանմունքում, ենթադրում եմ՝ ծանր հիվանդների համար նախատեսված: Օ՛, *թաշաքոր*:— Նա վերցրեց բաժակը Մարիամի ձեռքից ու բաձկոնի գրպանից մեծ սպիտակ հաբ հանեց:— Սրանց չափսը:

Լեյլան նայում էր, թե ինչպես է կուլ տալիս հաբը: Զգում էր, որ շնչառությունն արագացել է: Ոտքերը ծանրացել էին, ասես դրանց կշռաքարեր էին կապել: Ինքն իրեն ասաց, որ տղամարդը դեռ չի վերջացրել, դեռ ոչինչ չի պատմել: Բայց մեկ վայրկյանից նա կշարունակի, և Լեյլան դիմադրում էր, որ վեր չթռնի ու չհեռանա, չհեռանա, նախքան կպատմի այն, ինչ ինքը չէր ուզում լսել:

Աբդուլ Շարիֆը դրեց բաժակը սեղանին:

— Ահա այստեղ հանդիպեցի ընկերոջդ՝ Մոհամադ Թարիք Վալիզային:

Լեյլայի սրտխփոցն արագացավ: Թարիքը՝ հիվանդանոցո՞ւմ: Հատուկ բաժանմունքո՞ւմ: Շատ ծանր հիվանդների համա՞ր:

---

[103] Զահմաթ (պարսկ.)՝ նեղություն, անհանգստություն

[104] Բեյդ՝ բարակ ծառ

Նա կուլ տվեց չոր թուքը: Անհագիստ շարժվեց աթոռին: Պետք է զգաստանա: Այլապես լրիվ կկորցնի իրեն: Նա միտքը շեղեց հիվանդանոցներից ու հատուկ բաժանմունքներից, ու փոխարենը մտածեց, որ վերջին անգամ լսել է Թարիքի լրիվ անունը տարիներ առաջ, երբ երկուսով գրանցվել էին ֆարսիի ձմեռային դասընթացի: Ուսուցիչը զանգից հետո ներկա–բացակա էր անում և այդպես էր ասում նրա անունը՝ Մոհամադ Թարիք Վալիզայի: Այդ ժամանակ Լեյլային զավեշտալի էր թվում նրա լրիվ անունը լսելը:

— Բուժքույրերից մեկից լսեցի, թե ինչ էր պատահել նրան,— վերսկսեց Աբդուլ Շարիֆը ու բռունցքով խփեց կրծքին, ասես ուզում էր հեշտացնել հաբի ճանապարհը:— Փեշավարում այնքան ժամանակ էի անցկացրել, որ բավականին լավ տիրապետում էի ուրդուին: Հասկացա, որ ընկերդ փախստականների հետ՝ ընդամենը քսաներեք հոգի, բեռնատարով Փեշավար էր գնում: Սահմանի մոտ փոխհրաձգություն էր եղել: Բեռնատարի վրա հրթիռ էր ընկել: Հավանաբար պատահականորեն, բայց այդ մարդկանց չգիտես, երբեք չես իմանա: Ընդամենը վեց հոգի էր ողջ մնացել, բոլորին նույն բաժանմունքն էին բերել: Քսանչորս ժամվա ընթացքում երեքը մահացան: Երկուսը ողջ մնացին՝ քույրեր, որքան հասկացա, ու նրանց դուրս գրեցին: Ընկերդ՝ պարոն Վալիզային, վերջինն էր: Գրեթե երեք շաբաթ այդտեղ էր, երբ ես եկա:

Ուրեմն նա ողջ էր: Բայց որքա՞ն ծանր էր վիրավորված: Լեյլան անհանգիստ մտածում էր: Որքա՞ն ծանր: Պարզ է՝ բավական ծանր, որ հատուկ բաժանմունք էին տարել: Լեյլան զգաց, որ քրտնում է, դեմքը վառվում է: Փորձեց ուրիշ բանի մասին մտածել, ինչ–որ հաճելի բանի, օրինակ՝ Թարիքի ու Բաբիի հետ Բամիյանի Բուդդաների մոտ ճամփորդության: Բայց փոխարենը աչքի առաջ եկավ Թարիքի ծնողների պատկերը, մայրը՝ բեռնատարի մեջ թակարդված, գլխիվայր, ծխի միջից կանչում է Թարիքին՝ ձեռքերն ու կուրծքը կրակի մեջ, կեղծամը հալվում է գլխին...

Լեյլան ստիպված արագ մի քանի շունչ քաշեց:

— Նա կողքի մահճակալին էր: Պատեր չկային, մեր միջև միայն վարագույր էր: Ես նրան շատ լավ էի տեսնում:

Աբդուլ Շարիֆին հանկարծ պետք եկավ հարսանեկան մատանու հետ խաղալ: Հիմա ավելի դանդաղ էր խոսում:

— Ընկերդ շատ, շատ ծանր վիրավոր էր, հասկանում ես: Ամեն տեղից ռետինե խողովակներ էին տնկված: Սկզբում...— նա մաքրեց կոկորդը,— սկզբում մտածում էի, որ երկու ոտքն էլ պայթյունի ժամանակ է կորցրել, բայց բուժքույրն ասաց՝ ոչ, միայն աջը, ձախը հին վնասվածք էր: Ներքին վնասվածքներ էլ կային: Արդեն երեք անգամ վիրահատել էին: Աղիների մասեր հեռացրել, չեմ հիշում՝ էլ ինչ: Եվ նա այրված էր: Շատ ծանր: Այդքանը կասեմ: Համոզված եմ՝ դու քո մղձավանջներն ունես, համշիրա՛: Ավելացնելու կարիք չկա:

Թարիքը հիմա անոտ էր: Նա երկու ծայրատ ոտքով իրան է: Անոտ: Լեյլան մտածեց, որ ուշքը կկորցնի: Մտածված, հուսահատ ջանքերով նա միտքն ուղղեց սենյակից դուրս, պատուհանից դուրս, հեռու այդ մարդուց, փողոցից այն կողմ, հեռու քաղաքից ու դրա տափակ կտուրներով տներից, շուկաներից ու նեղ փողոցների լաբիրինթոսից, որոնք ավազի ամրոցներ էին դարձել:

— Ժամանակի մեծ մասը նա դեղերի ազդեցության տակ էր: Ցավի դեմ, հասկանում ես: Բայց այն պահերին, երբ դեղերի ազդեցությունը թուլանում էր, նրա միտքը պարզվում էր: Ցավի մեջ, բայց պարզ մտքով: Ես մահճակալիցս զրուցում էի հետը: Պատմեցի, թե ով եմ, որտեղից եմ: Կարծում եմ՝ ուրախ էր, որ կողքին *համվաթան* է:

— Մեծ մասամբ ես էի խոսում: Նա դժվարանում էր: Ձայնը խռպոտ էր, և կարծում եմ՝ շուրթերը շարժելը ցավ էր պատճառում: Ես նրան պատմեցի դուստրերիս մասին, Փեշավարի մեր տան մասին, ծածկապատշգամբի մասին, որը ես ու աներձագս կառուցում ենք տան հետևում: Պատմեցի, որ վաճառել եմ Քաբուլի խանութները ու վերադառնում եմ, որ վերջացնեմ փաստաթղթերի ձևակերպումը: Շատ բան չէ: Բայց դա նրան զբաղեցնում էր: Համենայն դեպս, ուզում եմ այդպես մտածել:

— Երբեմն նա էլ էր խոսում: Կեսից շատը չէի հասկանում, բայց որոշ չափով կռահում էի: Նա նկարագրում էր, թե որտեղ էր ապրել: Պատմեց Ղազնիում հորեղբոր մասին: Մոր կերակուրների ու հոր ատաղձագործության մասին, ակորդեոն նվագելու մասին:

— Բայց հիմնականում խոսում էր քեզնից, *համշիրա՛*: Ասաց, որ դու... ինչպե՞ս ասաց... իր ամենավաղ հիշողությունն ես: Կարծում եմ՝ այդպես, հա: Ես հասկացա, որ շատ էր սիրում քեզ: *Բալայ*՝ դա ակնհայտ էր: Բայց ասաց՝ ուրախ է, որ դու այնտեղ չես: Ասաց, որ չէր ցանկանա՝ իրեն այդպես տեսնես:

Լեյլայի ոտքերը նորից ծանրացան, խարսխվեցին գետնին, կարծես ամբողջ արյունը ներքև իջավ: Բայց նա մտքով հեռու էր, ազատ սուրում էր Քաբուլի վրայով հրթիռի պես՝ ժայռոտ գորշ բլուրների, օշինդրի թնջուկներով պատված անապատների, ատամնավոր կարմիր քարերով ձորերի, կեղտոտ ու ձյունածածկ լեռների...

— Երբ ասացի, որ վերադառնում եմ Քաբուլ, նա խնդրեց քեզ գտնել: Ասել, որ մտածում է քո մասին: Որ կարոտում է քեզ: Ես խոստացա, որ կանեմ: Հասկանում ես, շատ էի հավանել նրան: Երևում էր, որ շատ կարգին տղա էր:

Աբդուլ Շարիֆը թաշկինակով սրբեց ճակատը:

— Մի գիշեր արթնացա,— շարունակեց նա՝ կրկին հետաքրքրված իր հարսանեկան մատանիով,— կարծում եմ՝ գիշեր էր, ամեն դեպքում այդպիսի տեղերում դժվար է կողմնորոշվել: Պատուհաններ չկան: Արևաածագ, արևամուտ՝ չգիտես: Բայց ես արթնացա, ու կողքիս մահճակալի մոտ ինչ-որ իրարանցում էր: Պետք է հասկանաս, որ ես ինքս էլ դեղերի ազդեցության տակ էի, մեկ ուշքի էի գալիս, մեկ՝ ուշագնաց լինում, դժվար էր ասել, թե ինչն էր իրական, ինչը՝ երազ: Միայն հիշում եմ, որ բժիշկներ էին հավաքվել մահճակալի շուրջը, տարբեր բաներ էին պահանջում, ահազանգեր էին հնչում, ամբողջ հատակը ծածկված էր ներարկիչներով:

— Առավոտյան մահճակալը դատարկ էր: Հարցրի բուժքրոջը: Ասաց, որ նա մինչև վերջ պայքարում էր:

Լեյլան աղոտ գիտակցում էր, որ գլխով է անում: Ինքը գիտեր: Իհարկե գիտեր: Գիտեր այն պահից, երբ նստեց այդ մարդու դիմաց, թե ինչու էր նա այստեղ, ինչ նորություն էր բերում:

— Սկզբում, գիտե՞ս, սկզբում ես համոզված չէի, որ դու նույնիսկ գոյություն ունես,— հիմա ասում էր նա,— մտածում էի՝ մորֆինն է ազդում: Գուցե նույնիսկ հույս էի տածում, որ գոյություն չունես: Միշտ սոսկում եմ վատ նորություններ բերելուց: Բայց խոստացել էի նրան:

Եվ, ինչպես ասացի, սիրեցի նրան: Մի քանի օր առաջ եկա այստեղ: Քո մասին հարցուփորձ արեցի, զրուցեցի մի քանի հարևանների հետ: Նրանք այս տունը ցույց տվեցին: Պատմեցին նաև, թե ինչ է պատահել ծնողներիդ: Երբ լսեցի դրա մասին, դե, շրջվեցի ու հեռացա: Չէի ուզում պատմել քեզ: Որոշեցի, որ չափազանց շատ կլինի քեզ համար: Ցանկացածի համար:

Աբդուլ Շարիֆը ձգվեց սեղանով ու ձեռքը դրեց Լեյլայի ծնկին:

— Բայց ես վերադարձա: Որովհետև, ի վերջո, կարծում եմ՝ նա կցանկանար, որ դու իմանաս: Այդպես եմ կարծում: Շատ եմ ցավում: Կցանկանայի...

Լեյլան այլևս չէր լսում: Նա հիշում էր այն օրը, երբ Փանջշիրից մարդը եկավ Ահմադի ու Նուռի մահվան մասին լուրով: Հիշեց սպիտակ դեմքով Բաբիին՝ բազմոցին ընկած, ու Մամիին, որի ձեռքը թռավ բերանի մոտ, երբ լսեց: Լեյլան տեսավ՝ ինչպես Մամին իրեն կորցրեց այդ օրը, և դա վախեցրեց իրեն, բայց իրական վիշտ չզգաց: Ինքը չհասկացավ մոր կորստի սարսափելիությունը: Հիմա մեկ ուրիշ օտարական բերում է մեկ այլ մահվան լուր: Հիմա ինքն է նստած աթոռին: Արդյո՞ք սա իր պատիժն էր, իր մոր տառապանքին անկարեկից լինելու պատիժը:

Լեյլան հիշեց, որ Մամին ընկավ գետնին, ծղրտաց, սկսեց մազերը պոկել: Բայց Լեյլան դա էլ չէր կարողանում անել: Հազիվ էր շարժվում: Հազիվ էր կարողանում մկանները շարժել:

Փոխարենը նստեց աթոռին՝ ձեռքերը ծնկներին թույլ ընկած, աչքերը դատարկ, ու թույլ տվեց, որ միտքը սավառնի: Սավառնի, մինչև գտնի այն տեղը՝ լավ ապահով վայրը, որտեղ գարու դաշտերը կանաչ են, որտեղ ջուրը զուլալ է, իսկ բամբակի սերմերը հազարներով պարում են օդի մեջ. որտեղ Բաբին գիրք է կարդում ակացիայի տակ, Թարիքը, ձեռքերը կրծքին, նիրհում է, իսկ նա ոտքերը կիջեցնի առվի մեջ ու կերազի լավ ժամանակների մասին արևակեզ քարե հինավուրց աստվածների զգոն հայացքի ներքո:

30

Մարիամ

— Շատ եմ ցավում,— ասաց Ռաշիդը աղջկան՝ Մարիամից վերցնելով *մասթավայով*[105] ու կոլոլակներով ամանը առանց նրա դեմքին նայելու:— Ես գիտեմ, որ դուք շատ մոտիկ... ընկերներ էիք... դուք՝ երկուսդ: Միշտ միասին, մանուկ հասակից: Ահավոր բան է տեղի ունեցածը: Այնքան շատ աֆղան տղամարդիկ են այսպես մահանում:

Նա անհամբեր ձեռքով արեց՝ շարունակելով նայել աղջկան, և Մարիամը նրան տվեց անձեռոցիկը:

Տարիներ շարունակ Մարիամը նայում էր՝ ինչպես է նա ուտում, ինչպես են աշխատում քունքերի մկանները, ինչպես է մի ձեռքով բրնձե գնդիկներ սարքում, մյուս ձեռքի հետևի մասով սրբում բերանի անկյունների յուղն ու փշրանքները: Տարիներ շարունակ նա կերել է գլուխը կախ, առանց խոսելու, դատապարտող լռության մեջ՝ ասես վճիռ կայացնելով, որն ընդհատվում է միայն մեղադրական մռթմռթոցով, լեզվի դժգոհ չպպոցով, մեկբառանի հրամանով՝ էլի՛ հաց, էլի՛ ջուր:

Այժմ նա գդալով էր ուտում: Անձեռոցիկ էր օգտագործում: Ջուր խնդրելիս *լոթֆան*[106] էր ասում: Եվ խոսում էր: Ոգևորված ու անընդհատ:

— Եթե ինձ հարցնես, ամերիկացիները սխալ մարդու են զինել՝ ի դեմս Հեքմաթյարի: Այդ ամբողջ զենքը, որ ԿՀՎ[107]-ն հանձնեց նրան ութսունականներին, որ Սովետների դեմ կռվի: Սովետները գնացին, բայց նա դեռ զենք ունի ու հիմա ուղղում է այն քո ծնողների պես անմեղ մարդկանց վրա: Անունն էլ դրել է *ջիհադ*: Ինչպիսի՛ զավեշտ: *Ջիհադն* ինչ կապ ունի կանանց ու երեխաներին սպանելու հետ: Ավելի լավ կլիներ՝ ԿՀՎ-ն հրամանատար Մասուդին զիներ:

---

[105] Մասթավա՝ սիսեռով, բրնձով ու աղ դրած չորացրած մսով աֆղանական կերակուր

[106] Լոթֆան (պարսկ.)՝ խնդրում եմ

[107] ԱՄՆ Կենտրոնական հետախուզական բյուրո

Մարիամի հոնքերը անկախ իրենից ճակատին թռան: Հրամանատար Մասուդին: Նրա ականջին էր դեռ, թե ինչպես էր Ռաշիդը փնովում Մասուդին, նրան դավաճան ու կոմունիստ անվանում: Բայց Մասուդը տաջիկ էր իհարկե: Լեյլայի պես:

— Ա՛յ խելամիտ մարդ: Պատվելի աֆղան: Մեկը, որն իսկապես շահագրգռված է, որ խաղաղություն հաստատվի:

Ռաշիդը թոթվեց ուսերն ու հառաչեց:

— Չնայած, ասեմ քեզ, Ամերիկան էլ թքած ունի: Ի՞նչ պետքներն է, որ փաշթունները, խազարները, տաջիկներն ու ուզբեկները սպանում են իրար: Քանի՞ ամերիկացի կա, որ կարող է մեկին մյուսից տարբերել: Նրանցից օգնություն մի՛ ակնկալեք, ասում եմ: Այժմ, երբ Սովետը փլուզվեց, մենք այլևս նրանց պետք չենք: Մենք մեր նպատակին ծառայեցինք: Նրանց համար Աֆղանստանը *քենաքաք* է՝ արտաքնոց: Կներես, որ արտահայտվեցի, բայց դա ճիշտ է: Ի՞նչ ես կարծում, Լեյլա՛ ջան:

Աղջիկը ինչ-որ անհասկանալի բան մռթմռթաց ու կոլոլակը ափսեով գլորեց:

Ռաշիդը մտածկոտ գլխով արեց, կարծես աղջիկը իր լսած ամենախելացի բանն ասաց: Մարիամը ստիպված մի կողմ նայեց:

— Գիտե՞ս, հայրդ, Աստված նրան խաղաղություն պարգևի, հայրդ ու ես նման քննարկումներ ենք ունեցել: Նախքան քո ծնվելը, իհարկե: Միշտ քաղաքականությունից էինք խոսում: Գրքերի մասին էլ: Չէ՞, Մարիա՛մ: Դու հիշում ես:

Մարիամը ձևացրեց, թե ջուր է խմում:

— Ինչևէ, հույս ունեմ, թե քեզ չեմ ձանձրացնում քաղաքականության մասին այս խոսակցություններով:

Հետո Մարիամը խոհանոցում օճառաջրի մեջ լվանում էր ամանները՝ փորում ցավոտ կծիկ:

Ոչ այնքան Ռաշիդի ասածը՝ ակներև ստերը, կեղծ կարեկցանքը, նույնիսկ ոչ այն փաստը, որ աղջկան աղյուսների տակից հանելուց հետո նա ձեռք չէր բարձրացրել Մարիամի վրա:

Պատճառը Ռաշիդի բեմական պահվածքն էր: Դերասանությունը: Տպավորելու խորամանկ ու ողորմելի փորձը: Հմայելու փորձը:

Հանկարծ Մարիամը հասկացավ, որ իր կասկածները ճիշտ էին: Հասկացավ սարսափով, ասես մեկը գլխին կուրացնող հարված հասցրեց, որ այն, ինչին նա ականատես էր, ոչ այլ ինչ է, քան սիրահետում:

* * *

Վերջապես խիզախություն հավաքելով՝ Մարիամը գնաց Ռաշիդի սենյակը:

Ռաշիդը վառեց սիգարետն ու հարցրեց.

— Ինչո՞ւ չէ:

Մարիամը հենց այդ պահին հասկացավ, որ պարտվել է: Նա ինչ-որ տեղ սպասում էր, հույս ուներ, որ Ռաշիդն ամեն ինչ կմերժի, կձևացնի, որ զարմացած է, գուցե նույնիսկ վրդովված է իր ենթադրությունից: Այդ դեպքում Մարիամը առավելություն կունենար: Գուցե հաջողվեր ամոթանք տալ: Բայց նրա հանգիստ խոստովանությունից, առօրեական տոնից հետո Մարիամի արիությունից ոչինչ չմնաց:

— Նստի՛ր,— ասաց Ռաշիդը: Նա պառկած էր մահճակալին՝ մեջքը դեպի պատը, հաստ երկար ոտքերը դոշակի վրա չռած:— Նստի՛ր, քանի ուշքդ չես կորցրել ու գլուխդ ճղել:

Մարիամն ընկավ անկողնու կողքի ծալովի աթոռի վրա:

— Մոխրամանը փոխանցի՛ր,— ասաց Ռաշիդը:

Մարիամը հնազանդորեն փոխանցեց:

Ռաշիդը պետք է որ վաթսուն կամ ավելի տարեկան լիներ... թեև Մարիամը, իրականում նույնիսկ Ռաշիդը չգիտեր իր ճշգրիտ տարիքը: Մազերը սպիտակել էին, բայց նույնքան հաստ ու կոպիտ էին: Հիմա նրա աչքերի տակ պարկեր էին առաջացել, իսկ պարանոցի մաշկը՝ կնճռոտ ու կաշենման, կախ էր ընկել: Այտերը նախկինից ավելի կախ էին: Առավոտյան փոքր-ինչ կռացած էր: Բայց նա դեռ ամուր ուսեր ուներ, լայն կրծքավանդակ, ուժեղ ձեռքեր և ուռած փոր, որն իրենից առաջ էր սենյակ մտնում: Ընդհանուր առմամբ, մտածում էր Մարիամը, տարիները նրա նկատմամբ ավելի բարի էին, քան իր:

— Մենք պետք է օրինականացնենք այս իրավիճակը,— ասաց Ռաշիդը՝ մոխրամանը փորի վրա հավասարակշռելով: Շուրթերը չարաճճի ժպիտով սեղմեց իրար:— Մարդիկ կխոսեն: Անպատիվ բան է՝ չամուսնացած երիտասարդ կին, որն այստեղ է ապրում: Վատ է իմ հեղինակության համար: Եվ նրա: Եվ քո, ես կավելացնեի:

— Տասնութ տարվա ընթացքում,— ասաց Մարիամը,— երբեք քեզնից ոչինչ չեմ խնդրել: Ոչինչ: Հիմա խնդրում եմ:

Ռաշիդը ծուխը ներս քաշեց ու դանդաղ բաց թողեց:

— Նա չի կարող հենց այնպես այստեղ մնալ, եթե դա ես առաջարկում: Ես չեմ կարող շարունակել կերակրել նրան, հագցնել, քնելու տեղ տալ: Ես Կարմիր Խաչ չեմ, Մարիամ:

— Բայց այսպե՞ս:

— Հետո ի՞նչ: Ի՞նչ: Չափազանց երիտասա՞րդ է, կարծում ես: Տասնչորս տարեկան է: Արդեն երեխա չէ: Դու տասնհինգ էիր, հիշո՞ւմ ես: Մայրս ինձ տասնչորս տարեկանում ունեցավ: Տասներեք էր, երբ ամուսնացավ:

— Ես... ես չեմ ուզում,— ասաց Մարիամը՝ վիրավորանքից ու անօգնականությունից քարացած:

— Դա քո որոշելիքը չէ, իմ ու իր որոշելքին է:

— Ես շատ ծեր եմ:

— Նա չափազանց երիտասարդ է, դու՝ չափազանց ծեր, սա անհեթեթություն է:

— Ես շատ ծեր եմ, շատ ծեր եմ, որ այսպիսի բաներ անես հետս,— ասաց Մարիամը և բռունցքներով այնպես ճմլեց զգեստը, որ ձեռքերը դողացին:— Այսքան տարիներից հետո ինձ *ամբաղ*[108] ես դարձնում:

— Այդքան մի՛ չափազանցրու: Սովորական բան է, և դու գիտես դա: Ընկերներ ունեմ, որոնք երկու, երեք, չորս կին ունեն: Հայրդ երեքն ուներ: Բացի այդ՝ այն, ինչ ես հիմա անում եմ, տղամարդկանց մեծ մասը, գիտեմ, վաղուց արդեն արած կլինեին: Դու գիտես, որ այդպես է:

— Ես թույլ չեմ տա:

Դրա վրա Ռաշիդը տխուր ժպտաց:

---

[108] Ամբաղ (պարսկ.)՝ աֆղան իրականության մեջ՝ քույր–կին, ամուսնու մյուս կինը

— Այլ տարբերակ էլ կա,— ասաց նա ու մի ոտքի ներբանը մյուս ոտքի կոշտացած կրունկով քորեց:— Նա կարող է հեռանալ: Ճանապարհին չեմ կանգնի: Բայց կասկածում եմ, որ հեռու կգնա: Ո՛չ սնունդ ունի, ո՛չ ջուր, գրպաններում ո՛չ մի *ռուպիա*, ամենուր փամփուշտներ ու հրթիռներ են թռչում: Կարծում ես՝ քանի՞ օրից նրան կառևանգեն, կբռնաբարեն կամ կոկորդը կտրած՝ առվի մեջ կգցեն: Կամ էլ երեք բանն էլ միասին:

Ռաշիդը հազաց ու հետևի բարձն ուղղեց:

— Ճանապարհներն անողոք են, Մարիա՛մ, հավատա՛ ինձ: Ամեն քայլափոխին արյունախում ավազակներ են: Նա ոչ մի շանս չունի, բացարձակապես ոչ մի: Բայց, ասենք, ինչ-որ հրաշքով հասավ Փեշավար: Հետո ի՞նչ: Գաղափար ունե՞ս, թե ինչ են այդ ճամբարները:

Նայեց Մարիամին ծխի քուլայի հետևից:

— Մարդիկ մաշված ստվարաթղթի տուփերի մեջ են ապրում: Տուբերկուլյոզ, դիզենտերիա, սով, հանցագործություն: Եվ դա մինչև ձմռան գալը: Հետո գալիս է ցրտահարվելու սեզոնը: Թոքերի բորբոքում: Մարդիկ սառցալուլաներ են դառնում: Այդ ճամբարները վերածվում են սառած գերեզմանների:

— Անշուշտ,— նա ձեռքը աշխուժորեն պտտեց,— նա կարող է տաք մնալ Փեշավարի պոռնկանոցներից մեկում: Լսել եմ՝ բիզնեսն այնտեղ բարգավաճում է: Նրա նման գեղեցկուհին տիրոջը կլորիկ գումար կբերի, չե՞ս կարծում:

Ռաշիդը դրեց մոխրամանը մահճասեղանի վրա ու ոտքերն իջեցրեց մահճակալից:

— Լսի՛ր,— ասաց նա հաշտեցնող տոնով, որն իրեն կարող է թույլ տալ հաղթող կողմը,— ես գիտեի, որ սա քեզ դուր չի գա: Ես քեզ չեմ մեղադրում: Բայց այսպես ամենից լավ է: Կտեսնես: Այսպես նայի՛ր, Մարիա՛մ: Քեզ տան մեջ օգնական եմ տալիս, իսկ նրան՝ ապաստան: Տուն և ամուսին: Հիմա՝ այս ժամանակներում, կնոջն ամուսին է պետք: Չե՞ս նկատել փողոցներում քնող այրիներին: Կսպանեին այսպիսի հնարավորության համար: Փաստորեն սա... դե, կասեի՝ ուղղակի բարեգործություն է իմ կողմից:

Ռաշիդը ժպտաց:

— Ինձ որ հարցնես, ես մեդալի եմ արժանի:

* * *

Ավելի ուշ մթության մեջ Մարիամը պատմեց աղջկան:

Աղջիկը երկար ժամանակ ոչինչ չասաց:

— Առավոտյան պատասխան է ուզում,— ասաց Մարիամը:

— Կարող եմ հիմա պատասխանել,— ասաց աղջիկը,— իմ պատասխանն այո է:

31

Լեյլա

Հաջորդ օրը Լեյլան մնաց անկողնում: Առավոտյան նա վերմակի տակ պառկած էր, երբ Ռաշիդը գլուխը ներս մտցրեց ու ասաց, որ գնում է վարսավիրանոց: Նա դեռ անկողնում էր, երբ Ռաշիդը ավելի ուշ տուն եկավ, ցուցադրեց իր նոր սանրվածքը, իր նոր, բայց օգտագործված կապույտ զոլավոր կոստյումը ու հարսանեկան մատանին, որը գնել էր նրա համար:

Ռաշիդը նստեց կողքին՝ մահճակալի վրա, ցուցադրաբար, դանդաղ արձակեց ժապավենը, բացեց տուփը ու նրբորեն հանեց մատանին: Խոստովանեց, որ վաճառել է Մարիամի հին ամուսնական մատանին:

— Նրա վեջը չի: Հավատա՛ ինձ: Չի էլ նկատի,— ասաց Ռաշիդը:

Լեյլան քաշվեց մահճակալի հեռավոր անկյունը: Ներքևից գալիս էր Մարիամի արդուկի ֆշշոցը:

— Երբեք չի էլ դրել,— ասաց Ռաշիդը:

— Ես այն չեմ ուզում,— նվաղուն ձայնով ասաց Լեյլան,— ո՛չ այսպես: Դու պետք է վերադարձնես դա:

— Վերադարձնեմ:— Ռաշիդի դեմքով անհամբեր հայացք անցավ ու չքացավ: Ժպտաց:— Ես կանխիկ գումար էլ եմ ավելացրել, ու բավականին մեծ գումար: Սա ավելի լավ մատանի է, քսաներկու կարատ ոսկի: Զգո՞ւմ ես՝ ինչքան ծանր է: Դե, զգա՛: Չէ՞:— Նա փակեց տուփը:— Ծաղիկների մասին ինչ կասես: Գեղեցիկ կլիներ: Ծաղիկներ սիրո՞ւմ ես: Սիրած ծաղիկ ունե՞ս: Մարգարտածաղիկնե՞ր: Կա-

կաչներ: Ցասամա՞ն: Ոչ մի ծաղի՞կ: Լավ: Ես էլ դրանց իմաստը չեմ հասկանում: Ուղղակի մտածում էի... Ուրեմն մի դերձակ գիտեմ այստեղ՝ Դեհ-Մազանգում: Մտածում էի՝ տանենք քեզ վաղը այնտեղ, հարմար շոր կարենք քեզ համար:

Լեյլան օրորեց գլուխը:

Ռաշիդը զարմացած բարձրացրեց հոնքերը:

— Ուղղակի ուզում եմ՝ որքան արագ...— սկսեց Լեյլան:

Ռաշիդը ձեռքը դրեց Լեյլայի պարանոցին: Լեյլան ակամա կծկվեց ու հետ քաշվեց: Նրա հպումը նման էր առանց ներքնազգեստի փշոտ, հին, թաց բրդյա սվիտեր հագնելուն:

— Ի՞նչ:

— Ուզում եմ որքան հնարավոր է արագ դա անենք:

Ռաշիդի բերանը բացվեց, հետո լայնացավ, դարձավ դեղին ատամնավոր ժպիտ:

— Անհամբեր ես,— ասաց:

* * *

Աբդուլ Շարիֆի այցից առաջ Լեյլան որոշել էր մեկնել Պակիստան: Նույնիսկ Աբդուլ Շարիֆի լուրերից հետո, Լեյլան հիմա մտածեց, ինքը կմեկներ: Կգնար այստեղից հեռու մի տեղ: Դուրս կպրծներ այս քաղաքից, որտեղ փողոցի ամեն մի անկյունում իրեն ծուղակ էր սպասում, որտեղ ամեն մի նրբանցք թաքցնում էր մի ուրվական, որը դուրս էր պրծնում իր վրա: Նա ռիսկի կդիմեր:

Սակայն հանկարծ պարզվեց, որ մեկնելն անհնար է:

Ոչ ամենօրյա այս սրտխառնոցով:

Ոչ կրծքերում այս նոր ծանրությամբ:

Եվ այն գիտակցությամբ, որ այս ամբողջ խառնաշփոթի մեջ բաց թողեց դաշտանը:

Լեյլան պատկերացրեց իրեն փախստականների ճամբարում՝ բաց դաշտում, որտեղ սառը, կտրող քամուց տրոփում են ժամանակավոր սյուներին կապված հազարավոր պոլիէթիլենի կտորները: Այս ժամանակավոր վրաններից մեկի տակ նա տեսավ իր երեխային՝ Թարիքի երեխային՝ փոս ընկած քունքերով, ծնոտը կախ ընկած,

մաշկը բծավոր, կապտագորշ: Պատկերացրեց նրա փոքրիկ մարմինը, որը լվանում են օտարները, փաթաթում դարչնագույն սավանի մեջ ու դնում քամահար հողափոսը՝ անգղերի հիասթափված հայացքի ներքո:

Ինչպե՞ս փախչեր հիմա:

Լեյլան մռայլ գոյքագրեց իր կյանքի մարդկանց: Ահմադն ու Նուռը մեռած են: Հասինան գնաց: Ջիթին մեռած է: Մամին՝ մեռած: Բաբին՝ մեռած: Հիմա Թարիքը...

Սակայն հրաշքով իր նախկին կյանքից ինչ-որ բան մնացել էր, վերջին կապն իր նախկին ինքնության հետ նախքան այսքան միայնակ դառնալը: Թարիքի մի մասը դեռ ողջ էր իր ներսում՝ ծլող փոքրիկ թևեր, աճող լուսանցիկ թաթիկներ: Ինչպե՞ս կարող էր ռիսկի ենթարկել միակ բանը, որ մնացել էր Թարիքից, իր հին կյանքից:

Նա արագ որոշում կայացրեց: Թարիքի հետ լինելուց հետո վեց շաբաթ էր անցել: Մի քիչ էլ ժամանակ անցնի, և Ռաշիդը կսկսի կասկածել:

Լեյլան գիտեր, որ իր կատարածը անազնիվ է: Անազնիվ, նենգ և ամոթալի: Եվ անասելի անարդար Մարիամի նկատմամբ: Բայց չնայած այն բանին, որ նրա ներսի երեխան թթից մեծ չէր, Լեյլան արդեն հասկացել էր, որ մայրը պետք է զոհողությունների գնա: Առաքինությունը ընդամենը առաջին զոհն է:

Նա ձեռքը դրեց փորին: Փակեց աչքերը:

* * *

Լեյլան կտորներով էր հիշելու ցածրաձայն արարողությունը: Ռաշիդի կոստյումի կրեմագույն զոլերը: Նրա մազերի լաքի սուր հոտը: Ադամախնձորի մոտ փոքրիկ կտրվածքը: Սիգարետի բծերով նրա մատների կոշտ բարձիկները, երբ մատանին դրեց մատին: Գրիչը: Չի գրում: Նոր գրիչ են փնտրում: Պայմանագիրը: Ստորագրումը. Ռաշիդի վստահ ձեռքը, իր ձեռքը՝ երերուն: Աղոթքները: Հայելու մեջ Ռաշիդի հավասար կտրած հոնքերը:

Եվ սենյակում մի տեղ Մարիամի հայացքը: Նրա խեղդող պարսավանքը:

Լեյլան այդպես էլ չհամարձակվեց նայել տարիքով մեծ կնոջ աչքերին:

* * *

Այդ գիշեր, սառը սավաններին պառկած, Լեյլան նայում էր՝ ինչպես է Ռաշիդը քաշում վարագույրները: Լեյլան դողում էր, նախքան Ռաշիդի մատները սկսեցին արձակել վերնաշապիկի կոճակները, բացել նրա շալվարի կապը: Ռաշիդը հուզված էր: Նրա մատները երկար տնտղում էին վերնաշապիկը, արձակում գոտին: Լեյլան մոտիկից տեսավ նրա կախված կուրծքը, դուրս ընկած պորտը՝ կենտրոնում փոքրիկ կապույտ երակ, կրծքավանդակի, ուսերի ու թևերի հաստ սպիտակ մազափնջերը: Զգում էր՝ ինչպես է Ռաշիդը աչքերով ուտում իրեն:

— Աստված ինձ օգնական, կարծում եմ, որ սիրում եմ քեզ,— ասաց նա:

Ատամները ճտճտացնելով՝ Լեյլան խնդրեց, որ նա հանգցնի լույսը:

Ավելի ուշ, երբ համոզվեց, որ Ռաշիդը քնած է, Լեյլան հանգիստ հանեց դանակը, որը նախօրոք պահել էր դոշակի տակ: Դրանով ծակեց ցուցամատը: Հետո բարձրացրեց վերմակը ու թողեց, որ մատն արյունահոսի սավանի վրա, որի վրա միասին պառկած էին:

32

Մարիամ

Օրվա ընթացքում աղջիկը Մարիամի համար մահճակալի զսպանակի ճռռոց էր, գլխավերևում՝ ոտնաձայների թփթփոց: Նա լողասենյակում ջրի չփչփոց էր կամ վերևի ննջասենյակում բաժակին խփվող, գդալի ծնգոց: Ժամանակ առ ժամանակ նա երևում էր. Մարիամն աչքի ծայրով նկատում էր աստիճաններով արագ բարձրացող ալեկոծվող աղոտ զգեստ՝ ձեռքերը ծալված են կրծքին, սանդալները խփվում են կրունկներին:

Բայց նրանք անխուսափելիորեն բախվում էին միմյանց: Մարիամն անցնում էր նրա կողքով աստիճանների վրա, նեղ միջանցքում, խոհանոցում կամ դռան մոտ, երբ բակից ներս էր գալիս: Այսպես հանդիպելիս նրանց միջև անհարմար լարվածություն էր առաջանում: Աղջիկը հավաքում էր փեշն ու ներողության մեկ-երկու բառ արտաշնչում, և երբ արագ հեռանում էր, Մարիամը հպանցիկ հայացք էր նետում, ու աղջիկը կարմրում էր: Երբեմն նրանից Ռաշիդի հոտն էր գալիս: Մաշկին Ռաշիդի քրտինքի, սիգարետի, ախորժակի հոտն էր: Սեքսը, բարեբախտաբար, փակված թեմա էր Մարիամի կյանքում: Արդեն երկար ժամանակ այդպես էր, և Ռաշիդի տակ պառկելու այդ ծանր վարժանքի մտքից անգամ Մարիամի սիրտը խառնում էր:

Երեկոյան, այնուամենայնիվ, իրարից խուսափելու այդ երկկողմանի համաձայնեցված պարը հնարավոր չէր: Ռաշիդն ասաց, որ նրանք ընտանիք են: Պնդեց, որ դա այդպես է, իսկ ընտանիքները միասին են սեղան նստում, ասաց:

— Ի՞նչ է սա,— հարցրեց նա՝ մատներով պոկելով միսը ոսկորից. գդալ-պատառաքաղ խաղն ավարտվեց աղջկա հետ ամուսնանալուց մեկ շաբաթ անց,— երկու արձանների հետ եմ ամուսնացել: Դե՛, Մարիա՛մ, *գայի բեզամ* մի բան ասա՛ նրան: Ի՞նչ եղավ քաղաքավարությունդ:

Ողնուղեղը ծծելով՝ Ռաշիդն ասաց աղջկան.

— Բայց իրեն չմեղադրես: Նա լռակյաց է: Օրինություն է իրականում, որովհետև, *վալլահի*, եթե ասելիք չունես, ավելի լավ է՝ բառեր չշռայլես: Մենք քաղաքի մարդիկ ենք, իսկ նա *դեհաթի է՝* գեղջկուհի: Նույնիսկ գյուղացի էլ չի: Չէ: Մեծացել է գյուղից դուրս՝ ցեխից *քոլբայում:* Հայրն է այդտեղ դասավորել: Ասե՛լ ես իրեն, Մարիա՛մ, որ *հարամի* ես: *Հարամի* է: Բայց լավ գծեր էլ ունի այդ ամենով հանդերձ: Ինքդ կտեսնես, Լեյլա՛ ջան: Ուժեղ է, օրինակ՝ լավ աշխատող, առանց հավակնությունների: Այսպես ասեմ. եթե մեքենա լիներ, կլիներ «Վոլգա»:

Մարիամն այժմ երեսուներեք տարեկան էր, բայց այդ բառը՝ *հարամի*, դեռ կծում էր նրան: Այն լսելով՝ իրեն զգում էր վնասատու, խավարասեր: Հիշում էր՝ ինչպես էր Նանան ոլորում իր ձեռքերը:

— Դու փոքրիկ *հարամի՛* ես: Սա է տառապանքիս վարձատրությունը: Ժառանգությունս ջարդող փոքրիկ, անշնորհք *հարամի՛*:

— Դու,— ասաց Ռաշիդն աղջկան,— դու, մյուս կողմից, «Բենց» կլինեիր: Նոր, առաջնակարգ փայլուն «Բենց»: Վա՛խ, վա՛խ: Բայց: Բայց,— նա բարձրացրեց յուղոտ ցուցամատը,— պետք է հատուկ... խնամքով... վերաբերվել «Բենցին»: Որպես հարգանք դրա գեղեցկության ու արտադրողի նկատմամբ, հասկանո՞ւմ ես: Օ՜, երևի կարծում ես՝ խելագար եմ՝ *դիվանա*, որ այսքան խոսում եմ մեքենաներից: Ես չեմ ասում, որ դուք մեքենաներ եք: Պարզապես բացատրում եմ:

Հաջորդ բառերն ասելուց առաջ Ռաշիդը իր սարքած բրնձի գնդիկը հետ դրեց ափսեի մեջ: Նրա ձեռքերը կախ մնացին ուտելիքի վրա, նա լուրջ ու մտածկոտ նայեց ներքև:

— Մեռածների մասին չի կարելի վատ խոսել, այն էլ՝ *շահիդների:* Եվ ես անհարգալից չեմ ասում սա, ուզում եմ՝ իմանաս, բայց ես որոշակի... վերապահումներ ունեմ... ծնողներիդ, Ալլա՛հ, ների՛ր նրանց ու դրախտում տեղ տո՛ւր... քո հանդեպ ունեցած հանդուրժողականության հարցում: Կներես:

Մարիամը նկատեց աղջկա սառը ատող հայացքը, բայց Ռաշիդը ներքև էր նայում ու չնկատեց:

— Կարևոր չէ: Ուզում եմ ասել՝ ես հիմա քո ամուսինն եմ, և ես պարտավոր եմ պաշտպանել ոչ միայն քո պատիվը, այլ նաև մերը, այո՛, մեր *նանգ* ու *նամուսը*: Սա է ամուսնու պարտքը: Թո՛ւյլ տուր ինձ կրել այդ բեռը: Խնդրում եմ: Ինչ վերաբերում է քեզ, դու թագուհի ես՝ *մալիքա*, և այս տունը քո պալատն է: Ինչ անհրաժեշտ լինի անել, խնդրի՛ր Մարիամին, նա կանի: Չէ՞, Մարիա՛մ: Եթե մի բան հավանես, ես կբերեմ քեզ: Ես այդպիսի ամուսին եմ:

— Փոխարենը պարզ բան եմ ուզում: Խնդրում եմ՝ տնից առանց ինձ դուրս չգաս: Այսքանը: Պարզ բան է, չէ՞: Եթե ես տանը չեմ, իսկ քեզ շտապ ինչ-որ բան է պետք, նկատի ունեմ՝ իրոք անհրաժեշտ բան, և չես կարող ինձ սպասել՝ ուղարկի՛ր Մարիամին, նա կգնա ու կբերի: Դու, իհարկե, հակասություն նկատեցիր: «Վոլգան» ու «Բենցը» նույն ձևով չեն վարում: Հիմարություն կլինի, չէ՞: Հա, խնդրում եմ նաև, որ երբ միասին դուրս գանք, *բուրքա* հագնես: Քո իսկ անվտանգության համար, բնականաբար: Այդպես լավ կլինի:

Քաղաքում հիմա այնքան շատ են վավաշոտ տղամարդիկ: Այնպիսի զազրելի մտադրություններ ունեն՝ պատրաստ են նույնիսկ ամուսնացած կնոջը պատվազրկելու: Այդքանը:

Նա հազաց:

— Մարիամը կլինի իմ աչքն ու ականջը, երբ ես տանը չլինեմ:— Այդ պահին նա արագ հայացք նետեց Մարիամի վրա, ասես քունքին պայտած կոշիկով հարվածեր:— Անվստահության հարց չէ: Հակառակը: Անկեղծ ասած՝ դու քո տարիքից ավելի խելացի աղջկա տպավորություն ես թողնում: Բայց դու դեռ երիտասարդ կին ես, Լեյլա՛ ջան՝ *դոխթար է ջավան*, իսկ երիտասարդ կանայք կարող են սխալ ընտրություն կատարել: Չարաճճիություններ են սիրում: Ամեն դեպքում Մարիամը պատասխանատու կլինի: Իսկ եթե սայթաքես...

Այդպես շարունակում էր: Մարիամը աչքի տակով նայում էր աղջկան, մինչ Ռաշիդի պահանջներն ու խրատները թափվում էին նրանց գլխին Քաբուլի վրա թափվող հրթիռների պես:

* * *

Մի օր Մարիամը հյուրասենյակում ծալում էր Ռաշիդի վերնաշապիկները, որոնք հանել էր բակի լվացքի պարանից: Նա չգիտեր՝ որքան ժամանակ էր աղջիկը կանգնած այդտեղ, բայց երբ հանեց վերնաշապիկն ու շրջվեց, նա դռան առաջ էր՝ ձեռքերում թեյի բաժակը:

— Չէի ուզում վախեցնել քեզ,— ասաց աղջիկը,— կներես:

Մարիամը պարզապես նայում էր նրան:

Արևն ընկավ աղջկա դեմքին, մեծ կանաչ աչքերին ու հարթ ճակատին, բարձր այտոսկրերին ու գեղեցիկ խիտ հոնքերին՝ բացարձակ տարբեր Մարիամի բարակ ու տձև հոնքերից: Նրա շեկ մազերը՝ այդ առավոտյան չսանրված, մեջտեղից կիսված էին:

Բաժակից կառչած ձեռքերից, ճգված ուսերից Մարիամը կռահեց, որ աղջիկը հուզված էր: Նա պատկերացրեց՝ ինչպես է մահճակալին նստած խիզախություն հավաքում:

— Տերևները դեղնում են,— ասաց աղջիկը ընկերաբար,— նկատե՞լ ես: Սիրում եմ աշունը: Սիրում եմ այն հոտը, երբ մարդիկ իրենց

այգիներում այրում են տերևները: Մայրս գարունն էր սիրում: Միրս ճանաչո՞ւմ էիր:

— Այնքան էլ չէ:

Աղջիկը ձեռքն ականջին դրեց.

— Կներե՞ս:

Մարիամը բարձրացրեց ձայնը.

— Ասում եմ՝ ո՛չ, չէի ճանաչում մորդ:

— Ա՜հ:

— Ի՞նչ ես ուզում:

— Մարիա՛մ ջան, ուզում եմ... Այն բաների մասին, որ նա ասաց երեկոյան...

— Ես էլ էի ուզում դրա մասին խոսել,— ընդմիջեց Մարիամը:

— Այո՛, խնդրեմ,— լուրջ ասաց աղջիկը, գրեթե անհամբեր: Մի քայլ առաջ եկավ: Թեթևացած տեսք ուներ:

Դրսում ծլվլում էր ոսկեսարյակը: Ինչ-որ մեկը քաշում էր սայլը. Մարիամը լսում էր դրա ծխնիների ճռռոցը, երկաթե անիվների դղրդոցը: Ոչ այնքան հեռու կրակոցներ լսվեցին՝ մեկ կրակոց, հետո ևս երեքը, ու լռություն:

— Ես քո ծառան չեմ լինելու,— ասաց Մարիամը,— չե՛մ լինելու:

Աղջիկը վեր թռավ.

— Ո՛չ, իհարկե ո՛չ:

— Թեկուզ դու պալատի *մալիքան* լինես, իսկ ես *դեհաթի*, բայց ես քո հրամանները չեմ կատարելու: Կարող ես բողոքել նրան, նա կարող է վիզս կտրի, բայց չեմ կատարելու: Լսեցի՞ր: Ես քո ծառան չեմ լինի:

— Ո՛չ: Ես չեմ ակնկալում...

— Եվ եթե կարծում ես, որ կարող ես քո արտաքինն օգտագործել, որ ինձնից ձերբազատվես, սխալվում ես: Ես քեզանից առաջ էի այստեղ: Ինձ դուրս չեն նետի: Ես թույլ չեմ տա, որ ինձ դուրս շպրտես:

— Իմ ուզածը դա չէ,— թույլ ձայնով ասաց աղջիկը:

— Եվ ես տեսնում եմ, որ վերքերդ լավացել են արդեն: Կարող ես սկսել այս տան գործերի քո մասն անել...

Աղջիկն արագ գլխով էր անում: Թեյը մի քիչ թափվեց, բայց նա չնկատեց:

— Այո՛, ես դրա համար էլ եմ եկել, որ քեզ շնորհակալություն հայտնեմ իմ մասին հոգ տանելու...

— Ես հոգ չէի տանի,— կտրուկ պատասխանեց Մարիամը,— չէի կերակրի, լողացնի ու խնամի, եթե իմանայի, որ շուռ կգաս ու ամուսնուս կգողանաս:

— Գողանալ...

— Ես կշարունակեմ ճաշ եփել ու ամաններ լվանալ: Դու կանես լվացքն ու հատակն ավլելը... Մնացածը ամեն օր հերթով կանենք: Ու մի բան էլ: Ես քո ընկերության կարիքը չունեմ: Պետքս չէ: Ես ուզում եմ մենակ մնալ: Դու ինձ հանգիստ կթողնես, ես էլ քեզ: Այսպես գլուխ կբերենք: Սրանք են կանոնները:

Երբ վերջացրեց խոսել, սիրտն արագ բաբախում էր, բերանը ցամաքել էր: Մարիամը երբեք այսպես չէր խոսել, երբեք իր կամքը այսպես հաստատուն չէր արտահայտել: Նա պետք է ոգևորություն զգար, բայց աղջկա աչքերում արցունքներ էին, դեմքը խոնարհել էր, և այն բավարարվածությունը, որը Մարիամը ստացավ իր պոռթկումից, խղճուկ և անթույլատրելի թվաց:

Նա վերնաշապիկները մեկնեց աղջկան:

— Դի՛ր սրանք *ալմարի*[109] մեջ, ոչ թե պահարանի: Նա սիրում է, որ սպիտակները լինեն վերևի դարակում, իսկ մնացածը մեջտեղինում՝ գուլպաների հետ:

Աղջիկը բաժակը հատակին դրեց ու ձեռքերը մեկնեց, որ վերցնի վերնաշապիկները:

— Ներողություն եմ խնդրում, որ ամեն ինչ այսպես ստացվեց,— քթի տակ ասաց աղջիկը:

— Այդպես էլ պետք է անես,— ասաց Մարիամը,— պետք է ներողություն խնդրես:

---

[109] Ալմար (պարսկ.)՝ կոմոդ

33

Լեյլա

Լեյլան հիշեց իրենց տան մի հավաքի մասին՝ տարիներ առաջ, Մամիի լավ օրերից մեկի ժամանակ: Կանայք նստած էին այգում, ամանից թարմ թութ էին ուտում, որոնք Վաջման պոկել էր իր բակի ծառից: Խոշոր թթերը սպիտակ ու մանուշակագույն էին, իսկ մի քանիսն էլ Վաջմայի քթի փոքրիկ պայթած երակների պես մուգ ծիրանագույն:

— Իմացե՞լ եք՝ ինչպես է մահացել նրա որդին,— ասաց Վաջման՝ կնձռոտված բերանը մի բուռ թութ գցելով:

— Խեղդվել էր, չէ՞,— ասաց Նիլան՝ Ջիթիի մայրը,— Ղարղա լճում չէ՞ր:

— Բայց գիտեի՞ք, գիտեի՞ք, որ Ռաշիդը...— Վաջման բարձրացրեց մատը, դերասանորեն տմբտմբացրեց գլուխն ու ծամեց՝ ստիպելով նրանց սպասել, որ կուլ տա:— Գիտեի՞ք, որ այն ժամանակ *շարաբ*[110] էր խմում, որ այդ օրը թունդ հարբած էր: Ճիշտ եմ ասում: Թունդ հարբած՝ այդպես եմ լսել: Դա դեռ առավոտյան էր: Կեսօրին հարբած-ընկած էր ծալվող աթոռին: Կարող էիք ականջին թնդանոթով կրակել՝ աչք չէր թարթի:

Լեյլան հիշեց, թե ինչպես Վաջման ծածկեց բերանը, բխկաց. ինչպես լեզվով ստուգեց իր մնացած մի քանի ատամների արանքը:

— Մնացածը կարող եք պատկերացնել: Տղան աննկատ ջուրը մտավ: Նրան շատ ավելի ուշ նկատեցին՝ դեմքով ներքև լողում էր: Մարդիկ շտապեցին օգնելու, կեսը փորձում էր արթնացնել տղային, մյուս կեսը՝ հորը: Ինչ-որ մեկը կռացավ տղայի վրա, արեց... բերանը բերանին այն բանը, որ պետք է անել: Անիմաստ էր: Բոլորն էլ գիտեին: Տղան չկար:

Լեյլան հիշեց՝ ինչպես Վաջման բարձրացրեց մատը ու բարեպաշտությունից դողացող ձայնով ասաց.

— Ահա ինչու Սուրբ Ղուրանն արգելում է *շարաբը*: Որովհետև խմածների մեղքերի համար միշտ անմեղներն են վճարում: Այդպես էլ կա:

---

[110] Շարաբ՝ գինի կամ ցանկացած այլ ալկոհոլային խմիչք

Այս պատմությունը պտտվում էր Լեյլայի գլխում, երբ Ռաշիդին պատմեց երեխայի մասին: Նա անմիջապես թռավ հեծանիվի վրա, գնաց մզկիթ և աղոթեց, որ տղա լինի:

Այդ գիշեր ամբողջ ճաշի ընթացքում Լեյլան հետևում էր՝ ինչպես է Մարիամը ափսեի վրա մսագնդիկ գլորում: Լեյլայի ներկայությամբ Ռաշիդը բարձր թատերական ձայնով հայտնեց լուրը Մարիամին. Լեյլան երբեք չէր լսել նման խանդավառ դաժանություն: Մարիամի թարթիչները դողացին, երբ լսեց: Նա նստած էր մռայլ, թշվառ տեսքով:

Հետո Ռաշիդը բարձրացավ վերև, որ ռադիո լսի, ու Լեյլան օգնեց Մարիամին՝ հավաքելու *սոֆրան*:

— Չեմ էլ կարող պատկերացնել, թե ինչ ես հիմա,— ասաց Մարիամը՝ հավաքելով բրնձի ու հացի փշրանքները,— եթե առաջ «Բենց» էիր:

Լեյլան փորձեց կատակի վերածել.

— Գնա՞ցք, գուցե մեծ ինքնաթի՞ռ:

Մարիամն ուղղվեց:

— Հուսով եմ՝ չես կարծում՝ սա քեզ ազատում է պարտականություններից:

Լեյլան բացեց բերանը, բայց մտածեց ու լռեց: Ինքն իրեն հիշեցրեց, որ Մարիամն այս գործարքի միակ անմեղ մասնակիցն է: Մարիամն ու երեխան... Ավելի ուշ մահճակալում պառկած Լեյլան լաց եղավ:

Ի՞նչն է պատճառը: Ռաշիդն ուզում էր իմանալ՝ Լեյլայի կզակը բարձրացնելով: Հիվանդ է: Երեխայի հետ մի բան այն չէ՞: Ո՞չ: Մարիամը նրան վա՞տ է վերաբերվում:

— Այդպես է, չէ՞:

— Ո՛չ:

— *Վալլահ օ բիլլահ*, կիջնեմ ու նրան դաս կտամ: Ինչի՞ տեղ է իրեն դրել, այդ *հարամին*, որ քեզ վատ է...

— Ո՛չ:

Նա արդեն վեր էր կենում, և Լեյլան ստիպված բռնեց թևը ու քաշեց ներքև:

— Մի՛ արա: Ո՛չ: Նա ինձ նորմալ է վերաբերվում: Ինձ մի րոպե՛ տուր: Հիմա լավ կլինեմ:

Ռաշիդը նստեց կողքին, մռթմռթալով շոյեց պարանոցը... Նրա ձեռքը դանդաղ սահեց ներքև, հետո կրկին վերև: Նա թեքվեց, բացեց իր մեծատամ բերանը:

— Արի տեսնենք,— ասաց,— գուցե օգնեմ քեզ լավանա:

* * *

Նախ՝ ծառերը, որոնք չէին կտրել որպես վառելափայտ օգտագործելու համար, թափեցին իրենց պուտավոր, դեղին ու պղնձագույն տերևները: Հետո եկան քաղաքը ծվատող ցուրտ ու խոնավ քամիները: Քամիները պոկեցին վերջին կառչած տերևները ու բաց դարչնագույն բլուրների ֆոնի վրա թողեցին ուրվական հիշեցնող ծառեր: Առաջին ձյունը թեթև էր, փաթիլները հալվեցին՝ չհասցնելով նստել: Այնուհետև ճանապարհները սառան, ձյունը կուտակվեց տանիքների վրա, կիսով չափ ծածկեց պատուհանները: Ձյան հետ եկան օդապարուկները՝ Քաբուլի երկնքի վաղեմի տերերը, իսկ այժմ՝ հրթիռների ու կործանիչների տարածքում ամաչկոտ օրինախախտները:

Ռաշիդը բերում էր պատերազմի մասին նորությունները, և Լեյլային շփոթեցնում էին տարբեր միավորումները, որոնք Ռաշիդը փորձում էր բացատրել նրան: Սայաֆը պատերազմում էր խազարների հետ, ասաց նա: Խազարները պայքարում են Մասուդի դեմ:

— Իսկ նա պայքարում է Հեքմաթյարի դեմ, իհարկե, որին աջակցում են պակիստանցիները: Երդվյալ թշնամիներ են այդ երկուսը՝ Մասուդն ու Հեքմաթյարը: Սայաֆը Մասուդի կողմից է: Իսկ Հեքմաթյարն առայժմ աջակցում է խազարներին:

Ինչ վերաբերում է անկանխատեսելի ուզբեկ հրամանատար Դոստումին, Ռաշիդն ասաց, որ ոչ ոք չգիտի, թե նա ում կողմից է: 1980-ականներին Դոստումը մոջահեդների հետ պայքարում էր Սովետների դեմ, բայց հետ կանգնեց ու միացավ Նաջիբուլլահի կոմունիստական խամաճիկ ռեժիմին, երբ Սովետները հեռացան: Նույնիսկ մեդալ ստացավ Նաջիբուլլահից նախքան ևս մի անգամ հետ կանգնելը ու մոջահեդների մոտ վերադառնալը: Ներկայումս, ասաց Ռաշիդը, Դոստումն աջակցում էր Մասուդին:

թվագրել է 1915-ից հետո նայել

Քաբուլում՝ մասնավորապես արևմտյան Քաբուլում, հրդեհներ էին վառվում, ու սև ծուխը բարձրանում էր ձյունապատ շենքերի վրա: Դեսպանատները փակվում էին: Դպրոցները փլվում էին: Հիվանդանոցային սպասասրահներում, ասաց Ռաշիդը, վիրավորները մահանում էին արյունահոսությունից: Վիրահատարաններում առանց անզգայացման հեռացնում էին վերջույթները:

— Բայց չմտահոգվես,— ասաց նա,— ինձ հետ ապահով ես, իմ ծաղի՛կ, իմ *գյուլ*: Եթե մեկը քեզ փորձի մնասել, լարդը կձղեմ կհանեմ ու կստիպեմ, որ ուտի:

Այդ ձմռանը Լեյլան ուր շրջվեր, դիմացը պատեր էին: Նա կարոտում էր իր մանկության բաց երկինքը, այն օրերը, երբ Բաբիի հետ գնում էր *բուզքաշի*[111] մրցաշարերին, Մամիի հետ *Մանդայում* գնումներ էր անում, փողոցներում ազատ վազվզում էր, Ջիթիի ու Հասինայի հետ տղաներից բամբասում: Այն օրերը, երբ Թարիքի հետ նստում էր գետի ափին՝ երեքնուկների մեջ, կիսվում հանելուկներով ու քաղցրավենիքով, հետևում մայր մտնող արևին:

Բայց Թարիքի մասին մտածելը վտանգավոր էր, քանի որ Լեյլան ակամայից տեսնում էր նրան մահճակալում պառկած, տնից հեռու, այրված մարմնի մեջ ցցված խողովակներով: Ինչպես այս օրերին կոկորդն այրող լեղին, Լեյլայի կուրծքը լցվում էր խոր, կաթվածահար անող վշտով: Ոտքերը թուլանում էին: Ստիպված էր մի բանից բռնել:

Լեյլան 1992 թվականի այդ ձմեռն անցկացրեց տունն ավլելով, մաքրելով իր ու Ռաշիդի ննջասենյակի դդմագույն պատերը, դրսում մեծ պղնձե *լագաանի*[112] մեջ լվացք անելով: Երբեմն իրեն տեսնում էր սեփական մարմնի վերևում ճախրելիս, տեսնում էր՝ ինչպես է կքանստել *լագաանի* մոտ, թևքերը արմունկներից վերև բարձրացրած, վարդագույն ձեռքերով ճզմում է օճառաջուրը Ռաշիդի սպիտակեղենից: Այդ պահին իրեն կորած էր զգում, մոլորյալ, ինչպես նավաբեկյալը, երբ ափը չի երևում, միայն մղոններով ջուր է:

---

[111] Բուզքաշի՝ աֆղանական ավանդական մրցաձև: Ձիավորների մի թիմ խլում է այծի կամ այլ անասունի լեշը, տանում այն մարզադաշտով ու գցում հատուկ շրջանի մեջ, իսկ ձիավորների մյուս թիմը հետապնդում է և խփում, ճանկռում, մտրակով զարկում, հարվածում, որ լեշը խլեն:

[112] Լագաան (պարսկ.)՝ թաս

Երբ դրսում շատ ցուրտ էր, Լեյլան թափառում էր տնով: Քայլում էր՝ եղունգով քերծելով պատը, անցնում էր միջանցքը, հետ գալիս, իջնում աստիճաններով, հետո բարձրանում՝ դեմքն անլվա, մազերը չսանրված: Քայլում էր, մինչև չէր հանդիպում Մարիամին, որն անուրախ հայացք էր նետում նրա վրա ու շարունակում էր պղպեղ կտրտել ու մաքրել մսից ճարպի շերտերը: Ցավալի լռություն էր տիրում սենյակում, ու Լեյլան գրեթե տեսնում էր Մարիամից ճառագող անխոս թշնամությունը ասֆալտից բարձրացող ջերմության ալիքների պես: Լեյլան վերադառնում էր իր սենյակ, նստում մահճակալին ու նայում իջնող ձյանը:

* * *

Մի օր Ռաշիդը նրան տարավ իր կոշիկի խանութը:

Երբ նրանք միասին էին դուրս գալիս, Ռաշիդը քայլում էր Լեյլայի կողքին ու արմունկից բռնում: Լեյլայի համար փողոց դուրս գալը դարձել էր վնասվածքներից խուսափելու վարժանք: Նրա աչքերը դեռ սովորում էին *բուրքայի* սահմանափակ, գծավոր տեսանելիությանը, զգեստի եզրը դեռևս ոտքի տակ էր ընկնում: Նա քայլում էր՝ անընդհատ վախենալով սայթաքել ու ընկնել, փոսի մեջ կոճը կոտրել: Այդուհանդերձ, *բուրքան* նրան անանունության որոշակի մխիթարություն էր տալիս: Նրան չէին ճանաչի, եթե հանկարծ հանդիպեր մի հին ծանոթի: Չէր տեսնի նրանց աչքերում զարմանք, խղճահարություն կամ չարախնդություն, թե ինչ օրի է ընկել, թե ինչի են վերածվել իր վեհ ձգտումները:

Ռաշիդի խանութն ավելի մեծ էր ու ավելի պայծառ էր լուսավորված, քան Լեյլան պատկերացնում էր: Ռաշիդը նրան նստեցրեց իր փնթի աշխատասեղանի մոտ, որի վրա թափված էին հին ներբաններ ու կաշվե կտորտանքներ: Նա ցույց տվեց իր մուրճերը, բացատրեց, թե ինչպես է աշխատում հղկաթղթով անիվը՝ բարձր ու հպարտ ձայնով: Ռաշիդը շոշափեց Լեյլայի փորը ոչ թե վերնաշապիկի վրայից, այլ տակից, և Լեյլայի պրկված մաշկի վրա նրա սառը և կոպիտ մատների ծայրերը ասես ծառի կեղև լինեին: Լեյլան հիշեց Թարիքի ձեռքերը՝ փափուկ, բայց ուժեղ, դրանց վրայի ոռուցիկ ոլո-

րուն երակները, ինչը Լեյլան միշտ համարում էր շատ առնական ու գրավիչ:

— Ինչ արագ է մեծանում,— ասաց Ռաշիդը,— մեծ տղա կլինի: Տղաս *փահլավան*[113] է լինելու՝ հոր պես:

Լեյլան իջեցրեց վերնաշապիկը: Նա վախենում էր, երբ Ռաշիդն այսպիսի բաներ էր ասում:

— Մարիամի հետ ո՞նց եք:

Ասաց՝ լավ են:

— Բարի, բարի:

Լեյլան չպատմեց, որ առաջին անգամ իսկապես վիճել են:

Մի քանի օր առաջ էր տեղի ունեցել: Լեյլան գնաց խոհանոց ու տեսավ, որ Մարիամը ուժով բացում ու փակում է դարակները: Ասաց, որ փնտրում է երկար փայտյա գդալը, որով խառնում է բրինձը:

— Ո՞ւր ես դրել,— հարցրեց՝ շրջվելով դեպի Լեյլան:

— Ե՞ս,— ասաց Լեյլան,— ես չեմ վերցրել: Ես այստեղ գրեթե չեմ մտնում:

— Նկատել եմ:

— Դա մեղադրանք է: Դու ես այսպես ցանկացել, հիշո՞ւմ ես: Ասել էիր՝ դու ես ճաշ եփելու: Բայց եթե ուզում ես տեղերով փոխվել...

— Ուզում ես ասել՝ գդալը փոքրիկ ոտեր առավ ու գնաց: Թը՛փ, թը՛փ, թը՛փ, թը՛փ: Այդպե՞ս եղավ, *դեգեհ*[114]:

— Ես ասում եմ...— ասաց Լեյլան՝ փորձելով իրեն վերահսկել: Սովորաբար նա կարողանում էր իրեն հավաք պահել ու տանել Մարիամի ծաղրանքն ու կշտամբանքները: Բայց կոճերն ուռած էին, գլուխը ցավում էր, սրտայրոցն էլ այդ օրը սարսափելի էր:— Ես ասում եմ՝ գուցե սխալ տեղ ես դրել:

— Սխալ տեղ եմ դրե՞լ:— Մարիամը քաշեց դարակը: Ներսի թիակներն ու դանակները զնգացին:— Ինչքա՞ն ժամանակ է՝ այստեղ ես՝ մի քանի ամի՞ս: Ես այս տանը տասնինը տարի եմ ապրում, *դոխտա՛ր ջ՛ն*: Ես այդ գդալը այստեղ եմ պահել այն ժամանակվանից, երբ դու տակդ էիր կեղտոտում:

---

[113] Փահլավան (պարսկ.)՝ ուժեղ տղամարդ, հերոս
[114] Դեգեհ (պարսկ.)՝ էլ ինչ

— Միևնույնն է,— ասաց Լեյլան՝ հազիվ իրեն զսպելով, ատամները սեղմած,— հնարավոր է՝ մի տեղ դրել ես ու մոռացել:

— Եվ հնարավոր է՝ դու մի տեղ թաքցրել ես, որ ինձ վատություն անես:

— Դու խղճուկ, դժբախտ կին ես,— ասաց Լեյլան:

Մարիամը ջղաձգվեց, հետո հավաքեց իրեն, շրթունքները սեղմեց:

— Իսկ դու պոռնի՛կ ես: Պոռնիկ ու *դոզդ*[115]: Գողաբարո պոռնիկ՝ ահա թե ինչ ես:

Հետո գոռգոռոց սկսվեց: Ամանները օդ բարձրացան, բայց գետնին չզարկվեցին: Իրար անպատիվ բառեր ասացին, որոնց համար Լեյլան կարմրում էր հիմա: Դրանից հետո չէին խոսել: Լեյլան դեռ ցնցված էր, թե որքան հեշտ իրեն կորցրեց, ու ճշմարտությունն այն էր, որ ինչ-որ չափով նրան դա դուր եկավ, դուր եկավ Մարիամի վրա գոռալու զգացողությունը, հայհոյելը, եփող զայրույթը, վիշտը կենտրոնացնելու համար թիրախ ունենալը:

Լեյլան մտածեց, որ գուցե Մարիամն էլ նույն զգացողությունը ուներ:

Վեճից հետո նա վազեց վերև և ընկավ Ռաշիդի մահճակալին: Ներքևում Մարիամը դեռ գոռում էր՝ «Հողե՛մ գլուխդ: Հողե՛մ գլուխդ»: Լեյլան, մահճակալին պառկած, ողբում էր, կարոտում ծնողներին հանկարծակի ու ուժգին, ինչպես ռմբակոծությանը հաջորդած այն սարսափելի օրերին: Այդպես պառկած էր՝ սավանները բռի մեջ, մինչև հանկարծակի շունչը կտրվեց: Նա նստեց, ձեռքերն արագ տարավ փորին:

Երեխան առաջին անգամ խաղաց:

34

Մարիամ

1993 թվականի գարնան մի առավոտ Մարիամը կանգնած էր հյուրասենյակի պատուհանի մոտ ու նայում էր՝ ինչպես է Ռաշիդը

---

[115] Դոզդ (պարսկ.)՝ գող

աղջկան ուղեկցում տնից դուրս: Աղջիկը կամաց առաջ էր շարժվում՝ գոտկատեղից ծռված, մի ձեռքով պաշտպանում փորի ուռած թմբուկը, որի ձևը երևում էր *բուրքայի* տակից: Ռաշիդը՝ հուզված ու չափազանց ուշադիր, բռնել էր նրա արմունկից և ուղղորդում էր բակի միջով ճանապարհային ոստիկանի պես: Նա արեց «Սպասի՛ր այստեղ» նշանը, վազեց մուտքի դարպասի մոտ, ձեռքով արեց, որ աղջիկը մոտենա՝ ոտքով դարպասը բաց պահած: Երբ Լեյլան հասավ նրան, Ռաշիդը բռնեց ձեռքից, օգնեց, որ անցնի դարպասի միջով: Մարիամը գրեթե լսում էր նրա ձայնը. «Զգո՛ւյշ քայլիր, իմ ծաղի՛կ, իմ *գյուլ*»:

Հաջորդ երեկոյան վերադարձան:

Մարիամը տեսավ, որ Ռաշիդը առաջինը բակ մտավ: Դարպասը բաց թողեց ժամանակից շուտ, ու այն ուր որ է հարվածելու էր աղջկա դեմքին: Մի քանի արագ քայլով կտրեց բակը: Մարիամը նկատեց նրա դեմքի ստվերը, մթնշաղի պղնձե լույսի տակ թաքնված խավարը: Տանը Ռաշիդը հանեց բաճկոնը, նետեց բազմոցին: Մարիամի կողքով արագ անցնելով՝ խռպոտ ձայնով ասաց. «Սոված եմ: Ընթրիք պատրաստի՛ր»:

Տան մուտքի դուռը բացվեց: Միջանցքից Մարիամը տեսավ աղջկան, որի ձախ ձեռքին բարուրած փաթեթ էր: Մի ոտքը դրսում էր, մյուսը՝ ներսում՝ դռան դիմաց, որ այն չփակվի: Կռացել էր ու հևում էր՝ փորձելով հասնել իրերով թղթե տոպրակին, որը ցած էր դրել, որպեսզի բացի դուռը: Ձանքերից դեմքը ծամածռվել էր: Աղջիկը նայեց վերև ու տեսավ Մարիամին: Մարիամը շրջվեց ու գնաց խոհանոց՝ Ռաշիդի ճաշը տաքացնելու:

* * *

— Ասես մեկը շաղափով ականջս ծակի,— ասաց Ռաշիդը՝ աչքերը տրորելով: Կանգնած էր Մարիամի դռան մեջ՝ աչքերն ուռած, հագին միայն անփույթ կապած *թումբան*: Սպիտակ մազերը գզգզված էին, բոլոր կողմերից ցցված:— Այս լացը: Չեմ դիմանում:

Ներքևում աղջիկը քայլում էր երեխայի հետ, փորձում էր երգել նրա համար:

— Երկու ամիս է՝ գիշերները նորմալ չեմ քնել,— ասաց Ռաշիդը,— սենյակից կոյուղու հոտ է գալիս: Ամեն տեղ կղանքով շորեր են: Մի գիշեր ոտս մեջը դրեցի:

Մարիամը ներսից չարախնդաց:

— Դո՛ւրս տար դրան,— շրջվելով բղավեց Ռաշիդը,— չե՞ս կարող նրան դուրս տանել:

Երգը կարճ ժամանակով ընդհատվեց.

— Թոքաբորբ կստանա:

— Ամառ է:

— Ի՞նչ:

Ռաշիդը կրճտացրեց ատամներն ու բարձրացրեց ձայնը.

— Ասում եմ՝ դուրսը տաք է:

— Ես նրան դուրս չեմ տանի:

Երգը վերսկսվեց.

— Մեկ-մեկ, երդվում եմ, մեկ-մեկ ուզում եմ այդ բանը դնել արկղի մեջ ու թողնել, որ Քաբուլ գետը տանի: Մանուկ Մովսեսի պես:

Մարիամը երբեք չլսեց, որ Ռաշիդն իր դստերը կոչի այն անունով, որը նրան տվել էր աղջիկը՝ *Ազիզա՝ Սիրված*: Նա միշտ եղել է «երեխա» կամ, երբ Ռաշիդը իսկապես վրդովված էր, «այդ բանը»:

Որոշ գիշերներ Մարիամը լսում էր նրանց վեճերը: Նա ոտքերի թաթերի վրա մոտենում էր նրանց դռանը ու լսում՝ ինչպես է Ռաշիդը բողոքում երեխայից՝ միշտ երեխայից. անդադար լացից, հոտից, խաղալիքներից, որոնց վրա սայթաքում էր, այն բանից, որ երեխան Ռաշիդից խլել է Լեյլայի ողջ ուշադրությունը, որովհետև նրան մշտապես պետք էր կերակրել, բխկացնել, շորերը փոխել, հետը քայլել, գրկել: Աղջիկն իր հերթին բողոքում էր, որ Ռաշիդը ծխում է սենյակում, թույլ չի տալիս երեխային քնել իրենց հետ:

Որոշ կռիվներ ցածրաձայն էին:

— Բժիշկն ասաց՝ վեց շաբաթ:

— Դեռ ո՛չ, Ռաշիդ: Ո՛չ: Թո՛ղ: Դե՛, մի՛ արա:

— Երկու ամիս է անցել:

— Շշշ: Ահա՛, արթնացրիր երեխային:— Հետո ավելի կտրուկ,— *Խոշ շոդի՞*: Ուրա՞խ ես հիմա:

Մարիամն արագ վերադառնում էր իր սենյակ:

— Չե՞ս կարող օգնել,— հարցրեց Ռաշիդը,— մի բան արա:

— Ես ինչ գիտեմ երեխաների մասին,— ասաց Մարիամը:

— Ռաշի՛դ, շիշը բեր, *ալմարիի* վրա է: Չի ուտում, ուզում եմ նորից շշով փորձել:

Երեխայի ծղրտոցները ուժգնացան, դարձան դանակի պես սուր:

Ռաշիդը փակեց աչքերը:

— Այդ բանը պարագլուխ է: Հեքմաթյար: Ասում եմ քեզ՝ Լեյլան Գյուլբուդին Հեքմաթյարին է ծննդաբերել:

* * *

Մարիամը նայում էր՝ ինչպես են աղջկա օրերը լցվում կերակրելու, ճոճելու, օդ թռցնելու, զբոսնելու հերթագայությամբ: Նույնիսկ երբ երեխան ննջում էր, պետք էր լվանալ տակաշորերը ու թողնել ախտահանիչ հեղուկի մեջ, որն աղջիկը ստիպել էր Ռաշիդին գնել: Պետք էր հոկաքարե թղթով կարճեցնել եղունգները, լվանալ չոչաշորերն ու ննջազգեստները ու կախել չորանալու: Այս հագուստները, ինչպես և մյուս բաները դարձել էին վիճաբանության պատճառ:

— Դրանց ինչ է եղել,— հարցրեց Ռաշիդը:

— Դրանք տղայի համար են: *Բաչայի* համար:

— Կարծում ես՝ նա հասկանո՞ւմ է տարբերությունը: Ահագին փող եմ վճարել այդ հագուստի համար: Ու մի բան էլ. այդ տոնով չխոսես: Համարի՛ր սա նախազգուշացում:

Ամեն շաբաթ առանց բացառության աղջիկը դնում էր սև մանղալը կրակի վրա, վայրի սատապի մի քանի սերմ գցում մեջն ու ծուխը երեխայի ուղղությամբ հովհարում՝ չարիքի դեմ:

Մարիամը հոգնում էր աղջկա այդ վազվզող ոգևորությունից, բայցև եթե թաքուն խոստովաներ, նաև հիանում էր: Հիանում էր, թե ինչպես են աղջկա աչքերը երկրպագությամբ փայլում, նույնիսկ առավոտյան, երբ դեմքը ներս ընկած էր ու գույնը գցած ամբողջ գիշերը երեխայի հետ քայլելուց: Աղջիկը ծիծաղից գալարվում էր, երբ երեխան գազեր էր արձակում: Երեխայի ամենաչնչին փոփոխությունը զմայլում էր նրան, ամեն արածը հիասքանչ էր:

— Տե՛ս, ձեռքը գցում է խաղալիքին: Ինչ խելացի է:

— Թերթերին կտեղեկացնեմ,— ասաց Ռաշիդը:

Ամեն երեկո ցուցադրություններ էին: Երբ աղջիկը պնդում էր, որ Ռաշիդը ականատես լինի մի բանի, նա տնկում էր կզակն ու անհամբեր թռուցիկ հայացք նետում կապույտ երակներով կեռ քթի վրայով:

— Տե՛ս: Տե՛ս՝ ինչպես է ծիծաղում, երբ մատներս ճտտացնում եմ: Ահա՛: Տեսա՞ր: Տեսա՞ր:

Ռաշիդը փնթփնթում էր ու վերադառնում իր ափսեին: Մարիամը հիշում էր, որ աղջկա ներկայությունն անգամ ժամանակին հիացնում էր նրան: Նրա ամեն ասածը հաճելի էր Ռաշիդին, հետաքրքիր, ստիպում էր գլուխը ափսեից բարձրացնել ու հավանությամբ գլուխը տմբտմբացնել:

Տարօրինակն այն էր, որ աղջկա շնորհազրկումը պետք է գոհացներ Մարիամին, արդարացներ նրան: Բայց այդպես չէր: Այդպես չէր: Ի զարմանս իրեն՝ Մարիամը խղճում էր աղջկան: Ընթրիքի ժամանակ աղջիկը զեղում էր իր անհանգստությունների մշտական տարափը: Ցուցակը գլխավորում էր թոքաբորբը, որը նա կասկածում էր ամեն մի թեթև հազի մեջ: Այնուհետև դիզենտերիան էր, որը ենթադրվում էր յուրաքանչյուր փորլուծությունից հետո: Ամեն մի ցան կա՛մ ջրծաղիկ էր, կա՛մ կարմրուկ:

— Այդքան մի՛ կապվիր նրան,— ասաց Ռաշիդը մի երեկո:

— Ի՞նչ նկատի ունես:

— Մի երեկո ռադիո էի լսում: «Ամերիկայի Ձայնը»: Հետաքրքիր վիճակագրություն լսեցի: Ասում են՝ Աֆղանստանում չորս երեխայից մեկը մահանում է մինչև հինգ տարեկանը: Այդպես են ասում: Ուրեմն նրանք... Ի՞նչ: Ի՞նչ: Ո՞ւր ես գնում: Արի՛ այստեղ: Վերադարձի՛ր իսկույն ևեթ:

Զարմացած նայեց Մարիամին:

— Ի՞նչ պատահեց հետը:

Այդ գիշեր Մարիամը պառկած էր անկողնում, երբ նորից սկսվեց վիճաբանությունը: Շոգ, չոր ամառային գիշեր էր, որը բնորոշ էր *Սարաթան*[116] ամսին Քաբուլում: Մարիամը բացել էր իր պատուհանը,

---

[116] Ամիսները Աֆղանստանում համապատասխանում են արևային օրացույցին: *Սարաթան* ամիսը մայիս–հունիս ամիսների միջև (Խեցգետնի նշանի) ամիսն է:

հետո փակել, երբ շոգը կտրող ոչ մի զեփյուռ չեկավ, միայն մոծակներ: Նա զգում էր՝ ինչպես է շոգը բարձրանում հողից, անցնում բակի տնակի ցորենագույն տախտակների ճեղքերով, թափանցում պատերից ներս ու ներխուժում իր սենյակը:

Սովորաբար վեճը տևում էր մի քանի րոպե, բայց արդեն կես ժամ անցել էր, և այն ոչ միայն շարունակվում էր, այլև թեժանում: Մարիամը լսեց, որ Ռաշիդն այժմ գոռում է: Աղջկա ձայնը Ռաշիդի ձայնից ցածր էր՝ անվստահ ու սուր: Շուտով երեխան էլ սկսեց ճչալ:

Հետո Մարիամը լսեց, որ դուռը շրխկոցով բացվեց: Առավոտյան նա տեսնելու էր, որ դռան բռնակի գունդը դրոշմվել է միջանցքի պատին: Նա նստած էր անկողնում, երբ իր դուռը ուժով բացվեց, ու մտավ Ռաշիդը:

Հագին սպիտակ անդրավարտիք էր ու շապիկ՝ թևի տակ քրտինքի դեղին բծերով: Ոտքերին հողաթափեր էին: Ձեռքում գոտի էր՝ շագանակագույն կաշվե գոտի, որը գնել էր աղջկա հետ իր *ամիսայի* համար և որի ծակոտկեն մասը հիմա փաթաթում էր բռունցքին:

— Քո արածն է, ես գիտեմ,— գռմռաց նա՝ առաջ գալով:

Մարիամը ցատկեց իր մահճակալից ու հետ-հետ գնաց: Ձեռքերով մեխանիկորեն պաշտպանեց կուրծքը, որտեղ Ռաշիդը սովորաբար առաջինն էր հարվածում:

— Ինչի՞ մասին ես խոսում,— կակազելով հարցրեց Մարիամը:

— Ինձ մոտ չի թողնում: Դու՛ ես սովորեցրել:

Տարիների ընթացքում Մարիամը սովորել էր նրա քամահրանքին ու նախատինքին, նրա ծաղրանքին ու պարսավանքին: Բայց այս վախն անվերահսկելի էր: Այսքան տարի էր անցել, բայց նա դեռ ահից դողում էր, երբ Ռաշիդն այսպիսին էր՝ քմծիծաղում էր, բռունցքին փաթաթում էր գոտին, կաշին ճռռում էր, նրա արյունոտ աչքերը փայլում էին: Դա այծի վախն էր, որին թողել են վագրի վանդակ, և վագրը բարձրացնում է գլուխը թաթերից և սկսում մռնչալ... Հիմա աղջիկը սենյակում էր՝ աչքերը լայն բացած, դեմքը ծամածռված:

— Ես գիտեի, որ դու նրան կփչացնես,— Ռաշիդը շփեց Մարիամի դեմքին: Տարուբերեց գոտին, փորձեց սեփական ազդրի վրա: Ճարմանդը բարձր զնգաց:

— Վերջացրո՛ւ, *բա՛ս*,— ասաց աղջիկը,— Ռաշի՛դ, չանես այդպիսի բան:

— Վերադարձի՛ր սենյակդ:

Մարիամը կրկին հետ–հետ գնաց:

— Չէ՛, չանեմ:

— Հենց հիմա՛:

Ռաշիդը կրկին բարձրացրեց գոտին ու մոտեցավ Մարիամին:

Հետո մի զարմանալի բան պատահեց. աղջիկը թռավ Ռաշիդի վրա: Երկու ձեռքով բռնեց Ռաշիդի թևը ու փորձեց նրան ծնկի բերել, բայց միայն կարողացավ կախվել թևից: Նրան հաջողվեց դանդաղեցնել Ռաշիդի հարձակումը:

— Թո՛ղ,— գոռաց Ռաշիդը:

— Դու հաղթեցի՛ր, հաղթեցի՛ր: Մի՛ արա: Խնդրում եմ, Ռաշի՛դ, մի՛ ծեծիր: Մի՛ արա:

Այդպես պայքարեցին՝ աղջիկը թևից կախված, աղաչում էր, Ռաշիդը փորձում էր ազատվել նրանից՝ հայացքը գամած Մարիամի վրա, որն այնքան ցնցված էր, որ ոչինչ չէր կարող անել:

Ի վերջո, Մարիամը հասկացավ, որ ծեծ չի լինի, ոչ այդ գիշեր: Ռաշիդը հասկացրեց իր տեսակետը: Այդպես մի քանի րոպե մնաց կանգնած՝ ձեռքը բարձրացրած, հևացող կրծքով, ճակատին փայլող քրտինքով: Ռաշիդը դանդաղ իջեցրեց ձեռքը: Աղջկա ոտքերը կպան հատակին, բայց նա դեռ կառչել էր, ասես չէր վստահում նրան: Ռաշիդը ստիպված ուժով դուրս քաշեց ձեռքը:

— Ես ձեզ ցույց կտամ,— ասաց նա ու գոտին գցեց ուսի վրա,— ես ձեզ երկուսիդ ցույց կտամ: Ինձ *ահմաք*՝ ապուշ չես սարքի սեփական տանս մեջ:

Նա Մարիամի վրա նետեց վերջին, մարդասպան հայացքը ու աղջկան բրթեց դեպի ելքը: Երբ նրանց դուռը փակվեց, Մարիամը նորից մտավ անկողին, գլուխը խրեց բարձի տակ ու սպասեց, որ դողը դադարի:

* * *

Այդ գիշեր Մարիամը երեք անգամ արթնացավ: Առաջին անգամ արևմուտքում հրթիռների ոռնոցն էր, որը գալիս էր Քարթեհ-Չարի ուղղությունից: Երկրորդ անգամ երեխայի լացն էր ներքևում, աղջկա «222» ձայնը, կաթի շշի մեջ գդալների ծնգոցը: Վերջապես ծարավը նրան հանեց անկողնուց:

Ներքևում հյուրասենյակը մութ էր, միայն պատուհանից թափանցող լուսնի լույսի շերտն էր: Մարիամը ինչ-որ տեղ լսեց ճանճի բզզոցը, տեսավ անկյունում թուջե վառարանի ուրվագիծը, դրանից բարձրացող խողովակը, որն առաստաղի տակ կտրուկ անկյուն էր կազմում:

Խոհանոցի ճանապարհին Մարիամը ուր որ է ընկնելու էր ինչ-որ բանի վրա: Ոտքերի մոտ ինչ-որ բան էր: Երբ աչքերը հարմարվեցին մթին, նա տեսավ, որ աղջիկն է իր երեխայի հետ. վերմակի վրա պառկած են հատակին: Աղջիկը քնած էր ու խռմփացնում էր: Երեխան արթուն էր: Մարիամը վառեց սեղանի վրայի կերոսինի լամպը ու կռացավ նրանց մոտ: Լույսի ներքո առաջին անգամ մոտիկից տեսավ երեխային՝ նրա մուգ մազափունջը, խիտ թարթիչներով խաժ աչքերը, վարդագույն այտերն ու հասած նռան գույնի շրթունքները:

Մարիամին թվաց, որ երեխան էլ իրեն է ուսումնասիրում: Նա պառկած էր մեջքի վրա, գլուխը թեքել էր ու լարված նայում էր Մարիամին միաժամանակ ուրախ, շփոթված ու կասկածամիտ: Մարիամը մտածեց, որ իր դեմքը կարող է վախեցնել երեխային, բայց երեխան երջանիկ ծղրտաց, ու Մարիամը հասկացավ, որ իր նկատմամբ դրական վճիռ է կայացվել:

— Շշշ,— շշնջաց Մարիամը,— մորդ կարթնացնես, չնայած կիսով չափ խուլ է:

Երեխայի ձեռքը բռունցք դարձավ: Բարձրացրեց, իջեցրեց, ջղաձգորեն տարավ բերանը: Բերանի մեջ ամբողջ ձեռքը դրած՝ երեխան Մարիամին մի ժպիտ պարգևեց՝ շրթունքներին թքի փայլուն պղպջակներ առաջացնելով:

— Մի տե՛ս քեզ: Ինչ տխուր տեսք ունես տղայի շորերով: Ու այս շոգին այսպես փաթաթված: Զարմանալի չէ, որ դեռ արթուն ես:

Մարիամը հանեց վերմակը երեխայի վրայից, սարսափեց, երբ տեսավ երկրորդը, լեզվով ճպպացրեց, այդ մեկն էլ հանեց: Երեխան թեթևացած ծիծաղեց: Թռչնի նման թափ տվեց թևերը:

— Ավելի լավ է, չէ՞:

Երբ Մարիամը հետ քաշվեց, փոքրիկը բռնեց նրա ճկույթից: Փոքրիկ մատները ամուր փաթաթվեցին դրան: Մատիկները տաք էին ու փափուկ, թքից խոնավ:

— Գունու,— ասաց երեխան:

— Լավ, *բաս*, թո՛ղ:

Երեխան բաց չթողեց, նորից ոտքերով խփեց:

Մարիամն ազատեց իր մատը: Երեխան ժպտաց ու ղունղունաց: Բռունցքը նորից բերանը տարավ:

— Ինչի՞ վրա ես այդքան ուրախանում: Հը՞: Ինչի՞ն ես ժպտում: Այդքան էլ խելացի չես, որքան ասում է մայրդ: Հայրդ անտաշի մեկն է, իսկ մայրդ՝ հիմար: Այդքան չէիր ժպտա, եթե իմանայիր: Չէ՛, չէիր ժպտա: Քնի՛ր, հենց հիմա: Դե՛:

Մարիամը ոտքի կանգնեց ու մի քանի քայլ արեց, երբ երեխան սկսեց «ը՛հ, ը՛հ, ը՛հ» ձայները հանել, ինչը, Մարիամը գիտեր, ազդարարում էր ուժգին լացի սկիզբը: Նա վերադարձավ:

— Ի՞նչ է եղել: Ի՞նչ ես ուզում ինձնից:

Երեխան անատամ ժպտաց:

Մարիամը հոգոց հանեց: Նա նստեց ու թույլ տվեց, որ մատը բռնի, նայեց, թե ինչպես է երեխան ծվծվում, ինչպես է փափլիկ տոտիկները ծալում ու օդում խփում: Մարիամը նստած նայում էր, մինչև երեխան չդադարեց շարժվելուց ու սկսեց մեղմ խռմփացնել:

Դրսում ծաղրասարյակները կենսուրախ երգում էին, և ժամանակ առ ժամանակ, երբ երգիչները վեր էին թռչում, Մարիամը տեսնում էր՝ ինչպես է նրանց թևերին անդրադառնում ամպերի միջից թափանցող լուսնի ֆոսֆորեսցենտ կապույտ լույսը: Եվ չնայած կոկորդը ծարավից չորացել էր, իսկ ոտքերը թմրել էին, երկար ժամանակ անցավ, մինչև Մարիամը նրբորեն ազատեց իր մատը երեխայի բռից ու վեր կացավ:

35

Լեյլա

Երկրային բոլոր հաճույքներից Լեյլայի ամենասիրածը Ազիզայի կողքին պառկելն էր՝ Երեխայի դեմքն այնքան մոտ, որ նա տեսնում էր՝ ինչպես են լայնանում ու նեղանում նրա բիբերը: Լեյլան սիրում էր շոյել Ազիզայի հաճելի, փափուկ մաշկը, ձեռքերի փոսիկները, արմունկի փափլիկ ծալքերը: Երբեմն նա պառկեցնում էր Ազիզային իր կրծքին ու գլխի գագաթին շշնջում Թարիքի մասին՝ հոր, որն Ազիզայի համար միշտ անծանոթ կմնա, որի դեմքը Ազիզան երբեք չի տեսնի: Լեյլան պատմում էր նրան, թե որքան լավ էր Թարիքը հանելուկներ լուծում, նրա հնարքների ու չարաճճիությունների մասին, նրա ծիծաղկոտության մասին:

«Նա ուներ գեղեցկագույն թարթիչներ՝ քոնի պես: Գեղեցիկ կզակ, սիրուն քիթ, կլոր ճակատ: Ա՜խ, հայրդ գեղեցիկ էր, Ազիզա՛: Կատարյալ էր: Կատարյալ, ինչպես դու»:

Բայց Լեյլան զգուշավոր էր ու երբեք Թարիքի անունը չէր տալիս:

Երբեմն Լեյլան նկատում էր, որ Ռաշիդը շատ տարօրինակ է նայում Ազիզային: Մի երեկո, ննջասենյակի հատակին նստած ոտքի կոշտուկները պոկելով, Ռաշիդը շատ առօրեական ձայնով հարցրեց.

— Ուրեմն ինչ կար ձեր երկուսիդ միջև:

Լեյլան զարմացած նայեց նրան՝ ձևացնելով, որ չի հասկանում:

— Լեյլին և Մեջնունը: Դու և այդ *յաքլենգան*՝ հաշմանդամը: Ի՞նչ կար ձեր միջև:

— Նա իմ ընկերն էր,— ասաց Լեյլան զգուշությամբ, որպեսզի ձայնի ելևէջները շատ չտարբերվեն: Երեխայի շշով զբաղվեց:— Դու գիտես:

— Ես չգիտեմ, թե ինչ գիտեմ:— Ռաշիդը դրեց կտրված կոշտուկները պատուհանագոգին ու ընկավ մահճակալի վրա: Զսպանակները բողոքելով ճռռացին: Ռաշիդը փռեց ոտքերն ու քորեց

արանքը:— Իսկ որպես... ընկերներ ինչ-որ անկարգություն արե՞լ եք միասին:

— Անկարգությո՞ւն:

Ռաշիդը անհոգ ժպտաց, բայց Լեյլան զգում էր նրա սառը, զննող հայացքը:

— Սպասիր՝ բացատրեմ: Քեզ համբուրե՞լ է: Գուցե ձեռքը տարել մի տեղ, որտեղ պետք չէ՞:

Լեյլան ցնցվեց՝ հուսալով, որ դա կընկալվի որպես վրդովմունք: Զգում էր՝ ինչպես է սիրտը հասել կոկորդին:

— Նա ինձ համար եղբոր նման էր:

— Ուրեմն ընկե՞ր էր, թե՞ եղբայր:

— Երկուսն էլ: Նա...

— Ո՞ր մեկը:

— Երկուսն էլ:

— Բայց եղբայրներն ու քույրերը հետաքրքրասեր արարածներ են: Այո՛: Երբեմն եղբայրը թույլ է տալիս, որ քույրը տեսնի իր պուպուլիկը, իսկ քույրը...

— Դու զզվելի ես,— ասաց Լեյլան:

— Ուրեմն ոչինչ չի եղել:

— Ես այլևս չեմ ուզում խոսել դրա մասին:

Ռաշիդը գլուխը թեքեց, շրթունքները սեղմեց, գլխով արեց.

— Մարդիկ չարախոսում էին, գիտես: Ես հիշում եմ: Ինչեր ասես, որ չեն ասել ձեր երկուսիդ մասին: Բայց դու ասում ես՝ ոչինչ չի եղել:

Լեյլան ստիպեց իրեն ջղային հայացքով նայել Ռաշիդին:

Ռաշիդը այնքան անտանելի երկար ու անթարթ նայեց Լեյլային, որ կաթի շիշը բռնած նրա ձեռքի մատնոսկրերը սպիտակեցին, և Լեյլային պետք եկավ իր ամբողջ ուժը, որ չընկրկի:

Լեյլան ցնցվեց, երբ մտածեց, թե ինչ կաներ Ռաշիդը, եթե իմանար, որ իրենից փող են գողանում: Ազիզայի ծնվելուց հետո ամեն շաբաթ Լեյլան բացում էր Ռաշիդի դրամապանակը, երբ նա քնած էր կամ արտաքնոցում էր, ու մի թղթադրամ հանում: Որոշ շաբաթներ, եթե դրամապանակը թեթև էր, նա ընդամենը հինգ աֆղանի էր վերցնում կամ ընդհանրապես ոչինչ՝ վախենալով, որ Ռաշիդը կնկատի: Երբ դրամապանակը լիքն էր, նա վերցնում էր տասը կամ քսան,

մի անգամ նույնիսկ երկու քսանանոց վերցրեց: Փողը թաքցնում էր իր վանդակավոր ձմեռային վերարկուի աստառի մեջ ներկարված գրպանիկում:

Լեյլան մտածեց, թե ինչ կաներ Ռաշիդը, եթե իմանար, որ ինքը մտադիր է փախչել հաջորդ գարնանը: Ամենաուշը հաջորդ ամռանը: Լեյլան հույս ուներ, որ հազար կամ ավելի աֆղանի կկուտակի, որի կեսը կտար որպես Քաբուլից Փեշավար ավտոբուսի ուղեվարձ: Այդ ժամանակ գրավ կդներ իր հարսանեկան մատանին և մյուս զարդերը, որոնք Ռաշիդը տվել էր իրեն անցած տարի, երբ ինքը դեռ նրա պալատի *մալիքան* էր:

— Ինչևէ,— վերջապես ասաց Ռաշիդը ու մատներով թմբկահարեց փորի վրա,— ինձ չի կարելի մեղադրել: Ես ամուսին եմ: Ամուսինները պետք է հետաքրքրվեն նման բաներով: Բայց նրա բախտը բերել է, որ այդպես մահացավ: Որովհետև եթե այստեղ լիներ, եթե ձեռքերս հասներ նրան... Նա ատամների արանքով օդը ներս քաշեց ու օրորեց գլուխը:

— Բա ասում էիր՝ մահացածների հետևից չի կարելի վատը խոսել:

— Երևի որոշ մարդիկ դեռևս բավական մահացած չեն,— ասաց Ռաշիդը:

* * *

Երկու օր անց Լեյլան առավոտյան արթնացավ ու ննջասենյակի դռան մոտ հայտնաբերեց իրար վրա դրված կոկիկ ծալված մանկական շորեր: Լայնափեշ զգեստ՝ փոքրիկ վարդագույն ձկնիկներով, կապույտ ծաղկավոր բրդյա զգեստ՝ համապատասխան գուլպաներով ու ձեռնոցներով, գազարագույն պուտավոր դեղին պիժամա ու կանաչ բամբակյա շալվար՝ ծայրերին պուտավոր ծալեր:

— Ասում են,— այդ երեկոյան ընթրիքի ժամանակ ասաց Ռաշիդը ու ճպպացրեց շրթունքները՝ առանց նկատելու Ազիզային կամ նրա դեղին պիժաման, որը հագցրել էր Լեյլան,— որ Դոսթումը անցնելու է Հեքմաթյարի կողմը: Մասուդի գործը կբարդանա՝ այդ երկուսի դեմ պայքարել: Չմոռանանք նաև խազարներին:— Այդ ամռանը Մարիամի պատրաստած թթու բադրիջանից մի պատառ պո-

կեց:— Հուսանք, որ դա ընդամենը բամբասանք է: Որովհետև եթե ճիշտ դուրս գա, այս պատերազմը,— յուղոտ ձեռքը թափ տվեց,— Փաղմանում ուրբաթօրյա խնջույքի պես մի բան կթվա:

Ավելի ուշ Ռաշիդը պառկեց Լեյլայի վրա ու անխոս ու արագորեն թեթևացավ, ամբողջությամբ հագնված՝ բացառությամբ շալվարի, որը ոչ թե հանեց, այլ իջեցրեց մինչև կոճերը: Երբ կատաղած ճոճումը դադարեց, Ռաշիդը շրջվեց ու մի քանի րոպե հետո արդեն քնած էր:

Լեյլան ննջասենյակից դուրս սողաց ու գտավ Մարիամին խոհանոցում կքանստած երկու իշխան մաքրելուց: Կողքին արդեն թրջվում էր մի պղինձ բրինձը: Խոհանոցից գալիս էր չամանի, ծխի, տապակած սոխի ու ձկան հոտ:

Լեյլան նստեց անկյունում ու զգեստի փեշը քաշեց ծնկներին:

— Շնորհակալություն,— ասաց:

Մարիամը նրա վրա ուշադրություն չդարձրեց: Վերջացրեց կտրտել առաջին իշխանը և վերցրեց երկրորդը: Քերթավոր դանակով կտրեց լողակները, շուռ տվեց ձուկը՝ փորը դեպի վեր, ու փորձառու ձեռքով կտրեց պոչից մինչև խռիկները: Լեյլան նայում էր՝ ինչպես Մարիամը բութ մատը դրեց ձկան բերանը՝ ներքևի ծնոտի տակ, սեղմեց ու մեկ վայրընթաց շարժումով հեռացրեց խռիկներն ու փորոտիքը:

— Գեղեցիկ շորեր են:

— Ինձ պետք չեն,— մռթմռթաց քթի տակ ասաց Մարիամը: Ձուկը գցեց լպրծուն մոխրագույն հյութով պատված թերթի վրա ու կտրեց գլուխը:— Կա՛մ աղջկադ էր հասնելու, կա՛մ ցեցին:

— Որտեղ ես սովորել ձուկն այդպես մաքրել:

— Երբ փոքրիկ աղջիկ էի, ապրում էի առվի մոտ, ինքս էի իմ ձուկը բռնում:

— Ես երբեք ձուկ չեմ բռնել:

— Առանձնապես մեծ բան չի: Հիմնականում պիտի սպասես:

Լեյլան նայում էր՝ ինչպես է փորոտիքը հանած իշխանին երեք մասի բաժանում:— Ի՞նքդ ես կարել շորերը:

Մարիամը գլխով արեց:

— Ճրբ:

Մարիամը ձկան կտորները լվաց ջրով լի թասում:

— Երբ հղի էի առաջին անգամ կամ գուցե երկրորդ անգամ: Տասնութ, տասնինը տարի առաջ: Վաղուց, մի խոսքով: Ասացի՝ ինձ պետք չեկան:

— Դու իսկապես լավ *խայաթ*՝ դերձակուհի ես: Գուցե սովորեցնե՞ս ինձ:

Մարիամը իշխանի լվացած կտորները դրեց մաքուր ամանի մեջ: Մատներից ջուրը կաթկթում էր. նա բարձրացրեց գլուխը և նայեց Լեյլային, ասես առաջին անգամ էր տեսնում:

— Անցած երեկո, երբ նա... Ոչ ոք երբեք ինձ պաշտպան չի կանգնել,— ասաց նա:

Լեյլան զննում էր Մարիամի կախ ընկած այտերը, հոգնածությունից կախված կոպերի ծալքերը, բերանը շրջանակող խոր կնճիռները՝ տեսավ այդ ամենը, կարծես առաջին անգամ նայում նրան: Եվ առաջին անգամ Լեյլան տեսավ ոչ թե թշնամու, այլ չարտահայտված թախծի, հանդուրժված բեռի, ճակատագրին հանձնվելու ու դիմանալու դեմք: Եթե մնամ, իմ դեմքն էլ այսպիսին կլինի քսան տարի անց, մտածեց Լեյլան:

— Ես չէի կարող նրան թույլ տալ,— ասաց Լեյլան,— ես այնպիսի տանը չեմ մեծացել, որտեղ մարդիկ նման բաներ են արել:

— Հիմա սա է քո տունը, պետք է սովորես սրան:

— Ո՛չ *դրան*: Չեմ սովորի:

— Նա քեզ էլ կհասնի, չկարծես,— ասաց Մարիամը ու ձեռքերը լաթի կտորով չորացրեց,— շատ շուտով: Եվ դու նրան աղջիկ ես պարգևել: Ուրեմն, տեսնո՞ւմ ես, քո մեղքը իմ մեղքից ավելի աննելի է:

Լեյլան ոտքի կանգնեց.

— Գիտեմ, որ դրսում ցուրտ է, բայց ինչ կասես, որ մեղավորներով մի բաժակ *չայ* խմենք բակում:

Մարիամը զարմացած տեսք ընդունեց.

— Չեմ կարող, ես դեռ պետք է լոբին կտրտեմ ու լվանամ:

— Առավոտյան կօգնեմ քեզ:

— Եվ պետք է մաքրեմ այստեղ:

— Միասին կանենք: Եթե չեմ սխալվում, մի քիչ հալվա է մնացել: *Չայով* շատ համով է:

Մարիամը լաթի կտորը դրեց սեղանին: Լեյլան զգաց, թե ինչ հուզմունքով Մարիամը իջեցրեց թևքերը, ուղղեց իր հիջաբը, մազի փունջը հետ գցեց:

— Չինացիներն ասում են՝ ավելի լավ է երեք օր սննդից զրկվել, քան մեկ օր թեյից:

Մարիամը կիսաժպտաց.

— Լավ ասացվածք է:

— Իրոք:

— Բայց չեմ կարող երկար մնալ:

— Մեկ բաժակ:

Նրանք նստեցին դրսում դրված ծալովի աթոռներին և նույն ամանից մատներով հալվա կերան: Երկրորդ բաժակը խմեցին, իսկ երբ Լեյլան հարցրեց Մարիամին, թե արդյոք երրորդն էլ է ուզում, նա համաձայնվեց: Երբ բլուրներից լսվեցին հրազենային կրակոցները, նրանք հետևեցին, թե ինչպես են ամպերը սահում լուսնի վրա, և այդ տարվա վերջին լուսատտիկները մթության մեջ պայծառ դեղին աղեղներ գծում: Իսկ երբ Ազիզան լացելով արթնացավ, և Ռաշիդը գոռաց, որ Լեյլան բարձրանա ու նրա ձայնը կտրի, Լեյլան ու Մարիամը մի հայացք փոխանակեցին: Անկեղծ, հասկացող հայացք: Եվ Մարիամի հետ այս թռուցիկ, անխոս փոխանակումից Լեյլան հասկացավ, որ նրանք այլևս թշնամիներ չեն:

36

Մարիամ

Այդ երեկոյից հետո Մարիամն ու Լեյլան տան գործերը միասին էին անում: Նստում էին խոհանոցում ու խմոր գրտնակում, կանաչ սոխ կտրտում, սխտոր ծեծում, վարունգի կտորներ առաջարկում Ազիզային, որ նրանց կողքին գդալներն էր իրար խփում ու խաղում գազարներով: Բակում Ազիզան պառկում էր հյուսած օրորոցում՝ վրան հագուստի մի քանի շերտ, ձմեռային շարֆը վզին պինդ փաթաթած: Մարիամն ու Լեյլան լվացք անելիս աչքները պահում էին վրան, և Մարիամի ձեռքերը խփվում էին Լեյլայի

ձեռքերին, երբ նրանք տրորում էին վերնաշապիկները, շալվարներն ու տակաշորերը:

Մարիամը դանդաղ սովորեց այս փորձնական, բայց հաճելի ընկերակցությանը: Նա սիրեց երեք գավաթ *չայերը*, որոնք Լեյլայի հետ խմում էին բակում՝ իրիկնային այդ նոր ծիսակարգը: Առավոտյան Մարիամը անհամբեր սպասում էր Լեյլայի ճաքած հողաթափերի ձայնին, որոնք խփվում էին աստիճաններին, երբ նա իջնում էր նախաճաշի, և Ազիզայի զրնգուն բարձր ծիծաղին, նրա ութ ատամիկներին, մաշկի կաթնային բույրին: Եթե Լեյլան ու Ազիզան ուշ էին արթնանում, Մարիամն անհանգստանում էր: Լվանում էր ամանները, որոնք կարիք չկար լվանալու: Վերադասավորում էր հյուրասենյակի բարձերը: Մաքրում էր մաքուր պատուհանագոգերը: Ինքն իրեն զբաղեցնում էր, մինչև Լեյլան մտնում էր խոհանոց՝ Ազիզան ազդրին նստած:

Երբ Ազիզան առավոտյան տեսնում էր Մարիամին, աչքերը միշտ լայն բացվում էին, և սկսում էր տզտզալ ու գալարվել մոր գրկում: Նա ձեռքերը տարածում էր դեպի Մարիամը, պահանջում, որ գրկի, թաթիկները արագ բացուխուփ անում՝ դեմքին երկրպագում ու դողացող անհանգստություն:

— Ի՞նչ տեսարան ես սարքում,— ասում էր Լեյլան՝ թողնելով, որ սողա Մարիամի մոտ,— ինչ տեսարան: Հանգստացի՛ր: *Խալա* Մարիամը ոչ մի տեղ չի գնա: Այստեղ է մորաքույրդ, տեսնո՞ւմ ես: Դե գնա՛:

Հենց Ազիզան հայտնվում էր Մարիամի ձեռքերում, բութ մատը տանում էր բերանն ու դեմքը թաղում Մարիամի պարանոցում:

Մարիամը կաշկանդված վեր-վեր էր թռցնում նրան կիսազարմացած, կիսաշնորհակալ ժպիտով: Մարիամը երբեք այսքան ցանկալի չէր եղել: Նրան ոչ ոք երբեք այսքան պարզամտորեն, այսքան անվերապահորեն սեր չէր խոստովանել:

Ազիզան արցունքներ էր բերում Մարիամի աչքերից:

— Ինչո՞ւ է սրտիկդ կպել ինձ պես գեշ պառավ ջադուին,— շշնջում էր Մարիամը Ազիզայի մազերի մեջ,— հը՞: Ես ոչ ոք եմ, չե՞ս տեսնում: *Դեհաթի*[117]: Ի՞նչ ունեմ քեզ տալու:

---

[117] Դեհաթի՝ գեղջկուհի

Բայց Ազիզան բավարարված մռթմռթում էր ու դեմքն ավելի խոր թաղում: Եվ երբ դա անում էր, Մարիամի սիրտը նվաղում էր: Աչքերը թացանում էին: Սիրտը տեղից պոկվում էր: Եվ նա զարմանում էր, թե ինչպես ստացվեց, որ այսքան անիմաստ տարիներից հետո, իր կյանքի կեղծ, չստացված հարաբերություններից հետո այս փոքրիկ արարածը նրա համար դարձավ առաջին իրական կապը:

* * *

Հաջորդ տարվա սկզբին՝ 1994 թվականի հունվարին, Դոսթումն իրոք անցավ մյուս կողմը: Նա միացավ Գուլբուդին Հեքմաթյարին և դիրքավորվեց Բալա Հիսարի՝ Կոհ-էլ-Շիրդավազա լեռներից քաղաքին նայող հին ամրոցի պատերի մոտ: Նրանք միասին գնդակոծում էին Պաշտպանության նախարարության և նախագահական պալատի մոտ տեղակայված Մասուդի ու Ռաբանիի զորքերը: Քաբուլ գետի երկու կողմից միմյանց վրա հրետանային կրակ էին թափում: Փողոցները լցվեցին դիակներով, ապակու և մետաղի փշրված ջարդոններով: Թալան, սպանություն և ահագնացող չափերի հասնող բռնաբարություն, որով վախեցնում էին քաղաքացիներին և պարգևատրում զինյալներին: Մարիամը լսում էր բռնաբարվելու վախից ինքնասպան եղած կանանց մասին և տղամարդկանց, որոնք հանուն պատվի սպանում էին իրենց կանանց կամ աղջիկներին, եթե նրանց բռնաբարել էին զինյալները:

Ազիզան ծղրտում էր ականների դմփդմփոցից: Նրան շեղելու համար Մարիամը հատակին բրնձի հատիկները դասավորում էր տան, աքաղաղի կամ աստղի ձևով և թույլ տալիս, որ Ազիզան ցրի դրանք: Նա Ազիզայի համար փղեր էր նկարում, ինչպես ցույց էր տվել Ջալիլը՝ մեկ գծով, առանց գրչի ծայրը թղթից բարձրացնելու:

Ռաշիդն ասում էր, որ ամեն օր տասնյակներով խաղաղ բնակիչներ են սպանվում: Բժշկական պարագաներ ունեցող հիվանդանոցներն ու խանութները ռմբակոծվում են: Օգնության սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցներին թույլ չեն տալիս քաղաք մտնել, ասում էր նա, թալանում են դրանք, գնդակոծում: Մարիամը մտածում էր, թե արդյոք նման կռիվ է նաև Հե-

ռաթում, և եթե այդպես է, ինչպե՞ս է Մոլլա Ֆայզուլան, արդյո՞ք դեռ ողջ է, և Բիբի ջոն՝ իր բոլոր որդիների, հարսների ու թոռների հետ: Եվ, իհարկե, Ջալիլը: Արդյո՞ք նա թաքնվում է, ինչպես Մարիամը: Թե՞ վերցրել է կանանց ու երեխաներին ու փախել երկրից: Նա հույս ուներ, որ Ջալիլը ապահով վայրում է, որ խուսափել է այս բոլոր սպանություններից:

Կռիվը նույնիսկ Ռաշիդին ստիպեց մեկ շաբաթ տանը մնալ: Նա կողպեց բակի դուռը, թակարդներ դրեց, մուտքի դուռն էլ կողպեց ու պատնեշեց բազմոցով: Տնով հետուառաջ էր անում, ծխում, պատուհանից նայում, մաքրում հրացանը, կրկին ու կրկին լիցքավորում այն: Երկու անգամ կրակեց դեպի փողոց՝ պնդելով, որ տեսել է, որ ինչ-որ մեկը փորձում է պատը մագլցել:

— Ստիպում են երիտասարդ տղաներին միանալ,— ասաց նա,— այդ մոջահեդները: Օրը ցերեկով, հրացանի նշանի տակ: Փողոցից տանում են տղաներին: Իսկ երբ հակառակորդ զինյալները բռնում են այդ տղաներին, խոշտանգում են: Լսել եմ, որ էլեկտրահարում են, այդպես եմ լսել, տափակաբերանով ճզմում են ձվիկները: Ստիպում են, որ տղաները իրենց տուն տանեն: Հետո ջարդելով ներս են մտնում, սպանում հայրերին, բռնաբարում քույրերին ու մայրերին:

Նա հրացանը օդում թափահարեց:

— Տեսնենք՝ կփորձե՞ն իմ տուն մտնել: Ձվերը կջարդե՛մ: Գլուխները կթռցնե՛մ: Ձեր երկուսի բախտը բերել է, որ ձեր մարդը Շայթանից[118] չի վախենում:

Նա նայեց հատակին ու ոտքերի մոտ նկատեց Ազիզային:

— Կորի՛ր ոտքերիս տակից,— բղավեց՝ հրացանով քշելու շարժում անելով,— հետևիցս չգա՛ս: Ու դաստակներդ էլ չոլորես այդպես: Ձեմ գրկելու: Գնա՛: Գնա՛, քանի ոտքիս տակ չես ընկել:

Ազիզան վեր թռավ: Նեղացած ու շփոթված սողաց հետ դեպի Մարիամը: Մարիամի գրկում տրտում ծծեց բութ մատը ու մռայլ, մտածկոտ նայեց Ռաշիդին: Ժամանակ առ ժամանակ նայում էր Մարիամին՝ ասես սփոփանք փնտրելով:

---

[118] Շայթան՝ սատանա

Բայց հայրերի հարցում Մարիամը ոչ մի սփոփանք չէր կարող տալ:

* * *

Մարիամը հանգիստ շունչ քաշեց, երբ մարտերը նորից հանդարտվեցին: Հիմնական պատճառն այն էր, որ նրանք այլևս ստիպված չէին փակված մնալ Ռաշիդի հետ, որն իր խոժոռ տրամադրությամբ թունավորում էր տունը: Ռաշիդը շատ վախեցրեց Մարիամին, երբ լիցքավորված հրացանը ճոճեց Ազիզայի մոտ:

Այդ ճմռանը մի օր Լեյլան խնդրեց հյուսել Մարիամի մազերը:

Մարիամը անշարժ նստել էր ու հայելու մեջ հետևում էր, թե ինչպես է Լեյլան բարակ մատներով կապկպում իր հյուսերը՝ կենտրոնացումից դեմքը կնճռոտված: Ազիզան կուչ եկած քնած էր հատակին: Ձեռքի տակ Մարիամի սարքած տիկնիկն էր: Մարիամը մեջը լոբի էր լցրել, թեյով ներկած կտորից զգեստ կարել ու փոքրիկ դատարկ կոճերը թելի վրա անցկացնելով՝ վզնոց սարքել:

Ազիզան քնած գազ բաց թողեց: Լեյլան սկսեց ծիծաղել, Մարիամը միացավ: Նրանք այնպես ծիծաղեցին՝ հայելու մեջ միմյանց արտացոլմանը նայելով, արցունքներն աչքերին, և այդ պահն այնքան բնական էր, այնքան անկաշկանդ, որ Մարիամը հանկարծ սկսեց պատմել նրան Ջալիլի, Նանայի և *ջինների* մասին: Լեյլան կանգնած ձեռքերը դրել էր Մարիամի ուսերին, աչքերը չէր կտրում հայելու մեջ արտացոլվող Մարիամի դեմքից: Բառերը դուրս են ցայտում, ինչպես արյունն է ժայթքում զարկերակից: Մարիամը նրան պատմեց Բիբի ջոյի, Միլլա Ֆայզուլլայի մասին, Ջալիլի տուն նվաստացուցիչ ճամփորդության, Նանայի ինքնասպանության մասին: Պատմեց Ջալիլի կանանց, Ռաշիդի հետ հապճեպ *նիքայի* մասին, Քաբուլ կատարած ուղևորության, իր հղիությունների, հույսի և հիասթափության անվերջ շրջանների մասին, և ինչպես Ռաշիդը երես թեքեց նրանից:

Ավելի ուշ Լեյլան նստեց Մարիամի ոտքերի մոտ: Ցրված թելի մի կտոր հանեց Ազիզայի մազերից: Լռություն տիրեց:

— Ես էլ քեզ պատմելու բան ունեմ,— ասաց Լեյլան:

* * *

Մարիամն այդ գիշեր չքնեց: Անկողնում նստած՝ հետևում էր անձայն թափվող ձյանը:

Փոխվում էին տարվա եղանակները. Քաբուլում հանդիսավոր կերպով նշանակում և սպանում էին նախագահներին. կայսրությունը պարտություն կրեց. հին պատերազմները ավարտվեցին, և սկսվեցին նորերը: Բայց Մարիամը հազիվ էր դա նկատում, հազիվ էր ուշադրություն դարձնում: Նա այս տարիներն անցկացրել էր իր մտքի հեռավոր անկյունում՝ չոր, անբերրի դաշտում, ցանկություններից կամ տառապանքից անդին, առանց երազանքների ու հիասթափությունների: Այնտեղ ապագան կարևոր չէր: Իսկ անցյալը միայն մեկ բան էր ուսուցանում. սերը վնասաբեր սխալ է, իսկ սիրո հանցակից հույսը՝ դավաճանական պատրանք: Եվ երբ այդ երկվորյակ թունավոր ծաղիկները սկսում էին փթթել այդ դաշտի անջրդի հողում, Մարիամը դրանք արմատախիլ էր անում: Արմատախիլ էր անում ու դեն նետում, նախքան դրանք ծիլ կտան:

Սակայն ինչ-որ կերպ այս վերջին ամիսների ընթացքում Լեյլան ու Ազիզան՝ իր պես *հարամի*, ինչպես պարզվեց, դարձան նրա մի մասը, և այժմ առանց նրանց կյանքը, որը Մարիամն այսքան երկար հանդուրժել էր, հանկարծակի դարձավ անտանելի:

* * *

— Գարնանը ես ու Ազիզան հեռանում ենք: Արի՛ մեզ հետ, Մարիա՛մ:

Տարիները դաժան էին Մարիամի նկատմամբ: Բայց գուցե առջևում, մտածում էր նա, լավ տարիներ են գալու: Նոր կյանք, կյանք, որտեղ կգտնի այն օրինությունները, որոնք, Նանայի խոսքերով, իր պես *հարամին* երբեք չի տեսնի: Երկու նոր ծաղիկներ անսպասելիորեն բուսնեցին իր կյանքում, և երբ Մարիամը նայում էր իջնող ձյանը, նա պատկերացում էր Միլլա Ֆայզուլլային, որը պտտում է իր *թսբեհի* հատիկները, թեքվում ու շշնջում մեղմ, դողդոջուն ձայնով. «Բայց Աստվածն է դրանք տնկել, Մարիա՛մ ջո: Նրա կամքն է, որ նրանց մասին հոգ տանես: Նրա կամքն է, աղջի՛կս»:

37

Լեյլա

Երբ ցերեկվա լույսը աստիճանաբար սպիտակեցրեց երկնքի խավարը 1994-ի գարնան այդ առավոտյան, Լեյլան արդեն համոզված էր, որ Ռաշիդն ամեն ինչ գիտի: Որ ամեն պահի նրան դուրս կքաշի անկողնուց ու կհարցնի՝ արդյոք իրեն իսկապես այնպիսի *ախարի*՝ էշի տեղ է դրել, որ ինքը երբեք չի իմանա: Բայց հնչեց ազանը, առավոտյան արևն ընկավ տափակ տանիքներին, աքլորները կանչեցին, և ոչ մի արտասովոր բան չպատահեց:

Լեյլան լսեց, որ նա բաղնիքում է, լվացարանի եզրին թխկթխկացնում է սափրիչը: Հետո իջավ ներքև, հետուառաջ արեց, տաքացրեց թեյը: Ձնգացին բանալիները: Հիմա անցավ բակը, հեծանիվը հանեց:

Լեյլան նայում էր հյուրասենյակի վարագույրների ճեղքից: Տեսավ, թե ինչպես էր պտտում ոտնակները՝ մեծ մարդ փոքրիկ հեծանիվի վրա, տեսավ ղեկին անդրադարձող առավոտյան արևը:

— Լեյլա՛:

Մարիամը կանգնած էր դռան մեջ: Լեյլան հասկացավ, որ նա էլ չի քնել: Հետաքրքիր էր՝ արդյո՞ք Մարիամն էլ էր ամբողջ գիշեր տառապում էյֆորիայի բռնկումներից ու սահմռկեցուցիչ վախի նոպաներից:

— Կես ժամից մեկնում ենք,— ասաց Լեյլան:

* * *

Տաքսու հետևի նստարանին նրանք լուռ էին: Ազիզան նստեց Մարիամի գոգը՝ տիկնիկն ամուր սեղմած, ու աչքերը լայն բացած նայում էր պատուհանի կողքով արագ ընթացող քաղաքին:

— Օնա՛,— բացականչեց նա՝ ցույց տալով պարան խաղացող աղջիկներին,— Մայա՛մ: Օնա՛:

Լեյլան ամենուր տեսնում էր Ռաշիդին: Նա դուրս է գալիս ածխափոշու գույնի պատուհաններով վարսավիրանոցներից, կաքավ

վաճառող փոքրիկ կրպակներից, ջարդուխուրդ եղած անդուռ խանութներից, որտեղ գետնից մինչև առաստաղ հին անվադողեր էին:

Լեյլան իր նստատեղում ներքև սահեց:

Կողքին նստած՝ Մարիամը աղոթք էր մրմնջում: Լեյլան ուզում էր տեսնել նրա դեմքը, բայց Մարիամը *բուրքայով* էր՝ երկուսն էլ *բուրքա* էին հագել, և Լեյլան կարող էր ցանցի միջով տեսնել միայն նրա աչքերի փայլը:

Շաբաթներով Լեյլան տնից դուրս չէր եկել՝ չհաշված օր առաջ գրավատուն կատարած կարճատև այցը, որտեղ նա ապակե վաճառասեղանին դրեց իր հարսանեկան մատանին, և որտեղից դուրս եկավ ոգևորված, որ ամեն ինչ վերջացած է, որ հետադարձ չկա:

* * *

Լեյլան ամենուր տեսնում էր այն վերջին մարտերի հետևանքները, որոնց ձայնը լսել էր տնից: Տներ՝ առանց տանիքի՝ աղյուսի ու խճաքարի փլատակներում, փոս ընկած շենքեր՝ անցքերից դուրս պրծած հեծաններով, վառված, ջարդված մեքենաների շրջված կմախքներ, երբեմն մեկը մյուսի վրա, ամեն տրամաչափի անցքերով պատեր, ամենուրեք կոտրված ապակի: Նա տեսավ հուղարկավորության թափոր, որը շարժվում էր դեպի մզկիթ, հետևից քայլող սևազգեստ ծեր կնոջ, որը պոկում էր իր մազերը: Նրանք անցան գերեզմանոցի կողքով, որի շիրիմներին քարեր էին թափվել, և քամուց ծածանվում էին *շահիդների* պատառոտված դրոշները:

Լեյլան ձգվեց ճամպրուկի վրայով, բռնեց դստեր փափուկ թաթիկը:

* * *

«Լահորի դարպասներ» ավտոբուսի կանգառում՝ Արևելյան Քաբուլի Փոլ Մահմուդ Խան թաղամասի մոտ, մի շարք ավտոբուսներ անգործ շարված էին ճամփեզրին: Չալմայով տղամարդիկ ավտոբուսների վրա կապոցներ ու արկղեր էին բարձում, պարաններով ամրացնում ճամպրուկները: Կայարանի տոմսարկղի մոտ երկար

հերթում տղամարդիկ էին: Բուրքայով կանայք կանգնած էին խմբերով և զրուցում էին՝ իրենց ունեցվածքը ոտքերի մոտ դրած: Փոքր երեխաներին վեր-վեր էին թռցնում, մեծ երեխաներին հանդիմանում էին հեռու գնալու համար:

Մոջահեդ զինյալները պարեկում էին կայարանը և ճամփեզրը, աջ ու ձախ կտրուկ հրահանգներ տալիս: Հագներին ճտքավոր կոշիկներ էին, *փակոլներ*, փոշոտ կանաչ զինվորական հագուստ: Բոլորի ձեռքին «Կալաշնիկովներ» էին:

Լեյլան զգում էր, որ իրեն հետևում են: Նա ոչ ոքի դեմքին չէր նայում, բայց նրան թվում էր, որ այստեղ բոլորը գիտեն, բոլորը դատապարտելով են նայում իր ու Մարիամի արածին:

— Մեկին տեսնո՞ւմ ես,— հարցրեց Լեյլան:

Մարիամը Ազիզային տեղափոխեց մի ձեռքից մյուսը:

— Նայում եմ:

Սա, Լեյլան գիտեր, առաջին ռիսկային մասն է՝ գտնել այնպիսի տղամարդու, որը կներկայանա որպես նրանց ընտանիքի անդամ. 1978–1992 թվականների կանանց ազատություններն ու հնարավորությունները այժմ անցյալում էին: Լեյլան դեռ հիշում էր Բաբիի խոսքերը կոմունիստական իշխանության այդ տարիների մասին. «Աֆղանստանում կին լինելու համար լավ ժամանակ է, Լեյլա՛»: 1992-ի ապրիլից, երբ իշխանությունն անցավ մոջահեդներին, Աֆղանստանի անունը դարձավ Աֆղանստանի Իսլամական Պետություն: Գերագույն դատարանը, որը գլխավորում էր Ռաբանին, լի էր անզիջում մոլլաներով, որոնք չեղյալ հայտարարեցին կոմունիստական ժամանակաշրջանի օրենքները, որոնք կանանց իրավունքներ էին տալիս, և փոխարենը ընդունեցին որոշումներ, որոնք հիմնված էին Շարիայի[119] վրա՝ խիստ իսլամական օրենքների, համաձայն որոնց՝ կանայք պետք է ծածկվեին, չպետք է ճամփորդեին առանց ընտանիքի անդամ հանդիսացող տղամարդու, իսկ ամուսնական դավաճանության համար քարկոծվելու էին: Չնայած այս օրենքների կիրառումը լավագույն դեպքում անհետևողական էր: «Բայց նրանք

[119] Շարիա՝ իսլամական կրոնական և իրավական օրենքների ժողովածու, որը մշակվել է Արաբական խալիֆայությունում 7–12-րդ դարերում:

ավելի լայն կկիրառեին դրանք,— Լեյլան ասաց Մարիամին,— եթե այդքան զբաղված չլինեին իրար սպանելով: Եվ մեզ սպանելով»:

Ճամփորդության երկրորդ ռիսկային մասը կսկսվեր Պակիստան ժամանելուց հետո: Արդեն մոտ երկու միլիոն աֆղանցի փախստականներ ընդունած Պակիստանը այդ տարվա հունվարին փակել էր սահմանները աֆղանների համար: Լեյլան լսել էր, որ ընդունելու են միայն մուտքի արտոնագիր ունեցողներին: Բայց սահմանը «ծակեր» ուներ. միշտ էլ այդպես է եղել, և Լեյլան գիտեր, որ հազարավոր աֆղաններ դեռևս մտնում են Պակիստան կամ կաշառքով, կամ մարդասիրական հիմքերով, և միշտ կան վարձու մաքսանենգներ: Մենք ձևը կգտնենք, երբ տեղ հասնենք, ասաց նա Մարիամին:

— Ի՞նչ կասես նրա մասին,— ասաց Մարիամը՝ ծնոտով ցույց տալով:

— Վստահելի տեսք չունի:

— Իսկ նա՞:

— Շատ ծեր է: Եվ ճամփորդում է երկու այլ տղամարդկանց հետ:

Վերջապես Լեյլան գտավ այգու նստարանին նստած մի տղամարդու, որի կողքին քողով կինն էր ու թասակով փոքրիկ տղա, մոտավորապես Ազիզայի տարիքի, որը թռվռում էր ծնկներին: Տղամարդը բարձրահասակ էր, բարեկազմ, մորուքավոր, հագին արձակած օձիքով վերնաշապիկ էր և համեստ գորշ բաճկոն՝ պոկված կոճակներով:

— Սպասի՛ր այստեղ,— ասաց նա Մարիամին: Քայլելիս կրկին լսեց, որ Մարիամն աղոթք է շշնջում:

Երբ Լեյլան մոտեցավ երիտասարդին, նա վեր նայեց՝ ձեռքով աչքերն արևից պաշտպանելով:

— Կներե՛ս, եղբա՛յր, Փեշավա՞ր ես գնում:

— Այո՛,— ասաց նա՝ աչքերը կկոցելով:

— Գուցե կարողանաս օգնել մեզ: Կարո՞ղ ես լավություն անել:

Նա տղային տվեց կնոջը: Լեյլայի հետ մի կողմ գնացին:

— Ի՞նչ է պատահել, համշիրա՞:

Լեյլան ոգևորվեց, երբ տեսավ տղամարդու մեղմ աչքերը, բարի դեմքը:

Նա պատմեց պատմությունը, որի մասին պայմանավորվել էին Մարիամի հետ:

— Ես *աբիվա* եմ,— ասաց Լեյլան,— այրի: Ես, մայրս ու աղջիկս այլևս ոչ ոք չունենք Քաբուլում: Գնում ենք Փեշավար՝ հորեղբոր հետ ապրելու:

— Ուզում եք գալ ընտանիքիս հետ,— ասաց երիտասարդը:

— Գիտեմ, որ *զահմաթ*[120] է քեզ համար, բայց դու արժանավոր տեսք ունես, եղբայր, ու ես...

— Մի՛ անհանգստացիր, համշիրա՛, ես հասկանում եմ, խնդիր չկա: Թո՛ւյլ տուր՝ գնամ ու ձեզ համար տոմս գնեմ:

— Շնորհակալություն, եղբայր, *սավաբ* է՝ բարի գործ, Աստված չի մոռանա:

Լեյլան բուրքայի տակի գրպանից ծրար հանեց ու փոխանցեց նրան: Մեջը հազար հարյուր աֆղանի էր՝ մոտ կեսը այն գումարի, որը կուտակել էր անցյալ տարվա ընթացքում՝ գումարած մատանու վաճառքը:

Տղամարդը ծրարը դրեց շալվարի գրպանը:

— Սպասի՛ր այստեղ:

Լեյլան տեսավ, որ նա մտավ կայարան: Կես ժամ անց վերադարձավ:

— Լավ կլինի, որ ձեր տոմսերը մոտս լինեն,— ասաց նա,— ավտոբուսը շարժվում է մեկ ժամից՝ ժամը տասնմեկին: Բոլորս միասին կբարձրանանք: Անունս Վաքիլ է: Եթե հարցնեն, չեմ կարծում, որ կհարցնեն, կասեմ, որ դու իմ զարմիկն ես:

Լեյլան տվեց իրենց անունները, տղամարդն ասաց, որ կհիշի:

— Մոտի՛կ եղեք,— ասաց նա:

Նրանք նստեցին Վաքիլի և նրա ընտանիքի կողքի նստարանին: Արևոտ, ջերմ առավոտ էր, երկնքում միայն մի քանի փետրավոր ամպեր էին, որոնք սավառնում էին հեռու սարերի վրա: Մարիամը սկսեց Ազիզային կերակրել մի քանի թխվածքաբլիթներով, որոնց մասին հիշել էր, երբ հապճեպ կապկպում էին իրերը: Մեկն առաջարկեց Լեյլային:

---

[120] Զահմաթ՝ անհարմարություն, խնդիր

— Սիրտս կխառնի,— ծիծաղեց Լեյլան,— շատ հուզված եմ:

— Ես էլ:

— Շնորհակալություն, Մարիամ:

— Ինչի՞ համար:

— Սրա համար: Որ եկար մեզ հետ,— ասաց Լեյլան,— չեմ կարծում, որ միայնակ կկարողանայի:

— Միայնակ չէիր լինի:

— Ամեն ինչ լավ կլինի, չէ՞, Մարիամ, այնտեղ, ուր գնում ենք:

Մարիամը ձգվեց նստարանով ու ձեռքը դրեց Լեյլայի ձեռքին:

— Ղուրանն ասում է, որ Ալլահն Արևելքն է և Արևմուտքը, ուր էլ որ դառնաս, Ալլահի կամքն է:

— Բո՛վ,— բղավեց Ազիզան՝ ցույց տալով ավտոբուսը,— Մայամ, բո՛վ:

— Տեսնում եմ, Ազիզա՛ ջո,— ասաց Մարիամը,— ճիշտ է, բով, շուտով բոլորս նստելու ենք բով: Ա՜խ, ինչեր ես տեսնելու:

Լեյլան ժպտաց: Նա նայում էր՝ ինչպես է ատաղձագործն իր խանութում փայտ սղոցում, և ծլեպը օդ է թռչում: Նայում էր՝ ինչպես են սուրում մեքենաները՝ կեղտոտ ու մրապատ պատուհաններով: Նայում էր ճամփեզրին պարապ կանգնած ավտոբուսներին, որոնց վրա սիրամարգեր, առյուծներ, արևածագեր ու փայլուն սրեր էին նկարված:

Առավոտյան արևի ջերմությունից Լեյլայի գլուխը պտտվեց, և նա իրեն համարձակ զգաց: Նա կրկին փոքրիկ էյֆորիա ապրեց, և երբ կողքից կաղալով անցավ դեղին աչքերով թափառական մի շուն, Լեյլան կռացավ ու շոյեց մեջքը:

Տասնմեկից մի քանի րոպե առաջ բարձրախոսով մի մարդ կանչեց Փեշավար մեկնող բոլոր ուղևորներին: Ավտոբուսի դռները բացվեցին ուժգին հիդրավլիկ շշոցով: Ուղևորների շարանը, իրար հրելով ու ճզմելով, վազեց ավտոբուսի մոտ:

Վաքիլը նշան արեց Լեյլային ու որդուն գիրկն առավ:

— Գնացինք,— ասաց Լեյլան:

Վաքիլն առաջ ընկավ: Երբ մոտեցան ավտոբուսին, Լեյլան տեսավ պատուհաններին կպած դեմքեր, քթեր ու ձեռքեր: Շուրջբոլորը հրաժեշտ էին բղավում:

Մի երիտասարդ զինյալ ավտոբուսի դռան մոտ ստուգում էր տոմսերը:

— Բո՛վ,— բացականչեց Ազիզան:

Վաքիլը տվեց տոմսերը զինյալին, որը դրանք երկու կես արեց ու վերադարձրեց: Վաքիլը թույլ տվեց, որ կինն առաջինը բարձրանա ավտոբուս: Լեյլան տեսավ՝ ինչպես են նա ու զինյալը հայացքներ փոխանակում: Վաքիլը բարձրացավ ավտոբուսի առաջին աստիճանին, կռացավ ու ինչ-որ բան ասաց ականջին: Զինյալը գլխով արեց:

Լեյլայի սիրտն ընկավ:

— Դո՛ւք՝ երկո՛ւսդ՝ երեխայի հետ, մի կո՛ղմ քաշվեք,— ասաց զինվորը:

Լեյլան ձևացրեց, որ չի լսում: Ուզում էր բարձրանալ աստիճաններով, բայց զինվորը բռնեց ուսը ու կոպտորեն դուրս քաշեց հերթից:

— Դո՛ւ էլ,— գոռաց Մարիամին,— արա՛գ, հերթին խանգարում եք:

— Ի՞նչ խնդիր կա, եղբա՛յր,— ասաց Լեյլան փայտացած շուրթերով,— մենք տոմսեր ունենք: Զարմիկս չհանձնե՞ց քեզ:

Զինյալը մատով «222» արեց ու ցածրաձայն խոսեց մեկ այլ պահակի հետ: Երկրորդ պահակը՝ կլորավուն մարդ՝ աջ այտին սպի, գլխով արեց:

— Հետևի՛ր ինձ,— այս մեկն ասաց Լեյլային:

— Մենք պետք է նստենք այս ավտոբուսը,— բացականչեց Լեյլան՝ գիտակցելով, որ ձայնը դողում է,— մենք տոմսեր ունենք: Ինչո՞ւ ես այսպիսի բաներ անում:

— Դուք այս ավտոբուսով չեք գնա: Հասկացի՛ր: Դու կհետևես ինձ: Եթե չես ուզում, որ փոքրիկ աղջիկդ տեսնի՝ ինչպես եմ քեզ քարշ տալիս:

Դեպի բեռնատար տանող ճանապարհին Լեյլան հետ նայեց ու տեսավ Վաքիլի տղային ավտոբուսի հետնամասում: Տղան նույնպես տեսավ Լեյլային և ուրախ ձեռքով արեց:

* * *

Ոստիկանության բաժանմունքում, որ Թորաբազ Խանի խաչ-մերուկում էր, նրանց առանձին նստեցրին բազմամարդ երկար միջանցքի հակառակ ծայրերում: Նրանց միջև գրասեղան էր, որի մոտ նստած մարդը ծխում էր սիգարետը սիգարետի հետևից ու ժամանակ առ ժամանակ թխկացնում գրամեքենային: Այսպես երեք ժամ անցավ: Ազիզան Լեյլայի մոտից տոտիկ-տոտիկ քայլում էր դեպի Մարիամը, հետո հետ էր գալիս: Խաղաց թղթի սեղմակով, որը նրան տվեց գրասեղանի մոտ նստած տղամարդը: Վերջացրեց բլիթները: Վերջապես քնեց Մարիամի գրկում:

Մոտավորապես ժամը երեքին Լեյլային տարան հարցազրույցի սենյակ: Մարիամը պետք է սպասեր Ազիզայի հետ միջանցքում:

Հարցազրույցի սենյակում գրասեղանի մոտ նստած մարդը երեսունն անց էր, հագին՝ քաղաքացիական հագուստ՝ սև կոստյում, փողկապ, սև կոշիկներ: Մորուքը կոկիկ կտրված էր, մազերը՝ կարճ, հոնքերը՝ սերտաճած: Նա նայում էր Լեյլային ու մատիտի ռետինե ծայրը սեղանին խփում:

— Մենք գիտենք,— սկսեց նա՝ կոկորդը մաքրելով ու քաղաքավարիորեն ծածկելով բերանը,— որ դու արդեն մեկ սուտ ասել ես այսօր, *համշիրա՛*: Կայարանի երիտասարդ տղամարդը քո զարմիկը չէր: Նա ինքը մեզ ասաց: Հարցն այն է, թե արդյոք այսօր էլի սուտ կխոսես: Անձամբ ես քեզ դա խորհուրդ չեմ տալիս:

— Մենք մնալու էինք հորեղբորս մոտ,— ասաց Լեյլան,— դա ճշմարտություն է:

Ոստիկանը գլխով արեց.

— Միջանցքի *համշիրան* մա՞յրդ է:

— Այո՛:

— Հերաթի առոգանություն ունի, իսկ դու չունես:

— Նա Հերաթում է մեծացել, ես ծնվել եմ այստեղ՝ Քաբուլում:

— Դե իհարկե: Դու այրի՞ ես: Այդպես ասացիր: Ցավակցում եմ: Այդ հորեղբայրդ՝ այդ *կական*, որտե՞ղ է ապրում:

— Փեշավարում:

— Այո՛, այդպես ասացիր:— Նա լպստեց մատիտի ծայրը և ուղղեց դատարկ թղթին:— Բայց Փեշավարում՝ որտե՞ղ: Շրջանը, խնդրում եմ: Փողոցի անունը, Թաղամասը համարը:

Լեյլան փորձեց կուլ տալ կրծքում բարձրացող խուճապի պղպջակը: Նա տվեց միակ փողոցի անունը, որը գիտեր Փեշավարում, լսել էր, երբ այն հիշատակեցին Մամիի երեկույթին, երբ մոջահեդները առաջին անգամ մտան Քաբուլ. «Ջամրուդ փողոց»:

— Ա՜հ, այո՛: Այդ նույն փողոցը, որտեղ «Փերլ Քոնտինենտալ» հյուրանոցն է: Նա երևի ասել է:

Լեյլան օգտվեց հնարավորությունից ու ասաց, որ ասել է:

— Հենց նույն փողոցը, այո՛:

— Ձնայած հյուրանոցը Խիբեր փողոցում է:

Լեյլան լսեց, որ Ազիզան լալիս է միջանցքում:

— Աղջիկս վախեցած է, կարո՞ղ եմ բերել նրան, եղբա՛յր:

— Ես նախընտրում եմ, որ ինձ «սպա» ասես: Շուտով հետը կլինես: Այդ հորեղբոր հեռախոսահամարն ունե՞ս:

— Ունեմ: Ունեի: Ես...— Նույնիսկ բուրքայի տակից Լեյլան չխուսափեց տղամարդու թափանցող հայացքից:— Այնքան հուզված եմ, որ մոռացել եմ:

Նա քթով փնչացրեց: Հարցրեց հորեղբոր անունը, կնոջ անունը: Քանի երեխա ունեն: Նրանց անունները: Որտեղ է աշխատում: Քանի տարեկան է: Սպայի հարցերը շփոթեցում էին Լեյլային:

Սպան ցած դրեց մատիտը, մատները միահյուսեց, առաջ հակվեց, ինչպես ծնողներն են անում, երբ ուզում են փոքրիկ երեխային ինչ-որ բան բացատրել:

— Դու գիտակցո՞ւմ ես, համշիրա՛, որ փախչելը կնոջ համար հանցագործություն է: Մենք շատերին ենք տեսնում: Կանայք ճանապարհորդում են միայնակ՝ պնդելով, որ իրենց ամուսինները մահացել են: Երբեմն ճշմարտությունն են ասում, մեծ մասամբ՝ ոչ: Քեզ կարող են բանտարկել փախչելու համար, կարծում եմ՝ հասկանում ես, չէ՞:

— Թույլ տվեք՝ գնանք, սպա՛...— Լեյլան կարդաց անունը կրծքանշանի վրա,— սպա Ռահման: Պատվե՛ք Ձեր անվան

իմաստը ու կարեկցանք ցույց տվեք[121]: Ի՞նչ կլինի, եթե թույլ տաք երկու կանանց գնալ: Ի՞նչ վնաս մեզ ազատելուց: Մենք հանցագործներ չենք:

— Չեմ կարող:

— Աղերսում եմ:

— *Քանունի*[122] հարց է, համշիրա՛, օրենքի հարց,— ասաց Ռահիմանը՝ ձայնին ծանր, ինքնավստահ երանգ տալով:— Դա իմ պատասխանատվությունն է, հասկանո՞ւմ ես, կարգը պահպանելը:

Չնայած իր աղետալի վիճակին՝ Լեյլան գրեթե ծիծաղեց: Նա ապշած էր, որ Ռահիմանը գործածեց այդ բառը՝ հաշվի առնելով մոջահեդների խմբավորումների արածները՝ սպանություններ, կողոպուտ, բռնաբարություններ, խոշտանգումներ, մահապատիժներ, ռմբակոծություններ, միմյանց վրա արձակած տասնյակ հազարավոր հրթիռներ, այդ ամենը՝ թքած ունենալով բոլոր անմեղ մարդկանց վրա, որոնք մահանում էին փոխհրաձգության ժամանակ: *Կարգ:* Բայց Լեյլան լեզուն կծեց:

— Եթե մեզ հետ ուղարկեք,— դանդաղ ասաց նա,— ասելու չէ, թե նա ինչ կանի մեզ հետ:

Լեյլան տեսավ, որ Ռահիմանը ջանաց աչքերը չփախցնել:

— Ինչ է անում տղամարդն իր տանը՝ իր գործն է:

— Հապա օրենքը, սպա՛ Ռահիման:— Զայրույթի արցունքները վառեցին աչքերը:— Դուք այնտեղ կլինե՞ք կարգը պահպանելու համար:

— Մեր քաղաքականությունն է չմիջամտել մասնավոր ընտանեկան խնդիրներին, *համշիրա՛*:

— Իհարկե չեք միջամտում: Երբ դա տղամարդու օգտին է: Իսկ սա Ձեր ասած «մասնավոր ընտանեկան խնդիրը» չէ՞: Չէ՞:

Ռահիմանը սեղանը հետ հրեց ու կանգնեց, ուղղեց իր բաճկոնը:

— Կարծում եմ՝ այս հարցազրույցն ավարտվեց: Պետք է ասեմ, *համշիրա՛*, որ դու քեզ շատ վատ դրսևորեցիր: Իրոք շատ վատ: Հիմա սպասի՛ր դրսում, ես մի քիչ կզրուցեմ քո... ով որ է:

---

[121] Ռահիման՝ գթասիրտ
[122] Քանուն՝ կանոն

Լեյլան սկսեց բողոքել, հետո աղաղակել, և Ռահմանը ստիպված օգնության կանչեց ևս երկու տղամարդկանց, որպեսզի նրան իր գրասենյակից դուրս քաշեն:

Մարիամի հարցազրույցը ընդամենը մի քանի րոպե տևեց: Երբ դուրս եկավ, դողում էր:

— Այնքան հարցեր տվեց,— ասաց նա,— ցավում եմ, Լեյլա՛ ջո: Ես քեզ նման խելացի չեմ: Նա այնքան շատ հարցեր տվեց, ես պատասխանները չգիտեի: Կներես:

— Դա քո մեղքը չէ, Մարիա՛մ,— ասաց Լեյլան,— իմ մեղքն է, ամեն ինչ իմ մեղքով է, ամեն ինչում ես եմ մեղավոր:

* * *

Ժամը վեցն էր, երբ ոստիկանության մեքենան կանգնեց տան դիմաց: Լեյլային ու Մարիամին ստիպեցին սպասել հետևի նստատեղին՝ առջևում նստած մոջահեդ զինվորի հսկողության ներքո: Վարորդը դուրս եկավ մեքենայից, թակեց դուռը, խոսեց Ռաշիդի հետ: Հետո ձեռքով արեց, որ գան:

— Բարո՛վ տուն եկաք,— ասաց դիմացի նստատեղի մարդը՝ սիգարետը վառելով:

* * *

— Դո՛ւ,— ասաց նա Մարիամին,— դու սպասի՛ր այստեղ:

Մարիամը լուռ նստեց բազմոցին:

— Դո՛ւք՝ երկո՛ւսդ, բարձրացե՛ք:

Ռաշիդը բռնեց Լեյլայի արմունկը ու բրթեց աստիճաններով վեր: Ոտքերին այն կոշիկներն էին, որոնք հագել էր աշխատանքի գնալուց, հողաթափերը դեռ չէր հագել, չէր հանել ժամացույցը, նույնիսկ վերարկուն: Լեյլան պատկերացրեց՝ ինչպես էր նա մեկ ժամ կամ գուցե մի քանի րոպե առաջ վազում մի սենյակից մյուսը, դռները շրխկացնում, կատաղած ու թերահավատ, ցածրաձայն հայհոյում:

Աստիճանների վերևում Լեյլան շրջվեց դեպի Ռաշիդը:

— Նա չէր ուզում դա անել,— ասաց:— Ես եմ ստիպել: Նա չէր ուզում գնալ...

Հարվածը Լեյլային անակնկալի բերեց: Վայրկյան առաջ դեռ խոսում էր, իսկ հաջորդ պահին չորեքթաթ, աչքերը լայն բացած ու կարմիր դեմքով փորձում էր շունչ քաշել: Ասես նրան արագընթաց մեքենա խփած լիներ՝ կրծքավանդակի ստորին ոսկորի ու պորտի միջև փափուկ տեղին: Նա հասկացավ, որ վայր է գցել Ազիզային, որ Ազիզան գոռում է: Փորձեց նորից շնչել, բայց կարողացավ միայն խռռացող խեղդվող ձայն արձակել: Թուքը կախվեց բերանից:

Հետո նրան մազերից քաշ տվեցին: Նա տեսավ, որ Ազիզային բարձրացրին, տեսավ, որ սանդալներն ընկան, տոտիկներն է օդում խփում: Մազերը պոկվում էին Լեյլայի գլխից, աչքերը ցավից թրջվում: Նա տեսավ՝ ինչպես ոտքի հարվածով Ռաշիդը բացեց Մարիամի սենյակի դուռը, ինչպես Ազիզային շպրտեց մահճակալին: Նա թողեց Լեյլայի մազերը, և Լեյլան զգաց նրա կոշիկի թաթի հարվածը հետույքին: Լեյլան ոռնաց ցավից, իսկ Ռաշիդը շրխկոցով փակեց դուռը: Բանալին պտտվեց կողպեքում:

Ազիզան դեռ ծղրտում էր: Լեյլան կծկվեց գետնին՝ շնչասպառ հևալով: Ձեռքերի վրա բարձրացավ, սողաց դեպի մահճակալը, որտեղ Ազիզան էր: Ձեռքը մեկնեց աղջկան:

Ներքևում սկսվեց ծեծը: Լեյլայի համար դրանք կանոնավոր, ծանոթ գործողությունների ձայներ էին: Ո՛չ անեծք, ո՛չ աղմուկ, ո՛չ աղաղակ, ո՛չ աղերս, ո՛չ զարմացած ճիչեր, միայն ծեծի և ծեծի ենթարկվելու կանոնավոր գործողություն, հարված, ինչ-որ կարծր բանով հարված մարմնին, ինչ-որ մեկը, ինչ-որ մի բան խփվում է պատին, ճղվող հագուստ: Ժամանակ առ ժամանակ լսվում էին վազելու ոտնաձայներ, անխոս հետապնդում, շուռ եկող կահույք, ջարդված ապակի, հետո կրկին հարվածներ: Լեյլան գրկեց Ազիզային: Զգեստի դիմացը տաքացավ, երբ Ազիզայի միզապարկը դատարկվեց:

Ներքևում վազքն ու հետապնդումը վերջապես դադարեցին: Հիմա ասես փայտե մահակով միս էին ծեծում:

Լեյլան օրորեց Ազիզային, մինչև ձայները դադարեցին, և երբ լսեց դրսի դռան ճռռոցն ու փակվելու ձայնը, իջեցրեց Ազիզային

հատակին ու նայեց պատուհանից: Լեյլան տեսավ, որ Ռաշիդը, Մարիամի կզակից բռնած, նրան տանում է բակով: Մարիամը ոտաբոբիկ էր ու երկու տակ կռացած: Ռաշիդի ձեռքերն արյունոտ էին, արյուն էր Մարիամի դեմքին, մազերին, պարանոցին ու մեջքին: Վերնաշապիկը դիմացից ճղված էր:

— Ների՛ր ինձ, Մարիա՛մ,— ապակու հետևից բղավեց Լեյլան:

Նա տեսավ՝ ինչպես Ռաշիդը Մարիամին նետեց ցախանոցը: Ռաշիդը մտավ, դուրս եկավ մուրճով ու մի քանի երկար տախտակներով: Փակեց ցախանոցի կրկնակի դռները, գրպանից հանեց բանալին, կողպեց: Փորձարկեց դռները, հետո գնաց ցախանոցի հետնամաս ու սանդուղք բերեց: Մի քանի րոպե անց նրա դեմքը Լեյլայի պատուհանի մոտ էր՝ բերանի ծայրին մեխեր: Մազերը խառնված էին, ճակատին՝ արյան բիծ: Նրա տեսքից Ազիզան ծղրտաց ու դեմքը թաղեց Լեյլայի թևատակին:

Ռաշիդը սկսեց տախտակները խփել պատուհանին:

* * *

Մթությունը լիակատար էր, անթափանց ու անընդհատ՝ առանց շերտերի կամ հյուսվածքի: Ռաշիդը ինչ-որ բան էր լցրել տախտակների ճեղքերի արանքը, դռան դիմաց մեծ ու անշարժ բան դրել, որ տակից լույս չթափանցի: Բանալու անցքի մեջ ինչ-որ բան էր խցկած:

Լեյլան աչքերով չէր կարող կռահել ժամը, այնպես որ լարեց իր առողջ ականջը: Ազանն ու աքլորների կանչը ազդարարում էին առավոտը: Խոհանոցի ափսեների ձայնը, ռադիոյի ձայնը նշանակում էին երեկո:

Առաջին օրը նրանք, մթության մեջ խարխափելով, շոշափում էին իրար: Լեյլան չէր տեսնում, երբ Ազիզան լալիս էր, երբ նա չոչ էր անում:

— *Այշի*[123],— թնգթնգաց Ազիզան,— *այշի*:

— Շուտով:— Լեյլան ուզում էր աղջկա ճակատը համբուրել, բայց հասավ գլխի գագաթին:— Շուտով կաթ կունենանք: Համբե-

[123] Այշի՝ կաթ

րի՛ր: Մամայի լավ, համբերատար փոքրիկ աղջի՛կ եղիր, ու ես քեզ *այշի* կտամ:

Լեյլան նրա համար մի քանի երգ երգեց:

Երկրորդ անգամ ինչեց *ազանը*, բայց Ռաշիդը նրանց չէր տվել ո՛չ սնունդ, և, ամենավատը, ո՛չ էլ ջուր: Այդ օրը թանձր, հեղձուցիչ տապ իջավ քաղաքի վրա: Սենյակը վերածվեց կաթսայի: Լեյլան լպստեց շուրթերը չոր լեզվով և մտածեց ջրհորի սառը, թարմ ջրի մասին: Ազիզան շարունակ լալիս էր, և Լեյլան տագնապով նկատեց, որ երբ սրբում է նրա այտերը, ձեռքերը չոր են մնում: Նա հանեց Ազիզայի շորերը, փորձեց գտնել հովհարի պես մի բան, սկսեց փչել վրան, մինչև գլուխը պտտվեց: Շուտով Ազիզան դադարեց չոչ անելուց: Ժամանակ առ ժամանակ քնով էր անցնում:

Այդ օրը Լեյլան մի քանի անգամ բռունցքներով հարվածեց պատերին, էներգիան օգտագործեց գոռալու վրա՝ հուսալով, որ հարևանը կլսի: Բայց ոչ ոք չեկավ, իսկ ճիչերը միայն վախեցնում էին Ազիզային, և նա կրկին սկսեց լացել նվաղուն խռպոտ ձայնով: Լեյլան սահեց գետնին: Նա իրեն մեղավոր էր զգում Մարիամի համար, որը ծեծված ու արյունաշաղախ փակված էր ցախանոցում:

Մի պահ Լեյլան քնով անցավ՝ մարմինը շոգից խաշված: Երազում տեսավ, որ Ազիզայի հետ հանդիպում են Թարիքին: Նա բազմամարդ փողոցում էր՝ հագուստի խանութի ծածկի տակ կքանստած, և արկղից թուզ էր համտեսում: «Քո հայրն է,— ասաց Լեյլան,— այնտեղ, տեսնո՞ւմ ես նրան: Նա է քո իսկական *բաբան*»: Նա կանչեց Թարիքին, բայց փողոցի աղմուկը խեղդեց ձայնը, և Թարիքը չլսեց:

Լեյլան արթնացավ վերևը սուրացող հրթիռների սուլոցից: Ինչ-որ տեղ երկինքը, որը նա չէր տեսնում, վառվում էր պայթյուններից և գնդացրային կրակի երկար, կատաղի դղրդոցից: Լեյլան փակեց աչքերը: Արթնացավ միջանցքում Ռաշիդի ծանր ոտնաձայներից: Լեյլան սողաց դռան մոտ, ափերով հարվածեց:

— Մի բաժակ, Ռաշի՛դ: Ինձ համար չէ: Նրա համար: Նրա արյունով ձեռքերդ մի՛ պղծիր:

Ռաշիդը անցավ կողքով: Լեյլան սկսեց աղաչել: Ներում աղերսեց, խոստումներ տվեց: Հայհոյեց նրան: Ռաշիդի դուռը փակվեց: Միացավ ռադիոն:

Մուեձինը երրորդ անգամ ազան կանչեց: Կրկին շոգն ընկավ: Ազիզան ավելի թուլացավ: Այլևս չէր լալիս, ընդհանրապես չէր շարժվում:

Լեյլան ականջը դրեց Ազիզայի բերանին՝ ամեն անգամ սարսափելով, որ չի լսի մակերեսային շնչառության խշշոցը: Նույնիսկ վեր կենալու պարզ շարժումից գլուխը պտտվում էր: Նա քնով անցավ, երազներ տեսավ, որոնք չհիշեց: Երբ արթնացավ, ստուգեց Ազիզային՝ շոշափեց ճաքած շուրթերը, պարանոցի հազիվ նկատելի զարկերակը, կրկին պառկեց: Նրանք կմեռնեն այստեղ, Լեյլան հիմա համոզված էր, բայց նրան սարսափեցնում էր այն միտքը, որ նա Ազիզայից երկար կապրի, քանի որ աղջնակը փոքր է և փխրուն: Ինչքան դեռ կդիմանա Ազիզան: Ազիզան կմեռնի այս շոգին, և Լեյլան ստիպված կլինի պառկել փայտացող փոքրիկ մարմնի կողքին և սպասի սեփական մահվանը: Կրկին քնով անցավ: Արթնացավ: Քնեց: Երազի և իրականության միջև սահմանը մթագնեց:

Նրան կրկին արթնացրին ոչ թե աքաղաղները կամ ազանը, այլ ինչ-որ ծանր բան տեղաշարժելու ձայնը: Դմբդմբոց լսվեց: Հանկարծ սենյակը լցվեց լույսով: Աչքերը ցավից մղկտացին: Լեյլան բարձրացրեց գլուխը, կկոցեց ու ձեռքով պաշտպանեց աչքերը: Մատների արանքից տեսավ լույսի ուղղանկյան մեջ կանգնած մի մեծ, անորոշ ուրվագիծ: Ուրվագիծը շարժվեց: Այժմ այն պպզել էր նրա կողքին, կռացել նրա վրա, և ականջին հասավ ձայնը:

— Մի անգամ էլ փորձես, ու ես քեզ կգտնեմ: Երդվում եմ Մարգարեի անունով՝ կգտնեմ քեզ: Իսկ երբ գտնեմ, դատարան չի լինի այս նզովյալ երկրում, որն ինձ պատասխանատվության կենթարկի արածիս համար: Սկզբից՝ Մարիամին, հետո՝ նրան, վերջում՝ քեզ: Ես քեզ կստիպեմ նայել: Հասկացա՞ր: Ես կստիպեմ նայել:

Եվ այդ ասելուց հետո Ռաշիդը դուրս եկավ սենյակից: Բայց նախօրոք այնպիսի հարված հասցրեց Լեյլայի կողքին, որ նա օրերով արյուն էր միզում:

38

Մարիամ

1996 թվականի սեպտեմբեր

Երկուսուկես տարի անց՝ սեպտեմբերի 27-ի առավոտյան Մարիամն արթնացավ գոռգոռոցի և սուլոցների, հրավառության ու երաժշտության ձայներից: Նա վազեց հյուրասենյակ, տեսավ, որ Լեյլան արդեն պատուհանի մոտ է՝ Ազիզան ուսերին: Լեյլան շրջվեց ու ժպտաց:

— Թալիբներն են եկել,— ասաց նա:

* * *

Մարիամն առաջին անգամ լսեց Թալիբանի[124] մասին երկու տարի առաջ՝ 1994-ի հոկտեմբերին, երբ Ռաշիդը տուն եկավ լուրերով, որ նրանք տապալել են Քանդահարի պարագլուխներին ու վերցրել քաղաքը: Նրանք պարտիզաններ էին, ասաց նա, երիտասարդ փաշթուններ, որոնց ընտանիքները փախել են Պակիստան Սովետների դեմ պատերազմի ժամանակ: Նրանց մեծ մասը մեծացել էր (ոմանք նույնիսկ ծնվել էին) Պակիստանի սահմանամերձ փախստականների ճամբարներում և պակիստանյան *մեդրեսեներում*[125], որտեղ մոլլաները նրանց *Շարիա* էին դասավանդում: Նրանց առաջնորդը խորհրդավոր, անգրագետ, միաչքանի

---

[124] Թալիբանը իսլամիստական շարժում է, որն իշխանության եկավ 1996 թ.: Այն ծագել է Ղանդահար քաղաքում 1990-ականներին: Ըստ պաշտոնական տարբերակի՝ Մոլլա Մոհամադ Օմարը (նախկին մուջահեդ, որը կորցրել էր մի աչքը խորհրդա-աֆղանական պատերազմի ժամանակ և ինքն իրեն հռչակել Մարգարեի կուսակալ) հավաքեց արմատական իսլամական ուսանողների՝ «Աստծո աշակերտների» մի խումբ և առաջնորդեց նրանց իսլամի մաքրման և երկրում բարեպաշտ իշխանությունների հաստատման համար ճակատամարտի («Թալիբ» նշանակում է «աշակերտ»):

[125] Մեդրեսե՝ բառացի «վայր, որտեղ ուսումնասիրում են», իսլամական ուսումնական հաստատություն, որը կատարում է միջնակարգ դպրոցի և հոգևոր ճեմարանի դեր:

ճգնավոր էր, անունը՝ Մոլլա Օմար, որը, Ռաշիդն ասաց ժպիտով, ինքն իրեն անվանում է «Ամիր-ուլ-Մումինին»՝ Հավատացյալների առաջնորդ:

«Ճիշտ է, որ այդ տղաները *ոիշա*՝ արմատներ չունեն»,— ասաց Ռաշիդը՝ չդիմելով ո՛չ Մարիամին, ո՛չ էլ Լեյլային: Երկուսուկես տարի առաջ ձախողված փախուստից հետո Մարիամը հասկացավ, որ նրա համար ինքն ու Լեյլան դարձել են միևնույն էակը՝ հավասարապես նողկալի, հավասարապես արժանի իր անվստահությանը, իր արհամարհանքին ու անտարբերությանը: Երբ նա խոսում էր, Մարիամին թվում էր, որ ինքն իր հետ է զրուցում կամ սենյակում ոմն անտեսանելի մարդու հետ, որը, ի տարբերություն իրեն ու Լեյլայի, արժանի էր իր կարծիքը լսելուն:

«Գուցե անցյալ չունեն,— ասաց նա՝ ծխելով ու առաստաղին նայելով,— գուցե ոչինչ չգիտեն աշխարհի կամ այս երկրի պատմության մասին: Այո՛: Նրանց համեմատ Մարիամը համալսարանի պրոֆեսոր է: Հե-հե: Ճիշտ է: Բայց նայե՛ք ձեր շուրջը: Ի՞նչ եք տեսնում: Կաշառակեր ագահ մոջահեդ հրամանատարներ, որոնք մինչև ատամները զինված են, հարստացել են հերոինի վաճառքից, միմյանց դեմ *ջիհադ* են հայտարարում ու մեջտեղ ընկած բոլորին սպանում. ահա թե ինչ: Թալիբներն առնվազն մաքուր և անկաշառ են: Առնվազն պատշաճ մահմեդական տղաներ են: *Վալլա՛*հ, երբ գան, կմաքրեն այստեղ: Խաղաղություն ու կարգուկանոն կբերեն: Մարդկանց էլ չեն կրակի, երբ գնում են կաթի հետևից: Էլ ոչ մի հրթիռ: Պատկերացրե՛ք»:

Արդեն երկու տարի է, ինչ թալիբները մաքրում էին իրենց ճանապարհը դեպի Քաբուլ՝ մոջահեդների ձեռքից գրավելով քաղաքները, ու վերջ տալիս խմբավորումների միջև պատերազմին: Նրանք բռնել էին խազարների հրամանատար Աբդուլ Ալի Մազարիին ու մահապատժի ենթարկել: Մի քանի ամիս է՝ կանգնել էին Քաբուլի հարավային արվարձանում, կրակում էին քաղաքի վրա, հրթիռներ փոխանակում Ահմադ Շահ Մասուդի հետ: 1996 թվականի սեպտեմբերի սկզբին գրավել էին Ջալալաբադ ու Սարոբի քաղաքները:

Թալիբները ունեին մի բան, որ մոջահեդները չունեին, ասում էր Ռաշիդը: Նրանք միասնական են:

«Թող գան,— ասում էր,— հենց մեկը ես, օրինակ, վարդի թերթեր շաղ կտամ նրանց գլխներին»:

* * *

Այդ օրը նրանք չորսով դուրս եկան, Ռաշիդը նրանց ուղեկցեց մեկ ավտոբուսից մյուսը՝ ողջունելու իրենց նոր աշխարհը, նոր առաջնորդներին: Յուրաքանչյուր քարուքանդ թաղամասում Մարիամը տեսնում էր մարդկանց, որոնք նյութականանում էին բեկորների տակից ու փողոց դուրս գալիս: Նա տեսավ մի ծեր կնոջ, որ բուռ-բուռ բրինձ էր գցում անցորդների վրա՝ դեմքին թոշնած, անատամ ժպիտ: Երկու տղամարդ գրկախառնվում էին այրված շենքի մնացորդների մոտ, նրանց գլխավերևում սուլում, շչում ու պայթում էին մի քանի ճայթռուկներ, որոնք արձակում էին տանիքներին թառած տղաները: Ձայնագրիչներից հնչում էր ազգային օրհներգը, որը մրցում էր մեքենաների ազդանշանների հետ:

— Նայի՛ր, Մայա՛մ,— Ազիզան ցույց տվեց Ջադեի Մայվանդով վազող մի խումբ տղաների: Նրանք բռունցքները օդ էին հանել ու քարշ էին տալիս թելով իրար կապած պահածոյի ժանգոտ տուփերը: Գոռում էին, որ Մասուդն ու Ռաբանին հեռացել են Քաբուլից:

Ամենուրեք գոռում էին «*Ալլահ-ու-աքբար*»:

Ջադեի Մայվանդում Մարիամը տեսավ պատուհաններից մեկից կախված սավան: Դրա վրա մեկը խոշոր, սև տառերով գրել էր երեք բառ. ՋԵՆԴԱ ԱԲԱԴ ԹԱԼԻԲԱՆ՝ Կեցցե՛ Թալիբանը:

Փողոցում քայլելիս Մարիամը նկատեց այդ ուղերձներից էլ ավելի շատ՝ պատուհաններին ներկած, դռների վրա մեխած, մեքենաների ալեհավաքներից ծածանվող:

* * *

Այդ օրը՝ ավելի ուշ, Մարիամն առաջին անգամ տեսավ թալիբներին Փաշթունիստան հրապարակում Ռաշիդի, Լեյլայի և Ազիզայի հետ: Այնտեղ մեծ ամբոխ էր հավաքվել: Մարիամը տեսավ, որ մարդիկ ձգել էին պարանոցները, հավաքվել էին կապույտ շատրվանի

շուրջը, որ հրապարակի կենտրոնում էր, նստել դրա չոր ավազանի մեջ: Նրանք փորձում էին տեսնել հրապարակի վերջը՝ հին «Խիբեր» ռեստորանի մոտ:

Ռաշիդը օգտագործեց իր հսկա մարմինը, որ հետաքրքրասերներին աջ ու ձախ հրի, ու տարավ նրանց այնտեղ, որտեղ մեկը խոսում էր բարձրախոսով:

Երբ Ազիզան տեսավ, ծղրտաց ու դեմքը թաղեց Մարիամի *բուրքայի* մեջ:

Բարձրախոսով խոսողը նիհար մորուքավոր երիտասարդ էր, որի գլխին սև չալմա էր: Նա կանգնած էր ինչ-որ ինքնաշեն փայտամածի վրա: Ազատ ձեռքում նռնականետ էր: Կողքին երկու արյունաշաղախ մարդիկ էին կախված պարաններից, որոնք ամրացված էին երթևեկության լապտերներից: Նրանց հագուստները ճղճղված էին: Ուռած դեմքերը կապտամանուշակագույն էին:

— Ես նրան ճանաչում եմ,— ասաց Մարիամը,— ձախ կողմինին:

Մարիամի դիմաց կանգնած երիտասարդ կինը շրջվեց ու ասաց, որ դա Նաջիբուլլահն էր: Մյուսը նրա եղբայրն էր: Մարիամը հիշեց Նաջիբուլլահի կլորավուն, բեղավոր դեմքը, որը փայլում էր սովետական տարիների վահանակներից ու խանութների պատուհաններից:

Հետագայում նա լսեց, որ թալիբները Նաջիբուլլահին քարշ են տվել Դարուլաման պալատի հարևանությամբ գտնվող ՄԱԿ-ի իր ապաստարանից: Ժամերով տանջել են նրան, հետո ոտքերից կապել բեռնատարին ու անկենդան մարմինը փողոցներով քարշ տվել:

— Նա շատ, շատ մահմեդականների էր սպանել,— գոռում էր երիտասարդ թալիբը բարձրախոսով: Նա խոսում էր ֆարսի փաշթո առոգանությամբ, հետո անցավ փաշթոյի: Խոսքն ընդմիջում էր՝ զենքով մատնացույց անելով դիակները:— Նրա հանցագործությունները հայտնի են բոլորին: Նա կոմունիստ էր ու *քաֆիր*[126]: Ահա թե ինչ ենք անում մենք այն դավաճանների հետ, որոնք իսլամի դեմ հանցագործություններ են կատարում:

Ռաշիդը քմծիծաղեց:

Մարիամի գրկում Ազիզան սկսեց լաց լինել:

---

[126] Քաֆիր՝ դավաճան

* * *

Հաջորդ օրը Քաբուլը լցվեց բեռնատարներով: Խայր Խանայում, Շար-է-Նաուում, Քարթեի-Փարվանում, Վազիր Աքբար Խանում, Թայմանիում կարմիր «Տոյոտա» մակնիշի բեռնատարները սուրում էին փողոցներով: Նրանց վրա նստած էին սև չալմաներով մորուքավոր զինված տղամարդիկ: Յուրաքանչյուր բեռնատարից բարձրախոսը հայտարարություններ էր ոռնում սկզբում ֆարսի, հետո՝ փաշթո լեզվով: Նույն հայտարարությունը հնչում էր մզկիթների վրա տեղադրված բարձրախոսներից և ռադիոյից, որն այժմ դարձել էր «Շարիայի Ձայն»: Ուղերձը գրվել էր նաև թռուցիկների վրա, որոնք ցրում էին փողոցներում: Մարիամը բակում գտավ մեկը:

թվագրված է 1915-ական թվերի

Մեր հայրենիքն այժմ անվանվում է Աֆղանստանի Իսլամական Էմիրություն: Սրանք են օրենքները, որոնք մենք սահմանում ենք, իսկ դուք պետք է կատարեք.

Բոլոր քաղաքացիները պետք է օրը հինգ անգամ աղոթեն: Եթե աղոթքի ժամն է, իսկ դուք այլ գործով եք զբաղված, ծեծի կենթարկվեք:

Բոլոր տղամարդիկ պետք է մորուք պահեն: Ճիշտ երկարությունը պետք է լինի ծնոտի տակ առնվազն մեկ սեղմված բռունցքի երկարության: Եթե չպահեք, ծեծի կենթարկվեք:

Բոլոր տղաները պետք է չալմա դնեն: Առաջինից վեցերորդ դասարանի տղաները դնելու են սև չալմա, բարձր դասարաններինը՝ սպիտակ: Բոլոր տղաները հագնելու են իսլամական հագուստ: Վերնաշապիկի կոճակները պետք է կոճկված լինեն:

Երգելն արգելված է:

Պարելն արգելված է:

Արգելվում է խաղաքարտ խաղալ, շախմատ խաղալ, խաղադրույքներ անել և օդապարուկ թռցնել:

Արգելվում է գրքեր գրել, ֆիլմեր դիտել և նկարներ նկարել:

Եթե թութակ պահեք, ծեծի կենթարկվեք: Ձեր թռչունները կսպանվեն:

Եթե գողանաք, ձեր դաստակը կկտրվի: Եթե նորից գողանաք, ձեր ոտքի թաթը կկտրվի:

Եթե դուք մահմեդական չեք, մի՛ աղոթեք այնտեղ, որտեղ ձեզ կարող են տեսնել մահմեդականները: Այլապես դուք ծեծի կենթարկվեք և բանտ կնստեք: Եթե փորձեք մահմեդականին ձեր հավատքին վերափոխել, մահապատժի կենթարկվեք:

Ուշադրությո՛ւն կանանց:

Դուք պետք է միշտ ձեր տանը մնաք: Կանանց հարիր չէ անանպատակ շրջել փողոցներով: Եթե դուրս եք գալիս, ձեզ պետք է ուղեկցի մահրամը՝ արական սեռի ազգականը: Եթե ձեզ մենակ գտնեն փողոցում, ծեծի կենթարկեն ու տուն կուղարկեն:

Դուք ոչ մի դեպքում չպետք է ցույց տաք ձեր դեմքը: Դրսում պետք է հագնեք բուրքա: Եթե չհագնեք, դաժան ծեծի կենթարկվեք:

Շպարվելն արգելվում է:

Զարդեղենը արգելվում է:

Հմայիչ հագուստ հագնել չի կարելի:

Չի կարելի խոսել, եթե ձեզ հետ չեն խոսում:

Տղամարդկանց աչքերի մեջ նայել չի կարելի:

Հանրային վայրում ծիծաղել չի կարելի: Եթե ծիծաղեք, ծեծի կենթարկվեք:

Եղունգները ներկել չի կարելի: Եթե ներկեք, կկորցնեք մատը:

Աղջիկներին արգելվում է դպրոց հաճախել: Աղջիկների համար բոլոր դպրոցները անմիջապես փակվելու են:

Կանանց արգելվում է աշխատել:

Եթե դուք դավաճանեք ձեր ամուսնուն, կքարկոծվեք մինչև մահ:

Լսե՛ք: Լա՛վ լսեք: Հնազանդվե՛ք: Ալլահ-ու-աքբա՛ր:

Ռաշիդն անջատեց ռադիոն: Նրանք նստած էին հյուրասենյակի հատակին, ճաշում էին պարանից կախված Նաջիբուլլահի դիակը տեսնելուց մոտ մեկ շաբաթ անց:

— Նրանք չեն կարող ստիպել բնակչության կեսին մնալ տանը և ոչինչ չանել,— ասաց Լեյլան:

— Ինչո՞ւ չէ,— ասաց Ռաշիդը: Այս մի անգամ Մարիամը համաձայն էր նրա հետ: Ըստ էության, նա նույնը արել էր իր ու Լեյլայի հետ, այդպես չէ՞: Լեյլան իհարկե հասկանում էր դա:

— Սա ինչ-որ գյուղ չէ, Քաբուլն է: Կանայք այստեղ իրավաբանությամբ ու բժշկությամբ էին զբաղվում, կառավարական պաշտոններ զբաղեցնում...

Ռաշիդը լայն ժպտաց:

— Խոսում ես համալսարանի պոեզիայի դասախոսի ամբարտավան աղջկա պես: Ի՞նչ քաղաքի աղջիկ ես, ինչ տաջիկ: Կարծում ես՝ թալիբները նոր, արմատական գաղափա՞ր են ներմուծում: Երբևէ ապրե՞լ ես Քաբուլի քո փոքրիկ թանկարժեք խեցուց դուրս, իմ *գյուղ*: Երբևէ գնացե՞լ ես իսկական Աֆղանստան՝ հարավ, արևելք, Պակիստանի հետ սահմանին մոտ, որտեղ ցեղերն են ապրում: Չէ՞: Իսկ ես գնացել եմ: Եվ ասեմ քեզ, որ այս երկրի շատ վայրերում միշտ այսպես են ապրել կամ շատ նման: Բայց դու ի՞նչ գիտես:

— Ես հրաժարվում եմ հավատալուց,— ասաց Լեյլան,— նրանք լուրջ չեն:

— Թալիբանի կողմից Նաջիբուլլահի հետ արվածը լուրջ թվաց ինձ,— ասաց Ռաշիդը,— համաձայն չե՞ս:

— Նա կոմունիստ էր, գաղտնի ոստիկանության ղեկավար:

Ռաշիդը ծիծաղեց:

Մարիամը նրա ծիծաղի մեջ լսեց պատասխանը. Թալիբանի աչքերում կոմունիստ և նողկալի գաղտնի ոստիկանության ղեկավար լինելը Նաջիբուլլահին դարձնում էր թերևս մի փոքր ավելի արհամարհանքի արժանի, քան կին լինելը:

39

Լեյլա

Երբ Թալիբանը անցավ գործի, Լեյլան ուրախ էր, որ Բաբին ողջ չէր, որ տեսնի դա: Կատարվողը նրան կսպաներ:

Քլունգներով տղամարդիկ ներխուժեցին Քաբուլի քարուքանդ թանգարանը ու ջարդուփսուրդ արեցին նախաիսլամական արձան-

ները, այսինքն՝ նրանք, որոնք չէին հասցրել կողոպտել մոջահեդ-ները: Համալսարանը փակվեց, ուսանողներին տուն ուղարկեցին: Նկարները պոկում էին պատերից, սրերով կտրատում: Հեռուս-տաէկրանները ջարդում էին: Գրքերը, բացառությամբ Ղուրանի, այրում էին կույտերով, դրանք վաճառող խանութները փակվում էին: Խալիլիի, Պաջվակի, Անսարիի, Հաջի Դեհքանի, Աշրաքի, Բեյթաա-բի, Հաֆեզի, Ջամիի, Նիզամիի, Ռումիի, Խայամի, Բեյդելի և այլոց պոեմները կրակի տվեցին:

Լեյլան լսել էր, որ տղամարդկանց փողոցներից բռնում են, մե-ղադրում նամազ չանելու մեջ ու խցկում մզկիթները: Լսել էր, որ Հա-վերի փողոցի մոտ գտնվող «Մարկո Պոլո» ռեստորանը վերածվել էր հարցաքննության կենտրոնի: Դրա սևով ներկած պատուհանների հետևից երբեմն ճիչեր էին լսվում:

Ամենուրեք «Տոյոտա» բեռնատարներով շրջում էր «Մորուքի պարեկը» ու մաքուր սափրած դեմքերը արյունլվիկ անում:

Կինոթատրոններն էլ փակվեցին՝ «Սինեմա պարկը», «Արիա-նան», «Արյուբը»: Կինոխցիկի սենյակները թալանեցին, կինոժա-պավենները այրեցին: Լեյլան հիշում էր՝ ինչպես էին Թարիքի հետ, այդ թատրոններում նստած, հնդկական ֆիլմեր դիտում՝ այդ բոլոր մելոդրամատիկ պատմությունները ճակատագրի ողբերգական շրջադարձի պատճառով բաժանված սիրահարների մասին, երբ մեկը խարխափում է հեռավոր երկրում, իսկ մյուսին պարտադրում են ամուսնանալ, այդ արտասուքը, նարգիզների դաշտում երգելը, վե-րամիավորման փափագը: Հիշում էր՝ ինչպես էր Թարիքը ծիծաղում, երբ նա լացում էր այդ ֆիլմերը դիտելիս:

— Տեսնես ինչ եղավ հորս կինոթատրոնը,— մի օր ասաց նրան Մարիամը,— եթե դեռ կա իհարկե: Արդյոք դեռ պատկանո՞ւմ է իրեն:

Խարբաթը՝ Քաբուլի հնագույն երաժշտական առանձնաթա-ղը, լռեցվեց: Երաժիշտներին ծեծի ենթարկեցին ու բանտարկեցին, նրանց ***ռուբաբները***[127], ***թամբուրաներն***[128] ու ֆիսհարմոնիաները

---

[127] Ռուբաբ՝ քամանչայի տիպի լարային երաժշտական գործիք:
[128] Թամբուրա՝ կիթառի տիպի լարային երաժշտական գործիք

կոխկրտեցին: Թալիբանը գնաց Թարիքի սիրած երգչի՝ Ահմադ Զահիրի գերեզմանին ու փամփուշտներ կրակեց վրան:

— Քսան տարի է՝ մեռած է,— ասաց Լեյլան Մարիամին,— մի անգամ մեռնելը հերիք չէ՞:

* * *

Ռաշիդին թալիբները չէին անհանգստացնում: Իրենից պահանջվում էր մորուք աճեցնել, ինչը նա արեց, և հաճախել մզկիթ, ինչը նույնպես արեց: Ռաշիդը Թալիբանին վերաբերվում էր ներողամիտ, անչար զարմանքով, ինչպես կվերաբերվեն խենթ զարմիկին, որը հակված է անկանխատեսելի զվարթության ու սկանդալների:

Ամեն չորեքշաբթի երեկո Ռաշիդը լսում էր «Շարիայի ձայնը», երբ Թալիբանը հայտարարում էր պատժի ենթարկվող մարդկանց անունները: Այնուհետև ուրբաթ օրերը գնում էր «Ղազի» մարզադաշտ, *պեպսի* էր առնում ու դիտում շոուն: Անկողնում ստիպում էր, որ Լեյլան լսի՝ ինչպես է մի տեսակ տարօրինակ ոգևորությամբ նկարագրում ձեռքեր կտրելը, մտրակելը, կախաղանը, գլխատումը:

— Այսօր տեսա մի մարդու, որն իր եղբոր սպանողի կոկորդը կտրեց,— ասաց նա մի երեկո՝ ծխի քուլաներ արձակելով:

— Վայրենիներ են,— ասաց Լեյլան:

— Կարծո՞ւմ ես,— ասաց նա,— համեմատ ինչի՞: Սովետները միլիոն մարդ են սպանել: Գիտե՞ս, թե այս վերջին չորս տարիներին միայն Քաբուլում քանի մարդ են սպանել *մոջահեդները*: Հիսուն հազար: Հիսուն հազա՛ր: Արդյո՞ք այդքան անգութ է, դրա հետ համեմատ, կտրել մի քանի գողերի ձեռքերը: Ակն ընդ ակն, ատամն ընդ ատաման: Ղուրանից է: Եվ հետո, ասա՛ ինձ. եթե մեկը սպանի Ազիզային, վրեժխնդիր չե՞ս ցանկանա լինել:

Լեյլան զզվանքով նայեց նրան:

— Օրինակի համար եմ ասում,— ասաց Ռաշիդը:

— Դու նրանց նման ես:

— Հետաքրքիր աչքերի գույն ունի Ազիզան: Չե՞ս կարծում: Ո՛չ քոնն է, ո՛չ էլ իմը:

Ռաշիդը շրջվեց, որ նայի Լեյլայի դեմքին, նրբորեն քերծեց նրա ազդրը ցուցամատի ծռված եղունգով:

— Արի բացատրեմ,— ասաց,— եթե մտքովս անցնի... ես չեմ ասում, որ կանցնի, բայց կարող է, կարող է... իմ իրավունքն է Ազիզային տնից դուրս շպրտել: Դուրդ կգա՞: Կամ էլ կարող եմ մի օր գնալ թալիբների մոտ, ուղղակի ներս մտնեմ ու ասեմ, որ կասկածներ ունեմ քո մասին: Այդքան մի բան: Ո՞ւմ խոսքին կհավատան, ինչ ես կարծում: Քեզ հետ ինչ կանեն, ինչ ես մտածում:

Լեյլան իր ազդրը մի կողմ քաշեց:

— Չեմ անի իհարկե,— ասաց Ռաշիդը,— չեմ անի: Հավանաբար՝ ո՛չ: Դու ինձ գիտես:

— Դու սրիկա՛ ես,— ասաց Լեյլան:

— Մեծ-մեծ բառեր ես գործածում,— ասաց Ռաշիդը,— երբեք դուրս չի եկել դա: Նույնիսկ երբ փոքր էիր, վազվզում էիր այդ խեղանդամի հետ, կարծում էիր՝ այնքան խելացի ես, այդ քո գրքերով ու բանաստեղծություններով: Պետքդ եկան այդ քո բոլոր խելացիությունները: Ի՞նչը քեզ փրկեց փողոցից՝ խե՞լքդ, թե՞ ես: Ես սրիկա՞ եմ: Այս քաղաքում կանանց կեսը մարդ կսպաներ ինձ նման ամուսին ունենալու համար: Մարդ կսպաներ:

Նա շրջվեց ու ծուխը փչեց առաստաղին:

— Մեծ-մեծ բառե՞ր ես սիրում: Ես քեզ մեկը կասեմ: Հեռանկար: Ես հիմա դրանով եմ զբաղված, Լեյլա՛: Ուզում եմ, որ հեռանկարդ չկորցնես:

Գիշերվա մնացած մասը Լեյլայի սիրտը խառնեց, քանի որ Ռաշիդի ասած ամեն մի խոսք, յուրաքանչյուր բառ ճշմարիտ էր:

Սակայն առավոտյան ու դրանից հետո մի քանի առավոտների ընթացքում նրա սրտխառնոցը շարունակվեց, վատթարացավ, դարձավ սարսափելի ծանոթ բան:

* * *

Ոչ շատ ժամանակ անց՝ մի սառը ամպամած օր, Լեյլան պառկեց ննջասենյակի հատակին: Մարիամն Ազիզայի հետ իր սենյակում նիրհել էին:

Լեյլայի ձեռքում մետաղյա ճաղ էր, որը նա տափակաբերանով ջարդել պոկել էր լքված հեծանիվի անիվից: Նա գտել էր հեծանիվը այն փողոցում, որտեղ տարիներ առաջ համբուրել էր Թարիքին: Երկար ժամանակ Լեյլան պառկած էր հատակին, ատամները սեղմած՝ ծանր շնչում էր՝ ոտքերը լայն բացած:

Նա պաշտում էր Ազիզային այն պահից, երբ առաջին անգամ կասկածեց նրա գոյության մասին: Ոչ մի կասկած, ոչ մի անորոշություն չկար: Ինչ սարսափելի բան է, մտածում էր այժմ Լեյլան, երբ մայրը վախենում է, որ չի կարող իր երեխայի հանդեպ սեր տածել: Ինչպիսի անբնական բան: Բայց նա, հատակին պառկած, տարակուսում էր՝ ձողը քրտնած ձեռքերում պահելով. արդյո՞ք իսկապես կկարողանա սիրել Ռաշիդի երեխային այնպես, ինչպես սիրում է Թարիքի երեխային:

Ի վերջո, Լեյլան չկարողացավ դա անել:

Արյունաքամ լինելու վախը չէր, որ նրան ստիպեց ճաղը մի կողմ գցել, կամ նույնիսկ այն միտքը, որ սա պարսավելի արարք է, ինչպես նա ենթադրում էր: Լեյլան մի կողմ գցեց ճաղը, որովհետև չկարողացավ ընդունել այն, ինչ մոջահեդները պատրաստակամորեն ընդունել էին. որ պատերազմի ժամանակ երբեմն կարելի է խլել անմեղի կյանքը: Նրա պատերազմը Ռաշիդի դեմ էր: Երեխան անմեղ էր: Արդեն բավականաչափ սպանություններ էին եղել: Լեյլան անմեղների բավական սպանություններ էր տեսել թշնամիների խաչաձև կրակոցներից:

40

Մարիամ

1997 թվականի սեպտեմբեր

— Այս հիվանդանոցն այլևս կանանց չի բուժում,— թնդաց պահակը: Նա կանգնած էր աստիճանահարթակի վերևը, սառը հայացքով նայում էր «Մալալայ» հիվանդանոցի դիմաց հավաքված ամբոխին:

Ամբոխը բարձր հառաչեց:

— Բայց սա կանանց հիվանդանոց է,— բղավեց Մարիամի հետևում կանգնած մի կին: Հետևեցին նրան քաջալերող բացականչություններ: Մարիամը Ազիզային մի ձեռքից մյուսը տեղափոխեց: Ազատ ձեռքով նա օգնում էր Լեյլային, որը տնքալով բռնել էր Ռաշիդի վզից:

— Այլևս ոչ,— ասաց թալիբը:

— Կինս ծննդաբերում է,— գոռաց մի ամրակազմ մարդ,— ուզում ես, որ այստեղ՝ փողոցում ծննդաբերի, եղբայր:

Մարիամը լսել էր այդ տարվա հունվարին արված հայտարարությունը, որ տղամարդիկ ու կանայք տարբեր հիվանդանոցներում են սպասարկվելու, որ բոլոր կին աշխատակիցներին ազատելու են Քաբուլի հիվանդանոցներից և ուղարկելու մեկ կենտրոնական հաստատություն: Ոչ ոք դրան չէր հավատում, և թալիբները դեռևս չէին իրականացրել այդ որոշումը: Ցայսօր:

— Իսկ «Ալի Աբադ» հիվանդանոցը,— գոռաց մեկ այլ մարդ:

Պահակը բացասաբար օրորեց գլուխը:

— «Վազիր Աքբար Խան» հիվանդանոցը:

— Միայն տղամարդիկ,— ասաց նա:

— Ի՞նչ անենք մենք:

— Գնացեք «Ռաբիա Բալխի»,— ասաց պահակը:

Մի երիտասարդ կին առաջ եկավ, ասաց, որ արդեն եղել է այնտեղ: Նրանք չունեն մաքուր ջուր, ասաց, թթվածին, դեղամիջոցներ, էլեկտրականություն չկա: «Այնտեղ ոչինչ չկա»:

— Այնտեղ պետք է գնաք,— ասաց պահակը:

Ավելի շատ հառաչներ ու բղավոցներ լսվեցին, մեկ-երկու վիրավորանք: Ինչ-որ մեկը քար շպրտեց:

Թալիբը բարձրացրեց իր «Կալաշնիկովը» ու մի քանի անգամ օդ կրակեց: Մեկ այլ թալիբ թափահարեց մտրակը:

Ամբոխն արագ ցրվեց:

* * *

«Ռաբիա Բալխիի» սպասասրահում վխտում էին բուրքայով կանայք ու նրանց երեխաները: Օդում քրտինքի և անլվա մարմինների, ոտքերի, մեզի, սիգարետի ծխի և հականեխիչ միջոցների հոտ էր: Առաստաղի չաշխատող հովհարի տակ երեխաները բռնոցի էին խաղում ու ցատկոտում նիրհող հայրերի լայն բացած ոտքերի վրայով:

Մարիամն օգնեց Լեյլային նստել պատի մոտ, որից պոկվել ընկել էին օտար պետությունների նմանվող սվաղի կտորները: Լեյլան ճոճվում էր հետ ու առաջ, ձեռքերը սեղմել էր փորին:

— Այնպես կանեմ, որ քեզ նայեն, Լեյլա՛ ջան: Խոստանում եմ:

— Արագացրո՛ւ,— ասաց Ռաշիդը:

Գրանցման պատուհանի մոտ միմյանց հրմշտող կանանց բազմություն էր: Ոմանք դեռ գրկել էին իրենց երեխաներին: Ոմանք առանձնացել էին ամբոխից ու հավաքվել դեպի բուժսենյակները տանող երկփեղկանի դռան մոտ: Ջինված թալիբ պահակը արգելափակել էր ճանապարհը, նրանց հետ էր մղում:

Մարիամը գրոհեց: Նա խրվեց ամբոխի մեջ՝ անծանոթների արմունկների, ազդրերի ու թիակների դեմ պայքարելով: Ինչ-որ մեկն արմունկով հրեց իր կողոսկրը, Մարիամը արմունկով հետ հրեց: Ինչ-որ ձեռք հուսահատ փորձեց ճանկել նրա դեմքը: Նա ձեռքին շպպացրեց: Առաջ շարժվելու համար Մարիամը ճանկեց պարանոցներ, ձեռքեր, արմունկներ, մազեր, իսկ երբ կողքի կինը ֆշշացրեց, Մարիամն էլ ֆշշոցով պատասխանեց:

Մարիամն այժմ հասկացավ, թե ինչ զոհողությունների է գնում մայրը: Քաղաքավարությունը միակ բանը չէր: Նա ցավով մտածեց Նանայի մասին, նրա արած զոհողությունների մասին: Նանան, որը կարող էր նրանից ազատվել կամ մի տեղ առվի մեջ գցել ու փախչել: Բայց նա դա չարեց: Փոխարենը Նանան տարավ *հարամի* ունենալու ամոթը, իր կյանքը նվիրեց Մարիամին մեծացնելու անշնորհակալ գործին և յուրովի սիրեց նրան: Իսկ վերջում Մարիամը նախընտրեց Ջալիլին: Ամբոխի միջով անպատկառ վճռականությամբ առաջ անցնելու ժամանակ Մարիամը մտածում էր, որ պետք է Նանայի

համար ավելի լավ դուստր լիներ: Կցանկանար հասկանալ մայրության մասին այն, ինչ հիմա էր հասկանում:

Հանկարծ Մարիամը դեմ առ դեմ դուրս եկավ բուժքրոջը, որը ոտքից գլուխ ծածկված էր կեղտոտ գորշ *բուրքայով*: Բուժքույրը խոսում էր մի երիտասարդ կնոջ հետ, որի *բուրքայի* գլխաշորը ներծծված էր թանձրացած արյամբ:

— Աղջկաս ջրերը գնացել են, իսկ երեխան չի ծնվում,— կանչեց Մարիամը:

— Ես եմ հետը խոսում,— գոռաց արյունոտված երիտասարդ կինը,— սպասի՛ր քո հերթին:

Կանանց ամբողջ բազմությունը կողքից կողք էր ճոճվում, ինչպես *քոլբայի* շուրջը բարձր խոտը, երբ զեփյուռն էր փչում բացատում: Մարիամի հետևում կանգնած մի կին գոռում էր, որ աղջիկը ծառից ընկնելուց կոտրել է արմունկը: Մեկ այլ կին բղավում էր, որ արյունոտ կղանք ունի:

— Ջերմություն ունի՞,— հարցրեց բուժքույրը: Մարիամը մի պահ հետո միայն հասկացավ, որ հարցն իրեն է ուղղված:

— Ո՛չ,— ասաց Մարիամը:

— Արյունահոսո՞ւմ է:

— Ո՛չ:

— Որտե՞ղ է:

Ծածկված գլուխների վրայով Մարիամը ցույց տվեց, թե որտեղ էր նստած Լեյլան Ռաշիդի հետ:

— Մենք կմոտենանք նրան,— ասաց բուժքույրը:

— Ինչքա՞ն սպասենք,— գոռաց Մարիամը:

Ինչ-որ մեկը բռնել էր նրա ուսերից ու հետ էր քաշում:

— Չգիտեմ,— ասաց բուժքույրը: Ասաց, որ ընդամենը երկու բժիշկ ունեն, և երկուսն էլ այս պահին վիրահատում են:

— Նա ցավեր ունի,— ասաց Մարիամը:

— Ես էլ,— բղավեց արյունոտված գլխով կինը,— սպասի՛ր քո հերթին:

Մարիամին հետ էին քաշում: Բուժքույրն արդեն չէր երևում ուսերի ու գլուխների հետևից: Մարիամն առավ երեխայի կաթնային բխկոցի հոտը:

— Տարե՛ք նրան զբոսնելու,— գոռաց բուժքույրը,— և սպասե՛ք:

* * *

Դրսում արդեն մթնել էր, երբ բուժքույրը վերջապես կանչեց նրանց: Ծննդաբերական սենյակում ութ մահճակալ կար, որոնց վրա տնքում ու գալարվում էին կանայք, որոնց խնամում էին ամբողջովին ծածկված բուժքույրերը: Կանանցից երկուսը ծննդաբերում էին: Մահճակալների միջև վարագույրներ չկային: Լեյլային տվեցին ամենահեռու մահճակալը՝ պատուհանի տակ, որն ինչ-որ մեկը սև էր ներկել: Կողքը լվացարանն էր՝ ճաքած ու չորացած, դրա վրա անցկացված լարից կախված էին բծավոր վիրաբուժական ձեռնոցներ: Սենյակի մեջտեղում Մարիամը տեսավ ալյումինե սեղան: Վերևի մասի վրա մոխրագույն ծածկոց էր, ներքևի մասը դատարկ էր:

Կանանցից մեկը նկատեց, որ Մարիամը նայում է սեղանին:

— Կենդանի կանանց վերևն են դնում,— հոգնած ձայնով ասաց նա:

Բժիշկը մուգ կապույտ բուրքայով կարճահասակ կին էր՝ թռչնի շարժուձևով: Նա ամեն ինչ ասում էր անհամբեր, արագ:

— Առաջին երեխան է:— Նա ասաց դա որպես հայտարարություն, այլ ոչ թե հարց:

— Երկրորդը,— ասաց Մարիամը:

Լեյլան ճչաց ու շուռ եկավ մի կողմի վրա: Մատներով բռնեց Մարիամի ձեռքը:

— Առաջին ծննդաբերության ժամանակ խնդիրներ եղե՞լ են:

— Ո՛չ:

— Դո՞ւ ես մայրը:

— Այո՛,— ասաց Մարիամը:

Բժիշկը բարձրացրեց բուրքայի փեշը ու հանեց մետաղական կոնաձև գործիք: Նա բարձրացրեց Լեյլայի բուրքան, գործիքի լայն ծայրը դրեց նրա որովայնին, նեղ մասը՝ սեփական ականջը: Գրեթե մեկ րոպե լսում էր, փոխում գործիքի դիրքը, կրկին լսում, կրկին փոխում դիրքը:

— Հիմա պետք է երեխային շոշափեմ, համշիրա՛:

Նա հագավ լվացարանի վրա պարանից կախված ձեռնոցներից մեկը: Մի ձեռքով Լեյլայի փորը հրեց, մյուս ձեռքը մտցրեց ներսը: Լեյլան տնքաց: Երբ բժիշկը վերջացրեց, ձեռնոցը տվեց բուժքրոջը, որը այն լվաց ու նորից կախեց պարանից:

— Աղջիկդ կեսարյանի կարիք ունի: Գիտե՞ս՝ դա ինչ է: Պետք է արգանդը բացենք ու երեխային հանենք, որովհետև նա կոնքային առաջադրություն ունի:

— Չեմ հասկանում,— ասաց Մարիամը:

Բժիշկը հայտնեց, որ երեխայի դիրքն այնպիսին է, որ ինքնուրույն դուրս չի գա:

— Եվ արդեն շատ ժամանակ է անցել: Մենք պետք է հենց հիմա գնանք վիրահատական սենյակ:

Լեյլան ծամածռվելով գլուխը տմբտմբացրեց, և գլուխը մի կողմի վրա ընկավ:

— Մի բան պետք է ասեմ քեզ,— ասաց բժիշկը:

Նա մոտեցավ Մարիամին, կռացավ ու խոսեց ավելի ցածր, գաղտնի տոնով: Ձայնի մեջ շփոթվածություն կար:

— Ի՞նչ է ասում,— հառաչեց Լեյլան,— երեխայի հետ մի բան լավ չէ՞:

— Բայց ինչպե՞ս կդիմանա,— հարցրեց Մարիամը:

Բժիշկն այս հարցի մեջ երևի մեղադրանք զգաց՝ դատելով նրանից, որ սկսեց պաշտպանվելով խոսել:

— Կարծում ես՝ իմ ուզածո՞վ է,— ասաց,— ի՞նչ ես ուզում՝ անեմ: Ինձ անհրաժեշտ բաները չեն տալիս: Ո՛չ ռենտգեն ունեմ, ո՛չ արտածծող սարք, ո՛չ թթվածին, նույնիսկ սովորական հակաբիոտիկ չկա: Երբ հասարարական կազմակերպությունները փող են առաջարկում, Թալիբանը մերժում է: Կամ գումարը տեղափոխում են տղամարդկանց սպասարկող տեղերը:

— Բայց, դոկտո՛ր *սահիբ*, ոչինչ չե՞ք կարող նրան տալ, հարցրեց Մարիամը:

— Ի՞նչ է կատարվում,— հառաչեց Լեյլան:

— Կարող եք ինքներդ դեղորայքը ձեռք բերել, բայց...

— Գրե՛ք անունը,— ասաց Մարիամը,— գրե՛ք, ես կգտնեմ:

Բուրքայի տակից բժիշկն արագ ճոճեց գլուխը:

— Ժամանակ չկա,— ասաց,— հենց թեկուզ այն պատճառով, որ մոտակա դեղատներից ոչ մեկում այն չկա: Այնպես որ ստիպված կլինեք երթևեկության միջով տեղից տեղ գնալ, գուցե ամբողջ քաղաքն անցնել, բայց դեղը գտնելու հավանականությունը փոքր է: Համարյա ութ անց կես է հիմա, այնպես որ Ձեզ հավանաբար կձերբակալեն պարետային ժամը խախտելու համար: Նույնիսկ եթե գտնեք դեղը, հնարավոր է՝ Ձեր միջոցները չներեն գնելու այն: Կամ էլ սկսելու եք սակարկել նույնքան հուսահատ մեկի հետ: Ժամանակ չկա: Այս երեխան պետք է դուրս գա *հիմա*:

— Ասա՛, ինչ է տեղի ունենում,— ասաց Լեյլան՝ արմունկներին հենված մի փոքր բարձրանալով:

Բժիշկը շունչ քաշեց, ապա Լեյլային ասաց, որ հիվանդանոցում ցավազրկող չկա:

— Բայց եթե ուշացնենք, երեխային կկորցնես:

— Ուրեմն կտրե՛ք,— ասաց Լեյլան: Նա հետ ընկավ անկողնում ու ծնկները վեր քաշեց:— Կտրե՛ք ինձ ու երեխային ինձ տվե՛ք:

* * *

Հին, կեղտոտ վիրահատական սենյակում Լեյլան պառկեց պատգարակ-մահճակալի վրա, մինչ բժիշկը մանրակրկտորեն լվանում էր ձեռքերը լվացարանում: Լեյլան ցնցվում էր: Ամեն անգամ ատամների արանքով օդ էր ներս քաշում, երբ բուժքույրը սրբում էր փորը դեղնադարչնագույն հեղուկով թրջած շորով: Մեկ այլ բուժքույր կանգնած էր դռան մոտ: Ժամանակ առ ժամանակ բացում էր դուռն ու ծիկրակում:

Բժիշկը այժմ հանել էր բուրքան, և Մարիամը տեսավ նրա արծաթաձերմակ մազերի փունջը, ծանրացած կոպերի տակ աչքերը, հոգնածությունից բերանի կախված անկյունները:

— Պահանջում են, որ բուրքայով վիրահատենք,— բացատրեց բժիշկը՝ գլխով ցույց տալով դռան մոտ կանգնած բուժքրոջը:— Հետևում է: Հենց տեսնի, որ մոտենում են, կծածկվեմ:

Նա խոսում էր պրագմատիկ, գրեթե անտարբեր ձայնով, և Մարիամը հասկացավ, որ այս կինն արդեն վաղուց դադարել է վրդով-

վելուց: Ահա մի կին, մտածեց Մարիամը, որ հասկացել էր, որ բախտը բերել է, որ դեռ աշխատանք ունի, որ միշտ մի բան էլ կլինի, որը նրանք կարող են խլել:

Լեյլայի ուսերի մոտ երկու ուղղահայաց մետաղյա ձողեր կային: Բուժքույրը, որը մաքրեց Լեյլայի որովայնը, լվացքասեղմակներով դրանց սավան ամրացրեց: Այն վարագույր դարձավ Լեյլայի և բժշկի միջև:

Մարիամը կանգնեց Լեյլայի գլխավերևում ու դեմքն իջեցրեց այնպես, որ նրանց այտերը հպվեցին: Մարիամը զգում էր՝ ինչպես են չխկչխկում Լեյլայի ատամները: Նրանք բռնեցին իրար ձեռքից:

Վարագույրի միջով Մարիամը տեսավ, որ բժշկի ստվերը շարժվեց Լեյլայի ձախ կողմում, բուժքույրը՝ աջ: Լեյլայի շրթունքները ձգվեցին: Սեղմված ատամների արանքից թքի պղպջակներ հայտնվեցին ու սկսեցին պայթել: Նա արագ, փոքրիկ ֆշշացող ձայներ էր հանում:

Բժիշկն ասաց. «Գոտեպնդվի՛ր, քույրի՛կս»:

Ու կռացավ Լեյլայի վրա:

Լեյլայի աչքերը հանկարծ լայն բացվեցին: Հետո բացվեց բերանը: Նա այսպես մնաց, մնաց դողալով, պարանոցի ջլերը պրկված, քրտինքը դեմքից թափվում էր, մատներով ճզմում էր Մարիամի մատները:

Մարիամը միշտ հիացմունքով հիշում էր, թե որքան ժամանակ անցավ, մինչև Լեյլան վերջապես գոռաց:

41

Լեյլա

1999 թվականի աշուն

Փոս փորելը Մարիամի գաղափարն էր: Մի առավոտ նա ցույց տվեց ցախանոցի հետևի հողակտորը:

— Այստեղ կարող ենք անել,— ասաց,— լավ տեղ է:

Նրանք հերթով հարվածում էին բահով, հետո հողը մի կողմ նետում: Մեծ կամ խոր փոս չէին ծրագրել, այնպես որ փորելու գործը

չպետք է այդքան դժվար լիներ, ինչպես հետագայում պարզվեց: Երաշտը, որը սկսվել էր 1998 թվականին, արդեն երկրորդ տարին էր՝ ամենուրեք ավերածություն էր սփռում: Նախորդ ձմռանը համարյա ձյուն չեկավ, իսկ գարնանը ընդհանրապես անձրև չարեց: Ամբողջ երկրում գյուղացիները թողնում էին իրենց ցամաքած հողերը, վաճառում ունեցած-չունեցածն ու գյուղից գյուղ գնում՝ ջուր փնտրելով: Տեղափոխվում էին Պակիստան կամ Իրան: Բնակություն էին հաստատում Քաբուլում: Բայց քաղաքում էլ ջրի մակարդակն իջել էր, մակերեսային ջրհորները չորացել էին: Խոր ջրհորների մոտ այնպիսի երկար հերթեր էին առաջանում, որ Մարիամն ու Լեյլան ժամերով սպասում էին: Քաբուլ գետն առանց իր տարեկան գարնանային ջրհեղեղների ցամաքել էր, դարձել էր հասարակական զուգարան՝ մեջը թափոններ ու գետաքար:

Այսպես նրանք շարունակում էին բահով հարվածել, բայց արևակեզ հողը քարի նման կարծրացել էր, ցեխը դարձել էր չենթարկվող, խտացած, գրեթե քարացած:

Մարիամն արդեն քառասուն տարեկան էր: Հավաքած մազերի մեջ մի քանի սպիտակ փունջ կար: Աչքերի տակ շագանակագույն, կիսալուսնաձև պարկեր էին: Առջևի երկու ատամները կորցրել էր: Մեկը դուրս էր ընկել, մյուսը Ռաշիդն էր կոտրել, երբ Մարիամը պատահաբար վայր գցեց Զալմային: Մաշկը կոշտացել էր, արևահարվել բակում վառող արևի տակ երկար մնալուց: Նրանք նստած նայում էին՝ ինչպես է Զալմայը վազում Ազիզայի հետևից:

Երբ փոսը վերջապես փորեցին, կանգնեցին դրա վրա ու նայեցին:

— Պետք է բավականացնի,— ասաց Մարիամը:

* * *

Զալմայն այժմ երկու տարեկան էր: Թմբլիկ, գանգրահեր փոքրիկ տղա էր: Փոքրիկ շագանակագույն աչքեր ուներ ու Ռաշիդի պես վարդագույն այտեր անկախ եղանակից: Ժառանգել էր նաև հոր ճակատը՝ հաստ, կիսալուսնաձև, ցածր:

Երբ Լեյլան միայնակ էր Զալմայի հետ, նա անուշիկ էր, բարեհամբույր ու կայտառ: Սիրում էր բարձրանալ Լեյլայի ուսերին, մոր և Ազիզայի հետ բակում տապկնոցի խաղալ: Երբեմն՝ հանդարտ պահերին, նա սիրում էր նստել Լեյլայի գրկում ու լսել նրա երգը: Սիրած երգը «Մոլլա Մոհամադ Ջան»-ն էր: Նա ճոճում էր իր փափլիկ տոտիկները, երբ Լեյլան երգում էր նրա գանգուրների մեջ, ու ձայնակցում էր, երբ հասնում էին կրկներգին, ու ճռճռան ձայնով երգում էր իրեն հասկանալի բառերը.

«Արի՛ գնանք Մազար, Մոլլա Մոհամա՛դ ջան,
Տեսնենք կակաչների դաշտերը, սիրելի՛ ուղեկից»:

Լեյլան սիրում էր Զալմայի թաց համբույրներն իր այտերին, սիրում էր փոսիկներով արմունկներն ու չաղլիկ ոտքի մատները: Սիրում էր խուտուտ տալ նրան, բարձերից թունելներ կառուցել, որպեսզի նա միջով անցնի, սիրում էր, երբ նա իր գրկում քնում էր՝ մի ձեռքով միշտ Լեյլայի ականջը բռնած: Լեյլան սոսկում էր, երբ մտածում էր այն օրվա մասին, երբ պառկած էր հատակին՝ հեծանիվի շյուղը ոտքերի արանքը: Ուր որ է անելու էր դա: Հիմա աներևակայելի էր թվում, որ ինքը կարող էր նույնիսկ մտածել դրա մասին: Որդին օրինություն էր, և Լեյլան ուրախ էր, որ իր վախերն անհիմն էին, որ ինքը սիրում էր Զալմային մինչև ուղնուծուծը՝ ճիշտ այնպես, ինչպես Ազիզային:

Բայց Զալմայը պաշտում էր հորը և այդ պատճառով փոխակերպվում էր, երբ հայրն էր իր սերը դրսևորում: Զալմայը միանգամից հանդուգն ծիծաղում էր ու լպիրշ ժպտում: Հոր ներկայությամբ հեշտությամբ վիրավորվում էր: Նեղանում էր: Չնայած Լեյլայի հանդիմանությանը՝ շարունակում չարություն անել, ինչը երբեք չէր անում Ռաշիդի բացակայության ժամանակ:

Ռաշիդն այդ ամենին հավանություն էր տալիս: «Խելքի նշան է»,— ասում էր: Նույնը ասում էր Զալմայի անխոհեմության մասին, երբ նա կուլ տվեց մարմարե գնդիկները, ու հետո դրանք կղանքի հետ դուրս եկան, երբ լուցկիներ վառեց, երբ ծամեց Ռաշիդի սիգարետները:

Երբ ծնվեց Զալմայը, Ռաշիդը նրան տեղափոխեց իր ու Լեյլայի մահճակալին: Նրա համար նոր օրորոց գնեց ու դրա կողերին առյուծներ ու դարանակալած ընձառյուծներ նկարել տվեց: Վճարեց նոր հագուստի, նոր չխկչխկանների, նոր շշերի, նոր տակաշորերի համար, չնայած դրա գումարը չունեին, իսկ Ազիզայինը դեռ կարելի էր օգտագործել: Մի օր տուն եկավ մարտկոցով աշխատող պտտվող խաղալիքով, որը կախեց Զալմայի օրորոցի գլխին: Փոքրիկ դեղնասև իշամեղուները կախված էին արևաածաղկից ու ճզմելուց ծվծվում էին: Միացնելիս խաղալիքը մեղեդի էր նվագում:

— Բա ասում էիր՝ գործերդ լավ չեն,— ասաց Լեյլան:

— Ընկերներիցս կարող եմ պարտքով վերցնել,— ասաց նա արհամարհական տոնով:

— Ինչպե՞ս ես վճարելու նրանց:

— Ամեն ինչ կարգի կգա: Միշտ էլ այդպես է լինում: Նայի՛ր, դուրը գալիս է: Տեսա՞ր:

Լեյլան որդուն օրերով չէր տեսնում: Ռաշիդը նրան տանում էր խանութ, թույլ էր տալիս, որ չոչ անի իր թափթփված նստարանի տակ, խաղա հին ռետինե ներբաններով ու կաշվի կտորներով: Ռաշիդը խփում էր իր երկաթե մեխերը, պտտում հղկաթղթի անիվն ու Զալմայից աչքը չէր կտրում: Եթե Զալմայը շուռ էր տալիս կոշիկների դարակը, Ռաշիդը նրան մեղմորեն հանդիմանում էր՝ հանգիստ կիսաժպտալով: Եթե նորից էր անում, Ռաշիդը ցած էր դնում մուրճը, նստեցնում նրան աշխատասեղանի վրա ու քնքշորեն խոսում հետը:

Նրա համբերատարությունը Զալմայի հետ ջրհորի պես էր՝ խոր ու չցամաքող:

Երեկոյան նրանք միասին տուն էին վերադառնում, Զալմայի գլուխը խփվում էր Ռաշիդի ուսին, երկուսից սոսնձի ու կաշվի հոտ էր գալիս: Նրանք խորամանկորեն ժպտում էին, ինչպես մարդիկ, որոնք գաղտնիք ունեն, ասես ամեն օր, կոշիկի այդ մութ խանութում նստած, ոչ թե կոշիկ էին կարում, այլ գաղտնի դավեր նյութում: Զալմայը սիրում էր ճաշի ժամանակ հոր կողքին նստել, նրանք գաղտնի խաղեր էին խաղում, մինչ Մարիամը, Լեյլան ու Ազիզան *սոֆրայի* վրա ափսեներն էին շարում: Նրանք իրար բոթում էին, հռհռում, իրար վրա հացի փշրանքներ նետում, շշնջում այնպես, որ մյուսները

չլսեն: Եթե Լեյլան խոսում էր նրանց հետ, Ռաշիդը նայում էր նրան այդ անցանկալի միջամտությունից դժգոհ հայացքով: Եթե Լեյլան խնդրում էր գրկել Զալմային, կամ, ավելի վատ, եթե Զալմայը ձգվում էր Լեյլայի մոտ, Ռաշիդը զայրացած հայացք էր նետում:

Լեյլան վիրավորված հեռանում էր:

* * *

Մի երեկո՝ Զալմայի երկրորդ տարեդարձից մի քանի շաբաթ անց, Ռաշիդը տուն եկավ հեռուստացույցով ու տեսաձայնագրիչով: Օրը տաք էր, մեղմ, բայց երեկոն զովանում էր և արդեն վերածվում էր անաստղ, սառը գիշերվա:

Ռաշիդը դրեց դրանք հյուրասենյակի սեղանին: Ասաց, որ գնել է սև շուկայից:

— Եվս մի վարկ,— հարցրեց Լեյլան:

— «Մագնավոքս» է:

Ազիզան մտավ սենյակ: Երբ տեսավ հեռուստացույցը, վազեց դրա մոտ:

— Զգո՛ւյշ, Ազիզա՛ ջո,— ասաց Մարիամը,— ձեռք չտա՛ս:

Ազիզայի մազերը դարձել էին Լեյլայի մազերի պես բաց գույնի: Այտերին Լեյլան տեսնում էր իր փոսիկները: Ազիզան դարձել էր հանգիստ, մտածկոտ փոքրիկ աղջիկ, վեց տարեկանի համար շատ ավելի հասուն վարվելաձևով: Լեյլան հիանում էր իր աղջկա խոսելաձևով, նրա տակտով ու ռիթմով, նրա խոհուն դադարներով և առոգանությամբ, որոնք հատուկ էին մեծահասակի և հակասում էին նրա չհասունացած մարմնին: Ազիզան անհոգաբար իր վրա էր վերցրել ամեն առավոտ Զալմային արթնացնելու, հագցնելու, նախաճաշով կերակրելու, մազերը սանրելու պատասխանատվությունը: Նա էր Զալմային քնեցնում, խոհեմաբար խաղաղեցնում իր անհանգիստ եղբորը: Զալմայի մոտ Ազիզան սովորել էր մեծահասակի պես սրտնեղած օրորել գլուխը:

Ազիզան սեղմեց հեռուստացույցի կոճակը: Ռաշիդը խոժոռվեց, բռնեց ձեռքից ու կոպտորեն դրեց սեղանին:

— Սա Զալմայի հեռուստացույցն է,— ասաց:

Ազիզան գնաց Մարիամի մոտ ու նստեց գիրկը: Նրանք հիմա անբաժան էին: Վերջերս Լեյլայի օրինությամբ Մարիամը սկսեց Ազիզային Ղուրանից հատվածներ սովորեցնել: Ազիզան արդեն կարող էր անգիր արտասանել «Իխլաս»[129], «Ֆաթիհա»[130] *սուրաները*, գիտեր, թե ինչպես են կատարում առավոտյան աղոթքի չորս *ռաքաթները*[131]:

— Միայն սա կարող եմ տալ նրան,— Մարիամն ասել էր Լեյլային,— այս գիտելիքը, այս աղոթքները: Ունեցածս միակ բանը սրանք են:

Զալմայը մտավ սենյակ: Ռաշիդը անհամբեր նայում էր՝ ինչպես են մարդիկ սպասում փողոցային ածպարարների պարզ հնարքներին, ինչպես է Զալմայը քաշում հեռուստացույցի մալուխը, սեղմում կոճակները, ափերը դնում դատարկ էկրանին: Երբ հեռացրեց փոքրիկ ափերը, դրանց խոնավությունը ջնջվեց ապակուց: Ռաշիդը հպարտ ժպիտով նայում էր Զալմային, որը շարունակ սեղմում էր ափերն ու հեռացնում, սեղմում ու հեռացնում:

Թալիբանն արգելել էր հեռուստացույցներ ունենալ: Տեսաժապավենները հրապարակայնորեն ջարդում էին, ժապավենները պոկում ու փաթաթում ցանկապատի սյուներին: Արբանյակային ալեհավաքի սկավառակները կախում էին լապտերասյուներից: Բայց Ռաշիդն ասաց, որ եթե մի բան արգելված է, չի նշանակում, որ այն հնարավոր չէ գտնել:

— Վաղը կփորձեմ մուլտֆիլմերով տեսաժապավեն գտնել,— ասաց նա,— դժվար բան չի: Սև շուկայում ամեն ինչ կարելի է գնել:

— Այն ժամանակ գուցե մեզ նոր ջրհոր գնե՞ս,— ասաց Լեյլան ու արժանացավ Ռաշիդի արհամարհական հայացքին:

Ավելի ուշ, երբ ավարտվեց պարզ սպիտակ բրնձից բաղկացած ընթրիքը, իսկ թեյը կրկին անտեսվեց երաշտի պատճառով, Ռաշիդը ծխեց իր սիգարետը ու հայտնեց Լեյլային իր որոշման մասին:

— Ո՛չ,— ասաց Լեյլան:

Ռաշիդն ասաց, որ թույլտվություն չի խնդրում:

— Խնդրես, թե չխնդրես, միևնույնն է:

— Միևնույն չէր լինի, եթե իմանայիր ամբողջ պատմությունը:

---

[129] «Մաքրագործում», Ղուրանի 112-րդ սուրան, բաղկացած է 4 *այաթից:*

[130] «Գիրքը բացող» Ղուրանի առաջին սուրան, կազմված է 7 *այաթից:*

[131] Ռաքաթ՝ մահմեդական աղոթքի՝ նամազի ժամանակ շարժումների, դիրքերի և բառերի հերթագայություն:

Ռաշիդը պատմեց, որ ընկերներից ավելի շատ պարտքով փող է վերցրել, քան պարտքով տվել, որ միայն խանութով այլևս բավարար չէ հինգ հոգու կերակրել: «Ես քեզ առաջ չէի ասել, որպեսզի չանհանգստանաս»:

— Բացի այդ,— ասաց,— կզարմանաս, թե որքան են նրանք փող աշխատում:

Լեյլան կրկին ասաց ոչ: Նրանք հյուրասենյակում էին: Մարիամը երեխաների հետ խոհանոցում էր: Լեյլան լսում էր ափսեների ծնգոցը, Զալմայի բարձրաձայն ծիծաղը, ինչպես է Ազիզան հանդարտ, խոհեմ ձայնով ինչ-որ բան ասում Մարիամին:

— Կլինեն նրա նմանները, նույնիսկ ավելի փոքր տարիքի,— ասաց Ռաշիդը,— Քաբուլում բոլորը դրանով են զբաղված:

Լեյլան ասաց, որ իրեն չի հետաքրքրում, թե մյուսներն ինչ են անում իրենց երեխաների հետ:

— Ես աչքս վրան կպահեմ,— ասաց Ռաշիդը պակաս համբերատար տոնով:— Անվտանգ անկյուն է: Դիմացը մզկիթ է:

— Ես թույլ չեմ տա, որ աղջկաս փողոցային մուրացկան դարձնես,— կտրուկ ասաց Լեյլան:

Ապտակը բարձր ճպպացող ձայն հանեց, հաստ մատներով ափը խփվեց Լեյլայի այտի փափուկ մասին: Լեյլայի գլուխը թափահար պտտվեց: Խոհանոցի աղմուկը դադարեց: Մի պահ տանը լիակատար լռություն տիրեց: Հետո շտապ ոտնաձայներ միջանցքում, և Մարիամն ու երեխաները հայտնվեցին հյուրասենյակում՝ հայացքը մեկ Լեյլային, մեկ Ռաշիդին ուղղելով:

Հետո Լեյլան խփեց Ռաշիդին:

Առաջին անգամ էր խփում մեկին՝ չհաշված Թարիքի հետ փոխանակած կատակով հարվածները: Բայց դրանք բաց ձեռքով հարվածներ էին, ավելի շուտ՝ թփթփոցներ, քան հարվածներ, գիտակցված, ընկերական, իրենց անհագստացնող ու հուզող մտահոգությունների համապատասխան արտահայտություններ: Դրանք ուղղված էին այն մկաններին, որոնց Թարիքը մասնագիտորեն անվանում էր «դելտոիդներ»:

Լեյլան տեսավ իր բռունցքի օդը ճեղքող աղեղը, մատնոսկրերով զգաց Ռաշիդի չթրաշված կոպիտ մաշկը: Այնպիսի ձայն դուրս

եկավ, ասես հատակին բրնձի պարկ ընկներ: Ուժեղ հարվածեց: Ռաշիդը նույնիսկ երկու քայլ հետ-հետ գնաց:

Սենյակի մյուս ծայրից հևոց, ճիչ ու ծղրտոց լսվեց: Լեյլան չգիտեր, թե ով որ ձայնը հանեց: Այդ պահին նա շատ զարմացած էր՝ նկատելու կամ կարևորություն տալու համար, նա սպասում էր, որ ուղեղը հասկանա, թե ինչ է արել ձեռքը: Երբ հասկացավ, երևի ժպտաց: Երևի *քմծիծաղեց*, երբ, ի զարմանս իրեն, Ռաշիդը հանգիստ դուրս եկավ սենյակից:

Հանկարծ Լեյլային թվաց, որ նրանց կյանքի ընդհանուր դժվարությունները՝ իր, Ազիզայի, Մարիամի, չքացան, հօդս ցնդեցին, ինչպես հեռուստացույցի էկրանի վրայից Զալմայի մատնահետքերը: Թվաց՝ արժեր, թեև անհեթեթորեն, համբերել ամենին այս պանծալի պահի, այս անհնազանդության արարքի համար, որը վերջ կդնի բոլոր ստորացնող տառապանքներին:

Լեյլան չնկատեց, որ Ռաշիդը վերադարձավ սենյակ: Մինչև ձեռքը չփաթաթվեց Լեյլայի կոկորդին: Մինչև Լեյլայի ոտքերը չկտրվեցին գետնից ու նրան չշպրտեցին պատին:

Մոտիկից նրա ծաղրող դեմքն անհավանականորեն մեծ էր թվում: Լեյլան նկատեց, որ տարիքի հետ նա ավելի է փքվել, ավելի շատ պայթած անոթների գծիկներ են առաջացել քթին: Ռաշիդը ոչինչ չասաց: Եվ, իրոք, ինչ ասել, ինչ կարիք կա խոսելու, եթե հրացանը մտցրել ես կնոջդ բերանը:

* * *

Շուրջկալներն էին բակում փոս փորելու պատճառը: Երբեմն ամիսը մեկ էին, երբեմն՝ ամեն շաբաթ: Վերջերս՝ գրեթե ամեն օր: Հիմնականում թալիբները բռնագրավում էին իրերը, մեկի հետույքին քացի տալիս, մեկ-երկուսի վզակոթին հասցնում: Բայց երբեմն հրապարակային ծեծում էին, մտրակում ոտնաթաթերն ու ափերը:

— Կամաց,— ասաց Մարիամը՝ ծնկները փոսի եզրին: Նրանք իջեցրին հեռուստացույցը փոսի մեջ՝ երկու կողմից բռնելով պոլիէթիլենը, որի մեջ այն փաթաթված էր:

— Այսպես լավ է,— ասաց Մարիամը:

Վերջացնելուց հետո հարթեցին հողը, երբ փոսը նորից լցվեց: Հողը մի քիչ ցրիվ տվեցին, որ կասկածելի չթվա:

— Ահա՛,— ասաց Մարիամն ու ձեռքերը հագուստով սրբեց:

Նրանք պայմանավորվեցին, որ երբ անվտանգ կլինի, երբ Թալիբանը վերջացնի այդ շուրջկալները՝ մեկ կամ երկու կամ վեց ամիս անց, գուցե ավելի երկար, նրանք կհանեն հեռուստացույցը:

* * *

Լեյլայի երազում ինքն ու Մարիամը կրկին փոս են փորում ցախանոցի հետևում: Բայց այս անգամ Ազիզային են թաղում: Ազիզայի շունչը մշուշապատում է պոլիէթիլենը, որի մեջ նրան փաթաթել են: Լեյլան տեսնում է նրա տագնապած աչքերը, ափերի սպիտակությունը, երբ նա խփում է ու հրում պոլիէթիլենը: Ազիզան աղերսում է: Լեյլան չի լսում նրա ծղրտոցները: Կարճ ժամանակով, ասում է նա՝ ներքև նայելով, կարճ ժամանակով: Շուրջկալներն են, չգիտե՞ս, իմ սեր: Երբ դրանք ավարտվեն, մաման ու խալա Մարիամը քեզ կհանեն: Խոստանում եմ, իմ սեր: Հետո կխաղանք: Ինչ ուզես՝ կխաղանք: Բահով վերցնում է հողը: Լեյլան շնչակտուր արթնացավ՝ բերանում հողի համը, երբ ցեխի առաջին գնդերը հարվածեցին պոլիէթիլենը:

42

Մարիամ

2000 թվականի ամառը երաշտի երրորդ ու ամենավատ տարին էր:

Հելմանդում, Զաբոլում, Քանդահարում գյուղերը վերածվեցին քոչվորների համայնքների, որոնք մշտապես շարժվում էին, ջուր և կանաչ արոտավայրեր փնտրում անասունների համար: Երբ ոչինչ չգտան, երբ իրենց այծերը, ոչխարներն ու կովերը սատկեցին, եկան Քաբուլ: Նրանք զբաղեցրին Քարեհ-Արիանա բլուրը, ապրում էին ժամանակավոր կացարաններում՝ տասնհինգ-քսան հոգով մի խրճիթում:

Դա նաև «Տիտանիկ»-ի ամառն էր, ամառ, երբ Մարիամն ու Ազիզան, վերջույթների կապուկ դարձած, գալարվում ու քրքջում էին: Ազիզան պնդում էր, որ նա է Ջեքը:

— Կամա՛ց, Ազիզա՛ ջո:

— Ջե՛ք: Ասա՛ անունս, խալա Մարիա՛մ: Ասա՛: Ջե՛ք:

— Հայրդ կջղայնանա, եթե արթնացնես նրան:

— Ջե՛ք: Իսկ դու Ռոուզն ես:

Վերջում Մարիամը, մեջքի վրա պառկած, կրկին համաձայնվում էր լինել Ռոուզը:

— Լա՛վ, դու Ջեքն ես,— փափկում էր նա,— դու երիտասարդ կմեռնես, իսկ ես կապրեմ մինչև խոր ծերություն:

— Հա՛, բայց ես կմեռնեմ որպես հերոս,— ասում էր Ազիզան,— իսկ դու՝ Ռոուզը, ամբողջ դժբախտ կյանքում կարոտելու է ինձ:— Հետո նստում էր Մարիամի կրծքին ու հայտարարում.— Հիմա պետք է համբուրվենք:

Մարիամը գլուխն աջ ու ձախ էր տանում, իսկ Ազիզան, իր անշնորհք վարքագծից ուրախացած, քրքջում էր՝ բերանը ծամածռելով:

Երբեմն մտնում էր Ջալմայը ու դիտում այդ խաղը: Իսկ նա ինչ է լինելու, հարցնում էր:

— Դու կլինես սառցալեռը,— ասում էր Ազիզան:

Այդ ամռանը Քաբուլը տիտանիկատենդ էր ընկել: Մարդիկ Պակիստանից մաքսանենգ ճանապարհով ֆիլմի անօրինական պատճեններ էին բերում՝ երբեմն իրենց ներքնազգեստի մեջ: Պարետային ժամից հետո բոլորը փակում էին դռները, անջատում լույսերը, ձայնն իջեցնում ու արցունքներ թափում Ջեքի, Ռոուզի ու դատապարտված նավի ուղևորների համար: Եթե էլեկտրաէներգիա կար, Մարիամը, Լեյլան ու երեխաները նույնպես դիտում էին: Տասնյակ անգամներ ուշ գիշերով ցախատան հետևի հողի տակից հանում էին հեռուստացույցը, լույսերն անջատում ու վերմակներ կախում պատուհաններին:

Քաբուլ գետի չորացած ափը զբաղեցրին վաճառականները: Շուտով գետի արևակեզ խոռոչներից հնարավոր էր ձեռք բերել «Տիտանիկ» գորգեր, «Տիտանիկ» սփռոցներ, որոնք փաթաթ-

ված դրված էին ձեռնասայլակների վրա: Կար «Տիտանիկ» դեզոդորանտ, «Տիտանիկ» ատամի մածուկ, «Տիտանիկ» օծանելիք, «Տիտանիկ» *փաքորա*[132], նույնիսկ «Տիտանիկ» *բուրքաներ*: Մի շատ համառ մուրացկան սկսեց իրեն «Տիտանիկ մուրացկան» անվանել:

Ծնվեց «Տիտանիկ» քաղաքը:

Երգն է պատճառը, ասում էին:

Ո՛չ, ծովը: Շքեղությունը: Նավը:

Սեքսն է, շշնջում էին:

Լեոն է, ամաչելով ասում էր Ազիզան: Այդ ամենի պատճառը Լեոն է:

— Բոլորին պետք է Ջեքը,— ասաց Լեյլան Մարիամին,— դա է պատճառը: Բոլորը ուզում են, որ Ջեքը փրկի նրանց աղետից: Բայց Ջեք չկա: Ջեքը չի վերադառնա: Ջեքը մեռած է:

* * *

Հետո այդ ամռանը գործվածքներ վաճառողը քնով անցավ ու մոռացավ հանգցնել սիգարետը: Նա փրկվեց հրդեհից, բայց նրա խանութը՝ ոչ: Հրդեհը տարածվեց կողքի գործվածքների խանութի, օգտագործված հագուստի խանութի, կահույքի փոքր խանութի, հացթխարանի վրա:

Ռաշիդին ավելի ուշ ասացին, որ եթե քամին արևելք փչեր, այլ ոչ արևմուտք, նրա խանութը, որն անկյունային էր, գուցե չհրկիզվեր:

* * *

Նրանք վաճառեցին ամեն ինչ:

Սկզբում Մարիամի իրերը, հետո Լեյլայինը: Ազիզայի մանկական հագուստը, այն մի քանի խաղալիքները, որոնք Լեյլան կռվով ստիպել էր, որ Ռաշիդը գնի նրա համար: Ազիզան հնազանդորեն նայում էր այդ ամենին: Վաճառվեց նաև Ռաշիդի ժամացույցը, նրա

---

[132] Փաքորա՝ ձեթի մեջ տապակված բանջարեղեն

հին տրանզիստորային ռադիոն, երկու փողկապները, կոշիկներն ու հարսանեկան մատանին: Բազմոցը, սեղանը, գորգը, աթոռները: Զալմայը մեծ աղմուկ բարձրացրեց, երբ Ռաշիդը վաճառեց հեռուստացույցը:

Հրդեհից հետո Ռաշիդը գրեթե ամեն օր տանն էր: Նա ապտակում էր Ազիզային: Քացով խփում Մարիամին: Իրեր շպրտում: Պատրվակ էր փնտրում՝ Լեյլայի հետ վիճելու, նրան դուր չէր գալիս Լեյլայի հոտը, հագուկապը, սանրվածքը, դեղնող ատամները:

— Ի՞նչ է պատահել քեզ,— հարցնում էր,— ես ամուսնացել էի *փերիի* հետ, իսկ հիմա պառավ ջադուի հետ եմ: Մարիամի նման ես դառնում:

Նրան հեռացրին աշխատանքից Հաջի Յաղուբ հրապարակի մոտի քաբաբանոցից, որովհետև հաճախորդի հետ ծեծկռտուք էր սկսել: Հաճախորդը դժգոհել էր, որ Ռաշիդը հացը կոպտորեն նետել էր սեղանի վրա: Հայհոյանքներ էին տեղացել: Ռաշիդը հաճախորդին անվանել էր «կապկամռութ ուզբեկ»: Ատրճանակով էին սպառնացել: Ի պատասխան շամփուր էր հայտնվել: Ռաշիդի պատմածով՝ նա էր շամփուրը պահել: Մարիամը կասկածներ ուներ:

Երբ նրան աշխատանքից հանեցին Թեյմանիի ռեստորանում, քանի որ հաճախորդները դժգոհում էին երկար սպասելուց, Ռաշիդն ասաց, որ խոհարարը դանդաղ ու ծույլ էր:

— Երևի ինչ-որ տեղ՝ հետևում, քնած էիր,— ասաց Լեյլան:

— Մի՛ բարկացրու նրան, Լեյլա՛,— ասաց Մարիամը:

— Զգուշացնում եմ քեզ, կնի՛կ,— ասաց Ռաշիդը:

— Կամ էլ ծխում էիր:

— Երդվում եմ Աստծո անունով:

— Կաշիդ չես կարող փոխել:

Ու Ռաշիդը թռավ Լեյլայի վրա, բռունցքներով քոթակում էր կուրծքը, գլուխը, որովայնը, պոկում էր մազերը, պատով տալիս: Ազիզան ճչում էր, քաշում հոր վերնաշապիկից. Զալմայն էլ էր ծղրտում, փորձում պոկվել մորից: Ռաշիդը մի կողմ բրթեց երեխաներին, Լեյլային սեղմեց գետնին ու սկսեց քացով խփել: Մարիամը գցվեց Լեյլայի մոտ: Նա շարունակում էր ոտքով հարվածել,

հիմա էլ Մարիամին, թուքը ցայտում էր բերանից, աչքերը փայլում էին մահաբեր վճռականությունից, այնքան էր քացով խփում, մինչև հոգնեց:

— Երդվում եմ, մի օր կստիպես, որ սպանեմ քեզ, Լեյլա՛,— ասաց հևալով: Հետո տնից դուրս վազեց:

* * *

Երբ գումարը սպառվեց, վրա հասավ սովը: Մարիամն ապշած էր, թե որքան արագ քաղցը հագեցնելը դարձավ նրանց գոյության առանցքը:

Բրինձը՝ սովորական խաշած սպիտակ բրինձը՝ առանց մսի կամ սոուսի, հազվագյուտ խրախճանք էր հիմա: Աճող և անհանգստացնող օրինաչափությամբ նրանք բաց էին թողնում ճաշերը: Երբեմն Ռաշիդը բերում էր սարդինաձկների տուփ ու փշրվող, չորացրած հաց, որը սղոցուկի համ ուներ: Երբեմն՝ գողացած խնձորի տոպրակ՝ չնայած ձեռքը կտրելու վտանգին: Մթերային խանութներում նա զգուշորեն գրպանում էր պահածոյացված ռավիոլի, որը բաժանում էին հինգ մասի, և Զալմային հասնում էր առյուծի բաժինը: Ուտում էին աղով հում շաղգամներ: Ճաշին՝ հազարի թառամած տերևներ ու սևացած բանաններ:

Սովամահ լինելը հանկարծակի դարձավ հստակ հնարավորություն: Ոմանք նախընտրեցին դրան չսպասել: Մարիամը լսել էր, որ թաղամասում մի այրի աղացել էր չորացրած հացը, վրան առնետի թույն լցրել ու տվել իր բոլոր յոթ երեխաներին: Ամենամեծ բաժինը պահել էր իրեն:

Ազիզայի կողոսկրերը սկսեցին երևալ մաշկի տակից, թշերի ճարպն անհետացավ: Սրունքները նիհարել էին, իսկ մաշկը ստացել էր թույլ թեյի երանգ: Երբ Մարիամը բարձրացնում էր նրան, պիրկ մաշկի տակից զգում էր ազդրի ծակող ոսկորը: Զալմայը պառկում էր տանը՝ աչքերը խամրած ու կիսախուփ, կամ հոր գրկում՝ փալասի պես: Երբ ուժը հերիքում էր, այնքան էր լացում, մինչև քնում էր, բայց նրա քունը ընդհատվող էր ու կարճատև: Վեր կենալուց Մարիամի աչքերի առաջ սպիտակ կետեր էին պարում: Գլուխը պտտվում էր,

ականջները անընդհատ զնգում էին: Նա հիշեց, թե ինչ էր ասում Մոլլա Ֆայզուլլան քաղցի մասին, երբ սկսվում էր Ռամադանը. «Նույնիսկ օձի խայթած մարդը քուն է մտնում, բայց ոչ սովածը»:

— Երեխաներս կմահանան,— ասաց Լեյլան,— աչքերիս առաջ:

— Չեն մահանա,— ասաց Մարիամը,— ես թույլ չեմ տա: Ամեն ինչ լավ կլինի, Լեյլա՛ ջո: Ես գիտեմ՝ ինչ է պետք անել:

* * *

Մի կիզիչ շոգ օր Մարիամը հագավ բուրքան ու Ռաշիդի հետ քայլեց դեպի «Ինտերկոնտինենտալ» հյուրանոց: Ավտոբուսի ուղեվարձը հիմա անհասանելի շքեղություն էր, և Մարիամը ուժասպառ էր, երբ հասան զառիթափ բլրի գագաթին: Բարձրանալիս գլխապտույտներ էր ունենում և երկու անգամ ստիպված էր կանգնել, սպասել, որ անցնեն:

Հյուրանոցի մուտքի մոտ Ռաշիդը ողջունեց ու գրկեց դռնապաններից մեկին, որի հագին կաշվե կոստյում էր ու հովարով գլխարկ: Նրանք բարեկամական զրուցեցին: Խոսելիս Ռաշիդը բռնել էր դռնապանի արմունկը: Նա ձեռքով ցույց տվեց Մարիամին, և նրանք երկուսով մի պահ նայեցին նրա կողմը: Մարիամին թվաց, որ դռնապանի դեմքը աղոտ ծանոթ է: Երբ դռնապանը ներս մտավ, Մարիամն ու Ռաշիդը սպասեցին: Այս հարմար վայրից Մարիամը տեսնում էր Պոլիտեխնիկ ինստիտուտը և դրանից բացի հին Խաիր Խանա թաղամասն ու Մազար տանող ճանապարհը: Հարավում երևում էր հացի գործարանը՝ «Սիլո»-ն՝ վաղուց լքված, գունատ դեղին ճակատը անթիվ հրետակոծություններից առաջացած հորանջող անցքերով: Հարավում նշմարելի էին Դարուլաման պալատի ավերակները, որտեղ տարիներ առաջ Ռաշիդը նրան տարել էր բացօթյա խնջույքի: Այդ օրվա մասին հիշողությունը անցյալի մասունք էր, որը, թվում էր, այլևս նրան չի պատկանում:

Մարիամը կենտրոնացած էր այդ բաների վրա՝ այդ ուղենիշերի: Վախենում էր, որ նյարդերը տեղի կտան, եթե թույլ տա, որ միտքը շեղվի:

Մի քանի րոպեն մեկ հյուրանոցի մուտքին «Ջիփեր» ու տաքսիներ էին մոտենում: Դռնապանը շտապում էր ողջունել ուղևորներին, որոնք բոլորը տղամարդիկ էին՝ զինված, մորուքավոր, ***թուրբաններով***[133], որոնք դուրս էին գալիս նույն ինքնավստահ, փոքր-ինչ սպառնալից տեսքով: Մարիամը լսում էր պատառիկներ նրանց խոսակցությունից, նախքան նրանք անհետանում էին հյուրանոցի դռների հետևում: Լսում էր փաշթո և ֆարսի, բայց նաև ուրդու և արաբերեն:

— Ծանոթացի՛ր մեր իրական տերերին,— ցածրաձայն ասաց Ռաշիդը,— պակիստանյան ու արաբական իսլամիստներ: Թալիբները խամաճիկներ են: Սրանք են մեծ խաղացողները, Աֆղանստանն էլ նրանց խաղահրապարակն է:

Ռաշիդը պատմեց, որ լսել է, որ Թալիբանը թույլ է տալիս այս մարդկանց գաղտնի ճամբարներ ստեղծել ամբողջ երկրում, որտեղ երիտասարդներին վերապատրաստում են որպես մահապարտներ և ***ջիհադի*** զինվորներ:

— Ինչո՞ւ է այսքան ուշանում,— ասաց Մարիամը:

Ռաշիդը թքեց ու թքածի վրա ոտքի թաթով հող լցրեց:

Մեկ ժամ հետո Մարիամն ու Ռաշիդը դռնապանի հետևից ներս մտան: Նրանց կրունկները կտկտում էին սալիկապատված հատակին, երբ նրանց ուղեկցեցին հաճելիորեն զով ճեմասրահով: Մարիամը տեսավ կաշվե աթոռներին նստած երկու տղամարդկանց՝ նրանց միջև հրացաններ ու սուրճի սեղան, որոնք սև թեյ էին խմում և ուտում ափսեի վրա դրված օշարակով պատված ***ջելաբի***՝ շաքարափոշով խմորի օղակները: Մտածեց Ազիզայի մասին, որը սիրում էր ***ջելաբի***, և ստիպեց իրեն այլ կողմ նայել:

Դռնապանը նրանց տարավ դուրս՝ պատշգամբ: Գրպանից հանեց փոքր, սև, անլար հեռախոս ու թղթի կտոր, որի վրա գրված էր հեռախոսահամարը: Ռաշիդին ասաց, որ դա նրա ղեկավարի արբանյակային հեռախոսի համարն է:

— Ես ձեզ հինգ րոպե եմ տալիս,— ասաց նա,— ոչ ավելի:

— ***Թաշաքոր***,— ասաց Ռաշիդը,— ես սա չեմ մոռանա:

---

[133] Թուրբան՝ նույնն է, ինչ չալմա

Դռնապանը գլխով արեց ու հեռացավ: Ռաշիդը հավաքեց համարը: Հեռախոսը տվեց Մարիամին:

Երբ Մարիամը լսեց խզխզան զանգը, միտքը շեղվեց: Նա հիշեց, թե երբ էր վերջին անգամ տեսել Ջալիլին՝ տասներեք տարի առաջ՝ 1987-ի գարնանը: Նա կանգնած էր փողոցում՝ Մարիամի տան մոտ՝ ձեռնափայտին հենված, Հերաթի համարներով կապույտ «Բենցի» կողքին, որի տանիքը, ծալածածկոցն ու բեռնախցիկը բաժանում էր սպիտակ շերտը: Նա ժամերով կանգնեց, սպասեց Մարիամին, ժամանակ առ ժամանակ կանչեց անունը, ինչպես ժամանակին Մարիամն էր կանչում *նրա* տան մոտ: Մարիամը մի անգամ չնչին բացեց վարագույրը ու տեսավ նրան: Ընդամենը մեկ հայացք, բայց դա բավական էր՝ տեսնելու, որ Ջալիլի մազերը նոսրացել ու սպիտակել են, մեջքը՝ կորացել: Նա ակնոց էր դնում ու կարմիր փողկապով էր, ինչպես միշտ, իսկ սպիտակ թաշկինակի մշտական եռանկյունին կրծքի գրպանում էր: Ամենաապշեցուցիչն այն էր, որ նա ավելի նիհար էր, շատ ավելի նիհար, քան հիշում էր Մարիամը, մուգ շագանակագույն կոստյումի բաճկոնը կախված էր ուսերից, շալվարը կախ էր ընկել:

Ջալիլն էլ մի ակնթարթ տեսավ նրան: Նրանց աչքերը հանդիպեցին վարագույրների բացվածքի միջով, ինչպես հանդիպել էին տարիներ առաջ մեկ այլ զույգ վարագույրների միջով: Բայց հետո Մարիամն արագ փակեց վարագույրները: Նստեց մահճակալի վրա ու սպասեց, որ նա հեռանա:

Հիմա Մարիամը մտածում էր այն նամակի մասին, որը Ջալիլը վերջում թողեց դռան մոտ: Նա օրեր շարունակ պահում էր այն բարձի տակ, ժամանակ առ ժամանակ վերցնում, պտտում ձեռքի մեջ: Ի վերջո, Մարիամը առանց բացելու ճղեց այն:

Իսկ այժմ, ահա ինքն այստեղ է, այսքան տարիներ անց, ու զանգահարում է նրան:

Մարիամը զղջում է իր հիմար, երիտասարդական հպարտության համար: Պետք է թույլ տար Ջալիլին ներս գալ: Ի՞նչ կպատահեր, եթե ներս թողներ, նստեր կողքին, թույլ տար ասել ուզածը: Ջալիլը նրա հայրն էր: Նա լավ հայր չէր, ճիշտ է, բայց որքան սովորական էին այժմ թվում նրա մեղքերը, որքան ներելի, եթե համեմա-

տես Ռաշիդի չարության հետ կամ այն դաժանության ու բռնության, որը նրա աչքերի առաջ կիրառում էին տղամարդիկ:

Լավ կլիներ, որ նամակը ոչնչացրած չլիներ:

Ականջում տղամարդու ցածր ձայն խոսեց ու տեղեկացրեց, որ նա զանգահարել է Հերաթի քաղաքապետարանի գրասենյակ:

Մարիամը մաքրեց կոկորդը.

— Սալաամ, եղբայր, ես փնտրում եմ մեկին, ով շատ տարիներ առաջ ապրել է Հերաթում: Անունը Ջալիլ Խան է: Նա ապրում էր Շար-է-Նաու թաղամասում ու կինոթատրոն ուներ: Դուք գիտեք, թե որտեղ է նա հիմա:

Մարդու ձայնի մեջ գրգռվածություն զգացվեց.

— Սրա համար եք զանգահարում քաղաքապետարան:

Մարիամն ասաց, որ չգիտի, թե ում զանգահարի:

— Ներիր ինձ, եղբայր, ես գիտեմ, որ կարևոր գործեր ունես, բայց կյանք ու մահ է, կյանքի ու մահվան խնդրի համար եմ զանգել:

— Ես նրան չեմ ճանաչում: Կինոթատրոնը երկար տարիներ փակ է:

— Գուցե այնտեղ կա մեկը, ով ճանաչում է նրան, ինչ-որ մեկը...

— Ոչ ոք չկա:

Մարիամը փակեց աչքերը:

— Խնդրում եմ, եղբայր: Երեխաների մասին է խոսքը: Փոքր երեխաների:

Երկար հառաչ:

— Գուցե ինչ-որ մեկը այնտեղ...

— Մի վերակացու կա: Կարծում եմ՝ ամբողջ կյանքն այստեղ է ապրել:

— Այո՛, հարցրեք նրան, խնդրում եմ:

— Զանգահարեք վաղը:

Մարիամն ասաց, որ չի կարող:

— Այս հեռախոսն ընդամենը հինգ րոպեով են տվել: Ես չեմ...

Մյուս կողմում չխկոց լսվեց, ու Մարիամը կարծեց, որ հեռախոսը կախել են: Բայց նա ոտնաձայներ լսեց, ձայներ, մեքենայի հեռավոր ազդանշան ու ինչ-որ մեխանիկական գվվոց, որն ընդհատվում էր

կտտոցով, գուցե էլեկտրական հովհար: Նա հեռախոսը դրեց մյուս ականջին, փակեց աչքերը:

Պատկերացրեց ժպտացող Ջալիլին, որը ձեռքը տանում է գրպանը:

Ա՜հ: Իհարկե: Ուրեմն այսպես: Առանց երկար-բարակի...

Տերևաձև կախազարդ, որից կախված են փոքրիկ մետաղադրամ՝ լուսնի և աստղերի զարդանախշերով:

Փորձի՛ր, Մարիա՛մ ջո:

Ի՞նչ ես կարծում:

Կարծում եմ՝ նման ես թագուհու:

Անցավ մի քանի րոպե: Այնուհետև ոտնաձայներ, ճռռացող ձայն ու կտտոց:

— Նա ճանաչում է նրան:

— Իսկապե՞ս:

— Այդպես է ասում:

— Որտե՞ղ է նա,— հարցրեց Մարիամը,— այդ մարդը գիտի՞, թե որտեղ է Ջալիլ Խանը:

Լռություն: «Ասաց, որ նա մահացել է տարիներ առաջ՝ 1987 թվականին»:

Մարիամի սիրտն ընկավ: Նա անշուշտ հաշվի էր առել այդ հնարավորությունը: Ջալիլը կլիներ ութսունին մոտ, բայց... 1987 թվական:

Նա մահանում էր այդ ժամանակ: Նա Հերաթից քշել եկել էր, որպեսզի հրաժեշտ տա:

Մարիամը մոտեցավ պատշգամբի եզրին: Այստեղից նա կարող էր տեսնել հյուրանոցի՝ ժամանակին հայտնի լողավազանը՝ այժմ դատարկ ու կեղտոտ, փամփուշտի անցքերից սպիավոր, քայքայվող սալիկներով: Այնտեղ էր նաև թենիսի մաշված դաշտը, որի ճղճղված ցանցը կախված ընկած է մեջտեղը օձի մեռած մաշկի պես:

— Հիմա պետք է գնամ,— ասաց ձայնը մյուս կողմից:

— Կներեք, որ անհանգստացրի Ձեզ,— ասաց Մարիամը՝ հեռախոսի մեջ անձայն հեկեկալով: Նա տեսավ՝ ինչպես է Ջալիլը ձեռքը թափ տալիս, քարից քար ցատկոտում առուն անցնելիս՝ գրպանները նվերներից ուռած: Այն բոլոր անգամները, երբ նա

շունչը պահում էր Ջալիլի համար, որպեսզի Աստված նրան ավելի շատ ժամանակ պարգևի իր հետ անցկացնելու համար:— Շնորհակալություն,— ասաց Մարիամը, բայց մյուս կողմում արդեն կախել էին խոսափողը:

Ռաշիդը նայեց նրան: Մարիամը գլուխն օրորեց:

— Անպիտան,— ասաց նա՝ հեռախոսը ճանկելով,— ինչպես դուստրը, այնպես էլ հայրը:

Ճեմասրահն անցնելիս Ռաշիդն արագ մոտեցավ սուրճի սեղանին, որն այժմ լքված էր, ու վերջին *ջելաբին* գրպանը դրեց: Տարավ տուն ու տվեց Ջալմային:

43

Լեյլա

Թղթե պայուսակի մեջ Ազիզան դրեց հետևյալ իրերը. ծաղկավոր վերնաշապիկ, միակ զույգ գուլպան, իրար չհամապատասխանող բրդյա ձեռնոցներ, հին դդումի գույնի վերմակ՝ աստղերով և գիսաստղերով, ճաքած պլաստիկ բաժակ, բանան, իր զառերը: 2001 թվականի ապրիլի զով առավոտ էր՝ Լեյլայի քսաներեքերորդ տարեդարձից առաջ: Երկինքը թափանցիկ մոխրագույն էր, կպչուն, ցուրտ քամին ցնցում էր ցանցավոր դուռը:

Մի քանի օր էր անցել այն բանից, երբ Լեյլան լսեց, որ Ահմադ Շահ Մասուդը գնացել է Ֆրանսիա և խոսել Եվրախորհրդարանում: Մասուդն այժմ իր հարազատ Հյուսիսում էր և ղեկավարում էր Հյուսիսային դաշինքը՝ միակ ընդդիմադիր խումբը, որը դեռ պայքարում էր Թալիբանի դեմ: Եվրոպայում Մասուդը նախազգուշացրել էր Արևմուտքին Աֆղանստանի ահաբեկչական ճամբարների մասին և հայցել ԱՄՆ-ին՝ օգնելու թալիբների դեմ պայքարում:

«Եթե Նախագահ Բուշը մեզ չօգնի,— ասել էր,— այդ ահաբեկիչները շատ շուտով կվնասեն ԱՄՆ-ին և Եվրոպային»:

* * *

Դրանից մեկ ամիս առաջ Լեյլան իմացել էր, որ Թալիբանը դինամիտ էր տեղադրել Բամիյանի հսկա Բուդդաների ծալքերում ու պայթեցրել դրանք՝ անվանելով կռապաշտության և մեղքի առարկաներ: Ամբողջ աշխարհն աղաղակում էր՝ ԱՄՆ-ից Չինաստան: Երկրագնդի կառավարությունները, պատմաբաններն ու հնագետները նամակներ էին գրում՝ աղաչելով թալիբներին չքանդել Աֆղանստանի պատմական երկու մեծագույն կոթողները: Բայց Թալիբանը կանգ չառավ և պայթեցրեց երկհազարամյա Բուդդաների ներսում տեղադրված ականները: Յուրաքանչյուր պայթյունի հետ նրանք վանկարկում էին «Ալլահ-ու-աքբար», ուրախ բացականչում էին ամեն անգամ, երբ փշրվող արձանները փոշու ամպի մեջ կորցնում էին բազուկ կամ ոտք: Լեյլան հիշեց՝ ինչպես էր Բաբիի ու Թարիքի հետ կանգնել երկու Բուդդաներից մեծի վրա՝ 1987 թվականին, երբ արևով լուսավորված նրանց դեմքին փչում էր զեփյուռը, ինչպես էին դիտում ներքևում՝ հովտի վրա ճախրող բազեին: Բայց երբ լսեց արձանների փլուզման մասին լուրը, Լեյլան ոչինչ չզգաց: Դա հազիվ ինչ-որ նշանակություն ունենար: Ինչպե՞ս կարող էին արձանները հուզել նրան, երբ սեփական կյանքը փշրվում ու փոշիանում էր:

Մինչև Ռաշիդը չասաց, որ գնալու ժամանակն է, Լեյլան նստած էր հյուրասենյակի հատակին անխոս, քարացած դեմքով, մազերը գզգզված գանգուրներով դեմքից կախ: Որքան էլ շնչեր ու արտաշնչեր, Լեյլային թվում էր, որ թոքերը բավարար օդով չեն լցվում:

* * *

Քարթեի-Սեի տանող ճանապարհին Զալմայը թռվռում էր Ռաշիդի գրկում, իսկ Ազիզան բռնել էր Մարիամի ձեռքն ու արագ քայլում էր կողքով: Քամին ծածանում էր Ազիզայի կզակի տակ կապված կեղտոտ շարֆը և զգեստի փեշը: Ազիզան այժմ ավելի մռայլ էր, կարծես յուրաքանչյուր քայլի հետ սկսում էր զգալ, որ իրեն խաբում են: Լեյլան ուժ չգտավ՝ պատմելու Ազիզային ճշմարտությու-

նը: Ասել էր՝ տանում է դպրոց՝ հատուկ դպրոց, որտեղ երեխաները ուտում և քնում են և դասից հետո տուն չեն գալիս:

Հիմա Ազիզան անընդհատ գնդակոծում էր Լեյլային նույն հարցերով, որոնք տալիս էր օրեր շարունակ: Արդյոք աշակերտները տարբեր սենյակներում են քնում, թե՞ բոլորը մի մեծ սենյակում: Ընկերներ կունենա՞: Արդյոք Լեյլան վստահ է, որ ուսուցիչները լավը կլինեն:

Եվ մի քանի անգամ՝ «Որքա՞ն ժամանակ եմ այնտեղ մնալու»:

Նրանք կանգնեցին տափակ, զորանոցի տիպի շինությունից երկու շենք հեռու:

— Ես ու Զալմայը այստեղ կսպասենք,— ասաց Ռաշիդը: Օ՛, քանի չեմ մոռացել...

Նա գրպանից հանեց ծամոնի ձողիկ՝ հրաժեշտի նվեր, և հանձնեց այն Ազիզային խիստ վեհանձն տեսքով: Ազիզան վերցրեց ու շնորհակալություն մռթմռթաց: Լեյլան հիանում էր Ազիզայի շնորհքով, ներելու մեծ կարողությամբ, և աչքերը լցվեցին: Սիրտը ճմլվեց, նա տառապում էր այն մտքից, որ այսօր Ազիզան չի նիրհելու կողքին, որ չի զգա կրծքին Ազիզայի փխրուն բազուկը, Ազիզայի գլխի կորությունը չի սեղմվի իր կողերին, պարանոցին չի զգա Ազիզայի տաք շունչը, Ազիզայի կրունկները չեն հարվածի որովայնին:

Երբ Ազիզային տարան, Զալմայը լացուկոծ դրեց, գոռաց՝ Զիզա՛, Զիզա՛: Գալարվում էր ու ոտքերով խփում հոր գրկում, կանչում էր քրոջը, մինչև նրա ուշադրությունը շեղեց փողոցի մյուս կողմում թափառաշրջիկ երգեհոնահարի կապիկը:

Վերջին երկու շենքի կողքով Մարիամը, Լեյլան և Ազիզան միայնակ քայլեցին: Շինությանը մոտենալիս Լեյլան նկատեց փշրված ճակատամասը, կորացած տանիքը, բացակայող պատուհանների շրջանակների վրա մեխված տախտակները, քայքայվող պատի վրա խփված ճոճանակի նստատեղը:

Նրանք կանգնեցին դռան մոտ, և Լեյլան կրկնեց Ազիզային այն, ինչ ասել էր ավելի վաղ:

— Իսկ եթե հարցնեն հորդ մասին, ի՞նչ ես ասելու:

— Մոջահեդները սպանել են,— ասաց Ազիզան՝ բերանը զգուշավոր բացելով:

— Ճիշտ է: Ազիզա՛, հասկանո՞ւմ ես:

— Որովհետև սա հատուկ դպրոց է,— ասաց Ազիզան: Հիմա, երբ արդեն այնտեղ էին, և շենքը իրական էր, Ազիզան ցնցված տեսք ուներ: Ստորին շուրթը դողում էր, աչքերը ուր որ է լցվելու էին, և Լեյլան տեսավ, թե որքան է նա ջանում քաջ երևալ:— Եթե ճշմարտությունն ասենք,— ասաց Ազիզան բարակ, շնչակտուր ձայնով,— ինձ չեն ընդունի: Սա հատուկ դպրոց է: Ես ուզում եմ տուն գնալ:

— Ես քեզ միշտ կայցելեմ,— կարողացավ արտաբերել Լեյլան,— խոստանում եմ:

— Ես էլ,— ասաց Մարիամը:— Մենք կգանք քեզ տեսակցության, Ազիզա՛ ջո, ու միասին կխաղանք, ինչպես միշտ: Սա ժամանակավոր է, մինչև հայրդ աշխատանք կգտնի:

* * *

— Այստեղ սնունդ կա,— ասաց Լեյլան դողացող ձայնով: Նա ուրախ էր, որ հագին *բուրքա* կար, ուրախ էր, որ Ազիզան չի տեսնում, որ ինքը ներսում կտոր-կտոր է լինում:— Այստեղ սոված չես մնա: Նրանք բրինձ ունեն, հաց ու ջուր, գուցե նույնիսկ միրգ:

— Բայց դու այստեղ չես լինելու: Ու խալա Մարիամն ինձ հետ չի լինի:

— Ես կգամ քեզ տեսակցության,— ասաց Լեյլան,— միշտ կգամ: Նայի՛ր ինձ, Ազիզա՛: Ես կգամ քեզ տեսակցության: Ես քո մայրն եմ: Թեկուզ սպանեն էլ, կգամ և կտեսնեմ քեզ:

* * *

Մանկատան տնօրենը կորամեջք, նեղ կրծքավանդակով տղամարդ էր՝ հաճելի դիմագծերով: Նա ճաղատանում էր, մորուքը բզկտված էր, աչքերը ոլոռների պես էին: Անունը Զաման էր: Գլխին թասակ ուներ: Ակնոցի ձախ ոսպնյակը ճաքած էր:

Իր գրասենյակ ուղեկցելիս նա հարցրեց Լեյլայի և Մարիամի անունները, հարցրեց նաև Ազիզայի անունը, տարիքը: Նրանք անցան վատ լուսավորված միջանցքներով, որտեղ ոտաբոբիկ երե-

խաները, մի կողմ քաշված, զննում էին նրանց: Նրանք գզգզված մազերով էին կամ սափրած գլխով: Հագներին մաշված թևերով սվիտերներ էին, ջինսերի ծնկները մինչև թելերը մաշված էին, բաճկոնները՝ կպչուն ժապավենով ամրացրած: Լեյլան օճառի ու տալկի, ամոնիակի ու մեզի հոտ առավ, և զգաց, որ Ազիզայի մտավախությունները սկսեցին ահագնանալ, և նա սկսեց նվնվալ:

Լեյլան աչքի անցկացրեց բակը. մոլախոտեր, ծռված ճոճանակ, հին անվադողեր, փսկած բասկետբոլի գնդակ: Սենյակները, որոնց կողքով նրանք անցնում էին, դատարկ էին, պատուհանները պատված էին պոլիէթիլենով: Սենյակներից մեկից մի տղա նետվեց, բռնեց Լեյլայի արմունկն ու փորձեց բարձրանալ գիրկը: Սպասարկողը, որը մաքրում էր մեզի լճակի պես մի բան, վար գցեց հատակ մաքրելու փայտը և տղային խռիկ տվեց:

Զամանը մեղմ ու ընտանեաբար էր որբերի հետ: Անցնելիս թփթփացրեց ոմանց գլուխներին, մեկ-երկուսին սրտակից բառեր ասաց, մազերը գզգզեց՝ առանց նրանց արժանապատվությունը նսեմացնելու: Երեխաներին դուր էր գալիս նրա վերբերմունքը: Լեյլան մտածեց, որ բոլորը հույս ունեին նրանից խրախուսանք ստանալու:

Զամանը ուղեկցեց նրանց իր աշխատասենյակը, որտեղ ընդամենը երեք ծալովի աթոռ կար ու մի թափթփված սեղան՝ վրան ցրված թղթի կույտեր:

— Դու Հերաթից ես,— ասաց Զամանը Մարիամին,— առոգանությունից է զգացվում:

Նա հետ ընկավ աթոռին, ձեռքերը ծալեց փորին ու ասաց, որ ժամանակին իր փեսան այնտեղ էր ապրում: Նույնիսկ այս սովորական շարժումները, Լեյլան նկատեց, նրանից ջանք էին պահանջում: Եվ չնայած նա թեթև ժպտում էր, Լեյլան զգաց, որ նրա ներսում ինչ-որ անհանգիստ և վիրավորված բան կար, հիասթափություն և պարտություն, որոնց վրա երեսպատված էր բարեհոգությունը:

— Ապակեգործ էր,— ասաց Զամանը,— նեֆրիտի գույնի գեղեցիկ կանաչ կարապներ էր ստեղծում: Պահում էիք արևի լույսին, ու դրանք փայլում էին ներսից, ասես փոքրիկ գոհարներով լցված լինեին: Վերադարձել եք այնտեղ:

Մարիամն ասաց՝ ոչ:

— Ես ինքս Քանդահարից եմ: Քանդահարում եղել ես, համշիրա՛: Ո՞չ: Շատ սիրուն է: Ինչպիսի՜ այգիներ: Բա խաղո՛ղը: Օ՜, խաղողը: Քիմքը գերող:

Մի քանի երեխաներ հավաքվել էին դռան մոտ ու ծիկրակում էին: Զամանը նրբորեն դուրս քշեց նրանց փաշթո լեզվով:

— Իհա՛րկե, ես Հերաթն էլ եմ սիրում: Նկարիչների և գրողների, սուֆիների և միստիկների քաղաք: Գիտե՞ք հին կատակը, որ չես կարող ոտքդ ձգել Հերաթում՝ առանց պոետի հետևին քացի տալու:

Լեյլայի կողքին նստած՝ Ազիզան փոթկաց:

Զամանը ձևական հոգոց հանեց:

— Ահա՛, քեզ ծիծաղեցրի, փոքրի՛կ *համշիրա*: Դա սովորաբար ամենադժվարն է: Ես սկզբից մի քիչ անհանգստացած էի: Մտածեցի, որ պետք է հավի պես կչկչամ կամ էշի պես զռռամ: Բայց, ահա՛: Որքան անուշիկն ես:

Նա սպասավորին կանչեց, որպեսզի մի քանի րոպե զբաղեցնի Ազիզային: Ազիզան թռավ Մարիամի գիրկն ու կառչեց նրանից:

— Մենք պարզապես զրուցելու ենք, սիրելի՛ս,— ասաց Լեյլան,— ես այստեղ կլինեմ: Լա՛վ: Հենց այստեղ:

— Մի րոպեով դուրս արի, Ազիզա՛ ջո,— ասաց Մարիամը,— մայրիկդ պետք է խոսի կակա Զամանի հետ: Ընդամենը մի րոպե: Դե՛, գնա՛:

Երբ մենակ մնացին, Զամանը հարցրեց Ազիզայի ծննդյան տարեթիվը, նրա հիվանդությունների մասին, ալերգիա ունի, թե ոչ: Հարցրեց Ազիզայի հոր մասին, և Լեյլան տարօրինակ զգացում ապրեց, երբ ասաց մի սուտ, որն իրականում ճշմարտություն էր: Զամանը լսեց, և դեմքը ո՛չ վստահություն, ո՛չ էլ թերահավատություն չարտահայտեց: Ասաց, որ մանկատունը պահում է պատվի հիման վրա: Եթե *համշիրան* ասում է, որ ամուսինը մահացած է, և ինքը ունակ չէ խնամել երեխաներին, նա կասկածի չէր ենթարկում:

Լեյլան սկսեց լացել:

Զամանը գրիչը վայր դրեց:

— Ես ամաչում եմ,— հեկեկաց Լեյլան՝ ափը բերանին սեղմած:

— Նայի՛ր ինձ, *համշիրա՛*:

— Ինչպե՞ս կարող է մայրը լքել իր երեխային:

— Նայի՛ր *ինձ*:

Լեյլան բարձրացրեց հայացքը:

— Դու մեղավոր չես: Լսո՞ւմ ես ինձ: Դու չես մեղավորը: Այդ վայրենիները՝ այդ *վահշիներն* են մեղավոր: Նրանց պատճառով ամաչում եմ, որ փաշթուն եմ: Նրանք խայտառակել են իմ ժողովրդի անունը: Եվ դու մենակ չես, *համշիրա՛*: Քեզ պես մայրեր միշտ են գալիս, անընդհատ. այստեղ եկող մայրերը չեն կարողանում կերակրել իրենց երեխաներին, քանի որ թալիբները թույլ չեն տալիս նրանց տնից դուրս գալ և ապրուստ ապահովել: Այնպես որ ինքդ քեզ մի՛ մեղադրիր: Այստեղ ոչ ոք քեզ չի մեղադրում: Ես հասկանում եմ:— Նա առաջ հակվեց,— համշիրա՛, ես հասկանում եմ:

Լեյլան սրբեց աչքերը *բուրքայի* ծայրով:

— Ինչ վերաբերում է այս տեղին,— հառաչեց Զամանը՝ ձեռքի շարժումով ցույց տալով իր շուրջը,— դու տեսնում ես, որ զարհուրելի վիճակում է: Մեզ միշտ գումար է պակասում, միշտ պայքարում ենք, մի ճար գտնում: Թալիբանից չնչին աջակցություն ենք ստանում կամ էլ ոչ մի: Բայց ծայրը ծայրին հասցնում ենք: Քեզ նման՝ անում ենք այն, ինչ պետք է անենք: Ալլահը մեծ է ու բարի, և Ալլահը ապահովում է մեզ, և քանի Նա ապահովում է, ես կհետևեմ, որ Ազիզան կուշտ ու հագնված լինի: Այսքանը քեզ խոսք եմ տալիս:

Լեյլան գլխով արեց:

— Լա՞վ:

Նա բարեկամաբար ժպտում էր:

— Բայց մի՛ լացիր, համշիրա՛: Թույլ մի՛ տուր տեսնի, որ լացում ես:

Լեյլան նորից սրբեց աչքերը:

— Աստված օրհնի՛ քեզ,— ասաց նա խռպոտ ձայնով,— Աստված օրհնի՛ քեզ, եղբա՛յր:

***

Բայց երբ եկավ ցտեսություն ասելու պահը, սկսվեց հենց այն տեսարանը, որից Լեյլան այդքան վախենում էր:

Ազիզան խուճապի մատնվեց:

Տան ամբողջ ճանապարհին, Մարիամի վրա հենված, Լեյլան լսում էր Ազիզայի սուր աղաղակները: Աչքերի առաջ Զամանի հաստ, կոշտացած ձեռքերն էին, որոնք մոտենում են Ազիզայի ձեռքերին, քաշում՝ սկզբում նուրբ, հետո՝ ավելի ամուր, հետո՝ ուժով, որպեսզի Ազիզան պոկվի նրանից: Տեսնում էր՝ ինչպես է Ազիզան Զամանի գրկում ոտքերով խփում, երբ նա շտապ թեքվում էր անկյունը, լսում էր՝ ինչպես է Ազիզան գոռում, ասես Լեյլան պատրաստվում էր անհետանալու երկրի երեսից: Իսկ հետո Լեյլան տեսավ ինքն իրեն միջանցքով վազելիս, գլխիկոր, կոկորդից բարձրացող հեծկլտոցով:

— Նրա հոտն եմ առնում,— ասաց նա տանը Մարիամին: Հայացքը ցրված սավառնում էր Մարիամի ուսի վրայով, անցնում բակը, պատերը, դեպի սարերը, որոնք շագանակագույն էին, ինչպես ծխողի թուքը:— Նրա քնած ժամանակվա հոտն եմ առնում: Իսկ դռ՛ւ: Դու զգո՛ւմ ես:

— Ա՛խ, Լեյլա՛ ջո,— ասաց Մարիամը,— մի՛ արա: Ի՞նչ լավ բան կա դրա մեջ: Ի՞նչ լավ բան:

* * *

Սկզբում Ռաշիդը հարմարվում էր Լեյլային և ուղեկցում նրանց մանկատուն՝ նրան, Մարիամին և Զալմային, չնայած քայլելուց հավաստիանում էր, որ Լեյլան տեսնի իր տանջահար տեսքը, լսի իր բողոքն այն դժվարությունների մասին, որոնք կրում էր Լեյլայի պատճառով, թե որքան են ցավում ոտքերն ու մեջքը մանկատուն գնալ-գալու ճանապարհին: Նա ուզում էր համոզվել, որ Լեյլան գիտի՝ ինչ ծանր վիճակի մեջ են իրեն դնում:

— Ես այլևս երիտասարդ չեմ,— ասում էր,— չնայած քեզ ինչ: Քեզ մնար՝ ինձ գերեզմանը կդնեիր: Բայց այդպես չի լինելու, Լեյլա՛: Քո ուզածով չի լինելու:

Նրանք բաժանվում էին մանկատնից երկու շենք այն կողմ, և Ռաշիդը նրանց երբեք ավելի քան տասնհինգ րոպե չէր տալիս: «Մի րոպե ուշանաք,— ասում էր,— ես կգնամ: Լուրջ եմ ասում»:

Լեյլան ստիպված պնդերեսություն էր անում, աղաչում, որպեսզի մի փոքր երկարացնի Ազիզայի հետ անցկացվող րո-

պեները: Անում էր դա իր համար, Մարիամի համար, որն անմխիթար էր Ազիզայի բացակայությունից, չնայած ինչպես միշտ գերադասում էր սեփական տառապանքը զուսպ և անաղմուկ տանել: Նաև Զալմայի համար, որն ամեն օր հարցնում էր քրոջ մասին ու հիստերիկա սարքում, որը երբեմն վերածվում էր անսփոփ ու երկարատև լացի:

Երբեմն մանկատան ճանապարհին Ռաշիդը կանգ էր առնում ու դժգոհում, որ ոտքը ցավում է: Հետո շրջվում էր ու քայլում դեպի տուն մեծ, հաստատուն քայլերով, նույնիսկ առանց կաղալու: Կամ ճպպացնում էր լեզուն և ասում. «Թոքերս են, Լեյլա՛: Շունչս չի հերիքում: Գուցե վաղը ավելի լավ կզգամ կամ էլ հաջորդ օրը: Տեսնենք»: Զևականության համար նույնիսկ մի անգամ չէր հևում: Շրջվելիս ու տուն գնալիս հաճախ սիգարետ էր վառում: Լեյլան ստիպված հետևից գնում էր տուն՝ անօգնական, վրդովմունքից և անզոր բարկությունից դողալով:

Մի օր էլ ասաց Լեյլային, որ այլևս չի տանի նրան:

— Շատ եմ հոգնել փողոցներով ամեն օր քայլելուց,— ասաց,— աշխատանք փնտրելով:

— Այդ դեպքում ես մենակ կգնամ,— ասաց Լեյլան,— դու չես կարող կանգնեցնել ինձ, Ռաշի՛դ: Լսո՛ւմ ես: Ինչքան ուզում ես հարվածի՛ր, բայց ես կշարունակեմ այնտեղ գնալ:

— Արա՛, ինչ ուզում ես: Բայց Թալիբանի կողքով չես անցնի: Զասես, որ չեմ զգուշացրել:

— Ես գալիս եմ քեզ հետ,— ասաց Մարիամը:

Լեյլան թույլ չտվեց:

— Դու պետք է մնաս տանը Զալմայի հետ: Եթե մեզ կանգնեցնեն... Չեմ ցանկանա, որ նա տեսնի:

Եվ այսպես, Լեյլայի կյանքը հանկարծակի սկսեց պտտվել Ազիզային տեսնելու ուղիներ փնտրելու շուրջ: Դեպքերի կեսում նա մանկատուն չէր հասնում: Փողոցն անցնելիս նրան նկատում էին թալիբներն ու հարցեր տեղում. «Ի՞նչ է անունդ: Ո՞ւր ես գնում: Ինչո՞ւ ես մենակ: Որտե՞ղ է քո *մահրամը*», և հետո տուն էին ուղարկում: Լավագույն դեպքում անպատվում էին կամ հետևին հասցնում, խփում մեջքին: Այլ անգամներ հասցնում էին տարբեր իրերով՝ փայտե մա-

հակներով, ծառի թարմ ճյուղերով, կարճ մտրակներով, ապտակում, հաճախ բռունցքով խփում:

Մի օր մի երիտասարդ թալիբ ռադիոյի լարով ծեծեց Լեյլային: Երբ ավարտեց, վերջին անգամ խփեց վզակոթին ու ասաց. «Մի անգամ էլ տեսնեմ քեզ, այնպես կծեծեմ, որ մորդ կաթը ոսկորներիցդ կթափվի»:

Այդ անգամ Լեյլան գնաց տուն: Պառկեց փորի վրա՝ իրեն զգալով հիմար, խղճուկ կենդանի, ու ֆշշացնում էր, երբ Մարիամը խոնավ շորեր էր դնում նրա արյունոտ մեջքին և ազդրերին: Բայց սովորաբար Լեյլան չէր հանձնվում: Ձևացնում էր, թե տուն է գնում, ապա գնում էր այլ ուղիով՝ նրբանցքներով: Երբեմն նրան բռնում էին, հարցաքննում, հայհոյում՝ օրը երկու, երեք, նույնիսկ չորս անգամ: Հետո մտրակներ էին գործի դրվում, ալեհավաքներ էին օդը կտրում, և նա տուն էր գնում արյունահոսելով՝ առանց Ազիզայի վրա նույնիսկ մեկ հայացք գցելու: Շուտով Լեյլան սկսեց լրացուցիչ շորեր հագնել, նույնիսկ շոգին՝ երկու, երեք սվիտեր *բուրքայի* տակից՝ ծեծից պահող լրացուցիչ շերտեր:

Բայց Լեյլայի համար թալիբների կողքով սողոսկելու պարգևը արժեր դրան: Նա կարող էր այնքան ժամանակ անցկացնել Ազիզայի հետ, որքան ուզում էր, նույնիսկ ժամեր: Նրանք նստում էին բակում՝ ճոճանակի մոտ, այլ երեխաների և այցելող մայրերի հետ, և խոսում այն մասին, թե ինչ է Ազիզան սովորել այդ շաբաթ:

Ազիզան ասում էր, որ կակա Ջամանը նրանց ամեն օր մի բան էր սովորեցնում՝ հիմնականում կարդալ և գրել, երբեմն աշխարհագրություն, մի քիչ պատմություն կամ բնական գիտություններ, ինչ-որ բան բույսերի, կենդանիների մասին:

— Բայց մենք պետք է քաշենք վարագույրները,— ասաց Ազիզան,— որպեսզի թալիբները մեզ չտեսնեն:— Թալիբների ստուգման դեպքում կակա Ջամանը պատրաստ ուներ ասեղներ ու գործելու թելեր:— Մենք գրքերը ցած ենք դնում ու ձևացնում ենք, թե գործում ենք:

Մի օր Ազիզային այցելելու ժամանակ Լեյլան տեսավ միջին տարիքի մի կնոջ, որը հետ էր գցել *բուրքան* ու եկել էր այցի երեք տղաների և մի աղջկա հետ: Լեյլան ճանաչեց նրա սուր դեմքը, ծանր

հոնքերը, չնայած դրանց ավելացել էին կորացած բերանն ու սպիտակած մազերը: Լեյլան հիշեց շալերը, սև կիսաշրջազգեստները, կտրուկ ձայնը, թե ինչպես էր նա ձյութի նման սև մազերը կապում այնքան պիրկ հանգույցով, որ երևում էին պարանոցի հետևը ցցված մուգ մազերը: Լեյլան հիշեց, որ այս կինը ժամանակին արգելում էր աշակերտուհիներին դեմքը ծածկել՝ ասելով, որ կանայք և տղամարդիկ հավասար են, և պատճառ չկա, որ կանայք ծածկվեն, իսկ տղամարդիկ՝ ոչ:

Մի պահ խալա Ռանգմաալը վեր նայեց և տեսավ Լեյլայի հայացքը, բայց իր նախկին ուսուցչի աչքերում Լեյլան չնկատեց ոչ մի հապաղում, ճանաչելու ոչ մի կայծ:

* * *

— Երկրի կեղևի երկայնությամբ ճեղքեր կան,— ասաց Ազիզան,— դրանք կոչվում են խզվածքներ:

Ջերմ ցերեկ էր, 2001-ի հունիսի ուրբաթ օր: Նստած էին մանկատան բակում չորսով՝ Լեյլան, Ջալմայը, Մարիամն ու Ազիզան: Ռաշիդի գութը այս անգամ շարժվել էր, ինչը հազվադեպ էր լինում, և ուղեկցել էր նրանց: Նա սպասում էր փողոցում՝ ավտոբուսի կանգառի մոտ:

Նրանց շուրջը վազվզում էին ոտաբոբիկ երեխաները: Ֆուտբոլի փսկած գնդակ էին խփում ու անտարբեր վազում հետևից:

— Իսկ խզվածքների երկու կողմերից քարե շերտեր են, որոնցից կազմվում է երկրակեղևը,— պատմում էր Ազիզան:

Ինչ-որ մեկը մազերը հետ էր տարել Ազիզայի դեմքից, հյուսել և կոկիկ կապել դրանք գագաթին: Լեյլան նախանձեց նրան, ով նստել էր դստեր հետևում, հյուսել նրա մազերը, խնդրել, որ չշարժվի:

Ազիզան ցուցադրում էր՝ ձեռքի ափերը բացելով ու դրանք տրորելով: Ջալմայը հետաքրքրությամբ դիտում էր:

— Կեկտոնիկ շերտեր են կոչվում, չէ՞:

— Տեկտոնիկ,— ասաց Լեյլան: Խոսելը ցավ էր պատճառում: Ծնոտը դեռ ցավում էր, մեջքն ու պարանոցը՝ նույնպես: Շրթունքն այտուցվել էր, իսկ լեզուն անընդհատ ընկնում էր ստորին կտրիչի

դատարկության մեջ, որը Ռաշիդը երկու օր առաջ կոտրել էր: Նախքան Մամիի և Բաբիի մահը, ինչը նրա կյանքը գլխիվայր շրջեց, Լեյլան չէր հավատում, որ մարդու մարմինն ունակ է դիմակայելու այսքան ծեծին, այսքան դաժան, այսքան պարբերական ծեծին, և շարունակել գործել:

— Ճիշտ է: Եվ երբ դրանք անցնում են, իրար են քսվում, դիպչում են իրար, տեսնո՞ւմ ես, մա՛մ, արձակվում է էներգիա, որը հասնում է երկրի մակերեսին և ցնցում առաջացնում:

— Այնքան խելացի ես դառնում,— ասաց Մարիամը,— շատ ավելի խելացի, քան քո հիմար *խալան*:

Ազիզայի դեմքը փայլեց, բացվեց:

— Դու հիմար չես, խալա՛ Մարիամ: Իսկ կակա Զամանն ասում է, որ երբեմն ժայռերի տեղաշարժը խոր է, խոր ներքևում, այն ուժեղ է և սարսափելի, բայց մակերեսին մենք միայն մի փոքր ցնցում ենք զգում: Ընդամենը թեթև ցնցում:

Նախորդ այցելության ժամանակ մթնոլորտի թթվածնի ատոմներն էին, որոնք ցրում են կապույտ լույսը արևից: Եթե երկիրը մթնոլորտ չունենար, ասաց Ազիզան մի փոքր շնչակտուր, երկինքն ընդհանրապես կապույտ չէր լինի, կլիներ սև ծովի պես, իսկ արևը մթության մեջ պայծառ մեծ աստղ կլիներ:

— Ազիզան այս անգամ մեզ հետ տո՞ւն է գալիս,— հարցրեց Զալմայը:

— Շուտով, սիրելի՛ս,— ասաց Լեյլան,— շուտով:

Լեյլան հետևեց, թե ինչպես է Զալմայը հոր պես քայլելով հեռանում՝ օրորվելով, թաթերը ներս գցելով: Նա գնաց դեպի ճոճանակը, հրեց դատարկ նստատեղը, վերջը նստեց բետոնի վրա ու սկսեց ճաքի արանքից մոլախոտեր պոկել:

— Ջուրը շոգիանում է տերևներից. մա՛մ, գիտեի՞ր: Ինչպես պարանից կախված լվացքը: Դրա հետևանքով ջրի հոսքը բարձրանում է ծառով վեր: Հողից ու արմատներից, հետո ծառի բնով, ճյուղերի ու տերևների միջով: Դա կոչվում է գոլորշիացում:

Որերորդ անգամ Լեյլային հետաքրքրեց, թե ինչ կաներ Թալիբանը, եթե կակա Զամանի գաղտնի դասընթացները բացահայտվեին:

Այցելությունների ժամանակ Ազիզան թույլ չէր տալիս, որ լռություն տիրեր: Նա լցնում էր բոլոր դադարները բորբոքված խոսքով, բարձր, զրնգուն ձայնով: Թեմաներն անընդհատ փոխում էր, ձեռքերով հախուռն շարժումներ անում, թափ տալիս իրեն ոչ հատուկ նյարդայնությամբ: Նոր ծիծաղ էր ձեռք բերել: Ոչ այնքան ծիծաղ, որքան նյարդային կետադրություն, որի իմաստը, Լեյլան կասկածում էր, հանգստացնելն էր:

Այլ փոփոխություններ էլ կային: Լեյլան նկատում էր Ազիզայի եղունգների տակի կեղտը, իսկ Ազիզան դա նկատում էր ու ձեռքերը պահում ազդրերի տակ: Երբ կողքը երեխա էր լացում՝ քթից խլինքը կախված, կամ երեխա էր քայլում բաց հետույքով՝ մազերը կեղտից իրար կպած, Ազիզայի կոպերը թրթռում էին, և նա արագ բացատրություն էր գտնում դրան: Ասես տանտիրուհի լիներ, որն ամաչում էր հյուրերից իր տան անշնորհքության, երեխաների փնթիության համար:

Իր կեցության մասին հարցերին տալիս էր աղոտ, բայց ուրախ պատասխաններ:

— Լավ եմ, խալա՛, ես լավ եմ:

— Երեխաները քեզ չե՞ն նեղացնում:

— Չէ՛, մամա՛: Բոլորն էլ լավն են:

— Ուտո՞ւմ ես: Լա՞վ ես քնում:

— Ուտում եմ: Քնում էլ եմ: Այո՛: Անցած երեկո գառ ենք կերել: Կամ էլ անցած շաբաթ:

Երբ Ազիզան այսպես էր խոսում, Լեյլան նրա մեջ մի քիչ Մարիամին էր տեսնում:

Ազիզան հիմա կակազում էր: Մարիամն առաջինը նկատեց: Թեթև, բայց նշմարելի և ավելի ցայտուն «թ»-ով սկսվող բառերում: Լեյլան հարցրեց Զամանին: Նա խոժոռվեց ու ասաց. «Կարծում էի՝ միշտ էլ կակազել է»:

Այդ ուրբաթ օրը նրանք Ազիզայի հետ մանկատնից կարճատև զբոսանքի դուրս եկան և հանդիպեցին Ռաշիդին, որ նրանց սպասում էր ավտոբուսի կանգառում: Երբ Զալմայը նկատեց հորը, հուզված ծղրտաց և անհամբեր դուրս պրծավ Լեյլայի գրկից: Ազիզան հորը ողջունեց սառը, բայց ոչ թշնամական: Ռաշիդն ասաց, որ պետք է շտապեն. երկու ժամից պետք է աշխատանքի վերադառնար: Առաջին

շաբաթն էր, որ դռնապան էր աշխատում «Ինտերկոնտինենտալ»-ում: Կեսօրից մինչև ժամը ութը՝ շաբաթը վեց օր, Ռաշիդը բացում էր մեքենաների դռները, տանում ուղեբեռը և մաքրում թափվածը: Երբեմն օրվա ավարտին բուֆետ-ռեստորանի խոհարարը թույլ էր տալիս Ռաշիդին տուն տանել մնացորդները՝ պայմանով, որ սուս կմնա. ձեթի մեջ լողացող սառը մսի կոլոլակներ, տապակած հավի թևիկներ՝ կաշին կոշտ ու չորացած, դժվար ծամվող լցոնված մակարոնեղեն, կոպիտ, գնդիկավոր բրինձ: Ռաշիդը Լեյլային խոստացել էր, որ երբ որոշ գումար խնայի, Ազիզան կարող է տուն վերադառնալ:

Ռաշիդի հագին համազգեստ էր՝ մուգ կարմիր պոլիեսթերից կոստյում, սպիտակ վերնաշապիկ, կպցնովի փողկապ, հովարով գլխարկ, որը քաշել էր սպիտակ մազերին: Այս համազգեստով Ռաշիդը կերպարանափոխվել էր: Խոցելի տեսք ուներ, խղճալի և տարակուսած, համարյա անվնաս: Ասես անխռով ընդունել էր կյանքի իրեն հասած դժբախտությունները: Իր ինազանդության մեջ թե՛ խղճալի, թե՛ հիացմունքի արժանի:

Ավտոբուսով գնացին «Տիտանիկ» քաղաքը: Մտան գետը, որի չորացած ափերի երկու կողմից ժամանակավոր տաղավարներ էին: Կամրջի մոտ, երբ իջնում էին աստիճաններով, կռունկից կախված ոտաբոբիկ մարդ տեսան՝ ականջները կտրված, վիզը պարանի վերջում ծռված: Գետի մեջ նրանք ձուլվեցին անցուդարձ անող գնորդների ամբոխի հետ՝ դրամափոխների, ձանձրացած տեսք ունեցող հասարակական կազմակերպությունների աշխատողների, ծխախոտավաճառների, ծածկված կանանց, ովքեր հակաբիոտիկի կեղծ դեղատոմսեր էին առաջարկում մարդկանց և աղաչում փողի դիմաց դրանք լրացնել: Մտրակ ճոճող, *նասվար*[134] ծամող թալիբները շրջում էին «Տիտանիկ» քաղաքով և անթաքույց ծիծաղ, չծածկված դեմք փնտրում:

Խաղալիքների կրպակից, որը *փուսթին*[135] վերարկու վաճառողի և արհեստական ծաղիկների տաղավարների միջև էր, Զալմայն ընտրեց ռետինե բասկետբոլի գնդակ՝ դեղին և կապույտ զոլերով:

---

[134] Նասվար՝ ծամելու ծխախոտ
[135] Փուսթին՝ մորթիով վերարկու

— Ընտրի՛ր մի բան,— ասաց Ռաշիդը Ազիզային:

Ազիզան ինքնամփոփվեց, շփոթված քար կտրեց:

— Արագացրո՛ւ: Ես պետք է մեկ ժամից աշխատանքի լինեմ:

Ազիզան ընտրեց գնդիկավոր մաստակի մեքենա. նույն մետաղադրամը կարելի էր տեղադրել քաղցրավենիք ստանալու համար, այնուհետև վերցնել կոպեկը ներքևի վերադարձնող դռնակի միջից:

Ռաշիդի հոնքերը բարձրացան, երբ վաճառողն ասաց գինը: Հետևեց սակարկումը, որի վերջում Ռաշիդը կռվարար տոնով ասաց Ազիզային, ասես նա էր սակարկողը. «Վերադարձրո՛ւ: Երկուսի համար փող չունեմ»:

Վերադարձի ճանապարհին Ազիզայի բարձր տրամադրությունը կամաց-կամաց չքանում էր, ինչքան ավելի էին մոտենում մանկատանը: Ձեռքերն այլևս չէր թափահարում: Դեմքը մթագնեց: Ամեն անգամ այդպես էր: Այժմ Լեյլայի հերթն էր՝ Մարիամի օգնությամբ շատախոսելու, նյարդայնորեն ծիծաղելու, մելամաղձոտ դադարները լցնելու շնչակտուր, աննպատակ կատակներով:

Ավելի ուշ, երբ Ռաշիդը նրանց տեղ հասցրեց և ավտոբուս նստեց աշխատանքի գնալու համար, Լեյլան նայում էր՝ ինչպես է Ազիզան ձեռքով հրաժեշտ տալիս ու դանդաղ շարժվում մանկատան հետնաբակի պատի երկայնքով: Նա մտածում էր Ազիզայի կակազելու մասին և Ազիզայի պատմածի՝ խորքային ճաքերի և ուժեղ բախումների մասին, և ինչպես երբեմն մակերեսին մենք միայն փոքրիկ ցնցում ենք տեսնում:

* * *

— Հեռու մնա՛, դո՛ւ,— գոռաց Զալմայը:

— Սո՛ւս,— ասաց Մարիամը,— ո՞ւմ վրա ես գոռում:

Նա մատով ցույց տվեց:

— Այնտեղ: Այն մարդու վրա:

Լեյլան հետևեց նրա մատին: Տան մոտ մի տղամարդ էր՝ դռանը հենված: Նա շրջեց գլուխը, երբ տեսավ, որ նրանք մոտենում են: Ցած իջեցրեց խաչված ձեռքերը: Կաղալով մի քանի քայլ արեց նրանց ուղղությամբ:

Լեյլան կանգ առավ:

Կոկորդից խեղդող ձայն բարձրացավ: Ծնկները թուլացան: Հանկարծ Լեյլան ցանկություն, պահանջ ունեցավ բռնելու Մարիամի թևը, ուսը, դաստակը, ինչ-որ բան, որ հենվի: Բայց չարեց: Չհամարձակվեց: Չհամարձակվեց մկան անգամ շարժել: Չհամարձակվեց շունչ քաշել կամ նույնիսկ աչք թարթել՝ վախենալով, որ այդ տղամարդը ընդամենը քիչ հեռվում փայլող ցնորք, փխրուն պատրանք է, որը կչքվի նվազագույն սադրանքից: Լեյլան քարացած կանգնած նայում էր Թարիքին, մինչև կրծքավանդակը սկսեց պայթել օդի պակասից, իսկ աչքերը՝ այրվել չթարթելուց: Եվ ինչ-որ հրաշքով, երբ շունչ քաշեց, փակեց և բացեց աչքերը, նա դեռ կանգնած էր այնտեղ: Թարիքը դեռ կանգնած էր այնտեղ:

Լեյլան իրեն թույլ տվեց մի քայլ անել դեպի նա: Հետո ևս մեկը: Եվս մեկ քայլ: Իսկ հետո վազեց:

44

Մարիամ

Վերևում՝ Մարիամի սենյակում, Զալմայը նյարդերի կծիկ էր: Որոշ ժամանակ խաղաց իր նոր ռետինե բասկետբոլի գնդակով՝ հատակին, պատերին: Մարիամը խնդրեց, որ չանի, բայց Զալմայը գիտեր, որ Մարիամը իր վրա իշխանություն չունի, ուստի շարունակեց խփել գնդակը՝ աչքերը հանդգնորեն Մարիամին հառած: Մի քիչ հրեցին նրա խաղալիք ավտոմեքենան՝ շտապօգնությունը, որի երկու կողմերին մեծ կարմիր տառեր էին, սենյակով հետուառաջ քշեցին:

Ավելի վաղ, երբ նրանք դռան մոտ հանդիպեցին Թարիքին, Զալմայը բասկետբոլի գնդակը պինդ սեղմեց կրծքին և բութը տարավ բերանը՝ մի բան, որ անում էր միայն վախից: Նա կասկածանքով էր նայում Թարիքին:

— Ո՞վ է այդ մարդը,— հարցրեց հիմա,— նա ինձ դուր չի գալիս:

Մարիամը ուզում էր բացատրել, ինչ-որ բան ասել այն մասին, որ այդ տղամարդն ու Լեյլան միասին են մեծացել, բայց Զալմայը

Նրա խոսքը կտրեց և ասաց, որ շտապօգնությունը շրջի իր կողմը, և երբ Մարիամը դա արեց, Զալմայն ասաց, որ ուզում է իր բասկետբոի գնդակը:

— Ո՞ւր է,— ասաց,— ո՞ւր է գնդակը, որը բաբա ջանը գնել է ինձ համար: Որտե՞ղ է: Դա՛ եմ ուզում: Ուզո՛ւմ եմ,— ասում էր՝ ձայնը բարձրացնելով և յուրաքանչյուր բառի հետ ձղձղալով:

— Հենց այստեղ էր,— ասաց Մարիամը, իսկ Զալմայը բացականչեց.— չէ՛, կորել է, գիտեմ: Գիտեմ, որ կորել է: Որտե՞ղ է: Որտե՞ղ է:

— Ահա՛,— ասաց Մարիամը՝ հանելով գնդակը պահասենյակից, որտեղ այն գլորվել էր: Բայց Զալմայը բղավում էր ու հարվածում բռունցքներով, գոռում, որ դա նույն գնդակը չէ, չի կարող լինել, որովհետև նրա գնդակը կորել է, իսկ սա կեղծ է, ո՞ւր է իսկական գնդակը: Ո՞ւր է: Ո՞ւր, ո՞ւր, ո՞ւր:

Նա ծղրտում էր, մինչև Լեյլան ստիպված չեղավ բարձրանալ, գրկել նրան, օրորել, մատներով շոյել խիտ, մուգ գանգուրները, չորացնել խոնավ այտերը և նրա ականջի մեջ լեզուն ճպպացնել:

Մարիամը սպասում էր սենյակի մոտ: Սանդուղքի վերևից նա կարող էր տեսնել միայն Թարիքի երկար ոտքերը՝ խակի շալվարով՝ իսկականն ու արհեստականը, որոնք մեկնել էր հյուրասենյակի հատակին, որի վրա կարպետ չկար: Այդ պահին նա հասկացավ, թե ինչու «Ինտերկոնտինենտալ»-ի դռնապանը ծանոթ երևաց այն օրը, երբ Ռաշիդի հետ գնացել էր՝ զանգահարելու Զալիլին: Նա գլխարկով էր ու ակնոցը աչքերին, այդ պատճառով ավելի վաղ չէր ճանաչել: Բայց Մարիամն այժմ հիշեց՝ ինը տարի անց, հիշեց՝ ինչպես էր նա ներքևը նստած թաշկինակով ճակատը սրբում և ջուր խնդրում: Այժմ ամեն տեսակի հարցեր էին գալիս մտքին. արդյո՞ք սուլֆայի հաբերը նույնպես խորամանկության մի մասն էին: Նրանցից ո՞ր մեկն էր ծրագրել սուտը, համոզիչ մանրամասներ հորինել: Եվ որքա՞ն էր Ռաշիդը վճարել Աբդուլ Շարիֆին (եթե դա նրա անունն էր), որպեսզի գա և Թարիքի մահվան մասին պատմությամբ վշտի մեջ խորտակի Լեյլային:

45

Լեյլա

Թարիքն ասաց, որ բանտախուցն իր հետ կիսող մարդը զարմիկ ուներ, որին մի անգամ հանրային ծեծի էին ենթարկել ֆլամինգո նկարելու համար: Այդ զարմիկը ֆլամինգոների նկատմամբ ինչոր անբուժելի սեր ուներ:

— Նկարչական ալբոմներ,— ասաց Թարիքը,— ֆլամինգոների տասնյակներով նկարներ՝ ծովածոցով զբոսնող, ճահճուտներում արևային լոգանքներ ընդունող: Նույնիսկ դեպի մայրամուտը թռչող, վախենամ:

— Ֆլամինգոներ,— ասաց Լեյլան: Նա նայեց պատի տակ նստած Թարիքին, որը առողջ ոտքը ծալել էր ծնկի մասում: Նա ուզում էր նորից հպվել նրան, ինչպես արել էր դարպասի մոտ, երբ վազեց նրան ընդառաջ: Հիմա ամաչում էր այն մտքից, թե ինչպես էր ձեռքերը փաթաթել վզին, ինչպես էր լացում էր նրա կրծքին, ինչպես էր նորից ու նորից կրկնում նրա անունը խեղդվող, խռպոտ ձայնով: Արդյո՞ք չափից դուրս անհամբեր էր վարվել, չափից դուրս հուսահատ: Գուցե և այդպես: Բայց նա այլ կերպ չէր կարող: Իսկ հիմա ցանկանում էր նորից դիպչել նրան, ինքն իրեն կրկին ապացուցել, որ նա իրոք այստեղ է, որ երազ կամ տեսիլք չէ:

— Իսկապես,— ասաց Թարիքը,— ֆլամինգոներ:

Երբ Թալիբանը գտավ նկարները, ասաց Թարիքը, նրանց վիրավորեցին թռչունների երկար, մերկ ոտքերը: Նրանք կապեցին զարմիկի ոտքերը և այնքան խփեցին թաթերին, մինչև արյուն եկավ, իսկ հետո ընտրության առջև կանգնեցրին. կա՛մ ոչնչացնել նկարները, կա՛մ ֆլամինգոներին պարկեշտ դարձնել: Եվ այսպիսով՝ զարմիկը վերցրեց վրձինն ու յուրաքանչյուր թռչնին շալվար նկարեց:

— Եվ ահա խնդրեմ. իսլամական ֆլամինգոներ,— ասաց Թարիքը: Լեյլան ուզում էր ծիծաղել, բայց զսպեց իրեն: Նա ամաչում էր իր դեղնած ատամներից, բացակայող կտրիչից: Ամաչում էր իր թոշնած տեսքից և այտուցված շրթունքից: Կուզենար դեմքը լվանալու, գոնե մազերը սանրելու հնարավորություն ունենալ:

— Բայց վերջում նա է ծիծաղելու՝ զարմիկը,— ասաց Թարիքը,— այդ շալվարները ջրաներկով է նկարել: Երբ Թալիբանը գնա, պարզապես կլվանա ներկը,— ժպտաց Թարիքը: Նա ժպտաց (Լեյլան նկատեց, որ նա էլ մի ատամ չունի) ու նայեց ցած՝ իր ձեռքերին:— Իրոք:

Նրա գլխին *փաքոլ* էր, արշավային կոշիկներ և սև բրդյա սվիտեր, որը մտցրել էր խակի գույնի շալվարի մեջ: Նա կիսաժպտում էր, դանդաղ գլխով անում: Լեյլան չէր հիշում, որ նախկինում նման բան ասեր, այս բառը, և մտազբաղ շարժումը՝ մատները ծնկներին «տնակ» սարքելը, և գլխով տմբտմբացնելը նույնպես նոր էր:

Մեծահասակների աշխարհ, մեծահասակների շարժուձև՝ ինչո՞ւ դա պետք է զարմանալի լիներ: Թարիքը այժմ մեծահասակ էր՝ քսանհինգամյա տղամարդ, դանդաղ շարժումներով ու հոգնած ժպիտով: Բարձրահասակ, մորուքավոր, ավելի նիհար, քան Լեյլայի երազներում էր, բայց ուժեղ ձեռքերով՝ աշխատողի ձեռքերով, ոլորուն լայն երակներով: Դեմքը դեռ նիհար և գեղեցիկ էր, բայց մաշկի գույնը այլևս բաց չէր. ճակատը, ինչպես և պարանոցը ասես հողմահար լիներ, արևից այրված, երկար և տանջալի ճանապարհորդության ավարտին հասած ճամփորդի ճակատ էր: Նա *փաքոլը* հետ էր տարել, և Լեյլան տեսավ, որ Թարիքը սկսել է ճաղատանալ: Աչքերի բաց շագանակագույնը ավելի խամրած էր, քան Լեյլայի հուշերում, բայց գուցե դա սենյակի լույսից էր:

Լեյլան հիշեց Թարիքի մորը՝ նրա անշտապ շարժումները, խելացի ժպիտները, խամրած մանուշակագույն կեղծամը: Եվ հորը՝ նրա քմահաճ հայացքը, ծաղրող հումորը: Ավելի վաղ՝ դռան մոտ, արցունքներով լի ձայնով, սեփական բառերը կուլ տալով, նա պատմեց Թարիքին, թե իր ըստ իր իմացածի՝ ինչ էր պատահել իրեն և իր ծնողներին, ու Թարիքը օրորել էր գլուխը: Եվ հիմա Լեյլան հարցրեց նրան, թե ինչպես են նրանք՝ ծնողները: Բայց ափսոսաց հարցի համար, երբ Թարիքը ցած նայեց և մի փոքր ցրված ասաց՝ «Չկան»:

— Շատ եմ ցավում:

— Դե: Հա: Ես էլ: Ահա՛,— նա գրպանից մի փոքր թղթե պայուսակ հանեց և փոխանցեց Լեյլային: «Բարևներ Այյոնայից»: Ներսում պոլիէթիլենի մեջ փաթաթած պանրի կտոր էր:

— Այոնա. գեղեցիկ անուն է:— Լեյլան փորձեց հաջորդ հարցը տալ առանց երերալու:— Քո կինն է:

— Իմ այծը:— Նա սպասողական ժպտում էր Լեյլային, ասես ակնկալում էր, որ նա վերհիշի:

Հետո Լեյլան հիշեց: Սովետական ֆիլմ էր: Այոնան կապիտանի դուստր էր՝ առաջին օգնականին սիրահարված աղջիկը: Դա այն օրն էր, որ Լեյլան, Թարիքն ու Հասինան տեսան՝ ինչպես են խորհրդային տանկերն ու «Ջիփերը» հեռանում Քաբուլից, այն օրը, երբ Թարիքը դրել էր այդ ծիծաղելի ռուսական մորթե գլխարկը:

— Ստիպված էի նրան ցցից կապել,— ասաց Թարիքը,— ու ցանկապատ կառուցել: Գայլերի պատճառով: Նախալեռներում, որտեղ ապրում եմ, մոտակայքում անտառապատ տարածք կա՝ երևի մեկ քառորդ մղոն հեռու, մեծ մասը՝ սոճիներ, եղևնիներ, մայրիներ: Նրանք հիմնականում մնում են անտառում՝ գայլերը, բայց մայող այծը, որը սիրում է թափառել, կարող է նրանց դուրս հանել: Սրա համար է ցանկապատը: Ցիցը:

Լեյլան հարցրեց՝ ո՞ր նախալեռները:

— Փիր Փանջալ, Պակիստան,— ասաց նա,— այն տեղը, որտեղ ապրում եմ, կոչվում է Մուրի. ամառային առողջարան է՝ Իսլամաբադից մեկ ժամվա ճանապարհ: Լեռնային, կանաչ վայր է՝ շատ ծառեր, ծովի մակարդակից բարձր: Ամռանը հով է: Կատարյալ է զբոսաշրջիկների համար:

Ասաց, որ բրիտանացիները Ռավալփինդի իրենց ռազմական շտաբի մոտ բլրի վրա կայան էին կառուցել, որպեսզի վիկտորիանացիները[136] շոգից խուսափեն: Դեռ հնարավոր էր գաղութային ժամանակների մի քանի մնացորդներ գտնել, ասաց Թարիքը՝ թեյարան, անագե տանիքով բունգալոներ, որոնք կոչվում էին քոթեջներ, նման բաներ: Քաղաքը փոքր էր ու հաճելի: Գլխավոր փողոցը կոչվում էր Մոլլ, որտեղ փոստային բաժանմունք կար, *բազար*, մի քանի ռեստորաններ, խանութներ, որտեղ զբոսաշրջիկներից փող էին պոկում ներկված ապակու և ձեռագործ գորգերի համար: Տարօրինակ է, բայց Մոլլի միակողմանի

---

[136] Վիկտորիա թագուհու գահակալության օրոք անգլիացի գաղութարարներ

երթևեկությունը մի շաբաթ մեկ ուղղությամբ էր, իսկ հաջորդ շաբաթ՝ հակառակ ուղղությամբ:

— Տեղացիներն ասում են, որ Իռլանդիայի երթևեկությունն էլ է այդպիսին որոշ տեղերում,— ասաց Թարիքը,— ինչ իմանամ: Ինչևէ, հաճելի տեղ է: Պարզ կյանք է, բայց ինձ դուր է գալիս: Դուր է գալիս այնտեղ ապրել:

— Այծիդ հետ: Այյոնայի:

Լեյլան սա ասաց ոչ այնքան որպես կատակ, որքան որպես գաղտագողի թեման փոխելու փորձ, օրինակ՝ ո՞վ է նրա հետ անհանգստանում այծ ուտող գայլերի մասին: Բայց Թարիքը միայն գլխով էր անում:

— Ես ցավում եմ նաև քո ծնողների համար,— ասաց նա:

— Լսել ես:

— Ավելի վաղ խոսել էի որոշ հարևանների հետ,— ասաց նա: Դադար, որի ընթացքում Լեյլան մտածում էր՝ արդյոք էլ ինչ են հարևանները նրան ասել:— Ես ոչ մեկին չեմ ճանաչում: Նկատի ունեմ՝ հին օրերից:

— Բոլորը հեռացել են: Քո իմացածներից ոչ ոք չի մնացել:

— Ես չեմ ճանաչում Քաբուլը:

— Ես էլ չեմ ճանաչում,— ասաց Լեյլան,— իսկ ես երբեք չեմ էլ հեռացել:

* * *

— Մաման նոր ընկեր ունի,— ասաց Զալմայը այդ երեկո՝ ընթրիքից հետո, երբ Թարիքը հեռացել էր,— տղամարդ:

Ռաշիդն աչքերը բարձրացրեց.

— Իսկապե՞ս: Հիմա՞:

* * *

Թարիքը ծխելու թույլտվություն խնդրեց:

Նրանք որոշ ժամանակ մնացել էին Փեշավարի մերձակայքում գտնվող «Նասիր Բաղ» փախստականների ճամբարում, ասաց

Թարիքը՝ մոխիրը պնակի մեջ թափ տալով: Այնտեղ վաթսուն հազար աֆղանցի էր ապրում, երբ ինքը ժամանեց ծնողների հետ:

— Այնքան վատ չէր, որքան մյուս ճամբարները, ինչպիսին օրինակ, Աստված մի արասցե, «Ջալոզայը»,— ասաց նա,— կարծում եմ՝ մի պահ նույնիսկ օրինակելի ճամբար էր համարվում, սառը պատերազմի ժամանակ մի վայր էր, որն Արևմուտքը կարող էր մատնանշել և ապացուցել աշխարհին, որ նրանք պարզապես զենք չեն մատակարարում Աֆղանստանին:

Բայց դա խորհրդային պատերազմի տարիներին էր, ասաց Թարիքը, ջիհադի, համաշխարհային հետաքրքրության, առատաձեռն ֆինանսավորման և Մարգարեթ Թեթչերի այցերի ժամանակ:

— Մնացածը գիտես, Լեյլա՛: Պատերազմից հետո Սովետները կազմաքանդվեցին, և Արևմուտքը առաջ շարժվեց: Աֆղանստանում նրանք այլևս ոչ մի շահ չունեին, և փողերի հոսքն ավարտվեց: Հիմա «Նասիր Բաղը» վրաններ է, փոշի և բաց կոյուղիներ: Երբ հասանք այնտեղ, մեզ տվեցին մի ցից ու կտավի կտոր և ասացին, որ ինքներս մեզ համար վրան շինենք:

Թարիքն ասաց, որ «Նասիր Բաղից», որտեղ նրանք մեկ տարի մնացին, ամենաշատը հիշում է դարչնագույն գույնը: «Դարչնագույն վրաններ: Դարչնագույն մարդիկ: Դարչնագույն շներ: Դարչնագույն շիլա»:

Ամեն օր բարձրանում էր մի անտերև ծառի վրա, հեծնում էր մի ձյուղ և նայում արևի տակ պառկած փախստականներին, նրանց վերքերին ու անդամահատված վերջույթներին: Նայում էր փոքրիկ հյուծված տղաներին, որոնք դույլերով ջուր էին կրում, հավաքում էին շների կղանքը՝ որպես վառելիք, բութ դանակներով փայտից AK–47 խաղալիք–ինքնաձիգներ էին պատրաստում, ցորենի ալյուրի պարկեր էին կրում, որից ոչ ոք ունակ չէր նորմալ հաց պատրաստելու: Փախստականների քաղաքում քամին ծածանում էր վրանները, ամենուրեք մոլախոտ էր շպրտում, օդ հանում ցեխից հյուղակների տանիքներից արձակած օդապարուկները:

— Շատ երեխաներ մահացան: Դիզենտերիա, տուբերկուլյոզ, սով, ինչ ասես: Հիմնականում անիծյալ դիզենտերիան էր: Աստ-

վա՛ծ իմ, Լեյլա՛: Այնքան շատ երեխաների թաղում եմ տեսել: Դրանից ավելի վատ տեսարան չկա:

Նա խաչեց ոտքերը: Որոշ ժամանակ նրանց միջև նորից լռություն տիրեց:

— Հայրս առաջին ձմեռը չիանեց,— ասաց նա,— մահացավ քնի մեջ: Չեմ կարծում, որ տանջվեց:

Այդ ձմռանը, ասաց նա, մայրը թոքաբորբով հիվանդացավ և համարյա մահանում էր, եթե չլիներ ճամբարի բժիշկը, որն աշխատում էր շարժական կլինիկայի վերածված գնացքի վագոնից: Մայրը ամբողջ գիշերներ արթուն էր. տենդի մեջ, հազալով խիտ, ժանգոտ գույնի փղձուկ էր թափում: Բժշկին տեսնելու հերթերը երկար էին, ասաց Թարիքը: Հերթի մեջ բոլորը դողում էին, հառաչում, հազում, ոմանց ոտքերով կղանք էր ծորում, մյուսները այնքան հոգնած, սոված կամ հիվանդ էին, որ անկարող էին բառ անգամ արտաբերել:

— Բայց նա պարկեշտ մարդ էր, այդ բժիշկը: Նա բուժեց մորս, ինչ-որ հաբեր տվեց, այդ ձմեռ փրկեց նրա կյանքը:

Հենց այդ ձմռանը Թարիքը մի երեխայի պատին սեղմեց:

— Տասներկու, միգուցե տասներեք տարեկան էր,— պատմեց նա անվրդով,— ջարդած ապակու կտորը պահեցի կոկորդին և վերցրի նրա վերմակը: Տվեցի մորս:

Ինքը երդվեց, որ մոր հիվանդությունից հետո իրենք այլևս ճամբարում ձմեռ չեն անցկացնի, ասաց Թարիքը: Ինքը կաշխատի, խնայողություններ կանի, կտեղափոխվեն ջեռուցվող, մաքուր ջրով բնակարան Փեշավարում: Երբ գարունը եկավ, աշխատանք փնտրեց: Ժամանակ առ ժամանակ վաղ առավոտյան մի բեռնատար մեքենա էր գալիս ճամբար և հավաքում մի քանի տասնյակ տղաների, նրանց տանում դաշտ՝ քարեր հանելու կամ այգի՝ խնձոր քաղելու, ինչի դիմաց փոքրիկ գումար, երբեմն՝ վերմակ, մի զույգ կոշիկ էին տալիս: Բայց իրեն երբեք չէին ուզում, ասաց Թարիքը:

— Հայացք էին գցում ոտքիս, ու վերջ:

Այլ աշխատանքներ էլ կային. առուներ փորել, հյուղակներ կառուցել, ջուր կրել, արտաքնոցներ մաքրել: Բայց երիտասարդները կռվում էին այդ աշխատանքների համար, և Թարիքը շանս չուներ: Հետո մի օր՝ 1993-ի աշնանը, հանդիպեց մի խանութպանի:

— Նա ինձ գումար առաջարկեց՝ կաշվե վերարկուն Լահոր հասցնելու համար: Շատ չէ, բայց կիերիքեր մեկ, գուցե երկու ամսվա բնակարանի վարձավճարը տալու համար:

Խանութպանը նրան ավտոբուսի տոմս տվեց, պատմեց Թարիքը, և Լահորի երկաթուղային կայարանի մոտ գտնվող փողոցի անկյունի հասցեն, որտեղ նա պետք է վերարկուն հանձներ խանութպանի ընկերոջը:

— Ես արդեն գիտեի: Իհարկե գիտեի,— ասաց Թարիքը,— նա ասաց, որ եթե բռնվեմ, ինքս իմ գլխի տերն եմ, որ պետք է հիշեմ՝ ինքը գիտի մորս ապրելու տեղը: Բայց փողը չափազանց գրավիչ էր չհամաձայնելու համար: Իսկ ձմեռը կրկին մոտենում էր:

— Ո՞ւր հասար,— հարցրեց Լեյլան:

— Ոչ շատ հեռու,— ասաց նա ու ծիծաղեց՝ ասես ներողություն խնդրելով, ամաչելով:— Անգամ ավտոբուս չբարձրացա: Բայց կարծում էի՝ անձեռնմխելի եմ, գիտե՞ս, ապահով: Կարծես այնտեղ՝ վերևում, ինչ-որ տեղ հաշվապահ կա՝ մատիտը ականջի հետևում դրած մի մարդ, որ գրանցում է այս բաները, հաշվարկում է, ու նա կնայի ներքև ու կասի. «Այո՛, այո՛, այս մեկի մոտ թող ստացվի, մենք դա թույլ կտանք: Այս մեկն արդեն վճարել է իր տուրքերը»:

Հաշիշը կարերի մեջ էր, այն թափվեց ամբողջ փողոցով, երբ ոստիկանները դանակով պատռեցին վերարկուն: Թարիքը նորից ծիծաղեց, երբ պատմեց դա ուժգին, դողացող ծիծաղով, ու Լեյլան հիշեց՝ ինչպես էր նա այսպես ծիծաղում, երբ փոքր էին, որպեսզի կոծկի ամոթը, զավեշտալի երանգ տա անխոհեմ կամ խայտառակ արարքներին:

* * *

— Նա կաղում է,— ասաց Զալմայը:

— Դա նա է, ում մասին ես մտածո՞ւմ եմ:

— Նա ընդամենը այցելության էր եկել,— ասաց Մարիամը:

— Սո՛ւս մնա, դո՛ւ,— կտրեց Ռաշիդը՝ մատը բարձրացնելով: Շրջվեց դեպի Լեյլան:— Դե, ինչ կմտածեիր: Լեյլին և Մաջնունը վերամիավորվել են: Ինչպես հնում:— Նրա դեմքը քարացավ:— Ուրեմն

նրան ներս ես թողել: Այստեղ: Իմ տուն: Դու նրան ներս ես թողել: Նա այստեղ էր որդուս հետ:

— Դու ինձ խաբել ես: Դու ստել ես ինձ,— ասաց Լեյլան՝ ատամները կրճտացնելով,— դու այդ մարդուն ստիպել ես նստել իմ առջև ու... Դու գիտեիր, որ ես կհեռանայի, եթե իմանայի, որ նա ողջ է:

— ԻՍԿ ԴՈՒ ԻՆՁ ՉԵՄ ՍՏԵԼ,— ոռնաց Ռաշիդը,— կարծում ես՝ չեմ կռահել: Քո *հարամի* մասին: Ինձ հիմարի տեղ ես դրել, պոռնի՛կ:

* * *

Ինչքան ավելի շատ էր խոսում Թարիքը, այնքան Լեյլան ավելի էր վախենում այն պահից, երբ նա կդադարի խոսելուց: Հետևող լռությունից՝ ազդանշանից, որ իր հերթն է հաշիվ տալու, պատմելու՝ ինչու, ինչպես և երբ, պաշտոնական դարձնել այն, ինչ նա, անշուշտ, արդեն գիտեր: Նրա ամեն դադարի ժամանակ Լեյլան սրտխառնոց էր զգում: Աչքերը թաքցնում էր: Նայում էր Թարիքի ձեռքերին, կոպիտ, մուգ մազերին, որոնք ծլել էին դրանց վրա անցած տարիների ընթացքում:

Թարիքը շատ բան չպատմեց բանտային տարիների մասին՝ բացի նրանից, որ այնտեղ սովորել էր ուրդու խոսել: Երբ Լեյլան հարցրեց, նա անհամբեր օրորեց գլուխը: Այս շարժման մեջ Լեյլան տեսավ ժանգոտված ճաղեր, անլվա մարմիններ, կատաղած տղամարդկանց, լեփ-լեցուն բանտախցեր և բորբոսից փտող առաստաղներ: Թարիքի դեմքին գրված էր, որ դա նվաստացման, բարոյական անկման և հուսահատության տեղ էր:

Թարիքն ասաց, որ ձերբակալությունից հետո մայրը փորձել էր այցելել իրեն:

— Երեք անգամ եկավ: Բայց ես նրան այդպես էլ չտեսա,— ասաց:

Թարիքը մորը նամակ գրեց, հետո ևս մի քանիսը, չնայած կասկածում էր, որ նա դրանք կստանա:

— Քեզ էլ եմ գրել:

— Գրե՞լ ես:

— Օ՜, հատորներով,— ասաց նա,— քո ընկեր Ռումին կնախանձեր իմ արգասավորությանը:— Հետո ծիծաղեց, այս անգամ բարձրաձայն, ասես միաժամանակ զարմացավ սեփական համարձակությունից և ամաչեց իր խոստովանությունից:

Ջալմայը սկսեց վերևում գոռալ:

* * *

— Ճիշտ այնպես, ինչպես հին օրերին,— ասաց Ռաշիդը,— դուք՝ երկուսով: Կարծում եմ՝ թույլ ես տվել, որ դեմքդ տեսնի:

— Թույլ է տվել,— ասաց Ջալմայը: Այնուհետև ասաց Լեյլային.— Թույլ ես տվել, մամա՛: Ես տեսել եմ քեզ:

* * *

— Որդիդ ինձ չի հավանում,— ասաց Թարիքը, երբ Լեյլան իջավ ներքև:

— Կներես,— ասաց Լեյլան,— այդպես չէ: Նա պարզապես... բանի տեղ մի՛ դիր:— Հետո արագ փոխեց թեման, քանի որ իրեն սխալ ու մեղավոր էր զգում՝ այդպես մտածելով Ջալմայի մասին, որը երեխա էր, փոքրիկ տղա, որը սիրում էր հորը, որի բնազդային հակակրանքը այս անծանոթի նկատմամբ հասկանալի և տրամաբանական էր:

Քեզ էլ եմ գրել:

Հատորներ:

Հատորներ:

— Որքա՞ն ժամանակ ես Մուրիում:

— Մեկ տարուց պակաս,— ասաց Թարիքը:

Պատմեց, որ բանտում ընկերացել էր տարեց մարդու հետ, անունը՝ Սալիմ, պակիստանցի, նախկին խոտի հոկեյիստ, որը տարիներ շարունակ պարբերաբար բանտ էր ընկնում, և որին դատապարտել էին տասը տարվա ազատազրկման՝ գաղտնի ծառայության ոստիկանին դանակահարելու համար: Ցուրաքանչյուր բանտ

ունի Սալիմի նման մեկը, ասաց Թարիքը: Միշտ կա մեկը, որը խորամանկ է, կապեր ունի, որ հասկանում է համակարգը և գտնում է բաներ, որոնց շուրջը ամեն ինչ եռում է՝ թե՛ հնարավորությունների, թե՛ վտանգի առումով: Սալիմը ուղարկեց Թարիքի հարցումները մոր մասին, Սալիմը նրան նստեցրեց ու մեղմորեն, հայրաբար ասաց նրան, որ մայրը մահացել է ցրտահարվելուց:

Թարիքը յոթ տարի անցկացրեց Պակիստանի բանտում:

— Էժան պրծա,— ասաց նա,— բախտս բերեց: Իմ գործով զբաղվող դատավորի եղբայրը, պարզվեց, ամուսնացած էր աֆղանուհու հետ: Գուցե գութը շարժվեց: Չգիտեմ:

Երբ Թարիքի պատժաժամկետը լրացավ՝ 2000 թվականի ձմռան սկզբին, Սալիմը նրան տվեց իր եղբոր հասցեն ու հեռախոսահամարը: Եղբոր անունը Սայիդ էր:

— Ասաց, որ Սայիդը Մուրիում փոքրիկ հյուրանոց ունի,— ասաց Թարիքը,— քսան սենյակ ու հանգստի սրահ, զբոսաշրջիկներին սպասարկելու փոքրիկ տեղ: Ասաց՝ կասես, որ ես եմ քեզ ուղարկել:

Թարիքը հավանեց Մուրին այն պահից, երբ ավտոբուսից դուրս եկավ. ձյունածածկ սոճիներ, սառը, թարմ օդ, փեղկավոր փայտե տնակներ, ծխնելույզներից ոլորվող քուլաներ:

Ահա մի տեղ, մտածեց Թարիքը՝ թակելով Սայիդի դուռը, որը ոչ միայն անսահման հեռու է իր իմացած դժբախտություններից, այլ որտեղ նույնիսկ ինչ-որ չափով անտեղի, անհավանական են զրկանքն ու վիշտը:

— Ինքս ինձ ասացի. ահա՛ մի տեղ, որտեղ մարդը կարող է հարմարվել:

Թարիքին վարձեցին որպես դռնապան ու տարաբանվոր: Մեկամսյա փորձաշրջանի ընթացքում նա իրեն լավ դրսևորեց, պատմեց Թարիքը, կես աշխատավարձով, որը նրան նշանակել էր Սայիդը: Մինչ Թարիքը խոսում էր, Լեյլան պատկերացնում էր Սայիդին՝ նեղ աչքերով ու կարմրադեմ, որը, ընդունարանի պատուհանի մոտ կանգնած, հետևում է՝ ինչպես է Թարիքը փայտ կոտրում ու բահով ձյունը մաքրում ճանապարհի երթևեկելի մասից: Պատկերացրեց՝ ինչպես է Սայիդը կռանում Թարիքի ոտքերի մոտ և դիտում՝ ինչպես է Թարիքը, լվացարանի տակ պառկած, նո-

ոոգում ծակ խողովակը: Պատկերացրեց՝ ինչպես է ստուգում մատյանը՝ կորած դրամը փնտրելով:

Թարիքի հյուղակը խոհարարի փոքրիկ բունգալոյի կողքին էր, պատմեց նա: Խոհարարը պատվելի ծեր այրի էր, անունը՝ Ադիբա: Երկու հյուղակներն էլ առանձնացած էին հյուրանոցից, հիմնական շենքից դրանք բաժանում էին ցրված նուշի ծառերը, այգու նստարանը և բրգաձև քարե շատրվանը, որը ամռանը ամբողջ օրը ջուր էր ցայտում: Լեյլան պատկերացրեց Թարիքին իր հյուղակում՝ մահճակալին նստած պատուհանից տերևավոր աշխարհը դիտելիս:

Փորձաշրջանի ավարտին Սայիդը Թարիքի վճարը հասցրեց լրիվ աշխատավարձի, ասաց, որ իր ճաշերն անվճար են, տվեց բրդե վերարկու և նոր ոտք գնեց: Թարիքը պատմեց, որ այդ մարդու բարությունից լաց եղավ:

Իր առաջին ամսվա ամբողջ աշխատավարձը գրպանում՝ Թարիքը գնաց քաղաք և գնեց Այյոնային:

— Մորթին ճեփ-ճերմակ է,— ժպտալով ասաց Թարիքը,— առավոտները, երբ ամբողջ գիշեր ձյուն է եկել, նայում ես պատուհանից ու տեսնում միայն նրա երկու աչքն ու դունչը:

Լեյլան գլխով արեց: Կրկին լռություն հետևեց: Վերևում Ջալմայը նորից սկսել էր գնդակը պատով խփել:

— Կարծում էի՝ դու մեռած ես,— ասաց Լեյլան:

— Գիտեմ, ասացիր:

Լեյլայի ձայնը խզվեց: Ստիպված էր մաքրել կոկորդը, հավաքել իրեն:

— Այն մարդը, որ եկել էր նորությունները հայտնելու, այնքան լուրջ էր... Ես հավատացի նրան, Թարի՛ք: Չպետք է հավատայի, բայց հավատացի: Իսկ հետո այնքան մենակ ու վախեցած էի: Հակառակ դեպքում ես չէի համաձայնվի ամուսնանալ Ռաշիդի հետ: Ես չէի...

— Պետք չէ դա ասել,— մեղմ ասաց Թարիքը՝ խուսափելով աչքերին նայելուց: Ասածի մեջ թաքնված նախատինք, պարսավանք չկար: Մեղադրանքի ոչ մի նշույլ:

— Պետք է: Որովհետև ավելի մեծ պատճառ կար, որ ես ամուսնացա նրա հետ: Մի բան, որը դու չգիտես, Թարի՛ք: Ես պետք է պատմեմ քեզ:

* * *

— Դո՞ւ էլ նստեցիր ու զրուցեցիր հետը,— Ռաշիդը հարցրեց Զալմային:

Զալմայը ոչինչ չասաց: Լեյլան հիմա նրա աչքերի մեջ երկմտանք ու անորոշություն էր տեսնում, կարծես նոր էր հասկացել, որ իր կողմից բացահայտածը շատ ավելի մեծ բան է, քան կարծում էր:

— Ես քեզ հարց տվեցի, տղա՛:

Զալմայը թուքը կուլ տվեց: Նա շարունակում էր հայացքը փախցնել:

— Ես վերևում էի, խաղում էի Մարիամի հետ:

— Իսկ մա՞յրդ:

Զալմայը նայեց Լեյլային ամոթերես, լացակումած:

— Ամեն ինչ լավ է, Զալմա՛յ,— ասաց Լեյլան,— ասա՛ ճշմարտությունը:

— Նա... նա ներքևում էր, խոսում էր այդ մարդու հետ,— ասաց նա բարակ ձայնով՝ համարյա շշուկով:

— Ահա թե ինչ,— ասաց Ռաշիդը,— թիմային աշխատանք:

* * *

Գնալուց առաջ Թարիքն ասաց.

— Ուզում եմ հանդիպել նրան: Ուզում եմ տեսնել:

— Ես դա կկազմակերպեմ,— ասաց Լեյլան:

«Ազիզա. Ազիզա»: Նա ժպտաց՝ ասես համտեսելով բառը: Երբ Ռաշիդն էր արտաբերում դստեր անունը, Լեյլայի ականջին այն վատ էր հնչում, համարյա գռեհիկ:

— Ազիզա: Շատ սիրուն է:

— Նա էլ է այդպիսին: Կտեսնես:

— Ոոպեներն եմ հաշվելու:

Գրեթե տասը տարի էր անցել իրար վերջին անգամ տեսնելուց: Լեյլան մտաբերեց այն բոլոր անգամները, երբ նրանք հանդիպում էին ծառուղում ու գաղտնի համբուրվում: Արդյոք ինչպե՞ս է այժմ երևում նրա աչքին: Արդյո՞ք նա դեռ իրեն գեղեցիկ է համարում: Թե՞ խամ-

րած, նկուն, խղճալի, ինչպես վախեցած, քստքստացող ծեր կին: Գրեթե տասը տարի: Բայց մի պահ, Թարիքի հետ արևի լույսի ներքո կանգնած, թվաց՝ այդ տարիները չէին էլ եղել: Ծնողների մահը, նրա ամուսնությունը Ռաշիդի հետ, սպանությունները, հրթիռները, Թալիբանը, ծեծը, սովը, նույնիսկ երեխաները՝ այդ ամենը երազ թվաց, տարօրինակ շրջապտույտ, միասին անցկացված օրվա և այս պահի միջև միջախաղ:

Հետո Թարիքի դեմքը փոխվեց, ծանրացավ: Լեյլային ծանոթ էր այս արտահայտությունը: Դեմքին հենց այս արտահայտությունն էր այն օրը՝ տարիներ առաջ, երբ նրանք երկուսն էլ երեխաներ էին, երբ արձակեց ոտքը ու հարձակվեց Խադիմի վրա: Նա երկարեց ձեռքն ու կպավ Լեյլայի ստորին շրթունքին:

— Նա է արել,— ասաց նա սառը տոնով:

Նրա հպումից Լեյլան կրկին հիշեց այն օրվա խելագարությունը, երբ հղիացավ Ազիզայով: Թարիքի շունչը պարանոցին, նրա ազդրերի ճկվող մկանները, նրա կրծքի սեղմվելը իր կրծքերին, նրանց միաձուլված ձեռքերը:

— Քեզ պետք է հետս տանեի,— համարյա շշնջաց Թարիքը:

Լեյլան ստիպված էր իջեցնել հայացքը, փորձել լացը զսպել:

— Ես գիտեմ, որ դու հիմա ամուսնացած կին և մայր ես: Եվ ահա այսքան տարի անց՝ ամեն-ամենից հետո, ես հայտնվում եմ դռանդ մոտ: Գուցե տեղին չէ կամ արդար չէ, բայց ես այնքան երկար ճանապարհ եմ անցել քեզ տեսնելու համար, ու... Ա՛խ, Լեյլա՛, ես երբեք չպետք է լքեի քեզ:

— Պետք չէ,— խռպոտ ասաց Լեյլան:

— Ես պետք է ավելի շատ ջանք գործադրեի: Պետք է ամուսնանայի քեզ հետ, երբ հնարավորություն կար: Ամեն ինչ այլ կերպ կլիներ:

— Մի՛ խոսիր այսպես: Խնդրում եմ: Ինձ ցավ ես պատճառում:

Թարիքը գլխով արեց, ուզում էր մի քայլ անել դեպի Լեյլան, ապա կանգ առավ:

— Ես չեմ ուզում որևէ բան ենթադրել: Եվ նպատակ չունեմ կյանքդ գլխիվայր շուռ տալու՝ այսպես հանկարծակի հայտնվելով: Եթե ուզում ես, որ հեռանամ, եթե ուզում ես, որ վերադառնամ

Պակիստան, ասա՛, Լեյլա: Ես լուրջ եմ: Ասա՛, ու ես կգնամ: Ես այլևս երբեք քեզ չեմ անհանգստացնի: Ես...

— Ո՛չ,— ասաց Լեյլան ավելի կտրուկ, քան ցանկանում էր: Լեյլան տեսավ՝ ինչպես է սեփական ձեռքը մեկնում Թարիքի թևին, բռնում այն: Նա իջեցրեց ձեռքը:— Ո՛չ, մի՛ գնա, Թարի՛ք: Ո՛չ: Խնդրո՛ւմ եմ՝ մնա՛:

Թարիքը գլխով արեց:

— Նա աշխատում է կեսօրից մինչև ութը: Վերադարձի՛ր վաղը կեսօրին: Ես քեզ կտանեմ Ազիզայի մոտ:

— Ես նրանից չեմ վախենում, գիտես, չէ՞:

— Գիտեմ: Վերադարձի՛ր վաղը կեսօրին:

— Իսկ հետո՞:

— Իսկ հետո... Չգիտեմ: Պետք է մտածեմ: Սա...

— Գիտեմ,— ասաց Թարիքը,— ես հասկանում եմ: Ների՛ր ինձ: Ների՛ր ինձ այնքան շատ բաների համար:

— Ներողություն մի՛ խնդրիր: Դու խոստացար, որ կվերադառնաս: Ու վերադարձար:

Թարիքի աչքերը թացացան:

— Ուրախ եմ քեզ տեսնել, Լեյլա՛:

Լեյլան նայում էր՝ ինչպես է նա հեռանում, ու կանգնած տեղը դողում էր: Մտածեց՝ հատորներ է գրել, և ևս մեկ անգամ ցնցվեց ինչ-որ տխուր ու հուսահատ, բայցև ինչ-որ անհամբեր ու անխոհեմ հույսի պես բանից:

46

Մարիամ

— Ես վերևում էի, խաղում էի Մարիամի հետ,— ասաց Զալմայը:

— Իսկ մա՞յրդ:

— Նա ... նա ներքևում էր, խոսում էր այդ տղամարդու հետ:

— Հասկացա,— ասաց Ռաշիդը,— թիմային աշխատանք:

Մարիամը տեսավ, որ Ռաշիդի դեմքը հանգստացավ, թուլացավ: Տեսավ՝ ինչպես են հարթվում ճակատի կնճիռները: Կասկածներն ու երկմտանքը աչքերից չքացան: Նա ուղիղ նստեց և մի

քանի վայրկյան թվաց պարզապես մտահոգ, ինչպես կապիտանը, ում տեղեկացրել են մոտալուտ խռովության մասին, և նա դադար է վերցրել՝ խորհելու իր հաջորդ քայլի մասին:

Ռաշիդը վեր նայեց:

Մարիամը սկսեց ինչ-որ բան ասել, բայց Ռաշիդը ձեռքը բարձրացրեց և առանց նրան նայելու՝ ասաց.

— Արդեն ուշ է, Մարիա՛մ:

Զալմային սառը ասաց.

— Դու բարձրանում ես վերև, տղա՛:

Զալմայի դեմքին Մարիամը տագնապ տեսավ: Նա նյարդայնորեն նայում էր երեքին: Զալմայը այժմ զգաց, որ իր բանսարկության խաղից սենյակը լցվեց մեծահասակների համար լուրջ հետևանքներով: Նա հուսահատ, զղջումով լի հայացք գցեց Մարիամի, ապա մոր վրա:

Անառարկելի ձայնով Ռաշիդն ասաց.

— Հենց հիմա՛:

Նա բռնեց Զալմային արմունկից: Զալմայը հնազանդորեն թույլ տվեց, որ իրեն վերև տանեն:

Նրանք սառած-կանգնած էին՝ Մարիամն ու Լեյլան՝ աչքերը գետնին, կարծես միմյանց նայելը կապացուցեր, որ Ռաշիդի մտածածը ճիշտ է, որ մինչ նա դռներ էր բացում և ուղեբեռ էր փոխադրում մարդկանց համար, ովքեր նրան հայացք անգամ չէին պարգևի, զզվելի դավադրություն էր կազմակերպվում իր թիկունքում, իր տանը, իր սիրելի որդու ներկայությամբ: Ոչ ոք բառ չասաց: Նրանք լսում էին վերևի միջանցքից եկող ոտնաձայները՝ մեկը ծանր ու չարագուշակ, մյուսը՝ փոքրիկ կենդանու ժիր թփթփոցի պես: Լսեցին խլացված բառեր, ծվծվան աղերս, կտրուկ պատասխան, դռան փակվելը, պտտվող բանալու չխկչխկոցը: Հետո վերադարձող ոտնաձայներ՝ այժմ ավելի անհամբեր:

Մարիամը տեսավ աստիճաններով իջնող նրա ծանր քայլվածքը: Տեսավ՝ ինչպես է բանալին դնում գրպանը, տեսավ նրա գոտին, որի ծակոտկեն մասը պինդ փաթաթված էր մատներին: Կեղծ արուրե ճարմանդը քարշ էր գալիս հետևից՝ աստիճանների վրա վեր ցատկելով:

Մարիամը գնաց, որ կանգնեցնի նրան, բայց նա Մարիամին հետ հրեց ու սուրաց կողքով: Առանց որևէ խոսք ասելու՝ նա գոտին պտտեց Լեյլայի վրա: Դա արեց այնպիսի արագությամբ, որ Լեյլան ժամանակ չունեցավ նահանջելու կամ խույս տալու կամ նույնիսկ պաշտպանվելու համար ձեռքը բարձրացնելու: Լեյլան մատները տարավ գլխի գագաթին, նայեց արյանը, ապշած նայեց Ռաշիդին: Այս տարակուսանքով լի հայացքը ընդամենը մեկ-երկու վայրկյան տևեց նախքան ատելության փոխարինվելը:

Ռաշիդը նորից պտտեց գոտին:

Այս անգամ Լեյլան թևով պաշտպանեց իրեն և փորձեց բռնել գոտին: Չստացվեց, և Ռաշիդը կրկին իջեցրեց գոտին: Լեյլան մի պահ բռնեց գոտին, բայց Ռաշիդը դուրս քաշեց այն ու նորից մտրակեց: Հետո Լեյլան վազեց սենյակով, իսկ Մարիամը բղավում էր, աղերսում էր Ռաշիդին, որ հետապնդում էր Լեյլային, փակում նրա ճանապարհը և գոտիով հարվածում: Մի պահ Լեյլան խույս տվեց ու հասցրեց հարված հասցնել Ռաշիդի ականջին, ինչին Ռաշիդը պատասխանեց հայհոյանքով և ավելի դաժան հետապնդմամբ: Նա բռնեց Լեյլային, խփեց պատով ու նորից ու նորից խփեց գոտիով, հարվածեց կրծքին, ուսին, բարձրացրած ձեռքերին, մատներին՝ ամեն տեղից արյուն բերելով:

Մարիամը կորցրեց հաշիվը, թե քանի հարված հասցրեց գոտին, քանի աղերսական բառ գոռաց Ռաշիդին, քանի անգամ պտտվեց ատամների, բռունցքների ու գոտու անհասկանալի կծիկի շուրջը, մինչև չտեսավ, որ Ռաշիդի դեմքը մատներ են ճանկռում, կոտրված եղունգները խրվում են նրա այտերի մեջ, քաշում են մազերը և քերծում ճակատը: Որոշ ժամանակ պահանջվեց, որ նա հասկանա ցնցված և հաճույքով, որ այդ մատներն իրենն են:

Ռաշիդը բաց թողեց Լեյլային և շրջվեց դեպի Մարիամը: Սկզբում չտեսնող հայացքով նայեց նրան, հետո աչքերը նեղացան, հետաքրքրությամբ գնահատեցին Մարիամին: Հայացքը զարմանքից փոխվեց շոկի, դատապարտման, նույնիսկ հիասթափության և մի պահ մնաց այդպիսին:

Մարիամը հիշեց առաջին անգամը, երբ տեսավ նրա աչքերը հարսանեկան քողի տակից, հայելու մեջ, Ջալիլի աչքի առաջ, ինչ-

պես նրանց հայացքները սահեցին հայելու մեջ ու հանդիպեցին Ռաշիդի անտարբեր հայացքը, Մարիամի հեզ, զիջող, համարյա ներողություն խնդրող:

Ներողություն խնդրող:

Մարիամն այժմ այդ նույն աչքերում տեսավ, թե ինչ հիմարն է եղել:

Արդյո՞ք ինքը դավաճանող կին էր, հարցրեց ինքն իրեն: Ինքնահավա՞ն էր: Անազնի՞վ: Վարկաբեկելի՞: Գռեհի՞կ: Ի՞նչ վատ բան էր գիտակցաբար արել այս մարդուն, որ արժանանա նրա չարությանը, նրա անդադար հարձակումներին, այն հաճույքին, որով նա տանջում էր իրեն: Մի՞թե չէր խնամել նրան, երբ նա հիվանդ էր: Մի՞թե չէր կերակրել նրան ու ընկերներին, պարտաճանաչորեն չէ՞ր մաքրել նրանց հետևից:

Արդյոք չէ՞ր տվել այս տղամարդուն իր երիտասարդությունը:

Արդյոք երբևէ արդարացիորեն արժանի՞ էր եղել նրա ստորացումներին:

Գոտին դմփոցով ընկավ ցած, երբ Ռաշիդն այն վայր գցեց ու եկավ Մարիամի հետևից: Այդ դմփոցից պարզ դարձավ, որ որոշ գործեր պետք է մերկ ձեռքերով անել:

Բայց հենց այն պահին, երբ նա վրա հասավ Մարիամին, Մարիամը տեսավ, որ նրա հետևից Լեյլան ինչ-որ բան է վերցնում գետնից: Մարիամը տեսավ, որ Լեյլան բարձրացրեց ձեռքը, օդում պահեց ու կողքից հարվածեց Ռաշիդի դեմքին: Ապակի փշրվեց: Ջրի բաժակի ջարդված փշուրները թափվեցին գետնին: Լեյլայի ձեռքերի վրա արյուն էր, արյուն էր հոսում Ռաշիդի ճղված այտից, հոսում էր պարանոցով, վերնաշապիկին: Նա շրջվեց՝ ատամները կրճտացնելով ու բոցավառ աչքերով:

Ռաշիդն ու Լեյլան ընկան գետնին՝ իրար հարվածելով: Ռաշիդը հայտնվեց վերևում՝ ձեռքերն արդեն Լեյլայի պարանոցին փաթաթած:

Մարիամը ճանկռում էր Ռաշիդին: Ծեծում էր նրա կուրծքը: Իրեն նետում էր Ռաշիդի վրա: Փորձում էր բացել Լեյլայի պարանոցը բռնած մատները: Կծեց դրանք: Բայց մատները շարունակում էին ամուր սեղմել Լեյլայի շնչուղիները, և Մարիամը հասկացավ, որ Ռաշիդը գործը ավարտին է հասցնելու:

Նա նպատակ էր դրել Լեյլային շնչահեղձ անելու, և ոչ ոք չէր կարող որևէ բան անել:

Մարիամը հետ-հետ գնաց ու դուրս եկավ սենյակից: Նա լսում էր վերևից եկող թփթփոցի ձայնը, որը հանում էին կողպված դուռը ծեծող փոքրիկ բռունցքները: Մարիամը վազեց միջանցքով: Դուրս թռավ մուտքի դռնից: Անցավ բակը:

Պահեստանոցում Մարիամը ճանկեց բահը:

Ռաշիդը չնկատեց, որ նա վերադարձել է սենյակ: Նա դեռ Լեյլայի վրա էր՝ աչքերը լայնացած ու խելահեղ, ձեռքերը նրա պարանոցին փաթաթած: Լեյլայի դեմքը կապտում էր, աչքերը կուլ էին գնացել: Մարիամը տեսավ, որ Լեյլան այլևս չի պայքարում: Ռաշիդը ուզում է սպանել նրան, մտածեց Մարիամը: Իրոք կսպանի: Իսկ Մարիամը չէր կարող, չպետք է դա թույլ տար: Ռաշիդն այնքան շատ բան էր խլել իրենից ամուսնության քսանյոթ տարվա ընթացքում: Ինքը չի նայելու, թե ինչպես է խլում նաև Լեյլային:

Մարիամն ամուր կանգնեց ոտքերին և պինդ բռնեց բահի կոթը: Բարձրացրեց այն: Ասաց նրա անունը: Նա ուզում էր, որ Ռաշիդը տեսնի:

— Ռաշի՛դ:

Նա վեր նայեց:

Մարիամը թափով վրա բերեց:

Հարվածն իջավ Ռաշիդի քունքին: Դա ստիպեց նրան պոկվել Լեյլայից:

Ռաշիդը ձեռքը տարավ դեպի գլուխը: Նայեց մատների ծայրերից կաթող արյանը, հետո Մարիամին: Մարիամը մտածեց, որ Ռաշիդի դեմքը մեղմացավ: Պատկերացրեց, որ իրենց միջև ինչ-որ բան անցավ, որ միգուցե բառացիորեն ինչ-որ բան մտցրեց նրա գլուխը: Գուցե Ռաշիդը ինչ-որ բան տեսավ նաև իր դեմքին, մտածեց Մարիամը, մի բան, որ ստիպեց նրան երկմտել: Միգուցե նա տեսավ իր դեմքին այն ամբողջ անձնուրաց նվիրումը, անձնազոհությունը, ինքնազոհաբերումը, այն ջանքերը, որոնք անհրաժեշտ էին այսքան տարի նրա հետ ապրելու համար՝ նրա մշտական արհամարհանքի ու բռնության, նրա մանրախնդրության և չարության հետ: Արդյոք հարգանք տեսավ նրա աչքերում՝ ափսոսանք:

Բայց հետո նրա վերին շրթունքը ծռվեց նողկանքի ժպիտով, և Մարիամը հասկացավ իր գործը ավարտին չհասցնելու ապարդյունությունը, գուցե նույնիսկ անպատասխանատվությունը: Եթե թույլ տա նրան հեռանալ, որքան ժամանակ անց նա գրպանից կհանի բանալին ու կբարձրանա հրացանի հետևից, որն այն սենյակում է, որտեղ փակել է Զալմային: Եթե Մարիամը վստահ լիներ, որ նա կբավարարվի միայն իր վրա կրակելով, որ հավանականություն կա, որ կխնայի Լեյլային, գուցե վայր դներ բահը: Բայց Ռաշիդի աչքերում նա մահ տեսավ իրենց երկուսի համար էլ:

Եվ այսպես, Մարիամը կրկին բարձրացրեց բահը, այնքան բարձր, որքան կարող էր, հետ ճկվեց այնքան, որ բահը կպավ մեջքին: Շրջեց բահն այնպես, որ սուր եզրը ուղղահայաց լինի, և այդ անելիս նրա մտքով անցավ, որ սա առաջին անգամն է, երբ ինքն է որոշում սեփական կյանքի ընթացքը:

Եվ այդ մտքով Մարիամը իջեցրեց բահը: Այս անգամ՝ որքան ուժ ուներ:

47

Լեյլա

Լեյլան տեղյակ էր իր վրա կախված դեմքից, բոլոր ատամներից, սիգարետից և չարագուշակ աչքերից: Աղոտ տեղյակ էր նաև Մարիամից, նրա անդեմ ներկայությունից, նրա բռունցքների հարվածների տարափից: Նրանց գլխավերևում առաստաղն էր, և Լեյլային ձգում էր առաստաղը՝ դրա վրայի բորբոսի գծերը, ասես թանաքը հագուստի վրա, սվաղի ճեղքը, որը սառնարյուն ժպիտ էր կամ խոժոռված դեմք՝ կախված, թե սենյակի որ մասից եք նայում: Լեյլան մտածում էր, թե քանի անգամ էր շոր կապել ավելի ծայրին ու այս առաստաղից մաքրել սարդոստայնները: Հիշեց այն երեք անգամները, երբ Մարիամի հետ սպիտակ ներկով ներկել էին այն: Ժպիտն այլևս ժպիտ չէր, այլ քմծիծաղ: Եվ այն անհետանում էր: Առաստաղը նեղանում էր, վեր խոյանում, հեռանում նրանից դեպի հեռավոր աղոտ մշուշ: Առաստաղը բարձրացավ ու դարձավ դրոշմանիշի չափ՝ սպի-

տակ և պայծառ, իսկ դրա շուրջը ամեն ինչ ծածկեց կոտրտված խավարը: Մթության մեջ Ռաշիդի դեմքը նման էր պեպենի:

Այժմ նրա աչքերի առաջ կուրացնող լույսի պայթյուններ էին, ասես արծաթե աստղեր էին առկայծում: Լույսի ներքո տարօրինակ երկրաչափական ձևերը՝ ճիճուներ, ձվանման բաներ, վերուվար էին անում, կողքից կողք շարժվում, միաձուլվում, տրոհվում, ձևափոխվում, հետո մարում, տեղ տալիս մթությանը:

Ձայներն աղոտ էին և հեռավոր:

Կոպերի տակ փայլատակում ու բոցավառվում էին Լեյլայի երեխաների դեմքերը: Ազիզան՝ զգոն և ճնշված, հասկացող, գաղտնապահ: Ջալմայը, որ դողացող անհամբերությամբ նայում է հորը:

Ուրեմն այսպես է վերջանալու, մտածեց Լեյլան: Ինչպիսի խղճալի ավարտ:

Բայց հետո խավարը սկսեց բացվել:

Նրան թվաց, որ վեր է կենում, որ իրեն բարձրացնում են: Առաստաղը դանդաղ հետ եկավ, լայնացավ, և այժմ Լեյլան նորից կարող էր տեսնել ճեղքը, և դա նույն ապուշ ժպիտն էր:

Նրան ցնցում էին: Լա՞վ ես: Պատասխանի՛ր, լա՞վ ես: Մարիամի դեմքը՝ ճանկռած, անհանգստությունից խոճոռված, կախվել էր Լեյլայի վրա:

Լեյլան փորձեց շնչել: Կոկորդը այրվեց: Փորձեց ևս մեկ անգամ: Այս անգամ ավելի այրվեց, և ոչ միայն կոկորդը, այլև կրծքավանդակը: Հետո սկսեց հազալ, խռխռալ: Հևալ: Բայց շնչում էր: Առողջ ականջը զնգում էր:

* * *

Առաջին բանը, որ տեսավ, երբ նստեց, Ռաշիդն էր: Նա պառկած էր մեջքին և անթարթ նայում էր ոչնչին՝ բերանը ձկան պես բացած: Մի փոքր բաց վարդագույն փրփուր ծորացել էր բերանից նրա այտի վրա: Շալվարի առաջամասը թաց էր: Լեյլան տեսավ նրա ճակատը:

Հետո տեսավ բահը:

Լեյլան հառաչ արձակեց:

— Ա՛խ,— ասաց նա դողալով, հազիվ կարողանալով ձայն հանել,— ա՛խ, Մարիա՛մ:

* * *

Լեյլան հետուառաջ էր անում, հառաչում, ձեռքերն իրար խփում, իսկ Մարիամը նստել էր Ռաշիդի մոտ՝ ձեռքերը ծնկներին, հանգիստ և անշարժ: Մարիամը երկար ժամանակ ոչինչ չասաց:

Լեյլայի բերանը չորացել էր, նա կակազում էր, ամբողջ մարմնով դողում: Նա ինքն իրեն ստիպեց չնայել Ռաշիդին, նրա դիմածռությանը, նրա բաց աչքերին, անրակի խոռոչի մեջ մակարդված արյանը:

Դրսում լույսը մարում էր, ստվերները խորանում էին: Մարիամի դեմքը նիհար ու ներս ընկած էր երևում այդ լույսի ներքո, բայց նա գրգռված կամ վախեցած տեսք չուներ, պարզապես մտազբաղ, մտահոգ, այնքան ինքնամփոփ, որ նույնիսկ ուշադրություն չդարձրեց, երբ ճանճը նստեց կզակին: Ուղղակի նստած էր՝ ներքևի շրթունքը դուրս ցցած, ինչպես միշտ էր անում, երբ խորացած էր մտքերի մեջ:

Վերջապես նա ասաց.

— Նստի՛ր, Լեյլա՛ ջո:

Լեյլան հնազանդ նստեց:

— Մենք պետք է տեղափոխենք նրան: Զալմայը չպետք է սա տեսնի:

* * *

Մարիամը Ռաշիդի գրպանից հանեց ննջասենյակի բանալին նախքան նրան սավանի մեջ փաթաթելը:

Լեյլան բռնեց ոտքերից՝ ծնկների տակից, իսկ Մարիամը՝ թևատակերից: Փորձեցին բարձրացնել, բայց նա չափազանց ծանր էր, և ի վերջո նրան քարշ տվեցին: Երբ առջևի դռնով անցնում էին դեպի բակը, Ռաշիդի ոտքը կառչեց դռան շեմին, և ոտքը մի կողմ ծռվեց: Ստիպված էին հետ գնալ և նորից փորձել, հետո

ինչ-որ բան թրխկաց վերևում, և Լեյլայի ոտքերը այլևս իրեն չպահեցին: Նա գցեց Ռաշիդին: Ընկավ գետնին հեկեկալով և ցնցվելով, և Մարիամը ստիպված էր կանգնել նրա գլխավերևում՝ ձեռքերը ազդրերի վրա, և ասել, որ իրեն հավաքի: Այդպես էլ արեց: Որոշ ժամանակ անց Լեյլան վեր կացավ ու սրբեց դեմքը, և նրանք քարշ տվեցին Ռաշիդին բակի միջով՝ առանց հետագա միջադեպերի:

Նրան տարան պահեստանոցը: Թողեցին դազգահի հետևում, որի վրա դրված էր Ռաշիդի սղոցը, մի քանի մեխ, հատիչը, մուրճը և փայտի մի գլան, որից Ռաշիդն ուզում էր ինչ-որ բան սարքել Զալմայի համար, բայց գործը դրան չհասավ: Հետո նրանք մտան ներս: Մարիամը լվաց ձեռքերը, մազերը հարթեցրեց, խոր շունչ քաշեց և ասաց.

— Հիմա թո՛ւյլ տուր վերքերովդ զբաղվեմ: Ամբողջ մարմինդ կտրտված է, Լեյլա՛ ջո:

* * *

Մարիամն ասաց, որ գիշերը ամեն ինչի մասին կմտածի: Մտքերն ի մի կբերի ու ծրագիր կկազմի:

— Ելք կա,— ասաց նա,— պարզապես պետք է գտնեմ այն:

— Մենք պետք է հեռանանք: Մենք չենք կարող այստեղ մնալ,— կոտրված, խռպոտ ձայնով ասաց Լեյլան: Նա հանկարծ մտածեց այն ձայնի մասին, որով բահը խփվեց Ռաշիդի գլխին, և նրա մարմինը առաջ ծռվեց: Լեղին կոկորդով բարձրացավ:

Մարիամը համբերատար սպասեց, մինչև Լեյլան իրեն ավելի լավ զգաց: Հետո պառկեցրեց Լեյլային և, ծնկներին դրած նրա գլուխը շոյելով, ասաց, որ չանհանգստանա, որ ամեն ինչ լավ լինի: Ասաց, որ իրենք կգնան՝ ինքը, Լեյլան, երեխաներն ու Թարիքը: Իրենք կհեռանան այս տնից, այս անողոք քաղաքից: Ընդհանրապես կհեռանան այս հուսահատ երկրից, ասաց Մարիամը՝ Լեյլայի մազերը շոյելով, և կգնան մի հեռու և անվտանգ տեղ, որտեղ ոչ ոք իրենց չի գտնի, որտեղ կարող են հետևում թողնել իրենց անցյալը և ապաստան գտնել:

— Ծառերով պատված մի տեղ,— ասաց նա,— այո՛, ծառաշատ տեղ:

Մարիամն ասաց, որ իրենք կապրեն քաղաքի ծայրամասում մի փոքրիկ տանը, որի անունը երբեք չեն լսել, կամ մի հեռավոր գյուղում, որտեղ ճանապարհը նեղ սայլուղի կլինի՝ կողքերը ամեն տեսակի բույսեր ու թփեր: Գուցե արահետ կլինի, որը կտանի դեպի խոտածածկ դաշտ, որտեղ երեխաները կարող են խաղալ, կամ գուցե մանրախոտով պատված ճանապարհ, որը նրանց կտանի դեպի պարզ կապույտ լիճ, որտեղ լողում է իշխանը, և բուսնում են եղեգները: Նրանք ոչխար ու հավ կպահեն, միասին հաց կթխեն, երեխաներին կարդալ կսովորեցնեն: Նոր կյանք կկերտեն իրենց համար՝ խաղաղ, մենավոր կյանք, և այնտեղ իրենց կրած ամբողջ բեռը կթեթևանա, և իրենք արժանի կլինեն իրենց երջանկությանն ու պարզ բարեկեցությանը:

Լեյլան քաջալերական մրմնջաց: Դժվարություններով լի կյանք է լինելու, բայց հաճելի դժվարություններով, որոնցով իրենք կհպարտանան, տեր կկանգնեն, կգնահատեն, ինչպես ընտանեկան ժառանգությունը: Մարիամի մեղմ մայրական ձայնը նրան որոշ հանգստություն պարգևեց: Ելք կա, նա ասաց, և առավոտյան Մարիամը նրան կասի՝ ինչ է պետք անել, իրենք դա կանեն, և գուցե վաղը այս ժամին կուղևորվեն դեպի այդ նոր կյանքը՝ լի հնարավորություններով, ուրախությամբ և ողջունելի դժվարություններով: Լեյլան երախտապարտ էր, որ ղեկավարը Մարիամն է՝ պարզ և սթափ ուղեղով, որն ունակ է մտածելու նրանց երկուսի համար էլ: Լեյլայի գլխում ներվային խառնաշփոթ էր:

Մարիամը վեր կացավ:

— Հիմա պետք է քո որդիով զբաղվես: Այդպիսի հուզված տեսք Լեյլան երբևէ մարդու երեսին չէր տեսել:

* * *

Լեյլան նրան գտավ մթության մեջ՝ կծկված ներքնակի այն մասում, որտեղ Ռաշիդն էր քնում: Լեյլան սողոսկեց նրա կողքը՝ ծածկոցների տակ, և վերմակը քաշեց իրենց վրա:

— Քնա՞ծ ես:

Առանց նրա կողմը շրջվելու՝ Զալմայն ասաց.

— Չի կարելի քնել: Բաբա ջանը Բաբալուի աղոթքները ինձ հետ դեռ չի ասել:

— Գուցե այս գիշեր ես ասեմ դրանք քեզ հետ:

— Դու նրա պես չես կարող ասել:

Լեյլան սեղմեց նրա փոքրիկ ուսը: Համբուրեց պարանոցի հետևի մասը:

— Ես կփորձեմ:

Ո՞ւր է բաբա ջանը:

— Բաբա ջանը գնացել է,— ասաց Լեյլան, և նրա կոկորդը կրկին սեղմվեց:

Եվ ահա առաջին անգամ ասվեց այս մեծ, սոսկալի սուտը: Դեռ քանի՞ անգամ պետք է ասել այն, տխուր մտածեց Լեյլան: Քանի՞ անգամ է պետք լինելու Զալմային խաբել: Նա պատկերացրեց՝ ինչպես էր Զալմայը ուրախ ողջունելով վազում, երբ Ռաշիդը տուն էր գալիս, ինչպես էր Ռաշիդը նրան արմունկներից բարձրացնում ու պտտում այնքան, որ Զալմայի ոտքերը ուղղաձիգ թռչում էին, հետո երկուսն էլ ծիծաղում էին, երբ Զալմայը հարբածի պես փորձում էր քայլել: Լեյլան հիշեց նրանց անկարգ խաղերը, նրանց բուռն ծիծաղը, նրանց գաղտնի հայացքները:

Ամոթն ու վիշտը իր որդու համար համակեց Լեյլային:

— Ո՞ւր է գնացել:

— Չգիտեմ, սիրելի՛ս:

Ե՞րբ է վերադառնալու: Բաբա ջանը նվեր կբերի՞, երբ վերադառնա:

Լեյլան աղոթեց Զալմայի հետ: Քսանմեկ անգամ «Բիսմալլահի-է-ռահիման-է-ռահիմ»՝ մեկ անգամ յոթ մատի յուրաքանչյուր հոդակապի համար: Լեյլան հետևում էր՝ ինչպես է Զալմայը փակ ափերը մոտեցնում դեմքին, փչում դրանց մեջ, հետո երկու ձեռքերը դնում ճակատին, քշելու շարժում անում ու շշնջում՝ Բաբալո՛ւ, հեռացի՛ր, Զալմայի մոտ մի՛ արի, նա քեզ հետ գործ չունի: Բաբալո՛ւ, հեռացի՛ր: Երբ ավարտեցին, երեք անգամ ասացին «Ալլահ-ու-աքբար»: Եվ ավելի ուշ, շատ ավելի ուշ Լեյլային ցնցեց խուլ ձայնը. «Բաբա ջանը իմ պատճառո՞վ է գնացել: Իմ ասածի՞ պատճառով՝ քո ու այն տղամարդու մասին»:

Լեյլան խոնարհվեց որդու վրա՝ ցանկանալով համոզել, ասել՝ «Քեզ հետ ոչ մի կապ չունի, Զալմայ,: Ոչ մի: Ոչինչ քո մեղքով չէ»: Բայց նա քնած էր, նրա փոքր կրծքավանդակը բարձրանում և իջնում էր:

* * *

Երբ Լեյլան գնաց քնելու, նրա գլուխը դեռ մթագնած էր, մշուշոտ, բանականորեն մտածելու անկարող: Բայց երբ նա արթնացավ *մուեզինի* առավոտյան աղոթքի կոչից, մշուշված միտքը պարզվել էր: Նա նստեց և որոշ ժամանակ նայեց քնած Զալմային՝ բռունցքը կզակի տակ: Լեյլան պատկերացրեց՝ ինչպես է Մարիամը գիշերվա կեսին մտնում սենյակ, երբ ինքն ու Զալմայը քնած են, նայում նրանց, գլխում ծրագրեր կազմում:

Լեյլան վեր կացավ անկողնուց: Կանգնելը ջանք պահանջեց: Ամբողջը ցավում էր. պարանոցը, ուսերը, մեջքը, ձեռքերը՝ ամեն տեղ Ռաշիդի գոտու ճարմանդի կտրվածքներն էին: Կծկվելով կամաց դուրս եկավ ննջասենյակից:

Մարիամի սենյակում լույսը մոխրագույնից մի փոքր ավելի մուգ էր, այնպիսին, ինչպիսին Լեյլան միշտ կապում էր ծուղրուղու կանչող աքաղաղների և խոտի շեղբերից կաթացող ցողի հետ: Մարիամը նստած էր անկյունում՝ աղոթքի գորգի վրա, դեմքով դեպի պատուհանը: Լեյլան դանդաղ իջավ գետնին ու նստեց նրա դիմաց:

— Այս առավոտ պետք է գնաս Ազիզային այցելելու,— ասաց Մարիամը:

— Ես գիտեմ՝ ինչ ես ուզում անել:

— Ոտքով մի՛ գնա: Նստի՛ր ավտոբուս, աչքի չես ընկնի: Տաքսիները շատ կասկածելի են: Հաստատ կկանգնեցնեն միայնակ երթևեկելու համար:

— Այն, ինչ խոստացել էիր անցած երեկո...

Լեյլան չկարողացավ ավարտել: Ծառերը, լիճը, անանուն գյուղը: Պատրանք էր, Լեյլան հասկացավ: Գեղեցիկ սուտ, որի նպատակն էր հանգստացնել նեղված երեխային ղունղունալու պես:

— Այդպես էլ կլինի,— ասաց Մարիամը,— ես քեզ նկատի ունեի, Լեյլա՛ ջո:

— Առանց քեզ ես չեմ ուզում,— հառաչեց Լեյլան:

Մարիամը թախծոտ ժպտաց:

— Ես ուզում եմ, որ լինի այնպես, ինչպես դու ասել ես, Մարիա՛մ, բոլորս միասին ենք գնում՝ դու, ես, երեխաները: Թարիքը Պակիստանում տեղ ունի: Կարող ենք որոշ ժամանակ այնտեղ թաքնվել, սպասել, որ իրավիճակը խաղաղվի:

— Դա հնարավոր չէ,— համբերատար ասաց Մարիամը, ինչպես կասեր ծնողը խելամիտ, բայց մոլորված երեխային:

— Մենք իրար մասին հոգ կտանենք,— ասաց Լեյլան՝ բառերից խեղդվելով, աչքերը արցունքներից թաց,— ինչպես դո՛ւ ասացիր: Ո՛չ: Հիմա ես քո մասին կհոգամ:

— Ա՜խ, Լեյլա՛ ջո:

Լեյլան սկսեց կակազելով դատարկաբանել: Սկսեց սակարկել: Խոստումներ տալ: Ինքը կստանձնի տուն մաքրելը, ասաց, ամբողջ խոհարարությունը:

— Դու ստիպված չես լինի որևէ բան անել: Այլևս երբեք: Դու կհանգստանաս, կքնես, այգի կտնկես: Ինչ ուզես՝ կասես ինձ, ու ես կբերեմ քեզ համար: Մի՛ արա այսպիսի բան, Մարիա՛մ: Ինձ մի՛ լքիր: Մի՛ կոտրիր Ազիզայի սիրտը:

— Հաց գողանալու համար ձեռք են կտրում,— ասաց Մարիամը,— ինչ ես կարծում, ինչ կանեն, երբ գտնեն ամուսնու դին ու երկու անհայտացած կնոջը:

— Ոչ ոք չի իմանա,— արտաշնչեց Լեյլան,— ոչ ոք մեզ չի գտնի:

— Կգտնեն: Վաղ թե ուշ: Նրանք արյունարբու են:— Մարիամի ձայնը ցածր էր, զգուշացնող. դրանց համեմատ Լեյլայի խոստումները հնչում էին անիրական, մոգոնած, անմիտ:

— Մարիա՛մ, խնդրում եմ...

— Երբ գտնեն, ինձ հետ քեզ էլ մեղավոր կճանաչեն: Թարիքին էլ: Ես չեմ ուզում, որ դուք երկուսդ ծպտյալ ապրեք փախստականների պես: Ի՞նչ կլինի ձեր երեխաների հետ, եթե ձեզ բռնեն:

Լեյլայի աչքերը չռված էին, վառվում էին:

— Ո՞վ է հոգ տանելու նրանց մասին: Թալիբա՞նը: Մոր պես մտածի՛ր, Լեյլա՛ ջո: Մոր պես մտածի՛ր: Ես այդպես եմ մտածում:

— Չեմ կարող:

— Պետք է մտածես:

— Դա արդար չէ,— խռպոտ ասաց Լեյլան:

— Արդար է: Արի՛ այստեղ: Արի՛ այստեղ պառկիր:

Լեյլան սողաց դեպի նա ու կրկին գլուխը դրեց Մարիամի գոգին: Նա հիշեց միասին անցկացված օրերը, երբ միմյանց մազերն էին հյուսում, երբ Մարիամը համբերատար լսում էր նրա պատահական մտքերը և սովորական պատմությունները այնպիսի երախտագիտությամբ, ինչպես մի մարդ, ում տրված էր եզակի ու ցանկալի արտոնություն:

— Արդար է,— ասաց Մարիամը,— ես սպանել եմ մեր ամուսնուն: Ես զրկել եմ որդուդ հորից: Ճիշտ չի լինի, որ ես փախչեմ: Ես չեմ կարող: Նույնիսկ եթե մեզ երբեք չբռնեն, ես երբեք չեմ...— նրա շուրթերը դողացին,— ես երբեք չեմ խուսափի քո որդու վշտից: Ինչպե՞ս եմ նայելու նրան: Ինչպե՞ս եմ ստիպելու ինձ նայել նրան, Լեյլա՛ ջո:

Մարիամը պտտեց Լեյլայի մազերի մի փունջ, արձակեց մի համառ գանգուր:

— Ես հասել եմ վերջնակետի: Ես սրանից ավելի ոչինչ չեմ ուզում: Այն ամենը, ինչի մասին ես երազել եմ, երբ փոքրիկ աղջիկ էի, դու ինձ արդեն տվել ես: Դու և քո երեխաները ինձ շատ եք երջանկացրել: Ամեն ինչ լավ է, Լեյլա՛ ջո: Ամեն ինչ լավ է: Մի՛ տխրիր:

Մարիամի ասածին Լեյլան չկարողացավ ողջամիտ պատասխան գտնել: Բայց նա ամեն դեպքում շարունակեց երեխայի պես դատարկաբանել պտղատու ծառերի մասին, որոնք պետք է տնկել, և հավերի, որոնց պետք է բուծել: Շարունակեց խոսել անանուն քաղաքների տնակների մասին, իշխանով լի լճերի մոտ զբոսանքների մասին: Ի վերջո, երբ բառերը սպառվեցին, իսկ արցունքները՝ ոչ, Լեյլային մնում էր միայն հանձնվել և հեկեկալ մեծահասակի անհերքելի տրամաբանությունից ընկճված երեխայի պես: Միակ բանը, որ կարող էր անել, վեր կենալն ու վերջին անգամ դեմքը Մարիամի ջերմ գրկում թաղելն էր:

* * *

Այդ առավոտյան՝ ավելի ուշ, Մարիամը Զալմայի ճաշի համար հաց և չորացած թուզ փաթաթեց: Ազիզայի համար էլ մի քանի թուզ և կենդանիների ձևով մի քանի բլիթներ: Այդ ամենը դրեց թղթե տոպրակի մեջ ու տվեց Լեյլային:

— Համբուրի՛ր Ազիզային իմ կողմից,— ասաց,— ասա՛ նրան, որ նա իմ աչքի *նուռն* է և իմ սրտի սուլթանը: Կասե՞ս:

Լեյլան գլխով արեց՝ շրթունքները սեղմած:

— Նստի՛ր ավտոբուս, ինչպես ասացի, ու գլուխդ կա՛խ պահիր:

— Ե՞րբ կտեսնենք քեզ, Մարիա՛մ: Ես ուզում եմ տեսնել քեզ նախքան ցուցմունք տալը: Ես նրանց կպատմեմ, թե ինչպես է դա տեղի ունեցել: Կբացատրեմ, որ դա քո մեղքով չէր: Որ դու ստիպված էիր դա անել: Նրանք կհասկանան, չէ՞, Մարիա՛մ: Կհասկանան:

Մարիամը մեղմորեն նայեց նրան:

Նա կռացավ Զալմայի աչքի մակարդակին: Զալմայի հագին կարմիր կարճաթև վերնաշապիկ էր, մաշված խակի գույնի շալվար և օգտագործված կովբոյական երկարաճիտ կոշիկներ, որոնք Ռաշիդը գնել էր *Մանդայիից*: Նա երկու ձեռքով բռնել էր իր նոր բասկետբոլի գնդակը: Մարիամը համբուրեց այտը:

— Բարի, ուժեղ տղա կլինես,— ասաց,— լավ կվերաբերվես մորդ:— Մարիամը ափերի մեջ առավ Զալմայի դեմքը: Զալմայը հետ քաշվեց, բայց Մարիամը պահեց նրան:— Ես շատ եմ ցավում, Զալմա՛յ ջո, հավատա՛, շատ եմ ցավում քո վշտի և տխրության համար:

Լեյլան բռնեց Զալմայի ձեռքը, և նրանք քայլեցին ճանապարհով: Անկյունը շրջելուց առաջ Լեյլան հետ նայեց և դռան մոտ տեսավ Մարիամին: Նրա գլխին սպիտակ շարֆ էր, մուգ կապույտ սվիտեր՝ դիմացից կոճակներով, և սպիտակ բամբակյա տաբատ: Մի փունջ սպիտակ մազ ընկել էր ճակատին: Արևի լույսը ճաղեր էր գցել նրա դեմքին և ուսերին: Մարիամը բարեկամաբար ձեռքով արեց:

Նրանք շրջեցին անկյունը, և Լեյլան այլևս երբեք չտեսավ Մարիամին:

48

Մարիամ

Այսքան տարի հետո ասես նորից վերադարձել էր *քոլբա*:

«Վալայաթ» կանանց բանտը Շար-է-Նաու թաղամասի Հավերի փողոցի մոտ գտնվող գորշ քառակուսի շինություն էր: Այն ավելի մեծ համալիրի կենտրոնում էր, որտեղ ապրում էին արական սեռի բանտարկյալները: Մարիամին և մյուս կանանց տղամարդկանցից բաժանում էր կողպեքով դուռը: Մարիամը հաշվեց հինգ գործող բանտախուց: Դրանք առանց կահույքի սենյակներ էին՝ կեղտոտ, պլոկված պատերով և փոքր պատուհաններով, որոնք նայում էին դեպի բակ: Պատուհաններին ճաղեր էին, չնայած խցերի դռները կողպված չէին, և կանայք կարող էին հանգիստ գնալ-գալ բակ: Պատուհաններին ապակի չկար: Չկային նաև վարագույրներ, ինչը նշանակում էր, որ բակով շրջող թալիբ պահակները կարող էին տեսնել խուցերի ներսը: Կանանց մի մասը դժգոհում էր, որ պահակները ծխում են պատուհանի մոտ ու բորբոքված աչքերով և գայլի ժպիտներով ներս են նայում, իրար մեջ կանանց մասին անպարկեշտ կատակներ անում: Այդ պատճառով կանանց մեծ մասը ամբողջ օրը *բուրքա* էր հագնում և հանում էին միայն արևաածագից հետո, երբ հիմնական դարպասը փակվում էր, և պահակները գնում էին իրենց դիրքերը:

Գիշերները Մարիամի խուցը, որը նա կիսում էր հինգ կանանց և չորս երեխաների հետ, մութ էր: Այդ գիշերները, երբ էլեկտրական հոսանք կար, նրանք Նաղմային՝ կարճահասակ, տափակ կրծքով, սև գանգուր մազերով աղջկան, բարձրացնում էին առաստաղի մոտ: Այնտեղ մերկ մետաղալար կար: Նաղման ձեռքով փաթաթում էր էլեկտրական լարը լամպի հիմքի շուրջը, և միացում ստեղծում:

Սանհանգույցները զուգարանի չափի էին, ցեմենտի հատակը՝ ճաքճքված: Գետնին մի փոքր ուղղանկյուն անցք կար, որի հատակին կղանքի կույտ էր: Ծակից ներսուդուրս էին անում ճանճերը: Բանտի մեջտեղում բաց, ուղղանկյուն բակ էր, իսկ դրա մեջտեղը՝ ջրհոր: Ջրհորը չուներ ջրահեռացում, այսինքն՝ բակը հաճախ ճահ-

ճանում էր, և ջուրը փտած համ ուներ: Լվացքի պարանները, որոնց վրա ձեռքով լվացված գուլպաներ ու մանկական տակաշորեր էին, իրար էին խփվում: Այստեղ բանտարկյալները հանդիպում էին իրենց այցելուներին, այստեղ եփում էին բրինձը, որը բերում էին նրանց ընտանիքները. բանտը սնունդ չէր տրամադրում: Բակը նաև խաղահրապարակ էր. Մարիամը իմացավ, որ երեխաներից շատերը ծնվել են «Վալայաթ»-ում ու երբեք այս պատերից դուրս աշխարհ չեն տեսել: Մարիամը նայում էր՝ ինչպես են վազվզում միմյանց հետևից, նայում էր՝ ինչպես է նրանց բոբիկ ոտքերից ցեխ թափվում: Նրանք ամբողջ օրը վազվզում էին, աշխույժ խաղեր հորինում՝ անտեղյակ «Վալայաթ»-ից ու իրենց մարմիններից եկող կղանքի և մեզի գարշահոտությունից, բանի տեղ չդնելով թալիբ պահակներին, քանի դեռ մեկը նրանց չի ապտակել:

Մարիամը այցելուներ չուներ: Դա առաջին և միակ բանն էր, որ նա խնդրեց թալիբ պաշտոնյաներին: Ոչ մի այցելու:

* * *

Մարիամի խցում կանանցից ոչ մեկը ծանր հանցագործության համար չէր բանտարկված. բոլորն այստեղ էին «տնից փախչելու» սովորական հանցագործության համար: Արդյունքում Մարիամը վարկանիշ ձեռք բերեց նրանց շրջանում, դարձավ մի տեսակ հայտնի անձ: Կանայք նրան ակնածանքով էին նայում, համարյա երկյուղածությամբ: Նրան վերմակներ էին առաջարկում: Միցում էին նրա հետ կերակուրը կիսելու համար:

Ամենաանկուշտը Նաղման էր, որը գրկում էր արմունկները և հետևում Մարիամին՝ ուր որ գնար: Նաղման այն տեսակի մարդկանցից էր, որ սիրում էր վատ լուրեր տարածել թե՛ ուրիշների, թե՛ իր մասին: Նա պատմեց, որ հայրը նրան խոստացել էր տալ իրենից մոտ երեսուն տարի մեծ դերձակի:

«Նրանից *գոհի*[137] հոտ է գալիս, ավելի քիչ ատամ ունի, քան մատներ»,— դերձակի մասին պատմեց Նաղման:

---

[137] Գոհ՝ կղանք

Նա փորձեց Գարդեզ փախչել տեղի մոլլայի որդու հետ, ում սիրահարվել էր: Նրանք հազիվ կարողացան դուրս գալ Քաբուլից: Երբ նրանց բռնեցին ու հետ ուղարկեցին, մոլլայի որդուն մտրակեցին, որից հետո նա ապաշխարեց և ասաց, որ Նաղման էր իրեն գայթակղել իր կանացի հմայքով: Ասաց՝ կախարդել էր: Խոստացավ, որ կնվիրի իրեն Ղուրանի ուսումնասիրությանը: Մոլլայի որդուն ազատեցին: Նաղմային դատապարտեցին 5 տարվա ազատազրկման:

Լավ էլ արեցին, ասաց Նաղման, որ բանտ նստեցրին: Նրա հայրը երդվել էր, որ ազատվելու հենց նույն օրը դանակ կդնի կոկորդին:

Նաղմային լսելով՝ Մարիամը հիշեց Սաֆիդ-կոհ լեռների վրա սառը աստղերի աղոտ փայլը և երկարավուն վարդագույն ամպերը անցյալի այն առավոտը, երբ Նանան ասաց իրեն. «Ինչպես կողմնացույցի սլաքը միշտ հյուսիսն է ցույց տալիս, այնպես էլ տղամարդու մեղադրող մատը միշտ կնոջն է գտնում: Մի՛շտ: Հիշի՛ր սա, Մարիա՛մ»:

* * *

Մարիամի դատավարությունը տեղի էր ունեցել նախորդ շաբաթ: Առանց իրավաբանական խորհրդի, առանց հրապարակային լսման, առանց ապացույցների խաչաձև քննության, առանց բողոքարկումների: Մարիամը մերժեց վկաներ ունենալու իր իրավունքը: Ամեն ինչ տանՀինգ րոպեից պակաս տևեց:

Մեջտեղում նստած դատավորը՝ թուլակազմ թալիբ, գլխավորն էր: Նա զարմանալիորեն հյուծված էր, դեղին, կաշենման մաշկ ուներ և գանգուր շիկակարմիր մորուք: Նա ակնոց էր դնում, որը մեծացնում էր նրա աչքերը և ակնհայտ դարձնում, թե որքան դեղին էին աչքի սպիտակուցները: Նրա պարանոցն ասես չափազանց նիհար էր գլխի վրայի խճճված ***թուրբանը*** պահելու համար:

— Ընդունո՞ւմ ես, համշիրա՛,— հոգնած ձայնով կրկին հարցրեց նա:

— Ընդունում եմ,— ասաց Մարիամը:

Մարդը գլխով արեց: Կամ գուցե չարեց: Դժվար էր դատել. նրա ձեռքերն ու գլուխը ակնհայտորեն ցնցվում էին՝ հիշեցնելով Մարիա-

մին Մոլլա Ֆայզուլլայի ցնցումները: Երբ թեյ էր խմում, բաժակը չէր վերցնում: Նշան էր անում ձախ կողմում նստած քառակուսի ուսերով մարդուն, որը հարգանքով մոտեցնում էր բաժակը նրա շրթունքներին: Դրանից հետո թալիբը մեղմորեն փակում էր աչքերը՝ երախտագիտության անաղմուկ և նրբակիրթ շարժում:

Մարիամը նրա մեջ զինաթափող հատկանիշ գտավ: Նրա խոսքում խորաթափանցության ու քնքշության երանգ կար: Ժպիտը համբերատար էր: Արհամարհանքով չէր նայում Մարիամին: Չէր դիմում նրան չարությամբ կամ մեղադրանքով, այլ ներողություն խնդրելու մեղմ տոնով:

— Դու լիովին հասկանո՞ւմ ես, թե ինչ ես ասում,— հարցրեց ոսկրոտ դեմքով թալիբը, ով նստած էր դատավորի աջ կողմում, ոչ թեյը տվողը: Այս մեկը երեքից ամենաերիտասարդն էր: Նա խոսում էր արագ, ընդգծված, ամբարտավան վստահությամբ: Նրան նյարդայնացնում էր, որ Մարիամը փաշթոյով չի խոսում: Նա Մարիամին թվաց այն տեսակի կռվարար երիտասարդներից, որոնք վայելում են իրենց հեղինակությունը, ամեն տեղ վիրավորանք են տեսնում, կարծում են, որ ի ծնե դատավճիռ կայացնելու իրավունք ունեն:

— Հասկանում եմ,— ասաց Մարիամը:

— Զարմանում եմ,— ասաց երիտասարդ թալիբը,— Աստված մեզ տարբեր կերպ է ստեղծել՝ կանանց ու տղամարդկանց: Մեր ուղեղները տարբեր են: Դուք ի վիճակի չեք մտածելու այնպես, ինչպես մենք: Արևմտյան բժիշկներն ու նրանց գիտությունը ապացուցել են սա: Ահա թե ինչու մենք պահանջում ենք ընդամենը մեկ արական սեռի վկա, բայց երկու իգական սեռի:

— Ես խոստովանում եմ արածս, եղբա՛յր,— ասաց Մարիամը,— բայց եթե ես չանեի, նա կսպաներ նրան: Նա խեղդում էր նրան:

— Այդպես ես ասում: Բայց կանայք միշտ ամեն տեսակի երդումներ են տալիս:

— Ճիշտ է:

— Վկաներ ունե՞ս քո *ամբաղից* բացի:

— Չունեմ,— ասաց Մարիամը:

— Դե ուրեմն,— նա բարձրացրեց ձեռքերն ու փռթկաց:

Հաջորդ խոսողը հիվանդ թալիբն էր:

— Ես Փեշավարում բժիշկ ունեմ,— ասաց,— Պակիստանցի երիտասարդ լավ տղա է: Մեկ ամիս առաջ տեսա նրան, հետո կրկին անցած շաբաթ: Ասացի՝ ճիշտն ասա՛ ինձ, ընկե՛ր, և նա ասաց՝ երեք ամիս, Միլլա՛ սահիբ, գուցե վեց՝ ամենաշատը: Ամեն ինչ Աստծո կամքով է, իհարկե:

Նա աննկատ գլխով արեց ձախ կողմի քառակուսի ուսերով մարդուն և մի կում էլ արեց նրա տված թեյից: Դողացող ձեռքով սրբեց բերանը:

— Ինձ չի վախեցնում հեռանալը այս կյանքից, որից իմ միակ որդին հեռացել է հինգ տարի առաջ, այս կյանքից, որը ստիպում է մեզ կրել վիշտը վշտի հետևից, երբ մենք արդեն ի զորու չենք տառապել: Ո՛չ, ես վստահ եմ, որ ուրախությամբ կընդունեմ իմ վերջը, երբ ժամանակը գա:

— Ինչը վախեցնում է ինձ, համշիրա՛, դա այն օրն է, երբ Աստված ինձ կկանչի իր մոտ ու կհարցնի՝ «Ինչո՞ւ չարեցիր այնպես, ինչպես ես եմ ասել, Միլլա: Ինչո՞ւ չինազանդվեցիր իմ օրենքներին: Ի՞նչ բացատրություն տամ Նրան, համշիրա՛: Ի՞նչպես արդարանամ, որ չեմ հետևել Նրա հրամաններին: Միակ բանը, ինչ կարող եմ անել, ինչ բոլորս կարող ենք անել մեզ տրված ժամանակահատվածում՝ շարունակել հետևել Նրա կողմից սահմանված օրենքներին: Որքան ավելի պարզ եմ տեսնում իմ վերջը, համշիրա՛, որքան մոտենում է իմ հատուցումը, այնքան ավելի վճռական եմ դառնում Նրա խոսքը կատարելու մեջ: Որքան էլ ցավալի դա չլինի:

Նա անհանգիստ շրջվեց բարձի վրա և ծռմռվեց:

— Ես քեզ հավատում եմ, երբ ասում ես, որ ամուսինդ տհաճ խառնվածքի մարդ էր,— նորից խոսեց նա՝ Մարիամի վրա սևեռելով ակնոցավոր հայացքը, որը և՛ խիստ էր, և՛ կարեկից:— Բայց ինձ վրդովեցնում է քո գործողությունների դաժանությունը, համշիրա՛: Ինձ անհանգստացնում է քո կատարածը. ինձ վրդովեցնում է, որ նրա փոքրիկ տղան լալիս էր վերևում, երբ դու դա արեցիր:

— Ես հոգնած եմ և մեռնում եմ, և ուզում եմ ողորմած լինել: Ես ուզում եմ ներել քեզ: Բայց երբ Աստված կանչի ինձ և ասի՝ «Բայց քեզ չի՛ վերապահված ներելը, Միլլա՛», ես ի՞նչ ասեմ:

Ընկերները գլխով արեցին ու հիացմունքով նայեցին նրան:

— Ինչ-որ բան ինձ ասում է, որ դու չար կին չես, համշիրա՛: Բայց դու չար գործ ես արել: Եվ պետք է հատուցես արածիդ համար: Շարիան այս հարցում աներկբա է: Այն ասում է, որ ես պետք է ուղարկեմ քեզ այնտեղ, որտեղ շուտով կմիանամ քեզ:

— Հասկանո՞ւմ ես, համշիրա՛:

Մարիամը նայեց իր ձեռքերին: Ասաց, որ հասկանում է:

— Թող Ալլահը ների քեզ:

Նախքան դուրս ուղեկցելը Մարիամին տվեցին մի փաստաթուղթ և ասացին, որ ստորագրի իր հայտարարության և մոլլայի դատավճռի տակ: Մինչ երեք թալիբները հետևում էին, Մարիամը գրեց իր անունը՝ *թեմիմ, թերե, թեյահ, թեմիմ*, և հիշեց այն վերջին անգամը, երբ ստորագրեց մի փաստաթղթի տակ՝ քսանյոթ տարի առաջ Ջալիլի սեղանի մոտ մեկ այլ մոլլայի ուշադիր հայացքի ներքո:

* * *

Մարիամը բանտում տասը օր անցկացրեց: Նա նստում էր խցի պատուհանի մոտ և հետևում բակի բանտային կյանքին: Երբ փչում էին ամառային քամիները, նա նայում էր՝ ինչպես են թղթի կտորները օդի հոսանքից կատաղած պտտվում, այս ու այն կողմ նետվում, թռչում բանտի պատերից վեր: Նայում էր՝ ինչպես են քամիները փոշու խռովություն բարձրացնում, մոլեգին պարույրներով անցնում բակով: Բոլորը՝ պահակները, բանտարկյալները, երեխաները, Մարիամը, դեմքները խրում էին արմունկների մեջ, բայց փոշուց փրկություն չկար: Այն մտնում էր ականջների, քթանցքների, թարթիչների, մաշկի ծալքերի, սեղանատամների միջև ընկած տարածքի մեջ: Միայն մթնշաղին էին քամիները հանդարտվում: Իսկ հետո, եթե փչում էին երեկոյան զեփյուռները, այնքան մեղմ էին, ասես քավում էին ցերեկային քույրերի սանձարձակությունը:

«Վալայաթ»-ում Մարիամի վերջին օրը Նաղման նրան մանդարին տվեց: Դրեց այն Մարիամի ափի մեջ և ծալեց մատները դրա շուրջը: Հետո լաց եղավ:

— Քեզանից լավ ընկեր երբեք չեմ ունեցել,— ասաց:

Օրվա մնացած մասը Մարիամն անցկացրեց պատուհանի ճաղերից ներքև գտնվող բանտարկյալներին նայելով: Ինչ-որ մեկը ճաշ էր պատրաստում, և պատուհանի միջով եկավ չամանով բուրավետ ծխի և տաք օդի հոսքը: Մարիամը նայում էր՝ ինչպես են երեխաները աչքակապուկ խաղում: Երկու փոքրիկ աղջիկ մի ոտանավոր էին երգում, և Մարիամը հիշեց այն մանկությունից, հիշեց՝ ինչպես էր երգում Ջալիլը, երբ քարին նստած ձուկ էին բռնում:

Ուր է, ուր է, ծիտիկն ուր է,
Ճամփի վրայի փոսում ջուր է:
Ձուկը եզրակին նստեց,
Խմեց, ընկավ ու խեղդվեց:

Նախորդ գիշեր Մարիամը խառը երազներ տեսավ: Տեսավ խճաքարեր՝ տասնմեկ հատ՝ ուղղահայաց դասավորված: Ջալիլին՝ կրկին երիտասարդ, հաղթական ժպիտով, կզակի փոսիկով ու քրտինքի բծերով, բաճկոնը ուսին գցած, որ վերջապես եկել էր՝ դստերը իր փայլուն սև «Բյուիկ Ռոուդմաստերով» զբոսանքի տանելու: Տեսավ Մոլլա Ֆայզուլլային, որը, թզբեհը պտտելով, զբոսնում է նրա հետ առվի երկայնքով, նրանց երկվորյակ ստվերները սահում են ջրի վրայով և խոտածածկ ափերով, որոնք ցողված են կապույտ վայրի հիրիկով, ինչից այս երազում մեխակի հոտ էր գալիս: Երազում տեսավ Նանային՝ *քոլբայի* դռան մոտ, որ աղոտ ու հեռավոր ձայնով նրան ընթրիքի էր կանչում, իսկ Մարիամը խաղում էր զով, խճճված խոտերի մեջ, որտեղ կանաչի ամենատարբեր երանգների մեջ սողում էին մրջյունները, վազվզում էին բզեզները, թռչկոտում էին մորեխները: Փոշոտ ճանապարհով գնացող անվասայլի ճռռոցը: Կովերի զանգակների ծնգոցը: Ոչխարներ մայունը բլրի վրա:

* * *

«Ղազի» մարզադաշտի ճանապարհին Մարիամը վեր ցատկեց բեռնատարի մեջ, երբ այն շրջանցում էր փոսերը, և անիվների տակից խճաքարեր էին դուրս ցայտում: Ցատկելուց նրա պոչուկը

ցավում էր: Դիմացը նստած երիտասարդ զինված թալիբը նայում էր նրան:

Մարիամը մտածում էր՝ արդյոք նա է լինելու՝ այս սիրալիր երևացող երիտասարդը՝ խոր պայծառ աչքերով և թեթևակի սուր դեմքով, որ ցուցամատի սև եղունգով թփթփացնում է բեռնատարի կողին:

— Սոված ես, մայրիկ,— հարցրեց:

Մարիամն օրորեց գլուխը:

— Ես թխվածքաբլիթ ունեմ: Լավն է: Վերցրու, եթե սոված ես: Դեմ չեմ:

— Ո՛չ: Թաշաքոր, եղբայր:

Նա գլխով արեց, բարեսրտորեն նայեց նրան:

— Վախենում ես, մայրիկ:

Կոկորդին գունդ կանգնեց: Դողացող ձայնով Մարիամը նրան ասաց ճշմարտությունը:

— Այո՛, շատ եմ վախենում:

— Ես հորս նկարն ունեմ,— ասաց թալիբը,— նրան չեմ հիշում: Ժամանակին հեծանիվներ վերանորոգող էր, այդքանը գիտեմ: Բայց չեմ հիշում՝ ինչպես էր շարժվում, հասկանում ես, ինչպես էր ծիծաղում, չեմ հիշում նրա ձայնը:— Նա նայեց հեռու, հետո նորից Մարիամին:— Մայրս ասում էր, որ նա իր իմացած ամենահամարձակ մարդկանցից էր: Առյուծի պես, ասում էր: Բայց մայրս ինձ պատմեց, որ այն առավոտ, երբ կոմունիստները նրան տարան, հայրս երեխայի պես լալիս էր: Ես քեզ սա պատմում եմ, որ իմանաս՝ վախենալը նորմալ է: Ամաչելու բան չկա, մայրիկ:

Այդ օրն առաջին անգամ Մարիամը մի փոքր լաց եղավ:

* * *

Հազարավոր աչքեր նրան էին նայում: Լեփ-լեցուն նստարաններին պարանոցներ էին ծռվում՝ լավ դիտակետ գտնելու համար: Լեզուներ էին ճպպացնում: Մարզադաշտով խշշոց անցավ, երբ Մարիամին օգնեցին բեռնատարից իջնելու: Մարիամը պատկերացրեց, թե ինչպես են օրորվում գլուխները, երբ բարձրախոսով հայտարարվեց նրան հանցանքի մասին: Բայց նա վեր չնայեց տես-

նելու՝ դրանք օրորվում են պարսավանքով, թե՞ գթությամբ, նախատինքով, թե՞ խղճահարությամբ: Մարիամը այդ ամենի նկատմամբ կուրացել էր:

Այդ առավոտյան նա վախենում էր, որ մի հիմարություն կանի, որ աղաչելու, ողբալու տեսարան կսարքի: Վախենում էր, որ կարող է ծղրտալ, փսխել կամ նույնիսկ թացացնել իրեն, որ վերջին պահերին իրեն կդավաճանի կենդանական բնազդը կամ մարմնական անշնորհքությունը: Բայց երբ նրան ստիպեցին իջնել բեռնատարից, Մարիամի ոտքերը չթուլացան: Ձեռքերը չդողացին: Նրան հարկավոր չեղավ քարշ տալ: Իսկ երբ երերաց, մտածեց Ջալմայի մասին, ումից նա խլել էր իր կյանքի ամենամեծ սերը, որի օրերն այժմ պետք է լցվեին հոր անհետանալու վշտով: Եվ Մարիամի քայլը կայունացավ, և նա կարողացավ առանց բողոքելու քայլել:

Ձինված տղամարդը մոտեցավ նրան և ասաց, որ քայլի դեպի հարավային դարպասը: Մարիամը զգաց, որ ամբոխը լարվեց սպասումից: Նա վեր չնայեց: Աչքերը գետնին պահեց՝ սեփական ստվերին, իր հետևից քայլող դահճի ստվերին:

Չնայած գեղեցիկ պահերին, Մարիամը գիտեր, որ կյանքը մեծ մասամբ բարի չեղավ իր նկատմամբ: Բայց վերջին քսան քայլը անելիս նա ցանկանում էր, որ կյանքն ավելի երկար լիներ: Նա կցանկանար նորից տեսնել Լեյլային, լսել նրա զրնգուն ծիծաղը, մեկ անգամ էլ նստել նրա հետ ու աստղազարդ երկնքի տակ *չայ* ու հալվայի մնացորդներ վայելել: Նա ցավում էր, որ երբեք չի տեսնի Ազիզային մեծանալիս, չի տեսնի այն գեղեցիկ երիտասարդ կնոջը, ինչպիսին նա կդառնար մի օր, հարսանիքին ձեռքերը հինայով չի ներկի և *նոքուլ* կոնֆետներ չի շպրտի: Երբեք չի խաղա Ազիզայի երեխաների հետ: Այնքան շատ կուզեր այդ բանը՝ ծերանալ ու խաղալ Ազիզայի երեխաների հետ:

Դարպասի մոտ Մարիամի հետևից քայլող տղամարդն ասաց, որ կանգնի: Մարիամը կանգնեց: Բուրքայից խաչուփաչ ցանցի միջով նա տեսավ՝ ինչպես է տղամարդու ձեռքերի ստվերը բարձրացնում «Կալաշնիկովի» ստվերը:

Մարիամն այնքան շատ բան էր ցանկանում այդ վերջին պահերին: Բայց երբ փակեց աչքերը, այլևս ոչ մի ափսոսանք չկար, և

նրան համակեց խաղաղության զգացողությունը: Նա մտածեց, որ եկել էր այս աշխարհ որպես խոնարհ գյուղացու *հարամի* երեխա, չնախատեսված բան, ցավալի, տխուր պատահար: Միլախոտ: Եվ այնուամենայնիվ, նա հեռանում էր աշխարհից որպես մի կին, որը սիրում էր և սիրված էր: Նա հեռանում էր որպես ընկեր, ուղեկից, խնամակալ: Մայր: Վերջապես՝ նշանակություն ունեցող մարդ: Ո՛չ: Այնքան էլ վատ չէ, մտածեց Մարիամը, որ այսպես պետք է մահանա: Այնքան էլ վատ չէ: Սա անօրինական կյանքի սկզբի օրինական ավարտ էր:

Մարիամի վերջին մտքերը Ղուրանից մի քանի բառեր էին, որոնք նա մրմնջաց քթի տակ:

Նա է ճշմարտությամբ ստեղծել երկինքն ու երկիրը. Նա ցերեկը պարուրում է գիշերով, և գիշերը պարուրում է ցերեկով, Նրան են հնազանդ արևն ու լուսինը. յուրաքանչյուրը իր նշանակված ժամկետն ունի. անշուշտ, Նա Մեծազոր է և Ներողամիտ:

— Ծնկի՛ր,— ասաց թալիբը:

Ո՛վ իմ Տեր: Ների՛ր և ողորմի՛ր, քանզի դո՛ւ ես ամենաողորմածը:

— Ծնկի՛ր այստեղ, համշիրա՛, ու ներքև՛ նայիր:

Վերջին անգամ Մարիամն արեց այնպես, ինչպես նրան ասացին:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

49

Թարիքը հիմա գլխացավեր ունի:

Որոշ գիշերներ Լեյլան արթնանում և տեսնում է, որ նա իրենց մահճակալի եզրին ճոճվում է՝ շապիկը գլխին քաշած: Իր գլխացավերը սկսվեցին Նասիր Բաղում, նա պատմեց, բանտում վատթարացան: Գլխացավից երբեմն փսխում է, մի աչքով կուրանում: Ասում է՝ ասես մսավաճառը դանակը խրում է քունքի մեջ, դանդաղ պտտում ուղեղում ու հանում մյուս կողմից:

«Նույնիսկ մետաղական համ եմ առնում, երբ դրանք սկսվում են»:

Երբեմն Լեյլան կտոր է խոնավեցնում ու դնում նրա ճակատին, և դա մի փոքր օգնում է: Փոքրիկ սպիտակ հաբերը, որոնք Սայիդի բժիշկը տվել էր Թարիքին, նույնպես օգնում են: Բայց գիշերներ են լինում, երբ Թարիքին ոչինչ չի մնում անելու, քան գլուխը բռնել ու տնքալ. աչքերն արյունակալում են, քթից հոսում է: Լեյլան նստում է հետը, երբ նա այս վիճակում է, տրորում է պարանոցի հետևը, ձեռքերն իր ափերի մեջ առնում և իր ձեռքում զգում է նրա հարսանեկան մատանու մետաղի սառնությունը:

Նրանք ամուսնացան Միւրի ժամանելու օրը: Սայիդը թեթևացած տեսք ուներ, երբ Թարիքն ասաց, որ ամուսնանալու են: Նա ստիպված չեղավ կոծկել իր հյուրանոցում չամուսնացած զույգի ապրելու փաստը: Սայիդն ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին Լեյլան նրան պատկերացնում էր՝ կարմրադեմ և ուլունք աչքերով: Նա սպիտակող բեղեր ունի, որոնց ծայրերը պտտում է և սուր ծայր ստանում, և երկար սպիտակ մազերի փունջ, որը ճակատից հետ է սանրում: Նա քաղցրախոս, քաղաքավարի մարդ է՝ չափված խոսելաձևով և նրբագեղ շարժումներով:

Հենց Սայիդն էր, ով այդ օրը կանչեց ընկերներից մեկին և մոլլային՝ *նիքա* կատարելու համար, Սայիդն էր, որ Թարիքին մի կողմ քաշեց և փող տվեց: Թարիքը չէր վերցնում, բայց Սայիդը պնդեց: Հետո Թարիքը գնաց Միլլ փողոց և վերադարձավ երկու պարզ, բարակ հարսանեկան մատանիներով: Նրանք ամուսնացան այդ երեկո՝ երեխաներին քնեցնելուց հետո:

Հայելու մեջ՝ կանաչ քողի տակ, որը մոլլան գցեց նրանց գլխներին, Լեյլայի աչքերը հանդիպեցին Թարիքի աչքերին: Ո՛չ մի արցունք, ո՛չ մի հարսանեկան ժպիտ, հարատև սիրո երդումների ո՛չ մի շշնջյուն: Լռության մեջ Լեյլան նայեց իրենց արտացոլանքին՝ ժամանակից շուտ ծերացած դեմքերին, աչքերի տակի պարկերին, կնճիռներին ու ծալքերին, որոնք այժմ դաջվել էին նրանց երբեմնի մաքուր, երիտասարդ դեմքերին: Թարիքը բացեց բերանը և սկսեց ինչ-որ բան ասել, բայց հենց այդ պահին ինչ-որ մեկը քաշեց քողը, և Լեյլան չլսեց, թե նա ինչ ասաց:

Այդ գիշեր նրանք պառկեցին անկողնում որպես ամուսին և կին, մինչ երեխաները ներքևը ֆսֆսում էին իրենց մահճակալների մեջ: Լեյլան հիշեց, թե որքան հեշտ էին Թարիքի հետ առաջ սկսում քչփչալ, երբ ավելի երիտասարդ էին, նրանց խոսակցության հապճեպ, արագ հոսքը՝ միշտ իրար ընդհատելով, իրար օձիքից քաշելը՝ տեսակետը ապացուցելու համար, իրենց ծիծաղկոտությունը, հիանալու պատրաստակամությունը: Այնքան շատ բան էր տեղի ունեցել այդ մանկության օրերից հետո, այնքան բան էր պետք պատմել: Բայց այդ առաջին գիշերը պատահածի ահռելիությունը պապանձեց Լեյլային: Այդ գիշեր Թարիքի կողքին լինելը արդեն օրինություն էր: Արդեն օրինություն էր իմանալ, որ նա այստեղ է, զգալ իր կողքին նրա ջերմությունը, պառկել նրա կողքին՝ գլուխ գլխի, Թարիքի աջ ձեռքը իր ձախ ձեռքում:

Գիշերվա կեսին, երբ Լեյլան ծարավից արթնացավ, տեսավ, որ նրանց ձեռքերը դեռ սեղմում են իրար այնքան ուժգին, որ հոդերը սպիտակել են. երեխաներն են այսպես հուզված բռնում փուչիկի թելը:

* * *

Լեյլան սիրում է Մուրիի զով, մառախլապատ առավոտները և դրա շողշողուն մթնշաղները, գիշերային երկնքի մուգ փայլը, սոճիների կանաչը, ամուր ծառերի բներով վերուվար անող սկյուռիկների փափուկ շագանակագույնը, հանկարծակի հորդառատ անձրևները, որոնց պատճառով Մոլլ փողոցի գնորդները կռվում են ծածկի համար: Նրան դուր են գալիս հուշանվերների խանութները և զբոսաշրջիկների համար նախատեսված տարբեր հյուրանոցները, չնայած տեղացիները բողոքում են անընդհատ շինարարությունից, ենթակառուցվածքների ընդլայնումից, որոնք, նրանց խոսքերով, աղճատում են Մուրիի բնական գեղեցկությունը:

Լեյլայի համար տարօրինակ է, որ մարդիկ ողբում են շենքերի կառուցումը: Քաբուլում դա տոնում էին:

Նրան դուր է գալիս, որ իրենք լոգասենյակ ունեն, ոչ թե տնից դուրս արտաքնոց, այլ իսկական լոգարան՝ գործող զուգարանով, ցնցուղով ու լվացարանով, որի վրա երկու ծորակ կա, որոնցից դաստակի շարժումով կարող է ջուր ստանալ՝ թե՛ տաք, թե՛ սառը: Նա սիրում է արթնանալ Ալյոնայի առավոտվա մայոցից և կռվարար, բայց անշառ խոհարար Ադիբայի ձայնից, որը խոհանոցում հրաշքներ է գործում:

Երբեմն, երբ Լեյլան նայում է քնած Թարիքին, մինչ իր երեխաները քնի մեջ մռթմռթում ու շարժվում են, նրա կոկորդում հավաքվում է երախտագիտության զգացումը, և աչքերը լցվում են:

Առավոտյան Լեյլան հետևում է Թարիքին սենյակից սենյակ: Ջնգում են գոտկատեղին ամրացված օղակից կախված բանալիները, իսկ պատուհաններ մաքրելու հեղուկի շիշը կախված է նրա ջինսի գոտիից: Լեյլան բերում է դույլ՝ մեջը կտորներ, ախտահանիչ միջոց, զուգարանի խոզանակ ու կահույքը փայլեցնող հեղուկ: Ազիզան գալիս է հետևներից՝ մի ձեռքում հատակ մաքրելու փայտը, մյուսում՝ լոբու հատիկներով լցոնված տիկնիկ, որը Մարիամն էր պատրաստել նրա համար: Ջալմայը դժկամորեն հետևում է նրանց, մռայլ, միշտ մի քանի քայլ հետ:

Լեյլան մաքրում է հատակը փոշեկուլով, հավաքում մահճակալը, սրբում փոշին: Թարիքը լվանում է լոգասենյակի լվացարանն

ու լոգարանը, մաքրում է զուգարանը ու լինոլեումով պատված հատակը: Դարակներին մաքուր սրբիչներ, փոքրիկ շամպունի շշեր ու նուշի հոտով օճառի կտորներ է դարսում: Ազիզան ստանձնել է պատուհաններին հեղուկ ցանելն ու սրբելը: Աշխատելիս տիկնիկը միշտ կողքին է:

Նիքայից մի քանի օր անց Լեյլան պատմեց Ազիզային Թարիքի մասին:

Տարօրինակ, գրեթե անհանգստացնող բան կա, մտածում է Լեյլան, Ազիզայի ու Թարիքի միջև: Ազիզան արդեն ավարտում է նրա նախադասությունները, իսկ Թարիքը՝ Ազիզայի: Տալիս է նրան իրը, նախքան նա կխնդրի այն: Մտերմիկ ժպիտներ են փոխանակում ճաշի սեղանի շուրջը, կարծես բոլորովին էլ օտար չեն, այլ երկարատև բաժանումից հետո վերամիավորված ընկերներ:

Ազիզան մտազբաղ նայում էր ձեռքերին, երբ Լեյլան պատմեց նրան:

— Նա ինձ դուր է գալիս,— ասաց Ազիզան երկար դադարից հետո:

— Նա սիրում է քեզ:

— Նա՞ է ասել:

— Դրա կարիքը չկա, Ազիզա՛:

— Պատմի՛ր ինձ մնացածը, մամա՛: Պատմի՛ր, որ իմանամ:

Եվ Լեյլան պատմեց:

— Քո հայրը լավ մարդ է: Լավագույն մարդն է, որին երբևէ ճանաչել եմ:

— Իսկ եթե նա հեռանա՞,— հարցրեց Ազիզան:

— Նա երբեք չի հեռանա: Նայի՛ր ինձ, Ազիզա՛: Հայրդ երբեք քեզ չի լքի ու երբեք չի հեռանա:

Ազիզայի դեմքին եկած թեթևությունից Լեյլայի սիրտը ճմլվեց:

* * *

Թարիքը Զալմային գնել է ճոճվող ձի, նրա համար սայլակ է սարքել: Մի բանտարկյալից սովորել է թղթե կենդանիներ պատրաստել, և Զալմայի համար անթիվ թղթի կտորներ է ծալել, կտրել

և ծռելով առյուծներ ու կենգուրուներ, ձիեր և վառ փետուրներով թռչուններ սարքել: Բայց այս նախերգանքները Զալմայը անքաղաքավարիորեն, երբեմն թունոտ մերժում է:

— Դու էշ ես,— գոռում է նա,— ես չեմ ուզում քո խաղալիքները:

— Զալմա՛յ,— բացականչում է Լեյլան:

— Ոչինչ,— ասում է Թարիքը,— Լեյլա՛, ամեն ինչ կարգին է: Թո՛ղ:

— Դու իմ բաբա ջանը չես: Իմ իսկական բաբա ջանը ճամփորդում է, իսկ երբ վերադառնա, քեզ կծեծի: Ու դու չես կարողանա փախչել, որովհետև նա երկու ոտք ունի, իսկ դու՝ մեկ:

Գիշերները Լեյլան սեղմում է Զալմային կրծքին ու նրա հետ Բաբալուի աղոթքներն ասում: Երբ Զալմայը հարցնում է, նա նորից սուտ է ասում, ասում է, որ նրա բաբա ջանը հեռացել է, և ինքը չգիտի, թե երբ է վերադառնալու: Լեյլան ատում է սա և զզվում ինքն իրենից՝ երեխային այսպես ստելու համար:

Լեյլան գիտի, որ այս ամոթալի սուտը պետք է նորից ու նորից պատմել: Ստիպված կլինի, քանի որ Զալմայը հարցնելու է ճոճանակից ցած թռչելիս, ցերեկային քնից արթնանալիս, իսկ ավելի ուշ, երբ այնքան մեծանա, որ կկապի սեփական կոշիկների քուղերը, ինքնուրույն դպրոց կգնա, սուտը պետք է նորից ասվի:

Ինչ-որ պահի, Լեյլան գիտի, հարցերը կպակասեն: Կամաց-կամաց Զալմայը կդադարի զարմանալուց, թե ինչու է հայրը լքել իրեն: Նա այլևս չի նկատի հորը լուսացույցների մոտ, փողոցով դանդաղ անցնող կամ *սամովարի* տներում թեյ խմող ծեր կռացած տղամարդկանց մեջ: Եվ մի օր էլ գետի երկայնքով թափառելիս կամ անեղծ ձյունածածկ դաշտին նայելիս նա կհասկանա, որ հոր անհետանալը այլևս բաց, անամոք վերք չէ: Որ այն դարձել է լրիվ այլ բան՝ ավելի մեղմ ու անցավ: Առասպելի պես: Մի բան, որին պետք է ակնածանքով վերաբերվել, առեղծված համարել:

Լեյլան երջանիկ է այստեղ՝ Մուրիում: Բայց դա հեշտ երջանկություն չէ: Այս երջանկությունը գին ունի:

* * *

Հանգստյան օրերին Թարիքը Լեյլային ու երեխաներին տանում է Մոլլ, որի երկայնքով խանութներ են, որտեղ մանր զարդեր են վաճառում, իսկ կողքին XIX դարի կեսերին կառուցված անգլիական եկեղեցի է: Թարիքը փողոցի առևտրականներից նրանց համար գնում է կծու *չաքլի* քյաբաբներ: Նրանք զբոսնում են տեղացիների և եվրոպացիների բազմության մեջ, նրանց բջջային հեռախոսների ու թվային ֆոտոխցիկների միջով, հարթավայրերի շոգից խուսափող փունջաբցիների միջով:

Ժամանակ առ ժամանակ նրանք ավտոբուսով ուղևորվում են դեպի Քաշմիր Փոինթ[138]: Այնտեղից Թարիքը ցույց է տալիս նրանց Ջհելում գետի հովիտը, սոճիներով պատված լանջերը և փարթամ, խիտ անտառապատ բլուրները, որտեղ, նրա խոսքերով, դեռ կարելի է նկատել ճյուղից ճյուղ թռչող կապիկների: Գնում են նաև թխկիներով լի Նաթիա Գալի[139], որ Մուրիից երեսուն կիլոմետր է հեռու, որտեղ Թարիքը բռնում է Լեյլայի ձեռքը, և նրանք քայլում են ստվերախիտ ճանապարհով դեպի նահանգապետի տունը: Կանգ են առնում բրիտանական հին գերեզմանատան մոտ կամ տաքսի են վարձում դեպի լեռան գագաթը, որպեսզի տեսնեն ներքևի կանաչ, մառախլապատ հովիտը:

Երբեմն այս զբոսանքների ժամանակ, երբ անցնում են խանութի պատուհանի մոտով, Լեյլան տեսնում է իրենց արտացոլանքը: Ամուսին, կին, դուստր, որդի: Անծանոթ մարդկանց աչքերում, նա գիտի, իրենք սովորական ընտանիք են՝ առանց գաղտնիքների, ստերի ու ափսոսանքի:

* * *

Ազիզան մղձավանջներ է տեսնում, որոնցից ծղրտալով արթնանում է: Լեյլան ստիպված պառկում է կողքին, թևքով չորացնում այտերը, հանգստացնում է նրան, որպեսզի քնի:

---

[138] Քաշմիր Փոինթ՝ գեղատեսիլ վայր Մուրիում, որտեղից երևում են Քաշմիրի լեռները:

[139] Նաթիա Գալի՝ լեռնային առողջարանային քաղաք

Լեյլան իր երազներն է տեսնում: Երազներում նա միշտ վերադառնում է Քաբուլի տունը, քայլում է միջանցքով, բարձրանում աստիճաններով: Նա մենակ է, բայց դռների հետևից լսում է արդուկի ռիթմիկ ֆշշոցը, սավանների սոսափյունն ու ծալվելու ձայնը: Երբեմն լսում է ցածր կանացի ձայն, որը Հերաթի հին երգեր է մռմռում: Բայց երբ Լեյլան ներս է մտնում, սենյակը դատարկ է: Այնտեղ ոչ ոք չկա:

Երազները ցնցում են Լեյլային: Նա արթնանում է՝ քրտինքով պատված, արցունքներից վառվող աչքերով, ունայնացած հոգով: Ամեն անգամ:

50

Այդ սեպտեմբերի մի կիրակի օր Լեյլան պառկեցնում է մրսած Զալմային, որ մի քիչ ննջի, երբ Թարիքը ներս է վազում իրենց բունգալոն:

— Լսե՞լ ես,— ասում է նա մի փոքր շնչահեղձ,— սպանեցին նրան: Ահմադ Շահ Մասուդին: Նա մահացել է:

— Ի՞նչ:

Դռան միջից Թարիքը պատմում է իր իմացածը:

— Ասում են՝ նա հարցազրույց էր տվել երկու լրագրողների, որոնք պնդում էին, որ Մարոկկոյից բելգիացիներ են: Զրույցի ընթացքում պայթում է տեսախցիկում թաքնված ռումբը: Սպանում է Մասուդին և լրագրողներից մեկին: Մյուսին փախչելուց են կրակելով սպանում: Հիմա ասում են՝ լրագրողները հավանաբար Ալ-Քաիդայից էին:

Լեյլան հիշում է Ահմադ Շահ Մասուդի պաստառը, որը Մամին մեխել էր իր ննջասենյակի պատին: Մասուդը առաջ է հակվել՝ մի հոնքը բարձր, դեմքը կենտրոնանալուց խոժոռ, ասես հարգանքով լսում է ինչ-որ մեկին: Լեյլան հիշում է, թե որքան երախտապարտ էր Մամին, որ Մասուդն իր որդիների թաղման ժամանակ գերեզմանին աղոթք էր ասել, ինչպես էր նա պատմում բոլորին այդ մասին: Նույնիսկ երբ պատերազմ սկսվեց նրա խմբակցության և մյուսների միջև, Մամին չէր մեղադրում նրան: ***Նա լավ մարդ է***, ասում էր: ***Նա խաղաղություն է ուզում: Նա ցանկանում է վերակառուցել***

Աֆղանստանը: Բայց նրան թույլ չեն տալիս: Պարզապես թույլ չեն տալիս: Մամիի համար, նույնիսկ ամենավերջում, նույնիսկ, երբ ամեն ինչ այդքան սարսափելի ավարտ ունեցավ, և Քաբուլը փլատակների մեջ էր, Մասուդը դեռ Փանջշիրի Առյուծն էր:

Լեյլան այդքան ներողամիտ չէ. Մասուդի բռնի վախճանը նրան ուրախություն չի պատճառում, բայց նա լավ է հիշում՝ ինչպես էին նրա օրոք թաղամասեր հողին հավասարվում, ավերակների միջից մարմիններ էին հանում, երեխաների թաղումից մի քանի օր հետո նրանց ձեռքերն ու ոտքերը հայտնաբերում էին տանիքների կամ ծառի բարձր ճյուղերի վրա: Նա շատ հստակ հիշում է Մամիի հայացքը հրթիռն ընկնելուց ակնթարթ առաջ, ինչքան էլ փորձել էր մոռանալ մոտակայքում ընկած Բաբիի անգլուխ մարմինը, նրա անթև վերնաշապիկի վրայի կամուրջի աշտարակը մառախուղի և արյան մեջ:

— Հուղարկավորություն կլինի,— ասում է Թարիքը,— համոզված եմ: Երևի Ռավալփինդիում: Մեծ հուղարկավորություն կլինի:

Զալմայը, որը գրեթե քնած էր, այժմ նստած է, բռունցքներով աչքերն է տրորում:

Երկու օր անց նրանք մաքրում են մի սենյակ, երբ իրարանցման ձայն են լսում: Թարիքը վայր է գցում հատակ մաքրելու փայտը և շտապ դուրս է վազում: Լեյլան՝ հետևից:

Աղմուկը գալիս է հյուրանոցի նախասրահից: Ընդունարանի սեղանի աջ կողմում հանգստի վայր է՝ մի քանի աթոռներ և դեղնադարչնագույն թավշով պաստառապատված երկու բազմոց: Անկյունում՝ բազմոցների դիմաց, հեռուստացույց է, և Սայիդը, դռնապանը և մի քանի հյուրեր հավաքվել են դրա դիմաց:

Լեյլան ու Թարիքը հրելով ներս են մտնում:

Հեռուստատեսությամբ *ԲԻԲԻՍԻ-ն* է: Էկրանին մի շենք է՝ աշտարակ, որի վերևի հարկերից սև ծուխ է բարձրանում: Թարիքը Սայիդին ինչ-որ բան է ասում, իսկ Սայիդը պատասխանում է, երբ էկրանի անկյունից ինքնաթիռ է հայտնվում: Այն բախվում է հարակից աշտարակին և պայթելով այնպիսի կրակի գունդ ստեղծում, որի նմանը Լեյլան երբևէ չի տեսել: Նախասրահում բոլորը միասին ճչում են:

Երկու ժամից երկու աշտարակները փլուզվում են:

Շուտով բոլոր հեռուստաընկերությունները խոսում են Աֆղանստանի, Թալիբանի և Ուսամա բեն Լադենի մասին:

* * *

— Լսե՞լ ես՝ ինչ է ասել Թալիբանը,— հարցնում է Թարիքը,— բեն Լադենի մասին:

Ազիզան նստած է նրա դիմաց՝ մահճակալին, մտազբաղ նայում է տախտակին: Թարիքը նրան սովորեցրել է շախմատ խաղալ: Նա այժմ խոժոռվում է և թփթփացնում ստորին շրթունքին՝ ընդօրինակելով հոր ժեստերը, երբ նա որոշում է հաջորդ քայլը:

Զալմայի մրսածությունը մի փոքր թեթևացել է: Նա քնած է, և Լեյլան «Վիքս»[140] է քսում կրծքին:

— Լսել եմ,— ասում է նա:

Թալիբանը հայտարարել է, որ իրենք չեն հանձնի բեն Լադենին, քանի որ նա *մեհման* է՝ հյուր, ով ապաստանել է Աֆղանստանում, իսկ հյուրին հանձնելը *փաշթունվալի* էթիկայի կանոններին դեմ է: Թարիքը դառնորեն ծիծաղում է, և Լեյլան դրանից հասկանում է, որ նրա համար զազրելի է փաշթունների ազնվական սովորույթի խեղաթյուրումը, իր ժողովրդի ավանդույթի այս սխալ մեկնաբանումը:

Հարձակումներից մի քանի օր անց Լեյլան և Թարիքը կրկին հյուրանոցի նախասրահում են: Հեռուստացույցի էկրանից խոսում է Ջորջ Բուշը: Նրա հետևում մեծ ամերիկյան դրոշ է: Մի պահ նրա ձայնը դողում է, և Լեյլան կարծում է, որ նա լացելու է:

Սայիդը, որը անգլերեն է խոսում, նրանց բացատրում է, որ Բուշը հենց նոր պատերազմ է հայտարարել:

— Ո՞ւմ,— հարցնում է Թարիքը:

— Առաջինը՝ քո երկրին:

---

[140] «Վիքս»՝ մրսածության դեմ քսուք: Տարածված է ԱՄՆ-ում:

* * *

— Միգուցե այդքան էլ վատ բան չի,— ասաց Թարիքը:

Նրանք ավարտել էին սեր անելը: Նա պառկած է Լեյլայի կողքին՝ գլուխը նրա կրծքին, ձեռքով գրկել է փորը: Առաջին անգամները դժվարություններ առաջացան: Թարիքը անընդհատ ներողություն էր խնդրում, Լեյլան՝ անընդհատ հանգստացնում: Դժվարություններ դեռ կան, բայց ոչ ֆիզիկական, այլ կազմակերպչական: Հյուղակը, որտեղ նրանք ապրում են երեխաների հետ, փոքր է: Երեխաները քնում են նրանց տակ գտնվող փոքրիկ մահճակալներին, ուստի մեկուսանալ չի հաջողվում: Շատ անգամներ Լեյլան ու Թարիքը սեր են անում լռության մեջ՝ վերահսկվող, լուռ կիրքով, վերմակի տակ ամբողջությամբ հագնված, եթե երեխաները հանկարծ ընդհատեն: Մշտապես զգուշանում են սավանների սոսափյունից, մահճակալի ճռռացող զսպանակներից: Բայց Լեյլայի համար Թարիքի կողքին լինելն արժե այդ անհարմարությունները: Երբ սեր են անում, Լեյլան իրեն խարսխված է զգում, պատսպարված: Նրա անհանգստությունը, որ իրենց միասնական կյանքը ժամանակավոր օրինություն է, որ այն շուտով կրկին ծվեն-ծվեն կլինի, ցրվում է: Բաժանման վախը չքանում է:

— Ի՞նչ նկատի ունես,— հարցնում է Լեյլան:

— Այն, ինչ կատարվում է տանը: Ի վերջո, գուցե այդքան էլ վատ չի լինի:

Տանը կրկին ռումբեր են ընկնում, այս անգամ ամերիկյան ռումբեր: Սավանները փոխելիս ու փոշեկուլով մաքրելիս Լեյլան ամեն օր հեռուստատեսությամբ պատերազմի տեսարաններ է տեսնում: Ամերիկացիները կրկին զինել էին պարագլուխներին և օգնության կանչել Հյուսիսային դաշինքին՝ Թալիբանին դուրս մղելու և բեն Լադենին գտնելու համար:

Բայց Թարիքի ասածը ցավ է պատճառում Լեյլային: Նա կոպտորեն հրում է նրա գլուխը իր կրծքից:

— Այդքան էլ վատ չէ՞: Որ մարդիկ են մեռնում: Կանա՞յք, երեխանե՞ր, ծերունինե՞ր: Որ նորից տնե՞ր են քանդվում: Այդքան էլ վատ չէ՞:

— Շշշ: Երեխաներին կարթնացնես:

— Ինչպե՞ս կարող ես նման բան ասել, Թարի՛ք,— հարձակվում է նա,— Քարամ գյուղի, այսպես կոչված, սխալից հետո՞: Հարյուր անմեղ մարդ: Ինքդ տեսար մարմինները:

— Չէ,— ասում է Թարիքը: Հենվում է արմունկին ու նայում է Լեյլային:— Դու սխալ ես հասկանում: Նկատի ունեի...

— Դու ի՞նչ գիտես,— ասում է Լեյլան: Նա հասկանում է, որ բարձրացնում է ձայնը, որ առաջին անգամ են վիճում որպես ամուսին և կին:— Դու հեռացար, երբ մոջահեդները սկսեցին կռվել, հիշո՞ւմ ես: Ես մնացել էի: Ես: Ես *գիտեմ* պատերազմն ինչ է: Ես ծնողներիս եմ կորցրել պատերազմում: Իմ *ծնողներին*, Թարի՛ք: Իսկ դու հիմա ասում ես, որ պատերազմն այդքան էլ վատ չէ՞:

— Ների՛ր ինձ, Լեյլա՛: Ների՛ր,— Թարիքը ափերի մեջ է առնում Լեյլայի դեմքը:— Դու ճիշտ ես: Ներողություն եմ խնդրում: Ների՛ր ինձ: Նկատի ունեի, որ գուցե այս պատերազմի ավարտին հույս լինի, որ գուցե առաջին անգամ երկար ժամանակ հետո...

— Չեմ ուզում այլևս խոսել սրա մասին,— ասում է Լեյլան՝ զարմացած, թե ինչու այսպես կոպտեց նրան: Իր ասածն արդար չէ, նա գիտակցում է, չէ՞ որ պատերազմը Թարիքի ծնողներին էլ է տարել, և այն, ինչ փրփրում էր նրա մեջ, արդեն հանգչում է: Թարիքը շարունակում է մեղմ խոսել, և երբ իր մոտ է քաշում Լեյլային, նա թույլ է տալիս:

Երբ Թարիքը համբուրում է նրա ձեռքը, հետո՝ ճակատը, Լեյլան թույլ է տալիս: Նա գիտի, որ Թարիքը հավանաբար իրավացի է: Գիտի՝ ինչու էր ասել դա: Գուցե սա անհրաժեշտ բան է: Միգուցե հույս *լինի*, երբ Բուշի ռումբերը այլևս չընկնեն: Բայց Լեյլան չի կարող ստիպել իրեն ասել դա, ո՛չ հիմա, երբ Բաբիի և Մամիի հետ կատարվածը տեղի է ունենում Աֆղանստանում ինչ-որ մեկի հետ, ո՛չ այն ժամանակ, երբ ոչինչ չկասկածող աղջիկ կամ տղա այժմ իր պես որբացել է հրթիռի պատճառով: Լեյլան չի կարող այդպիսի բան ասել: Դժվար է ուրախանալ: Երեսպաշտություն է, սխալ է:

Այդ գիշեր Զալմայը հազից արթնանում է: Մինչ Լեյլան տեղից կշարժվեր, Թարիքը ոտքերն իջեցնում է մահճակալից: Նա կապում է իր պրոթեզն ու գնում Զալմայի մոտ, նրան գիրկն առնում: Անկողնուց Լեյլան հետևում է՝ ինչպես է Թարիքի ուրվագիծը հետուառաջ

անում մթության մեջ: Տեսնում է Զալմայի գլխի ուրվագիծը Թարիքի ուսին, նրա պարանոցին փաթաթված ձեռքերը, նրա ազդրի մոտ ճոճվող տոտիկները:

Երբ Թարիքը վերադառնում է քնելու, նրանցից ոչ մեկը ձայն չի հանում: Լեյլան մեկնում է ձեռքը և դիպչում Թարիքի դեմքին: Թարիքի այտերը թաց են:

51

Լեյլայի համար Մուրիում կյանքը հարմարավետ ու հանգիստ է: Աշխատանքը ծանր չէ, իսկ հանգստյան օրերը նրանք Թարիքի հետ երեխաներին ճոպանուղիով տանում են դեպի Փատրիաթա բլուրը կամ Փինդի Փոինթ, որտեղ պարզկա օրով հնարավոր է տեսնել Իսլամաբադը և Ռավալփինդիի կենտրոնը: Այստեղ նրանք խոտի վրա վերմակ են փռում, վարունգով կոլոլակի սենդվիչներ են ուտում և կոճապղպեղով սառը լիմոնադ խմում: Լավ կյանք է, ասում է Լեյլան ինքն իրեն, կյանք, որի համար պետք է շնորհակալ լինել: Իրականում դա հենց այնպիսի կյանք է, որի մասին նա երազում էր Ռաշիդի հետ ամենադառը օրերին: Ամեն օր Լեյլան հիշեցնում է իրեն այս մասին:

Հետո՝ 2002-ի հուլիսյան մի տաք երեկո, նա և Թարիքը պառկած են անկողնում ու կամացուկ զրուցում են տանը կատարվող փոփոխությունների մասին: Դրանք այնքան շատ են: Կոալիցիոն ուժերը Թալիբանին դուրս են մղել բոլոր մեծ քաղաքներից, քշել Պակիստանի սահմանով դեպի Աֆղանստանի հարավի և արևելքի լեռները: Քաբուլ է ուղարկվել ISAF[141]-ը՝ միջազգային խաղաղապահ ուժը: Երկրում հիմա ժամանակավոր նախագահ է՝ Համիդ Քարզայը:

---

[141] The International Security Assistance Force (ISAF)՝ «Անվտանգության աջակցության միջազգային ուժեր»՝ ՆԱՏՕ-ի գլխավորած անվտանգության առաքելություն Աֆղանստանում, որը հիմնադրվել է 2001 թ. դեկտեմբերին: Հիմնական նպատակը Աֆղանստանի ազգային անվտանգության ուժերը վերապատրաստելն էր ու Աֆղանստանին օժանդակել կառավարական հաստատությունները վերակառուցելու գործում, ինչպես նաև պայքարել թալիբների դեմ: ISAF-ը դադարեցրել է մարտական գործողությունները և ցրվել 2014 թ. դեկտեմբերին:

Լեյլան որոշում է, որ ժամանակն է պատմելու Թարիքին:

Մեկ տարի առաջ նա ձեռքը կտրել կտար՝ միայն թե Քաբուլից հեռանար: Բայց վերջին մի քանի ամիսներին սկսել է կարոտել իր մանկության քաղաքը: Նա կարոտում է Շոր Բազարի եռուզեռը, Բաբուրի այգիները, այծի կաշվից տիկերով բեռնված ջուր վաճառողների կանչերը: Կարոտում է Հավերի փողոցում հագուստի գինը սակարկողներին և Քարթեհ-Փարվանի սեխ վաճառող չարչիներին:

Բայց միայն տան կարոտից, կարոտախտից չէ, որ այս օրերին Լեյլան այդքան շատ մտածում է Քաբուլի մասին: Նա դիվադադար է եղել: Լսում է, որ Քաբուլում դպրոցներ են կառուցվում, ճանապարհներն են վերանորոգվում, կանայք վերադառնում են աշխատանքի, և իր այստեղի կյանքը՝ հաճելի կյանքը, որի համար երախտապարտ է, թվում է... անբավարար: Անհետևողական: Ավելի վատ՝ վատնողական: Վերջերս նրա գլխում Բաբիի ձայնն է: *Դու կարող ես լինել, ինչ ցանկանաս, Լեյլա՛*, ասում է նա: *Ես գիտեմ, որ կարող ես: Եվ գիտեմ, որ երբ այս պատերազմն ավարտվի, Աֆղանստանը քո կարիքը կունենա:*

Լեյլան Մամիի ձայնն էլ է լսում: Հիշում է Մամիի պատասխանը Բաբիին, երբ վերջինս առաջարկում էր հեռանալ Աֆղանստանից: *Ես ուզում էի տեսնել, որ իմ տղաների երազանքն իրականանում է: Ես ուզում եմ լինել այստեղ, երբ դա տեղի ունենա, երբ Աֆղանստանն ազատ լինի, որ տղաներն էլ տեսնեն: Նրանք կտեսնեն իմ աչքերով:* Հիմա Լեյլան ինչ-որ չափով ցանկանում է վերադառնալ Քաբուլ Մամիի և Բաբիի համար, որպեսզի նրանք տեսնեն իր աչքերով:

Եվ բացի այդ՝ Լեյլայի համար ամենահամոզիչը Մարիամն է: Արդյո՞ք Մարիամը զոհվեց սրա համար, հարցնում է ինքն իրեն Լեյլան: Արդյո՞ք զոհաբերեց իրեն, որ Լեյլան օտար երկրում սպասուհի լինի: Գուցե Մարիամի համար նշանակություն չունենար, թե ինչ է անում Լեյլան, միայն թե նա և երեխաները ապահով ու երջանիկ լինեն: Բայց Լեյլայի համար դա կարևոր է: Անսպասելիորեն շատ կարևոր է:

— Ես ուզում եմ վերադառնալ,— ասում է Լեյլան:

Թարիքը նստում է անկողնում և նայում նրան:

Լեյլային կրկին զարմացնում է այն, թե որքան գեղեցիկ է Թարիքը, նրա ճակատի կատարյալ կորը, թևերի նրբագեղ մկանները, նրա խոհուն, խելացի աչքերը: Մեկ տարի անցել է, բայց երբեմն՝ նման պահերին, Լեյլայի հավատը չի գալիս, որ վերագտել են միմյանց, որ ինքն իրոք այստեղ է, նրա հետ միասին, որ նա իր ամուսինն է:

— Վերադառնա՞լ: Քաբո՞ւլ,— հարցնում է Թարիքը:

— Միայն եթե դու էլ ցանկանաս:

— Դու դժբա՞խտ ես այստեղ: Կարծես թե երջանիկ ես: Երեխաներն էլ:

Լեյլան նստում է: Թարիքը շարժվում է մահճակալի վրա և տեղ անում Լեյլայի համար:

— Ես երջանիկ եմ,— ասում է Լեյլան, իհարկե երջանիկ եմ: Բայց... ի՞նչ է մեզ սպասում հետագայում, Թարի՛ք: Որքա՞ն ժամանակ ենք մնալու: Սա տուն չէ: Քաբուլը տուն է, և այնտեղ այնքան շատ բան է տեղի ունենում, այնքան լավ բաներ: Ես ուզում եմ դրանց մասնակից լինել: Ուզում եմ մի բան անել: Ուզում եմ իմ ներդրումն ունենալ: Հասկանո՞ւմ ես:

Թարիքը դանդաղ գլխով է անում:

— Ուրեմն սա է ուզածդ: Վստա՞հ ես:

— Ուզում եմ, այո՛, վստահ եմ: Նույնիսկ ավելին: Ես զգում եմ, որ պետք է վերադառնամ: Այստեղ մնալն այլևս ճիշտ չէ:

Թարիքը նայում է իր ձեռքերին, հետո կրկին Լեյլային:

— Բայց միայն, միայն, եթե դու էլ ես ուզում գնալ:

Թարիքը ժպտում է: Նրա ճակատի կնճիռները հարթվում են, և մի ակնթարթ նա նորից հին Թարիքն է, այն Թարիքը, որը գլխացավեր չունի, որը մի անգամ ասել էր, որ Սիբիրում ձյունը սառույց է դառնում նախքան հողին ընկնելը: Կարող է իր երևակայությունն է, բայց Լեյլան կարծում է, որ վերջերս այս հին Թարիքը ավելի հաճախակի է ի հայտ գալիս:

— Ե՞ս,— հարցնում է նա,— ես հետևիցդ կգամ մինչև աշխարհի ծայրը, Լեյլա՛:

Լեյլան նրան քաշում է իր մոտ և համբուրում շրթունքները: Նրան թվում է, որ երբեք նրան ավելի շատ չի սիրել, քան այս պահին:

— Շնորհակալ եմ,— ասում է նա՝ ճակատը Թարիքի ճակատին դնելով:

— Արի՛ գնանք տուն:

— Բայց սկզբից ուզում եմ գնալ Հերաթ,— ասում է Լեյլան:

— Հերաթ:

Լեյլան բացատրում է:

* * *

Երեխաներին պետք է հանգստացնել՝ ամեն մեկին յուրովի: Լեյլան ստիպված է նստել հուզված Ազիզայի հետ, որը դեռ մղձավանջներ է տեսնում, որը նախորդ շաբաթ ցնցվեց մինչև արցունքները, երբ մոտակայքում հարսանիքի ժամանակ ինչ-որ մեկը կրակահերթ բաց թողեց երկինք: Լեյլան պետք է բացատրի Ազիզային, որ երբ նրանք վերադառնան Քաբուլ, Թալիբանը այնտեղ չի լինի, կռիվ չի լինի, նրան մանկատուն չեն ուղարկի:

— Մենք բոլորս միասին ենք ապրելու: Հայրդ, ես, Զալմայը: Եվ դու, Ազիզա՛: Դու երբե՛ք, երբե՛ք ինձանից չես բաժանվի: Խոստանում եմ:— Նա ժպտում է դստերը:— Մինչև ինքդ չցանկանաս, այսինքն: Երբ սիրահարվես մի երիտասարդի ու ուզենաս հետը ամուսնանալ:

Մուրիից հեռանալու օրը Զալմայը անմխիթար է: Նա ձեռքերը փաթաթել է Այյոնայի պարանոցին և բաց չի թողնում:

— Չեմ կարող նրան պոկել Այյոնայից, մամա՛,— ասում է Ազիզան:

— Զալմա՛յ, մենք չենք կարող այծին ավտոբուս վերցնել,— նորից բացատրում է Լեյլան:

Միայն այն բանից հետո, երբ Թարիքը ծնկի է գալիս կողքին և խոստանում, որ Քաբուլում նրա համար Այյոնայի նման այծ կգնի, Զալմայը դժկամորեն բաց է թողնում այծին:

Սայիդի հետ էլ արտասվալից հրաժեշտ է: Հաջողության համար նա պահում է Ղուրանը դռան շեմին, որպեսզի Թարիքը, Լեյլան ու երեխաները երեք անգամ համբուրեն, ապա պահում է բարձր, որ անցնեն տակով: Նա օգնում է Թարիքին երկու ճամպրուկները դնել իր մեքենայի բեռնախցիկը: Սայիդն է նրանց տանում կայարան, նա է

կանգնում եզրագծին ու ձեռքով հրաժեշտ տալիս, երբ ավտոբուսը ֆշշոցով շարժվում է տեղից:

Լեյլան հետ է նստում ու հետևում՝ ինչպես է Սայիդը հեռանում ավտոբուսի հետևի պատուհանից, և լսում է գլխում շշնջացող կասկածի ձայնը: Արդյո՞ք հիմար չեն, մտածում է նա, որ թողնում են Մուրիի անվտանգությունը: Վերադառնում են այն երկիրը, որտեղ զոհվել են նրա ծնողներն ու եղբայրները, որտեղ ռումբերի ծուխը դեռ նոր է մաքրվում:

Իսկ հետո նրա հիշողության մռայլ պարույրներից վեր է բարձրանում պոետիկ երկտող՝ Բաբիի հրաժեշտի գովերգը Քաբուլին.

«Անթիվ են նրա տանիքներին փայլող լուսինները,
Անթիվ են պատերի հետևում ծպտված հազար չքնաղ արևները»:

Լեյլան հարմար նստում է իր նստատեղին՝ աչքերից թարթելով հեռացնում արցունքները: Քաբուլը սպասում է: Քաբուլը նրանց կարիքն ունի: Այս ճամփորդությունը դեպի տուն ճիշտ է:

Բայց նախևառաջ պետք է ասել վերջին հրաժեշտը:

* * *

Աֆղանստանի պատերազմները ավերել են Քաբուլը, Հերաթը և Քանդահարը միացնող ճանապարհները: Ամենահեշտ ճանապարհը դեպի Հերաթ այժմ անցնում է Իրանի Մաշադով: Լեյլան և նրա ընտանիքը գիշերում են այդտեղ: Նրանք գիշերում են հյուրանոցում և հաջորդ առավոտ մեկ այլ ավտոբուս են նստում:

Մաշադը մարդաշատ, աղմկոտ քաղաք է: Լեյլան նայում է՝ ինչպես են պատուհանի կողքով անցնում պուրակները, մզկիթները և *չելո* քյաբաբի ռեստորանները: Երբ ավտոբուսն անցնում է Իմամ Ռեզայի՝ շիաների ութերորդ իմամի դամբարանի կողքով, Լեյլան գլուխը խոնարհում է, որպեսզի ավելի լավ տեսնի դրա փայլուն սալիկները, մինարեթները, շքեղ ոսկե գմբեթը՝ բոլորը անբասիր ու սիրով պահպանված: Նա մտածում է իր երկրի Բուդդաների մասին: Հիմա քամին ցրում է դրանց փոշին Բամիյանի հովտով:

Ավտոբուսով մինչև իրանա-աֆղանական սահման երթևեկելը տևում է գրեթե տասը ժամ: Աֆղանստանին մոտենալիս տեղանքը ավելի ամայի է դառնում, ավելի անբերրի: Հերաթի սահմանը անցնելուց քիչ առաջ նրանք անցնում են աֆղանական փախստականների ճամբարի մոտով: Լեյլան տեսնում է դեղին փոշու, սև վրաններիի և ակոսավոր թիթեղից խղճուկ կառույցների աղոտ ուրվագծեր: Նա մեկնում է ձեռքը ու բռնում Թարիքինը:

* * *

Հերաթի փողոցների մեծ մասը սալարկված են, եզերված անուշահոտ սոճիներով: Կառուցվում են քաղաքային այգիներ և գրադարաններ, բակերը մաքրամաքուր են, շենքերը՝ նոր ներկված: Լուսացույցներն աշխատում են, և, ամենազարմանալին Լեյլայի համար, էլեկտրաէներգիան անխափան է: Լեյլան լսել է, որ Հերաթի ֆեոդալական պարագլուխ Իսմայիլ Խանը[142] օգնել է վերակառուցելու քաղաքը զգալի մաքսային եկամուտներով, որոնք հավաքում է աֆղանա-իրանական սահմանին, փող, որը, ըստ Քաբուլի, պատկանում է ոչ թե իրեն, այլ կենտրոնական իշխանությանը: Տաքսու վարորդը, որը նրանց տանում է «Մուվաֆակ» հյուրանոցը, տալիս է Իսմայիլ Խանի անունը և՛ հարգալից, և՛ վախվորած:

Երկու գիշեր «Մուվաֆակ»-ում մնալը կարժենա նրանց խնայողությունների գրեթե հինգերորդը, բայց ուղևորությունը Մաշադից երկար ու ծանր էր, և երեխաները ուժասպառ են: Ընդունարանի տարեց աշխատողը սենյակի բանալին բերելիս պատմում է Թարիքին, որ լրագրողներն ու հասարակական կազմակերպությունների աշխատողները սիրում են «Մուվաֆակ»-ը:

— Բեն Լադենն է այստեղ մեկ անգամ քնել,— պարծենում է նա:

---

[142] Իսմայիլ Խան՝ աֆղանական դաշտային հրամանատար, 1979–1989 թթ. աֆղանական պատերազմի վետերան: Կռվել է սովետական բանակի և Նաջիբուլլահի ռեժիմի դեմ: Թալիբանի ժամանումից հետո արտագաղթել է Իրան, այնուհետև վերադարձել և 2001 թ. Հերաթի ազատագրումից հետո նշանակվել Հերաթի նահանգապետ: 2005–2013 թթ. եղել է Աֆղանստանի Իսլամական Հանրապետության ջրային ռեսուրսների և էներգետիկայի նախարարը:

Սենյակում երկու մահճակալ կա և լոգասենյակ՝ սառը ջրով: Մահճակալների միջև պատին բանաստեղծ Խաջա Աբդուլլա Անսարիի[143] նկարն է: Պատուհանից Լեյլան տեսնում է ներքևի աշխույժ փողոցը և փողոցի մյուս կողմում գտնվող պուրակը, որտեղ պաստելային գույնի աղյուսից արահետները անցնում են ծաղիկների խիտ փնջերի միջով: Հեռուստացույցին սովոր երեխաները հիասթափված են, որ սենյակում այն չկա: Սակայն շուտով նրանք քուն են մտնում: Շուտով Թարիքն ու Լեյլան նույնպես փլվում են: Լեյլան հանգիստ քնում է Թարիքի գրկում, բայց գիշերվա կեսին մի անգամ արթնանում է երազից, որը չի կարողանում հիշել:

* * *

Հաջորդ առավոտ՝ թեյով, թարմ հացով, սերկևիլի մուրաբայով և խաշած ձվերով նախաճաշից հետո, Թարիքը Լեյլայի համար տաքսի է գտնում:

— Վստահ ես, որ չես ուզում, որ ես գամ,— հարցնում է Թարիքը: Ազիզան բռնել է նրա ձեռքը, Ջալմայը՝ չէ, բայց կանգնած է Թարիքի մոտ՝ ուսը հենել է Թարիքի ազդրին:

— Վստահ եմ:

— Ես անհանգստանում եմ:

— Ինձ հետ ամեն ինչ լավ կլինի,— ասում է Լեյլան,— խոստանում եմ: Երեխաներին տա՛ր շուկա: Մի բան գնիր նրանց համար:

Ջալմայը սկսում է լացել, երբ տաքսին շարժվում է, և երբ Լեյլան հետ է նայում, տեսնում է, որ նա ձգվում է դեպի Թարիքը: Այն, որ նա սկսում է ընդունել Թարիքին, և՛ թեթևություն է բերում Լեյլային, և՛ կոտրում է նրա սիրտը:

---

[143] Աբու Իսմայիլ Աբդուլլահ ալ-Հերավի ալ Անսարի կամ Հերաթի Աբդուլլահ Անսարի (1006–1088 թթ.)՝ հայտնի է նաև որպես «Հերաթի իմաստուն», պարսիկ նշանավոր սուֆի, Ղուրանի մեկնաբան, արաբերեն և պարսկերեն լեզուներով գրող, բանաստեղծ:

* * *

— Դու Հերաթից չես,— ասում է վարորդը:

Նա ունի մուգ, մինչև ուսերը հասնող մազեր՝ ի հեծուկս հեռացած Թալիբանին, ինչպես պարզեց Լեյլան, իսկ բեղերը ձախ կողմից կտրում է սպիի պես մի բան: Դիմապակուն լուսանկար է փակցված: Երիտասարդ աղջիկ է՝ վարդագույն այտերով և մեջտեղից բաժանված երկու հյուսերով:

Լեյլան պատմում է, որ վերջին մի տարին Պակիստանում էր, որ վերադառնում է Քաբուլ: «Դեհ-Մազանգ»:

Դիմապակու միջով նա տեսնում է, որ պղնձագործները կուժերին բռնակներ են զոդում, թամբագործները արևին են տալիս չմշակված կաշին:

— Երկա՞ր ես այստեղ ապրել, եղբա՛յր,— հարցնում է Լեյլան:

— Օ՜, ամբողջ կյանքս: Ես ծնվել եմ այստեղ: Ամեն ինչ տեսել եմ: Հիշո՞ւմ ես ապստամբությունը:

Լեյլան ասում է, որ հիշում է, բայց նա շարունակում է:

— 1979-ի մարտին էր՝ Սովետների ներխուժումից մոտ ինը ամիս առաջ: Ինչ-որ ջղային հերաթցիներ սպանեցին մի քանի սովետական խորհրդականների, Սովետներն էլ տանկեր և ուղղաթիռներ ուղարկեցին և գնդակոծեցին այս վայրը: Երեք օր, համշիրա՛, կրակում էին քաղաքի վրա: Փլուզեցին շենքեր, քանդեցին մինարեթներից մեկը, հազարավոր մարդկանց սպանեցին: Հազարավո՛ր: Երեք օրվա մեջ կորցրի երկու քույրերիս: Նրանցից մեկը տասներկու տարեկան էր,— թփթփացնում է դիմապակու լուսանկարին,— ինքն է:

— Ցավում եմ,— ասում է Լեյլան ու զարմանում, որ յուրաքանչյուր աֆղանական պատմություն խարանված է մահով, կորստով և անհավատալի վշտով: Եվ, այնուամենայնիվ, նա տեսնում է, որ մարդիկ գոյատևման, կյանքը շարունակելու ձև են գտնում: Լեյլան մտածում է իր կյանքի և իր հետ պատահածի մասին, և ապշում է, որ ինքը նույնպես ողջ է մնացել է ու տաքսիում նստած՝ լսում է այս մարդու պատմությունը:

* * *

Գյուլ Դաման գյուղի մի քանի պարսպապատ տները վեր են խոյանում ցեխով և ծղոտով կառուցված տափակ *քոլբաների* արանքում: *Քոլբաների* մոտ Լեյլան տեսնում է արևահար կանանց, որոնք ճաշ են եփում, և նրանց դեմքերը քրտնում են ինքնաշեն փայտե վառարաններին դրված, մեծ սևացրած կաթսաներից բարձրացող գոլորշուց: Ջորիները ուտում են տաշտերից: Հավերի հետևից վազող երեխաները սկսում են վազել տաքսիի հետևից: Լեյլան տեսնում է քարերով լի անվասայլեր հրող տղամարդկանց: Նրանք կանգ են առնում և նայում անցնող մեքենային: Վարորդը շրջում է, և նրանք անցնում են գերեզմանոցի կողքով, որի կենտրոնում հողմահար դամբարան է: Վարորդը պատմում է, որ այստեղ թաղված է գյուղի *սուֆին*:

Այստեղ հողմաղաց էլ կա: Դրա անշարժ, ժանգագույն հողմացույցների ստվերում երեք փոքրիկ տղաներ են պպզած ցեխի հետ խաղում: Վարորդը կանգնում է ու գլուխը հանում պատուհանից: Երեք տղաներից տարիքով պատասխանում է ամենամեծահասակի տեսք ունեցողը: Մատով ցույց է տալիս ճանապարհի վերևում գտնվող մի տուն: Վարորդը շնորհակալություն է հայտնում, կրկին միացնում շարժիչը:

Նա կայանում է պարսպապատ մեկ հարկանի տան մոտ: Պատերից վեր Լեյլան տեսնում է թզենու գագաթները, մի քանի ծյուղ կախվել են կողքից:

— Երկար չի տևի,— ասում է նա վարորդին:

* * *

Դուռը բացող միջին տարիքի տղամարդը կարճահասակ է, նիհար, կարմրադարչնագույն մազերով: Նրա մորուքի մեջ սպիտակ զուգահեռ փնջեր կան: Հագին *չափան* է՝ փիրհան[144]– *թումբանի* վրայից:

---

[144] Փիրհան՝ մինչև ծնկները հասնող բամբակյա վերնաշապիկ

Նրանք *սալաամ-ալայքումներ* են փոխանակում:

— Սա Մոլլա Ֆայզուլլայի տո՞ւնն է,— հարցնում է Լեյլան:

— Այո՛, ես նրա որդին եմ՝ Համզան: Ինչո՞վ կարող եմ օգնել, համշիրե՛ի:

— Ես եկել եմ այստեղ Ձեր հոր հին ընկերոջ՝ Մարիամի հարցով:

Համզան թարթում է: Դեմքը տարակուսած է:

— Մարիամ...

— Ջալիլ Խանի դուստրը:

Նա կրկին թարթում է: Հետո ափը դնում է այտին, և դեմքը լուսավորվում է ժպիտով, որը ի ցույց է դնում բացակայող ու փտող ատամները:

— Օ՜,— ասում է: Ստացվում է օ՞հհհ՝ արտաշնչելու պես:

— Օ՜, Մարիամը, դու նրա դո՞ւստրն ես: Նա՞ ...— նա ծռում է վիզը և անհամբեր նայում Լեյլայի հետևը, փնտրում է,— այստե՞ղ է: Այնքան ժամանակ է անցել: Մարիամն այստե՞ղ է:

— Ցավոք, նա մահացել է:

Համզայի ժպիտը մարում է:

Մի պահ նրանք կանգնած են դռան մոտ, Համզան նայում է գետնին: Ինչ-որ տեղ զռում է էշը:

— Ներս մտեք,— ասում է Համզան: Բացում է դուռը:— Խնդրում եմ՝ ներս մտեք:

* * *

Նրանք նստում են վատ կահավորված սենյակի հատակին: Դրա վրա Հերաթի գորգ է, ուլունքազարդ բարձեր նստելու համար, պատին՝ Մեքքայի շրջանակված լուսանկար: Նրանք նստում են բաց պատուհանի մոտ՝ արևի երկարավուն ճառագայթի երկու կողմում: Մեկ այլ սենյակից Լեյլան լսում է կանանց շշուկներ: Փոքրիկ ոտաբոբիկ մի տղա նրանց առջև դնում է կանաչ թեյի և պիստակով *գաազ* նուգաների ափսե: Համզան գլխով է անում դեպի նա:

— Որդիս է:

Տղան անձայն հեռանում է:

— Դե՛, պատմի՛ր,— հոգնած ասում է Համզան:

Լեյլան պատմում է: Պատմում է ամեն ինչ: Ավելի երկար է ստացվում, քան կարծում էր: Վերջում հազիվ է կարողանում իրեն տիրապետել: Մեկ տարի է անցել, բայց Մարիամի մասին խոսելը դեռ հեշտ չէ: Երբ ավարտում է, Համզան երկար ժամանակ ոչինչ չի ասում: Նա դանդաղ պտտում է իր բաժակը պնակի վրա մի կողմ, հետո՝ մյուս կողմ:

— Հայրս, թող հանգչի խաղաղության մեջ, շատ էր սիրում նրան,— ասում է վերջապես,— հայրս է *ազան* երգել նրա ականջին, երբ ծնվել էր, գիտե՞ս: Ամեն շաբաթ այցելում էր, երբեք բաց չէր թողնում: Երբեմն ինձ հետն էր տանում: Նա Մարիամի դաստիարակն էր, այո՛, բայց նաև ընկերը: Հայրս ողորմած մարդ էր: Սիրտը կոտրվեց, երբ Ջալիլ Խանը Մարիամից ձերբազատվեց:

— Ցավում եմ հորդ համար: Աստված թող ների նրան:

Համզան գլխով շնորհակալություն է հայտնում:

— Նա ապրեց մինչև խոր ծերություն: Ջալիլ Խանից երկար ապրեց: Մենք նրան թաղեցինք գյուղի գերեզմանատանը՝ Մարիամի մորից ոչ հեռու: Հայրս հրաշալի, հրաշալի մարդ էր, անկասկած դրախտի ճանապարհին է:

Լեյլան իջեցնում է իր բաժակը:

— Կարո՞ղ եմ մի բան հարցնել:

— Իհարկե:

— Կարո՞ղ ես ցույց տալ,— ասում է,— թե որտեղ էր ապրում Մարիամը: Կարո՞ղ ես ինձ այնտեղ տանել:

* * *

Վարորդը համաձայնում է ավելի երկար սպասել:

Համզան և Լեյլան դուրս են գալիս գյուղից և քայլելով իջնում այն ճանապարհին, որը միացնում է Գյուլ Դամանը Հերաթին: Մոտ տասնհինգ րոպե անց Համզան ցույց է տալիս մի նեղ լերկ տեղ ճանապարհի երկու կողմից աճած բարձր խոտի մեջ:

— Այսպես կարելի է հասնել այնտեղ,— ասում է նա,— այս արահետով:

Արահետն անհարթ է, ոլորուն, հազիվ է երևում բուսականության ու մացառուտի տակից: Քամուց բարձր խոտը հարվածում է Լեյլայի սրունքներին, երբ նա Համզայի հետ բարձրանում է արահետով, անցնում ոլորանները: Նրանց երկու կողմերում քամուց ճոճվում է վայրի ծաղիկների գեղադիտակը՝ որոշները բարձր, կորացած ծաղկաթերթերով, մյուսները՝ ցածր, հովհարանման թերթերով: Ցածր թփերի միջից տեղ-տեղ ծիկրակում են փոչոտ հրանունկները: Լեյլայի գլխավերևում ճլվլում են ծիծեռնակները, իսկ ոտքերի տակ լսվում է մորեխների անհանգիստ ճռռոցը:

Այսպես բարձրանում են սարն ի վեր՝ մոտ երկու հարյուր մետր կամ ավելին: Հետո արահետը ուղղվում է և դառնում հարթ բացատ: Նրանք կանգ են առնում, շունչ քաշում: Լեյլան թևնոցով սրբում է ճակատը և քշում դեմքի առաջ դեսուդեն անող մոծակներին: Այստեղից հորիզոնին երևում են ցածր սարերը, մի քանի կաղամախի, բարդիներ, տարբեր վայրի թփեր, որոնց անունը նա չգիտի:

— Ժամանակին այստեղով առու էր անցնում,— ասում է Համզան մի փոքր շնչակտուր,— բայց այն վաղուց չորացել է:

Նա ասում է, որ կսպասի այստեղ: Ասում է, որ Լեյլան անցնի չորացած հունը, գնա դեպի սարերը:

— Ես կսպասեմ այստեղ,— ասում է նա ու նստում բարդու տակի քարի վրա,— դու գնա՛:

— Ես չեմ...

— Մի՛ անհանգստացիր: Չշտապես: Գնա՛, համշիրեմ:

Լեյլան շնորհակալություն է հայտնում նրան: Նա անցնում է հունը՝ քարից քար քայլելով: Նկատում է քարերի արանքն ընկած կոտրված լիմոնադի շշեր, ժանգոտած բանկա, բորբոսով պատված մետաղական կոնտեյներ, որի ցինկե կափարիչի կեսը թաղված է հողի մեջ:

Լեյլան գնում է դեպի սարերը, դեպի այժմ երևացող լացող ուռենիները, որոնց երկար խոնարհված ճյուղերը ճոճվում են քամու յուրաքանչյուր պոռթկումից: Լեյլայի սիրտն ուժգին բաբախում է կրծքում: Նա տեսնում է, որ ուռենիները կանգնած են այնպես, ինչպես պատմել էր Մարիամը՝ շրջանաձև պուրակի պես, որի մեջտեղում բացատ է: Լեյլան քայլում է ավելի արագ, համարյա վազում է:

Նա հետ է նայում ու տեսնում, որ Համզան դարձել է փոքրիկ ուրվագիծ, նրա *չափանը* վառ գույնի բիծ է ծառերի կեղևի շագանակագույն ֆոնի վրա: Լեյլան սայթաքում է քարի վրա և համարյա ընկնում է, հետո կրկին կանգնում ոտքի: Մնացած ճանապարհը գնում է արագ՝ տաբատը վեր քաշած: Հևալով հասնում է ուռենիներին:

Մարիամի *քոլբան* դեռ այստեղ է:

Երբ մոտենում է դրան, Լեյլան տեսնում է, որ միակ պատուհանը ջարդված է, իսկ դուռը չկա: Մարիամը նկարագրել էր հավաբունն ու *թանդուրը*, նաև փայտե զուգարանը, բայց Լեյլան դրանք չի տեսնում: Նա կանգ է առնում *քոլբայի* մուտքի մոտ: Ներսում բզզում են ճանճերը:

Ներս մտնելու համար նա ստիպված է շրջանցել մեծ ճոճվող սարդոստայնը: Ներսը մութ է: Լեյլան թույլ է տալիս, որ աչքերը մի քանի վայրկյան հարմարվեն: Հետո տեսնում է, որ ներսը նույնիսկ ավելի փոքր է, քան պատկերացնում էր: Հատակի տախտակներից մնացել է միայն մի փտած, ճաքած տախտակ: Մնացածը, Լեյլան մտածում է, պոկել են որպես վառելափայտ: Հատակին այժմ չորացած տերևների կարպետ է, կոտրված շշեր, ծամոնի թղթեր, վայրի սնկեր, հին դեղնավուն ծխուկներ: Բայց հիմնականում մոլախոտեր՝ որոշները դալուկ, որոշները՝ լկտիաբար պատերով մագլցող:

Տասնհինգ տարի, մտածում է Լեյլան: Տասնհինգ տարի այստեղ:

Լեյլան նստում է, հենվում պատին: Լսում է՝ ինչպես է քամին սոսափում ուռենիների մեջ:

Առաստաղին ավելի շատ սարդոստայններ կան: Ինչ-որ մեկը հեղուկացիր ներկով ինչ-որ բան է գրել պատին, բայց դրա մեծ մասը քանդվել է, և Լեյլան չի կարող վերծանել գրածը: Հետո նա գիտակցում է, որ տառերը ռուսերեն են: Մի անկյունում դատարկ թռչնաբուն է, մյուս անկյունում, որտեղ պատը միանում է ցածր առաստաղին, գլխիվայր կախված չղջիկ:

Լեյլան փակում է աչքերը և որոշ ժամանակ նստում այստեղ:

Պակիստանում երբեմն դժվար էր հիշել Մարիամի դեմքի մանրամասները: Եղել են ժամանակներ, երբ չէր կարողանում հիշել Մարիամի դեմքը, ասես լեզվի ծայրին բառ լիներ: Բայց հիմա այս վայրում կոպերի տակից հեշտ է մտաբերել Մարիամին՝ նրա

հայացքի մեղմ փայլը, երկար կզակը, պարանոցի կոպիտ մաշկը, պրկված շուրթերով ժպիտը: Այստեղ Լեյլան կարող է կրկին այտը դնել Մարիամի փափուկ գիրկը, կարող է զգալ՝ ինչպես է Մարիամը հետուառաջ ճոճվում՝ Ղուրանից հատվածներ անգիր ասելով, կարող է զգալ բառերը, որոնք թրթռում են Մարիամի մարմնով՝ ծնկներից մինչև իր ականջները:

Հետո մոլախոտերը հանկարծ սկսում են նոսրանալ, կարծես գետնի տակից ինչ-որ բան քաշում է դրանք արմատներից: Դրանք ավելի ու ավելի ցած են իջնում, մինչև *քոլբայի* հողը կուլ չի տալիս վերջին փշոտ տերևները: Սարդոստայնները կախարդական ձևով բացվում են: Թռչնի բույնը ինքնաքանդվում է, ճյուղերը մեկ առ մեկ կոտրվում են ու դուրս թռչում *քոլբայից*: Անտեսանելի ռետինը պատից սրբում է ռուսական գրաֆիտին:

Հատակի տախտակները տեղն են վերադարձել: Լեյլան այժմ տեսնում է երկու փոքրիկ մահճակալ, փայտե սեղան, երկու աթոռ, անկյունում՝ չուգունե վառարան, պատերի երկայնքով դարակներ, որոնց վրա կավե պղինձներ ու թավաներ են, սևացած թեյաման, բաժակներ և գդալներ: Նա լսում է դրսից եկող հավերի կչկչոցը, առվի հեռավոր կլկլոցը: Երիտասարդ Մարիամը նստած է սեղանի մոտ ու նավթի լամպի լույսով տիկնիկ է սարքում: Ինչ-որ բան է մռթմռթում: Նրա դեմքը հարթ է և երիտասարդ, մազերը լվացած են, հետ սանրած: Բոլոր ատամները կան: Լեյլան հետևում է, թե ինչպես է Մարիամը սոսնձով թելեր կպցնում տիկնիկի գլխին: Մի քանի տարուց այս փոքրիկ աղջիկը կդառնա կին, որը կյանքից շատ պահանջներ չի ունենա, որը երբեք չի ծանրաբեռնի ուրիշներին, երբեք չի պատմի սեփական վշտերի, հիասթափությունների մասին, երազների, որոնք ծաղրվել են: Կդառնա կին, որը կլինի գետափի քարի պես, որը դիմադրում է առանց բողոքելու, և ալեկոծությունը ոչ թե արատավորում, այլ ձևավորում է նրա շնորհը: Լեյլան արդեն ինչ-որ բան է տեսնում այս երիտասարդ աղջկա աչքերում, ինչ-որ խորքային բան, որը ո՛չ Ռաշիդը, ո՛չ Թալիբանը չեն կարողանա կոտրել: Կրաքարի պես ամուր ու չհանձնվող մի բան: Մի բան, որն ի վերջո կդառնա նրա կործանումն ու Լեյլայի փրկությունը:

Աղջնակը վեր է նայում: Վայր է դնում տիկնիկը: Ժպտում է:

Լեյլա ջո՞:

Լեյլան լայն բացում է աչքերը: Շունչը կտրվում է, նա մարմնով առաջ է գալիս: Վախեցնում է չղջիկին, որը սուրում է *քոլբայի* մի ծայրից մյուսը, թևերը գրքի էջերի պես թափահարում է ու պատուհանից դուրս թռչում:

Լեյլան ոտքի է կանգնում, տաբատի հետևից թափ տալիս մեռած տերևները: Դուրս է գալիս *քոլբայից*: Լույսը փոփոխվել է: Քամի է փչում, որից խոտը ալեկոծվում է, ուռենու ճյուղերը՝ կտտում:

Բացատից հեռանալուց առաջ Լեյլան վերջին հայացքն է նետում *քոլբային*, որտեղ Մարիամը քնում էր, ուտում, երազում, Ջալիլի համար շունչը պահում: Ուռենիները ծռված պատերին ծուռումուռ նախշեր են գցում, որոնք փոխվում են քամու յուրաքանչյուր պոռթկումից: Տանիքին ագռավ է նստել: Ինչ-որ բան է կտցահարում, կռկռում, թռչում:

— Ցտեսությո՛ւն, Մարիա՛մ:

Եվ այդպիսով Լեյլան՝ անտեղյակ, որ լալիս է, սկսում է վազել խոտերի միջով:

Համզան դեռ նստած է քարին: Երբ նկատում է Լեյլային, ոտքի է կանգնում:

— Արի՛ վերադառնանք,— ասում է: Հետո՝ «Ես քեզ տալու բան ունեմ»:

* * *

Լեյլան սպասում է Համզային պարտեզում՝ առջևի դռան մոտ: Նրանց թեյ մատուցած տղան կանգնած է թզենիներից մեկի տակ, բռնել է մի հավ և անվրդով նայում Լեյլային: Լեյլան նկատում է երկու դեմք՝ *հիջաբով* ծեր կնոջ ու երիտասարդ աղջկա, որոնք ամոթխած նայում են նրան պատուհանից:

Տան դուռը բացվում է և դուրս է գալիս Համզան: Ձեռքին մի տուփ է:

Նա տալիս է այն Լեյլային:

— Մահանալուց մոտ մեկ ամիս առաջ Ջալիլ Խանը սա տվել է հորս,— ասում է Համզան:— Նա խնդրել է հորս, որ պահի սա

Մարիամի համար, երբ նա գա: Հայրս երկու տարի պահեց: Հետո՝ մահանալուց առաջ, տվեց ինձ ու խնդրեց, որ պահեմ Մարիամի համար: Բայց նա... դե գիտես, այլևս չեկավ:

Լեյլան նայում է օվալաձև թիթեղյա տուփին: Նման է հին շոկոլադի տուփի: Դեղնականաչ է՝ փակված կափարիչի շուրջը գունաթափված ոսկեզօծ ոլորագծեր: Կողքերից ժանգոտած է, կափարիչի առջևի եզրին երկու փոքրիկ փոսիկներ են: Լեյլան փորձում է բացել տուփը, բայց կողպեքը փակ է:

— Ի՞նչ է մեջը,— հարցնում է նա:

Համզան բանալին է դնում նրա ափի մեջ:

— Հայրս երբեք չի բացել: Ոչ էլ ես: Աստծո կամքն է, որ դու բացես:

* * *

Հյուրանոցում Լեյլան տեսնում է, որ Թարիքն ու երեխաները դեռ չեն վերադարձել:

Նա նստում է մահճակալին, տուփը դնում գիրկը: Մի կողմից՝ ցանկանում է թողնել այն չբացած, թողնել, որ Ջալիլի նախատեսվածը գաղտնի մնա: Բայց, ի վերջո, հետաքրքրասիրությունը հաղթում է: Նա մտցնում է բանալին: Շխկշխկացնելուց ու թափահարելուց հետո բացում է տուփը:

Մեջը երեք բան է. ծրար, կտավից պարկ ու տեսաժապավեն:

Լեյլան վերցնում է ժապավենը և իջնում ընդունարան: Տարեց աշխատողից, որը դիմավորել էր նրանց մեկ օր առաջ, իմանում է, որ հյուրանոցն ունի միայն մեկ տեսաձայնագրիչ ամենամեծ հյուրասենյակում: Այն ազատ է այս պահին, և աշխատողը համաձայնվում է տանել Լեյլային: Նա գրասեղանը թողնում է կոստյումով բեղավոր մի երիտասարդի, որը խոսում է բջջային հեռախոսով:

Տարեց աշխատողը Լեյլային տանում է երկրորդ հարկ՝ երկար միջանցքի վերջում գտնվող դռան մոտ: Բացում է կողպեքը և Լեյլային ներս է թողնում:

Լեյլան գտնում է անկյունում դրված հեռուստացույցը: Այլևս սենյակում ոչ մի բան չի նկատում: Նա միացնում է հեռուստացույցը,

միացնում է տեսաձայնագրիչը: Դնում է ժապավենն ու սեղմում կոճակը: Էկրանը մի քանի վայրկյան դատարկ է, և Լեյլան սկսում է տարակուսել, թե ինչու է Ջալիլը Մարիամին դատարկ ժապավեն փոխանցել: Բայց հետո երաժշտություն է սկսվում, և էկրանին պատկերներն են երևում:

Լեյլան խոժոռվում է: Մեկ-երկու րոպե նայում է: Հետո սեղմում է «ստոպ» կոճակը, առաջ պտտում ժապավենը, նորից սեղմում կոճակը: Նույն ֆիլմն է:

Ծերունին հարցական նայում է նրան:

Էկրանին Ուոլթ Դիսնեյի «Փինոքիո»-ն է: Լեյլան ոչինչ չի հասկանում:

* * *

Թարիքն ու երեխաները երեկոյան ժամը վեցից քիչ անց վերադառնում են հյուրանոց: Ազիզան վազում է Լեյլայի մոտ և ցուցադրում ականջօղերը, որոնք Թարիքը գնել է նրա համար՝ արծաթե, էմալապատ թիթեռնիկով: Ջալմայը պինդ բռնել է փչովի դելֆինը, որը ծվծվում է, երբ մռութը սեղմում ես:

— Ինչպես ես,— հարցնում է Թարիքը՝ ձեռքը Լեյլայի ուսին դնելով:

— Լավ եմ,— ասում է Լեյլան,— ավելի ուշ կպատմեմ:

Նրանք գնում են ուտելու մոտակա քյաբաբանոց: Փոքր տեղ է՝ կպչուն մոմլաթե սփռոցով, ծխահոտ և աղմկոտ: Բայց գառան միսը փափուկ է ու հյութալի, իսկ հացը՝ տաք: Հետո մի փոքր զբոսնում են փողոցներով: Թարիքը երեխաներին վարդաջրի պաղպաղակ է գնում փողոցի կրպակից: Նստարանին նստած՝ ուտում են, նրանց հետևում լեռները ուրվագծվում են մթնշաղի բոսորակարմիր ֆոնին: Օդը ջերմ է՝ տոգորված մայրու բույրով:

Լեյլան բացել էր ծրարը, երբ վերադարձել էր սենյակ տեսաժապավենը դիտելուց հետո: Դրա մեջ նամակ էր՝ դեղին, տողավոր թղթի վրա կապույտ թանաքով գրված:

Այնտեղ գրված էր.

13 մայիսի, 1987 թ.

Սիրելի՛ Մարիամ,

Աղոթում եմ, որ այս նամակը ստանալիս առողջ լինես:

Ինչպես գիտես, մեկ ամիս առաջ եկա Քաբուլ, որպեսզի խոսեմ քեզ հետ: Բայց դու չցանկացար ինձ տեսնել: Ես վշտացա, բայց չկարողացա մեղադրել քեզ: Քո փոխարեն ես երևի նույնը կանեի: Ես վաղուց կորցրել եմ քո լավ վերաբերմունքի արտոնությունը, և դրա համար միայն ես եմ մեղավոր: Բայց եթե դու կարդում ես այս նամակը, ապա կարդացել ես այն նամակը, որը թողել եմ դռանդ մոտ: Կարդացել ես ու եկել ես տեսնելու Մոլլա Ֆայզուլլային, ինչպես խնդրել էի: Շնորհակալ եմ, որ եկել ես, Մարիա՛մ ջո: Շնորհակալ եմ, որ տվել ես մի քանի բառ ասելու այս հնարավորությունը:

Որտեղի՞ց սկսեմ:

Հայրդ այնքան վիշտ է տեսել մեր վերջին խոսակցությունից հետո, Մարիա՛մ ջո: Քո խորթ մայրը՝ Աֆսունը սպանվեց 1979-ի ապստամբության առաջին օրը: Պատահական փամփուշտը նույն օրը սպանեց քրոջդ՝ Նիլուֆարին: Ես դեռ տեսնում եմ նրան՝ իմ փոքրիկ Նիլուֆարին, որը գլխիվայր է կանգնում հյուրերին տպավորելու համար: Եղբայրդ՝ Ֆարհադը, 1980-ին միացավ *ջիհադին*: 1982-ին Սովետները սպանեցին նրան Հելմանդի մոտ: Նրա մարմինը այդպես էլ չտեսա: Չգիտեմ՝ արդյոք ունե՞ս երեխաներ, Մարիա՛մ ջո, բայց եթե ունես, աղոթում եմ, որ Աստված նրանց պահպանի ու խնայի քեզ իմ տեսած վշտից: Ես դեռ երազում տեսնում եմ նրանց: Ես դեռ տեսնում եմ մեռած երեխաներին երազում:

Ես քեզ էլ եմ տեսնում երազում, Մարիա՛մ ջո: Ես կարոտում եմ քեզ: Կարոտում եմ քո ձայնը, քո ծիծաղը: Կարոտում եմ քեզ համար կարդալը, միասին ձուկ բռնելը: Հիշո՞ւմ ես այն ժամանակները, երբ մենք միասին ձկնորսություն էինք անում: Դու լավ դուստր էիր, Մարիա՛մ ջո, ես չեմ կարողանում մտածել քո մասին առանց ամոթի և ափսոսանք զգալու: Ափսոսանք... Երբ խոսքը վերաբերում է քեզ, Մարիա՛մ ջո, ես դրանից օվկիանոսի չափ ունեմ: Ափսոսում եմ, որ չտեսա քեզ Հերաթ գալուդ օրը: Ափսոսում եմ, որ դուռը չբացեցի և քեզ ներս չթողեցի: Ափսոսում եմ, որ քեզ իմ դուստրը չդարձրի, որ թողեցի այդ բոլոր տարիները ապրես այդտեղ: Ինչի՞ համար: Դեմքը

կորցնելու վախից: Իմ, այսպես կոչված, բարի համբավը արատավորելուց: Որքան փուչ է այդ ամենն ինձ համար այսքան կորուստներից, այսքան սարսափելի բաներից հետո, որ տեսել եմ այս անիծված պատերազմում: Բայց հիմա, իհարկե, արդեն ուշ է: Միգուցե սա ուղղակի անսիրտ մարդկանց պատիժն է՝ հասկանալ միայն այն ժամանակ, երբ այլևս ոչինչ հնարավոր չէ փոխել: Այժմ կարող եմ միայն ասել, որ դու լավ դուստր էիր, Մարիամ ջո, և ես քեզ արժանի չէի: Հիմա կարող եմ միայն խնդրել քեզ, որ ներես ինձ: Ուրեմն ներիր ինձ, Մարիամ ջո: Ներիր: Ներիր: Ներիր:

Ես այլևս քո իմացած հարուստ մարդը չեմ: Կոմունիստները բռնագրավեցին իմ հողերի մեծ մասը և բոլոր խանութները: Բայց բողոքելը փոքրոգություն է, քանի որ Աստված ինձ անհասկանալի պատճառներով օրհնել է շատ մարդկանցից ավելի: Քաբուլից վերադառնալուց ինձ հաջողվեց վաճառել իմ մնացած հողերը: Ես կցել եմ ժառանգության քո բաժինը: Դու կտեսնես, որ ամենևին մեծ կարողություն չէ, բայց էլի ինչ-որ բան է: Ինչ-որ բան է: (Դու կնկատես, որ ես թույլ եմ տվել ինձ փողը դոլարով փոխանակել: Կարծում եմ՝ դա լավագույն տարբերակն է. Աստված գիտի մեր արժեզրկված արժույթի ճակատագիրը):

Հույս ունեմ՝ դու չես կարծում, որ ես փորձում եմ գնել քո ներողամտությունը: Հուսով եմ՝ վստահ ես, որ գիտեմ՝ քո ներողամտությունը չի վաճառվում: Երբեք չի եղել: Ես ընդամենը ուշացած տալիս եմ քեզ այն, ինչ արդարացիորեն միշտ քոնն է եղել: Կյանքիս օրոք նվիրված հայր չեմ եղել: Գուցե մահից հետո լինեմ:

Ա՜հ, մահը: Ես քեզ մանրամասներով չեմ ծանրաբեռնի, բայց մահն այժմ աչքիս առաջ է: Թույլ սիրտ, ասում են բժիշկները: Կարծում եմ՝ թույլ մարդու համար մահվան պատշաճ ձև է:

Մարիամ ջո,

Ես համարձակություն ունեմ, համարձակվում եմ հուսալ, որ սա կարդալուց հետո դու իմ նկատմամբ ավելի բարեսիրտ կլինես, քան ես էի քո նկատմամբ: Որ գուցե սրտումդ տեղ կլինի, որ գաս ու տեսնես հորդ: Որ ևս մեկ անգամ կթակես դուռս և ինձ հնարավորություն կտաս այս անգամ այն բացելու, ողջունելու քեզ, թևերիս մեջ առնելու, աղջիկս, ինչպես պետք անեի տարիներ առաջ: Իմ սրտի նման

թույլ հույս է: Ես դա գիտեմ: Բայց ես կսպասեմ: Ես կլսեմ քո թակոցը, որի հույսն ունեմ:

Թող Աստված քեզ երկար և բարգավաճ կյանք տա, աղջիկս: Թող Աստված քեզ շատ առողջ ու գեղեցիկ երեխաներ տա: Թող որ գտնես այն երջանկությունը, խաղաղությունն ու ընդունումը, որը ես քեզ չտվեցի: Լավ լինես: Թողնում եմ քեզ Աստծո սիրառատ ձեռքերում:

Քո անարժան հայր՝ Ջալիլ

Այդ երեկո՝ հյուրանոց վերադառնալուց հետո՝ երեխաների խաղալուց և քնելուց հետո, Լեյլան պատմում է Թարիքին նամակի մասին: Ցույց է տալիս պարկի մեջ եղած փողը: Երբ Լեյլան սկսում է լացել, Թարիքը համբուրում է նրա դեմքն ու գրկում է:

52

2003 թվականի ապրիլ

Երաշտն ավարտվեց: Անցյալ ձմեռ վերջապես ձյուն եկավ մինչև ծնկները, իսկ հիմա օրերով անձրև էր գալիս: Քաբուլ գետը կրկին հոսում է: Դրա գարնանային ջրհեղեղները լվացին տարան «Տիտանիկ» քաղաքը: Հիմա փողոցներում ցեխ է: Կոշիկները չփչփում են: Մեքենաները՝ խրվում մնում: Խնձորներով բեռնված էշերը չարչարվում են, սմբակներով կեղտ շփում անձրևափոսերից: Բայց ոչ ոք չի բողոքում ցեխից, ոչ ոք չի ափսոսում «Տիտանիկ» քաղաքը: Մեզ պետք է, որ Քաբուլը նորից կանաչ լինի, ասում են մարդիկ:

Երեկ Լեյլան նայում էր՝ ինչպես են իր երեխաները խաղում տեղատարափ անձրևի տակ, իրենց բակի մի ջրափոսից մյուսը ցատկում կապարի գույնի երկնքի տակ: Նայում էր Դեհ-Մազանգում վարձակալած փոքրիկ երկսենյականոց առանձնատան խոհանոցի պատուհանից: Բակում նռան ծառ կա և քաղցր մասրենու թփուտ: Թարիքը ներկել է պատերը և երեխաների համար կառուցել սղարան, ճոճանակ ու մի փոքր ցանկապատած տարածք՝ Ջալմայի նոր այծի համար: Լեյլան նայում էր՝ ինչպես է անձրևը թափվում Ջալ-

մայի գլխամաշկից. նա խնդրել էր՝ գլուխը խուզեն, ինչպես Թարիքինն է, որը հիմա պատասխանատու է Բաբալուի աղոթքները ասելու համար: Անձրևը հարթեցրել էր Ազիզայի երկար մազերը, թաց խոպոպներից ջուրը ցողում է Զալմայի վրա, երբ Ազիզան թափ է տալիս գլուխը:

Զալմայը գրեթե վեց տարեկան է: Ազիզան՝ տասը: Անցյալ շաբաթ տոնել են նրա տարեդարձը, տարել են «Սինեմա Պարկ» կինոթատրոնը, որտեղ Քաբուլի բնակչության համար վերջապես ազատ ցուցադրում են «Տիտանիկը»:

* * *

— Եկեք, երեխաներ, ուշանում ենք,— կանչում է Լեյլան ու նրանց նախաճաշիկները դնում թղթե տոպրակի մեջ:

Առավոտյան ժամը ութն է: Լեյլան արթնացել է ժամը հինգին: Ինչպես միշտ Ազիզան էր նրան ցնցելով արթնացրել առավոտյան *նամազի* համար: Աղոթքները, Լեյլան գիտի, Ազիզայի՝ Մարիամին կառչելու ձևն է, Մարիամին մոտ զգալու ձևը, մինչև որ ժամանակը կհաղթի ու կպոկի Մարիամին նրա հիշողության պարտեզից արմատախիլ արված մոլախոտի պես:

Նամազից հետո Լեյլան վերադարձավ անկողին և դեռ քնած էր, երբ Թարիքը դուրս եկավ տնից: Նա աղոտ հիշում է, որ Թարիքը համբուրեց այտը: Թարիքը աշխատանք է գտել ֆրանսիական հասարակական կազմակերպությունում, որը ականների պայթյունից վերապրածներին ու անդամալույծներին ապահովում է պրոթեզ-վերջույթներով:

Զալմայը, Ազիզայի հետևից վազելով, գալիս է խոհանոց:

— Տետրերը վերցրե՞լ եք, դուք՝ երկո՛ւսդ: Մատիտնե՞րը: Դասագրքե՞րը:

— Այստեղ են,— ասում է Ազիզան՝ բարձրացնելով ուսապարկը: Լեյլան կրկին նկատում է, որ նրա կակազությունը նվազել է:

— Ուրեմն գնացի՛նք:

Լեյլան երեխաներին տնից դուրս է թողնում, կողպում է դուռը: Նրանք դուրս են գալիս զով առավոտյան: Այսօր անձրև չի գալիս:

Երկինքը կապույտ է, Լեյլան հորիզոնում ամպերի կուտակումներ չի տեսնում: Իրար ձեռքերից բռնած՝ երեքով գնում են դեպի ավտոբուսի կանգառ: Փողոցներն արդեն բանուկ են վխտացող ռիկշաների, տաքսիների, ՄԱԿ-ի բեռնատարների, ավտոբուսների, ISAF-ի «Ջիփերի» կայուն հոսքից: Քնկոտ աչքերով առևտրականները բացում են խանութների շերտավոր դարպասները, որոնք գիշերը իջեցրել էին: Վաճառողները նստում են ծամոնի և սիգարետի տուփերի աշտարակների հետևում: Այրիները արդեն զբաղեցրել են փողոցի իրենց անկյունները ու անցորդներից կոպեկ են մուրում:

Լեյլայի համար տարօրինակ է Քաբուլ վերադառնալը: Քաղաքը փոխվել է: Ամեն օր նա տեսնում է մարդկանց, որոնք տնկիներ են տնկում, ներկում հին տները, նորերի համար աղյուսներ են կրում: Ջրափոսեր ու ջրհորներ են փորում: Պատուհանագոգերին Լեյլան տեսնում է մոջահեդների հրթիռների դատարկ պարկուճներում տնկված ծաղիկներ. քաբուլցիները դրանց ասում են հրթիռ-ծաղիկներ: Վերջերս Թարիքը Լեյլային և երեխաներին տարել էր Բաբուրի պարտեզներ, որոնք վերանորոգվում են: Առաջին անգամ Լեյլան երաժշտություն է լսում Քաբուլի փողոցի անկյուններին՝ ***ռուբաբ*** և ***թաբլա, դութար***[145], հարմոնիկա և թամբուրա, Ահմադ Զահիրի հին երգերը:

Լեյլան կցանկանար, որ Մամին և Բաբին կենդանի լինեին ու տեսնեին այս փոփոխությունները: Բայց Զամիլի նամակի պես Քաբուլի ապաշխարությունը ուշացել է:

Լեյլան ու երեխաները պատրաստվում են անցնելու փողոցը՝ ավտոբուսի կանգառին հասնելու համար, երբ հանկարծ կողքով սուրում է սև «Լենդ քրուզեռ»՝ մգեցված պատուհաններով: Վերջին պահին մեքենան թեքվում է ու բազկի երկարությամբ խույս տալիս Լեյլայից: Թեյի գույնի անձրևաջրով է պատում երեխաների վերնաշապիկները: Լեյլան հետ է քաշում երեխաներին դեպի մայթը, սիրտը հասնում է կոկորդին: «Լենդ քրուզեռ»-ը արագ ընթանում է փողոցով, երկու անգամ ազդանշան տալիս և կտրուկ ձախ թեքվում:

---

[145] Դութար՝ Կենտրոնական Ասիայի երկլար երաժշտական գործիք

Լեյլան կանգնած փորձում է շունչ քաշել, մատներով ամուր բռնել է երեխաների դաստակները:

Լեյլան գժվում է սրանից: Գժվում է, որ պարագլուխներին թույլ են տվել վերադառնալ Քաբուլ, որ իր ծնողներին սպանողները ապրում են պարսպապատ պարտեզներով հարուստ տներում, որ նրանք նշանակվել են այսինչի նախարար, այնինչի փոխնախարար, որ անպատիժ վարում են փայլուն և զրահապատ ամենագնացներ՝ իրենց իսկ կողմից քանդված թաղամասերում: Դրանից նա գժվում է:

Բայց Լեյլան որոշել է, որ սրտին մոտիկ չի ընդունի: Մարիամն այդպես չէր ցանկանա: Ո՞րն է իմաստը, կասեր անմեղ ու իմաստուն ժպիտով: Ի՞նչ լավ բան կա դրա մեջ, Լեյլա՛ ջո: Եվ Լեյլան հանձնվել է, որպեսզի առաջ շարժվի: Հանուն իրեն, հանուն Թարիքի, հանուն երեխաների: Նաև հանուն Մարիամի, որ դեռ այցելում է Լեյլային երազում, որ միշտ նրա գիտակցության մեջ է: Լեյլան առաջ է շարժվում: Քանի որ, ի վերջո, նա գիտի, դա միակ բանն է, ինչ կարող է անել: Դա և հույսը:

* * *

Զամանը կանգնած է ազատ նետման գծում՝ ծնկները կիսածալված, խաղում է բասկետբոլի գնդակով: Նա հրահանգում է նույնատիպ մարզաշապիկներով տղաների խմբին, որոնք կիսաշրջանով նստած են խաղահրապարակում: Զամանը նկատում է Լեյլային, գնդակը թևի տակ դնում ու ձեռքով անում: Ինչ-որ բան է ասում տղաներին, որոնք հետո ձեռքով են անում և գոռում են. «*Սալաամ, մոալիմ սահիբ*»:

Լեյլան նույնպես ձեռքով է անում:

Մանկատան խաղահրապարակի արևելյան պատի երկայնքով խնձորի տնկիների շարք է: Լեյլան պլանավորում է տնկել մի քանիսը նաև հարավային պատի մոտ, հենց որ այն վերակառուցվի: Նոր ճոճանակ կա, նոր մարզաձողեր, սղարան, մարզվելու նոր հարմարանքներ:

Լեյլան վերադառնում է ներս ցանցավոր դռան միջով:

Նրանք ներկել են մանկատան ինչպես դուրսը, այնպես էլ ներսը: Թարիքն ու Զամանը վերանորոգել են տանիքի բոլոր ծակերը, կարկատել պատերը, փոխել են պատուհանները, գորգով ծածկել այն սենյակները, որտեղ երեխաները քնում և խաղում են: Անցյալ ձմռանը Լեյլան երեխաների ննջարանների համար գնեց մի քանի մահճակալ, բարձեր և լավ բրդյա վերմակներ: Ձմեռվա համար տեղադրել է թուջե վառարաններ:

«Անիս»-ը՝ Քաբուլի թերթերից մեկը, մի ամիս առաջ հոդված էր գրել մանկատան վերանորոգման մասին: Լուսանկարել էին Զամանին, Թարիքին, Լեյլային և ներկաներից մեկին՝ երեխաների հետևում շարքով կանգնած: Երբ Լեյլան տեսավ հոդվածը, մտածեց իր մանկության ընկերների՝ Ջիթիի ու Հասինայի մասին, հիշեց, որ Հասինան ասում էր. «Երբ քսան տարեկան դառնանք, ես ու Ջիթին, չորս-հինգ երեխաներ բերած կլինենք: Բայց դու, Լեյլա՛, դու մեզ՝ երկու հիմարներիս, հպարտանալու առիթ կտաս: Քեզնից մի բան դուրս կգա: Ես գիտեմ: Մի օր կվերցնեմ թերթը ու առաջին էջում քո նկարը կտեսնեմ»: Լուսանկարը առաջին էջում չէր, բայց այն կար, ինչպես և կանխատեսել էր Հասինան:

Լեյլան թեքվում է և գնում դեպի այն միջանցքը, որտեղ երկու տարի առաջ Մարիամի հետ Ազիզային հանձնեցին Զամանին: Լեյլան դեռ հիշում է՝ ինչպես էին ստիպված պոկել Ազիզայի մատները իր դաստակից: Հիշում է՝ ինչպես էր վազում է այս միջանցքով, փորձում չգոռալ, Մարիամը կանչում էր նրան, իսկ Ազիզան խուճապի մեջ ծղրտում էր: Միջանցքի պատերը այժմ ծածկված են պաստառներով՝ դինոզավրեր, մուլտֆիլմերի հերոսներ, Բամիյանի Բուդդաներ և որբերի արվեստի գործեր: Նկարներից շատերը պատկերում են հյուղակները ավերող տանկեր, AK-47-ները ցուցադրող տղամարդկանց, փախստականների ճամբարային վրաններ, *ջիհադի* տեսարաններ:

Լեյլան թեքվում է միջանցքի անկյունը և հիմա տեսնում է երեխաներին, որոնք սպասում են դասասենյակից դուրս: Նրան ողջունում են նրանց շարֆերը, թասակներով ծածկված նրանց սափրված գլուխները, նրանց փոքր, նիհար մարմինները, նրանց գորշության գեղեցկությունը:

Երբ երեխաները նկատում են Լեյլային, վազելով մոտենում են: Վազում են ամբողջ ուժով: Լեյլային շրջապատում են: Իրարանցում է սկսվում. բարձրաձայն բարևներ, ծղրտացող ձայներ, թփթփոց, քաշքշուկ, բոթում, հրմշտոց՝ Լեյլայի ձեռքերին բարձրանալու համար: Ձգված փոքրիկ ձեռքեր ու ուշադրություն հրավիրելու կոչեր: Ոմանք նրան մայրիկ են ասում: Լեյլան նրանց չի ուղղում:

Այս առավոտ Լեյլայից որոշ ջանք է պահանջվում երեխաներին հանգստացնելու, նրանց պատշաճ շարքով կանգնեցնելու, դասարան մտնելու համար:

Թարիքն ու Զամանն են կառուցել դասարանը՝ հարակից երկու սենյակների պատը քանդելով: Հատակը դեռևս ճաքած է, սալիկներ են բացակայում: Առայժմ այն ծածկված է բրեզենտով, բայց Թարիքը խոստացել է շուտով մի քանի նոր սալիկներ ցեմենտել ու գորգով ծածկել:

Դասարանի դռան վերևում ուղղանկյուն տախտակ է, որը Զամանը հղկել է և փայլուն սպիտակ ներկով ներկել: Դրա վրա Զամանը վրձինով գրել է պոեզիայի չորս տող՝ նրա պատասխանը նրանց, Լեյլան գիտի, ովքեր փնթփնթում են, որ Աֆղանստանին խոստացված օգնության գումարը չի գալիս, որ վերակառուցումը շատ դանդաղ է ընթանում, որ կոռուպցիա կա, որ թալիբներն արդեն վերակազմավորվում են ու կվերադառնան վրեժխնդրությամբ, որ աշխարհը կրկին կմոռանա Աֆղանստանի մասին: Տողերը Հաֆեզի նրա սիրված *ղազալներից* են.

Հովսեփը կվերադառնա Քանաան, չտրտմե՛ս,
Հյուղակները կդառնան վարդի այգի, չտրտմե՛ս:
Թե ջրհեղեղը գա ու տանի ամեն կենդանին,
Նոյը մրրիկի մեջ քո առաջնորդն է, չտրտմե՛ս:

Լեյլան անցնում է ցուցանակի տակով և մտնում դասասենյակ: Երեխաները նստում են իրենց տեղերը, բացում տետրերը, քչփչում: Ազիզան խոսում է հարևան շարքում նստած աղջկա հետ: Թղթե ինքնաթիռը սավառնում է ամբողջ սենյակով: Ինչ-որ մեկն այն հետ է շպրտում:

— Բացեք ձեր պարսկերեն գրքերը, երեխանե՛ր,— ասում է Լեյլան՝ իր գրքերը սեղանին գցելով:

Էջերի խշշոցի ներքո Լեյլան մոտենում է առանց վարագույրի պատուհանին: Ապակու միջով նա կարող է տեսնել, թե ինչպես են խաղահրապարակի տղաները շարքով կանգնում՝ ազատ նետում կատարելու համար: Նրանց վերևում՝ լեռների վրա բարձրանում է առավոտյան արևը: Այն փայլում է բասկետբոլի զամբյուղի մետաղական եզրին, անվադողերից պատրաստված ճոճանակի շղթային, Ջամանի պարանոցից կախված սուլոցին, նրա նոր, չջարդված ակնոցին: Լեյլան դնում է իր բաց ափերը տաք ապակու վրա: Փակում է աչքերը: Թույլ է տալիս, որ արևի լույսը ընկնի այտերի, կոպերի, ճակատի վրա:

Երբ նրանք առաջին անգամ վերադարձան Քաբուլ, Լեյլան նեղվում էր, որ չգիտի, թե որտեղ են թալիբները թաղել Մարիամին: Նա կցանկանար այցելել Մարիամի շիրիմին, նստել հետը որոշ ժամանակ, մեկ-երկու ծաղիկ թողնել: Բայց Լեյլան հիմա գիտի, որ դա նշանակություն չունի: Մարիամը երբեք հեռու չէ: Նա այստեղ է՝ այս պատերի մեջ, որոնք կրկին ներկել են, տնկած ծառերի մեջ, այն վերմակների մեջ, որոնք երեխաներին տաք են պահում, այս գրքերում ու մատիտներում: Նա երեխաների ծիծաղի մեջ է: Նա Ազիզայի անգիր արված բանաստեղծություններում է, Ազիզայի աղոթքներում, երբ նա խոնարհվում է դեպի արևմուտք: Բայց ամենից շատ Մարիամը Լեյլայի սրտում է, որտեղ փայլում է հազար արևների պայծառությամբ:

Ինչ-որ մեկը տալիս է իր անունը, գիտակցում է Լեյլան: Նա շրջվում է, բնազդաբար թեքում գլուխը, մի փոքր բարձրացնում առողջ ականջը: Ազիզան է:

— Մա՛մ: Լա՛վ ես:

Սենյակում լռություն է: Երեխաները հետևում են նրան:

Լեյլան պատրաստվում է պատասխանելու, երբ շունչը հանկարծակի կտրվում է: Ձեռքերը արագ տանում է ներքև: Շոշափում է այն տեղը, որտեղով մի պահ ալիք անցավ: Սպասում է: Բայց այլևս շարժում չկա:

— Մա՛մ:

— Այո՛, սիրելի՛ս,— ժպտում է Լեյլան,— ես շատ լավ եմ: Այո՛, շատ:

Դասարանի առջև դրված գրասեղանին մոտենալիս Լեյլան մտածում է անունների խաղի մասին, որը նորից խաղացել են նախորդ երեկո՝ ընթրիքի ժամանակ: Այն պահից, երբ Լեյլան հայտնեց լուրը Թարիքին ու երեխաներին, սա երեկոյան արարողություն դարձավ: Տանում-բերում են, ապացուցում իրենց ընտրությունը: Թարիքին դուր է գալիս Մոհամադ անունը, Զալմայը, որ վերջերս տեսաժապավենի վրա դիտել է «Սուպերմենը», տարակուսում է, թե ինչու աֆղան տղային չի կարելի անվանել Քլարկ: Ազիզան քարոզում է Ամանի համար: Լեյլային դուր է գալիս Օմար անունը:

Բայց խաղը ներառում է միայն արական անուններ: Որովհետև եթե աղջիկ ծնվի, Լեյլան նրա անունն արդեն որոշել է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ 7

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ 96

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ 174

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ 329

ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻ

ՀԱԶԱՐ ՁՔՆԱՂ ԱՐԵՎՆԵՐ

Թարգմանությունն անգլերենից՝
Մարիա Սադոյանի

•

KHALED HOSSEINI

A THOUSAND SPLENDID SUNS

Translated from English
by Maria Sadoyan

Zangak Publishing House, Yerevan, Armenia

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նունիկ Ավետիսյանի
Ձևավորումը՝ Վիտալի Ասրիևի

թվագրված է 1915-ից հետո

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 23 տպ. մամուլ
Հիմնական տառատեսակը՝ GHEA Narek

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak